

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶՐԵԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

2016 թվական

Հատոր VIII

**ԵՐԵՎԱՆ
ՀՀ ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
2017**

ՀՏԴ 343. 1

ԳՄԴ 67.411

Հ 247

ASSOCIATION OF JUDGES OF THE RA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Կազմեցին՝

Անի Դանիելյան

ՀՀ դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության
վարչության պետ

Արմեն Հովհաննիսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական, իրավաբանական
գիտությունների թեկնածու

Ժենյա Ստեփանյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի ավագ օգնական

Հ 247 Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական
գործերով որոշումների ժողովածու. – Եր.: ՀՀ վճռաբեկ դատարան,
2017. չ. VIII/ Կազմ՝ Ա. Դանիելյան, Ա. Հովհաննիսյան,
Ժ.Ստեփանյան. - 816 էջ:

ՀՏԴ 343. 1

ԳՄԴ 67.411

ISBN 978-9939-75-162-7

© ՀՀ վճռաբեկ դատարան, 2017

Գիրքը վաճառքի ենթակա չէ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	VI
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների առարկայական դասակարգում	IX
Աղբյուրների ցանկ թիվ 1	
ՀՀ Սահմանադրության դրույթներ	XXIII
Աղբյուրների ցանկ թիվ 2	
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ	XXIV
Աղբյուրների ցանկ թիվ 3	
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ	XXVI
1. Տ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0217/01/14.....	1
2. Լ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ՄԳ/0137/01/14	23
3. Գ.Թոսունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՄԳ/0319/01/10.....	46
4. Զ.Փաշինյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0031/01/13	69
5. Ն.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0081/01/14.....	80
6. Հ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0060/01/15.....	93
7. Հ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0154/11/14.....	103
8. Գ.Խաչատրյանի և Ա.Քրմոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0059/01/14	112
9. Ա.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0079/01/13	132
10. Փ.Թերոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0024/11/15	141
11. Ա.Բաբախանյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0031/01/15	153
12. Ն.Մաղյանի և Գ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ՏԳԶ/0045/01/14	164
13. Ա.Թամարյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0039/01/15	180
14. Ա.Բոգոմազովի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0189/01/13	191
15. Ա.Խալափյանի վերաբերյալ որոշում, ՄԳ/0195/01/14	203
16. Գ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0130/01/15.....	215
17. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0192/11/15	227

18. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0224/01/14	239
19. Լ.Վարդանյանի և Զ.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0016/01/14	254
20. Մ.Դիլանչյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0105/01/14.....	269
21. Ա.Ադամյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0146/01/14	279
22. Մ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0002/01/15.....	302
23. Ն.Նալբանդյանի և Բ.Նալբանդյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-04/15.....	320
24. Ն.Նալբանդյանի, Բ.Նալբանդյանի և Ա.Նալբանդյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-06/15.....	335
25. Կ.Խաչատրյանի և Ն.Միրաքյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0094/01/15.....	350
26. Ա.Անդրեսայանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0200/01/13	365
27. Մ.Պողոսյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՇԳ/0034/01/15.....	385
28. Լ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0337/06/15.....	397
29. Ս.Աբովյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0038/01/15	405
30. Շ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0025/01/15	417
31. Մ.Սկրտչյանի և Մ.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0110/01/12	433
32. Ա.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0044/01/15.....	452
33. Ռ.Քոթանջյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-3/0010/06/15.....	464
34. Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0226/01/14.....	477
35. Հ.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0007/11/15	493
36. Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0013/01/15.....	500
37. Վ.Սկրտչյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԿԳ-3/0034/01/15.....	517
38. Ա.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0002/12/16	538
39. Ս.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0003/12/16	555
40. Հ.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0230/01/14.....	568
41. Ս.Փիրումյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0226/11/15	578

42. Ա.Մադոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0303/01/15	588
43. Ա.Աղաբաբյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0033/01/14	608
44. Թ.Սաղաթեյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0017/12/16	628
45. Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0201/01/15	640
46. Լ.Ջաքոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0255/11/15	652
47. Գ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0004/06/16	666
48. Յ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0041/01/15	676
49. Վ.Թորոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0005/15/16	692
50. Ա.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-3/0014/01/15	706
51. Ս.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0123/06/16	715
52. Ա.Բաղդասարովի վերաբերյալ որոշում, ԱՎԳ-4/0028/01/15	723
53. Ռ.Բրոյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ-1/0023/01/15	735
54. Հ.Չոլախյանի և Ա.Պերոսյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0046/01/13	755
55. Ս.Ավդոյանի վերաբերյալ որոշում, ԱՐԳ/0061/01/15	769
56. Հ.Գավթյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0129/01/15	781



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
2016 ԹՎԱԿԱՆ**

ՆԱԽԱԲԱՆ

Քրեական պալատի որոշումների նախադեպային բնույթով պայմանավորված՝ դրանք զգալի դերակատարություն ունեն քրեական արդարադատության ոլորտում իրավունքի գերակայությունն ապահովելու, վստահելի, կանխատեսելի և թափանցիկ արդարադատություն ձևավորելու, մարդու իրավունքները և ազատությունները երաշխավորելու գործում: Թերևս դրանով կարելի է պայմանավորել նաև քրեական պալատ ստացվող բողոքների տարեցտարի աճը: Որպես օրինակ նշենք, որ 2015 թվականի համեմատությամբ (ստացվել է 1447 բողոք), 2016 թվականին վճռաբեկ բողոքների քանակը աճել է 334-ով կամ 18.7%-ով

Կարևորելով այդ որոշումներն իրավաբանական հանրությանը, ինչպես նաև հասարակության լայն շրջանակներին հասու դարձնելու նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանը 2009 թվականից նախաձեռնել է իր որոշումների ամենամյա ժողովածուների հրատարակման գործընթաց:

Ձևավորված ավանդույթի շարունակությունն է սույն ժողովածուն, որը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների 8-րդ հատորյակն է: Ժողովածուն ընդգրկում է 2016 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից կայացված բոլոր նախադեպային որոշումները, որոնք թվով 56-ն են: Դրանք վերաբերում են ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքին:

Մասնավորապես, Գ.Թոսունյանի և մյուսների վերաբերյալ գործով կայացված որոշման շրջանակներում հստակեցվել են ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ կատարված սպանությունը անզգուշությամբ տուժողի մահ առաջացրած՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմերի տարանջատման հատկանիշները: Վ.Սկրտչյանի և մյուսների

վերաբերյալ գործով կայացված որոշումամբ քննարկվել է շարունակվող գողությունը կրկին անգամ կատարած գողությունից, այլ խոսքով՝ հանցանքների համակցությունից սահմանազատելու հիմնահարցը: Ռ.Բրոյանի և մյուսների գործով որոշմամբ վերլուծվել են ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված արարք կատարած, մասնավորապես՝ ամուսնության նպատակով մարդուն առևանգելու համար անձի նկատմամբ պատիժ նշանակելու, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցերը: Արթուր Անդրեասյանի վերաբերյալ գործով կայացված որոշումը նվիրված է գույքի բռնագրավման և բռնագանձման, ինչպես նաև գույքի վրա կալանք դնելու հիմքերի և գույքը կալանքից ազատելու քրեադատավարական առանձնահատկություններին: Լ.Զաքոյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իրեղեն ապացույցի պահպանումն ապահովելիս անձի սեփականության իրավունքի երաշխիքների պահպանման խնդրին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախադեպային դիրքորոշումներ է արտահայտել նաև այնպիսի իրավական հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու՝ որպես իրավունքից զրկելու լրացուցիչ պատժի առանձնահատկությունները և կիրառման պայմանները (ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդված), տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդված), պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու պայմանները (ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդված), փաստաբանի կողմից կաշառք ստանալու (ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդված), դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի (ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդված) հանցակազմերի մեկնաբանումը, խարդախության սահմանազատումը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմից (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ և 184-րդ հոդվածներ), տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու կարգը, այդ կարգավիճակը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման հնարավորությունը և այլն:

Ժողովածուի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դրանում սահմանված է որոշումների առարկայական

դասակարգման գործիք, որում առանձին ներկայացվում է, թե կոնկրետ որոշումը որ իրավադրույթի մեկնաբանությանն է վերաբերում: Ավելին՝ դրանում, ինչպես և նախորդ հատորներում սահմանված են յուրաքանչյուր որոշման առարկայական մյուս բնութագրիչները, որոնք վերաբերում են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում վկայակոչված և կիրառված ՀՀ Սահմանադրության դրույթներին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին:

Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որում նույնությամբ առկա են հատորյակում ներառված դատական ակտերը, ինչն առավել դյուրին է դարձնում ժողովածուում զետեղված դատական ակտերին ծանոթանալը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածուի սույն հատորի հրատարակումը հնարավոր է դարձել ՀՀ դատավորների միության և Հայ-ռուսական համալսարանի հետ համագործակցության շնորհիվ:

Ս.Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի
քրեական պալատի նախագահ,
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒՐԵԿ ԳԱՏԱՐԱՆԻ ԶՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

**Ն-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենսդրության սկզբունքները
(ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ հոդված)**

Ն-I-1 Ա.Թամարյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0039/01/15
(13², նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1, Ն-XII-1).....180

**Ն-II Մեկնաբանվող իրավադրույթներ՝ պատժի արդարացիությունը,
պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները
(ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածներ)**

Ն-II-1 Ն.Մաղյանի և Գ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում,
ՏԳ-2/0045/01/14 (12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1, Ն-XI-1).....164

Ն-II-2 Ա.Բոգոմազովի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0189/01/13
(14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIX-1).....191

Ն-II-3 Ա.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0044/01/15
(32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-2, Ն-X-2).....452

Ն-II-4 Ռ.Բրոյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ-1/0023/01/15
(53, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-9, Ն-XXVI-1).....735

**Ն-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների համակցություն
(ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս)**

Ն-III-1 Վ.Սկրտչյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԿԳ-3/0034/01/15
(37, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-2).....517

**Ն-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցանքը դիտավորությամբ կատարելը
(ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ հոդված)**

Ն-IV-1 Գ.Թոսունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՍԳ/0319/01/10
(3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Ն-VI-1, Ն-XX-1, Ն-XXI-1).....46

**Ն-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցանքն անզգուշությամբ կատարելը
(ՀՀ քրեական օրենսգրքի 30-րդ հոդված)**

Ն-V-1 Գ.Թոսունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՍԳ/0319/01/10
(3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-VI-1, Ն-XX-1, Ն-XXI-1).....46

¹ Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Ն» տառով:

² Որոշման հերթական համարը:

Ն-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատասխանատվությունը մեղքի երկու ձևերով հանցագործության համար (ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ հոդված)	
Ն-VI-1 Գ.Թոսունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՍԳ/0319/01/10 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-V-1, Ն-XX-1, Ն-XXI-1).....	46
Ն-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը (ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդված)	
Ն-VII-1 Լ.Վաղդանյանի և Զ.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0016/01/14 (19).....	254
Ն-VII-2 Ա.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0044/01/15 (32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-3, Ն-X-2).....	452
Ն-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքի բռնագրավումը (ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդված)	
Ն-VIII-1 Ա.Անդրեասյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0200/01/13 (26, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIX-1, Գ-XXVI-1, Գ-XXXI-1).....	365
Ն-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը (ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդված)	
Ն-IX-1 Ա.Թամարյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0039/01/15 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-XII-1).....	180
Ն-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ (ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդված)	
Ն-X-1 Ն.Մաղյանի և Գ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ՏԳ2/0045/01/14 (12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-1, Ն-XI-1).....	164
Ն-X-2 Ա.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0044/01/15 (32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-3, Ն-VII-2).....	452
Ն-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված)	
Ն-XI-1 Ն.Մաղյանի և Գ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ՏԳ2/0045/01/14 (12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-1, Ն-X-1).....	164
Ն-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդված)	
Ն-XII-1 Ա.Թամարյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0039/01/15 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-IX-1).....	180

Ն- XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)

Ն- XIII-1 Ա.Բաբախանյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0031/01/15 (11).....	153
Ն- XIII-2 Կ.Խաչատրյանի և Ն.Սիրաքյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0094/01/15 (25, նույն որոշումը տե՛ս նաև Ն- XIII-5).....	350
Ն- XIII-3 Գ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0130/01/15 (16, նույն որոշումը տե՛ս նաև Ն- XXII-1).....	215
Ն- XIII-4 Ս.Արովյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0038/01/15 (29, նույն որոշումը տե՛ս նաև Ն- XXI-2).....	405
Ն- XIII-5 Կ.Խաչատրյանի և Ն.Սիրաքյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0094/01/15 (25, նույն որոշումը տե՛ս նաև Ն- XIII-2).....	350
Ն- XIII-6 Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0201/01/15 (45).....	640
Ն- XIII-7 Ա.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-3/0014/01/15 (50, նույն որոշումը տե՛ս նաև Ն- XXX-1).....	706
Ն- XIII-8 Վ.Թորոսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0005/15/16 (49, նույն որոշումը տե՛ս նաև Ն- XVIII-1, Գ- XLXI-2).....	692
Ն- XIII-9 Ռ.Բրոյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԱԲԱԳ-1/0023/01/15 (53, նույն որոշումը տե՛ս նաև Ն- II-4, Ն- XXVI-1).....	735

Ն- XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելն իրադրության փոփոխման դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդված)

Ն- XIV-1 Ա.Բաղդասարովի վերաբերյալ որոշում, ԱՎԳ-4/0028/01/15 (52, նույն որոշումը տե՛ս նաև Գ- VIII-3, Գ- IX-2).....	723
---	-----

Ն- XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդված)

Ն- XV-1 Տ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0217/01/14 (1, նույն որոշումը տե՛ս նաև Գ- VIII-1, Գ- IX-1, Գ- XIX-1).....	1
---	---

Ն- XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդված)

Ն- XVI-1 Ա.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0079/01/13 (9, նույն որոշումը տե՛ս նաև Գ- XXXVII-1).....	132
--	-----

Ն- XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը (ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդված)

Ն- XVII-1 Թ.Սաղաթելյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0017/12/16 (44).....	628
Ն- XVII-2 Ս.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0003/12/16 (39).....	555

Ն-XVII-3 Ա.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0002/12/16 (38).....538

Ն-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատվածությունը

(ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդված)

Ն-XVIII-1 Վ.Թորոսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0005/15/16
(49, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-8, Գ-XLXI-2).....692

Ն-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ բռնագանձումը

(ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդված)

Ն-XIX-1 Ա.Անդրեասյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0200/01/13
(26, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Գ-XXVI-1, Գ-XXXI-1).....365

Ն-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանությունը

(ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված)

Ն-XX-1 Գ.Թոսունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՍԳ/0319/01/10
(3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-V-1, Ն-VI-1, Ն-XXI-1).....46

Ն-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դիտավորությամբ

առողջությանը ծանր վնաս պատճառելը

(ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված)

Ն-XXI-1 Գ.Թոսունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ՍԳ/0319/01/10
(3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-V-1, Ն-VI-1, Ն-XX-1).....46

Ն-XXI-2 Ս.Աբովյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0038/01/15

(29, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-4).....405

Ն-XXI-3 Մ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0002/01/15 (22).....302

Ն-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դիտավորությամբ առողջությանը

միջին ծանրության վնաս պատճառելը

(ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդված)

Ն-XXII-1 Գ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0130/01/15

(16, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-3).....215

Ն-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ծեծը

(ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդված)

Ն-XXIII-1 Ա.Մադոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0303/01/15 (42, նույն
որոշումը տե՛ս նաև Գ-XXI-2, Գ-XXXVI-6, Գ-XXXIX-1, Գ-XLVIII-1).....588

Ն-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ մարդուն առևանգելը

(ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդված)

Ն-XXVI-1 Ռ.Բրոյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ-1/0023/01/15

(53, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-4, Ն-XIII-9).....735

Ն-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գողութունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված)
 Ն-XXV-1 Շ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԱԲԱԳ/0025/01/15
 (30, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-2, Գ-VII-3, Գ-XXI-1, Գ-XXXVII-4).....417
 Ն-XXV-2 Վ.Սկրտչյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԿԳ-3/0034/01/15
 (37, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1).....517

Ն-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված)
 Ն-XXVI-1 Մ.Գիլանչյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0105/01/14
 (20, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVII-1).....269
 Ն-XXVI-2 Ա.Աղամյանի վերաբերյալ, ԵԱԶԳ/0146/01/14
 (21, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-1, Գ-XX-2).....279

Ն-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքային վնաս
պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով
(ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդված)
 Ն-XXVII-1 Մ.Գիլանչյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0105/01/14
 (20, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1).....269

Ն-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ առևտրային կաշառքը
(ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդված)
 Ն-XXVIII-1 Ա.Խալափյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0195/01/14 (15).....203

Ն-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ հարկերը, տուրքերը կամ
պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը
(ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդված)
 Ն-XXIX-1 Ա.Բոգոմազովի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0189/01/13
 (14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-2).....191

Ն-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհային երթևեկության
և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը
(ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված)
 Ն-XXX-1 Ա.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-3/0014/01/15
 (50, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-7).....706

Ն-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խուլիգանությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված)
 Ն-XXXI-1 Ա.Աղաբաբյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0033/01/14
 (43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-4, Գ-XX-4, Գ-XXXVII-5).....608

Ն-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը (ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդված)
Ն-XXXII-1 Յ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0041/01/15 (48, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXX-1).....676

Ն-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդված)
Ն-XXXIII-1 Մ.Սկրտչյանի և Մ.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/01110/01/12 (31, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-1, Գ-XIII-1, Գ-XLII-3)...433

Գատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Գ³-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդված)
Գ-I-1 Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0013/01/15 (36, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VIII-2, Գ-XXXVIII-1).....500

Գ-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ հավասարությունը օրենքի և դատարանի առջև (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված)
Գ-II-1 Փ.Թերոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0024/11/15 (10, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXIII-1, Գ-XXXVI-1).....141
Գ-II-2 Ս.Փիրումյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0226/11/15 (41).....578

Գ-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության լեզուն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդված)
Գ-III-1 Գ.Խաչատրյանի և Մ.Քրմոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0059/01/14 (8, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-1, Գ-XVI-1, Գ-XX-1).....112

Գ-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)
Գ-IV-1 Հ.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0230/01/14 (40, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VI-1, Գ-XLVII-2).....568
Գ-IV-2 Հ.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0007/11/15 (35, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVI-2).....493
Գ-IV-3 Ռ.Քոթանջյանի վերաբերյալ որոշում, ԿԳ3/0010/06/15 (33, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VI-2, Գ-XXII-1, Գ-XXXIV-1).....464

³ Սույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Գ» տառով:

**Գ-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)**

Գ-V-1 Ա.Աղամյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0146/01/14
(21, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-2, Գ-XX-2).....279

Գ-V-2 Շ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0025/01/15
(30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXV-1, Գ-VII-3, Գ-XXI-1, Գ-XXXVII-4).....417

**Գ-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ մրցակցությունը
քրեական դատավարության ընթացքում
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդված)**

Գ-VI-1 Հ.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0230/01/14
(40, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-1, Գ-XLVII-2).....568

Գ-VI-2 Ռ.Քոթանջյանի վերաբերյալ որոշում, ԿԳ3/0010/06/15
(33, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-3, Գ-XXII-1, Գ-XXXIV-1).....464

**Գ-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների ազատ գնահատումը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդված)**

Գ-VII-1 Գ.Խաչատրյանի և Ս.Քրմոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0059/01/14
(8, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-1, Գ-XXVI-1, Գ-XX-1).....112

Գ-VII-2 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0224/01/14
(18, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XX-3, Գ-XXXVII-3).....239

Գ-VII-3 Շ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0025/01/15
(30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXV-1, Գ-V-2, Գ-XXI-1, Գ-XXXVII-4).....417

Գ-VII-4 Ա.Աղաբաբյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0033/01/14
(43, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXI-1, Գ-XX-4, Գ-XXXVII-5).....608

**Գ-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը
կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)**

Գ-VIII-1 Տ.Առաքելյանի վերաբերյալ որոշում,
ԵԱԶԳ/0217/01/14 (1, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XV-1, Գ-IX-1, Գ-XIX-1).....1

Գ-VIII-2 Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0013/01/15
(36, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-1, Գ-XXXVIII-1).....500

Գ-VIII-3 Ա.Բաղդասարովի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0028/01/15
(52, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-1, Գ-IX-2).....723

**Գ-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանգամանքներ,
որոնք թույլ են տալիս չիրականացնել քրեական հետապնդում,
կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդված)**

Գ-IX-1 Տ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0217/01/14 (1, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XV-1, Գ-VIII-1, Գ-XIX-1).....	1
Գ-IX-2 Ա.Բաղդասարովի վերաբերյալ որոշում, ԱՎԳԴ/0028/01/15 (52, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-1, Գ-VIII-3).....	723

Գ-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատախազի լիազորությունները քրեական գործը կամ նյութը դատարանում քննելիս (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդված)

Գ-X-1 Ն.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0081/01/14 (5, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLI-1, Գ-XLII-1).....	80
Գ-X-2 Հ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0060/01/15 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLI-2, Գ-XLII-2).....	93

Գ-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդված)

Գ-XI-1 Մ.Սիմասյանի և Մ.Սիքայելյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0110/01/12 (31, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXIII-1, Գ-XIII-1, Գ-XLII-3).....	433
---	-----

Գ-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտպանի կողմից իր իրավավիճակի հաստատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդված)

Գ-XII-1 Բ.Փաշինյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0031/01/13 (4, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXLI-1).....	69
--	----

Գ-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի իրավաջորդը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդված)

Գ-XIII-1 Մ.Սիմասյանի և Մ.Սիքայելյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0110/01/12 (31, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXIII-1, Գ-XI-1, Գ-XLII-3).....	433
---	-----

Գ-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ մասնագետը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդված)

Գ-XIV-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0226/01/14 (34, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XV-1, Գ-XVII-1, Գ-XVIII-1, Գ-XXXII-1).....	477
---	-----

Գ-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ փորձագետը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդված)

Գ-XV-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0226/01/14 (34, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIV-1, Գ-XVII-1, Գ-XVIII-1, Գ-XXXII-1).....	477
---	-----

Գ- XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների պարզաբանումը, դրանց իրականացման հնարավորության ապահովումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդված)
Գ-XXVI-1 Գ.Խաչատրյանի և Ս.Քրմոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0059/01/14 (8, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-1, Գ-VII-1, Գ-XX-1).....112

Գ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող հանցամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդված)
Գ-XXVII-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0226/01/14 (34, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIV-1, Գ-XV-1, Գ-XVIII-1, Գ-XXXII-1).....477

Գ-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ փորձագետի եզրակացությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդված)
Գ-XXVIII-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0226/01/14 (34, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIV-1, Գ-XV-1, Գ-XVII-1, Գ-XXXII-1).....477

Գ-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ իրեղեն ապացույցները և դրանց պահպանման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-118-րդ հոդվածներ)
Գ-XXIX-1 Լ.Ջաքոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0255/11/15 (46).....652

Գ-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների ստուգումը, գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-127-րդ հոդվածներ)
Գ-XX-1 Գ.Խաչատրյանի և Ս.Քրմոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0059/01/14 (8, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-1, Գ-VII-1, Գ-XXVI-1).....112
Գ-XX-2 Ա.Աղամյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0146/01/14 (21, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-2, Գ-V-1).....279
Գ-XX-3 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0224/01/14 (18, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-2, Գ-XXXVII-3).....239
Գ-XX-4 Ա.Աղաբաբյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0033/01/14 (43, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXI-1, Գ-VII-4, Գ-XXXVII-5).....608

Գ-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդված)
Գ-XXXI-1 Ը.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0025/01/15 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1, Գ-V-2, Գ-VII-3, Գ-XXXVII-4).....417
Գ-XXXI-2 Ա.Մադոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0303/01/15 (42, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIII-1, Գ-XXXVII-6, Գ-XXXIX-1, Գ-XLVIII-1).....588

Գ-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդված)

Գ-XXII-1 Ռ.Բոթանջյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-3/0010/06/15
(33, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-3, Գ-VI-2, Գ-XXXIV-1).....464

Գ-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրյալին կալանքից ազատելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդված)

Գ-XXIII-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0192/11/15
(17, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIV-1, Գ-XXV-1).....227

Գ-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված)

Գ-XXIV-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0192/11/15
(17, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIII-1, Գ-XXV-1).....227

Գ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոցը փոփոխելը և վերացնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդված)

Գ-XXV-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0192/11/15
(17, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIII-1, Գ-XXIV-1).....227

Գ-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քաղաքացիական հայցի հարուցումը, քաղաքացիական հայցով հատուցման ապահովումը, քաղաքացիական հայցից հրաժարվելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ, 160-161-րդ հոդվածներ)

Գ-XXVI-1 Ա.Անդրեասյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0200/01/13
(26, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Ն-XIX-1, Գ-XXXI-1).....365

Գ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետը բաց թողնելու հետևանքները և դրա վերականգնման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդված)

Գ-XXVII-1 Հ.Գավթյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0129/01/15
(56, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XL-1, Գ-XLIV-1, Գ-XLV-1).....781

Գ-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու պարտականությունը, քրեական գործ հարուցելու առիթները, հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը և դրանց քննարկման արդյունքում ընդունվող որոշումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-176-րդ, 180-181-րդ հոդվածներ)

Գ-XXVIII-1 Հ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0154/11/14 (7).....103

Գ-XXXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ մասնավոր մեղադրանքի գործերը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ, 36-րդ, 183-րդ հոդվածներ)
Գ-XXXIX-1 Տ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0217/01/14
(1, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1, Գ-VIII-1, Գ-IX-1).....1

Գ-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի կողմից կիրառվող
սանկցիաները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդված)
Գ-XXX-1 Յ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0041/01/15
(48, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXII-1).....676

Գ-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքի վրա կալանք դնելը և
դրա հիմքերը, գույքը կալանքից ազատելը (ՀՀ քրեական դատավարության
օրենսգրքի 232-233-րդ, 238-րդ հոդվածներ)
Գ-XXXI-1 Ա.Անդրեասյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0200/01/13
(26, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Ն-XIX-1, Գ-XXVI-1).....365

Գ-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ փորձաքննություն նշանակելու և
կատարելու հիմքերը, լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ, 251-րդ հոդվածներ)
Գ-XXXII-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0226/01/14
(34, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIV-1, Գ-XV-1, Գ-XVII-1, Գ-XVIII-1).....477

Գ-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործով վարույթը կարճելու
կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկումը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդված)
Գ-XXXIII-1 Փ.Թերոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0024/11/15
(10, նույն որոշումը տե՛ս նաև Գ-II-1, Գ-XXXVI-1).....141

Գ-XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը որպես խափանման
միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին
միջնորդությունների քննումը (ՀՀ քրեական դատավարության
օրենսգրքի 285-րդ հոդված)
Գ-XXXIV-1 Ռ.Քոթանջյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-3/0010/06/15
(33, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-3, Գ-VI-2, Գ-XXII-1).....464

Գ-XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը որպես խափանման
միջոց ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ դատական որոշման
բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդված)
Գ-XXXV-1 Գ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0004/06/16
(47, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLIII-1, Գ-XLIV-2).....666

Գ-XXXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետագա դատական վերահսկողությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)
 Գ-XXXVI-1 Փ.Թերոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0024/11/15 (10, նույն որոշումը տե՛ս նաև Գ-II-1, Գ-XXXIII-1).....141
 Գ-XXXVI-2 Հ.Բարայանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0007/11/15 (35, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-2).....493

Գ-XXXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված)
 Գ-XXXVII-1 Ա.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0079/01/13 (9, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1).....132
 Գ-XXXVII-2 Մ.Պողոսյանի և Հ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0034/01/15 (27).....385
 Գ-XXXVII-3 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0224/01/14 (18, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-2, Գ-XX-3).....239
 Գ-XXXVII-4 Շ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0025/01/15 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1, Գ-V-2, Գ-VII-3, Գ-XXI-1).....417
 Գ-XXXVII-5 Ա.Աղաբաբյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0033/01/14 (43, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXI-1, Գ-VII-4, Գ-XX-4).....608
 Գ-XXXVII-6 Ա.Մադոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0303/01/15 (42, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIII-1, Գ-XXI-2, Գ-XXXIX-1, Գ-XLVIII-1).....588

Գ-XXXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ արդարացման դատավճիռը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդված)
 Գ-XXXVIII-1 Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0013/01/15 (36, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-1, Գ-VIII-2).....500

Գ-XXXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ և 372-րդ հոդվածներ)
 Գ-XXXIX-1 Ա.Մադոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0303/01/15 (42, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIII-1, Գ-XXI-2, Գ-XXXVII-6, Գ-XLVIII).....588
 Գ-XXXIX-2 Ա.Ավդոյանի վերաբերյալ որոշում, ԱՐԳ/0061/01/15 (55, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLVIII-4).....769

Գ-XL Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի պատճենը հանձնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդված)
 Գ-XL-1 Հ.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0129/01/15 (56, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVII-1, Գ-XLIV-1, Գ-XLV-1).....781

Գ-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդված)
 Գ-XXI-1 Ն.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0081/01/14 (5, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-1, Գ-XXII-1).....80
 Գ-XXI-2 Հ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0060/01/15 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-2, Գ-XXII-2).....93

Գ-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդված)
 Գ-XXII-1 Ն.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0081/01/14 (5, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-1, Գ-XXI-1).....80
 Գ-XXII-2 Հ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0060/01/15 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-2, Գ-XXI-2).....93
 Գ-XXII-3 Մ.Մինասյանի և Մ.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0110/01/12 (31, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXIII-1, Գ-XI-1, Գ-XIII-1).....433

Գ-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ հոդված)
 Գ-XXIII-1 Գ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0004/06/16 (47, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXV-1, Գ-XXIV-2).....666

Գ-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդված)
 Գ-XXIV-1 Հ.Գավթյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0129/01/15 (56, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVII-1, Գ-XL-1, Գ-XLV-1).....781
 Գ-XXIV-2 Գ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0004/06/16 (47, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXV-1, Գ-XXIII-1).....666

Գ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ բողոքարկման ժամկետը վերականգնելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդված)
 Գ-XXV-1 Հ.Գավթյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0129/01/15 (56, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVII-1, Գ-XL-1, Գ-XXIV-1).....781

Գ-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ տրված բողոքի մասին ծանուցելը, վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ, 385-րդ հոդվածներ)
 Գ-XXVI-1 Լ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0137/01/14 (2, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVII-1).....23

Գ–XLVII Մեկնաբանվող իրավադրույթ՝

վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդված)

Գ–XLVII-1 Լ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0137/01/14
(2, նույն որոշումը տե՛ս նաև Գ–XLVI-1).....23

Գ–XLVII-2 Հ.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0230/01/14
(40, նույն որոշումը տե՛ս նաև Գ–IV-1, Գ–VI-1).....568

Գ–XLVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդված)

Գ–XLVIII-1 Ա.Մադոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0303/01/15 (42, նույն որոշումը տե՛ս նաև Ն–XXIII-1, Գ–XXI-2, Գ–XXXVII-6, Գ–XXXIX-1).....588

Գ–XLVIII-2 Լ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0337/06/15 (28).....397

Գ–XLVIII-3 Ս.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0123/06/16 (51).....715

Գ–XLVIII-4 Ս.Ավդոյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0061/01/15
(55, նույն որոշումը տե՛ս նաև Գ–XXXIX-2).....769

Գ–XLIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր երևան եկած հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդված)

Գ–XLIX-1 Հ.Չոլախյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/1/0046/01/13 (54).....755

Գ–XLX Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդված)

Գ–XLX-1 Ն.Նալբանդյանի, Բ.Նալբանդյանի և Ա.Նալբանդյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-06/15 (24).....320

Գ–XLX-2 Ն.Նալբանդյանի և Բ.Նալբանդյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-04/15 (23).....335

Գ–XLXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական որոշումը ի կատար ածելու փուլում դատապարտյալի իրավունքների ապահովումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 429-րդ հոդված)

Գ–XLXI-1 Ք.Փաշինյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0031/01/13
(4, նույն որոշումը տե՛ս նաև Գ–XII-1).....69

Գ–XLXI-2 Վ.Թորոսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0005/15/16
(49, նույն որոշումը տե՛ս նաև Ն–XIII-8, Ն–XVIII-1).....692

Աղբյուրների ցանկ թիվ 1

ՀՀ Սահմանադրության դրույթներ

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված	(31), (49)
ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված	(34), (42)
ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված	(1), (42)
ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(46)
ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(8)
ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(6), (28), (51)
ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(8)
ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(8), (53)
ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(53)
ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(53)
ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(48)
ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(46)
ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(28), (31), (33), (35), (47), (49), (51)
ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(28), (31), (35), (47), (49), (51)
ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(31)
ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդված	(10), (34), (42)

Աղբյուրների ցանկ թիվ 2

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. Assanidze v. Georgia, 2004 թվականի ապրիլի 8-ի վճիռ (23), (24)
2. Beyeler v. Italy. 2000 թվականի հունվարի 5-ի վճիռ (46)
3. Boldea v. Romania, 2007 թվականի փետրվարի 15-ի վճիռ (27)
4. Borzhonov v. Russia, 2009 թվականի հունվարի 22-ի վճիռ (46)
5. Broniowski v. Poland, 2004 թվականի հունիսի 22-ի վճիռ (23), (24)
6. Ceylan v. Turkey , 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռ (48)
7. Cumpănă and Mazăre v. Romania,
2004 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռ (48)
8. De Haes and Gijssels v. Belgium,
1997 թվականի փետրվարի 24-ի վճիռ (48)
9. Fey v. Austria, 1993 թվականի փետրվարի 24-ի վճիռ (48)
10. Gafgen v. Germany, 2010 թվականի հունիսի 1-ի վճիռ (24)
11. Golder v. The United Kingdom,
1975 թվականի փետրվարի 21-ի վճիռ (28)
12. Helle v. Finland, 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ (27)
13. Hirschhorn v. Romania,
2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ (28), (31)
14. J.A. Pye (Oxford) Ltd and J.A. Pye (Oxford) Land Ltd v.
15. the United Kingdom , 2007 թվականի օգոստոսի 30-ի վճիռ (46)
16. James and Others v. the United Kingdom,
1986 թվականի փետրվարի 21-ի վճիռ (46)
17. Janowski v. Poland , 1991 թվականի հունվարի 21-ի վճիռ (48)
18. Jeronovičs v. Latvia , 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռ (24)
19. Krastanov v. Bulgaria, 2004 թվականի սեպտեմբերի 30-ի վճիռ (24)
20. Lehideux and Isorni v. France,
1998 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռ (48)
21. Radchikov v. Russia, 2007 թվականի մայիսի 24-ի վճիռ (54)
22. Scozzari and Giunta v. Italy,
2000 թվականի հուլիսի 13-ի (23), (24)

23. Selcuk and Asker v. Turkey, 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռ (23)
24. Sporrong and Lonroth v. Sweden,
1982 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռ (46)
25. Van de Hurk v. the Netherlands, 1994 թվականի ապրիլի 19-ի վճիռ (27)
26. Winterwerp v. The Netherlands,
1979 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռ (28)
27. Worm v. Austria, 1997 թվականի օգոստոսի 29-ի վճիռ (48)
28. Xheraj v. Albania, 2008 թվականի հուլիսի 29-ի վճիռ (54)

Աղբյուրների ցանկ թիվ 3
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

1. ՍԳՈ-719, 2007 թվականի նոյեմբերի 28	(49)
2. ՍԳՈ-844, 2009 թվականի դեկտեմբերի 7	(10)
3. ՍԳՈ-851, 2010 թվականի հունվարի 14	(15)
4. ՍԳՈ-871, 2010 թվականի մարտի 30	(36)
5. ՍԳՈ-936, 2011 թվականի փետրվարի 8	(31), (49)
6. ՍԳՈ-997, 2011 թվականի նոյեմբերի 15	(48)
7. ՍԳՈ-1052, 2012 թվականի հոկտեմբերի 16	(56)
8. ՍԳՈ-1062, 2012 թվականի դեկտեմբերի 18	(22), (56)
9. ՍԳՈ-1257, 2016 թվականի մարտի 10	(31), (49)
10. ՍԳՈ-1268, 2016 թվականի ապրիլի 26	(56)

1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0217/01/14

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ դատախազ պաշտպան	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ Ռ.ՉԻԲՈՒԻՉՅԱՆԻ
--	---

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Տիգրան Գարեգինի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Չ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի նոյեմբերի 5-ին Կարինե Ամբարյանի հաղորդման հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Քննա-քեռ-Ձեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 09132214 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ Տիգրան Գարեգինի Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի դեկտեմբերի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 15-ի դատավճռով Ս.Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կիրառմամբ՝ դատավճիռների համակցությամբ, նշանակված պատժին լրիվ գումարվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունիսի 23-ի դատավճռով նշանակված 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանքը, և Ս.Առաքելյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Ամբաստանյալ Ս.Առաքելյանի պաշտպան Ռ.Չիբուխչյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի հունիսի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2015 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 15-ի դատավճիռը, Ս.Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի վարույթը կարճել է՝ նրան ազատելով քրեական պատասխանատվությունից:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Ս.Առաքելյանի պաշտպան Ռ.Չիբուխչյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը և բողոքարկվող դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ս.Առաքելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա 2014

թվականի հոկտեմբերի 26-ին՝ ժամը 18:45-ի սահմաններում Երևան քաղաքի Գ.Անհաղթ 3 շենքի 19 բնակարանում, գտնվելով այլոհոլային խմիչք օգտագործած վիճակում, իր աջ ձեռքի նախաբազկի ներսի մակերեսին խոհանոցային դանակով քերծվածքներ հասցնելուց հետո, ձեռքում եղած խոհանոցային դանակը առաջ-հետ շարժելով մոտեցել է իրենց բնակարան կանչով մեկնած «Երևան շտապօգնության» թիվ 12 բրիգադի բժշկուհի Կարինե Կարովի Ամբարյանին և սպանության սպառնալիք է տվել նրան՝ ստելով «կսպանեն», ստեղծելով իր կողմից տրված սպառնալիքները իրագործելու իրական վտանգ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 63-64):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում փաստել է. «[Գ]ործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, [դատարանը] գտնում է, որ ամբաստանյալ Տիգրան Առաքելյանի մեղավորությունը՝ սպանության սպառնալիք տալու մեջ, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, ապացուցված է:

Վերոհիշյալ հանցանքի կատարման համար ամբաստանյալը ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 65):

7. Վերաքննիչ դատարան ներկայացված բողոքում ամբաստանյալ Տ.Առաքելյանի պաշտպան Ռ.Չիրուխչյանը նշել է, որ 2014 թվականի հունիսի 23-ի դատավճռով նշանակված պատիժը՝ 100.000 ՀՀ դրամի չափով տուգանքը, 2015 թվականի հունիսի 11-ին վճարվել է, բացի այդ, դատավճռի կայացումից հետո՝ 2015 թվականի մայիսի 25-ին, ամբաստանյալ Տ.Առաքելյանը հաշտվել է տուժող Կ.Ամբարյանի հետ: Արդյունքում բողոքաբերը պահանջել է բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի հիման վրա ամբաստանյալ Տ.Առաքելյանին ազատել քրեական պատասխանատվությունից և կարճել գործի վարույթը (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 2-4):

8. Գեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-395-րդ, 402-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ իր դատական ակտում նշելով. «(...) Ամբաստանյալի պաշտպան Ռ.Չիրուխչյանը վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից տրված N 011720 տեղեկանքն այն մասին, որ ամբաստանյալ Տիգրան Առաքելյանի կողմից առաջին ատյանի դատարանի 23.06.2014թ. դատավճռով նշանակված տուգանքն ամբողջությամբ 11.06.2015թ.-ին վճարվել է:

Բացի այդ՝ վերաքննիչ բողոքին կից վերաքննիչ դատարան է ներկայացվել նաև տուժող Կարինե Ամբարյանի դիմումը, որով վերջինս

հայտնել է, որ դատավճռի կայացումից հետո ամբաստանյալ Ս.Առաքելյանը ներողություն է խնդրել իրենից, գղջացել է կատարածի համար, որի հիման վրա էլ ինքը հաշտվել է վերջինիս հետ և նրա դեմ որևէ պահանջ չունի:

Տուժող Կ.Ամբարյանն իր դիմումում նշել է նաև այն մասին, որ ինքը համաձայն է, որպեսզի ամբաստանյալ Ս.Առաքելյանն ազատվի քրեական պատասխանատվությունից:

(...) Այս առումով վերաքննիչ դատարանը հարկ է համարում փաստել, որ վերաքննիչ դատարանում պաշտպանության կողմը ներկայացրեց նոտարական հաստատումով հայտարարություն, որով տուժող Կարինե Ամբարյանը հայտնել է, որ հաշտվում է ամբաստանյալ Տիգրան Գարեգինի Առաքելյանի հետ, որ գիտակցում է ամբաստանյալ Տիգրան Առաքելյանի հետ հաշտվելու իրավական հետևանքների մասին, բավարարված է հանցագործությունից հետո ամբաստանյալ Տիգրան Առաքելյանի դրսևորած վարքագծից և համաձայն է, որ վերջինս ազատվի քրեական պատասխանատվությունից:

Վերոնշյալ հայտարարությամբ տուժող Կարինե Ամբարյանը հայտնել է նաև այն մասին, որ ինքը ամբաստանյալ Տիգրան Առաքելյանի նկատմամբ որևէ պահանջ չունի:

(...) Այսպիսով, վերոնշյալ հանգամանքների հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ **ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջների հիման վրա** ամբաստանյալ Տիգրան Գարեգինի Առաքելյանին պետք է ազատել քրեական պատասխանատվությունից և վերջինիս վերաբերյալ քրեական գործի վարույթը պետք է կարճել (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 42-43):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

9. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը նշել է, որ Ս.Առաքելյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելով և վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված է անձին քրեական պատասխանատվությունից ազատելու նյութական հիմքը, որն ինքնին չի կարող դատավարական նորմատիվ հիմք հանդիսանալ քրեական գործերով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու համար, իսկ նման դեպքերում դատարանները պետք է ղեկավարվեն կա՛մ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, կա՛մ 37-րդ հոդվածով:

9.1. Վերլուծելով ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքերի համապատասխան նորմերը՝ բողոք բերած անձը նշել է նաև, որ ժամանակային կամ փուլային առումով հաշտության թույլատրելիութ-

յունը կարգավորվում է միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված իմպերատիվ կանոնով, այն է՝ հաշտությամբ թույլատրվում է մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը: Այսինքն՝ տուժողի նշված իրավունքը սահմանափակված է առաջին ատյանի դատարանում քրեական գործի քննությամբ, հետևաբար, ըստ բողոքաբերի՝ վերադաս դատական ատյաններում տուժողը զրկված է օրենքով իրեն վերապահված հաշտության իրավունքից, և նրա հաշտվելու մասին դիրքորոշումը չի կարող հիմք հանդիսանալ քրեական գործի վարույթը կարճելու համար: Մինչդեռ բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը անտեսել է հաշտության թույլատրելիության պահի վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով սահմանված կանոնը:

10. Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, չի ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկով: Չմայած որոշման եզրափակիչ մասում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ որոշում կայացնելիս ղեկավարվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածով, սակայն չի պատճառաբանել, թե Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճռով գործի ելքի վրա ազդած դատական սխալն արտահայտվել է նյութական, թե՞ դատավարական իրավունքի խախտմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք ներկայացրած անձը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը տուժող Կ.Ամբարյանի և ամբաստանյալ Ս.Առաքելյանի հաշտության հիմքով վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է դատավարական տվյալ փուլում ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառման անհնարինության պայմաններում: Օրենքով սահմանված պայմանների անտեսմամբ ամբաստանյալ Ս.Առաքելյանին ազատելով ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված հանցագործության համար քրեական պատասխանատվությունից՝ դրսևորել է բացարձակ հայեցողություն, ինչի արդյունքում խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի պահանջները՝ կայացրել է չիիմնավորված և չպատճառաբանված դատական ակտ:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Զանաբեռ-Չեթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 15-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ և ՀՀ քրեա-

կան դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածներ) հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավահարաբերությունները կարգավորող նորմերի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված է արդյոք մասնավոր մեղադրանքի գործով Տ.Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի հիման վրա կարճելու և նրան քրեական պատասխանատվությունից ազատելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝

«Ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (...) 73-րդ (...) հոդված[ով] նախատեսված դեպքերում»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով տուժողի հետ հաշտվելը նախատեսված է որպես հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն հիմք: Միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է քրեական պատասխանատվությունից ազատելու քննարկվող հիմքի կիրառման համար անհրաժեշտ պահանջները: Մասնավորապես, այդպիսիք են՝

- 1) անձի կողմից ոչ մեծ ծանրության հանցանք կատարած լինելը,
- 2) տուժողի և հանցանք կատարած անձի հաշտությունը,
- 3) պատճառված վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը:

Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված պահանջների առկայությունը դեռևս չի հանգեցնում անձին քրեական պատասխանատվությունից ազատելուն. այդ պահանջների առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը քննարկում է անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը և օժտված է հայեցողական լիազորությամբ: Քննարկվող հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու դիսպոզիտիվությունն իր դատավարական արտահայտությունն է գտել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածում, որն ուղղակիորեն նախատեսում է ՀՀ քրեա-

կան օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու՝ վարույթն իրականացնող մարմնի **հայեցողությունը**:

14.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածը սահմանում է.

«1. Կատարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով:

2. Մասնավոր հետապնդման գործեր են համարվում սույն օրենսգրքի 183 հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 36-րդ հոդվածի համաձայն՝

«Սույն օրենսգրքի 33 հոդվածի երկրորդ մասում նշված հանցագործությունների վերաբերյալ գործերով վարույթը կարճվում է և փաստվում է քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարում, երբ տուժողը հաշտվում է մեղադրյալի հետ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի [համապատասխան հոդվածներով] նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ անբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման (...):»:

Մեջբերված դրույթների համադրված վերլուծությունից երևում է, որ քրեադատավարական օրենսդրությունը, արարքի հանրային նվազ վտանգավորության հանգամանքով պայմանավորված, առանձնացնում և հստակ սահմանում է մասնավոր հետապնդման գործերի շրջանակը, որոնց համար նախատեսում է քննության առանձնահատուկ դատավարական կարգ: Մասնավորապես, մասնավոր հետապնդման գործերը կարող են հարուցվել բացառապես տուժողի բողոքի հիման վրա և կասկածյալի կամ մեղադրյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նա-

խատեսված նորմը կիրառելի է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) առկա է մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդում (անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք): Սույն դիրքորոշումը պայմանավորված է օրենսդրի կողմից քննարկվող նորմում *«սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»* պայմանի նախատեսմամբ: Մասնավորապես, տուժողի կողմից կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքը վերաբերում է մասնավոր մեղադրանքի գործերով հաշտությանը, որը նախատեսված է նշյալ օրենսգրքի 33-րդ, 36-րդ և 183-րդ հոդվածներով:

բ) տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերը կրում են իմպերատիվ բնույթ, և դրանցից մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ՝ եթե վարույթն իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման (*տե՛ս Արամ Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0503/06/10 որոշման 20-րդ կետը*): Հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքի կիրառելիության՝ ա) և բ) ենթակետերում շարադրված պայմանների առկայությունը առաջացնում է հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու՝ վարույթն իրականացնող մարմնի **պարտականությունը**:

15. Հիմք ընդունելով սույն որոշման 14-րդ և 14.1.-րդ կետերում շարադրված վերլուծությունը, ինչպես նաև վերահաստատելով *Ա.Բարսայանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները (*տե՛ս Ա.Բարսայանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱԶԳ/0157/01/10 որոշման 15-19-րդ կետերը*)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե՛ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի, թե՛ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կիրառման պահանջներից մեկը տուժողի և հանցագործություն կատարած անձի հաշտությունն է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հաշտության քրեաիրավական և քրեադատավարական կառուցակարգերը չեն նույնանում: Դրանք տարբերվում են մի շարք հատկանիշներով: Այսպես՝

ա) ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով ամրագրված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը նյութաիրավական բնույթ ունի, որի կիրառման դատավարական հիմքն է ՀՀ քրեա-

կան դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածը: Ինչ վերաբերում է մասնավոր մեղադրանքի ինստիտուտին, ապա այն քրեադատավարական բնույթ ունի, որի հիմքով քրեական հետապնդման դադարեցումը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,

բ) այն պայմաններում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում առկա են 100-ից ավելի ոչ մեծ ծանրության հանցակազմեր, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածում սահմանված են ոչ մեծ ծանրության թվով 26 հանցակազմ: Բացի այդ, նույն հոդվածով նախատեսված է նաև միջին ծանրության թվով 2 հանցակազմ: Այլ խոսքով՝ եթե մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործի վարույթը կարճելը հնարավոր է միջին ծանրության որոշակի, ինչպես նաև սահմանափակ թվով ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը կարող է կիրառվել միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում,

գ) ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածում սահմանված է, որ անձը **«կարող է»** ազատվել քրեական պատասխանատվությունից, դրան համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ վարույթն իրականացնող մարմինները **«կարող են»** հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված է, որ քրեական գործի վարույթը **«ենթակա է կարճման»**: Այսպիսով, օրենսդիրը հստակ սահմանել է, որ մասնավոր մեղադրանքի գործերով կողմերի հաշտության դեպքում իրավակիրառ մարմինը **պարտավոր է** կարճել քրեական գործի վարույթը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված՝ տուժողի հետ հաշտվելու դեպքում **կարող է** ազատել քրեական պատասխանատվությունից՝ դադարեցնելով քրեական հետապնդումը և կարճելով քրեական գործի վարույթը: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը վարույթն իրականացնող մարմնի համար նախատեսված է որպես **տնօրինչական լիազորություն**: Մինչդեռ մասնավոր մեղադրանքի գործերով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի առկայությունը վարույթն իրականացնող մարմնի համար առաջացնում է քրեական հետապնդումը դադարեցնելու **պարտականություն**:

15.1. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճարելի դատարանն արձանագրում է, որ հաշտության քրեաիրավական և քրեադատավարական ինստիտուտները համապատասխանաբար «անձ և պետություն» ու «անձ և տուժող» քրեաիրավական վեճի հաղթահարման կառուցակարգեր են: Մասնավորապես, հաշտության նյութաիրավական ինստիտուտը հանցագործության հետևանքով խախտված մասնավոր և հանրային շահերի հավասարակշռման կա-

ուցակարգ է, որով էլ պայմանավորված՝ հանցանք կատարած անձի համար նախատեսվում է քրեական պատասխանատվությունից ազատվելու բարդեցված կարգ, քանի որ հանրային շահի բավարարման համար, տուժողի կամահայտնությունից բացի, անհրաժեշտ է նաև սոցիալապես դրական այլ հանգամանքների առկայություն: Վերջիններիս բավարարության գնահատման հայեցողությունն էլ թողնված է պետությանը՝ ի դեմս վարույթն իրականացնող մարմինների: Մինչդեռ մասնավոր մեղադրանքի գործերով հաշտության քրեադատավարական ինստիտուտը հանդիսանում է հակադիր մասնավոր շահերի հավասարակշռման կառուցակարգ, որով պայմանավորված էլ տուժողի կամահայտնությունը որոշիչ նշանակություն ունի հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելիս և բացառում է պետության՝ ի դեմս վարույթն իրականացնող մարմինների հայեցողությունը:

Այլ խոսքով՝ հաշտության նյութաիրական ինստիտուտը (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածներ) կիրառելի է միայն հանրային հետապնդման գործերով, իսկ քրեադատավարական ինստիտուտը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ և 183-րդ հոդված)՝ մասնավոր հետապնդման գործերով: Հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածները կիրառելի չեն մասնավոր հետապնդման այն գործերով, որոնք վերաբերում են ոչ մեծ ծանրության հանցագործություններին: Վճռաբեկ դատարանի վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նաև նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և 183-րդ հոդվածը, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի, նախատեսում են քրեական գործի վարույթը կարճելու **անվերապահ հիմք**, որի առկայությունն արդեն իսկ **իմաստագրկում է ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված մնացած պայմանների առկայության քննարկումը**, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինների **հայեցողության** դրսևորումը:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մասնավոր հետապնդման գործերով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 183-րդ հոդվածով նախատեսված կարգավորումից զատ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը, արտահայտելով քրեական օրենսդրության արդարության և մարդասիրության սկզբունքը, նախատեսում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործերով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն հիմք, որի կիրառման պայմանները և ընթացակարգն էապես տարբերվում են մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու կառուցակարգից:

17. Սույն գործի փաստերի համաձայն՝ Տ.Առաքելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, գտնվելով ալկոհոլային խմիչք օգտագործած վիճակում, իր աջ ձեռքի նախաբազկի ներսի մակերեսին խոհանոցային դանակով քերծվածքներ հասցնելուց հետո, ձեռքում եղած խոհանոցային դանակը առաջ-հետ շարժելով, մոտեցել է իրենց բնակարան կանչով մեկնած «Երևան շտապօգնության» թիվ 12 քրիզադի բժշկուհի Կ.Ամբարյանին և ասելով «կսպանենմ»՝ տվել սպանության սպառնալիք՝ ստեղծելով իր կողմից տրված սպառնալիքներն իրագործելու իրական վտանգ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի դատավճռով Տ.Առաքելյանը մեղավոր է ճանաչվել իրեն մեղաագրվող արարքում, և նրա նկատմամբ նշանակվել է ազատազրկման ձևով պատիժ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով տուժող Կ.Ամբարյանի դիմումը և գրավոր հայտարարությունն առ այն, որ ինքը հաշտվել է ամբաստանյալի հետ և նրա դեմ որևէ պահանջ չունի, գտել է, որ **ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջների հիման վրա** ամբաստանյալ Տ.Առաքելյանին պետք է ազատել քրեական պատասխանատվությունից և վերջինիս վերաբերյալ քրեական գործի վարույթը պետք է կարճել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18. Սույն որոշման 14-16-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները կիրառելով նախորդ կետում մեջբերված փաստերի նկատմամբ՝ Վճարելի դատարանն փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասն ընդգրկված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մասնավոր հետապնդման գործերի շրջանակում, որի դեպքում տուժողի հետ հաշտվելու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու իրավական հենքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն է: Նման պայմաններում Վճարելի դատարանն արձանագրում է, որ Տ.Առաքելյանին հաշտության նյութաիրավական՝ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված հիմքով ազատելով քրեական պատասխանատվությունից՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, մասնավորապես՝ կիրառել է նյութական իրավունքի այն նորմը, որը տվյալ դեպքում ենթակա չէր կիրառման:

19. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ մասնավոր մեղադրանքի գործով Տ.Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի հիման վրա կարճելու և նրան քրեական պատասխանատվությունից ազատելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը օրինական և հիմնավորված չէ:

Վերաքննիչ դատարանը, ոչ ճիշտ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը, դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիա-

գործությունների շրջանակից՝ խախտելով ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 6-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները (օրինականության սկզբունք): Արդյունքում Վերաքննիչ դատարանը կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ: Նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու հիմք են:

Վերոնշյալի համատեքստում Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի մնացած փաստարկները (տե՛ս սույն որոշման 9.1.-10-րդ կետերը) կարող են քննարկման առարկա դարձվել Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված և սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով (2005 թվականի փոփոխություններով), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Տիգրան Գարեգինի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Գատավորներ՝

ստորագրություններ

ԵԱԲԳ/0217/01/14

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՄԵԿ ԳԱՏԱՐԱՆ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ԳԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ**

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

Ամբաստանյալ Տիգրան Գարեգինի Առաքելյանի գործով ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ Վճարելի դատարան)՝ 2016 թվականի մարտի 30-ի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի նոյեմբերի 5-ին Կարինե Ամբարյանի հաղորդման հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 09132214 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ Տիգրան Գարեգինի Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի դեկտեմբերի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 15-ի դատավճռով Տ.Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կիրառմամբ, դատավճիռների համակցությամբ, նշանակված պատժին լրիվ գումարվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունիսի 23-ի դատավճռով նշանակված 100.000 ՀՀ դրամ տուգանքը և Տ.Առաքելյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 տարի ժամկետով և տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

3. Ամբաստանյալ Տ.Առաքելյանի պաշտպան Ռ.Չիբուխչյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հունիսի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2015 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 15-ի դատավճիռը, Տիգրան Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճել է՝ նրան ազատելով քրեական պատասխանատվությունից:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Տ.Առաքելյանի պաշտպան Ռ.Չիբուխչյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը և բողոքարկվող դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Տիգրան Առաքելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) *նա 2014 թվականի հոկտեմբերի 26-ին՝ ժամը 18:45-ի սահմաններում, Երևան քաղաքի Դ.Անհաղթ 3 շենքի 19 բնակարանում, գտնվելով ակոխողային խմիչք օգտագործած վիճակում, իր աջ ձեռքի նախաբազկի ներսի մակերեսին խոհանոցային դանակով քերծվածքներ հասցնելուց հետո, ձեռքում եղած խոհանոցային դանակը առաջ-հետ շարժելով, մոտեցել է իրենց բնակարան կանչով մեկնած «Երևան շտապօգնության» թիվ 12 բրիգադի բժշկուհի Կարինե Կարովի Ամբարյանին և սպանության սպառնալիք է տվել նրան՝ ասելով «կսպանեմ»՝ ստեղծելով իր կողմից տրված սպառնալիքները իրագործելու իրական վտանգ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 92-95):*

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «*[Գ]ործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, [դատարանը] գտնում է, որ ամ-*

բաստանյալ Տիգրան Առաքելյանի մեղավորությունը՝ սպանության սպանալիք տալու մեջ, եթե այդ սպանալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, ապացուցված է:

Վերոհիշյալ հանցանքի կատարման համար ամբաստանյալը ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի»: (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 63-68):

7. Վերաքննիչ դատարան ներկայացված բողոքում ամբաստանյալ Ս.Առաքելյանի պաշտպան Ռ.Չիրուխչյանը նշել է, որ 2014 թվականի հունիսի 23-ի դատավճռով նշանակված պատիժը՝ տուգանքը 100.000 ՀՀ դրամի չափով, 2015 թվականի հունիսի 11-ին վճարվել է, բացի այդ, դատավճռի կայացումից հետո՝ 2015 թվականի մայիսի 25-ին, ամբաստանյալ Ս.Առաքելյանը հաշտվել է տուժող Կ.Ամբարյանի հետ: Արդյունքում բողոքաբերը պահանջել է բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի հիման վրա ամբաստանյալ Ս.Առաքելյանին ազատել քրեական պատասխանատվությունից և կարճել գործի վարույթը (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 2-4):

8. Դեկավարվելով **ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով**, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-395-րդ, 402-րդ հոդվածներով Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ իր դատական ակտում նշելով. «(...) *Ամբաստանյալի պաշտպան Ռ.Չիրուխչյանը վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից տրված N 011720 տեղեկանքն այն մասին, որ ամբաստանյալ Տիգրան Առաքելյանի կողմից առաջին ատյանի դատարանի՝ 23.06.2014թ. դատավճռով նշանակված տուգանքն ամբողջությամբ 11.06.2015թ.-ին վճարվել է:*

Բացի այդ, վերաքննիչ բողոքին կից վերաքննիչ դատարան է ներկայացվել նաև տուժող Կարինե Ամբարյանի դիմումը, որով վերջինս հայտնել է, որ դատավճռի կայացումից հետո ամբաստանյալ Ս.Առաքելյանը ներողություն է խնդրել իրենից, զղջացել է կատարածի համար, որի հիման վրա էլ ինքը հաշտվել է վերջինիս հետ և նրա դեմ որևէ պահանջ չունի:

Տուժող Կ.Ամբարյանն իր դիմումում նշել է նաև այն մասին, որ ինքը համաձայն է, որ ամբաստանյալ Ս.Առաքելյանն ազատվի քրեական պատասխանատվությունից:

(...) Այս առումով վերաքննիչ դատարանը հարկ է համարում փաստել, որ վերաքննիչ դատարանում պաշտպանության կողմը ներկայացրեց նոտարական հաստատումով հայտարարություն, որով տուժող Կարինե Ամբարյանը հայտնել է, որ հաշտվում է ամբաստանյալ Տիգրան Գարեգինի Առաքելյանի հետ, որ գիտակցում է ամբաստանյալ Տիգրան Առաքելյանի հետ հաշտվելու իրավական հետևանքների մասին, բավարարված է հանցագործությունից հետո ամբաստանյալ Տիգրան Առաքելյանի դրսևո-

րած վարքագծից և համաձայն է, որ վերջինս ազատվի քրեական պատասխանատվությունից:

Վերոնշյալ հայտարարությամբ տուժող Կարինե Ամբարյանը հայտնել է նաև այն մասին, որ ինքն ամբաստանյալ Տիգրան Առաքելյանի նկատմամբ որևէ պահանջ չունի:

(...) Այսպիսով, վերոնշյալ հանգամանքների հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջների հիման վրա ամբաստանյալ Տիգրան Գարեգինի Առաքելյանին պետք է ազատել քրեական պատասխանատվությունից և վերջինիս վերաբերյալ քրեական գործի վարույթը պետք է կարճել (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 37-43):

3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

9. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը նշել է, որ Տ.Առաքելյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելով և վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված է անձին քրեական պատասխանատվությունից ազատելու նյութական հիմքը, որն ինքնին չի կարող դատավարական նորմատիվ հիմք հանդիսանալ քրեական գործերով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու համար, իսկ նման դեպքերում դատարանները պետք է ղեկավարվեն կա՛ն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, կա՛ն 37-րդ հոդվածով:

9.1. Վերլուծելով ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքերի համապատասխան նորմերը՝ բողոք բերած անձը նշել է նաև, որ ժամանակային կամ փուլային առումով հաշտության թույլատրելիությունը կարգավորվում է միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված իմպերատիվ կանոնով, այն է՝ հաշտությունը թույլատրվում է մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը: Այսինքն՝ տուժողի նշված իրավունքը սահմանափակված է առաջին ատյանի դատարանում քրեական գործի քննությամբ, հետևաբար, ըստ բողոքաբերի՝ վերադաս դատական ատյաններում տուժողը զրկված է օրենքով իրեն վերապահված հաշտության իրավունքից, և նրա հաշտվելու մասին դիրքորոշումը չի կարող հիմք հանդիսանալ քրեական գործի վարույթը կարճելու համար: Մինչդեռ բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանը անտեսել է հաշտության թույլատրելիության պահի վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով սահմանված կանոնը:

10. Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, չի ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկով: Չնայած որոշման եզրափակիչ մասում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ որոշում կայացնելիս ղեկավարվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածով, սակայն չի պատճառաբանել, թե Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճռով գործի ելքի վրա ազդած դատական սխալն արտահայտվել է նյութական, թե դատավարական իրավունքի խախտմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք ներկայացրած անձը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը տուժող Կ.Ամբարյանի և ամբաստանյալ Տ.Առաքելյանի հաշտության հիմքով վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է դատավարական տվյալ փուլում ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառման անհնարինության պայմաններում: Օրենքով սահմանված պայմանների անտեսմամբ ամբաստանյալ Տ.Առաքելյանին ազատելով ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված հանցագործության համար քրեական պատասխանատվությունից՝ դրսևորել է բացարձակ հայեցողություն, ինչի արդյունքում խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի պահանջները՝ կայացրել է չիիմնավորված և չպատճառաբանված դատական ակտ:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Զանաբեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 15-ի դատավճռին:

4. Գատավորներ Ա.Պողոսյանի և Ս.Ավետիսյանի իրավական դիրքորոշումը.

12. Ուսումնասիրելով Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը, ծանոթանալով քրեական գործի նյութերին և վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի փաստարկներին և հիմնավորումներին՝ համաձայն չենք Տ.Առաքելյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի որոշման (այսուհետ՝ Որոշում) պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի հետ ներքոշարադրյալ պատճառաբանություններով:

13. Վճռաբեկ դատարանը Որոշմամբ արձանագրել է, որ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածներ) հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավահարաբերությունները կարգավորող նորմերի մեկնաբան-

ման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված է արդյոք մասնավոր մեղադրանքի գործով Տ.Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի հիման վրա կարճելու և նրան քրեական պատասխանատվությունից ազատելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

Վերլուծության ենթարկելով տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավահարաբերությունները կարգավորող նորմերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թե՛ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի, թե՛ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կիրառման պահանջներից մեկը տուժողի և հանցագործություն կատարած անձի հաշտությունն է: Սիւնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հաշտության քրեաիրավական և քրեադատավարական կառուցակարգերը չեն նույնանում՝ տարբերվելով հետևյալ հատկանիշներով.

ա) ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով ամրագրված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը նյութաիրավական բնույթ ունի, որի կիրառման դատավարական հիմքն է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածը: Ինչ վերաբերում է մասնավոր մեղադրանքի ինստիտուտին, ապա այն քրեադատավարական բնույթ ունի, որի հիմքով քրեական հետապնդման դադարեցումը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,

բ) այն պայմաններում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում առկա են 100-ից ավելի ոչ մեծ ծանրության հանցակազմեր, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածում սահմանված են ոչ մեծ ծանրության թվով 26 հանցակազմ: Բացի այդ, նույն հոդվածով նախատեսված է նաև միջին ծանրության թվով 2 հանցակազմ: Այլ խոսքով՝ եթե մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործի վարույթը կարճելը հնարավոր է միջին ծանրության որոշակի, ինչպես նաև սահմանափակ թվով ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը կարող է կիրառվել միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում,

գ) ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածում սահմանված է, որ անձը «կարող է» ազատվել քրեական պատասխանատվությունից, դրան համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ վարույթն իրականացնող մարմինները «կարող են» հարուցված քրեական գործի վարույթը կարճել և

քրեական հետապնդումը դադարեցնել: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված է, որ քրեական գործի վարույթը «**ենթակա է կարճման**»: Այսպիսով, օրենսդիրը հստակ սահմանել է, որ մասնավոր մեղադրանքի գործերով կողմերի հաշտության դեպքում իրավակիրառ մարմինը **պարտավոր է** կարճել քրեական գործի վարույթը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված՝ տուժողի հետ հաշտվելու դեպքում **կարող է** ազատել քրեական պատասխանատվությունից՝ դադարեցնելով քրեական հետապնդումը և կարճելով քրեական գործի վարույթը: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը վարույթն իրականացնող մարմնի համար նախատեսված է որպես **տնօրինչական լիազորություն**: Մինչդեռ մասնավոր մեղադրանքի գործերով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի առկայությունը վարույթն իրականացնող մարմնի համար առաջացնում է քրեական հետապնդումը դադարեցնելու **պարտականություն** (տե՛ս Որոշման 15-րդ կետը)

Ամփոփելով ասվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ հաշտության նյութաիրավական ինստիտուտը (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածներ) կիրառելի է միայն հանրային հետապնդման գործերով, իսկ քրեադատավարական ինստիտուտը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ և 183-րդ հոդված)՝ մասնավոր հետապնդման գործերով: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածները կիրառելի չեն մասնավոր հետապնդման այն գործերով, որոնք վերաբերում են ոչ մեծ ծանրության հանցագործությունների: Վճռաբեկ դատարանի վերջին դիրքորոշումը հիմնավորվել է նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և 183-րդ հոդվածը, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի, նախատեսում են քրեական գործի վարույթը կարճելու **անվերապահ հիմք**, որի առկայությունն արդեն իսկ **իմաստագրկում է** ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված մնացած պայմանների առկայության քննարկումը, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինների **հայեցողության** դրսևորումը (տե՛ս Որոշման 15.1-րդ կետը):

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Տ.Առաքելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված հիմքով ազատելով քրեական պատասխանատվությունից, թույլ է տվել դատական սխալ (կիրառել է նյութական իրավունքի այն նորմը, որը տվյալ դեպքում ենթակա չէր կիրառման), քանի որ ամբաստանյալին մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքն ընդգրկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ մասնավոր հետապնդ-

ման գործերի շրջանակում, որի դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատվելու իրավական հենքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն է: Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, ոչ ճիշտ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը, դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները (օրինականության սկզբունք)՝ կայացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ: Նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները Վճռաբեկ դատարանի համար հիմք են հանդիսացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար (տե՛ս Որոշման 18-19-րդ կետերը):

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ բողոքաբերի մնացած փաստարկները (տե՛ս հատուկ կարծիքի 9.1-10-րդ կետերը) կարող են քննարկման առարկա դարձվել Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված և Որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

14. Ընդհանրացնելով մեջբերված իրավական դիրքորոշումները և եզրահանգումները՝ նախևառաջ հարկ ենք համարում նշել, որ ամբողջությամբ համաձայն ենք տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածներ) հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավահարաբերությունները կարգավորող նորմերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի մեծամասնության դիրքորոշման հետ: Այս կապակցությամբ գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանի եզրահանգումներն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ ոչ ճիշտ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը, ամբողջությամբ իրավաչափ է:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի մեծամասնության դիրքորոշմանն առ այն, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակորեն, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության, հարկ ենք համարում նշել, որ դրա վերաբերյալ ունենք վերապահումներ:

Այսպես՝ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրահանգել, որ թեև Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Տ.Առաքելյանին քրեական պատասխանատվությունից ազատելիս կիրառել է նյութական իրավունքի այն նորմը, որը ենթակա չէր կիրառման, այնուամենայնիվ թույլ տրված դատական սխալը չի ազդել գործի ելքի վրա: Այլ խոսքով ասած՝ Վերաքննիչ դատարանը

րանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, սակայն սխալ է պատճառաբանել այն: Ասվածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ հաշտության և՛ քրեաիրավական, և՛ քրեադատավարական ինստիտուտների կիրառման պարագայում ակնկալվում է մեկ ելք՝ անձի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցում և քրեական պատասխանատվությունից ազատում: Ընդ որում, հաշտության քրեադատավարական կառուցակարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի և նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կիրառումը) ենթադրում է քրեական դատավարության ցանկացած փուլում անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու՝ վարույթն իրականացնող մարմնի (այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի) **պարտականությունը** (տե՛ս *Արամ Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԿ/0503/06/10 որոշման 20-րդ կետը և Որոշման 14.1-րդ կետը*):

Ուստի հարկ է արձանագրել, որ իրավաչափ չէ Վճռաբեկ դատարանի մեծամասնության այն դիրքորոշումը, որ գործը պետք է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության (ընդ որում, Որոշմամբ չի հստակեցվել նաև նոր քննության ծավալը): Տվյալ դեպքում առավել նպատակահարմար ենք համարում վճռաբեկ բողոքը մերժելու և Վերաքննիչ դատարանի՝ սխալ պատճառաբանված դատական ակտը Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով օրինական ուժի մեջ թողնելու տարբերակը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Մասնավորապես գտնում ենք, որ ամբաստանյալ Տ.Առաքելյանին քրեական պատասխանատվությունից ազատելու և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնվեր անփոփոխ՝ հաշվի առնելով հաշտության քրեաիրավական և քրեադատավարական կառուցակարգերի, ինչպես նաև սույն գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի Որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

15. Բացի այդ, հարկ ենք համարում նշել, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Այսինքն՝ գործը ողջամիտ ժամկետում քննելը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Այս պայմաններում Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելը (Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններով) բխում է ոչ միայն հաշտության քրեադատավարական կառուցակարգի կիրառման՝ վերը քննարկված առանձնահատկություններից, այլև դատական ակտի բողոքարկման և կրկին բեկանման շրջապ-

տույտից խուսափելու անհրաժեշտությունից ու արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Այս համատեքստում անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկներին, որոնք Որոշմամբ քննարկման առարկա չեն դարձվել (մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը հաշտության թույլատրելիության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի պահանջների անտեսման վերաբերյալ), հարկ է նշել, որ դրանցից առաջինի վերաբերյալ մեր կարծիքով Վճարելի դատարանի մեծամասնությունն արդեն իսկ իրավական դիրքորոշումներ է հայտնել՝ մասնավորապես արձանագրելով, որ հաշտության քրեադատավարական կառուցակարգը կարող է կիրառվել քրեական դատավարության ցանկացած փուլում, իսկ ինչ վերաբերում է երկրորդին, ապա գտնում ենք, որ բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ - հոդված) Վերաքննիչ դատարանի կողմից չհստակեցնելու վերաբերյալ փաստարկների քննարկումն իմաստագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայությամբ:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ, 361¹-րդ, 415-րդ, 419-րդ և 422-րդ հոդվածներով, չհամաձայնվելով դատավորների մեծամասնության հետ՝ մնում ենք

հատուկ կարծիքի՝

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճարելի բողոքը պետք է մերժվեր: Ամբաստանյալ Տիգրան Գարեգինի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը պետք է թողնվեր օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Դատավորներ՝

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

_____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԳ/0137/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Լևոն Արմենակի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի ապրիլի 4-ին Սյունիքի մարզի քննչական բաժնում թիվ 41106613 քրեական գործի նյութերով հարուցվել է թիվ 41105114 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով և առանձնացվել առանձին վարույթում:

2014 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ Լ.Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Լ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2014 թվականի օգոստոսի 11-ին Լ.Պետրոսյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 9-ի դատավճռով Լ.Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Լ.Պետրոսյանն ազատվել է նշանակված պատժից: Լ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացվել է:

3. Պաշտպան Հ.Գավթյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի մայիսի 12-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 9-ի դատավճիռը և Լ.Պետրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցրել է և քրեական գործի վարույթը կարճել է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Լ.Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա, աշխատելով ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ և հանդիսանալով պաշտոնատար անձ, ղիտավորությամբ

կատարել է գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իր լիազորությունների շրջանակից և պետության օրինական շահերին պատճառել են էական՝ 7.350.000 ՀՀ դրամ վնաս:

Այսպես.

«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման գումարի պետական բյուջե գանձումը կատարվում է բնապահպանական տեսչական մարմնի կողմից իրավախախտման դեպքի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա, իսկ իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ արձանագրությունն ստանալուց հետո՝ իրավախախտողի կողմից 10-օրյա ժամկետում, բանկային համակարգի միջոցով ՀՀ պետական բյուջե վնասի հատուցման գումարն ինքնակամ չվճարելու դեպքում գումարի վճարումն ապահովվում է դատական կարգով՝ տեսչական մարմնի ներկայացրած հայցի հիման վրա:

2012 թվականի հունվարի 11-ին «Դինո Գոլդ Մայնինգ Բանկին» ՓԲԸ թափուկատարի վթարի հետևանքով 1465 քառակուսի մետր հողատարածք աղտոտվելու կապակցությամբ 2012 թվականի հունվարի 12-ին կազմվել է իրավախտման արձանագրություն և կատարվել պատճառված վնասի հաշվարկ, որի համաձայն՝ 1465 քառակուսի մետր հողատարածքի աղտոտման հետևանքով շրջակա միջավայրին պատճառվել է 14.650.000 ՀՀ դրամ վնաս:

2012 թվականի փետրվարի 6-ին Լ. Պետրոսյանը «Դինո Գոլդ Մայնինգ Բանկին» ՓԲԸ տնօրենին կից գրությամբ ուղարկել է վերը նշված արձանագրությունը և հաշվարկը՝ մեկամսյա ժամկետում 14.650.000 ՀՀ դրամ գումարը պետական բյուջե վճարելու պահանջով, նախազգուշացնելով չվճարելու դեպքում գումարի բռնագանձումն իրականացնել դատական կարգով: Մինչդեռ շուրջ երկու ամիս անց՝ 2012 թվականի ապրիլի 25-ին ընկերության տնօրենից ստացել է շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկի ընկերության կողմից կատարված տարբերակը և դուրս գալով «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից, ընդունել է այն՝ համաձայնելով պետական բյուջե վնասի միայն մի մասը՝ 7.300.000 ՀՀ դրամը վճարելու առաջարկին՝ ակնհայտորեն դուրս գալով օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակից, ինչի հետևանքով պետության օրինական շահերին պատճառվել է էական՝ 7.350.000 ՀՀ դրամ վնաս: Հետագայում Լևոն Պետրոսյանի կողմից միջոցներ չեն ձեռնարկվել վնասի

չվճարված մասը՝ 7.350.000 ՀՀ դրամ գումարն ընկերությունից բռնագանձելու ուղղությամբ»:

6. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժնի պետին ուղղված 2014 հունիսի 5-ի գրությամբ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության պետ Ա.Ավագյանը հայտնել է, որ օրենքով սահմանված կարգով կազմված «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲ ընկերության պոչատարի խողովակաշարի վրա տեղի ունեցած վթարի արդյունքում հասցված վնասի հաշվարկում փոփոխություն կատարելու նպատակով վերադասին դիմելու կամ վնասի հաշվարկում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնություն տալու որևէ նորմ, կարգ կամ ընթացակարգ ՀՀ իրավական ակտերով նախատեսված չէ (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 132):

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 29-ի դատական նիստի ժամանակ Լ.Պետրոսյանի պաշտպանը միջնորդել է հետաձգել դատական նիստը ամբաստանյալ Լ.Պետրոսյանի՝ տեսչության պետին ուղղված 2012 թվականի հունվարի 13-ի զեկուցագիրը և 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 3.8.10/Ն գրության շարժը հավաստող գրավոր փաստաթուղթը ձեռք բերելու համար: Հետագա երկու՝ 2014 թվականի հոկտեմբերի 1-ի և 10-ի դատական նիստերը հետաձգվել են պաշտպանի, ապա՝ ամբաստանյալի չներկայանալու պատճառներով (տե՛ս Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 29-ի, հոկտեմբերի 1-ի և 10-ի դատական նիստերի արձանագրությունները):

2014 թվականի հոկտեմբերի 20-ի դատական նիստի ժամանակ պաշտպանը միջնորդել է քրեական գործով վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել: Իր միջնորդությունը պաշտպանը, ի թիվս այլոց, հիմնավորել է նրանով, որ Լ.Պետրոսյանը գործել է վերադասի ցուցումով: Պաշտպանի միջնորդության կապակցությամբ մեղադրողը հայտարարել է, որ քրեական գործում չկա որևէ ապացույց այն մասին, որ Լ.Պետրոսյանը ընկերության կողմից առաջարկվող վերահաշվարկի մասին գրավոր զեկուցել է տեսչության պետին, իսկ վերջինս տվել է իր գրավոր համաձայնությունը (տե՛ս Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 20-ի դատական նիստի արձանագրությունը):

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 27-ի նիստի ժամանակ դատական վիճաբանությունների փուլում պաշտպանը և ամբաստանյալն իրենց ճառերում հիշատակել են գրավոր փաստաթղթերի մասին, որոնք հիմնավորում են, որ Լ.Պետրոսյանը գործել է վերադասի ցուցումով: Նույն նիստի ժամանակ մեղադրողը ռեպլիկի կարգով հանդես է եկել հայտարարությամբ, որ նշված հանգամանքները հաստատող՝ պաշտպանի և ամբաստանյալի նշած գրավոր ապացույցները դատաքննության ընթացքում չեն հետազոտվել, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 354-րդ հոդվածի 5-րդ մասի համա-

ձայն՝ իրենց ճառերում կողմերն իրավունք չունեն հիմնվել այնպիսի ապացույցների վրա, որոնք չեն հետազոտվել դատաքննության ժամանակ: Նախագահող դատավորը փաստել է, որ նախորդ դատական նիստերի ժամանակ ևս պաշտպանության կողմը վկայակոչել է նշված փաստաթղթերը, սակայն այդպես էլ դրանք չի ներկայացրել: Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ նշված փաստաթղթերը վերաբերում են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների, որոնք դեռևս չեն պարզվել, իսկ ամբաստանյալն էլ իր անմեղությունը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու պարտականություն չունի՝ Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել դատաքննությունը վերսկսելու և կոնկրետ հանգամանքները պարզելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, մասնավորապես՝ վկաներ հրավիրելու մասին: Պաշտպանն Առաջին ատյանի դատարանի որոշման առնչությամբ հանդես է եկել հայտարարությամբ, որ դատաքննությունը վերսկսելու պարագայում վերջինս համապատասխան գրավոր փաստաթղթերը ներկայացնելու հնարավորություն կունենա: Նույն նիստի ժամանակ նախագահողի այն հարցին, թե կոնկրետ ով է Լ.Պետրոսյանին ցուցում տվել ընկերության վերահաշվարկի առաջարկվող տարբերակն ընդունելու մասին, Լ.Պետրոսյանը պատասխանել է, որ ոչ մեկն իրեն նման ցուցում չի տվել, և որ ինքը որևէ գրավոր ապացույց կամ այն ներկայացնելու ցանկություն չունի: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել դատական նիստը հետաձգելու, Ա.Ավագյանին որպես վկա հրավիրելու և հարցաքննելու մասին (տե՛ս Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 27-ի դատական նիստի արձանագրությունը):

2014 թվականի նոյեմբերի 18-ի և նոյեմբերի 28-ի դատական նիստերին Ա.Ավագյանը առողջական վիճակի պատճառով չի ներկայացել, և Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել դատական նիստը հետաձգելու և վկայի մասնակցությունն ապահովելու համար միջոցներ ձեռնարկելու մասին (տե՛ս Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 18-ի և նոյեմբերի 28-ի դատական նիստերի արձանագրությունները):

2014 թվականի դեկտեմբերի 9-ի դատական նիստին Ա.Ավագյանը դարձյալ չի ներկայացել, սակայն ուղարկել է ստացիոնար բուժման մեջ գտնվելու մասին համապատասխան տեղեկանք: Ա.Ավագյանը գրավոր խնդրել է նաև հիմք ընդունել իր կողմից նախաքննության մարմնին ներկայացված գրությունը, և ևս մեկ անգամ նշել, որ «Դինո Գուր Մայնինգ Քամինի» ՓԲ ընկերության պոչատարի խողովակաշարի վրա տեղի ունեցած վթարի արդյունքում հասցված վնասի հաշվարկի վերաբերյալ արձանագրությունը կամ հասցված վնասի չափը որևէ փոփոխության չի ենթարկվել (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 130): Առաջին ատյանի դատարանը, լսելով կողմերի կարծիքը և հաշվի առնելով, որ պաշտպանը և ամբաստանյալը չեն առարկում, որոշում է կայացրել վկային չհրավիրելու

և քրեական գործում առկա գրությունը հիմք ընդունելու մասին: Նույն նիստի ժամանակ դատական վիճաբանությունների փուլում պաշտպանը հայտնել է, որ նշված ապացույցների բացակայությունը նախաքննության մարմնի կողմից գործի հանգամանքների ոչ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու արդյունք է (տե՛ս Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 9-ի դատական նիստի արձանագրությունը):

8. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքում պաշտպանը նշել է, որ Առաջին ատյանի դատարանում հնարավորություն չի ունեցել ներկայացնելու *Լ.Պետրոսյանի՝ տեսչության պետին ուղղված 2012 թվականի հունվարի 13-ի զեկուցագիրը* և *2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 3.8.10/Ն գրությունը*, միջնորդել է այն ընդունել՝ հաշվի առնելով, որ այն ստանալու հնարավորություն դատավճիռ կայացնելուց հետո է ընձեռվել: Բողոքին պաշտպանը կցել է նաև զեկուցագրի և գրության շարժը փաստող քաղվածքներ *«Մալբրի»* համակարգից (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 165 և 167):

8.1. Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և քրեական գործը Վերաքննիչ դատարանի դատական նիստում քննության նշանակելու մասին 2015 թվականի հունվարի 20-ի որոշման մեջ Վերաքննիչ դատարանն արձանագրել է. *«[Վերաքննիչ բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով չեն ներկայացվել նոր նյութեր կամ միջնորդություններ, ուստի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը պետք է վերանայել գործում եղած ապացույցներով: Վերաքննիչ դատարանում գործը պետք է քննել Վճարելի դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 181):

8.2. Վճարելիության կարգով գործի քննության ժամանակ, մասնավորապես՝ 2015 թվականի մարտի 17-ի դատական նիստի ընթացքում Վերաքննիչ դատարանը, բավարարելով պաշտպանության կողմի միջնորդությունը, որոշում է կայացրել դատական նիստը հետաձգելու մասին՝ ՀՀ բնապահպանության նախարարությունից քաղաքացիական ծառայողի պաշտոնի անձնագիրը պահանջելու համար (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 235):

9. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի դատական նիստի ժամանակ Հ.Դավթյանը միջնորդել է որպես ապացույց գործին կցել և հետագոտել *Լ.Պետրոսյանի՝ տեսչության պետին ուղղված 2012 թվականի հունվարի 13-ի զեկուցագիրը* և *2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 3.8.10/Ն գրությունը*, դրանց շարժը փաստող՝ *«Մալբրի»* համակարգից քաղվածքները: Բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանում հնարավորություն չի ունեցել ներկայացնելու այդ ապացույցները, քանի որ Առաջին ատյանի դատարանը վերջին դատական նիստի ժամանակ մերժել է նշված ապացույցները ձեռք բերելու համար

դատական նիստը հետաձգելու իր միջնորդությունը: Մեղադրողն առարկել է նոր ապացույցներ հետազոտելու միջնորդության դեմ՝ նշելով, որ Առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ պաշտպանության կողմին բազմիցս հնարավորություն է տրվել ներկայացնել այդ նյութերը, դեռ ավելին, նիստերից մեկի ժամանակ ամբաստանյալը հայտարարել է, որ ինքը որևէ գրավոր ապացույց կամ այն ներկայացնելու ցանկություն չունի:

Լսելով կողմերի կարծիքը՝ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել տեսչության պետին ուղղված 2012 թվականի հունվարի 13-ի զեկուցագիրը և 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 3.8.10/Ն գրությունը, դրանց շարժը փաստող՝ «Մալբրի» համակարգից քաղվածքները **ճանաչել այլ փաստաթուղթ, կցել քրեական գործին և դրանք քննարկման առարկա դարձնելու համար անցնել վերաքննության կարգի: Այա ճշգրտելով, որ կողմերը ներկայացված նոր ապացույցների վերաբերյալ միջնորդություններ չունեն՝ Վերաքննիչ դատարանն անցել է դատական վիճաբանությունների փուլին (տե՛ս Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի դատական նիստի արձանագրությունը):**

10. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում փաստել է. «(...) 13.01.2012թ. զեկուցագրով Սյունիքի ՏԲ պետ Լ.Պետրոսյանը հայտնել է, որ «2012թ. հունվարի 12-ին ահազանգ էր ստացվել Կապան քաղաքի մի քանի բնակչից այն մասին, որ «Դինգո Գողո Մայնինգ Բանմինի» ՓԲԸ թափուկատարը վթարվել է և պոչանքները արտահոսել են շրջակա միջավայր: Բաժնի պետի տեղակալ Ա.Հովակիմյանը և պետ. տեսուչ Վ.Մարտիրոսյանը պաշտոնատար աշխատակիցների հետ տեղանքում կատարել են ուսումնասիրություն, չափազրել արդյունաբերական պոչանքներով աղտոտված տարածքի մակերեսը և կազմել արձանագրություն»: Չեկուցագրին կից ներկայացվել է «Դ.Գ.ՄԲ» ՓԲԸ թափուկատարի վթարի հետևանքով արտահոսած արդյունաբերական թափոններով հողի վերին շերտի աղտոտման մասին» 12.01.2012թ. կազմված արձանագրությունը:

Բնապահպանական պետական տեսչության պետ Ա.Ավագյանին 26.04.2012թ. ուղղված 23.8.10/ն-86 զեկուցագրով Սյունիքի տարածքային բաժնի պետ Լ.Պետրոսյանը հայտնել է հետևյալը. «Կից ներկայացնում եմ «Դ.Գ.ՄԲ» ՓԲԸ-ի հունվարի 12-ին տեղի ունեցած վթարի հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկի ընկերության կողմից ընդունված տարբերակը: Խնդրում եմ Ձեզ տալ ցուցում հաշվարկի ընդունման և հետագա ընթացքի վերաբերյալ»: Չեկուցագրին կից ներկայացվել է 2012թ. հունվարի 12-ին տեղի ունեցած վթարի հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկի «Դ.Գ.ՄԲ» ՓԲԸ-ի կողմից ընդունված տարբերակը:

Վերոնշյալ զեկուցագրի շրջադարձին առկա՝ «Mulberri» համակարգից կատարված քաղվածքից երևում է, որ «Դ.Գ.ՄԲ» ՓԲԸ-ն հուն-

վարի 12-ին տեղի ունեցած վթարի հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկի ընկերության կողմից ընդունված տարբերակը Սյունիքի ՏԲ պետ Լ.Պետրոսյանի կողմից ուղարկվել է բնապահպանական պետական տեսչության ղեկավարության հաստատմանը: Այդ նույն օրը՝ 26.04.2012թ. տեսչության ղեկավարությունը համաձայնություն է տվել հաշվարկի ներկայացված տարբերակին և միաժամանակ ընկերությանը հանձնարարվել է 720 մ քառ. աղտոտված հողատարածքը նույնպես մաքրել թափված խույսից:

(...)

Ինչպես երևում է գործում եղած և լրացուցիչ ներկայացված ասպացույցներից /մասնավորապես՝ 26.04.2012թ. Ա.Ավագյանին ուղարկված զեկուցագրից/ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ Լ.Պետրոսյանը 2012թ. ապրիլի 25-ին «Դինո Գոլդ Մայնինգ Բանվինի» ՓԲԸ տնօրենից ստանալով շրջակա միջավայրին պատճառով վնասի հաշվարկի ընկերության կողմից կատարված տարբերակը, ոչ թե ընդունել է այն՝ համաձայնելով պետական բյուջե վնասի միայն մի մասը 7.300.000 ՀՀ դրամը վճարելու առաջարկին, այլ համապատասխան զեկուցագրով 26.04.2012թ. այն ներկայացրել է ԲՊՏ պետին՝ խնդրելով տալ ցուցում հաշվարկի ընդունման և հետագա ընթացքի վերաբերյալ: Նույն օրը ԲՊՏ ղեկավարությունը տվել է համաձայնությունը ընկերության կողմից կատարված տարբերակին, այդ մասին տեղեկացվել է Սյունիքի տարածքային բաժնի պետ Լ.Պետրոսյանը և վերջինս 27.04.2012թ. «Դ.Գ.ՄԲ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ի.Գարկովին ուղղված գրությամբ հայտնել է, որ. «Ձեր կողմից 25.04.2012թ. թիվ 116 գրությամբ ներկայացված հաշվարկը, 7.300.000 ՀՀ դրամի չափով, ընդունվել է բնապահպանական պետական տեսչության կողմից և նշված գումարը պետք է փոխանցվի պետ. բյուջե՝ 900005024063 հաշվին: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 720 քառ. մետր աղտոտված հողատարածքը, սեղմ ժամկետում, անհրաժեշտ է մաքրել թափված ասպարախյուսից և տարածքը բերել նախկին տեսքի»:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հիմնավորված չէ Լ.Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը, նկատի ունենալով, որ վերջինս հանդիսանալով ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ և հանդիսանալով պաշտոնատար անձ, դիտավորությամբ չի կատարել այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իր լիազորությունների շրջանակից: Լ.Պետրոսյանը ինքնուրույն որոշում չի կայացրել շրջակա միջավայրին պատճառով վնասի հաշվարկի ընկերության կողմից կատարված տարբերակն ընդունելու վերաբերյալ, այլ այդ մասին զեկուցել է ԲՊՏ ղեկավարությանը, և վերջինիս դիրքորոշումը փոխանցել է ընկերությանը, որը չի կարող գնահատվել որպես իր լիազո-

րությունների շրջանակից ակնհայտորեն դուրս եկող գործողություն: Այսինքն, Լ.Պետրոսյանի գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը:

Բացի այդ, Լ.Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք առաջադրելու պահին՝ 2014թ. հուլիսի 17-ին առկա չի եղել նաև պետության օրինական շահերին պատճառված վնաս, քանի որ շրջակա միջավայրին վնաս պատճառած ընկերության կողմից մինչև այդ արդեն իսկ ՀՀ պետական բյուջե է վճարվել վնասի հատուցման գումարը՝ 7.350.000 ՀՀ դրամը:

Ինչ վերաբերվում է Լ.Պետրոսյանին առաջադրված մեղադրանքի այն մասին, որի համաձայն՝ «...հետագայում Լևոն Պետրոսյանի կողմից միջոցներ չեն ձեռնարկվել վնասի չվճարված մասը՝ 7.350.000 ՀՀ դրամ գումարը ընկերությունից բռնագանձելու ուղղությամբ», սալա այն նույնպես հիմնավորված չէ (...):

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ Լ.Պետրոսյանի կողմից վնասի չվճարված մասը՝ 7.350.000 ՀՀ դրամը ընկերությունից բռնագանձելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը պայմանավորված է եղել նրանով, որ ԲՊՏ ղեկավարությունը համաձայնվել է վնասի հաշվարկի ընկերության ներկայացրած տարբերակին, և ինքը ինքնուրույն՝ առանց տեսչության պետի լիազորության շրջակա միջավայրին պատճառած վնասի հատուցման վերաբերյալ դատական մարմիններ հայց չէր կարող ներկայացնել» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 270-271):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանը, քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելով, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, ստորադաս դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածը, ինչի արդյունքում հանգել է ոչ իրավաչափ եզրակացության, որ մեղադրյալ Լ.Պետրոսյանի արարքում բացակայում են հանցակազմի հատկանիշները: Վերլուծելով «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը՝ բողոքաբերը փաստարկել է, որ բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման գումարի

պետական բյուջե գանձումը կատարվում է բնապահպանական տեսչական մարմնի կողմից իրավախախտման դեպքի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա, իսկ վնասի հատուցման այլ կարգ, այդ թվում՝ վերահաշվարկ, նոր հաշվարկ գոյություն չունի, և տեսչական մարմինը պարտավոր է վնասի հատուցումը կատարել արդեն իսկ կազմված արձանագրության և դրա անբաժանելի մասը կազմող վնասի հաշվարկի հիման վրա:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ Լ.Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք առաջադրելու պահին՝ 2014 թվականի հուլիսի 17-ին, առկա չի եղել պետությանը պատճառված վնաս, քանի որ շրջակա միջավայրին վնաս պատճառած ընկերության կողմից ՀՀ պետական բյուջե է վճարվել վնասի հատուցման գումարը՝ 7.350.000 ՀՀ դրամը, բողոքաբերը փաստարկել է, որ մեղադրանք առաջադրելու պահին ոչ թե վնաս առկա չի եղել, այլ պատճառված վնասը հատուցված է եղել, ինչն ինքնին ամբաստանյալին մեղսագրված արարքի քրեաիրավական որակման հարցում որևէ նշանակություն չէր կարող ունենալ:

12. Անդրադառնալով ստորադաս դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտումներին՝ բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, ի սկզբանե ունենալով բողոքին կից ներկայացված նոր նյութեր, որոշում է կայացրել բողոքի քննությունը վճռաբեկության կարգով իրականացնելու մասին, սակայն ոչ միայն կատարել է նշված փաստաթղթերի հետազոտություն, այլև սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացրել ՀՀ բնապահպանական պետական տեսչությունից Սյունիքի տարածքային բաժնի պետի պաշտոնի անձնագիրը պահանջելու և գործին կցելու մասին: Դրանից հետո միայն Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել գործի քննության վճռաբեկության կարգից վերաքննության կարգին անցնելու մասին: Բացի այդ, պաշտպանական կողմի վերաքննիչ բողոքին կցված փաստաթղթերը Վերաքննիչ դատարանն ընդունել, մինչև վճռաբեկության կարգից վերաքննության կարգի անցնելը հետագոտել և որպես այլ փաստաթուղթ ապացույց է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտմամբ: Վերաքննիչ բողոքին կից պաշտպանական կողմի ներկայացրած փաստաթղթերը Վերաքննիչ դատարանը ճանաչել է ապացույց այն հիմնավորմամբ, որ Առաջին ատյանի դատարանն անհիմն մերժել է նշված փաստաթղթերը ստանալու համար ժամանակ տրամադրելու պաշտպանական կողմի միջնորդությունը, մինչդեռ Առաջին ատյանի դատարանում գրեթե բոլոր դատական նիստերի ժամանակ ամբաստանյալին առաջարկվել է դատարան ներկայացնել վերադասին զեկուցագիր ներկայացնելը հավաստող փաստաթղթեր, եթե այդպիսիք առկա են: Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարան ներկայացված՝ Լ.Պետրոսյանի՝ 2012 թվականի հունվարի 13-ի և 2012 թվականի ապրիլի 26-ի զեկուցագրերի՝ «Mulberri» համակարգից

կատարված քաղվածքները որպես ապացույց ճանաչելով՝ Վերաքննիչ դատարանը միջոցներ չի ձեռնարկել պարզելու, թե արդյոք ՀՀ բնապահպանական պետական տեսչության կողմից Լ.Պետրոսյանին տրվել է հանձնարարություն, թե ոչ, եթե այո, ապա կոնկրետ ում կողմից, երբ, ինչ իրավական ակտերի հիման վրա և ինչ հանձնարարություն է տրվել: Իսկ ներկայացված փաստաթղթերը, բողոքաբերի կարծիքով, ընդամենը փաստում են ՀՀ բնապահպանական պետական տեսչության պետի և դրա կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող Սյունիքի տարածքային բաժնի միջև փաստաթղթերի շրջանառության ընթացքը, որևէ պաշտոնական հավաստում, ստորագրություն չեն պարունակում, և ի վերջո, քրեական գործում առկա չէ որևէ ուղղակի ապացույց առ այն, որ Լ.Պետրոսյանի վերադասը հանձնարարություն է տվել ընդունելու ընկերության կողմից 14.650.000 ՀՀ դրամի փոխարեն 7.300.000 ՀՀ դրամ գանձելու առաջարկված հաշվարկի տարբերակը կամ ընկերությանը «փոխանցելու» տեսչության դիրքորոշումը: Բողոքաբերի պնդմամբ նույն քաղվածքների ուսումնասիրությունից պարզ չէ, թե որ պաշտոնատար անձն է կոնկրետ հանձնարարությունը տվել: Դատական ակտ կայացնելու համար առանցքային նշանակություն ունեցող վերոհիշյալ հանգամանքները պարզելու ուղղությամբ Վերաքննիչ դատարանի կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել բնապահպանական պետական տեսչության պետ Ա.Ավագյանին դատարան հրավիրելու և հարցաքննելու ուղղությամբ: Վերոհիշյալ հակասությունների առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանը, բողոքաբերի պնդմամբ, ենթադրությունների հիման վրա հաստատված է համարել, որ տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետն ընդամենը կատարել է վերադաս մարմնի՝ ՀՀ բնապահպանական պետական տեսչության պետի հանձնարարությունը:

13. Ըստ բողոքաբերի՝ եթե անգամ Լ.Պետրոսյանը ինքնուրույն որևէ որոշում չի կայացրել և կատարել է վերադասի հանձնարարությունը, ապա այս դեպքում նույնպես նա, ՀՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ենթակա չէր քրեական պատասխանատվությունից ազատման, քանի որ «ակնհայտ անօրինական հրամանով կամ կարգադրությամբ դիտավորյալ հանցանք կատարած անձը պատասխանատվություն է կրում ընդհանուր հիմունքներով»:

14. Բողոքաբերի պնդմամբ բողոքարկվող դատական ակտը նաև հակասում է Վճռաբեկ դատարանի՝ Միլվա Խաչատրյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԱԲԳ/0089/01/12 որոշմանը, համաձայն որի՝ երբ դատարանի կողմից փաստական հանգամանքները պարզելու նպատակով կատարվել է ապացույցների հետազոտում, քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում չի կարող կայացվել. այդ դեպքում դատական ակտով պետք է փաստվի և հռչակվի անձի անմեղությունը՝ ապահովելու համար նրա ամբողջական ռեաբիլիտացումը հասարակության աչքերում:

15. Վերագրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 9-ի դատական ակտին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

16. Վճարելի դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանում գործի քննության կարգի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

I. Վճարելիության կարգով գործի քննության իրականացումը.

17. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի կողմից պահպանվել է արդյոք գործի քննությունը վճարելիության կարգով իրականացնելու համար անհրաժեշտ իրավական ընթացակարգը:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Բացառիկ դեպքերում կողմերն իրավունք ունեն իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանների հիմքերը հաստատելու համար դատարան ներկայացնելու նոր նյութեր կամ միջնորդելու դատարան կանչել իրենց նշած վկային կամ փորձագետին, նշանակելու փորձաքննություն, եթե նրանք հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին, ինչպես նաև առաջին ատյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ հիմնավորում են, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Բացառությամբ սույն օրենսգրքի 45.1 գլխի կանոններով քննված գործերի, վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կա-*

տարվում է սույն գլխում շարադրված կանոններով, ինչպես նաև վճարելի դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով»:

Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգի առանձնահատկություններին Վճարելի դատարանն անդրադարձել է *Գ.Հախնազարյանի* գործով որոշման մեջ՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [*Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կարող է իրականացվել կամ վերաքննության կարգով (քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ գլխի կանոններով) կամ վճարելիության կարգով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ գլխի կանոններով)*]:

(...) *Վերաքննիչ դատարանը կարող է գործը քննել վճարելի դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով միայն այն դեպքում, երբ՝*

ա) դատական նիստ նշանակելու մասին որոշման մեջ նշել է այդ մասին և հիշյալ որոշումը պատշաճ կարգով ուղարկվել է դատավարության մասնակիցներին,

բ) վերաքննիչ բողոք կամ բողոքի պատասխան ներկայացրած կողմը նոր նյութեր չի ներկայացրել և չի միջնորդել հավաքելու կամ հետազոտելու նոր ապացույցներ, կամ վերաքննիչ դատարանն այն համոզման է եկել, որ կողմը, միջնորդելով գործին կցել նոր նյութեր, կամ դատարան կանչել իր նշած վկային կամ փորձագետին կամ նշանակել փորձաքննություն, չի հիմնավորել, որ առաջին ատյանի դատարանում օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կատարելու վերոնշյալ գործողությունները, կամ որ դրանց կատարման վերաբերյալ միջնորդությունները առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել են անհիմն: (...)» (տես Վճարելի դատարանի՝ Գևորգ Հախնազարյանի գործով 2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԵՔԲԿ/0219/01/08 որոշման 11-րդ և 19-րդ կետերը):

19. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում վկայակոչված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոք կամ բողոքի պատասխան ներկայացրած կողմը նոր նյութեր է ներկայացնում կամ միջնորդում է հավաքելու կամ հետազոտելու նոր ապացույցներ, ապա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, **արձանագրելով այդ փաստը**, կարող է գործի քննությունն իրականացնել վճարելիության՝ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ գլխի կանոններով, եթե պատճառաբանված կերպով գալիս է այն համոզման, որ կողմը, նոր նյութեր կամ միջնորդություններ ներկայացնելով, չի հիմնավորել, որ առաջին ատյանի դատարանում օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կատարելու այդ գործողությունները, կամ որ դրանց կատարման վերաբերյալ միջնորդություններն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել են անհիմն: Իսկ արդեն վճարելիության կարգով գործի քննության ժամանակ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը իրավասու չէ իրականացնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ գլխի կա-

նոններով չնախատեսված գործողություն, այդ թվում՝ այնպիսի գործողություն, որն ուղղված է նոր նյութ ձեռք բերելուն:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ բողոքին պաշտպանը կցել է տեսչության պետին ուղղված 2012 թվականի հունվարի 13-ի գեկուցագիրը և 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 3.8.10/Ն գրությունը, դրանց շարժը փաստող քաղվածքները «Մալբրի» համակարգից, որոնք իր պնդմամբ Առաջին ատյանի դատարանում ներկայացնելու հնարավորություն չի ունեցել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Մինչդեռ Վերաքննիչ դատարանը դատական նիստ նշանակելու որոշման մեջ արձանագրել է, որ **բողոքին կից նոր նյութեր կամ միջնորդություններ չեն ներկայացվել** և որոշել է գործի քննությունն իրականացնել վճարելիության կարգով (տե՛ս սույն որոշման 8.1.-րդ կետը): Ընդ որում, վճարելիության կարգով գործի քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը **իրականացրել է նոր նյութ ձեռք բերելուն ուղղված գործողություն**, իսկ հետագայում անցել է վերաքննության կարգով քննությանը՝ հիմնավոր համարելով վերաքննիչ բողոքին կից ներկայացված նույն ապացույցները հետագոտելու միջնորդությունը (տե՛ս սույն որոշման 8.2.-րդ և 9-րդ կետերը):

21. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալների նկատմամբ կիրառելով *Գ.Հախնազարյանի* վերաբերյալ որոշմամբ, ինչպես նաև սույն որոշման 19-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի պահպանել գործի քննությունը վճարելիության կարգով իրականացնելու համար անհրաժեշտ իրավական ընթացակարգը:

II. Գործի քննության վճարելիության կարգից անցումը վերաքննության կարգին.

22. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանը, գործի քննության վճարելիության կարգից անցում կատարելով վերաքննության կարգին, պահպանել է արդյոք դրա համար անհրաժեշտ իրավական ընթացակարգը:

23. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից գործի քննության վերաքննության կարգից վճարելիության կարգին կամ հակառակը՝ վճարելիության կարգից վերաքննության կարգին անցում կատարելու իրավական հարցերին Վճարելի դատարանը անդրադարձել է *Գ.Հախնազարյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում՝ արտահայտելով հետևյալ դիրքորոշումը. «*[Ե]թե վերաքննիչ դատարանը գործը դատական քննության նշանակելու մասին որոշման մեջ չի նշել վճարելիության կարգով գործը քննելու իր մտադրության մասին, ապա այլևս չի կարող բողոքի քննության ժամանակ փոխել այդ որոշումը և գործը քննել վճարելի դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով:*

Սակայն, եթե վերաքննիչ դատարանը որոշել է գործը քննել վճարելի դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով, ապա գործի քննության ժամանակ կարող է փոխել որոշումը և գործը քննել վերաքննիչ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով, եթե օբյեկտիվորեն առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերը (տես Վճարելի դատարանի՝ Գևորգ Հախնազարյանի գործով 2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԵՔԲԴ/0219/01/08 որոշման 19-րդ կետը):

23.1. Վերահաստատելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը կրկնում է, որ ի տարբերություն գործի քննության վերաքննության կարգից վճարելիության կարգին անցում կատարելուն՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասու է գործը դատական քննության նշանակելու մասին որոշման մեջ այն վճարելիության կարգով քննելու մասին նշում կատարելուց հետո փոխել այդ որոշումը և գործը քննել վերաքննության կարգով, եթե հիմնավոր է համարում կողմի այն պարզաբանումները, որ նոր նյութեր կամ նոր ապացույցներ հավաքելու կամ հետազոտելու միջնորդություններ ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ներկայացնելը պայմանավորված է նրանով, որ դրանք առաջին ատյանի դատարան ներկայացնելու օբյեկտիվ հնարավորությունը բացակայել է կամ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից անհիմն մերժվել է:

24. Ձարգացնելով Գ.Հախնազարյանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից գործի քննության վճարելիության կարգից վերաքննության կարգին անցում կատարելու համար անհրաժեշտ պայմանն այն է, որ նոր նյութ, ինչպես նաև նոր ապացույց հավաքելու կամ հետազոտելու միջնորդությունը առաջին ատյանի դատարան կողմի չներկայացնելը պայմանավորված լինի օբյեկտիվ, անձի կամ քից անկախ պատճառներով: Այլ կերպ՝ կողմը պետք է մատնանշի այդպիսիք առաջին ատյանի դատարան չներկայացնելու պատճառները, ընդ որում, հիմնավորի, որ դրանք առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ անարգել կամ ողջամիտ ջանքերի գործադրման արդյունքում էլ չէին կարող ներկայացվել: Դ-ա, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ՝

- առաջին ատյանի դատարանն անհիմն հրաժարվել է նոր նյութն ընդունելուց և հետազոտելուց կամ անհիմն մերժել կողմի՝ նոր ապացույց հավաքելու միջնորդությունը,

- առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ այդ նյութն օբյեկտիվորեն առկա է եղել, սակայն այն ներկայացնելու որևէ հնարավորություն անձը չի ունեցել,

- առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ այդ նյութն օբյեկտիվորեն առկա չի եղել և առաջացել է գործի քննության

ավարտից հետո: Ընդ որում, առաջին ատյանի դատարանում գործի քննության ավարտից հետո առաջացած նոր նյութի ընդունելիության հարցը լուծելիս վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առնի այն, թե արդյոք անձի կողմից համապատասխան կամահայտնություն դրսևորվելու և ջանքեր գործադրվելու դեպքում այդ նյութն օբյեկտիվորեն չէր կարող ի հայտ գալ ավելի վաղ: Եթե դա օբյեկտիվորեն չէր կարող ի հայտ գալ ավելի վաղ (որևէ կերպ կախված չէր այն ներկայացնող անձի կամահայտնությունից և ջանքերից), ապա վերաքննիչ դատարանը պետք է ընդունի այն: Եթե դա կարող էր ի հայտ գալ ավելի վաղ (ավելի վաղ ի հայտ գալը կախված էր այն ներկայացնող անձի կամահայտնությունից և ջանքերից), ապա վերաքննիչ դատարանը չպետք է ընդունի այն:

25. Այսպիսով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը **չի կարող** գործի քննության վճարելիության կարգից անցում կատարել վերաքննության կարգին, եթե պարզվում է, որ կողմն առաջին ատյանի դատարանում **դրսևորել է ոչ բարեխիղճ վարքագիծ** և ունենալով **իրական հնարավորություն**՝ չի ներկայացրել համապատասխան նյութը կամ հանդես չի եկել համապատասխան միջնորդությամբ՝ **հետապնդելով ոչ իրավաչափ, օրինակ, գործի քննությունը ձգձգելու նպատակ**: Ուստի գործի քննության կարգը փոխելիս վերաքննիչ դատարանը պետք է նախ և առաջ պարզի վերոգրյալ գործողությունները առաջին ատյանի դատարանում կատարված չլինելու **պատճառները**, այդ պատճառներին տա իրավական գնահատական, **գնահատի դրանց՝ հարգելի կամ ոչ հարգելի լինելը**: Եթե պատճառները ճանաչվում են ոչ հարգելի, ապա վերաքննիչ դատարանը պետք է շարունակի գործի՝ վճարելիության կարգով քննության իրականացումը, իսկ հարգելի ճանաչվելու դեպքում վերաքննիչ դատարանն իրավասու է անցում կատարել գործի՝ վերաքննության կարգով քննության իրականացմանը: Ընդ որում, դա դեռևս չի բացառում, որ, օրինակ, ներկայացված նոր նյութն ապացույց ճանաչվելուց և հետագուտվելուց հետո դատական ակտ կայացնելիս գնահատվի թույլատրելիության, վերաբերելիության ու արժանահավատության չափանիշներին ոչ համապատասխան:

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ 2014 թվականի սեպտեմբերի 29-ի դատական նիստի ժամանակ Լ.Պետրոսյանի պաշտպանը **միջնորդել է հետաձգել դատական նիստը ամբաստանյալի՝ տեսչության պետին ուղղված գրության և զեկուցագրի շարժը հավաստող գրավոր փաստաթուղթ ձեռք բերելու համար**: Հետագա երկու՝ 2014 թվականի հոկտեմբերի 1-ի և 10-ի դատական նիստերը հետաձգվել են պաշտպանի, ապա՝ ամբաստանյալի չներկայանալու պատճառներով: 2014 թվականի հոկտեմբերի 20-ի դատական նիստի ժամանակ պաշտպանը միջնորդել է քրեական գործով վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել՝ իր միջնորդությունը, ի թիվս այլոց, հիմնավորելով նրանով, որ Լ.Պետրոսյանը գործել է վերադասի ցուցումով: Պաշտպանի

սույն միջնորդության կապակցությամբ մեղադրողը հայտարարել է, որ քրեական գործում առկա չէ այդ մասին վկայող որևէ ապացույց: 2014 թվականի հոկտեմբերի 27-ի նիստի ժամանակ դատական վիճաբանությունների փուլում պաշտպանը և ամբաստանյալն իրենց ճառերում հիշատակել են գրավոր փաստաթղթերի մասին, որոնք հիմնավորում են, որ **Լ.Պետրոսյանը** գործել է վերադասի ցուցումով: Իսկ նախագահող դատավորը փաստել է, որ **նախորդ դատական նիստերի ժամանակ ևս պաշտպանության կողմը վկայակոչել է նշված փաստաթղթերը, սակայն այդպես էլ դրանք չի ներկայացրել:** Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ նշված փաստաթղթերը վերաբերում են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների, որոնք դեռևս չեն պարզվել, իսկ ամբաստանյալն էլ իր անմեղությունը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու պարտականություն չունի՝ Առաջին ատյանի դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 354-րդ հոդվածի 5-րդ մասով, **որոշում է կայացրել դատաքննությունը վերսկսելու** և կոնկրետ հանգամանքները պարզելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, մասնավորապես՝ վկաներ հրավիրելու մասին: Պաշտպանն Առաջին ատյանի դատարանի որոշման առնչությամբ հանդես է եկել հայտարարությամբ, որ **դատաքննությունը վերսկսելու պարագայում վերջինս համապատասխան գրավոր փաստաթղթերը ներկայացնելու հնարավորություն կունենա:** Նույն նիստի ժամանակ նախագահողի այն հարցին, թե կոնկրետ ով է Լ.Պետրոսյանին ցուցում տվել ընկերության վերահաշվարկի առաջարկվող տարբերակն ընդունելու մասին, **Լ.Պետրոսյանը պատասխանել է, որ ոչ մեկն իրեն նման ցուցում չի տվել, և որ ինքը որևէ գրավոր ապացույց կամ այն ներկայացնելու ցանկություն չունի:** Արդյունքում Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել դատական նիստը հետաձգելու, Ա.Ավագյանին որպես վկա հրավիրելու և հարցաքննելու մասին: Սակայն դրանից հետո Ա.Ավագյանը որևէ դատական նիստի չի ներկայացել և չի հարցաքննվել: Ավելին, 2014 թվականի դեկտեմբերի 9-ի դատական նիստին չներկայանալով՝ Ա.Ավագյանը գրավոր խնդրել է հիմք ընդունել իր կողմից նախանույնության մարմնին ներկայացված գրությունը և ևս մեկ անգամ հայտնել է, որ ընկերության կողմից պատճառված վնասի հաշվարկի վերաբերյալ արձանագրությունը կամ հասցված վնասի չափը որևէ փոփոխության չի ենթարկվել: Առաջին ատյանի դատարանը, լսելով կողմերի կարծիքը և հաշվի առնելով, որ **պաշտպանը և ամբաստանյալը չեն առարկում**, որոշում է կայացրել վկային չհրավիրելու և քրեական գործում առկա գրությունը հիմք ընդունելու մասին: Պաշտպանը հայտնել է, որ նշված ապացույցների բացակայությունը նախաքննության մարմնի կողմից գործի հանգամանքների ոչ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու արդյունք է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի դատական նիստի ժամանակ պաշտպանը միջնորդել է որպես ապացույց գործին կցել և հետագոտել Լ.Պետրոսյանի՝ տեսչության պետին ուղղված 2012 թվակա-

նի հունվարի 13-ի գեկուցագիրը և 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 3.8.10/Ն գրությունը, դրանց շարժը փաստող՝ «Մալբրի» համակարգից քաղվածքները: Բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանում հնարավորություն չի ունեցել ներկայացնելու այդ փաստաթղթերը, քանի որ Առաջին ատյանի դատարանը վերջին դատական նիստի ժամանակ մերժել է նշված ապացույցները ձեռք բերելու համար դատական նիստը հետաձգելու իր միջնորդությունը: Լսելով կողմերի կարծիքը՝ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել տեսչության պետին ուղղված 2012 թվականի հունվարի 13-ի գեկուցագիրը և 2012 թվականի ապրիլի թիվ 26-ի 3.8.10/Ն գրությունը, դրանց շարժը փաստող՝ «Մալբրի» համակարգից քաղվածքները ճանաչել այլ փաստաթուղթ, կցել քրեական գործին և դրանք քննարկման առարկա դարձնելու համար անցնել վերաքննության կարգի (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

27. Սույն որոշման 23-25-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, եզրահանգելով, որ ամբաստանյալը և նրա պաշտպանը Առաջին ատյանի դատարանում հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու համապատասխան գրավոր փաստաթղթերը, պատշաճ քննության առարկա չի դարձրել դրանք՝ Առաջին ատյանի դատարան չներկայացնելու պատճառները: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը պատշաճ ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ Առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ պաշտպանության կողմը, ունենալով այդ նյութերը ներկայացնելու համապատասխան հնարավորություն, չի դրսևորել բարեխիղճ վարքագիծ և դրանք չի ներկայացրել (տե՛ս սույն որոշման 26-րդ կետը): Ուստի այս պայմաններում պաշտպանության կողմի այն պարզաբանումը, որ վերջինս հնարավորություն չի ունեցել Առաջին ատյանի դատարան ներկայացնելու այդ փաստաթղթերը, քանի որ դատարանը մերժել է իր համապատասխան միջնորդությունը, չի կարող հիմնավոր համարվել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է նշված հանգամանքները, համապատասխան փաստաթղթերը Առաջին ատյանի դատարան չներկայացնելու պատճառներին չի տվել համարժեք իրավական գնահատական, ինչի արդյունքում կայացրել է ոչ իրավաչափ որոշում գործի քննության վճռաբեկության կարգից վերաքննության կարգին անցում կատարելու մասին:

28. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, գործի քննության վճռաբեկության կարգից անցում կատարելով վերաքննության կարգին, չի պահպանել դրա համար անհրաժեշտ իրավական ընթացակարգը:

29. Սույն գործի նյութերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Վերաքննիչ դատարան են ներկայացվել Լ.Պետրոսյանի անմեղության

մասին առերևույթ վկայող գրավոր փաստաթղթեր (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Այդ փաստական տվյալների համատեքստում քննարկելով սույն որոշման 21-րդ և 28-րդ կետերում արձանագրված քրեադատավարական խախտումների բնույթը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված վերոգրյալ խախտումներն հիմք չեն Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Վճռաբեկ դատարանի վերջին դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշյալ խախտումներն իրենց բնույթով այնպիսին չեն, որ հիմք ծառայեն ստորադաս դատարանի դատական ակտի բեկանմանը՝ դրանով իսկ գրկելով Լ.Պետրոսյանին իր հնարավոր անմեղությունն ապացուցելու հնարավորությունից, ինչը ոչ միայն կհանգեցնի վերջինիս դատական պաշտպանության իրավունքի ոչ համաչափ սահմանափակմանը, այլև կչեզոքացնի իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի՝ նրա իրավունքը:

Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի վերանայման քրեադատավարական մեխանիզմը կարող է իրապես արդյունավետ ճանաչվել և ապահովել անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի կենսագործումը միայն այն դեպքում, երբ օժտված լինի արդար դատական քննության հիմնարար երաշխիքներով:

III. Վերաքննիչ դատարանի կողմից ապացույցների գնահատման կարգը պահպանելը.

30. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցն այն է, թե Վերաքննիչ դատարանի կողմից պահպանվել է արդյոք լրացուցիչ ներկայացված ապացույցներն արժանահավատության տեսանկյունից գնահատելու կարգը:

31. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Վերոհիշյալ նորմերի վերլուծության համատեքստում անդրադառնալով ապացույցների արժանահավատության գնահատմանը՝ Վճռաբեկ դատարանը *Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի* գործով որոշման մեջ ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.*

ա) սպացույցի աղբյուրի հատկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հատկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հատկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) սպացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

գ) սպացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը,

դ) սպացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը,

ե) նույն տեղեկության ստացումն այլ աղբյուրից:

Յուրաքանչյուր սպացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի սպացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և սպացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: **Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ սպացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները:**

Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա (...)» (տե՛ս Արարատ Ավագայանի և Վահան Սահակյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ-0252/01/13 որոշման 31.3-րդ կետը):

32. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանում սպացույցների հետազոտումը սահմանափակվել է կողմերի դիրքորոշումը ճշգրտելով: Այսպես, լրացուցիչ ներկայացված սպացույցների՝ Լ.Պետրոսյանի՝ տեսչության պետին ուղղված 2012 թվականի հունվարի 13-ի գեկուցագրի, 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 3.8.10/Ն գրության և դրանց շարժը փաստող «Մալբրի» համակարգից քաղվածքների հիման վրա Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ Լ.Պետրոսյանը, ստանալով շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկի՝ ընկերության կողմից կատարված տարբերակը, ոչ թե ընդունել է այն, այլ համապատասխան գեկուցագրով ներկայացրել է քննապահականության պետական տեսչության պետին՝ խնդրելով տալ

ցուցում հաշվարկի ընդունման և հետագա ընթացքի վերաբերյալ: Նույն օրը տեսչության ղեկավարությունը համաձայնություն է տվել հաշվարկի՝ ընկերության կողմից կատարված տարբերակին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ Լ.Պետրոսյանը գործել է վերադասի ցուցումով, արժանահավատ ապացույց համարելով 2012 թվականի հունվարի 13-ի զեկուցագիրը, 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 3.8.10/Ն գրությունը և դրանց շարժը փաստող՝ «Մալբրի» համակարգից քաղվածքները, անտեսել և պատշաճ քննության առարկա չի դարձրել այն, որ քրեական գործի նյութերում առկա է այլ փաստաթուղթ ճանաչված Ա.Ավագյանի՝ նախաքննության մարմնին ուղղված 2014 թվականի հունիսի 5-ի գրությունը, ինչպես նաև Առաջին ատյանի դատարան ներկայացված գրությունն այն մասին, որ «Գինո Գորդ Մայնինգ Քամփնի» ՓԲ ընկերության պոչատարի խողովակաշարի վրա տեղի ունեցած վթարի արդյունքում հասցված վնասի հաշվարկի վերաբերյալ արձանագրությունը կամ հասցված վնասի չափը որևէ փոփոխության չի ենթարկվել:

33. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 31-րդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը լրացուցիչ ներկայացված ապացույցների արժանահավատությունը գնահատելու համար դրանց բովանդակությունը համադրված վերլուծության չի ենթարկել քրեական գործում առկա այլ ապացույցների հետ: Այսպես, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել լրացուցիչ ներկայացված ապացույցների և քրեական գործում առկա համապատասխան գրությունների միջև գոյություն ունեցող առերևույթ հակասությանը, չի պարզել դրա պատճառները, մասնավորապես՝ միջոցներ չի ձեռնարկել Ա.Ավագյանին հարցաքննելու ուղղությամբ, ով կարող էր այդ հարցերը պարզաբանելու համար անհրաժեշտ տեղեկություններ հայտնել:

Բացի այդ, Վճարելի դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքաբերի այն փաստարկին, որ 2012 թվականի հունվարի 13-ի զեկուցագրի և 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 3.8.10/Ն գրության շարժը փաստող՝ «Մալբրի» համակարգից քաղվածքները որևէ պաշտոնական հավաստում, ստորագրություն չեն պարունակում, և դրանց ուսումնասիրությունից պարզ չէ, թե կոնկրետ ում կողմից և կոնկրետ ինչ հանձնարարություն է տրվել (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

33.1. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից չի պահպանվել լրացուցիչ ներկայացված ապացույցներն արժանահավատության տեսանկյունից գնահատելու կարգը:

34. Ամփոփելով սույն որոշման 17-33.1.-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարա-

կան իրավունքի խախտումներ, մասնավորապես՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ, 382-րդ, 390-րդ հոդվածների պահանջները: Միևնույն ժամանակ հաշվի առնելով սույն որոշման 29-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ, 390-րդ հոդվածների խախտումները սույն գործով հիմք չեն ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից ապացույցների գնահատման կարգը չպահպանելուն, ապա նշված խախտումն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու հիմք է:

35. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Արդարացման դատավճիռը, գործը կարճելու մասին կամ մեղադրյալի օգտին կայացրած այլ որոշումը չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման շարժառիթով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի հարուցում»:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների գնահատման կարգի առնչությամբ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումները կասկածի տակ են առնում ամբաստանյալ Լ.Պետրոսյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում: Ուստի նկատի ունենալով նշյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարան լրացուցիչ ներկայացված ապացույցներն Առաջին ատյանի դատարանի կողմից չեն վերլուծվել, չեն գնահատվել և քրեական գործում եղած մյուս ապացույցների հետ չեն համադրվել, բացի այդ, դրանց հիման վրա ի հայտ եկած առերևույթ հակասությունը պարզաբանելու համար հնարավոր է նոր ապացույցներ ձեռք բերելու և հետազոտելու անհրաժեշտություն առաջանա՝ Վճռաբեկ դատարանն արդար դատաքննության իրավունքի երաշխավորման տեսանկյունից՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հնարավորությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է համարում բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 13-րդ կետում բարձրացրած փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրա կապակցությամբ Առաջին ատյանի դատարանը գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում պետք է հանգի համապատասխան եզրահանգման գործի նոր քննության ընթացքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի՝ սույն որոշման 14-րդ կետում շարադրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտմանն անդրադառնալն առարկայագուրկ է:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկներին, որ սույն գործով թույլ են տրվել նաև նյութական իրավունքի խախտումներ (տե՛ս

սույն որոշման 11-րդ կետը), ապա դրանց հնարավոր կլինի անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Լևոն Արմենակի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 9-ի դատավճիռը և Լևոն Արմենակի Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 12-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ/0319/01/10

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դատախազ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՀԱԿՈԲՅԱՆԻ

պաշտպաններ

Կ.ՍԱՐՅԱՆԻ
Թ.ԲԱՂԴԱՍՍԱՐՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Սահակ Սամսոնի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Գևորգ Հակոբի Թոսունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Վիլեն Սեյրանի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 27-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղդյանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2010 թվականի օգոստոսի 29-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական

օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով հարուցվել է թիվ 41101412 քրեական գործը:

2010 թվականի օգոստոսի 30-ին Սահակ Սամսոնի Սահակյանը ձերբակալվել է Գրիգոր Պապյանի սպանության կասկածանքով: 2010 թվականի դեկտեմբերի 9-ին վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 104-րդ հոդվածի 1-ին մասով և 188-րդ հոդվածի 1-ին մասով: 2010 թվականի դեկտեմբերի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Դատարանի՝ 2011 թվականի մարտի 4-ի դատավճռով Ս.Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 104-րդ հոդվածի 1-ին մասով և 188-րդ հոդվածի 1-ին մասով ու դատապարտվել ազատազրկման՝ 11 (տասնմեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2011 թվականի հունիսի 27-ի որոշմամբ վերոնշյալ դատավճիռը բեկանվել և քրեական գործն ուղարկվել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

1.1. Դատաքննությամբ նոր ի հայտ եկած հանգամանքներով Սյունիքի մարզի դատախազի տեղակալի՝ 2012 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ Գևորգ Հակոբի Թոսունյանի և մյուսների կողմից խուլիգանություն կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է քրեական գործ, և նախաքննության կատարումը հանձնարարվել ՀՀ ոստիկանության ՔԳՎ Սյունիքի մարզի քննչական բաժնին:

2012 թվականի մարտի 7-ին որոշում է կայացվել Գ.Թոսունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում ընտրելու և հետախուզում հայտարարելու մասին:

2012 թվականի ապրիլի 20-ին քրեական գործով վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կասեցվել է:

2012 թվականի օգոստոսի 21-ին հետախուզվող Գ.Թոսունյանը ներկայացել է վարույթն իրականացնող մարմին, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի օգոստոսի 22-ին Գ.Թոսունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է, և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2012 թվականի սեպտեմբերի 6-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հիմքերով Ս.Սահակյանի վերաբերյալ թիվ ՍԳ/0319/01/10 քրեական գործի դատաքննությունը՝ ըստ մեղադրանքի ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 104-րդ հոդվածի 1-ին մասով, հետաձգվել է՝

Գ.Պապյանի սպանության հանգամանքները պարզելու նպատակով անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար: Արդյունքում Ս.Սահակյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով, ձեռք բերված նյութերն առանձնացվել են առանձին վարույթում և ուղարկվել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. 2012 թվականի սեպտեմբերի 8-ին Գ.Թոսունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

2013 թվականի փետրվարի 8-ին Գ.Թոսունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2013 թվականի մայիսի 2-ին Գ.Թոսունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2.1. 2012 թվականի սեպտեմբերի 9-ին Վիլեն Սեյրանի Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

2013 թվականի փետրվարի 6-ին Վ.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

3. 2013 թվականի հունիսի 20-ին քրեական գործը ըստ մեղադրանքի Գ.Թոսունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Վ.Գրիգորյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Ջորջ Թոսունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Կարապետ Թոսունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ թիվ ՍԳ-3/0068/01/13 և ՍԳ-0319/01/10 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում:

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ Կարապետ Թոսունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 5-րդ կետի 3-րդ ենթակետի հիմքով:

3.1. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 22-ի դատավճռով Գ.Թոսունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով դատապարտվել է ազատազրկման՝ 11 (տասնմեկ) տարի ժամկետով, 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, վերջնական դատապարտվել է ազատազրկման՝ 12 (տասներկու) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ճանաչվել և հռչակվել է Գ.Թոսունյանի անմեղությունը, և նա այդ մեղադրանքով արդարացվել է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Ս.Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով դատապարտվել է ազատազրկման՝ 11 (տասնմեկ) տարի ժամկետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, վերջնական դատապարտվել է ազատազրկման՝ 13 (տասներեք) տարի ժամկետով:

Վ.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 10 (տասը) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ճանաչվել և հռչակվել է Վ.Գրիգորյանի անմեղությունը, և նա այդ մեղադրանքով արդարացվել է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Ջորջ Թոսունյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքը կատարելու մեջ, և նա այդ մեղադրանքով արդարացվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

4. Ամբաստանյալներ Գ.Թոսունյանի, Ս.Սահակյանի և Վ.Գրիգորյանի պաշտպանների վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է մասնակիորեն և Առաջին ատյանի դատարանի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով բեկանել է:

Ս.Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման՝ 9 (ինը) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նշանակված պատժից գումարվել է 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով:

Գ.Թոսունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման՝ 8 (ութ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատժից գումարվել է 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 9 (ինը) տարի ժամկետով:

Վ.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման՝ 8 (ութ) տարի ժամկետով:

Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 27-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղդասյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Ս.Սահակյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Գ.Թոսունյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Վ.Գրիգորյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանքներ են առաջադրվել այն բանի համար, որ *Ս.Սահակյանը և Գ.Թոսունյանը մյուսների հետ 2010 թվականի օգոստոսի 28-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, հասարակական վայր հանդիսացող Սյունիքի մարզի Քաջարան քաղաքի մշակույ-*

թի տան մոտ գործող սրճարանի բացօթյա հատվածում, վրդովվելով նույն սրճարանի հաճախորդ Գ. Պապյանի անհասցե հայհոյանքներից, դրանք վերագրել են իրենց՝ սեփական անձը գերադասելով և արհամարհական վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, վիճաբանել են Գ. Պապյանի հետ և դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, սրճարանի հաճախորդների և զբոսայգում գտնվող անձանց նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով՝ տևական ժամանակ փոխադարձ հայհոյանքներ են տվել միմյանց նկատմամբ, դուրս գալով փողոցի բանուկ մաս՝ խոչընդոտել են երթևեկության բնականոն ընթացքը, որի ժամանակ Գ. Պապյանի նկատմամբ գործադրելով բռնություն՝ ձեռքերով և ոտքերով, իսկ Ս. Սահակյանը նաև որպես զենք օգտագործվող առարկայով՝ բանալիով, հարվածներ են հասցրել նրան:

Այնուհետև Գ. Պապյանը Ս. Սահակյանից և Գ. Թոսունյանից պարզաբանումներ ստանալու նպատակով նույն օրը՝ ժամը 22:30-ի սահմաններում, վերադարձել է հասարակական վայր հանդիսացող Քաջարանի կենտրոնում բազմաբնակարան շենքերի հարևանությամբ գտնվող, քաջարանցիների հիմնական զբոսանքի վայր հանդիսացող այգի, որտեղ Գ. Թոսունյանի, Ս. Սահակյանի, Վ. Գրիգորյանի և մյուսների ու Գ. Պապյանի միջև առաջացել է վիճաբանություն, որի ժամանակ վիճաբանության կողմերը, իրենց անձը գերադասելով և արհամարհական վերաբերմունք դրսևորելով հասարակության այգում իրենց հանգիստն անցկացնող բազմաթիվ համաքաղաքացիների նկատմամբ, ինչպես նաև դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, միմյանց նկատմամբ բռնություն գործադրելով, տևական ժամանակ կռվել և տվել են փոխադարձ հայհոյանքներ:

Այգում տեղի ունեցած խուլիգանության ընթացքում Ս. Սահակյանը, Գ. Թոսունյանն ու Վ. Գրիգորյանը Գ. Պապյանին սպանելու դիտավորությամբ, գիտակցելով վերջինիս կյանքի համար իրենց գործողությունների վտանգավոր բնույթը, նախատեսելով դրա հետևանքը, միաժամանակ գիտակցելով մեկը մյուսի գործողությունները և մեկը մյուսի գործողությունները լրացնելով, ընդհանուր միասնական դիտավորությամբ, Ս. Սահակյանը որպես զենք օգտագործող առարկայով՝ դանակի բռնակով, ձեռքերով և ոտքերով, իսկ Գ. Թոսունյանը և՛ ձեռքերով, և՛ ոտքերով բազմաթիվ հարվածներ են հասցրել Գ. Պապյանի կյանքի համար կենսական նշանակություն ունեցող օրգանին՝ գլխին: Այդ ընթացքում Գ. Թոսունյանը, վերը նշված սրճարանից վերցրած դանակը թափահարելով, տվել է Գ. Պապյանին հարվածելու սպառնալիքներ, ինչը կանխվել է եղբոր՝ Ջորջ Թոսունյանի կողմից՝ դանակը ձեռքից վերցնելու եղանակով: Վ. Գրիգորյանն էլ, գիտակցելով Գ. Պապյանի կյանքի համար ինչպես Ս. Սահակյանի և Գ. Թոսունյանի, այնպես էլ իր գործողությունների վտանգավոր բնույթը, և լրացնելով վերջիններիս գործողությունները, բռունցքներով ուժգին հարվածել է գլխի շրջանում արդեն իսկ բազմաթիվ ծանր վնասվածքներ ստա-

ցած Գ.Պապյանի դեմքին, ինչի հետևանքով վերջինս վայր է ընկել՝ գրկվելով դիսադրերու և պաշտպանվելու հնարավորությունից, իսկ Գ.Թոսունյանն ու Ս.Սահակյանը շարունակել են ձեռքերով և ոտքերով հարվածել վերջինիս կյանքի համար կենսական նշանակություն ունեցող օրգան հանդիսացող գլխին, ինչը կանխվել է միայն ներկաների միջամտությամբ:

Գ.Պապյանի սպանության հանցավոր մտադրությունը մինչև վերջ իրագործելու դիտավորությամբ Ս.Սահակյանն արգելել է օգնություն ցույց տալ անգիտակից վիճակում գետնին ընկած տուժողին՝ բղավելով «թողեք թող մենքն», իսկ այնուհետև խոչընդոտել, կանգնեցրել է Գ.Պապյանին հիվանդանոց տեղափոխող ավտոմեքենայի ընթացքը: Այնուամենայնիվ, ներկաներին հաջողվել է Ս.Սահակյանին մի կողմ հեռացնել և Գ.Պապյանին ավտոմեքենայով տեղափոխել հիվանդանոց, որտեղ ժամեր անց վերջինս, գիտակցության չգալով, մահացել է Ս.Սահակյանի, Գ.Թոսունյանի և Վ.Գրիգորյանի հարվածների հետևանքով ստացած, կյանքի համար վտանգավոր բազմաթիվ ծանր վնասվածքներից (տե՛ս քրեական գործ, հատոր 33, թերթ 59, հատոր 27, թերթեր 231-234):

6.1. Կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացության համաձայն՝ Գ.Պապյանի մոտ եղել են հետևյալ մարմնական վնասվածքները. «[Ծ]անր բաց բուք գանգոդեղային վնասվածք՝ գլխի աջ ճակատ-գագաթային շրջանի, ճակատի վերին միջին հատվածի, ձախից ճակատային մազածածկ շրջանի մեկական սալջարդ վերքերի, աջից ճակատային թմբկության պրոյեկցիայով մաշկի ամբողջականության ոչ լրիվ խախտումով սալջարդ վերքի, աջից ծոծրակագագաթային շրջանի արյունահավաքի, ձախից ճակատ-գագաթային շրջանի արյունազեղման, նշված շրջաններում գլխի ծածկույթային հյուսվածքների տակ արյունազեղումների, աջ ակնակապճի դրսային անկյան շրջանի սալջարդ վերքի՝ շրջակա արյունազեղման, ձախ ստորակնակապճային շրջանի միջային կեսի և քթի ձախ կողմնային շրջանի արյունազեղման, ձախից քիթ-այտային ծալքի շրջանի ծակած վերքի, գույզ ակնագնդերի սպիտակուցաթաղանթի արյունազեղումների, ձախ աչքի ցանցաթաղանթի տրավմատիկ շերտազատման, աջ քունքամկանի արյունազեղման, գանգի թաղի ոսկրերի՝ աջից գագաթոսկրի հետին կեսի շրջանի պատուհանաձև կլորավուն ներհրված կոտրվածքի, վերջինիս կենտրոնից կոտրվածքի գծի դեպի վար շարունակմամբ ծոծրակոսկրի վրա, անցումով գանգի հիմ՝ աջից հետին գանգափոս, աջից գագաթ-ծոծրակային կարանի անջատմամբ և ևս մեկ կոտրվածքի գծի շարունակմամբ աջից հետին գանգափոս, քունքոսկրի սպառածի հետին հատվածով մինչև թրքական թամբի աջակողմյան շրջան, գանգի թաղի ոսկրերի՝ աջից ճակատ-գագաթային շրջանի գծային կոտրվածքի՝ աջից անցումով գանգի հիմ՝ առաջային գանգափոս, շարունակվելով լայնաձիգ՝ մաղոսկրի հետին հատվածով դեպի ձախից առաջային գանգափոս, աջից քունքոսկրի խրթեշի առաջային և վերին հատվածների հարակից ոսկրերի հետ կարանի անջատման, աջից ճակատային թմբկության շրջանի անկանոն օվալ ձևի ներհրված կոտրվածքի,

ձախից ճակատոսկրի արտաքին թիթեղի անկյունաձև գծային կոտրվածքի, կոտրվածքների եզրագծերով և դրանց շրջակա արյունազեղումների, գլխուղեղի ծանր աստիճանի սալջարդի՝ ենթակարծրենային տարածուն արյունահավաքների, աջ ծոծրակային և գագաթային շրջաններում փափուկ թաղանթի արյունազեղումների, ծոծրակային և գագաթային շրջաններում ուղեղանյութի արյունազեղումների ձևով՝ ներգանգային արյունահավաքների, արյան մակարդուկների, գլխուղեղի ծոցերում և հավելյալ խոռոչներում արյունալեցումների առաջացմամբ, որոնք պատճառվել են հիմնականում սահմանափակ ազդեցության մակերեսներ ունեցող բուք կոշտ առարկաների ներգործություններով (...): Գլխի շրջանի թվարկված վնասվածքների ծանրության աստիճանը միմյանցից տարանջատել հնարավոր չէ, քանի որ դրանք առաջացրած բոլոր վնասող ներգործությունները կարող էին բերել Գրիգոր Պապյանի գլխուղեղի ծանր վնասման, ուստի նշված բոլոր վնասվածքները նրա առողջությանը պատճառել են ծանր վնաս՝ կյանքի համար վտանգավորության հատկանիշով, որոնք էլ տվյալ դեպքում առաջացնելով գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների սուր խանգարում՝ հանգեցրել են մահվան (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 33, թերթեր 126-127):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. «(...) [Հ]ետագոտված ապացույցներով հիմնավորվել է, որ ծեծկոտուքի ընթացքում Սահակ Սահակյանը ձեռքերով, ոտքերով և դանակի բռնակով, իսկ Գևորգ Թոսունյանը և Վիլեն Գրիգորյանը ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ են Գրիգոր Պապյանի կենսականորեն կարևոր օրգան հանդիսացող՝ գլխի շրջանին, նույնիսկ հիշյալ գործողությունները շարունակել են Գ. Պապյանի կողմից վայր ընկնելուց և անօգնական վիճակում (գլխով եզրաքարին հարվածվելուց) գետնին հայտնվելուց հետո, իսկ նրանց գործողությունները դադարել են Նվեր Նիկողոսյանի և մյուսների միջամտության արդյունքում, ապա Ս. Սահակյանը շուրջ երկու թույե խոչընդոտել է Գ. Պապյանին հիվանդանոց տեղափոխող մեքենային, թույլ չի տվել, որ այն տեղից շարժվի՝ միաժամանակ բառացիորեն ասել է. «ավտոն թող մնա, թողեք թող մեռնի», որից հետո հայիռյել և վարորդին իջեցրել է մեքենայից:

Բացի այդ, կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացության համաձայն Գրիգոր Պապյանի մահը վրա է հասել պատճառված գլխի շրջանի՝ եզրակացությամբ թվարկված 15 մարմնական վնասվածքների հանրագումարից, այսինքն՝ տվյալ բոլոր մարմնական վնասվածքները, անմիջական պատճառական կապի մեջ են գտնվում Գրիգոր Պապյանի մահվան հետ:

Այսպիսով, (...) Դատարանը հաստատված է համարում, որ Սահակ Սահակյանը, Գևորգ Թոսունյանն և Վիլեն Գրիգորյանը Գրիգոր Պապյանին սպանելու դիտավորությամբ՝ գիտակցելով վերջինիս կյանքի համար իրենց գործողությունների վտանգավոր բնույթը, նախատեսելով նրա մահը վրա հասնելու հնարավորությունը, միաժամանակ գիտակցելով մեկը

մյուսի գործողությունները և մեկը մյուսի գործողությունները լրացնելով, գիտակցաբար թույլ են տվել դրանք և ընդհանուր միասնական դիտավորությանը Գ. Պապյանին ապօրինաբար գրկել են կյանքից (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 33, թերթեր 143-144):

8. Վերաքննիչ դատարանն իր որոշման շրջանակներում փաստել է. «(...) [Գ]ործի փաստական հանգամանքները չեն համապատասխանում դատական ակտում շարադրված հետևություններին, ամբաստանյալների կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով կատարված արարքին տրվել է սխալ քրեախրավական գնահատական, նրանց արարքն ըստ գործով ձեռք բերված փաստական հանգամանքների ճիշտ չի որակված, այն համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 14-րդ կետերով նախատեսված հանցակազմին:

(...)

Վերաքննիչ դատարանը ամբաստանյալների դիտավորության ուղղվածության վերաբերյալ հետևության է գալիս հիմք ընդունելով նրանց կողմից կատարած հանցագործության հանգամանքները, գնահատելով տվյալ գործով ձեռք բերված ապացույցները, մասնավորապես այն հանգամանքը, որ դեպքի օրը երկու միջադեպերի առաջացման պատճառը հանդիսացել է տուժողը, նրա վարքագիծը:

Առաջին միջադեպն ավարտվելուց հետո, երբ բոլորը հեռացել են դեպքի վայրից, ժամեր անց գտնվելով ոգելից խմիչքի ազդեցության տակ նա վերադարձել է պարզաբանում ստանալու և ճշտելու իրեն հարված հասցնողի ինքնությունը, որից հետո առաջացել է երկկողմանի քաշքշուկ, փոխադարձ հայհոյանքներ և դրա արդյունքում ամբաստանյալները ծեծի են ենթարկել Գ. Պապյանին:

Ընդ որում՝ Սահակ Սահակյանը, նրա գլխին հարվածել է նաև իր դանակի բռնակով, այն դեպքում, երբ սպանելու դիտավորություն ունենալով կարող էր հարվածել դանակի շեղբով, որը չի արել:

Դեպքի պահին ամբաստանյալներ Գ. Թոսունյանի և Վ. Գրիգորյանի կատարված գործողությունները՝ տուժողին ծեծի ենթարկելու պահին բավարար չեն գալու եզրահանգման, որ նրանք սպանության դիտավորություն են ունեցել, Դատարանը վերլուծելով ամբաստանյալների ցուցմունքները չի մատնանաշել և արձանագրել նրանց կողմից սպանություն կատարելու դրդապատճառը, նման դիտավորության ծագման հիմքը և ժամանակը: Գործով ձեռք չեն բերվել տվյալներ հիմնավորելու, որ մինչև դեպքի օրը տուժողը և ամբաստանյալները գտնվել են այնպիսի հարաբերությունների մեջ, որը կարող էր հանգեցնել սպանությանը: Ավելին՝ գործով ձեռք բերված տվյալներով հիմնավորված է, որ առաջին միջադեպի ժամանակ ամբաստանյալները ծեծի են ենթարկել տուժողին, ինչից հետո տուժողը ժամեր անց վերադարձել է, ինչը նույնպես բերում է այն հետևության, որ ամբաստանյալները սպանելու նախատրամադրվածություն չեն ունեցել: Անդրադառնալով բուն դեպքի ժամանակ ամբաստան-

յալների դրսևորած վարքագծին, հարկ է նկատել, որ Սահակ Սահակյանը տուժողին հարվածել է դանակի բռնակով: Ընդ որում՝ ըստ գործով ձեռք բերված տվյալների՝ Սահակ Սահակյանն իր մոտ մշտապես դանակ է պահել: Այսինքն՝ դանակը վերցված չի եղել հատուկ տուժողին վնաս պատճառելու համար: Իսկ Սահակ Սահակյանն ազատ գործելու հնարավորություն ունեցել է, և, սպանության դիտավորություն ունենալու պարագայում, կարող էր հանգիստ բացել դանակը և հարվածներ հասցնել ոչ թե դանակի բռնակով, այլ՝ շեղբով:

Տվյալ դեպքում հարկ է հիշատակել նաև գործով հիմնական վկա Նվեր Նիկողոսյանի ցուցմունքն այն մասին, որ Սահակ Սահակյանը Գրիգոր Պապյանի գլխին դանակով հարվածել է կռվի սկզբում, երբ նա դեռ եղել է կանգնած, իսկ երբ վերջինը Վիլենի հարվածից ընկել է, Սահակը ևս մեկ կամ երկու անգամ է հարվածել:

Ինչ վերաբերվում է Սահակ Սահակյանի կողմից մեքենայի ընթացքը խոչընդոտելուն և արտահայտությանը, որ թողեք մահանա, ապա հարկ է նկատել, որ այդ ժամանակ, եթե Սահակ Սահակյանը կարողացել է մեքենան կանգնեցնել, ապա հնարավորություն է ունեցել նաև տուժողին մոտենալու իր սպանության դիտավորությունը իրագործելու համար, սակայն այդ ուղղությամբ որևէ իրական գործողություն չի իրականացրել, այդ թվում՝ օգնություն ցուցաբերողներին վնաս տալու ձևով: Ավելին՝ «թողեք մահանա» արտահայտությունը վկայում է այն մասին, որ Սահակ Սահակյանը գիտակցել է, որ տուժողը կենդանի է:

Ուստի Դատարանի գնահատմամբ Սահակ Սահակյանի նշված գործողությունը և արտահայտությունը ոչ այլ ինչ են, քան կռվով պայմանավորված չարդարացված վրդովմունքի դրսևորումներ, որոնք վերը նշված հանգամանքների համատեքստում բավարար չեն սպանության դիտավորության մասին միանշանակ հետևության գալու համար:

Հարկ է նկատել նաև, որ «մեռավ, չի դիմացել» արտահայտությունից հետո տուժողին ոչ ոք չի հարվածել, իսկ տուժողի ընկերները հնարավորություն են ունեցել նրան օգնություն ցույց տալու՝ վրան ջուր շփելու, մեքենան նստեցնելու, իսկ այնուհետև նաև հիվանդանոց տեղափոխելու միջոցով:

Ինչ վերաբերում է տուժողի վնասվածքներին, ապա պետք է փաստել, որ տեղի է ունեցել փոխադարձ կռիվ, որի ժամանակ տուժողը և նրա ընկերները նույնպես հարվածներ են հասցրել և քաշքշել են «հակառակ» կողմին, ուստի վնասվածքների մի մասը տուժողը կարող էր ստանալ ոչ թե ընկած, այլ՝ կանգնած վիճակում: Իսկ սպանության դիտավորության մասին իրատեսական կլինել խոսել, եթե տուժողն այդ վնասվածքները ստանար ընկած՝ անօգնական վիճակում:

Սպանության դիտավորության բացակայության մասին է վկայում նաև ամբաստանյալների հետագա վարքագիծը, որ դեպքից հետո անմիջապես փախուստի չեն դիմել կամ չեն հեռացել: Այսինքն՝ ամբաստանյալների գիտակցմամբ եղել է կռիվ, որի ժամանակ նրանք մյուս կողմին ձեռի

են ենթարկել: Հակառակ՝ արհամարհական, պատասխանատվության ենթարկվելու վախ չունենալու մտտեցումը՝ հատկապես սպանության դիտավորություն ունենալու պարագայում, քիչ իրատեսական է:

Միաժամանակ քիչ իրատեսական է, որ ամբաստանյալները, սպանության դիտավորությամբ մարմնական վնասվածքներ հասցնելուց անմիջապես հետո, իմանալով, գիտակցելով, որ տուժողը կենդանի է, իրենց դիտավորությունն ավարտին չեն հասցրել (ընդ որում՝ գործով ձեռք չի բերվել հիմնավոր տվյալ, որ ամբաստանյալներն այդ հնարավորությունը չեն ունեցել) (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 35, թերթեր 93, 97-98):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

9. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերի կարծիքով՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 22-ի դատավճռի դեմ ներկայացված բողոքները մասնակիորեն բավարարելով և դատական ակտը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով բեկանելով ու ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ ու 14-րդ կետերով վերադասվելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, այն է՝ կիրառվել է քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ գործով ապացույցները գնահատվել են թերի և միակողմանի:

Այսպես՝ բողոքի հեղինակը Վերաքննիչ դատարանի այն փաստարկների կապակցությամբ, որ դատավճռում չեն մատնանշվել և արձանագրվել ամբաստանյալներ Ս.Սահակյանի, Գ.Թոսունյանի և Վ.Գրիգորյանի կողմից սպանություն կատարելու դրդապատճառները, նման դիտավորության ծագման հիմքը և ժամանակը, արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներով հաստատվել է, որ սպանության դրդապատճառը Գ.Պապյանի կողմից դրսևորված անհարգալից վերաբերմունքի հետևանքով առաջացած վրեժի շարժառիթն է եղել: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի դատական ակտում առկա այն դատողություններին, որ Ս.Սահակյանն իր մոտ մշտապես դանակ է պահել, այն հատուկ տուժողին վնաս պատճառելու համար չի վերցրել, ունեցել է ազատ գործելու հնարավորություն, հետևաբար տուժողին սպանելու դիտավորություն ունենալու պարագայում կարող էր հանգիստ հարվածել ոչ թե դանակի բռնակով, այլ շեղբով, իսկ նրա կողմից վիճաբանությունից հետո տուժողին տեղափոխող մեքենայի ընթացքը խոչընդոտելը և հնչեցված՝ «թողե՛ք, թող մեռնի» արտահայտությունը ոչ այլ ինչ են, քան կռվով պայմանավորված չարդարացված վրդովմունքի դրսևորումներ, սպա բողոքաբերն ընդգծել է, որ Ս.Սահակյանը, համատեղ գործելով Վ.Գրիգորյանի և Գ.Թոսունյանի հետ, ընկալելով նրանցից յուրաքան-

չյուրի կողմից կատարվող գործողությունների բնույթը, գիտակցել և նախատեսել է, որ դանակի շեղբով չհարվածելու դեպքում էլ, միևնույն է, իրենց հարվածների արդյունքում տուժողի մահն առաջանալու է:

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է նաև, որ տեղի ունեցած փոխադարձ կռվի ընթացքում տուժողը և նրա ընկերները նույնպես հարվածներ են հասցրել և քաշքշել «հակառակ» կողմին, հետևաբար վնասվածքների մի մասը Գ.Պապյանը կարող էր ստանալ ոչ թե ընկած, այլ կանգնած վիճակում, մինչդեռ սպանության դիտավորության մասին իրատեսական կլիներ խոսել այն պարագայում, երբ տուժողն այդ վնասվածքները ստանար ընկած՝ անօգնական վիճակում: Վերոնշյալի կապակցությամբ բողոքի հեղինակը նշել է, որ մարմնական վնասվածքներ ստանալու դիրքը որևէ նշանակություն չունի հանցավորների մոտ Գ.Պապյանին սպանելու դիտավորության առկայությունը կամ բացակայությունը փաստելու հարցում, թեպետ դատաքննության ընթացքում հաստատվել է, որ գլխի շրջանում ստացած և մահվան հետ անմիջական պատճառական կապի մեջ գտնվող շատ վնասվածքներ տուժողը ստացել է հենց ընկած վիճակում:

10. Վերոշարադրյալ փաստերը գնահատելով Վճարելի դատարանի՝ *Ս.Հունիկյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ բողոքաբերն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած դատաքննությամբ հիմնավորվել է, որ Գ.Պապյանի մահը վրա է հասել գլխի շրջանում ստացած բազմաթիվ մարմնական վնասվածքների հանրագումարից, որոնցից յուրաքանչյուրն անմիջական պատճառական կապի մեջ է գտնվել վերջինիս մահվան հետ: Հետևաբար Գ.Պապյանի մահվան նկատմամբ ամբաստանյալների մեղքը չէր կարող անզգուշությամբ արտահայտվել, քանի որ տուժողի գլխին բազմաթիվ հարվածներ հասցնելով և վերը նշված վնասվածքները պատճառելով՝ ամբաստանյալները չէին կարող չնախատեսել իրենց գործողությունների արդյունքում Գ.Պապյանին կյանքից զրկելու անխուսափելիությունը կամ իրական հնարավորությունը:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 27-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 22-ի դատավճռին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճարելի դատարանը գտնում է, որ *անուղղակի դիտավորությամբ* սպանության (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված) և *հանցավոր ինքնավստահությամբ* տուժողի մահն առաջացրած ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցակազմերի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրա-

ժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Ս.Սահակյանի, Գ.Թոսունյանի և Վ.Գրիգորյանի արարքներում սպանության հանցակազմի բացակայության և ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դիտավորությամբ կատարված հանցանքը կարող է դրսևորվել ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ:*

2. Հանցանքը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկացել է դրանց վրա հասնելը:

3. Հանցանքը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանք:

(...)»:

Դիտավորության ուղղակի և անուղղակի տեսակները միմյանցից սահմանազատվում են գիտակցական (ինտելեկտուալ) և կամային չափանիշներով: Ընդ որում, թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի դիտավորության դեպքում գիտակցական չափանիշն օրենքում բնութագրվում է *«գիտակցել»* և *«նախատեսել»* արտահայտություններով: Այսպես՝ մեղքի դիտավորյալ ձևն առկա է, եթե հանցավորը գիտակցում է իր արարքի հանրային վտանգավորությունը, այսինքն՝ դրա ունակությունը վնաս պատճառելու գոյություն ունեցող հասարակական հարաբերություններին, նախատեսում է հետևանքների առաջացման *«անխուսափելիությունը»* կամ *«իրական հնարավորությունը»*՝ ուղղակի դիտավորության, և *«իրական հնարավորությունը»*՝ անուղղակի դիտավորության դեպքում: Ակնհայտ է, որ ուղղակի դիտավորության պարագայում հանրոթեն վտանգավոր հետևանքները նախատեսելու հավանականության աստիճանը շատ ավելի բարձր է, քան անուղղակի դիտավորության դեպքում:

Ուղղակի և անուղղակի դիտավորություններն առավել հստակ տարբերակվում են կամային չափանիշով: Մասնավորապես, եթե ուղղակի դիտավորության պարագայում հանցավորը ցանկանում է համապատասխան հետևանքների առաջացումը, ապա անուղղակի դիտավորության դեպքում թեև չի ցանկանում, սակայն գիտակցաբար թույլ է տալիս՝ հույսը դնելով կամ պատահականության՝ վերացական, գոյություն չունեցող հանգամանքների վրա, որոնք իբրև կարող են կանխել հետևանքների ա-

առաջացումը, կա՛ն դրսևորելով անտարբերություն դրանց առաջացման նկատմամբ: Այսինքն՝ անուղղակի դիտավորության դեպքում հանցավորը թեպետ չի ցանկանում հետևանքների առաջացումը, սակայն միևնույն ժամանակ դա թույլ չտալու համար չի դիմում ակտիվ գործողությունների:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անգ-գուշությամբ կատարված հանցանքը կարող է դրսևորվել ինքնավստահությամբ կամ անփութությամբ:*

2. Հանցանքը համարվում է ինքնավստահությամբ կատարված, եթե անձը նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն:

3. Հանցանքը համարվում է անփութությամբ կատարված, եթե անձը չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք»:

Մեջբերված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ անգգուշության տեսակների տարբերակման հիմքում ընկած է վտանգավոր հետևանքները նախատեսելու հանգամանքը: Մասնավորապես, հանցավոր ինքնավստահության դեպքում անձը նախատեսում է հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն հույսը դնելով իր հմտությունների, այլ անձանց, սարքավորումների և այլնի վրա՝ առանց բավարար հիմքերի հույս է ունենում, որ դրանք կկանխվեն: Հարկ է նկատել, որ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը նախատեսում է հետևանքների առաջացման ոչ թե իրական, այլ վերացական հնարավորությունը, գիտակցում է, որ նման արարքներն ընդհանրապես կարող են վտանգավոր հետևանքներ առաջացնել, սակայն համոզված է՝ ոչ տվյալ դեպքում և իրադրության մեջ: Կամային չափանիշով հանցավոր ինքնավստահությունը բնութագրվում է ոչ միայն համապատասխան հետևանքների առաջանալը չցանկանալով, այլև դրանք կանխելու ձգտումով՝ դրսևորելով ակտիվ վարքագիծ:

Հանցավոր անփութության օրենսդրական բնորոշումը ցույց է տալիս, որ անգգուշության այս տեսակը բնութագրվում է վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը չնախատեսելով: Այլ խոսքով՝ անփութությամբ գործող անձը, իրական հնարավորություն և պարտավորվածություն ունենալով նախատեսելու վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, բավարար շրջահայացություն, ուշադրություն և հոգատարություն չի ցուցաբերում այդ հետևանքների առաջացումը թույլ չտալու համար (անգգուշ մեղքի վերաբերյալ տե՛ս, *mutatis mutandis*, Է.Ասատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԳ/0201/01/11 որոշման 16-րդ կետը):

16. ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե օրենքն ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսում անզգուշությամբ ծանր հետևանքներ առաջացրած դիտավորյալ հանցագործության համար, ապա անձն այդ հետևանքների համար պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, եթե նա նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն, կամ չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք: Այդպիսի հանցանքը համարվում է դիտավորությամբ կատարված»:

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է հոիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

(...)

14) անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով»:

Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունների առանձնահատկությունն այն է, որ հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված և նրա համար ցանկալի հանցանքի նկատմամբ դրսևորվում է դիտավորություն (ուղղակի կամ անուղղակի), մինչդեռ դրա արդյունքում առաջացող ոչ անմիջական, առավել ծանր հետևանքի նկատմամբ՝ անզգուշություն՝ հանցավոր ինքնավստահության կամ անփութության տեսքով, որն էլ հիմնական հանցակազմը վեր է ածում ծանրացնող հանգամանքով հանցակազմի: Հետևաբար հետևանքի նկատմամբ անձի սուբյեկտիվ վերաբերմունքի բացահայտումն էական նշանակություն ունի մեղքի երկու ձևով կատարվող հանցանքները բացառապես դիտավորությամբ կամ բացառապես անզգուշությամբ կատարվող հանցագործություններից սահմանազատելու և արարքը ճիշտ որակելու հարցում:

Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններից է դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգու-

շուքյամբ առաջացրել է տուժողի մահ: Ակնհայտ է, որ արարքը քննարկվող հանցակազմով որակվում է բացառապես այն դեպքում, երբ առաջնային հետևանքի՝ ծանր վնաս պատճառելու նկատմամբ անձը դրսևորում է դիտավորություն (ուղղակի կամ անուղղակի), իսկ երկրորդական և առավել ծանր հետևանքի՝ մահվան նկատմամբ՝ անզգուշություն (հանցավոր ինքնավստահություն կամ անփութություն):

17. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. *Սպանությունը՝ սպօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկել[ն է] (...)*»:

Սուբյեկտիվ կողմից սպանության հանցակազմը բնութագրվում է միայն դիտավորյալ մեղքի ձևով, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի: Ուղղակի դիտավորության դեպքում հանցավորը գիտակցում է, որ ուրիշի կյանքի համար վտանգավոր արարք է կատարում, նախատեսում է մարդուն կյանքից զրկելու հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցանկանում տուժողին մահ պատճառել: Անուղղակի դիտավորության դեպքում անձը գիտակցում է, որ ուրիշի կյանքի համար վտանգավոր արարք է կատարում, նախատեսում է մարդուն կյանքից զրկելու հնարավորությունը, չի ցանկանում, բայց գիտակցաբար թույլ է տալիս տուժողի մահվան առաջացումը կամ անտարբերություն է դրսևորում այդ հետևանքի առաջացման նկատմամբ (տե՛ս *Ա.Բաղդասարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10 որոշման 14-րդ կետը):

18. Սույն որոշման 14-17-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ որոշակի դժվարություններ կարող են առաջանալ *հանցավոր ինքնավստահությամբ* տուժողի մահն առաջացրած ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցակազմն *անուղղակի դիտավորությամբ սպանությունից* տարանջատելիս, քանի որ երկու դեպքում էլ անձը թեև նախատեսում է վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն չի ցանկանում դրանք:

Այդ առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անուղղակի դիտավորությունը հանցավոր ինքնավստահությունից տարբերվում է վտանգավոր հետևանքները նախատեսելու աստիճանով և այդ հետևանքները «չցանկանալու» նկատմամբ դրսևորվող հոգեբանական վերաբերմունքով: Մասնավորապես՝ անուղղակի դիտավորության դեպքում հանցավորը՝

- նախատեսում է հետևանքների առաջացման *իրական հնարավորությունը* կոնկրետ իրադրության մեջ, գիտակցում է, որ եթե դրանք առաջանան, ապա միանշանակորեն բխելու են իր արարքից (գիտակցական չափանիշ),

- թեպետ չի ցանկանում հետևանքների առաջացումը, սակայն միևնույն ժամանակ դա թույլ չտալու համար չի դիմում ակտիվ գործողութ-

յունների: Այլ կերպ՝ հետևանքների առաջացման նկատմամբ դրսևորում է պասիվ հոգեբանական վերաբերմունք (կամային չափանիշ):

Հանցավոր ինքնավստահության դեպքում անձը՝

- նախատեսում է հետևանքների առաջացման ոչ թե *իրական*, այլ *վերացական հնարավորությունը*, ընդհանուր գծերով պատկերացնում է, որ այդպիսի արարքներն *ընդհանրապես* կարող են նման հետևանքներ առաջացնել, սակայն համոզված է, որ *ոչ տվյալ դեպքում և տվյալ իրադրության մեջ* (գիտակցական չափանիշ),

- ոչ միայն չի ցանկանում վտանգավոր հետևանքների առաջացումը, այլ նաև *ակտիվ վարքագիծ* է դրսևորում դրանց կանխարգելման ուղղությամբ: Այսպես՝ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը չի բավարարվում պարզապես չցանկանալով, հույսը չի դնում պատահականության վրա, այլ փորձում է *իրական (ռեալ)* գործողություններ կատարել հանրորեն վտանգավոր հետևանքները կանխելու համար (կամային չափանիշ):

19. Նախորդ կետում ձևավորած դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ հանրորեն վտանգավոր հետևանքի (մահվան) նկատմամբ անձի դրսևորած սուբյեկտիվ վերաբերմունքը պարզելու և արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հարցում կարևոր է գործի փաստական հանգամանքների համակողմանի վերլուծությունը՝ հատկապես ուշադրություն դարձնելով արարքի կատարման եղանակին և օգտագործվող գործիքներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին և տեղակայմանը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների վնասումը), ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագծին հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերություններին, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառներին և այլն (տե՛ս, mutatis mutandis, *Ս.Հունիկյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08 որոշումը):

Այսպես՝ կոնկրետ իրադրությունում հասցված մարմնական վնասվածքների քանակը, բնույթն ու տեղակայումը, օրինակ, կենսական կարևոր օրգանների շրջանում բազմաթիվ մարմնական վնասվածքների առկայությունը, հարվածների ուժգնությունը և ինտենսիվությունը, համակատարողների առկայությունն ու քանակը, նրանցից յուրաքանչյուրի գործողությունների բնույթը, ինչպես նաև տուժողի մահը կանխելու ուղղությամբ քայլեր չձեռնարկելը, նման հետևանքի առաջացման նկատմամբ անտարբերություն դրսևորելը կարող են վկայել այն մասին, որ հանցավորը տուժողին մահ պատճառելու իրական հնարավորությունն առնվազն նախատեսում է, գիտակցում է, որ եթե մահն առաջանա, ապա բխելու է իր արարքներից, միևնույն ժամանակ անտարբերություն է դրսևորում դրա առաջացման նկատմամբ կամ հույսը դնում է գոյություն չունեցող, վերացական հանգամանքների վրա, այսինքն՝ գործում է անուղղակի դիտավորությամբ: Հետևաբար նման դեպքերում անձի արարքը պետք է ո-

րակվի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի համապատասխան մասով՝ որպես սպանություն:

Մինչդեռ բոլոր այն դեպքերում, երբ մահը վրա է հասնում կենսական ոչ կարևոր կամ թեկուզ կենսականորեն կարևոր օրգաններին, բայց այնպիսի գործիքով կամ եղանակով վնաս հասցնելու արդյունքում, որոնք չեն վկայում մահ պատճառելու իրական հնարավորությունը նախատեսելու մասին, ինչպես նաև եթե համապատասխան արարքը կատարելուց հետո հնարավոր մահը կանխելու նպատակով հանցավորի կողմից ակտիվ գործողություններ են ձեռնարկվում, վկայում են հանցավորի մոտ տուժողին սպանելու դիտավորության բացակայության մասին, հետևաբար արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով՝ որպես առողջությանը դիտավորությամբ ծանր վնասի պատճառում, որն անզուգուրությամբ առաջացրել է տուժողի մահ:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2010 թվականի օգոստոսի 28-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, առաջացած վիճաբանության ընթացքում ամբաստանյալներ Ս.Սահակյանը, Գ.Թոսունյանն ու Վ.Գրիգորյանը ձեռքերով և ոտքերով, Ս.Սահակյանը նաև որպես զենք օգտագործվող առարկայով՝ դանակի բռնակով, բազմաթիվ հարվածներ են հասցրել Գ.Պապյանի՝ կյանքի համար կենսական նշանակություն ունեցող օրգանի՝ գլխի շրջանում: Հանցավորները շարունակել են հարվածներ հասցնել նույնիսկ տուժողի վայր ընկնելուց և անօգնական վիճակում հայտնվելուց հետո, որոնց հետևանքով գլխի շրջանում ստացած բազմաթիվ մարմնական վնասվածքներից Գ.Պապյանը, գիտակցության չզալով, մահացել է (տե՛ս սույն որոշման 6-6.1-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացությունը (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը) և արձանագրելով, որ Գ.Պապյանի մահը վրա է հասել եզրակացությամբ թվարկված 15 մարմնական վնասվածքների հանրագումարից, որոնք անմիջական պատճառական կապի մեջ են գտնվել տուժողի մահվան հետ, Ս.Սահակյանին, Գ.Թոսունյանին ու Վ.Գրիգորյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով: Գատաքննությամբ հետազոտված ապացույցների հիման վրա Առաջին ատյանի դատարանը հիմնավորված է համարել, որ Ս.Սահակյանը ձեռքերով, ոտքերով և դանակի բռնակով, իսկ Գ.Թոսունյանն ու Վ.Գրիգորյանը ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ են հասցրել Գ.Պապյանի կենսականորեն կարևոր օրգան հանդիսացող գլխի շրջանում, այդ գործողությունները շարունակել են նույնիսկ Գ.Պապյանի կողմից վայր ընկնելուց և անօգնական վիճակում (գլխով եզրաքարին հարվածվելուց) հայտնվելուց հետո, սպա Ս.Սահակյանը շուրջ երկու րոպե խոչընդոտել է Գ.Պապյանին հիվանդանոց տեղափոխող մեքենային (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը սխալ եզրահանգման է եկել Ս.Սահակյանի, Գ.Թոսունյանի և

Վ.Գրիգորյանի արարքներին քրեաիրավական գնահատական տալու հարցում: Մասնավորապես՝ ըստ Վերաքննիչ դատարանի՝ Առաջին ատյանի դատարանը չի մատնանշել ամբաստանյալների կողմից սպանություն կատարելու դրդապատճառը, նման դիտավորության ծագման հիմքը և ժամանակը, ինչպես նաև գործով ձեռք չեն բերվել տվյալներ՝ հիմնավորելու, որ տուժողը և ամբաստանյալները գտնվել են այնպիսի հարաբերությունների մեջ, որը կարող էր հանգեցնել սպանության: Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ Ս.Սահակյանն ազատ գործելու հնարավորություն է ունեցել և եթե ցանկանար սպանել Գ.Պապյանին, կարող էր հարվածները հասցնել ոչ թե դանակի բռնակով, այլ շեղբով: Բացի այդ, գիտակցելով, որ տուժողը դեռևս կենդանի է՝ Ս.Սահակյանը հնարավորություն է ունեցել նրան մոտենալու և սպանելու դիտավորությունն իրագործելու համար, սակայն այդ ուղղությամբ որևէ գործողություն չի իրականացրել, իսկ նրա կողմից Գ.Պապյանին տեղափոխող մեքենայի ընթացքը խոչընդոտելը և «թողեք մահանա» արտահայտությունը եղել են կռվով պայմանավորված չարդարացված վրդովմունքի դրսևորումներ, որոնք բավարար չեն սպանության դիտավորության մասին միանշանակ հետևության գալու համար: Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ վնասվածքների մի մասը տուժողը ստացել է ոչ թե ընկած, այլ կանգնած վիճակում, մինչդեռ սպանության դիտավորության մասին իրատեսական կլիներ խոսել, եթե տուժողն այդ վնասվածքները ստանար ընկած՝ անօգնական վիճակում: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ սպանության դիտավորության բացակայության մասին է վկայում նաև ամբաստանյալների հետագա վարքագիծը՝ այն, որ դեպքից հետո վերջիններս անմիջապես փախուստի չեն դիմել կամ չեն հեռացել: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և ամբաստանյալներին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

21. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-19-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել գործի փաստական հանգամանքները, մասնավորապես՝ հանցագործության կատարման եղանակը, հասցված հարվածների ուժգնությունը և ինտենսիվությունը, հանցագործության օբյեկտիվ կողմը մեկից ավելի անձանց՝ համակատարողների կողմից իրականացնելը, նրանցից յուրաքանչյուրի գործողությունների բնույթը, պատճառված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը, ինչպես նաև հանցագործությունից հետո հանցավորների դրսևորած վարքագիծը:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է, որ երեք անձինք ձեռքբերով և ոտքերով, իսկ ամբաստանյալ Ս.Սահակյանը՝ նաև դանակի բռնակով, մի շարք ուժգին հարվածներ են հասցրել Գ.Պապյանի կյանքի համար կարևոր հատվածի՝ գլխի շրջանում, որոնց արդյունքում,

ըստ դատաբժշկական եզրակացության, պատճառվել են տուժողի մահվան հետ անմիջական պատճառական կապի մեջ գտնվող բազմաթիվ մարմնական վնասվածքներ, մասնավորապես՝ ծանր, բաց, բութ գանգուղեղային վնասվածք՝ գլխի աջ ճակատ-գագաթային շրջանի, ճակատի վերին միջին հատվածի, ձախից ճակատային մագածածկ շրջանի մեկական սալջարդ վերքերի, աջից ճակատային թմբկության պրոյեկցիայով մաշկի ամբողջականության ոչ լրիվ խախտումով սալջարդ վերքի, աջից ծոծրակա-գագաթային շրջանի արյունահավաքի, ձախից ճակատ-գագաթային շրջանի արյունազեղման, նշված շրջաններում գլխի ծածկույթային հյուսվածքների տակ արյունազեղումների, աջ ակնակապճի դրսային անկյան շրջանի սալջարդ վերքի՝ շրջակա արյունազեղման, ձախ ստորակնակապճային շրջանի միջային կեսի և քթի ձախ կողմնային շրջանի արյունազեղման, ձախից քիթ-այտային ծալքի շրջանի ծակած վերքի, գույզ ակնազնդերի սպիտակուցաթաղանթի արյունազեղումների, ձախ աչքի ցանցաթաղանթի տրավմատիկ շերտազատման, աջ քունքամկանի արյունազեղման, գանգի թաղի ոսկրերի՝ աջից գագաթոսկրի հետին կեսի շրջանի պատուհանաձև կլորավուն ներհրված կոտրվածքի, վերջինիս կենտրոնից կոտրվածքի գծի դեպի վար շարունակմամբ ծոծրակոսկրի վրա, անցումով գանգի հիմ՝ աջից հետին գանգափոս, աջից գագաթ-ծոծրակային կարանի անջատմամբ և ևս մեկ կոտրվածքի գծի շարունակմամբ աջից հետին գանգափոս, քունքոսկրի ապառաժի հետին հատվածով մինչև թրքական թամբի աջակողմյան շրջան, գանգի թաղի ոսկրերի՝ աջից ճակատ-գագաթային շրջանի գծային կոտրվածքի՝ աջից անցումով գանգի հիմ՝ առաջային գանգափոս, շարունակվելով լայնաձիգ՝ մաղոսկրի հետին հատվածով դեպի ձախից առաջային գանգափոս, աջից քունքոսկրի խրթեշի առաջային և վերին հատվածների հարակից ոսկրերի հետ կարանի անջատման, աջից ճակատային թմբկության շրջանի անկանոն օվալ ձևի ներհրված կոտրվածքի, ձախից ճակատոսկրի արտաքին թիթեղի անկյունաձև գծային կոտրվածքի, կոտրվածքների եզրագծերով և դրանց շրջակա արյունազեղումների, գլխուղեղի ծանր աստիճանի սալջարդի՝ ենթակարծրենային տարածուն արյունահավաքների, աջ ծոծրակային և գագաթային շրջաններում փափուկ թաղանթի արյունազեղումների, ծոծրակային և գագաթային շրջաններում ուղեղանյութի արյունազեղումների ձևով՝ ներգանգային արյունահավաքների, արյան մակարդուկների, գլխուղեղի ծոցերում և հավելյալ խոռոչներում արյունալեցումների առաջացմամբ (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը): Բացի այդ, ամբաստանյալների գործողությունները եղել են ինտենսիվ և չեն դադարել նույնիսկ տուժողի վայր ընկնելուց ու անօգնական վիճակում հայտնվելուց հետո: Ինչ վերաբերում է հանցագործությունից հետո ամբաստանյալների դրսևորած վարքագծին, ապա գործի տվյալներից հետևում է, որ հանցավորները որևէ կերպ չեն փորձել օգնություն ցուցաբերել տուժողին, ավելին՝ ամբաստանյալ Ս.Սահակյանն արգելել է մյուսներին օգնել անգիտակից վիճակում գտնվող Գ.Պապյանին՝ բղավելով «թողե՛ք թող մեռնի», ապա շուրջ երկու րոպե խոչընդոտել է

հիվանդանոց տեղափոխող մեքենայի ընթացքը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

22. Սույն որոշման 20-րդ կետում մեջբերված փաստերը համադրելով սույն որոշման 18-19-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալները, տուժողի գլխի շրջանում անընդմեջ և ուժեղ հարվածներ հասցնելով, գիտակցել են իրենցից յուրաքանչյուրի գործողությունների բնույթն ու վտանգավորությունը, նախատեսել են դրանց արդյունքում մահ պատճառելու իրական հնարավորությունը և հետևանքի կանխման ուղղությամբ որևէ գործողություն չձեռնարկելով ու անտարբեր մնալով՝ գիտակցաբար թույլ են տվել տուժողի մահը, ինչը վկայում է վերջիններիս մոտ սպանության անուղղակի դիտավորության առկայության մասին:

Հետևաբար Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Գ.Պապյանի մահվան նկատմամբ հանցավորները դրսևորել են անզուշտություն, չի բխում գործի փաստական հագամանքներից: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անզուշտ մեղքի ձևը կոնկրետ դեպքում չէր կարող արտահայտվել ո՛չ հանցավոր ինքնավստահության, ո՛չ էլ անփութության տեսակներով. հանցավոր ինքնավստահության դեպքում անձը, չցանկանալով համապատասխան հետևանքների առաջացումը, կոնկրետ քայլեր է ձեռնարկում դրանք կանխելու ուղղությամբ, մինչդեռ սույն գործով ամբաստանյալներ Գ.Թոսունյանը, Ս.Սահակյանը և Վ.Գրիգորյանը որևէ կերպ չեն օգնել տուժողին, այլ, ընդհակառակը, ամբաստանյալ Ս.Սահակյանը թույլ չի տվել ներկաներին օգնելու տուժողին՝ բղավելով «թողե՛ք թող մեռնի», ապա շուրջ երկու րոպե խոչընդոտել է հիվանդանոց տեղափոխող մեքենայի ընթացքը, ինչն արդեն իսկ բացառում է հանցավոր ինքնավստահությունը: Ինչ վերաբերում է անփութությանը, ապա այն բնութագրվում է արարքի պոտենցիալ վտանգավորությունը չգիտակցելով և վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը չնախատեսելով, որը սույն գործով բացակայում է:

Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Վերաքննիչ դատարանի այն փաստարկների կապակցությամբ, որ ամբաստանյալները և տուժողը չեն գտնվել այնպիսի հարաբերությունների մեջ, որը կարող էր հանգեցնել սպանության, եթե նրանք ցանկանային սպանել Գ.Պապյանին, ապա ունեին ազատ գործելու հնարավորություն և դիտավորությունն այդ պահին մինչև վերջ կհասցնեին, Ս.Սահակյանը կհարվածեր ոչ թե դանակի բռնակով, այլ շեղբով, նրա կողմից հնչեցրած «թողե՛ք - թող մեռնի» արտահայտությունը և իրականացրած գործողությունները եղել են կռվով պայմանավորված չարդարացված վրդովմունքի դրսևորումներ, այլ ոչ թե սպանության դիտավորության վկայություն: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սպանության դիտավորության մասին է վկայում ոչ միայն համապատասխան հետևանքի առաջացումը ցանկանալը և այդ ուղղությամբ որոշակի գործողություններ կատարելը (ուղղակի դիտավորություն), այլև նման հետևանքի առաջացումը գիտակցաբար թույլ տալը,

դրա նկատմամբ անտարբերություն դրսևորելը (անուղղակի դիտավորություն), ինչն էլ արտահայտվել է սույն գործում:

23. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտելով և գնահատելով գործում առկա ապացույցները, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի կիրառման վերաբերյալ հանգել է ճիշտ եզրակացության:

Հետևաբար Ս.Սահակյանի, Գ.Թոսունյանի և Վ.Գրիգորյանի արարքներում սպանության հանցակազմի բացակայության և ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

24. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ, 112-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, ինչը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով (2005 թվականի փոփոխություններով), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Գևորգ Հակոբի Թոսունյանի, Սահակ Սամսոնի Սահակյանի, Վիլեն Սեյրանի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 27-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ամբաստանյալներ Գևորգ Հակոբի Թոսունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Սահակ Սամսոնի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Վիլեն Սեյրանի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 22-ի

դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԳ/0031/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ մեղադրող Ա.ՍԱՀԱԿՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ալեքսան Արշավիրի Բաբախանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Բաբախանյանի պաշտպան Ն.Սվարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի մարտի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 48102915 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մարտի 25-ի որոշմամբ Ալեքսան Արշավիրի Բաբախանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2015 թվականի ապրիլի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2015 թվականի հունիսի 16-ի դատավճռով Ա.Բաբախանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Բաբախանյանի պաշտպան Ն.Սվարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 16-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Բաբախանյանի պաշտպան Ն.Սվարյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Բաբախանյանի պաշտպան Ն.Սվարյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Ա.Բաբախանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) 2014 թվականի աշնանը, առանց իրացնելու նպատակի՝ անձնական օգտագործման համար, իր տնամերձ հողամասում վայրի ձևով աճած կանեփ տեսակի բույսերից, սպօրինի պատրաստել և իր նշված բնակարանում սպօրինի պահել է խոշոր չափի՝ 99.466 գրամ հաստատուն չոր քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որն իր քաղաքացիական մեջ պարունակում է կանաքիճոխային շարքի ալկալոիդներ, այդ թվում նաև՝ թմրակտիվ բաղադրատարր հանդիսացող տետրահիդրոկաննաքինոլ: Նույն բույսերից հավաքել է նաև սերմեր և նույնպես պահել է իր բնակարանում: Պատրաստված թմրամիջոցից, ընթացքում, որոշ քանակությամբ, մի քանի անգամ ծխելու եղանակով օգտագործել է, իսկ մնացածը շարունակել է սպօրինի պահել իր բնակարանում (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 130):

6. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2015 թվականի հունիսի 16-ի դատավճռի ներածական մասում, ի թիվս այլ հանգամանքների, փաստելով նաև, որ Ա.Բաբախանյանը **ֆիզիկապես առողջ է, խնամքին է մեկ անձ**, նկարագրական-պատճառաբանական մասում արձանագրել է.

«Դատարանը պատիժ նշանակելիս, հաշվի է առնում Ալեքսան Արշավիրի Բաբախանյանի կատարած հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ ինչպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, այնպես էլ ծանրացնող հանգամանքների բացակայությունը:

Դատարանը, որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և անձը բնութագրող հանգամանքներ է դիտում այն, որ նա զղջացել և զղջում է կատարածի համար, նախկինում դատված, արատավորված չի եղել, խնամքին է վստահող և թոշակառու մայրը, դրականորեն է բնութագրվում իր բնակության վայրի հարևանների կողմից:

Ալեքսան Բաբախանյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Դատարանը, հաշվի առնելով Ալեքսան Արշավիրի Բաբախանյանի կատարած հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը, բնույթը, նրա անձը, բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ Ա.Բաբախանյանի կողմից կատարած հանցավոր արարքի համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի՝ 268 հոդվածի 2-րդ մասի սանկցիան նախատեսում է պատիժ ազատագրկման ձևով, գտնում է, որ նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատագրկման ձևով, նկատի ունենալով, որ այդպիսին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 61 հոդվածի 1-ին մասի, կարող է ապահովել պատժի նպատակները, նման պատիժ նշանակելով հնարավոր է հասնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին (...), ինչպես նաև ապահովել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված (...) սկզբունքները» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 131):

7. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, իր՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշման շրջանակներում փաստել է. «(...) Վերաքննիչ դատարանը, բնության առնելով Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու, ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը և նկատի ունենալով (...) ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, (...) հանգում է այն հետևության, որ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով ՀՀ քրեական օրենսգրքի պատիժ նշանակելու

ընդհանուր սկզբունքները (...), ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սանկցիայի սահմաններում՝ ամբաստանյալ Ա.Բաբախանյանի նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում 1 (մեկ) տարի ժամկետով, որը համապատասխանում է հանցագործությունների ծանրությանը և ամբաստանյալի անձին, որով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին (...))» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 39-40):

8. Քրեական գործի նյութերում առկա են հետևյալ փաստական տվյալները.

ա) Արմավիր քաղաքի №6 թաղային լիազորի կողմից տրված բնութագրն և տեղեկանքն այն մասին, որ Ալեքսան Բաբախանյանի բնութագրվում է դրական, նրա խնամքին է գտնվում նրա մայրը, որը ծեր է և հիվանդ: Ա.Բաբախանյանը **մշտապես օգնում և աջակցում է իր մահացած եղբոր ընտանիքին:** (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 42, հատոր 2-րդ, թերթ 8),

բ) Արմավիր քաղաքի №5 թաղային լիազոր Ռ.Առաքելյանի կողմից տրված բնութագիրը հետևյալ բովանդակությամբ. «(...) [Ալեքսան Բաբախանյանը] դեռ երիտասարդ տարիներից խնամք է տանում անկողնում գամված հիվանդ մոր հանդեպ: (...) Երբևէ չենք նկատել Ալեքսանի կողմից որևէ հակահասարակական արարք: Ալեքսան Բաբախանյանը մեղմ ու անչար մարդ է, որին սիրում և հարգում են նրան ծանաչողները (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 95),

գ) Ա.Բաբախանյանի ամբուլատոր բժշկական քարտը և «Արմավիր ԲԿ»-ի կողմից տրված քաղվածքն առ այն, որ Ա.Բաբախանյանն ունի որոշ հիվանդություններ, որոնց ախտորոշումն է՝ խոցային հիվանդություն 12-մատնյա աղու խոց, գոտկա-սրբանային ռադիկուլոպաթիա, դաստակի ֆունկցիայի մասնակի խանգարում, աջ դաստակի առաջին մատի ամպուտացիոն ծայրանդամ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 109-125, հատոր 2-րդ, թերթ 98),

դ) «Արմավիր ԲԿ»-ի կողմից տրված քաղվածքներն առ այն, որ Ա.Բաբախանյանի մոր՝ Ռ.Բաբախանյանի հիվանդության ախտորոշումն է՝ ՄԻՀ, էքստրասխստոլիկ առիթմիա, աթերոսկլերոտիկ կարդիոսկլերոզ: Առտիֆակիա, ՏՆՍ-ի ատրոֆիա (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 104, հատոր 2-րդ, թերթ 97),

ե) Արմավիր քաղաքի №5 թաղային լիազոր Ռ.Առաքելյանի կողմից տրված տեղեկանքն առ այն, որ «(...) Ալեքսան Արշավիրի Բաբախանյանը բնակվում է ք. Արմավիրի Մուշտոցի 62 տանը և ընտանիքը բաղկացած է հետևյալ 5 (հինգ) [անձանցից]. 1. Բաբախանյան Ռիմա՝ մայրը, 1938թ., 2. Ավթանդիլյան Կարինա՝ եղբոր կինը, 1971թ., 3. Բաբախանյան Աշոտ՝ եղբոր որդի, 1994թ., 4. Բաբախանյան Ռիմա՝ եղբոր դուստր, 1992թ.» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 96):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը, մեջբերելով Վճարելի դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, գտել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ Ա.Բաբախանյանի նկատմամբ չեն կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները, քննության առնելով Ա.Բաբախանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, փաստել են, որ Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը համաչափ է կատարած արարքի ծանրությանը, ամբաստանյալի անձին, և նա պետք է կրի ազատագրկման ձևով նշանակված պատիժը: Մինչդեռ ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել գործի փատական հանգամանքները, ինչպես նաև այն, որ Ա.Բաբախանյանը զոջացել է կատարածի համար, վատառողջ է, ընտանիքի միակ կերակրողն է, խնամքին են թոշակառու մայրն ու մահացած եղբոր ընտանիքի անդամները:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշումը և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից հիմնավորված է արդյոք Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը քնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»

Սույն քրեաիրավական նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (*հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գարուշ Մադաթյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08, Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ/0143/01/13, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշումները*) հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (ԵԱԳԳ/0034/01/12, ԼԳ/0093/01/12, ՏԳ/0018/01/13, ԵԷԳ/0132/01/13, ԵԱՆԳ/0060/01/13, ԵԿԳ/0096/01/13, ԵԿԳ/0252/01/13, ԵՄԳ/0027/01/14, ԳԳ/0014/01/14, ՍԳ/0204/01/13, ՏԳ/0031/01/14, ՍԳ3/0174/01/14, ԵԱԳԳ/0011/01/14, ԵԱԶԳ/0091/01/14, ԵԿԳ/0039/01/15 և այլն):

13. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնվող հանգամանքներից հանցավորի անձը բնութագրող տվյալների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել թիվ ՎԲ-50/07, թիվ ԵԿԳ/0042/01/11, թիվ ՍԳ/0109/01/12, թիվ ԱՎԳ/0082/01/12, թիվ ԵԱԶԳ/0091/01/14 և այլ որոշումներում: Մասնավորապես, *Հ.Հարությունյանի* գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «*Պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեա-իրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը (ընտանեկան դրություն-*

նր, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, **առողջական վիճակը**, տարիքը, դատվածությունը և այլն» (տե՛ս Հազարապետ Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 որոշումը):

Հ.Հարությունյանի գործով կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները Վճռաբեկ դատարանը զարգացրել է *Ս.Սարգսյանի* գործով որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) «[Հ]անցավորի անձնավորություն» եզրույթն ի տարբերություն «հանցագործության սուբյեկտ» եզրույթի, ավելի ընդարձակ է, և օժտված է սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերով: (...)

(...) [Պ]ատժի անհատականացման ժամանակ հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես պատժի նպատակների իրականացման, այնպես էլ անձի արժանապատվության հարգման սահմանադրական պահանջի առկայությամբ» (տե՛ս Սերոբ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԳ/0109/01/12 որոշման 36-37-րդ կետերը):

Իսկ *Ս.Աղախանյանի* գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը փաստել է. «(...) [Յ]ուրաքանչյուր գործով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների (...), պետք է բազմակողմանի վերլուծության ու գնահատման ենթարկի հանցավորի անձը: (...) [Պ]ատասխանատվության և պատժի անհատականացման և հետևաբար նաև նշանակված պատժի կրման հարցի լուծման համար էական նշանակություն ունեն հանցավորի անձի ոչ միայն ֆիզիկական ու հոգեկան, այլև սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ փաստական տվյալները: Հետևաբար, հանցավորի պատասխանատվությունն ու պատիժն անհատականացնելիս և նշանակված պատիժը փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է ուսումնասիրի **հանցավորի ընտանեկան դրության, նրա խնամքին այլ անձանց առկայության, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղի ու դիրքի, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագրի և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները:**

(...) [Ա]նձի նկատմամբ պատիժ նշանակելիս և այն փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն հանգամանքը, թե նշանակված պատիժն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ **ամբաստանյալի ընտանիքի կյանքի պայմանների վրա**» (տե՛ս Սեյրան Աղախանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0082/01/12 որոշման 19-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանն իր կողմից կայացված դատավճռի ներածական մասում, ի թիվս այլ հանգամանքների, փաստելով նաև, որ Ա.Բաբա-

խանյանը **Ֆիզիկապես առողջ է, խնամքին է մեկ անձ**, նկարագրական-պատճառաբանական մատում արձանագրել է, որ Ա.Բաբախանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, իսկ որպես Ա.Բաբախանյանի անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ դիտում այն, որ նա զոջացել է կատարածի համար, նախկինում արատավորված չի եղել, բնութագրվում է դրական, նրա խնամքին է վատառողջ և թոշակառու մայրը: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ Ա.Բաբախանյանը ենթակա է պատժի ազատագրկման ձևով, որի միջոցով հնարավոր կլինի հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցը և հաշվի առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտում հիմք ընդունված ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արարքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, արդյունքում եզրահանգել է, որ ազատագրկման ձևով նշանակված պատիժը համապատասխանում է հանցավոր արարքի ծանրությանն ու ամբաստանյալի անձին, և դրանով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Քրեական գործի նյութերում առկա են փաստական տվյալներ այն մասին, որ ամբաստանյալը տառապում է՝ խոցային հիվանդություն՝ 12-մատնյա աղու խոց, գոտկա-սրբանային ռադիկուլոպաթիա, դաստակի ֆունկցիայի մասնակի խանգարում, աջ դաստակի առաջին մատի ամպուտացիոն ծայրանդամի հիվանդություններով, ինչպես նաև նրա խնամքին է ոչ միայն վատառողջ և թոշակառու մայրը, այլև նա մշտապես օգնում և աջակցում է իր մահացած եղբոր ընտանիքին, որի անդամները (3 անձ) բնակվում են ամբաստանյալի և նրա մոր հետ միասին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները համադրելով սույն որոշման 12-13-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, իսկ վերջինիս կայացրած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս նաև Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը պատշաճ ստուգման և իրավական գնահատականի չեն արժանացրել իրենց համակցության մեջ:

Այսպես՝ ստորադաս դատարանները թեպետ արձանագրել են, սակայն պատշաճ գնահատման չեն ենթարկել ամբաստանյալի անձը բնութագրող բարոյահոգեբանական և սոցիալ-հոգեբանական հատկանիշները, ամբաստանյալի անձի սոցիալական առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ Ա.Բաբախանյանը զոջացել է կատարածի համար, բնութագրվում է դրական, նրա խնամքին է գտնվում թոշակառու և վատառողջ՝ անկողնում գամված մայրը (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ ստուգման չենթարկելով քրեական գործի նյութերում առկա այն տվյալը, որ ամբաստանյալը տառապում է որոշ հիվանդություններով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), իր դատավճռի ներածական մասում արձանագրել է, որ վերջինս ֆիզիկապես առողջ է (տե՛ս - սույն որոշման 6-րդ կետը), իսկ Վերաքննիչ դատարանն իր հերթին չի անդրադարձել սույն հարցին: Ավելին՝ ստորադաս դատարանները որևէ գնահատականի չեն արժանացրել քրեական գործի նյութերում առկա այն տվյալը, որ Ա.Բաբախանյանի խնամքին է ոչ միայն վատառողջ և թոշակառու մայրը, այլև նա մշտապես օգնում և աջակցում է իր մահացած եղբոր ընտանիքին, որի անդամները (3 անձ) բնակվում են ամբաստանյալի և նրա մոր հետ միասին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Վերջին հանգամանքները անմիջականորեն վկայում են նաև ամբաստանյալի անձի սոցիալական առանձնահատկությունների մասին, ինչի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, ողջամտորեն կարող է բացասական ազդեցություն ունենալ ամբաստանյալի ընտանիքի կյանքի պայմանների վրա:

16. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև իրենց համակցության մեջ գնահատելով ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, այսինքն՝ Ա.Բաբախանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված չէ:

17. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, Ա.Բաբախանյանի նկատմամբ չկիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով արդարադատության արդյունավետության շահերով, արձանագրում է, որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքներն հնարավորություն են տալիս բեկանելու և փոփոխելու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշումը և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելու ամբաստանյալ Ա.Բաբախանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով (2005 թվականի փոփոխություններով), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ - հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Ալեքսան Արշավիրի Բաբախանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշումը բեկանել և փոփոխել:

Ալեքսան Բաբախանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատիժը՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնել Ա.Բաբախանյանի բնակության վայրի այլընտրանքային պատիժների կատարման բաժնի համապատասխան ստորաբաժանման վրա:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՆԴ/0081/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
դատախազ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Նաբեկ Տիգրանի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մարտի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի ապրիլի 21-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Նոր Նորքի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 17119414 քրեական գործը:

2014 թվականի ապրիլի 30-ին Ն.Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2014 թվականի հուլիսի 1-ին Ն.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, վերջինիս նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով:

Նույն օրը քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որը դատարանի կողմից բավարարվել է:

2. Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2014 թվականի դեկտեմբերի 27-ի դատական նիստի ընթացքում պաշտպանը միջնորդություն է ներկայացրել ամբաստանյալ Ն.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ ամբաստանյալ Ն.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ, այն գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը բավարարվել է, և գրավի չափ է սահմանվել 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամի չափով:

3. Դատախազ Ա.Աբրահամյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու և Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 29-ի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մարտի 25-ի որոշման դեմ վճարելի բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ն.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2014 թվականի ապրիլի 20-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, «Վենեցիա» ռեստորանային համալիրում խուլիգանական դրդումներով սուր ծակողկտրող գործիքով դիտավորությամբ հարվածել է Նարեկ Արթուրի Քուշկյանի որովայնին՝ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքին

վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք (տե'ս նյութեր, հատոր 1, թերթ 15):

6. Առաջին ատյանի դատարանն իր 2014 թվականի դեկտեմբերի 29-ի որոշման մեջ արձանագրել է. *«[Ե]նթացող արարքը կատարած անձի մասին վարույթն իրականացնող մարմինը որևէ տեղեկություն չի ունեցել, մինչդեռ Նարեկ Հարությունյանն ինքնակամ ներկայացել է ոստիկանություն՝ հայտնելով դեպքին իր առնչության մասին, 2 ամսից ավել մնալով ազատության մեջ, չի խուսափել, չի խոչընդոտել գործի քննությանը, հարթել է ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը, հաշտվել է տուժողի հետ, որը նշանակում է, որ դատական քննության տվյալ փուլում, երբ նախաքննությամբ արդեն իսկ հարցաքննված են վկաները, կատարվել են սպացույցների ձեռք բերմանը, հավաքմանն ուղղված քննչական գործողությունները, էապես նվազել է քրեական գործի քննությանը որևէ կերպ խոչընդոտելու ռեալ հավանականությունը կամ վտանգը, ուստի նման պայմաններում անձին շարունակական կալանքի տակ պահելը՝ գրավի կիրառումն անթույլատրելի համարելով, չի կարող որևէ կերպ հիմնավորված կամ պատճառաբանված համարվել հետապնդվող հանրային շահի պաշտպանության անհրաժեշտությամբ: Այսինքն՝ թեև տվյալ դեպքում նկարագրված պայմաններում առկա է բացառապես քննությունից թաքնվելու իրական վտանգը, սակայն գրավով ամբաստանյալին ազատ արձակելը կարող է համարվել թույլատրելի:*

(...)

Դատարանը, գրավով ազատ արձակելը թույլատրելի ճանաչելու հարցը քննարկելիս, ի թիվս այլոց հաշվի է առնում նաև այն հանգամանքները, որ, մասնավորապես՝ ամբաստանյալն ունի մշտական բնակության վայր, դատապարտված չի եղել, խնամքին ունի մանկահասակ՝ 10 ամսեկան մեկ երեխա, բնութագրվում է բացառապես դրական, հոգացել է տուժողի բուժման ծախսերը, հաշտվել է նրա հետ (...)» (տե'ս նյութեր, հատոր 1, թերթեր 36-37):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. *«[Կ]ալանավորումը ընտրելու, մերժելու կամ երկարացնելու վերաբերյալ դատարանը մինչդատական վարույթի ընթացքում կայացնում է որոշումներ, որոնք նույն փուլում կարող են բողոքարկվել դատախազի կողմից: Հակառակ դրան՝ առկա չէ օրենսդրական որևէ կարգավորում, որը կարող է վկայել մեղադրողի կողմից դատական քննության ընթացքում խափանման միջոցի բողոքարկման հնարավորության մասին: Հետևապես, կալանավորման վերաբերյալ դատարանի կայացրած որոշումների բողոքարկումը դատախազի կողմից հնարավոր և թույլատրելի է միմիայն մինչդատական վարույթի շրջանակներում: Այսինքն՝ օրենսդիրը, ելնելով դատավարական խնդիրներից, դատախազի գործառնություններից և կոնկրետ դատավարական փուլում դրա իրականացման նպատակներից, խափանման միջոցների ընտրության, վերացման, փոփոխման կամ բողոք-*

քարկման հնարավորություն դատախազին ընձեռել է բացառապես մինչդատական վարույթի շրջանակներում: (...)

Օրենսդրի նման տրամաբանական տարանջատումը պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր փուլում խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը կարող է օբյեկտիվորեն գնահատել միմիայն դատավարական խնդիրներ իրականացնող առաջնային մարմինը, այսինքն՝ վարույթն իրականացնողը: Ավելին՝ խափանման միջոց ընտրելու սուբյեկտային հավասար իրավագործության պայմաններում՝ դատավարական փուլերի տարանջատումը կխաթարվի:

Վերաքննիչ բողոքարկմանը վերաբերող իրավակարգավորումներ նախատեսված են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ առաջին աստիճանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն **ամբաստանյալը**, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը, **մեղադրողը կամ վերադաս դատախազը**, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը (...): **Կասկածյալը**, **մեղադրյալը**, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն վերաքննության կարգով բողոքարկելու սույն օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված դատական ակտերը: Իսկ սույն օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ կետը վերաբերում է կալանավորումն ընտրելուն, փոփոխելուն կամ վերացնելուն: Ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից՝ առաջին դեպքում խոսքը վերաբերում է գործն ըստ էության լուծող դատական ակտերին, և օրենսդիրն օգտագործում է «**մեղադրող**» և «**ամբաստանյալ**» հասկացությունները, իսկ երկրորդ դեպքում՝ «**կասկածյալ**» և «**մեղադրյալ**» հասկացությունները, ինչից նույնպես պարզ է դառնում, որ մեղադրողին կալանավորման որոշումը բողոքարկելու իրավասություն ընձեռված չէ:

(...)

Թեև վերոնշյալն ամբողջությամբ բավարար է բողոքը մերժելու համար, այնուամենայնիվ, հաշվի առնելով դատական պրակտիկան, մասնավորապես այն, որ ՀՀ վերաքննիչ դատարանում նշված հարցի շուրջ առկա է նաև հակառակ մոտեցումը, ինչպես նաև այն, որ բողոքի դեպքում ՀՀ վճարելի դատարանը կարող է ձևավորել այլ դիրքորոշում, ինչի արդյունքում հնարավոր է բողոքը վերստին քննության առնվի նույն դատարանի կողմից, որպիսի պայմաններում տեղի կունենա դատավարական ժամկետների և ռեսուրսների անհարկի վատնում, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ներկայացված վերաքննիչ բողոքին պետք է տրվի պատասխան նաև գրավի թույլատրելիության մասով:

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ հարցում (...) առաջին աստիճանի դատարանը կողմնորոշվել է ճիշտ, քանի որ վերը նշված [առաջին աստիճանի դատարանի կողմից հիմք ընդունված] տվյալները միջնորդության քննարկման ժամանակ եղել են բավարար գալու հետևության,

որ գրավի կիրառումը կարող է ապահովել, երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը:

(...)» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 76-77, 80-81):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձի կարծիքով դատական քննության փուլում ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ դատարանի որոշման դեմ մեղադրողի կողմից վերաքննիչ բողոք բերելու հնարավորության բացակայության կապակցությամբ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ:

Բողոքաբերը, վկայակոչելով Ա.Ղավալյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԲԲԳ/0299/01/08 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածով նախատեսված է խափանման միջոցի վերաբերյալ դատական որոշման բողոքարկման հնարավորություն՝ անկախ նրանից, թե դատավարության որ փուլում է այն կայացվել: Այսպիսով, դատական քննության փուլում կայացված խափանման միջոցի վերաբերյալ որոշման բողոքարկման հնարավորությունը համապատասխան իրավական կարգավորումների վերլուծությամբ սահմանված է վճռաբեկ դատարանի որոշմամբ՝ առանց այդ հնարավորությունն իրացնող սուբյեկտների տարբերակման:

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածում առկա իրավակարգավորմանը՝ բողոքի հեղինակը փաստարկել է, որ տվյալ հոդվածի առաջին նախադասությունն արդեն իսկ մեղադրողին վերապահել է առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտերը բողոքարկելու ընդհանուր հնարավորություն, որն իր մեջ ներառում է նաև կալանավորման մասին դատական ակտերի բողոքարկման իրավունքը:

9. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ դատական քննության փուլում մեղադրողին խափանման միջոցի վերաբերյալ դատական ակտի բողոքարկման հնարավորության վերապահումը խաթարում է դատավարական գործառնությունների տարանջատումը, բողոքաբերն ընդգծել է, որ խոսքը ոչ թե մեղադրողի կողմից խափանման միջոց ընտրելու, այլ դրա կապակցությամբ իր դիրքորոշումն արտահայտելու և այն վիճարկելու հնարավորության մասին է: Խափանման միջոց կալանքն ընտրելը, վերացնելը կամ փոփոխելը վերապահված է վարույթն իրականացնող մարմնի, տվյալ դեպքում՝ դատարանի իրավասությանը, և դատախազը չի կարող դատական քննության փուլում ընտրել, փոփոխել կամ վերացնել ընտրված խափանման միջոցը:

Մինևույն ժամանակ տարբեր փուլերում խափանման միջոց ընտրող վարույթն իրականացնող մարմնի, այդ թվում՝ դատարանի

իրավասությունը չի կարող բացարձակ ու կամայական լինել, այլ միշտ պետք է հիմնվի դատավարության մասնակիցների դիրքորոշումների վրա՝ նրանց շահերի հավասարակշռված պաշտպանությունն ապահովող որոշում կայացնելու համար: Հետևաբար դատական քննության փուլում խափանման միջոցի վերաբերյալ կայացված որոշումը բողոքարկելու մեղադրողի հնարավորությունը որևէ կերպ չի կարող համարվել կալանավորում ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու դատարանի իրավասության յուրացում, չի կարող ենթադրել մեղադրողի կողմից դատական քննության փուլում խափանման միջոցի հարցի տնօրինում և խաթարել դատավարական գործառույթների տարանջատումը:

10. Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ քրեական վարույթի շրջանակներում, այդ թվում՝ դատական քննության փուլում խափանման միջոց ընտրելը, փոփոխելը կամ վերացնելը շոշափում են ոչ միայն անձնական, այլև հանրային շահեր: Խափանման միջոցի ապահովող դատավարական նշանակությունն արտահայտվում է նրանում, որ այն պայմաններ է ստեղծում դատավարության մասնակիցների կողմից իրենց դատավարական գործառույթների պատշաճ իրականացման համար՝ մասնավոր շահի սահմանափակմամբ: Հետևաբար խափանման միջոցի ընտրությունն ու դրա վերացումը պայմանավորված են երկու տարբեր շահերի հարաբերակցությամբ և հավասարակշռմամբ, իսկ դրա վիճարկումը չի կարող լինել միակողմանի: Հակառակ մոտեցման դեպքում անտեսվում է, որ խափանման միջոցի գոյությունն առաջին հերթին հանրային շահի մասով շոշափում է մեղադրողի գործառույթը և պայմաններ ստեղծում դրա պատշաճ իրականացման համար:

11. Բողոք բերած անձը Ն.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման այլընտրանքային միջոց գրավի թույլատրելիության հարցի բարձրացման նպատակահարմարության վերաբերյալ նշել է, որ. «Նկատի ունենալով վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և այն քննելու՝ օրենքով նախատեսված դատավարական ժամկետները և սույն գործի դատական քննության ընթացքը, սույն բողոքով Նարեկ Հարությունյանի նկատմամբ խափանման միջոց գրավի թույլատրելիության հարցի բարձրացումը համարվում է ոչ նպատակահարմար: Այդ կապակցությամբ դատարանի ակնկալվող որոշումը հավանական չէ, որ կունենա իրավական նշանակություն համապատասխան դատավարական հարաբերությունների կարգավորման համար՝ այդ հարաբերությունները դատական ակտը կայացնելու ժամանակ սպառված լինելու պատճառով»:

Արդյունքում բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մարտի 25-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգու-
մը**

12. Վճարելի դատարանը գտնում է, որ դատական քննության փուլում ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ դատարանի որոշման դեմ մեղադրողի կողմից վերաքննիչ բողոք բերելու իրավունքի, ինչպես նաև այդ որոշումների վերանայման սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

13. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորված են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ մեղադրողն իրավասու չէ բողոքարկել դատական քննության փուլում ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ *«Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է՝*

(...) բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումներ»:

Մեջբերված նորմի բովանդակությունից հետևում է, որ մեղադրողը քրեական գործի դատական քննության փուլում լիազորված է բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ դատարանի այլ որոշումները՝ այն դեպքում, երբ դրանց բողոքարկման հնարավորությունը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

14.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն ամբաստանյալը, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը, մեղադրողը կամ վերահաս դատախազը, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը, իսկ սույն օրենսգրքի 376.1 հոդվածի 2-րդ և 2.1-րդ կետերով նախատեսված ակտերի դեմ նաև արդարացվածը, դատապարտյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները: Քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը կամ նրանց ներկայացուցիչները դատական ակտն իրավունք ունեն բողոքարկելու քաղաքացիական հայցի մասով: Քաղաքացիական հայցի մասով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև տվյալ գործով կողմեր չհանդիսացող անձինք, եթե դատական ակտն առնչվում է նրանց շահերին: Կասկածյալը, մեղադրյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև դիմողն իրավունք ունեն վերաքննութ-*

յան կարգով բողոքարկելու սույն օրենսգրքի 376.1 հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված դատական ակտերը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածը սահմանում է. «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

(...)

3) առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

4) առաջին ատյանի դատարանների՝ կայանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները.

5) առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

(...)»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածով սահմանված՝ Առաջին ատյանի դատարանի որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներին օրենսդիրն ըստ բողոքարկման իրավունքի ծավալի տարանջատել է խմբերի: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին նախադասության բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների ընդհանուր շրջանակը, ովքեր օժտված են բողոքարկման անսահմանափակ իրավունքով: Այդ սուբյեկտների շարքում ընդգրկված են ամբաստանյալը, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը, **մեղադրողը** կամ վերադաս դատախազը, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը: Քննարկվող հոդվածի հաջորդող շարադրանքում օրենսդիրը նախատեսել է քրեական դատավարության այն մասնակիցներին, ովքեր օժտված են սահմանափակ բողոքարկման իրավունքով՝ իրավասու են բողոքարկել որոշումները որոշակի մասով կամ որոշումների որոշակի շրջանակ: Մասնավորապես, քննարկվող հոդվածի վերջին նախադասությամբ նախատեսված են վերաքննիչ բողոքարկման այն սուբյեկտները ովքեր կարող են բողոքարկել միայն գործն ըստ էության չլուծող և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված դատական ակտերը:

Այդպիսիք են կասկածյալը, մեղադրյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև դիմողը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասն այլ կերպ մեկնաբանելու դեպքում կարող է առաջանալ, օրինակ, այնպիսի իրավիճակ, երբ առաջին ատյանի դատարանի՝ գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 3-րդ մաս) անբողոքարկելի դառնա, ինչպես նաև ամբաստանյալի կողմից առաջին ատյանի դատարանի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ որոշումները բողոքարկելու իրավունքի կապակցությամբ արհեստական հակասություն առաջանա ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 27-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի միջև այն առումով, որ դրա վերջին նախադասությամբ նախատեսված սուբյեկտների շարքում ներառված չէ նաև ամբաստանյալը: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի նման մեկնաբանումը կփոփոխի դրա իմաստը, ինչն անբույլատրելի է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի ուժով:

15. Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրողը՝ որպես վերաքննիչ բողոքարկման անսահմանափակ իրավունքով օժտված սուբյեկտ, ներառված է գործն ըստ էության չլուծող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված որոշումները բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակում: Այլ խոսքով՝ մեղադրողն իրավասու է վերաքննիչ դատարան բողոքարկել նաև առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ որոշումները, քանի որ այդ հնարավորությունը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ և 376.1-րդ հոդվածներով:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ մեկնաբանությունը բխում է նաև դատախազի՝ մեղադրանքի պաշտպանության սահմանադրական իրավունքի բովանդակությունից, ինչպես նաև համահունչ է դատախազի կարգավիճակի վերաբերյալ միջազգային փաստաթղթերով ամրագրված չափանիշներին: Այսպես՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հոկտեմբերի 6-ի «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ» թիվ Rec(2000)19 հանձնարարականի 1-ին հոդվածի համաձայն՝ դատախազները պետական իշխանությամբ օժտված մարմինների ներկայացուցիչներ են, ովքեր հասարակության անունից և **հանուն հանրային շահի** ապահովում են օրենքի կիրառումը բոլոր այն դեպքերում, երբ օրենքի խախտումը հանգեցնում է քրեական սանկցիաների՝ **հաշվի առնելով ինչպես անձի իրավունքները,**

այնպես էլ քրեական արդարադատության համակարգի պատշաճ արդյունավետությունը: Հանձնարարականի 2-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ քրեական արդարադատության բոլոր համակարգերում դատախազները կարող են բողոքարկել բոլոր կամ որոշ դատական որոշումներ: Նշված հանձնարարականի բացատրական մամակում տրված 2-րդ հոդվածի մեկնաբանության համաձայն՝ դատական որոշումները բողոքարկելու դատախազի իրավունքը սերտորեն փոխկապված է **դատախազության ընդհանուր գործառույթի** հետ, քանի որ այն օրենքի կիրառումն ապահովելու և միևնույն ժամանակ **արդարադատության համակարգն ավելի արդյունավետ դարձնելուն օժանդակող** միջոցներից մեկն է:

16. Սույն գործի փաստերից երևում է, որ գործի դատական քննության ընթացքում՝ 2014 թվականի դեկտեմբերի 29-ին, Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշմամբ ամբաստանյալ Ն.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ, այն գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը բավարարվել է, և գրավի չափ է սահմանվել 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամի չափով (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել մեղադրողի կողմից, որը Վերաքննիչ դատարանի որոշմամբ մերժվել է, ի թիվս այլնի, այն պատճառաբանությամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կալանավորման որոշումը բողոքարկելու իրավասություն մեղադրողին ընձեռված չէ (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

17. Նախորդ կետում շարադրված փաստերը գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ մեղադրողն իրավասու չէ բողոքարկել դատական քննության փուլում ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը, հիմնավորված չեն:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, թե *«առկա չէ օրենսդրական որևէ կարգավորում, որը կարող է վկայել մեղադրողի կողմից դատական քննության ընթացքում խափանման միջոցի բողոքարկման հնարավորության մասին»* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), քանի որ այդպիսի իրավակարգավորում նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ և 376.1-րդ հոդվածներով:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին նախադասության այն մեկնաբանությանը, թե այն *«վերաբերում է գործն ըստ էության լուծող դատական ակտերին»* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ քննարկվող նորմում օրենսդիրն օգտագործել է **«առաջին ատյանի դատարանների դատական ակ-**

տեր» ընդհանրական եզրույթը՝ առանց տարբերակելու գործն ըստ էության լուծող կամ չլուծող դատական ակտերի: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի քննարկվող մեկնաբանությունը չի բխում օրենքի տառացի մեկնաբանման օրենսդրական պահանջից:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն հիմնավորմանը, որ *«խափանման միջոց ընտրելու սուբյեկտային հավասար իրավագործության պայմաններում՝ դատավարական փուլերի տարանջատումը կխաթարվի»* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը)՝ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ այն վերաբերելի չէ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու որոշումները բողոքարկելու մեղադրողի իրավունքի իրացման դեպքերին, քանի որ դրանց բողոքարկման իրավունքի իրացումը չի ենթադրում մեղադրողի կողմից դատական քննության փուլում խափանման միջոց կիրառելու լիազորության առկայություն:

Վերոնշյալի հիման վրա Վճարելի դատարանն առարկայագուրկ է համարում Վերաքննիչ դատարանի մնացած պատճառաբանություններին անդրադառնալը և արձանագրում է, որ ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկելու մեղադրողի իրավունքի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը և դրա հիմնավորումները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից, ավելին՝ փոփոխում են վերջինիս իմաստը, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ - հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս անդրադարձել է նաև գրավի թույլատրելիության մասով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությանը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), մինչդեռ բողոքաբերն այդ մասով չի բողոքարկել Վերաքննիչ դատարանի որոշումը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը)՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ իրավասու չէ այդ մասով վերանայել Վերաքննիչ դատարանի որոշումը: Հետևաբար Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը չի կարող հանգեցնել բողոքարկվող որոշումը բեկանելուն, ուստի այն պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

18. Միևնույն ժամանակ, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով, դատական քննության փուլում ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու հարցերի իրավական առանձնահատկությամբ պայմանավորված Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նաև իրավական դիրքորոշում-

ներ ձևավորել նշված հարցերի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումները վերադաս ատյանի կողմից վերանայելու սահմանների կապակցությամբ:

Այսպես՝ քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և ողջամիտ ժամկետում գործի պատշաճ քննության ապահովման նպատակով դատարանը, այդ թվում՝ իր նախաձեռնությամբ, պարտավոր է ստուգել ապահովող միջոցների, ներառյալ՝ որպես խափանման միջոց կալանքի կիրառման հիմնավորվածությունը՝ կայացնելով դրանք ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ որոշումներ: Վերջիններս ուղղված են քրեական գործի քննության հետագա ընթացքի անհրաժեշտ պայմանների ապահովմանը: Այլ խոսքով՝ գործի ըստ էության քննության ընթացքում դատարանի կողմից ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու հարցերի լուծումը գտնվում են նրա՝ արդարադատության իրականացման պատշաճ կազմակերպման լիազորության ոլորտում: Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ կալանքի՝ որպես խափանման միջոցի հետ կապված հարցերը սերտորեն առնչվում են անձի ազատության իրավունքի էական սահմանափակման հետ, իսկ մյուս կողմից՝ ենթադրում առավել արժեքավոր հանրային շահի հնարավոր առկայություն՝ օրենսդիրը կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումները ընդգրկել է վերաքննիչ բողոքարկման առարկայի շրջանակում:

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ առաջին ատյանի դատարանի կողմից անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումների կայացումը և վերջիններիս՝ վերաքննության կարգով վերանայումը իրականացվում են տարբեր դատավարական գործառույթների շրջանակներում: Անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշումը կայացվում է գործի ըստ էության քննության շրջանակներում, իսկ վերաքննիչ դատարանի կողմից նշված ակտերի վերանայումը՝ ստորադաս դատարանի որոշումների ստուգման և վերանայման վերադաս դատական ատյանի գործառույթի շրջանակներում:

Վերոնշյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ մրցակցող արժեքների՝ մի կողմից արդարադատության իրականացման դատարանի լիազորության, իսկ մյուս կողմից անձի ազատության իրավունքի և դրան հակակշռող հանրային շահի համարժեք ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ քննարկվող որոշումների վերաքննիչ վերանայման սահմանները ողջամտորեն պետք է նեղ լինեն մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքի կապակցությամբ կայացվող որոշումների վերանայման սահմաններից: Մասնավորապես՝ քննարկվող որոշումների վերանայման շրջանակներում չեն կարող քննարկվել այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն

չափով առնչվում են գործի ըստ էության լուծմանը: Այդպիսիք են, օրինակ, հիմնավոր կասկածի առկայության, արարքի որակման, որոշման հիմքում դրված ապացույցների թույլատրելիության հետ կապված հարցերը և այլն:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ քննարկվող որոշումների վերաքննիչ վերանայման սահմանների լայն մեկնաբանումը կհանգեցնի կոնկրետ գործով արդարադատություն իրականացնող առաջին ատյանի դատարանի գործունեությանն անհարկի միջամտության և կվտանգի դատավորի ներքին անկախությունը:

19. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով (2005 թվականի փոփոխություններով), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Նարեկ Տիգրանի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մարտի 25-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

6.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0060/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ՝

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

դատախազ
պաշտպան
ամբաստանյալ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
Կ.ՀԱԿՈԲՅԱՆԻ
Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Հայկազ Ռուբենի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Շենգավիթի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Ն.Մուրադյանի՝ 2014 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1-րդ կետով հարուցվել է թիվ 11126214 քրեական գործը:

2015 թվականի փետրվարի 2-ին Հայկազ Գևորգյանը ձերբակալվել է, իսկ փետրվարի 5-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1-րդ կետով:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ Հայկազ Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Կալանավորման սկիզբը հաշվվել է 2015 թվականի փետրվարի 2-ից: Այդ դատական ակտի դեմ մեղադրյալ Հայկազ Գևորգյանի պաշտպան Գ.Մալխասյանի բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 26-ի որոշմամբ Հայկազ Գևորգյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամսով՝ մինչև 2015 թվականի հունիսի 2-ը: Այդ դատական ակտի դեմ մեղադրյալ Հայկազ Գևորգյանի պաշտպան Կարեն Հակոբյանի բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ Հայկազ Գևորգյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել ու լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1-րդ կետով, 322-րդ հոդվածի 2-րդ մասով և 131-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան), որը 2015 թվականի մայիսի 11-ի որոշմամբ հիշյալ գործն ընդունել է վարույթ:

Ամբաստանյալ Հայկազ Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 9-ի որոշմամբ փոխարինվել է այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով, և գրավի չափ է սահմանվել 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամը:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 9-ի որոշման դեմ մեղադրողի բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը վճարելի բո-

որը է բերել, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Հայկազ Գևորգյանի պաշտպան Կարեն Հակոբյանը, որն իր անհամաձայնությունն է հայտնել վճարելի բողոքի հետ և խնդրել է այն մերժել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Հայկազ Գևորգյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1-րդ կետով, 131-րդ հոդվածի 1-ին մասով և 322-րդ հոդվածի 2-րդ մասով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2013 թվականի դեկտեմբերի 1-ին Երևան քաղաքի Շիրակի փողոցի մոտ տեղի ունեցած ավտովթարից հետո, օրենքով սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքներն ինքնակամ իրականացնելով, բռնությամբ և սպառնալիքով Արթուր Լալայի Գրիգորյանից և վերջինիս ազգականից պահանջել և ստացել է ընդհանուրը 1.835.000 ՀՀ դրամ գումար, այնուհետև 2014 թվականի մարտի 8-ին խաբեության միջոցով գաղտնի առևանգել է Արթուր Գրիգորյանին, ինչպես նաև 2014 թվականի ապրիլի 1-ին Արթուր Գրիգորյանի կյանքի և առողջության համար բռնություն գործադրելու սպառնալիքով խոշոր չափերի՝ 600.000 ՀՀ դրամ գումարի պահանջ է ներկայացրել (տե՛ս Նյութեր, հատոր 1, թերթ 11-12):

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 9-ի որոշման մեջ արձանագրված է հետևյալը. «(...) Ամբաստանյալ Հայկազ Գևորգյանի անձը հայտնի է, նա ունի մշտական բնակության վայր, ամուսնացած է, խնամքի տակ են գտնվում գառամյալ տատը, երրորդ խմբի հաշմանդամ հայրը, չաշխատող կինը և երկու մանկահասակ երեխաները, վատառողջ է (...) ընտանիքի միակ կերակրողն է, փաստացի դեկավարել է հորը պատկանող տաքսի ծառայության աշխատանքները և նրա բացակայության պայմաններում տաքսի ծառայությունը կանգնած է սննկացման եզրին: Բացի այդ, հոր հետ բաժանման պատճառով ամբաստանյալի վեցամյա դստեր մոտ առաջացել են առողջական խնդիրներ՝ ախտորոշվել է՝ «մանկական տարիքում բաժանմամբ պայմանավորված տազնապային խանգարում» հիվանդությունը: Ամբաստանյալը նախկինում դատասպարտված չի եղել և բնութագրվում է դրականորեն:

Նման պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով ամբաստանյալի անձը, նրան վերագրվող արարքի բնույթն և վտանգավորության աստիճանը, դատարանը գտնում է, որ Հայկազ Գևորգյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, պետք է փոխարինել գրավով և գրավի չափ պետք է սահմանել նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկը՝ 800.000 դրամ գումարը:

Դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ նշված չափով գրավի կիրառումը կարող է ասպահովել քրեական գործով դատաքն-

նության ընթացքում նրա պատշաճ վարքագիծը: (...)» (տե՛ս Նյութեր, հատոր 1, թերթ 57-58):

7. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 24-ի որոշման մեջ արձանագրված է. «[Կ]ալանավորում ընտրելու, մերժելու կամ երկարացնելու վերաբերյալ դատարանը մինչդատական վարույթի ընթացքում կայացնում է որոշումներ, որոնք նույն փուլում կարող են բողոքարկվել դատախազի կողմից: Հակառակ դրան՝ առկա չէ օրենսդրական որևէ կարգավորում, որը կարող է վկայել մեղադրողի կողմից դատական քննության ընթացքում խափանման միջոցի բողոքարկման հնարավորության մասին: Հետևապես, կալանավորման վերաբերյալ դատարանի կայացրած որոշումների բողոքարկումը դատախազի կողմից հնարավոր և թույլատրելի է միմիայն մինչդատական վարույթի շրջանակներում: Այսինքն՝ օրենսդիրը, ելնելով դատավարական խնդիրներից, դատախազի գործառույթներից և կոնկրետ դատավարական փուլում դրա իրականացման նպատակներից, խափանման միջոցների ընտրության, վերացման, փոփոխման կամ բողոքարկման հնարավորություն դատախազին ընձեռել է բացառապես մինչդատական վարույթի շրջանակներում: (...)

Օրենսդրի նման տրամաբանական տարանջատումը պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր փուլում խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը կարող է օբյեկտիվորեն գնահատել միմիայն դատավարական խնդիրներ իրականացնող առաջնային մարմինը, այսինքն՝ վարույթն իրականացնողը: Ավելին՝ խափանման միջոց ընտրելու սուբյեկտային հավասար իրավագործության պայմաններում՝ դատավարական փուլերի տարանջատումը կխաթարվի:

Վերաքննիչ բողոքարկմանը վերաբերող իրավակարգավորումներ նախատեսված են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն **ամբաստանյալը**, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը, **մեղադրողը կամ վերադաս դատախազը**, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը (...): **Կասկածյալը**, **մեղադրյալը**, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն վերաքննության կարգով բողոքարկելու սույն օրենսգրքի 376.1-րդ - հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված դատական ակտերը: Իսկ նույն օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ կետը վերաբերում է կալանավորումն ընտրելուն, փոփոխելուն կամ վերացնելուն: Ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից՝ առաջին դեպքում խոսքը վերաբերում է գործն ըստ էության լուծող դատական ակտերին, և օրենսդիրն օգտագործում է «**մեղադրող**» և «**ամբաստանյալ**» հասկացությունները, իսկ երկրորդ դեպքում՝ «**կասկածյալ**» և «**մեղադրյալ**» հասկացությունները, ինչից նույնպես պարզ է դառնում, որ մեղադրողին կալանավորման որոշումը բողոքարկելու իրավասություն ընձեռված չէ:

(...)» (տե՛ս Նյութեր, հատոր 2, թերթ 45-51):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներ-
քոհիշյալ հիմնավորումներով.

8. Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-
րդ, 288-րդ, 376-րդ, 376.1-րդ հոդվածները, ինչպես նաև *Անուշ Ղավայյանի*
գործով Վճարելի դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ
ԵՔԲԴ/0299/01/08 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշում-
ները՝ վճարելի բողոքի հեղինակը համոզմունք է հայտնել, որ դատախազն
իրավասու է խափանման միջոցի վերաբերյալ դատական ակտերը բողո-
քարկել քրեական դատավարության բոլոր փուլերում:

Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինա-
կան և հիմնավոր չէ, ուղղակիորեն հակասում է գոյություն ունեցող դատա-
կան պրակտիկային՝ մասնավորապես՝ թիվ ԵԱՆԴ/0070/01/14 քրեական
գործով Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտին:

9. Վճարելի բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դա-
տարանի որոշումը հակասում է նաև *Անուշ Ղավայյանի* գործով Վճարելի
դատարանի կայացրած որոշմամբ արտահայտված իրավական դիրքո-
րոշմանը և դրան տալիս է սահմանափակ մեկնաբանություն՝ անտեսելով
որ Վճարելի դատարանի որոշմամբ արձանագրվել է դատական քննութ-
յան փուլում կայացված խափանման միջոցի վերաբերյալ որոշման բողո-
քարկման հնարավորությունը և այդ կապակցությամբ որևէ սուբյեկտային
սահմանափակում կամ տարբերակում չի նախատեսվել:

Վճարելի բողոքի հեղինակը շեշտել է, որ խափանման միջոցի վե-
րաբերյալ դատարանի որոշման վիճարկումը չի կարող լինել միակողմա-
նի, այսինքն՝ հանուն դրանով շոշափվող շահերից (մասնավոր և հանրա-
յին) բացառապես մեկի: Խափանման միջոցը չի կարող վերանայվել՝ եր-
կու շահերից միայն մեկի պաշտպանության համար: Խափանման միջոցի
բողոքարկման՝ Վերաքննիչ դատարանի կողմից առաջ քաշված ասիմետ-
րիան անտեսում է դրա հիմքում երկու շահերի գոյությունը և դրանցից մե-
կին վերապահում է ակնհայտ առավելություն՝ խաթարելով այդ դատավա-
րական միջոցի տրամաբանությունը և դրա կիրառման հիմքերի բովանդա-
կությունը: Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է
այն հանգամանքը, որ խափանման միջոցի գոյությունը հանրային շահի
մասով շոշափում է մեղադրողի գործառույթը և պայմաններ ստեղծում դրա
պատշաճ իրականացման համար: Բողոքի հեղինակն ընդգծել է, որ
այս հիմնավորումը չի ենթադրում, որ խափանման միջոցի կիրառման
հարցը դատարանում լուծում է մեղադրողը կամ նրա դիրքորոշումը որոշիչ
նշանակություն ունի: Բայց այն, որ յուրաքանչյուր դեպքում **մեղադրողը
պետք է հավասար հնարավորություն ունենա** դիրքորոշում արտահայտե-
լու խափանման միջոցի կիրառման կամ փոփոխման հարցի քննարկման
ժամանակ և արտահայտելու իր հիմնավորումները հանրային շահի երաշ-

խավորման անհրաժեշտության մասին, իսկ այնուհետև, կայացված որոշման հետ համաձայն չլինելով, նույն հիմնավորումներով այն **վիճարկելու վերադաս դատարանում**, վճարելի բողոքի հեղինակի համոզմամբ՝ իրավաչափ է: Այն համապատասխանում է խափանման միջոցի կիրառման հարցը քննարկելիս մրցակցության ապահովման պահանջին և չի նսեմացնում դատարանի դերը այդ հարցը արդարության բոլոր պահանջների պահպանմամբ լուծելիս:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի արտահայտած այն դիրքորոշմանը, որ քրեադատավարական օրենքը չի բացառում բողոքարկման իրավունքի ասիմետրիան և, օրինակ, մեղադրողին՝ ի տարբերություն հակառակ կողմի, վճարելի բողոք բերելու անմիջական հնարավորություն չի վերապահում, ապա վճարելի բողոքի հեղինակը փաստարկել է, որ այս դեպքում խոսքը ոչ թե մեղադրողի համար բողոքարկման անհավասար հնարավորությունների, այլ այդ հնարավորության իսպառ բացակայության մասին է:

10. Վճարելի բողոքի հեղինակը նաև նշել է, որ. *«Նկատի ունենալով վճարելի դատարանի կողմից վճարելի բողոքը վարույթ ընդունելու և այն քննելու օրենքով նախատեսված դատավարական ժամկետները և սույն գործի դատական քննության ընթացքը, սույն բողոքով Հայկազ Գևորգյանի նկատմամբ խափանման միջոց գրավի թույլատրելիության հարցի բարձրացումը համարվում է ոչ նպատակահարմար: Այդ կապակցությամբ դատարանի ակնկալվող որոշումը հավանական չէ, որ կունենա իրավական նշանակություն համապատասխան դատավարական հարաբերությունների կարգավորման համար՝ այդ հարաբերությունները դատական ակտը կայացնելու ժամանակ սպառված լինելու պատճառով:*

Սակայն, վերաքննիչ դատարանի որոշման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն առավելապես վերաբերում է դատական քննության փուլում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, այն փոփոխելու կամ վերացնելու (այսուհետ՝ նաև կալանավորման որոշում) մասին դատարանի որոշման դեմ մեղադրողի կողմից վերաքննիչ բողոք բերելու հնարավորության իրավական հարցին՝ այդ կապակցությամբ առաջ քաշելով գոյություն ունեցող իրավական պրակտիկան փոփոխող մոտեցում»:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել թիվ ԵՇԳ/0060/01/15 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի հուլիսի 24-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորված են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ մեղադրողն իրավասու չէ բողոքարկել դատական

քննության փուլում ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ նշված իրավական հարցին Վճարելի դատարանի կողմից պատասխան է տրվել *Նարեկ Հարությունյանի* գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՆԴ/0081/01/14 որոշման մեջ, որով Վճարելի դատարանը վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 376-րդ հոդվածի 1-ին մասը, 376.1-րդ հոդվածը, ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«[Մ]եղադրողը քրեական գործի դատական քննության փուլում լիազորված է բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ դատարանի այլ որոշումները՝ այն դեպքում, երբ դրանց բողոքարկման հնարավորությունը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:*

(...) վերաքննության կարգով բողոքարկման ենթակա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածով սահմանված՝ Առաջին ատյանի դատարանի որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներին օրենսդիրն ըստ բողոքարկման իրավունքի ծավալի տարանջատել է խմբերի: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին նախադասության բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների ընդհանուր շրջանակը, ովքեր օժտված են բողոքարկման անսահմանափակ իրավունքով: Այդ սուբյեկտների շարքում ընդգրկված են ամբաստանյալը, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը, մեղադրողը կամ վերադաս դատախազը, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը: Քննարկվող հոդվածի հաջորդող շարադրանքում օրենսդիրը նախատեսել է քրեական դատավարության այն մասնակիցներին, ովքեր օժտված են սահմանափակ բողոքարկման իրավունքով՝ իրավասու են բողոքարկել որոշումները որոշակի մասով կամ որոշումների որոշակի շրջանակ: Մասնավորապես, քննարկվող հոդվածի վերջին նախադասությամբ նախատեսված են վերաքննիչ բողոքարկման այն սուբյեկտները ովքեր կարող են բողոքարկել միայն գործն ըստ էության չլուծող և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված դատական ակտերը: Այդպիսիք են կասկածյալը, մեղադրյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև դիմողը:

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասն այլ կերպ մեկնաբանելու դեպքում կարող է առաջանալ, օրինակ, այնպիսի իրավիճակ, երբ առաջին ատյանի դատարանի՝ գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 3-րդ մաս) անբողոքարկելի դառնա, ինչպես նաև ամբաստանյալի կողմից առաջին ատյանի դատարանի՝ կայանքը որպես

խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ որոշումները բողոքարկելու իրավունքի կապակցությամբ արհեստական հակասություն առաջանա ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 27-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի միջև այն առումով, որ դրա վերջին նախադասությամբ նախատեսված սուբյեկտների շարքում ներառված չէ նաև ամբաստանյալը: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի նման մեկնաբանումը կփոփոխի դրա իմաստը, ինչն անթույլատրելի է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի ուժով:

(...) Վերոնշյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ մեղադրողը՝ որպես վերաքննիչ բողոքարկման անսահմանափակ իրավունքով օժտված սուբյեկտ, ներառված է գործն ըստ էության չլուծող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված որոշումները բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակում: Այլ խոսքով՝ մեղադրողն իրավասու է վերաքննիչ դատարան բողոքարկել նաև առաջին աստիճանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ որոշումները, քանի որ այդ հնարավորությունը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ և 376.1-րդ հոդվածներով:

Վճարելի դատարանի վերոնշյալ մեկնաբանությունը բխում է նաև դատախազի՝ մեղադրանքի պաշտպանության սահմանադրական իրավունքի բովանդակությունից, ինչպես նաև համահունչ է դատախազի կարգավիճակի վերաբերյալ միջազգային փաստաթղթերով ամրագրված չափանիշներին: Այսպես՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հոկտեմբերի 6-ի «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ» թիվ Rec(2000)19 հանձնարարականի 1-ին հոդվածի համաձայն՝ դատախազները պետական իշխանությամբ օժտված մարմինների ներկայացուցիչներ են, ովքեր հասարակության անունից և **հանուն հանրային շահի** ապահովում են օրենքի կիրառումը բոլոր այն դեպքերում, երբ օրենքի խախտումը հանգեցնում է քրեական սանկցիաների՝ **հաշվի առնելով ինչպես անձի իրավունքները, այնպես էլ քրեական արդարադատության համակարգի պատշաճ արդյունավետությունը**: Հանձնարարականի 2-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ քրեական արդարադատության բոլոր համակարգերում դատախազները կարող են բողոքարկել բոլոր կամ որոշ դատական որոշումներ: Նշված հանձնարարականի բացատրական նամակում տրված 2-րդ հոդվածի մեկնաբանության համաձայն՝ դատական որոշումները բողոքարկելու դատախազի իրավունքը սերտորեն փոխկապված է **դատախազության ընդհանուր գործառույթի** հետ, քանի որ այն օրենքի կիրառումն ապահո-

վելու և միևնույն ժամանակ արդարադատության համակարգն ավելի արդյունավետ դարձնելուն օժանդակող միջոցներից մեկն է: (...)» (տե՛ս Նարեկ Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՆԳ/0081/01/14 որոշման 14-15-րդ կետերը):

12. Սույն գործի փաստերից երևում է, որ գործի դատական քննության ընթացքում՝ 2016 թվականի հունիսի 9-ին, Առաջին ատյանի դատարանը բավարարել է ամբաստանյալին գրավով ազատելու մասին պաշտպանի միջնորդությունը, ամբաստանյալ Հ.Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոխարինել այլընտրանքային խափանման միջոց գրավով և գրավի չափ սահմանել 800.000 (ութ հարյուր հազար) դրամը (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել մեղադրողի կողմից, որը Վերաքննիչ դատարանի որոշմամբ մերժվել է, այն պատճառաբանությամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կալանավորման որոշումը բողոքարկելու իրավասություն մեղադրողին ընձեռված չէ (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

13. Նախորդ կետում շարադրված փաստերը գնահատելով *Նարեկ Հարությունյանի* գործով որոշմամբ արտահայտված և սույն որոշման 11-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ մեղադրողն իրավասու չէ բողոքարկել դատական քննության փուլում ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը, հիմնավորված չեն:

Չհամաձայնելով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, թե առկա չէ օրենսդրական որևէ կարգավորում, որը կարող է վկայել մեղադրողի կողմից դատական քննության ընթացքում խափանման միջոցի բողոքարկման հնարավորության մասին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդպիսի իրավակարգավորում նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ և 376.1-րդ հոդվածներով:

Վերոգրյալների հիման վրա Վճռաբեկ դատարանն առարկայագուրկ է համարում Վերաքննիչ դատարանի մնացած պատճառաբանություններին անդրադառնալը և արձանագրում է, որ ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկելու մեղադրողի իրավունքի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը և դրա հիմնավորումները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից, ավելին՝ փոփոխում են վերջինիս իմաստը, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Միաժամանակ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի պահանջին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ բողոքաբերը վճռաբեկ բողոքում Հ.Գևորգյանի նկատմամբ գրավ կիրառելու իրավաչափության հարց բարձրացնելը գնահատել է ոչ նպատակահարմար, իսկ բողոքը բացառապես վերաբերում է *դատական քննության փուլում ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, այն փոփոխելու կամ վերացնելու մասին դատարանի որոշման դեմ մեղադրողի կողմից վերաքննիչ բողոք բերելու հնարավորության իրավական հարցին* (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Նման պայմաններում, հիմք ընդունելով վերաքննիչ դատարանի դատական ակտերը միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու օրենսդրական պահանջը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդված), Վճռաբեկ դատարանն իրավասու չէ բավարարել բողոքի պահանջը և գրավի իրավաչափության հարցի քննարկման համար գործը նոր քննության ուղարկել: Հետևաբար՝ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Հայկազ Ռուբենի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 24-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

7.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0154/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏԲՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ	Ռ.ՌԵՎԱԶՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 14-ի որոշման դեմ դիմող Հրայր Մանուկյանի ներկայացուցիչ, փաստաբան Ռոբերտ Ռևազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի հուլիսի 3-ին «Araratnews.am» լրատվամիջոցում տեղեկություններ են հրապարակվել «Ժառանգություն» կուսակցության անդամ, լրագրող Հրայր Մանուկյանին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ ՀՀ ԱԱԾ) աշխատակցի կողմից հավաքագրելու փորձ կատարելու և համագործակցության առաջարկը մերժելու կապակցությամբ սպառնալիքներ տալու վերաբերյալ:

2014 թվականի հուլիսի 8-ին Հր.Մանուկյանը ՀՀ գլխավոր դատախազին հաղորդում է ներկայացրել որպես ՀՀ ԱԱԾ աշխատակից ներկայացած՝ Վլադ Հակոբյան անունով անձի կողմից իրեն իր և «Ժառանգություն» կուսակցության քաղաքական և աշխատանքային գործունեության ծավալման հետ կապված բացասական հետևանքների առաջացմամբ սպառնալու վերաբերյալ:

2014 թվականի հուլիսի 18-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիրքերհանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Ա.Փանոսյանը (այսուհետ նաև՝ Դատախազ) Հր.Մանուկյանին պատասխանել է գրությամբ:

2014 թվականի օգոստոսի 22-ին «Ժառանգություն» կուսակցության վարչության փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանը, իսկ 2014 թվականի օգոստոսի 26-ին նաև կուսակցության վարչության անդամ Հրայր Մանուկյանը բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) Դատախազի անգործության դեմ:

2. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ Ա.Մարտիրոսյանի և Հր.Մանուկյանի կողմից ներկայացված բողոքները միացվել են մեկ վարույթում, իսկ 2015 թվականի մարտի 16-ի որոշմամբ՝ մերժվել:

3. Դիմող Հր.Մանուկյանի ներկայացուցիչ, փաստաբան Ռոբերտ Ռևազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի մայիսի 14-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մարտի 16-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2015 թվականի մայիսի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Հր.Մանուկյանի ներկայացուցիչ, փաստաբան Ռոբերտ Ռևազյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. 2014 թվականի հուլիսի 8-ին Հր.Մանուկյանը ՀՀ գլխավոր դատախազին հաղորդում է ներկայացրել այն մասին, որ 2014 թվականի հունիս ամսին Վլադ Հակոբյան անունով ներկայացած անձը, հանդես գալով որպես ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակից, իրեն առաջարկել է համագործակցել ՀՀ ԱԱԾ-ի հետ: Նույն հաղորդման մեջ Հր.Մանուկյանը նշել է. «Որպես պատասխան իմ մերժմանը՝ սպառնացել է

ինձ, իմ և «Ժառանգություն» կուսակցության քաղաքական և աշխատանքային գործունեության ծավալման հետ կապված բացասական հետևանքների մասին:

(...)

Վլադ Հակոբյանը, անկախ այն հանգամանքից, որ ես արդեն մեկ անգամ մերժել էի ՀՀ ԱԱԾ-ի հետ համագործակցության առաջարկը, պնդեց, որ նորից հանդիպեմ նրա հետ: Այդ հանդիպումը տեղի ունեցավ 2014 թվականի հունիսի 30-ին, որի ժամանակ ես ձայնագրել եմ նրա հետ տեղի ունեցած մեր գրույցը, որը հրապարակվել է տարբեր լրատվամիջոցներով (...): Հաղորդմանը կից ներկայացվել է նաև Հր.Մանուկյանի կողմից կատարված ձայնագրությունը (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 47):

6. Գատախազի 2014 թվականի հուլիսի 18-ի գրության համաձայն՝ Հր.Մանուկյանի հաղորդման մեջ, հավաքագրելու փորձ կատարելու վերաբերյալ լրատվամիջոցներում հրապարակված նյութերում ՀՀ ԱԱԾ-ի աշխատակցին վերագրվող արարքներն առերևույթ հանցագործության հատկանիշներ չեն պարունակում, այսինքն՝ հաղորդման մեջ և հրապարակումներում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքի վերաբերյալ տեղեկություններ, որպիսի պայմաններում դրանք հանցագործության մասին հաղորդում չեն և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով քննարկման ենթակա չեն: Միաժամանակ հայտնվել է, որ վերոհիշյալ հանգամանքները հաստատվել են նաև ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկություններով (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 5):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ «[Հրայր Մանուկյանի 2014 թվականի հուլիսի 8-ի] հաղորդման մեջ որևէ տեղեկություն չի պարունակվում կոնկրետ հանցագործության հատկանիշներ պարունակող նախապատրաստվող կամ արդեն կատարված հանցագործության մասին, ինչն անհրաժեշտ պայման է, որպեսզի ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ներկայացված տեղեկությունները համարվեն հանցագործության մասին հաղորդում: Դրանում նշված են միայն «Ժառանգություն» կուսակցության վարչության անդամ Հրայր Մանուկյանի սուբյեկտիվ գնահատականները և ՀՀ ԱԱԾ-ի կողմից հանցագործություն կատարելու վերաբերյալ նրա ենթադրությունները:

(...) Հրայր Մանուկյանի հաղորդումը վերոգրյալ հիմնավորմամբ քրեական գործ հարուցելու առիթ չէր կարող հանդիսանալ (...):» (տե՛ս նյութեր, թերթ 128):

8. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով ստորադաս դատարանի դատական ակտը, արձանագրել է, որ. «ՀՀ գլխավոր դատախազության կողմից քրեական գործ չհարուցելով Հ.Մանուկյանի հաղորդման հիման վրա՝ նյութական և դատավարական օրենսդրության պահանջները

պահպանվել են, ու չեն խախտվել Հ.Մանուկյանի իրավունքները և ազատությունները (...):

(...)

Վերաքննիչ բողոքի պատճառաբանությունը, որ ԱԱԾ-ի աշխատակից ներկայացած անձը Հ.Մանուկյանին և նրա հարազատներին սպառնացել է, որը հիմք է քրեական գործ հարուցելու համար՝ Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարում: Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ներկայացված ձայնագրության մեջ բացակայում է ԱԱԾ-ի աշխատակից ներկայացած Վ.Հակոբյանի կողմից «Ժառանգություն» կուսակցության փառչության անդամ Հ.Մանուկյանի և նրա հարազատների հասցեին սպառնալիք տալու հիմնավոր փաստարկներ» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 37-38):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական և հիմնավորված չէ, քանի որ դատական ակտ կայացնելիս թույլ են տրվել նյութական ու դատավարական նորմերի խախտումներ:

Բողոքաբերն իր անհամաձայնությունն է հայտնել Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշմանը, որ Հր.Մանուկյանի ներկայացրած հաղորդման մեջ որևէ տեղեկություն չի պարունակվում նախապատրաստվող կամ արդեն կատարված հանցագործության մասին՝ նշելով, որ Հր.Մանուկյանի՝ դատախազություն ներկայացված հաղորդման ու դրան կից՝ Վ.Հակոբյանի հետ գրույցի ձայնագրության բովանդակությունից ակնհայտ երևում է, որ որպես ՀՀ ԱԱԾ աշխատակից ներկայացած անձի արարքները պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ, 161-րդ և 309-րդ հոդվածներով նախատեսված արարքների հատկանիշներ:

Բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել այն հանգամանքը, որ Հր.Մանուկյանի հաղորդման առնչությամբ որոշում կայացնելու փոխարեն՝ ՀՀ գլխավոր դատախազությունը դրան պատասխանել է գրությամբ՝ խախտելով հաղորդման առնչությամբ քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված պահանջը: Բողոքաբերի պնդմամբ՝ նույն գրության բովանդակությունից ակնհայտ է, որ դատախազության կողմից ձեռնարկվել են որոշակի քայլեր հաղորդման մեջ նշված հանգամանքները պարզելու ուղղությամբ, ինչը վկայում է այն մասին, որ հաղորդումն առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակել է: Մինչդեռ ստորադաս դատարաններն անտեսել են նաև այդ հանգամանքը:

10. Բողոքաբերը նաև փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ Գ.Ղևոնդյանի գործով 2013

թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշմանն այն համատեքստում, որ հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ պետք է կայացվեր քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու մասին որոշում, ինչը չի արվել:

Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վե-րաքննիչ դատարանի 2015 թվականի մայիսի 14-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգու-մը.

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Հր.Մանուկյանի կողմից ներկայացված հաղորդումը չի համապատասխանում քրեական գործ հարուցելու առիթին ներկայացվող պահանջներին:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը սահմանում է. «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ. «Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) քրեական գործ հարուցելու մասին.
- 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.
- 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին»:

13. Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել *Է.Կարապետյանի* գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) Հանցագործության մասին հաղորդումը՝ որպես քրեական գործ հարուցելու առիթ, իրենից ներկայացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի գրավոր կամ բանավոր դիմումը քրեական հետապնդում իրականացնող մարմ-

նին՝ կոնկրետ հանցագործության տարրեր պարունակող նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին տեղեկատվությանը:

Առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությանը ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն:

Քրեական գործի հարուցման առիթները պետք է բովանդակեն տեղեկություն հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Միայն այս դեպքում դրանք կարող են հիմք հանդիսանալ ստուգելու և քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժելու որոշում ընդունելու համար: Այսինքն՝ քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը: (...)» (տե՛ս Էմմա Կարապետյանի գործով Վճարելի դատարանի 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշումը):

Վերահաստատելով Է.Կարապետյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանը Ռ.Նիսազյանի գործով արձանագրել է, որ. «Քրեական գործ հարուցելու առիթ ասելով՝ պետք է հասկանալ օրենքով սահմանված այն աղբյուրը, որտեղից իրավասու պաշտոնատար անձը տեղեկություններ է ստանում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների մասին: Հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդումը՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին կամ դատախազին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի իմաստով քրեական գործ հարուցելու առիթ է, հետևաբար այդպիսի հաղորդման առկայությունն ինքնին առաջ է բերում քրեադատավարական իրավահարաբերություններ՝ կապված գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության հետ:

Միևնույն ժամանակ հանցագործության մասին հաղորդումը, այդ թվում՝ ֆիզիկական անձի կողմից տրված, չի կարող լինել վերացական կամ ընդհանուր բնույթի: Որպեսզի հաղորդումը հիմք հանդիսանա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, այն պետք է բովանդակի տվյալներ կոնկրետ հանցագործության մասին: Վերոգրյալը, սակայն, չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար: Գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու պարտականությունը քրեական գործի հարուցման փուլում կրում են հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և

հանրային-իրավական պարտավորություններին համապատասխան: Այս փուլում վարույթն իրականացնող մարմինը հաղորդման նախնական ստուգման միջոցով հանցագործության հատկանիշներ մատնանշող բավարար փաստական տվյալներ ձեռք բերելու դեպքում, ինչպես նաև քրեական գործի վարույթը բացառող դատավարական արգելքների բացակայության պայմաններում պարտավոր է հարուցել քրեական գործ, հակառակ դեպքում՝ որոշում կայացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին»:

14. Վերահաստատելով վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործության մասին հաղորդումն իրավաբանական փաստ է, որն առաջացնում է այն ստուգելուն և լուծելուն ուղղված դատավարական իրավահարաբերություններ: Հաղորդումը՝ որպես քրեական գործ հարուցելու առիթ, պետք է համապատասխանի որոշակիության բովանդակային չափանիշին, մասնավորապես՝ բովանդակի տեղեկություն կոնկրետ հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Նշվածը, սակայն, չի ենթադրում, որ քննարկման և լուծման ենթակա է միայն այն հաղորդումը, որը պարունակում է քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները կարող են բավարար լինել այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներ) գործողության մեջ դնելու համար, եթե ողջամիտ հավանակություն կա, որ դրանց ստուգման արդյունքում կարող են հայտնաբերվել, այլ ոչ թե հաստատապես հայտնաբերվելու են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քննարկված չափանիշին համապատասխանող յուրաքանչյուր հաղորդում առաջացնում է վարույթ իրականացնող մարմնի պարտականությունը դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2014 թվականի հուլիսի 3-ին «Araratnews.am» լրատվամիջոցում տեղեկություններ են հրապարակվել «Ժառանգություն» կուսակցության անդամ, լրագրող Հրայր Մանուկյանին ՀՀ ԱԱԾ-ի աշխատակցի կողմից հավաքագրելու փորձ կատարելու և համագործակցության առաջարկը մերժելու կապակցությամբ սպառնալիքներ տալու վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): Հր.Մանուկյանը 2014 թվականի հուլիսի 8-ին ՀՀ գլխավոր դատախազին հաղորդում է ներկայացրել այն մասին, որ 2014 թվականի հունիս ամսին Վլադ Հակոբյան անունով ներկայացած անձը, հանդես գալով որպես ՀՀ ԱԱԾ աշխատակից, համագործակցելու առաջարկ է արել, իսկ իր կողմից մերժվելուց հետո՝ իր և կուսակցության աշխատանքային և քաղաքական գործունեության հետ կապված սպառնալիքներ տվել իրեն: Հաղորդմանը կից Հր.Մանուկյանը ներկայացրել է իր կողմից կատարված

ձայնագրությունը, որը հրապարակված է եղել նաև «Araratnews.am» կայքէջում (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Նշված հաղորդմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի կողմից 2014 թվականի հուլիսի 18-ին տրվել է գրավոր պատասխան այն մասին, որ հաղորդման մեջ, հավաքագրելու փորձ կատարելու վերաբերյալ լրատվամիջոցներում հրապարակված նյութերում ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության աշխատակցին վերագրվող արարքներն առերևույթ հանցագործության հատկանիշներ չեն պարունակում, որպիսի պայմաններում դրանք հանցագործության մասին հաղորդում չեն և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով քննարկման ենթակա չեն: Միաժամանակ հայտնվել է, որ վերոհիշյալ հանգամանքները հաստատվել են նաև ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկություններով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի մարտի 16-ի որոշմամբ Դատախազի անգործության դեմ Հր.Մանուկյանի և Ա.Մարտիրոսյանի բողոքները մերժել է՝ պատճառաբանելով, որ Հրայր Մանուկյանի հաղորդման մեջ որևէ տեղեկություն առկա չէ կոնկրետ հանցագործության հատկանիշներ պարունակող նախապատրաստվող կամ արդեն կատարված հանցագործության մասին, ուստի այն քրեական գործ հարուցելու առիթ չէ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Նույն պատճառաբանությամբ Վերաքննիչ դատարանը 2015 թվականի մայիսի 14-ի որոշմամբ մերժել է Հր.Մանուկյանի ներկայացուցիչ փաստաբան Ռոբերտ Ռևազյանի վերաքննիչ բողոքը: Վերաքննիչ դատարանը նաև գտել է, որ ներկայացված ձայնագրության մեջ բացակայում են ԱԱԾ-ի աշխատակից ներկայացած Վ.Հակոբյանի կողմից «Ժառանգություն» կուսակցության վարչության անդամ Հր.Մանուկյանի և նրա հարազատների հասցեին սպառնալիք տալու հիմնավոր փաստարկներ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 13-րդ կետում վկայակոչված՝ *Է.Կարապետյանի* և *Ռ.Նիսազյանի* գործերով որոշումներում ձևավորված, ինչպես նաև սույն որոշման 14-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Հր.Մանուկյանի՝ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված 2014 թվականի հուլիսի 8-ի հաղորդումը առերևույթ բովանդակում է տեղեկություններ կոնկրետ հանցավոր արարքների հատկանիշներ մատնանշող տվյալների առկայության մասին, և հնարավոր է ողջամիտ ենթադրություն անել, որ այդ տեղեկությունների ստուգման արդյունքում կարող են հայտնաբերվել քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Ավելին՝ Դատախազի գրության բովանդակության *«վերոհիշյալ հանգամանքները հաստատվել են նաև ՀՀ կառավարու-*

յանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկություններով» հատվածից հետևում է, որ վարույթն իրականացնող մարմինները Հր.Մանուկյանի հաղորդման մեջ նշված տեղեկություններն ստուգելուն ուղղված գործողություններ են կատարել:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Հր.Մանուկյանի կողմից ներկայացված հաղորդումը չի համապատասխանում քրեական գործ հարուցելու առիթին ներկայացվող պահանջներին, հիմնավորված չեն:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն գործով թույլ են տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Հրայր Մանուկյանի և նրա ներկայացուցիչ Ռոբերտ Ռ-ևազյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի մայիսի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0059/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ
դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ-
ներ Գևորգ Համլետի Խաչատրյանի և Սամվել Աշոտի Քրմոյանի վերա-
բերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ վերաքն-
նիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2015
թվականի ապրիլի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի փետրվարի 20-ին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ
հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13200413 քրեա-
կան գործը՝ 2013 թվականի հունվարի 3-ին «Բրիջ» ակումբում տեղի ունե-
ցած խուլիգանության փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի հունիսի 28-ի որոշմամբ
Սամվել Քրմոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օ-

րենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2013 թվականի հունիսի 28-ի որոշմամբ Ս.Քրմոյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ Գևորգ Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ Գ.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2013 թվականի սեպտեմբերի 9-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին:

Վերոգրյալ որոշումը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազի տեղակալի՝ 2013 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ վերացվել է, իսկ նախաքննության մարմնի՝ նույն օրվա որոշմամբ՝ կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել:

2013 թվականի նոյեմբերի 21-ին Գ.Խաչատրյանը, իսկ նոյեմբերի 22-ին՝ Ս.Քրմոյանը ինքնակամ ներկայացել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Կենտրոնականի բաժին, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

2014 թվականի ապրիլի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան:

2. 2014 թվականի դեկտեմբերի 30-ին Առաջին ատյանի դատարանը Գ.Խաչատրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով, դատապարտել ազատազրկման՝ 1 տարի 6 ամիս ժամկետով և ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման (այսուհետ՝ նաև Համաներման ակտ) 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ ազատել նշանակված պատժից:

Նույն դատավճռով Ս.Քրմոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով, դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի 6 ամիս ժամկետով և Համաներման ակտի 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ՝ ազատվել նշանակված պատժից:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2015 թվականի ապրիլի 28-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հա-րությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը վարույթ է ընդուն-վել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունե-ցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Գևորգ Համլետի Խաչատրյա-նին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա 2013 թվականի հունվարի 3-ին՝ ժամը 02.00-ի սահմաններում, ընկերոջ՝ Սամվել Քրմոյանի և ինքնուր-յունը չպարզված երկու անձնավորությունների հետ Երևան քաղաքի Խանջյան փողոցի թիվ 41 հասցեում գործող «Բրիջ» ակումբում անհիմն վիճաբանել է ակումբի տնօրեն Լև Բուլատովի, մենեջերներ Դավիթ Մարգսյանի և Մարիամ Սահակյանի ու վերջինիս եղբայր Հայկ Սահակ-յանի հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով, աղմկել է և հայիռյել, բռնություն գործադրել՝ որպես զենք օգտագործվող առարկայով՝ սեղանի վրայից վերցրած գարեջրի ապակյա տարայով հարվածել է Հայկ Սահակյանի գլխի շրջանում ու նրա առողջությանը դիտավորությամբ պատճառել թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, իր այդ դիտավորյալ գործո-ղություններով խանգարել է ներկաների հանգիստը, խաթարել ակումբի բնականոն աշխատանքը»:

Սամվել Աշոտի Քրմոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվա-ծի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա 2013 թվականի հունվարի 3-ին՝ ժամը 02.00-ի սահմաններում, ընկերոջ՝ Գևորգ Խաչատրյանի և ինքնությունը չպարզված երկու անձնավորու-թյունների հետ Երևան քաղաքի Խանջյան փողոցի թիվ 41 հասցեում գոր-ծող «Բրիջ» ակումբում անհիմն վիճաբանել է ակումբի տնօրեն Լև Բուլա-տովի, մենեջերներ Դավիթ Մարգսյանի և Մարիամ Սահակյանի ու վերջի-նիս եղբայր Հայկ Սահակյանի հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակու-թյան նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով, աղմկել է և հայիռյել, բռնություն գործադրել՝ որպես զենք օգտագործվող առարկայով՝ սեղանի վրայից վերցրած գարեջրի ապակյա տարայով հարվածել է Հայկ Սահակյանի դեմքի շրջանին ու նրա առողջությանը դի-տավորությամբ պատճառել թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքա-յումով, իր այդ դիտավորյալ գործողություններով խանգարել է ներկաների

հանգիստը, խաթարել ակումբի բնականոն աշխատանքը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 370-378):

6. Նախաքննության ընթացքում վկա Լև Բուլատովի հարցաքննության` **2013 թվականի մարտի 1-ի** արձանագրության համաձայն` *«(...) [Տ]իրապետում եմ հայերեն գրավոր և բանավոր լեզվին, սակայն խնդրում եմ ցուցմունքս արձանագրվի քննիչի կողմից [արձանագրված է համակարգչով]:*

(...) [Յ]ուցմունքը իմ խնդրանքով արձանագրեց քննիչը, գրված է իմ սլատմածով, կարդացի, ճիշտ է, որի համար ստորագրում եմ, Բուլատով [ստորագրություն] [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 62-64):

Նույն անձի լրացուցիչ հարցաքննության` **2013 թվականի ապրիլի 13-ի** արձանագրության համաձայն` *«(...) [Յ]ուցմունքը գրված է իմ բառերից, կարդացի, ճիշտ է [ստորագրություն] Բուլատով [արձանագրված է ձեռագրով]»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 89):

Նույն անձի լրացուցիչ հարցաքննության` **2013 թվականի հունիսի 4-ի** արձանագրության համաձայն` *«(...) [Տ]իրապետում եմ հայերեն բանավոր լեզվին, ինչպես նաև տառաճանաչ եմ, սակայն դանդաղ գրելու պատճառով խնդրում եմ ցուցմունքս արձանագրվի քննիչի կողմից [արձանագրված է համակարգչով]:*

(...) [Յ]ուցմունքս գրված է իմ սլատմածով, կարդացի, ճիշտ է, Բուլատով [ստորագրություն] [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 167):

Լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու` **2013 թվականի հուլիսի 1-ի** արձանագրության համաձայն` *«Լև Բուլատովը (...) հայտարարեց` [արձանագրված է համակարգչով] ճանաչեցի թիվ 3-ի տակ կպցրած լուսանկարը, դա Սամվելն է, ով ընկերոջ` Գևորգի հետ մեզ հետ կռիվ արեցին և շշերով խփեցին Հայկի գլխին ու դեմքին (...) Բուլատով [ստորագրություն] [արձանագրված է ձեռագրով]»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 224):

Նույն անձի լրացուցիչ հարցաքննության` **2013 թվականի հուլիսի 1-ի** արձանագրության համաձայն` *«(...) [Տ]իրապետում եմ հայերեն բանավոր լեզվին, ինչպես նաև տառաճանաչ եմ, սակայն դանդաղ գրելու պատճառով խնդրում եմ ցուցմունքս արձանագրվի քննիչի կողմից [արձանագրված է համակարգչով]:*

(...) [Յ]ուցմունքս կարդացի, ճիշտ է, Բուլատով [ստորագրություն] [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 226):

Լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու` **2013 թվականի նոյեմբերի 11-ի** արձանագրության համաձայն` *«Լև Բուլատովը (...) հայտարարեց` [արձանագրված է համակարգչով] ճանաչեցի թիվ 3[-ի] տակ փակցրած լուսանկարի անձին, դա Գևորգն է, ով հարվածել է Հայկին, նրան ճանաչեցի դեմքից, հայացքից (...) [ստորագրություն] Բուլատով*

[արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 41):

Նույն օրվա՝ Լև Բուլատովի լրացուցիչ հարցաքննության արձանագրության համաձայն՝ «(...) [Յ]ուցմունքս գրված է իմ բառերից, կարդացի, ճիշտ է [ստորագրություն] Բուլատով [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 43):

Նույն անձի լրացուցիչ հարցաքննության՝ **2013 թվականի նոյեմբերի 13-ի** արձանագրության համաձայն՝ «(...) [Յ]ուցմունքը գրված է իմ բառերից, կարդացի, ճիշտ է [ստորագրություն] Բուլատով [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 50):

6.1. Տուժող Լև Բուլատովի հարցաքննության՝ **2013 թվականի [դեկտեմբերի] 10-ի** արձանագրության համաձայն՝ «(...) Ազատորեն տիրապետում եմ գրավոր և բանավոր հայերեն լեզվին, սակայն խնդրում եմ՝ ցուցմունքս արձանագր[վ]ի քննիչի կողմից [արձանագրված է համակարգչով]:

(...) [Յ]ուցմունքս գրված է իմ պատմածով, քննիչի կողմից, կարդացի, ճիշտ է [ստորագրություն] Լ.Բուլատով [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 121-123):

Նույն անձի լրացուցիչ հարցաքննության՝ **[2014] թվականի հունվարի 22-ի** արձանագրության համաձայն՝ «(...) [Տ]իրապետում եմ հայերեն լեզվին, կարողանում եմ կարդալ, սակայն գրելուց դժվարանում եմ, **քարգմանչի կարիք չունեմ** և խնդրում եմ ցուցմունքս համակարգչի միջոցով արձանագրի քննիչը [արձանագրված է համակարգչով]:

(...) Ցուցմունքս իմ խնդրանքով համակարգչի միջոցով, իմ պատմածով արձանագրեց քննիչը, կարդացի անձամբ, տպագրված է ճիշտ, իմ պատմածով, կարդացի, ճիշտ է [արձանագրված է համակարգչով], [ստորագրություն] Բուլատով [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 205-208):

Նույն անձի և մեղադրյալ Գ.Խաչատրյանի առերեսման՝ **2014 թվականի հունվարի 24-ի** արձանագրության համաձայն՝ «(...) Առերես ցուցմունքը իմ խնդրանքով արձանագր[վ]եց քննիչի կողմից, տրված պատասխանները ճիշտ են, որի համար ստորագրում եմ, [ստորագրություն] Բուլատով [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 212-216):

6.2. Նախաքննության ընթացքում վկա Մարիամ Սահակյանի հարցաքննության՝ **2013 թվականի ապրիլի 9-ի** արձանագրության համաձայն՝ «(...) [Յ]ուցմունքը գրված է իմ պատմածով, կարդացի, ճիշտ է, Սահակյան [ստորագրություն] [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 82-83):

Նույն անձի լրացուցիչ հարցաքննության՝ **2013 թվականի հունիսի 4-ի** արձանագրության համաձայն՝ «(...) [Տ]իրապետում եմ հայերեն բանավոր լեզվին, ինչպես նաև տառաճանաչ եմ, սակայն դանդաղ գրելու պատճառով խնդրում եմ ցուցմունքս արձանագր[վ]ի քննիչի կողմից [արձանագրված է համակարգչով]:

(...) Յուզմունքս գրված է իմ պատմածով, կարդացի, ճիշտ է, Սահակյան [ստորագրություն] [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 166):

Նույն անձի և վկա Լև Բուլատովի առերեսման՝ **2013 թվականի հունիսի 4-ի** արձանագրության համաձայն՝ «(...) Առերես ցուցմունքս գրված է իմ խոսքերից, ճիշտ է, Սահակյան [ստորագրություն] [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 170):

Նույն անձի և վկա Անուշ Շեկոյանի առերեսման՝ **2013 թվականի հունիսի 28-ի** արձանագրության համաձայն՝ «(...) Առերես ցուցմունքս կարդացի, ճիշտ է, [ստորագրություն] Սահակյան Մարիամ [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 211):

Նույն օրվա՝ լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու արձանագրության համաձայն՝ «Մարիամ Սահակյանը (...) հայտարարեց՝ [արձանագրված է համակարգչով] ճանաչեցի թիվ 3-ի տակ կայցրած նկարը, դա Սամվելն է, ով գարեջրի շշով խփել է Հայկին: Ծանաչեցի դեմքից, աչքերից, սնազերի ձևից (...) [ստորագրություն] Սահակյան [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 212):

Նույն օրվա՝ Մարիամ Սահակյանի լրացուցիչ հարցաքննության արձանագրության համաձայն՝ «(...) [S]իրապետում եմ հայերեն բանավոր լեզվին, ինչպես նաև տառաճանաչ եմ, սակայն դանդաղ գրելու պատճառով խնդրում եմ ցուցմունքս արձանագրվի քննիչի կողմից:

(...) Լրացուցիչ ցուցմունքը գրված է իմ պատմածով, կարդացի, ճիշտ է [արձանագրված է համակարգչով], [ստորագրություն] Սահակյան [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 214):

Լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու՝ **2013 թվականի նոյեմբերի 11-ի** արձանագրության համաձայն՝ «Մարիամ Սահակյանը (...) հայտարարեց՝ [արձանագրված է համակարգչով] ճանաչեցի թիվ 1[-ի] տակ փակցրած լուսանկարի անձին, դա Գևորգն է, ով շշով հարվածել է Հայկին, նրան ճանաչեցի դեմքից, հայացքից (...) [ստորագրություն] Սահակյան [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 39):

6.3. Վկա Գավիթ Սարգսյանի հարցաքննության՝ **2013 թվականի մարտի 11-ի** արձանագրության համաձայն՝ «(...) [S]իրապետում եմ հայերեն գրավոր և բանավոր լեզվին, սակայն խնդրում եմ ցուցմունքս արձանագրվի քննիչի կողմից [արձանագրված է համակարգչով]:

(...) [Յ]ուզմունքը արձանագրվեց քննիչի կողմից իմ պատմածով, կարդացի, ճիշտ է [ստորագրություն] Սարգսյան [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 67-68):

Նույն անձի լրացուցիչ հարցաքննության՝ **2013 թվականի մարտի 21-ի** արձանագրության համաձայն՝ «(...) [Յ]ուզմունքը արձանագրվեց իմ պատմածով, կարդացի, ճիշտ է [ստորագրություն] Սարգսյան [արձա-

նագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 73-74):

Նույն անձի լրացուցիչ հարցաքննության` **2013 թվականի ապրիլի 13-ի** արձանագրության համաձայն` «(...) [Յ]ուցմունքը գրված է իմ բառերից, կարդացի, ճիշտ է [ստորագրություն] Սարգսյան [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 90):

Նույն անձի լրացուցիչ հարցաքննության` **2013 թվականի հունիսի 4-ի** արձանագրության համաձայն` «(...) [Տ]իրապետում եմ հայերեն բանավոր լեզվին, ինչպես նաև տառաճանաչ եմ, սակայն դանդաղ գրելու պատճառով խնդրում եմ ցուցմունքս արձանագրվի քննիչի կողմից [արձանագրված է համակարգչով]:

(...) [Յ]ուցմունքս գրված է իմ պատմածով, կարդացի, ճիշտ է, Սարգսյան [ստորագրություն] [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 171):

Նույն անձի լրացուցիչ հարցաքննության` **2013 թվականի հունիսի 28-ի** արձանագրության համաձայն` «(...) [Տ]իրապետում եմ հայերեն բանավոր լեզվին, ինչպես նաև տառաճանաչ եմ, սակայն դանդաղ գրելու պատճառով խնդրում եմ ցուցմունքս արձանագրվի քննիչի կողմից:

(...) Լրացուցիչ ցուցմունքը գրված է իմ պատմածով, կարդացի, ճիշտ է [արձանագրված է համակարգչով], [ստորագրություն] Սարգսյան [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 217):

Նույն օրվա` լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու արձանագրության համաձայն` «Դավիթ Սարգսյանը (...) հայտարարեց` [արձանագրված է համակարգչով] ճանաչեցի թիվ 1-ի տակ կայցրած նկարը, դա Սամվելն է, ով զարեջրի շշով խփել է Հայկին: Ծանաչեցի դեմքից, աչքերից, մազերի ձևից (...) [ստորագրություն] Սարգսյան [արձանագրված է ձեռագրով]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 215):

6.4. Կենտրոնի հարկային տեսչության պետին ուղղված Լև Բուլատովի` **2013 թվականի փետրվարի 20-ի** հայտարարության համաձայն` «(...) Հայտարարությունը գրված է իմ կողմից [մեջբերումը և հայտարարության ամբողջ տեքստը շարադրված է ձեռագրով` հայերեն]» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 203):

6.5. Քննիչ Հ.Մուշեղյանի կողմից **2013 թվականի դեկտեմբերի 10-ին** կայացվել են որոշումներ` սույն քրեական գործը վարույթ ընդունելու, Հայկ Սահակյանին և Լև Բուլատովին տուժող ճանաչելու վերաբերյալ (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 111, 112 և 119):

6.6. Տուժող Հայկ Սահակյանի հարցաքննության արձանագրության համաձայն` «10.10.2013թ. (...) քննիչ (...) Հ.Մուշեղյանս (...) որպես տուժող հարցաքննեցի (...) Հայկ Ռուբենի Սահակյանին (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 114-116):

Տուժող Լև Բուլատովի հարցաքննության արձանագրության համաձայն` «10.10.2013թ. (...) քննիչ (...) Հ.Մուշեղյանս (...) որպես տուժող հար-

ցարննեցի (...) Լև Ռոբերտի Բուլատովին (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 121-123):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) Դատաքննության ընթացքում պաշտպանների կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը, համաձայն [որոնց]՝ Դավիթ Հայկի Սարգսյանը և Մարիամ Ռուբենի Սահակյանը հանդիսացել են Բարձրագույն մասնագիտական կրթության դաշնային պետական բյուջետային կրթական հաստատության «Ռուսաստանի Տուրիզմի և Սերվիսի Պետական Համալսարանի» Երևանի մասնաճյուղի ուսանողներ, և Երևանի մասնաճյուղի ուսուցման լեզուն ռուսերենն է եղել: Մ.Սահակյանն ընդունվել է իրենց հանրակրթական հաստատություն՝ միջին /լրիվ/ ընդհանուր կրթության ատեստատի հիման վրա, որը տրվել է Ռուսաստանի Դաշնությունում, Լև Ռոբերտի Բուլատովը 2007 թվականից մինչև 2011 թվականը սովորել է Բարձրագույն մասնագիտական կրթության դաշնային պետական բյուջետային կրթական հաստատության «Ռուսաստանի Տուրիզմի և Սերվիսի Պետական Համալսարանի» Երևանի մասնաճյուղում՝ նախապատրաստական ուղեգրով 080100 «Տնտեսագիտություն», և ընդունվել է հանրակրթական հաստատություն՝ լրիվ ընդհանուր կրթության ատեստատի հիման վրա, որը տրվել է Վրաստանում: Ինչպես նաև դատաքննության ընթացքում տուժող Հայկ Սահակյանը հայտնել է, որ չի տիրապետում հայերեն լեզվին գրավոր և բանավոր և խնդրեց դատարանից հրավիրել թարգմանիչ: Նրանց ցուցմունքների վերջում իրենց կողմից գրված **մեկ նախադասությունից պարզ երևում է, որ արտաստպված է:** Հաշվի առնելով, որ տուժողներ Լև Բուլատովը, Հայկ Սահակյանը, վկաներ Դավիթ Սարգսյանը և Մարիամ Սահակյանը հանդիսանում են ՌԴ քաղաքացիներ, կրթություն են ստացել ռուսերեն լեզվով, հայերեն լեզվին բանավոր և գրավոր չեն տիրապետում դատարանը գտնում է, որ **նախաքննության ընթացքում նրանց կողմից տրված ցուցմունքները, լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունները, առերես հարցաքննության մասին արձանագրությունները պետք է ճանաչել անթույլատրելի, քանի որ այդ բոլոր գործողությունների ընթացքում չի մասնակցել թարգմանիչ:**

(...)

Դատարանը անդրադառնում է նաև սույն քրեական գործում առկա տուժողներ Լև Բուլատովի 10.10.2013 թվականի /հատոր 2-րդ, գ.թ. 121-123/ և Հայկ Սահակյանի 10.10.2013 թվականի /հատոր 2-րդ գ.թ. 114-116/ ցուցմունքներին, ապա դրանք նույնպես չեն կարող համարվել թույլատրելի ապացույց, քանի որ ձեռք են բերվել տվյալ քրեական գործով քննչական գործողություն իրականացնելու իրավունք չունեցող անձի կողմից: Մասնավորապես այն ձեռք է բերվել քննիչ Հ.Մուշեղյանի կողմից, որը տվյալ ժամանակ չի հանդիսացել վարույթն իրականացնող մարմին, նշված օրվա դրությամբ վարույթն իրականացրել է քննիչ Է. Պետրոսյանը, իսկ Հ.Մուշեղյանը քրեական գործը վարույթ է ընդունել միայն 10.12.2013 թվականին, այսինքն՝ նշված հարցաքննության արձանագրությունների

կազմվելուց երկու ամիս անց: Միևնույն ժամանակ դատարանը արձանագրում է, որ նշված հարցաքննություններին կրկին չկա թարգմանչի մասնակցություն:

(...)

Դատարանը արձանագրում է, որ դատաբժշկական լրացուցիչ փորձաքննության թիվ 812 եզրակացության, համաձայն որի՝ Հայկ Սահակյանի մարմնական վնասվածքերը՝ գլխի, աջ ճակատագագաթային շրջանի սալջարդի ձևով, չէր կարող առաջանալ մերկ բռունցքով, վերջինի առաջացումը հնարավոր է գարեջրի ապակյա տարայի ներգործության /հարվածի/ հետևանքով: Հայկ Սահակյանի մարմնական վնասվածքները՝ ձախ ախտակնակապճային շրջանների սալջարդ վերքերի, ենթամաշկային և ենթաշաղկապենինային արյունազեղումների, արյունահավաքի, ձախ աչքի սկլերայի թափանցող, անոթաթաղանթի արտանկումով՝ վերքի ձևով, հասցվել են սահմանափակ, արտացցված մակերեսներ կամ եզրեր ունեցող բուր, կոշտ առարկաներով, քիչ հավանական է՝ մերկ բռունցքով, չի բացառվում՝ գարեջրի ապակյա /հավանական է՝ կոտրված/ տարայով, սակայն դատաքննությամբ որևէ կերպ չսպացուցվեց, որ տուժող Հայկ Սահակյանին շշով հարվածել են դեպքի օրը անգամ իր ցուցմունքով տուժողն նշեց, որ զբաղվում է սպորտով, և իր վնասվածքների մեծ մասն առաջացել է այդ ժամանակ:

Ամբաստանյալներ Գևորգ Խաչատրյանին և Սամվել Քրմոյանին առաջադրված մեղադրանքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, չհիմնավորվեց նաև դատարանում հետազոտված ապացույցներով.
(...)

Միաժամանակ (...) դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Սամվել Քրմոյանը և Գևորգ Խաչատրյանը դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտելով հասարակության նկատմամբ, բռնության գործադրմամբ, խմբի կազմում կատարել են խուլիգանություն.

(...)

Այսպիսով, դատարանը հիմնավորված է համարում, որ ամբաստանյալներ Գևորգ Խաչատրյանը և Սամվել Քրմոյանը կատարել են առարք, որը համապատասխան է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասին» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 173-227):

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանը (...), քննության առնելով քրեական գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ, գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության՝ Գևորգ Խաչատրյանի և Սամվել Քրմոյանի կողմից կատարված առարքի որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ճիշտ չէ:

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն հանգամանքը, որ սույն գործով տուժողներ Լև Բուլատովը, Հայկ Սահակյանը, վկաներ Դավիթ Սարգսյանը և Մարիամ Սահակյանը հանդիսանում են ՌԴ քաղաքա-

ցիներ, կրթություն են ստացել ռուսերեն լեզվով, հայերեն լեզվին բանավոր և գրավոր չեն տիրապետում, իսկ քննչական գործողությունների ընթացքում թարգմանիչ չի մասնակցել, հանդիսանում է դատավարական գործողության կատարման կարգի էական խախտում, քանի որ հանգեցրել է դատավարության մասնակիցների՝ օրենքով երաշխավորված իրավունքների սահմանափակման և ազդել է ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Հետևաբար, տուժողներ Լև Բուլատովի, Հայկ Սահակյանի, վկաներ Գավիթ Մարգարյանի և Մարիամ Սահակյանի ցուցմունքները, լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունները, առերես հարցաքննության մասին արձանագրությունները որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնավոր են և բխում են գործի նյութերից:

(...)

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը հիմնավոր կերպով գտել է, որ Գևորգ Խաչատրյանը և Սամվել Քրմոյանը բռնության գործադրմամբ, խմբի կազմում կատարել են խուլիգանություն, այսինքն՝ վերջիններիս կողմից կատարված արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Միևնույն ժամանակ վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, հիմնավորված համարելով, որ ամբաստանյալներ Գևորգ Խաչատրյանը և Սամվել Քրմոյանը կատարել են արարք՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, դատական ակտում նշել է, որ վերջիններս կատարել են արարք, որը համապատասխան է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասին (...)(տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 59-70):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է անօրինական, անհիմն և չպատճառաբանված դատական ակտ: Ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 12-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 25-րդ, 127-րդ և 358-րդ հոդվածների պահանջները:

10. Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկների՝ բողոքաբերը վերլուծել է քրեական դատավարության՝ լեզվի սկզբունքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-72/07 և ապացույցների թույլատրելիության վերաբերյալ՝ թիվ ԵԲԲԳ/0295/01/08 որոշումներով արտահայտված

իրավական դիրքորոշումները, համադրել դրանք սույն գործի փաստական հանգամանքների հետ և գտել, որ մի շարք ապացույցներ անիրավաչափորեն ճանաչվել են անթույլատրելի՝ դատավարության որոշ մասնակիցների կողմից հայերենին չտիրապետելու պատճառաբանությամբ: Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ տուժողներ Հայկ Սահակյանի, Լև Բուլատովի, վկաներ Դավիթ Սարգսյանի, Մարիամ Սահակյանի ցուցմունքները, լուսանկարով անձանց ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունները, առերես հարցաքննության մասին արձանագրություններն անթույլատրելի ապացույցներ ճանաչելիս դատարանների կողմից համապատասխան գնահատականի չի արժանացել այն հանգամանքը, որ նշված քննչական գործողությունները կատարելիս նախաքննության մարմինը դատավարության մասնակիցներին պարզաբանել է օրենքով տրաչխավորված իրենց իրավունքները: Ուստի բողոք բերած անձը եզրահանգել է, որ քննարկվող ապացույցներն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի հետևություններն անհիմն են և չեն բխում գործի նյութերից:

Բողոքաբերը գտել է նաև, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի դատողություններն այն մասին, որ դատաքննությամբ չի ապացուցվել տուժող Հայկ Սահակյանին դեպքի օրը շշով հարվածելու հանգամանքը: Ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարանը նման եզրահանգման է եկել ոչ թե գործում առկա ապացույցները համակցության մեջ գնահատելու արդյունքում, այլ կանխակալ մոտեցում է ցուցաբերել դրանց, և ապացույցների մի մասին (տուժող Հայկ Սահակյանի ցուցմունքներ) մյուսների նկատմամբ (փորձաքննությունների եզրակացություններ) առավել նշանակություն է տվել:

11. Վերոգրյալի հետ մեկտեղ՝ բողոք բերած անձը վկայակոչել է դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԳ/0058/11/09, թիվ ԵԿԳ/0030/01/12 և թիվ ԱՐԳ/0121/01/11 որոշումները և նշել, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում բարձրացված՝ ամբաստանյալներ Գ.Խաչատրյանին և Ս.Քրմոյանին մեղսագրվող արարքի հիմնավորվածության վերաբերյալ հարցին՝ կայացնելով չպատճառաբանված դատական ակտ: Ըստ բողոքի հեղինակի՝ տուժողներ Հայկ Սահակյանի, Լև Բուլատովի, վկաներ Դավիթ Սարգսյանի, Մարիամ Սահակյանի ցուցմունքները, լուսանկարով անձանց ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունները, առերես հարցաքննության մասին արձանագրություններն անթույլատրելի ճանաչելու պայմաններում ստորադաս դատարանը չի հստակեցրել, թե որ ապացույցների հիման վրա է հաստատված համարում ամբաստանյալների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարք կատարելու հանգամանքը:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց՝ իրենց համար հասկանալի լեզվով հանդես գալու իրավունքի և այդ իրավունքի դատավարական լրացուցիչ երաշխիքների էական խախտման հիման վրա ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հիմքի մեկնաբանման առնչությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, ուստի անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ են արդյոք ապացույցների թույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝

1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

(...)

2) (...) դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ.

(...)

2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների գրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:

Ապացույցների թույլատրելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Մարգարյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը

կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: (...)» (տե՛ս Արմեն Սեյրանի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ Ե-ԲԲԴ/0295/01/08 որոշման 15-րդ կետը):

Մեկ այլ՝ Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Ապացույցների թույլատրելիության հատկանիշը վերաբերում է դրանց ձևական կողմին: Դրա էությունը կազմում է ապացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված դատավարական պահանջների պահպանվածությունը և ենթադրում է.

- աղբյուրի օրինականություն՝ ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մաս),

- ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները,

- դատավարական ձևակերպում՝ ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն դատավարական ձևակերպման,

- լիազորված սուբյեկտ՝ այն պետք է ստացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից:

Ապացույցն անթույլատրելի ճանաչելու հիմքերը հստակ սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով» (տե՛ս Արարատ Ավագի Ավագյանի և Վահան Սերյոժայի Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 31.1-րդ կետը):

16. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է»:

ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ «Ընդ որը հավասար են օրենքի առջև»: Իսկ 29-րդ հոդվածը նախատեսում է. «Խտրականությունը, կախված (...) լեզվից (...), արգելվում է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն: Քրեական դատավարության ընթացքում յուրաքանչյուր ոք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց իրավունքները:

3. Քրեական դատավարության լեզվին չտիրապետող համապատասխան անձանց տրվում են սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեններն այն լեզվով, որին նրանք տիրապետում են»:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ Սահմանադրությունը, հայերենը սահմանելով որպես պետական լեզու, երաշխավորում է օրենքի առջև բոլորի հավասարությունը և խտրականության արգելքը՝ կախված լեզվից:

Դրան համապատասխան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածը, որն ամրագրում է քրեական դատավարության սկզբունքներից մեկը, սահմանում է, որ քրեական դատավարությունը տարվում է հայերեն: Դրա հետ մեկտեղ այն իրավունք է վերապահում յուրաքանչյուրին, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, քրեական դատավարության ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին նա տիրապետում է՝ որպես երաշխիք, ի թիվս այլնի, սահմանելով, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրենց բոլոր իրավունքները:

Դատավարության այս սկզբունքը քրեական վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում է քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց ոչ միայն պարզաբանել իրենց համար հասկանալի լեզվով հանդես գալու նրանց իրավունքը, այլև դրա իրականացումն ապահովել այնպես, որ չսահմանափակվեն և իրականում իրագործվեն ինչպես գործի քննության ցանկացած փուլում իրենց լեզվով հանդես գալու, այնպես էլ մյուս բոլոր այն իրավունքները, որոնք փոխկապակցված են այդ իրավունքի հետ և երաշխավորված են օրենքով: Քրեադատավարական օրենքի սկզբունքների փոխկապակցվածությունն արտահայտվում է նաև նրանով, որ առանց հասկանալի լեզվով հանդես գալու ազատության իրացման հնարավորության անհնար է արդարադատության այնպիսի հիմնարար սկզբունքների իրականացումը, ինչպիսիք են պաշտպանության իրավունքի ապահովումը, գործի արդարացի քննությունը, օրինականությունը, օրենքի առջև բոլորի հավասարությունը, մրցակցությունը (տե՛ս Նաիրա Վախթանգի Գելաշվիլու գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշման 4.1-րդ կետը):

17. Վերահաստատելով և զարգացնելով Ն. Գելաշվիլու գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության լեզվին չտիրապե-

տող անձանց՝ իրենց համար հասկանալի լեզվով հանդես գալու իրավունքը պետք է ապահովվի դատավարության բոլոր փուլերում: Հարկ է նշել նաև, որ դատավարության լեզվին չտիրապետող մասնակիցները նշված իրավունքից պետք է բարեխղճորեն օգտվեն: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական դատավարության մասնակիցները պետք է համապատասխան հայտարարությամբ հանդես գան, ավելի կոնկրետ՝ քրեական վարույթն իրականացնող մարմնին պետք է հայտնեն (բանավոր կամ գրավոր կերպով) իրենց մայրենի լեզվով կամ այն լեզվով հանդես գալու մասին, որին տիրապետում են, ինչը հնարավորություն կընձեռի ողջ ծավալով օգտվել քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված իրենց իրավունքներից:

Մինևույն ժամանակ դատարանը, քննիչը, հետաքննության մարմինը, դատավարությանը մասնակցող անձանց պարզաբանելով նրանց իրավունքներն ու պարտականությունները և ապահովելով դրանց իրականացման հնարավորությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մաս), պարտավոր են համոզվել, որ դատավարությանը մասնակցող անձի կողմից հայերենին տիրապետելու աստիճանն ակնհայտորեն բավարար է նրա կողմից իր իրավունքները և պարտականություններն իրականացնելու համար:

Դատավարության մասնակցի կողմից իր իրավունքների և պարտականությունների իրականացման համար բավարար աստիճանի հայերենին տիրապետելու հանգամանքի գնահատումը յուրաքանչյուր դեպքում պետք է կատարվի գործի փաստերի հիման վրա: Ընդ որում, վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է հաշվի առնվեն նաև դատավարությանը մասնակցող անձի մայրենի լեզուն, նրա ծննդավայրը և բնակության վայրը, տվյալ վայրում բնակության ժամանակահատվածը, քաղաքացիությունը, կրթությունը, աշխատանքի վայրը և բնույթը, շրջապատի հետ հաղորդակցվելու լեզուն և այլ հանգամանքներ: ՀՀ քրեական դատավարության լեզվին չտիրապետող կարող են համարվել այն անձինք, ովքեր չեն հասկանում բանավոր և (կամ) գրավոր հայերեն խոսքը կամ չեն կարողանում բանավոր և (կամ) գրավոր կերպով բավարար չափով արտահայտվել հայերենով:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, ելնելով գործի արդարացի քննության, մրցակցության, կողմերի հավասարության, օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի պահանջներից, դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների լրացուցիչ երաշխիքներ է նախատեսել, իսկ դրանց էական խախտումը նախատեսել է որպես ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության հիմք: Մինևույն ժամանակ քննարկվող հիմքով այս կամ այն ապացույցն անթույլատրելի ճանաչելիս վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է գործի փաստերի հիման վրա, գնահատելով դատավարությանը մասնակցող անձի մայրենի լեզվի, նրա ծննդավայրի և բնակության վայրի, տվյալ վայրում բնակության ժամանակահատվածի,

քաղաքացիության, կրթության, աշխատանքի վայրի և բնույթի, շրջապատի հետ հաղորդակցվելու լեզվի և այլ հանգամանքների վերաբերյալ տվյալները, հաստատված համարել, որ տվյալ անձը բավարար չափով չի տիրապետում դատավարության լեզվին, և վարույթն իրականացնող մարմինը չի ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված պահանջները:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալներ Գևորգ Խաչատրյանին և Սամվել Քրմոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք 2013 թվականի հունվարի 3-ին՝ ժամը 2-ի սահմաններում, ինքնությունը չպարզված երկու անձնավորությունների հետ Երևան քաղաքի Խանջյան փողոցի թիվ 41 հասցեում գործող «Բրիջ» ակումբում անհիմն վիճաբանել են ակումբի տնօրեն Լև Բուլատովի, մենեջերներ Դավիթ Սարգսյանի և Մարիամ Սահակյանի ու վերջինիս եղբայր Հայկ Սահակյանի հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով, աղմկել են և հայհոյել, բռնություն գործադրել, այն է՝ Գ.Խաչատրյանը որպես զենք օգտագործվող առարկայով՝ սեղանի վրայից վերցրած գարեջրի ապակյա տարայով հարվածել է Հայկ Սահակյանի գլխի շրջանում, իսկ Ս.Քրմոյանը որպես զենք օգտագործվող առարկայով՝ սեղանի վրայից վերցրած գարեջրի ապակյա տարայով հարվածել է Հայկ Սահակյանի դեմքի շրջանին՝ նրա առողջությանը դիտավորությամբ պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, իրենց այդ դիտավորյալ գործողություններով խանգարել են ներկաների հանգիստը, խաթարել ակումբի բնականոն աշխատանքը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը տուժողներ Լև Բուլատովի և Հայկ Սահակյանի, վկաներ Դավիթ Սարգսյանի և Մարիամ Սահակյանի՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները, նրանց մասնակցությանը կատարված՝ լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունները, առերես հարցաքննությունների արձանագրությունները ճանաչել է անթույլատրելի, քանի որ նշված անձանց՝ Ռ.Գ. - քաղաքացիներ լինելու և ռուսերենով կրթություն ստանալու պայմաններում քննարկվող քննչական գործողություններին չի ապահովվել թարգմանչի մասնակցությունը: Ստորադաս դատարանը նշել է նաև, որ հիշյալ անձանց ցուցմունքների վերջում իրենց կողմից արված գրառումներից երևում է, որ դրանք արտատպված են:

Անդրադառնալով տուժողներ Լ.Բուլատովի և Հ.Սահակյանի՝ «10.10.2013 թվականին» տրված ցուցմունքներին՝ Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ նշված ապացույցը ևս անթույլատրելի է, քանի որ ձեռք է բերվել վարույթն իրականացնող մարմին չհանդիսացող քննիչի կողմից, ինչպես նաև չի ապահովվել թարգմանչի մասնակցությունը:

Անդրադառնալով տուժող Հայկ Սահակյանի մարմնական վնասվածքների առաջացման վերաբերյալ դատաբժշկական փորձաքննության քիվ 812 եզրակացության մեջ շարադրված հանգամանքներին՝ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ տուժողին շոկ հարվածելու փաստը դատաքննությամբ չի ապացուցվել, իսկ Հ.Սահակյանն ինքը նշել է սպորտով զբաղվելու և այդ ընթացքում վնասվածքներ ստանալու մասին:

Վերոգրյալի հիման վրա Առաջին ատյանի դատարանը հիմնավորված չի համարել ամբաստանյալներ Գ.Խաչատրյանին և Ս.Քրմոյանին մեղաազարկող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքը՝ գտնելով, որ ամբաստանյալների գործողությունները համապատասխանում են նույն օրենսգրքի «258-րդ հոդվածի 3-րդ մասով» նախատեսված արարքի հատկանիշներին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, գտել է, որ ստորադաս դատարանը նյութական և դատավարական օրենքի էական խախտումներ թույլ չի տվել՝ պահպանելով ապացույցների հավաքման, ստուգման և գնահատության վերաբերյալ քրեադատավարական օրենսդրության պահանջները: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ քրեական գործով ձեռք բերված ապացույցները վկայում են ամբաստանյալներ Գ.Խաչատրյանին և Ս.Քրմոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղավոր ճանաչելու հիմքերի բացակայության մասին:

Մինևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը հիմնավորված է համարել Գ.Խաչատրյանի և Ս.Քրմոյանի կողմից բռնության գործադրմամբ, խմբի կազմում խուլիգանություն կատարելու հանգամանքը, ինչը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, սակայն դատավճռում արձանագրել է ամբաստանյալների կողմից կատարված արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

20. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 15-18-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է հետևյալը.

ա) ստորադաս դատարանները, Լև Բուլատովի, Մարիամ Սահակյանի և Դավիթ Սարգսյանի հարցաքննությունների, առերես հարցաքննությունների, նրանց մասնակցությամբ կատարված՝ անձանց լուսանկարով ճանաչման ներկայացնելու արձանագրություններն անթույլատրելի ապացույց ճանաչելով, նշված անձանց կողմից դատավարության լեզվին չտիրապետելու հանգամանքը հաստատված են համարել՝ հաշվի առնելով միայն նրանց կրթության և քաղաքացիության վերաբերյալ տվյալները:

բ) նախաքննության ընթացքում տուժող Լև Բուլատովի, վկաներ Մարիամ Սահակյանի և Դավիթ Սարգսյանի հարցաքննությունների և

նրանց մասնակցությամբ կատարված՝ անձանց լուսանկարով ճանաչման ներկայացնելու արձանագրությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քննարկվող փաստաթղթերում առկա են նշված անձանց կողմից արված գրառումներ, որոնք հաստատում են Լ.Բուլատովի, Մ.Սահակյանի և Դ.Սարգսյանի՝ հայերենին բավարար չափով տիրապետելու հանգամանքը (տե՛ս սույն որոշման 6-6.3-րդ կետերը): Բացի այդ, գործի նյութերում առկա չէ որևէ փաստական տվյալ առ այն, որ տուժող Լև Բուլատովը, վկա Մարիամ Սահակյանը կամ վկա Դավիթ Սարգսյանը տեղական ժամանակ ընթացող դատավարության որևէ փուլում (այդ թվում՝ դատաքննության ժամանակ) հայտարարել են հայերենին չտիրապետելու և այլ լեզվով հանդես գալու ցանկության մասին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները Լև Բուլատովի, Մարիամ Սահակյանի և Դավիթ Սարգսյանի կողմից դատավարության լեզվին չտիրապետելու փաստը հաստատելիս պատշաճ գնահատման չեն ենթարկել գործի նյութերում առկա տվյալները, չեն պարզել և գնահատման չեն ենթարկել նաև նրանց ծննդավայրի և բնակության վայրի, տվյալ վայրում բնակության ժամանակահատվածի, կրթության, աշխատանքի վայրի և բնույթի, շրջապատի հետ հաղորդակցվելու լեզվի վերաբերյալ տվյալները: Սույն գործի նյութերում անգամ առկա է Լև Բուլատովի անունից հարկային տեսչության պետին ուղղված **ձեռագիր** հայերենով գրված հայտարարության պատճենը (տե՛ս սույն որոշման 6.4.-րդ կետը), ինչը կարող է էական նշանակություն ունենալ պարզելու համար նշված անձի՝ հայերենին տիրապետելու հանգամանքը: Ստորադաս դատարաններն անտեսել են այն, որ գործի նյութերում առկա չէ որևէ փաստ, որը կպարտավորեցներ վարույթն իրականացնող մարմնին ձեռնարկելու համապատասխան գործողություններ, այդ թվում՝ հրավիրելու թարգմանիչ: Նման պայմաններում անհիմն են Լև Բուլատովի, Մարիամ Սահակյանի և Դավիթ Սարգսյանի հարցաքննությունների և առերես հարցաքննությունների, նրանց մասնակցությամբ կատարված՝ անձանց լուսանկարով ճանաչման ներկայացնելու արձանագրությունները՝ ապացույցների ձեռքբերման կարգի էական խախտման հիմքով անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումները:

Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանությանը, որ վերոնշյալ անձանց ցուցմունքների վերջում իրենց կողմից արված գրառումներն արտատպված են, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս պարագայում անհրաժեշտ են ձեռագրաբանական բնույթի հատուկ գիտելիքներ (ընդ որում, այդ գիտելիքների առկայությունը վարույթն իրականացնող մարմնի (տվյալ դեպքում՝ դատարանի) մոտ չի ազատում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից): Ուստի առանց համապատասխան փորձաքննության նշանակման՝ հնարավոր չէ դատողություններ անել քննարկվող հարցի կապակցությամբ:

20.1. Անդրադառնալով տուժողներ Լև Բուլատովի և Հայկ Սահակյանի կողմից «10.10.2013 թվականին» տրված ցուցմունքները՝ վարույթն իրականացնող մարմին չհանդիսացող քննիչի կողմից ձեռքբերված լինելու հիմքով անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումներին՝ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը. սույն քրեական գործը քննիչ Հ.Մուշեղյանի կողմից վարույթ է ընդունվել 2013 թվականի **դեկտեմբերի 10-ի** որոշմամբ, ապա նույն օրվա երկու այլ որոշումներով Լև Բուլատովը և Հայկ Սահակյանը ճանաչվել են տուժողներ (տե՛ս սույն որոշման 6.5-րդ կետը): Վերջիններիս հարցաքննությունների արձանագրությունների ուսումնասիրությունից երևում է, որ դրանք վերնագրված են որպես **տուժողի** հարցաքննություն, և այդ արձանագրություններում նշված է «10.10.2013» ամսաթիվը (տե՛ս սույն որոշման 6.6-րդ կետը): Հարկ է նկատի ունենալ, որ Լ.Բուլատովը և Հ.Սահակյանը չէին կարող հարցաքննվել որպես տուժողներ «10.10.2013 թվականին», քանի որ այդ ժամանակ դեռևս վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ այդպիսի դատավարական կարգավիճակ չէին ստացել: Բացի այդ, գործի էջերի հերթական համարակալումից հետևում է, որ քննարկվող արձանագրությունները հաջորդում են Հ.Մուշեղյանի կողմից գործը վարույթ ընդունելու և Հայկ Սահակյանին և Լև Բուլատովին տուժող ճանաչելու վերաբերյալ որոշումներին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է գործի էջերի հերթական համարակալումը՝ դրանց կցման ժամանակագրական կարգով կատարելու պահանջ:

Վերոնշյալի հաշվառմամբ Վճարելի դատարանը գտնում է, որ տուժողներ Լև Բուլատովը և Հայկ Սահակյանը հարցաքննվել են 2013 թվականի դեկտեմբերի 10-ին, իսկ այդ անձանց հարցաքննությունների արձանագրություններում նշված՝ «10.10.2013» ամսաթիվը տեխնիկական վրիպակ է, ինչը պատշաճ գնահատման չի ենթարկվել ստորադաս դատարանների կողմից: Այս պայմաններում Վճարելի դատարանը հիմնավորված չի համարում տուժողներ Լև Բուլատովի և Հայկ Սահակյանի «10.10.2013 թվականին» հարցաքննության արձանագրություններն անթույլատրելի ապացույց գնահատելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունները, քանի որ նկարագրված խախտումն իր բնույթով էական չէ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի իմաստով ապացույցն անթույլատրելի ճանաչելու հիմք չէ:

21. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ սույն գործով ապացույցների թույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները խախտել են ապացույցները գնահատելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջները, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին

չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հիմք են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում անհրաժեշտ է գործի հանգամանքների բազմակողմանի վերլուծության և գնահատման արդյունքում վերացնել սույն որոշմամբ արձանագրված խախտումները և դրանց արդյունքներով օրենքով սահմանված կարգով հանգել համապատասխան հետևության:

Ինչ վերաբերում է ամբաստանյալներ Գ.Խաչատրյանին և Ս.Քրմոյանին մեղսագրվող արարքների հիմնավորվածության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված հարցին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Գ.Լորգ Համլետի Խաչատրյանի և Սամվել Աշոտի Քրմոյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*
Դատավորներ՝ *ստորագրություններ*

9.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՄԴ/0079/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ
դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դատախազ
ամբաստանյալ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՈՍԿԱՆՅԱՆԻ
Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արմինե Ազատի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ տուժող Ե.Փարսաղանյանի և տուժողի ներկայացուցիչ Գ.Ռամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Մալաթիայի քննչական բաժնում 2013 թվականի մարտի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 16113613 քրեական գործը:

2013 թվականի հուլիսի 10-ին Արմինե Մանուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Վերջինիս նկատմամբ

որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2. 2013 թվականի օգոստոսի 1-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 19-ի դատավճռով Ա.Մանուկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: Տուժող Ե.Փարսադանյանի ներկայացրած քաղաքացիական հայցով վարույթը կարճվել է նույն քաղաքացիական հայցով դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով:

3. Ամբաստանյալ Ա.Մանուկյանի պաշտպան Լ.Ավետիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ թիվ ԵՄԴ/0079/01/13 քրեական գործի վարույթը կարճել և Ա.Մանուկյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ տուժող Ե.Փարսադանյանը և տուժողի ներկայացուցիչ Գ.Ռամազյանը բերել են վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Մանուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, Ե.Փարսադանյանի վստահությունը չարաշահելով, փաստաբանական ծառայություններ իրականացնելու պատրվակով 2010 թվականի հուլիսին խաբեությամբ վերցրել է 2.567.670 ՀՀ դրամին համարժեք 7.000 ԱՄՆ դոլար գումար, սակայն ոչ մի գործողություն չի կատարել և հափշտակել է նշված գումարը՝ պատճառելով խոշոր չափերի հասնող նյութական վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 154):

6. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է. «(...) *Դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, հետազոտելով և գնահատելով ապացույցներն իրենց վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից՝ հիմնված ներքին համոզմամբ, հանգում է այն հետևության, որ Արմինե Մանուկյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի*

2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքը, որը որակվում է որպես խարդախություն՝ խաբեությանը և վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակություն, նշված հանցավոր արարքն ամբաստանյալը կատարել է մեղավորությամբ, այն որակված է ճիշտ, և վերջինս քրեական պատասխանատվության և պատժի է ենթակա ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (...)) (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 298):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Ա.Մանուկյանին մեղաազարվում է միջին ծանրության հանցագործություն, հետևաբար նա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքը ավարտված համարելու օրվանից անցել է հինգ տարի:

Ըստ մեղադրական եզրակացության՝ ամբաստանյալը ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղաազարված հանցագործությունը կատարել է 2010թ. հուլիս ամսին:

Վաղեմության ժամկետի ընթացքում ամբաստանյալը չի կատարել օրենքով նախատեսված որևէ խախտում, այսինքն՝ լրացել է քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը (...)) (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 85):

8. Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրամադրված պահանջագրի համաձայն՝ Ա.Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-312-րդ հոդվածի 2-րդ մասով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առկա է հարուցված քրեական գործ (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 77):

9. Գործում առկա տվյալների համաձայն՝ Երևանի Արաբկիր և Բանաբեռ-Չեյքուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում Ա.Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-312-րդ հոդվածի 2-րդ մասով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քննվում է թիվ ԵԱԲԳ/0212/01/14 քրեական գործը (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 79-80):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

10. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերների պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտն ակնհայտ անհիմն է և անօրինական, ուստի ենթակա է բեկանման:

Բողոքի հեղինակները փաստել են, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը: Մասնավորապես, դատարանն անտեսել է դատաքննության ժամանակ իրենց ներկայացրած միջնորդությունը, ինչպես նաև մեղադրողի կողմից ներկայացված հիմքերն այն մասին, որ ամբաստանյալ Ա.Մանուկյանը կրկին կատարել է միջին ծանրության հանցանք, որի վերաբերյալ առկա է մեղադրական եզրակացություն, իսկ քրեական գործը քննվում է Երևանի Արաբկիր և Բանաբեռ-Չեյքուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առա-

ջին ատյանի դատարանում: Հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ - հոդվածով սահմանված վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվել է, և հաշվարկը պետք է սկսվի նոր հանցանքն ավարտված համարելու պահից:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է վճարել բողոքն ընդունել վարույթ և բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի դատական ակտը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. պատճառաբանված է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Ա.Մանուկյանին մեղսագրված արարքի վաղեմության ժամկետներն անցած լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորյալ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև անզուտությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը (...):»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

(...)

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից:

(...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Խարդախությունը, որը կատարվել է՝*

(...)

2) խոշոր չափերով,

(...)

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատագրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Մեջբերված քրեաիրավական նորմերի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նկարագրված արարքը դիտավորյալ հանցագործություն է, որի համար առավելագույն պատիժ է նախատեսված ազատագրկում՝ մինչև հինգ տարի ժամկետով, ուստի այն համարվում է միջին ծանրության հանցանք: Հետևաբար վերոնշյալ արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է հինգ տարի, և այդ ընթացքում վերջինս քրեական օրենսգրքով նախատեսված որևէ այլ արարք չի կատարել, այսինքն՝ վաղեմության ժամկետի ընթացքը չի ընդհատվել:

Վաղեմության ժամկետի ընդհատման առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ս.Ղամբարյանի և մյուսների գործով որոշմամբ՝* նշելով. *«(...) նոր կատարված հանցագործությունն ընդհատում է նախկին հանցագործության վաղեմության ժամկետի ընթացքը հետևյալ պայմանների առկայության դեպքում՝*

- 1. նախկին հանցագործությունն ավարտվել է, և օրենքով դրա համար սահմանված վաղեմության ժամկետը դեռևս չի անցել,*
- 2. նոր կատարվածը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն է:*

Վաղեմության ժամկետի ընդհատվելու դեպքում նախորդ հանցանքի համար ընթացող ժամկետը չեղյալ է համարվում, և հաշվարկը վերսկսվում է նոր հանցագործության ավարտման պահից: Այլ կերպ ասած՝ նոր հանցանքի կատարմամբ նախկին հանցագործության համար նախատեսված վաղեմության ժամկետը չի վերանում, իսկ ինչպես նոր հանցանքի, այնպես էլ նախկին հանցանքի համար օրենքով սահմանված վաղեմության ժամկետները սկսվում են հաշվարկվել նոր հանցանքի ավարտման պահից՝ յուրաքանչյուր հանցագործության համար ինքնուրույն:

Վերոնշյալ դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ վաղեմության ժամկետը կապված է կոնկրետ հանցագործության հետ և կրում է ինքնուրույն բնույթ: Այդ պատճառով, եթե անձը միաժամանակ կատարում է երկու կամ ավելի հանցագործություն, դրանցից յուրաքանչյուրի համար վաղեմության ժամկետը պետք է հաշվարկվի առանձին: Հետևաբար հանցագործություններից մեկի համար վաղեմության ժամկետի ավարտի դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից այդ հանցագործության համար, սակայն մյուսների համար, որոնց վաղեմության ժամկետները չեն անցել, անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ընդհանուր կարգով» (տե՛ս Սիրաժ Ղամբարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԳ/0055/01/11 որոշման 21-րդ կետը):

12.1. Այսպիսով, վաղեմության ժամկետն անցնելու հիմքով անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցագործությունն ավարտված համարվելու պահից անցել են օրենքով սահմանված ժամկետները, և դրանք չեն ընդհատվել նոր հանցագործությամբ: Հակառակ պարագայում, եթե գործում առկա են անձի կողմից նոր հանցանք կատարելու վերաբերյալ փաստական տվյալներ, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի պարզելու՝ արդյոք տվյալ հանցագործությունը ընդհատել է կոնկրետ գործով վաղեմության ժամկետի ընթացքը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ֆ.Գալստյանի* գործով որոշման մեջ՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:*

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման (...)» (տե՛ս Ֆ.Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

Վերահաստատելով *Ֆ.Գալստյանի* գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Գ.Խնուսյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է. *«(...) [Հ]աշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ*

պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: (...)» (տե՛ս Գ.Խնուսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԳ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

14. Սույն որոշման 12.1-րդ և 13-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումներից բխում է, որ յուրաքանչյուր դեպքում վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս դատարանը պարտավոր է իր դատական ակտում պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության: Մասնավորապես, դատարանը պարտավոր է դատական ակտում նշել՝ առկա են արդյոք ամբաստանյալի կողմից նոր հանցանք կատարելու վերաբերյալ տվյալներ և ինչպիսի իրավական նշանակություն ունեն դրանք (նոր հանցագործությունն ընդհատել է արդյոք նախկին հանցագործության վաղեմության ժամկետները, թե՛ ոչ), ինչպես նաև՝ որ իրավաճորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս: Գատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերոնշյալ պահանջների պահպանման պարագայում միայն վերադաս դատարանը հնարավորություն կունենա ստուգելու կայացված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը:

15. Գործի նյութերից հետևում է, որ Ա.Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա փաստաբանական ծառայություններ մատուցելու պատրվակով Ե.Փարսադանյանից խաբեությամբ վերցրել է 2.567.670 ՀՀ դրամին համարժեք 7.000 ԱՄՆ դոլար գումար, սակայն այդ ուղղությամբ որևէ գործողություն չի կատարել (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հետազոտելով և գնահատելով գործում առկա ապացույցները, հաստատված է համարել Ա.Մանուկյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքը կատարելու մեջ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ Ա.Մանուկյանին մեղսագրված է միջին ծանրության հանցանք, որը կատարվել է 2010 թվականի հուլիսին: Վաղեմության ժամկետի ընթացքում ամբաստանյալը որևէ իրավախախտում չի կատարել, հետևաբար անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Մինչդեռ գործի նյութերում առկա են ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված տվյալներ այն մասին, որ Ա.Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-312-րդ հոդվածի 2-րդ մասով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առկա է հարուցված քրեական գործ, ինչպես նաև տվյալներ՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում Ա.Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-312-րդ հոդվածի 2-րդ մասով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քննվող թիվ

ԵԱԶԳ/0212/01/14 քրեական գործի առկայության վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 8-9-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանի դատական ակտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ հանգամանքներին որևէ անդրադարձ չի կատարվել, չի պարզվել, թե Ա.Մանուկյանին մեղսագրվող վերոնշյալ ենթադրյալ հանցանքները երբ են կատարվել, արդյոք դրանք կարող էին ընդհատել սույն գործով ամբաստանյալին մեղսագրվող արարքի վաղեմության ժամկետի ընթացքը: Վերաքննիչ դատարանը բավարարվել է միայն նշելով, որ վաղեմության ժամկետի ընթացքում ամբաստանյալը որևէ իրավախախտում չի կատարել, սակայն այդ դիրքորոշումը չի պատճառաբանել՝ անտեսելով, որ գործում առկա է նրա կողմից ենթադրյալ հանցանք կատարելու վերաբերյալ տվյալներ:

16. Սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետում մեջբերված փաստական տվյալները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի իմաստով Վերաքննիչ դատարանը վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով Ա.Մանուկյանին քրեական պատասխանատվությունից ազատելիս պարտավոր էր նշել և իրավական գնահատական տալ ամբաստանյալի կողմից այլ ենթադրյալ հանցանքներ կատարած լինելու վերաբերյալ գործի նյութերում առկա փաստական տվյալներին՝ պատճառաբանելով վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չլինելու վերաբերյալ իր դիրքորոշումը:

Հետևաբար Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Ա.Մանուկյանին մեղսագրված արարքի վաղեմության ժամկետներն անցած լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը պատճառաբանված չէ:

Վերոշարադրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտ, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով, քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է դատական ակտը բեկանելու և նոր քննության ուղարկելու համար: Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնա Ա.Մանուկյանի կողմից ենթադրյալ այլ հանցանքներ կատարած լինելու վերաբերյալ գործում առկա տվյալներին, պարզի, թե այդ ենթադրյալ հանցանքները երբ են կատարվել, արդյոք դրանք կարող էին ընդհատել սույն գործով ամբաստանյալին մեղսագրվող արարքի վաղեմության ժամկետի ընթացքը և համապատասխան եզրահանգումները շարադրելով իր դատական ակտում՝ հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության

քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արմինե Ազատի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԶԴ/0024/11/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
դիմող

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Փ.ԹԵՐՈՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ
քրեական դատարանի 2015 թվականի հուլիսի 15-ի որոշման դեմ ՀՀ գլ-
խավոր դատախազի տեղակալ Հր.Բաղալյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Մ.Հա-
րությունյանի 2013 թվականի հունվարի 21-ի որոշմամբ Ա.Աղաջանյանի
կողմից խարդախությամբ Փնջիկ Թերոյանից առանձնապես խոշոր չա-
փերով՝ 22.000 ԱՄՆ դոլար գումար հափշտակելու դեպքի առթիվ հարուց-
ված թիվ 62207512 քրեական գործի վարույթը կարճվել է, և Ա.Աղաջանյա-
նի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցակազմի
բացակայության հիմքով:

2014 թվականի օգոստոսի 27-ին Հելսինկյան քաղաքացիական ա-
սամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Ա.Սարունցը ՀՀ հատուկ

քննչական ծառայություն հաղորդում է ներկայացրել այն մասին, որ թիվ 62207512 քրեական գործով նախաքննության ընթացքում ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Մ.Հարությունյանի և նույն բաժանմունքի ավագ քննիչ Ս.Մխիթարյանի կողմից կատարվել են խախտումներ, մասնավորապես, մի շարք գնություններ կատարվել են առանց ընթերակաների:

ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Ա.Մինասյանը (այսուհետ նաև՝ Քննիչ) 2014 թվականի սեպտեմբերի 16-ին որոշում է կայացրել Ա.Սաքունցի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

2014 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ քրեական գործ հարուցելը մերժելու մասին հիշյալ որոշումը վերացվել է, և դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

Քննիչի 2014 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործն ընդունվել է վարույթ, և դրան շնորհվել է թիվ 62226614 համարը:

Քննիչի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ Մ.Հարությունյանի և Ս.Մխիթարյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրանց արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և գործի վարույթը կարճվել է:

Քննիչի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի որոշման դեմ Փնջիկ Թերոյանի և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի բողոքները ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության դատախազ Է.Արամյանի համապատասխանաբար 2015 թվականի հունվարի 28-ի և փետրվարի 5-ի որոշումներով մերժվել են:

2. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2015 թվականի մայիսի 19-ի որոշմամբ Քննիչի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի որոշման դեմ Փ.Թերոյանի և Ա.Սաքունցի բողոքները մերժել է:

3. Փ.Թերոյանի և Ա.Սաքունցի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մայիսի 19-ի որոշումը բեկանել և Քննիչի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը վերացրել է:

4. Վերաքննիչ դատարանի 2015 թվականի օգոստոսի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանը:

5. Դատավարության մասնակիցներ Փ.Թերոյանի և Ա.Սաքունցի կողմից 2015 թվականի նոյեմբերի 18-ին ներկայացվել է վճռաբեկ բողոքի

պատասխան, որտեղ վերջիններս, գտնելով, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է օրինական և հիմնավորված դատական ակտ, խնդրել են այն թողնել օրինական ուժի մեջ՝ մերժելով վճարելի բողոքը:

Վճարելի դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի համաձայն՝ «ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մինասյանի 26.12.2014թ.-ի թիվ 62226614 քրեական գործով Սիեր Հարությունյանի և Սասուն Մխիթարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության հիմքով նրանց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը կայացվել է օրենքին համապատասխան, և որևէ անձի իրավունքներն ու ազատությունները խախտված չեն, ուստի ներկայացված բողոքները ենթակա են մերժման» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 88):

7. Վերաքննիչ դատարանը, ստուգելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, բեկանել է այն և վերացրել Քննիչի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը:

Անդրադառնալով վարույթն իրականացնող մարմնին՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելուն պարտավորեցնելու հարցին՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածը շահագրգիռ անձին իրավունք է տալիս քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումները բողոքարկել սկզբում դատախազին, իսկ դատախազի կողմից չբավարարվելու դեպքում՝ դատարան: Իսկ 264-րդ հոդվածի 1-ին մասը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ - հոդվածի տրամաբանական շարունակությունն է, առանց բացառության նախատեսում է ընդհանուր կարգավորում, համաձայն որի՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու դեպքում քրեական գործով վարույթը վերսկսվում է: Վերը նշված նորմերի իմաստային վերլուծությունը Վերաքննիչ դատարանին բերում է այն հետևության, որ կարճման որոշումը վերացնելու իրավասությունը հավասարապես վերապահված է ինչպես դատախազին, այնպես էլ՝ դատարանին» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 72):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ, քանի որ դատական ակտ կայացնելիս դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Բողոքաբերը, մասնավորապես, փաստարկել է, որ ստորադաս դատարանը, վերացնելով Քննիչի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 290-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի պահանջները, քանի որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը վերացնելու իրավունքը պատկանում է բացառապես դատախազին, իսկ դատարանը կարող է միայն որոշում կայացնել անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

Բողոքաբերի պնդմամբ՝ բողոքարկվող դատական ակտը հակասում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲԳ-1/0003/11/08, Լաուրա Չարյանի գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ-0081/11/09 որոշումներին և ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԳՈ-844 որոշմանը:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի կողմից փաստարկված՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դատական ստուգման սահմանների կապակցությամբ առկա է առերևույթ հակասություն Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի և Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումների, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշման միջև (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Ուստի, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր գործառնության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերոնշյալ դատական ակտերի միջև հակասությունների առկայության հարցին:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է արդյոք Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲԳ-1/0003/11/08, Լաուրա Չարյանի գործով 2010

թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿՂ/0081/11/09 որոշումներին և ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԳՈ-844 որոշմանը:

11. ՀՀ Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Հաստատանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճարելի դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճարելի դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճարելի դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

12. Վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ - դատական օրենսգրքի վերոհիշյալ նորմերը՝ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա վճարելի դատարանի՝ նախկինում կայացված որոշումը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, վճարելի դատարանի՝ նախկինում կայացված որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել

մեծ ընդհանրություն» (տես Վճարելի դատարանի՝ Վազգեն Խնուկի գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԳ/0179/11/14 որոշման 16-րդ կետը, mutatis mutandis, Անահիտ Միմոնյանի գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԳ/0055/11/13 որոշման 14-15-րդ կետերը):

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

2. (...) Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել (...) քրեական գործը (...) կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

(...)

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ պարտականությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին (...):»:

14. ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԳՌ-844 որոշման մեջ ՀՀ քրեական դատավարության օ-

րենսգրքի 290-րդ հոդվածի իրավակարգավորման վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինչպես դատախազը, այնպես էլ դատարանն իրավասու են քննելու [հետաքննության մարմնի, քննիչի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի], այդ թվում՝ նաև դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր լինելու դեմ բերված բողոքները: Սակայն տարբեր են այդ բողոքների քննության արդյունքում խախտված իրավունքի վերականգնման եղանակները, ձևերը և իրավական հետևանքները, մասնավորապես, դատական վերահսկողությունն իրականացվում է անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականության մասին որոշման կայացմամբ: Հետևաբար, դրանով է պայմանավորված նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ մասի նորմատիվ պահանջը, որին համապատասխան բողոք քննելու արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե հետաքննության մարմնին, քննիչին և օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես տեղի ունի դատախազական հսկողության դեպքում, այլ այդ մարմինների ու պաշտոնատար անձի կողմից թույլ տրված օրինախախտումը վերացնելը և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելը պարտավորեցնելով, որը բխում է դատական իշխանության սահմանադրաիրավական բովանդակությունից և դրան համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատարանի լիազորություններից (...) (տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԳՈ-844 որոշման 8-րդ կետը):

14.1. Սույն որոշման 13-րդ կետում մեջբերված նորմերը վճռաբեկ դատարանն իր հերթին իրավական վերլուծության է ենթարկել Ներսես Միսակյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «[Ն]ախաքննության մարմնի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործի վարույթը (վարույթի մասը) կարճելու վերաբերյալ որոշումները մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության օբյեկտ են, այդ որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ դատական վերահսկողության առարկա:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով դատարանը պարտավոր է բողոքի քննության արդյունքներով կայացնել կամ ներկայացված բողոքը մերժելու որոշում, եթե

գտնի, որ անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, կամ կայացնի որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, եթե հիմնավորված կհամարի, որ տեղի է ունեցել անձի իրավունքների կամ ազատությունների խախտում (...)» (տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲԳ-1/0003/11/08 որոշման 12-րդ կետը):

Լ.Չարյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «[Մ]ինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը մինչդատական վարույթում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկն է և դատախազական հսկողության հետ համատեղ կոչված է ապահովելու նախաքննության մարմնի գործողությունների ու որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը: Մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը, սակայն, դատախազական հսկողության համեմատ ունի իր խնդիրներով պայմանավորված առանձնահատկություններ, որոնք իրենց հերթին պայմանավորում են վերահսկողության օբյեկտի (առարկայի), վերահսկողության իրականացման ընթացակարգի (դատավարական ձևի), ընդունվող որոշումների և դրանց իրավական նշանակության տարբերությունները:

Մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության և դատարանի վերահսկողության շրջանակներում քննվող բողոքների արդյունքում խախտված իրավունքների վերականգնման ձևերն ու եղանակները տարբեր են: Համապատասխան բողոքի քննության արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե մինչդատական վարույթն իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես առկա է դատախազական հսկողության պարագայում (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը), այլ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելով» (տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Լաուրա Չարյանի գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ-0081/11/09 որոշման 13-րդ կետը):

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Լ.Չարյանի գործով Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելով քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ նախաքննության մարմնի և տուժողի բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումները վերացնելու մասին, դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր լիազորությունների շրջանակներից, ինչի արդյունքում խախտվել է

ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքը (տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ վերը հիշատակված Լատրա Ջարյանի գործով որոշման 14-րդ կետը):

15. Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական հետապնդում չիրականացնելու) մասին որոշման դատական ստուգման շրջանակներում անձի խախտված իրավունքների վերականգնման ձևի առումով կիրառելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի՝ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կարգավորումը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը Քննիչի՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ դիմող Փ.Թերոյանի և նրա ներկայացուցիչ Ա.Սաքունցի բողոքները մերժել է (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը բեկանել է ստորադաս դատարանի դատական ակտը և վերացրել Քննիչի որոշումը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Նախորդ կետում վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-րդ և 14-15-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲԳ-1/0003/11/08 և Լատրա Ջարյանի գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ/0081/11/09 որոշումներին, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԳՈ-844 որոշմանը:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ *Ն.Միսակյանի և Լ.Ջարյանի* գործերով կայացված դատական ակտերի հիմնավորման բովանդակությունը կազմող և սույն որոշման 14.1-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով առավել ընդհանրական են, և դրանց կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկայակոչված և սույն գործերի փաստական հանգամանքների ընդհանրությունն այն է, որ երկու դեպքում էլ դատարանները դատական ստուգման են ենթարկել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Լ.Ջարյանի գործով և սույն գործով վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել վարույթն իրականացնող մարմնի որոշումը վերացնելու մասին: Նշված փաստական հանգամանքների հ-

անընկնումը Վճարելի դատարանին հիմք է տալիս պնդելու, որ *Ն.Միսակյանի և Լ.Չարյանի* գործերով որոշումների հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանի համար պարտադիր են եղել:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով Վճարելի դատարանի կողմից *Ն.Միսակյանի և Լ.Չարյանի* գործերով որոշումների, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴ-Ո-844 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու շրջանակներում որոշում է կայացրել այն վերացնելու, այլ ոչ թե անձի իրավունքների ու ազատությունների խախտումները վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանելու մասին:

18. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանի որ սույն գործի քննության ժամանակ անտեսել է Վճարելի դատարանի վերոհիշյալ որոշումների հիմնավորումները, որոնք դատարանի համար պարտադիր են եղել: Ստորադաս դատարանը ոչ միայն չի կիրառել կիրառման ենթակա՝ Վճարելի դատարանի՝ նախկինում կայացված որոշումները, այլև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չի հիմնավորել, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն իր դիրքորոշումը հիմնավորել է՝ վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ և 264-րդ հոդվածների կարգավորումները, մինչդեռ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ, այնպես էլ 264-րդ հոդվածներով նախատեսված չէ որևէ նորմ, որը **դատարանին** լիազորություն կվերապահի քրեական գործի վարույթը կարճելու որոշման դատական ստուգման արդյունքում վերացնելու այդ որոշումը: Նման պայմաններում Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված նորմերը դատարանի լիազորությունների առումով որևէ բացառություն չեն նախատեսում մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության իրավահարաբերությունները կարգավորող ընհանրուր նորմի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգավորումներից: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չի հիմնավորել, որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում անձի խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման կառուցակարգի վերաբերյալ՝ Վճարելի դատարանի վկայակոչված որոշումներով արտահայտված իրավական

դիրքորոշումները կիրառելի չեն սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական ակտի բեկանման հիմք հանդիսացող դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, մասնավորապես՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, արդյունքում նաև՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջները:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերը չի վիճարկում Վերաքննիչ դատարանի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին Քննիչի որոշմամբ Փ.Թերոյանի իրավունքների ու ազատությունների խախտում թույլ տրված լինելու վերաբերյալ դիրքորոշման իրավաչափությունը: Նման պայմաններում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կաշկանդված լինելով վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակով՝ Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա չի դարձնում Քննիչի վերոհիշյալ որոշման անօրինական և ոչ հիմնավորված լինելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները: Վերոնշյալի հաշվառմամբ, արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները բավարար են Վերաքննիչ դատարանի դատական ակտը փոփոխելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Փնջիկ Հովհաննեսի Թերոյանի և նրա ներկայացուցիչ Արթուր Սաքունցի բողոքների վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ եզրափակիչ մասի երկրորդ պարբերությունը շարադրելով հետևյալ խմբագրությամբ՝ «Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մայիսի 19-ի որոշումը բեկանել՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ-ավագ քննիչ Ա.Սինասյանի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ թույլ տրված դիմող Փնջիկ Թերոյանի իրավունքների խախտումները»:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

11.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0031/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ մեղադրող Ա.ՍԱՀԱԿՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ալեքսան Արշավիրի Բաբախանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Բաբախանյանի պաշտպան Ն.Սվարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի մարտի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 48102915 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մարտի 25-ի որոշմամբ Ալեքսան Արշավիրի Բաբախանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և

նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2015 թվականի ապրիլի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2015 թվականի հունիսի 16-ի դատավճռով Ա.Բաբախանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Բաբախանյանի պաշտպան Ն.Սվարյանի վերաբնիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 16-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Բաբախանյանի պաշտպան Ն.Սվարյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Բաբախանյանի պաշտպան Ն.Սվարյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Ա.Բաբախանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) 2014 թվականի աշնանը, առանց իրացնելու նպատակի՝ անձնական օգտագործման համար, իր տնամերձ հողամասում վայրի ձևով աճած կանեփ տեսակի բույսերից, սպօրինի պատրաստել և իր նշված բնակարանում սպօրինի պահել է խոշոր չափի՝ 99.466 գրամ հաստատուն չոր քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որն իր քաղաքացիական մեջ պարունակում է կանաբինոլիդային շարքի արկալոիդներ, այդ թվում նաև՝ թմրակտիվ բաղադրատարր հանդիսացող տետրահիդրոկաննաբինոլ: Նույն բույսերից հավաքել է նաև սերմեր և նույնպես պահել է իր բնակարանում: Պատրաստված թմրամիջոցից, ընթացքում, որոշ քանակությամբ, մի քանի անգամ ծխելու եղանակով օգտագործել է, իսկ մնացածը շարունակել է սպօրինի պահել իր բնակարանում (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 130):

6. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2015 թվականի հունիսի 16-ի դատավճռի ներածական մասում, ի թիվս այլ հանգամանքների, փաստե-

լով նաև, որ Ա.Բաբախանյանը **Ֆիզիկապես առողջ է, խնամքին է մեկ անձ**, նկարագրական-պատճառաբանական մասում արձանագրել է. *«Դատարանը պատիժ նշանակելիս, հաշվի է առնում Ալեքսան Արշավիրի Բաբախանյանի կատարած հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ ինչպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, այնպես էլ ծանրացնող հանգամանքների բացակայությունը:*

Դատարանը, որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և անձը բնութագրող հանգամանքներ է դիտում այն, որ նա զղջացել և զղջում է կատարածի համար, նախկինում դատված, արատավորված չի եղել, խնամքին է վատառողջ և թոշակառու մայրը, դրականորեն է բնութագրվում իր բնակության վայրի հարևանների կողմից:

Ալեքսան Բաբախանյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Դատարանը, հաշվի առնելով Ալեքսան Արշավիրի Բաբախանյանի կատարած հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը, բնույթը, նրա անձը, բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ Ա.Բաբախանյանի կողմից կատարած հանցավոր արարքի համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի՝ 268 հոդվածի 2-րդ մասի սանկցիան նախատեսում է պատիժ ազատազրկման ձևով, գտնում է, որ նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով, նկատի ունենալով, որ այդպիսին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 61 հոդվածի 1-ին մասի, կարող է ապահովել պատժի նպատակները, նման պատիժ նշանակելով հնարավոր է հասնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին (...), ինչպես նաև ապահովել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված (...) սկզբունքները» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 131):

7. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, իր՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշման շրջանակներում փաստել է. *«(...) Վերաքննիչ դատարանը, բնության առնելով Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու, ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը և նկատի ունենալով (...) ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արարքի հանրության համար վտանգավորության աստի-*

ճանը և բնույթը, (...) հանգում է այն հետևության, որ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով ՀՀ քրեական օրենսգրքի պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (...), ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սանկցիայի սահմաններում՝ ամբաստանյալ Ա.Բաբախանյանի նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում 1 (մեկ) տարի ժամկետով, որը համապատասխանում է հանցագործությունների ծանրությանը և ամբաստանյալի անձին, որով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին (...))» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 39-40):

8. Քրեական գործի նյութերում առկա են հետևյալ փաստական տվյալները.

ա) Արմավիր քաղաքի №6 թաղային լիազորի կողմից տրված բնութագրն և տեղեկանքն այն մասին, որ Ալեքսան Բաբախանյանի բնութագրվում է դրական, նրա խնամքին է գտնվում նրա մայրը, որը ծեր է և հիվանդ: Ա.Բաբախանյանը **մշտապես օգնում և աջակցում է իր մահացած եղբոր ընտանիքին:** (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 42, հատոր 2-րդ, թերթ 8),

բ) Արմավիր քաղաքի №5 թաղային լիազոր Ռ.Առաքելյանի կողմից տրված բնութագիրը հետևյալ բովանդակությամբ. «(...) [Ալեքսան Բաբախանյանը] դեռ երիտասարդ տարիներից խնամք է տանում անկողնում գամված հիվանդ մոր հանդեպ: (...) Երբևէ չենք նկատել Ալեքսանի կողմից որևէ հակահասարակական արարք: Ալեքսան Բաբախանյանը մեղմ ու անջար մարդ է, որին սիրում և հարգում են նրան ճանաչողները (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 95),

գ) Ա.Բաբախանյանի ամբուլատոր բժշկական քարտը և «Արմավիր ԲԿ»-ի կողմից տրված քաղվածքն առ այն, որ Ա.Բաբախանյանն ունի որոշ հիվանդություններ, որոնց ախտորոշումն է՝ խոցային հիվանդություն 12-մատնյա աղու խոց, գոտկա-սրբանային ռադիկուլոպաթիա, դաստակի ֆունկցիայի մասնակի խանգարում, աջ դաստակի առաջին մատի ամպուտացիոն ծայրանդամ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 109-125, հատոր 2-րդ, թերթ 98),

դ) «Արմավիր ԲԿ»-ի կողմից տրված քաղվածքներն առ այն, որ Ա.Բաբախանյանի մոր՝ Ռ.Բաբախանյանի հիվանդության ախտորոշումն է՝ ՍԻՀ, էքստրասխստոլիկ առիթմիա, աթերոսկլերոտիկ կարդիոսկլերոզ: Առտիֆակիա, ՏՆՍ-ի ատրոֆիա (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 104, հատոր 2-րդ, թերթ 97),

ե) Արմավիր քաղաքի №5 թաղային լիազոր Ռ.Առաքելյանի կողմից տրված տեղեկանքն առ այն, որ «(...) Ալեքսան Արշավիրի Բաբախանյանը բնակվում է ք. Արմավիրի Մաշտոցի 62 տանը և ընտանիքը բաղկացած է հետևյալ 5 (հինգ) [անձանցից]. 1. Բաբախանյան Ռիմա՝ մայրը, 1938թ., 2. Ավթանդիլյան Կարինա՝ եղբոր կինը, 1971թ., 3. Բաբախանյան Աշոտ՝ եղբոր որդի, 1994թ., 4. Բաբախանյան Ռիմա՝ եղբոր դուստր, 1992թ.» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 96):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը, մեջբերելով Վճարելի դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, գտել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ Ա.Բաբախանյանի նկատմամբ չեն կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները, քննության առնելով Ա.Բաբախանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, փաստել են, որ Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը համաչափ է կատարած արարքի ծանրությանը, ամբաստանյալի անձին, և նա պետք է կրի ազատագրկման ձևով նշանակված պատիժը: Մինչդեռ ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել գործի փատական հանգամանքները, ինչպես նաև այն, որ Ա.Բաբախանյանը զոջացել է կատարածի համար, վատառողջ է, ընտանիքի միակ կերակրողն է, խնամքին են թոշակառու մայրն ու մահացած եղբոր ընտանիքի անդամները:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշումը և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից հիմնավորված է արդյոք Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը քնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»

Սույն քրեաիրավական նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (*հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գարուշ Մադաթյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08, Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ/0143/01/13, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշումները*) հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (ԵԱԳԳ/0034/01/12, ԼԳ/0093/01/12, ՏԳ/0018/01/13, ԵԷԳ/0132/01/13, ԵԱՆԳ/0060/01/13, ԵԿԳ/0096/01/13, ԵԿԳ/0252/01/13, ԵՄԳ/0027/01/14, ԳԳ/0014/01/14, ՍԳ/0204/01/13, ՏԳ/0031/01/14, ՍԳ3/0174/01/14, ԵԱԳԳ/0011/01/14, ԵԱԶԳ/0091/01/14, ԵԿԳ/0039/01/15 և այլն):

13. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնվող հանգամանքներից հանցավորի անձը բնութագրող տվյալների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել թիվ ՎԲ-50/07, թիվ ԵԿԳ/0042/01/11, թիվ ՍԳ/0109/01/12, թիվ ԱՎԳ/0082/01/12, թիվ ԵԱԶԳ/0091/01/14 և այլ որոշումներում: Մասնավորապես, *Հ.Հարությունյանի* գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեա-իրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը (ընտանեկան դրություն-

նր, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, **առողջական վիճակը**, տարիքը, դատավածությունը և այլն» (տե՛ս Հազարապետ Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 որոշումը):

Հ.Հարությունյանի գործով կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները Վճռաբեկ դատարանը զարգացրել է Ս.-Սարգսյանի գործով որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) «[Հ]անցավորի անձնավորություն» եզրույթն ի տարբերություն «հանցագործության սուբյեկտ» եզրույթի, ավելի ընդարձակ է, և օժտված է սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերով: (...)

(...) [Պ]ատժի անհատականացման ժամանակ հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես պատժի նպատակների իրականացման, այնպես էլ անձի արժանապատվության հարգման սահմանադրական պահանջի առկայությամբ» (տե՛ս Սերոբ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԳ/0109/01/12 որոշման 36-37-րդ կետերը):

Իսկ Ս.Աղախանյանի գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը փաստել է. «(...) [Յ]ուրաքանչյուր գործով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների (...), պետք է բազմակողմանի վերլուծության ու գնահատման ենթարկի հանցավորի անձը: (...) [Պ]ատասխանատվության և պատժի անհատականացման և հետևաբար նաև նշանակված պատժի կրման հարցի լուծման համար էական նշանակություն ունեն հանցավորի անձի ոչ միայն ֆիզիկական ու հոգեկան, այլև սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ փաստական տվյալները: Հետևաբար, հանցավորի պատասխանատվությունն ու պատիժն անհատականացնելիս և նշանակված պատիժը փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է ուսումնասիրի **հանցավորի ընտանեկան դրության, նրա խնամքին այլ անձանց առկայության, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղի ու դիրքի, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագրի և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները:**

(...) [Ա]նձի նկատմամբ պատիժ նշանակելիս և այն փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն հանգամանքը, թե նշանակված պատիժն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ **ամբաստանյալի ընտանիքի կյանքի պայմանների վրա**» (տե՛ս Սեյրան Աղախանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0082/01/12 որոշման 19-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանն իր կողմից կայացված դատավճռի ներածական մասում, ի թիվս այլ հանգամանքների, փաստելով նաև, որ Ա.Բարա-

խանյանը **Ֆիզիկապես առողջ է, խնամքին է մեկ անձ**, նկարագրական-պատճառաբանական մատում արձանագրել է, որ Ա.Բաբախանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, իսկ որպես Ա.Բաբախանյանի անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ դիտում այն, որ նա զոջացել է կատարածի համար, նախկինում արատավորված չի եղել, բնութագրվում է դրական, նրա խնամքին է վատառողջ և թոշակառու մայրը: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ Ա.Բաբախանյանը ենթակա է պատժի ազատազրկման ձևով, որի միջոցով հնարավոր կլինի հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցը և հաշվի առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտում հիմք ընդունված ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արարքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, արդյունքում եզրահանգել է, որ ազատազրկման ձևով նշանակված պատիժը համապատասխանում է հանցավոր արարքի ծանրությանն ու ամբաստանյալի անձին, և դրանով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Քրեական գործի նյութերում առկա են փաստական տվյալներ այն մասին, որ ամբաստանյալը տառապում է՝ խոցային հիվանդություն՝ 12-մատնյա աղու խոց, գոտկա-սրբանային ռադիկուլոպաթիա, դաստակի ֆունկցիայի մասնակի խանգարում, աջ դաստակի առաջին մատի ամպուտացիոն ծայրանդամի հիվանդություններով, ինչպես նաև նրա խնամքին է ոչ միայն վատառողջ և թոշակառու մայրը, այլև նա մշտապես օգնում և աջակցում է իր մահացած եղբոր ընտանիքին, որի անդամները (3 անձ) բնակվում են ամբաստանյալի և նրա մոր հետ միասին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները համադրելով սույն որոշման 12-13-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, իսկ վերջինիս կայացրած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս նաև Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը պատշաճ ստուգման և իրավական գնահատականի չեն արժանացրել իրենց համակցության մեջ:

Այսպես՝ ստորադաս դատարանները թեպետ արձանագրել են, սակայն պատշաճ գնահատման չեն ենթարկել ամբաստանյալի անձը բնութագրող բարոյահոգեբանական և սոցիալ-հոգեբանական հատկանիշները, ամբաստանյալի անձի սոցիալական առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ Ա.Բաբախանյանը զոջացել է կատարածի համար, բնութագրվում է դրական, նրա խնամքին է գտնվում թոշակառու և վատառողջ՝ անկողնում գամված մայրը (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ ստուգման չենթարկելով քրեական գործի նյութերում առկա այն տվյալը, որ ամբաստանյալը տառապում է որոշ հիվանդություններով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), իր դատավճռի ներածական մասում արձանագրել է, որ վերջինս ֆիզիկապես առողջ է (տե՛ս - սույն որոշման 6-րդ կետը), իսկ Վերաքննիչ դատարանն իր հերթին չի անդրադարձել սույն հարցին: Ավելին՝ ստորադաս դատարանները որևէ գնահատականի չեն արժանացրել քրեական գործի նյութերում առկա այն տվյալը, որ Ա.Բաբախանյանի խնամքին է ոչ միայն վատառողջ և թոշակառու մայրը, այլև նա մշտապես օգնում և աջակցում է իր մահացած եղբոր ընտանիքին, որի անդամները (3 անձ) բնակվում են ամբաստանյալի և նրա մոր հետ միասին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Վերջին հանգամանքները անմիջականորեն վկայում են նաև ամբաստանյալի անձի սոցիալական առանձնահատկությունների մասին, ինչի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, ողջամտորեն կարող է բացասական ազդեցություն ունենալ ամբաստանյալի ընտանիքի կյանքի պայմանների վրա:

16. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև իրենց համակցության մեջ գնահատելով ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, այսինքն՝ Ա.Բաբախանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից Ա.Բաբախանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված չէ:

17. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, Ա.Բաբախանյանի նկատմամբ չկիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ - հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով արդարադատության արդյունավետության շահերով, արձանագրում է, որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքներն հնարավորություն են տալիս բեկանելու և փոփոխելու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշումը և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելու ամբաստանյալ Ա.Բաբախանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով (2005 թվականի փոփոխություններով), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Ալեքսան Արշավիրի Բաբախանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշումը բեկանել և փոփոխել:

Ալեքսան Բաբախանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատիժը՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնել Ա.Բաբախանյանի բնակության վայրի այլընտրանքային պատիժների կատարման բաժնի համապատասխան ստորաբաժանման վրա:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

12.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԳ2/0045/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ պաշտպան

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Գ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Նարեկ Վարդանի Մադյանի և Դավիթ Հրանտի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի հունիսի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի մարտի 5-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Տավուշի մարզի քննչական բաժնի Տավուշի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 56101114 քրեական գործը, իսկ Գեղեցիկ Վանեսյանի՝ 2014 թվականի մարտի 18-ի հաղորդման հիման վրա 2014 թվականի մարտի 21-ին նույն բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով

հարուցվել է թիվ 56101314 քրեական գործը: Նույն օրը նախաքննության մարմնի որոշմամբ Գ.Վանեսյանը տուժող է ճանաչվել և հարցաքննության հայտնել դեպքի հանգամանքները: 2014 թվականի հունիսի 17-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի հատկանիշներով հարուցվել է նաև թիվ 56102614 քրեական գործը:

2014 թվականի հունիսի 17-ին անչափահասներ Նարեկ Մադյանը և Գ-ավիթ Հովհաննիսյանը բերման են ենթարկվել ՀՀ ոստիկանության Տավուշի բաժին:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հունիսի 19-ի որոշմամբ թիվ 56101314 և թիվ 56102614 քրեական գործերը միացվել են թիվ 56101114 քրեական գործին, և քննությունը շարունակվել է մեկ վարույթում՝ 56101114 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հունիսի 20-ի որոշմամբ Ն.Մադյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով: Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ նույն օրվա որոշմամբ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հունիսի 20-ի որոշմամբ Գ.Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով: Առաջին ատյանի դատարանի՝ նույն օրվա որոշմամբ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2014 թվականի սեպտեմբերի 3-ին Ն.Մադյանին առաջադրված մեղադրանքի ծավալը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 5 դրվագով՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 2 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 2 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2014 թվականի սեպտեմբերի 3-ին Գ.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքի ծավալը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 3 դրվագով՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 2 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2014 թվականի սեպտեմբերի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի դատավճռով Ն.Մադյանը 2 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անպարտ և արդարացվել նրա արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նույն դատավճռով Ն.Մադյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 4 դրվագով՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 2 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Ն.Մադյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով դատապարտվել է ազատազրկման՝ 2 տարի ժամկետով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով՝ նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ, դատապարտվել է ազատազրկման՝ 4 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 4 դրվագով՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով դատապարտվել է ազատազրկման՝ 4-ական տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 2 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է ազատազրկման՝ 2-ական տարի ժամկետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով դատապարտվել է ազատազրկման՝ 2 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ն.Մադյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 տարի ժամկետով:

Գ.Հովհաննիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անպարտ և արդարացվել նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նույն դատավճռով Գ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 2 դրվագով՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 2 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Գ.Հովհաննիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով դատապարտվել է ազատազրկման՝ 2 տարի ժամկետով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով՝ նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ, դատապարտվել է ազատազրկման՝ 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 2 դրվագով՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով դատապարտվել է ազատազրկման՝ 4-ական տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 2 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է ազատազրկման՝ 2-ական տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Գ.Հովհաննիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 տարի 2 ամիս ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Մխիթար Մխիթարյանը:

3. Ամբաստանյալ Գ.Հովհաննիսյանի, ամբաստանյալների պաշտպանների և մեղադրողի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2015 թվականի հունիսի 18-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 18-ի որոշման դեմ վճարելի բողոքներ են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանը, ամբաստանյալ Ն.Մադյանի պաշտպան Գ.Մելքոնյանը, ամբաստանյալ Գ.Հովհաննիսյանի պաշտպան Գ.Ջաքարյանը և ամբաստանյալ Մ.Մխիթարյանի պաշտպան Ա.Քոչարյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ ամբաստանյալ Գ.Հովհաննիսյանի պաշտպան Գ.Ջաքարյանի վճարելի բողոքը վերադարձվել է, և սահմանվել է 15-օրյա ժամկետ՝ ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Ամբաստանյալ Գ.Հովհաննիսյանի պաշտպան Գ.Ջաքարյանի կողմից կրկին բողոք չի ներկայացվել:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ ամբաստանյալ Ն.Մադյանի պաշտպան Գ.Մելքոնյանի և ամբաստանյալ Մ.Մխիթարյանի պաշտպան Ա.Քոչարյանի վճարելի բողոքները վարույթ ընդունելը մերժվել է:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանի վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ն.Մադյանին և Գ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, 2014 թվականի մարտի 17-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, նախնական համաձայնության գալով, ուրիշի գույքը հափշտակելու նպատակով մուտք են գործել Տավուշի մարզի Մովսես գյուղում գտնվող՝ Գ.Վանեսյանի առանձնատուն և ավագակությամբ, առողջության համար վտանգավոր բնություն գործադրելով, հարձակվել և ծեծի են ենթարկել Գ.Վանեսյանին, գումար պահանջել, սակայն մերժում ստանալով՝ հափշտակել են վերջինիս պատկանող՝ 30.000 ՀՀ դրամ արժողությամբ բջջային հեռախոսը և հեռացել (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 281-297):

5.1. Դատաբժշկական փորձագետի թիվ 44Հ եզրակացության համաձայն՝ «(...) Գեղեցիկ Վանեսյանի մարմնական վնասվածք[ներ]ը՝ ճակատի ձախ կեսի արյունազեղման, ձախ հոնքի ներսային կեսում սալջարդ

վերքի, հոնքի դրսային ծայրի քերծվածքի, աջ և ձախ աչքերի վերին և ստորին կուպերի սալջարդի և արյունագեղման, ձախ ակնագնդի ցնցման՝ աչքի լորձաթաղանթի արյունագեղմումով, քթի աջ և ձախ երեսների, այտոսկրերի շրջանների, պարանոցի հետին ձախ կողմնային և ձախ ուսահողի վերին երեսի, կրծքավանդակի առաջային երեսի՝ ձախ կրծքամկանի և կրծոսկրի շրջանների արյունագեղմումների, ստորին ծնոտի աջ ճյուղի շրջանի սալջարդ վերքի, ձախ այտի շրջանի քերծվածքի ձևով, հասցված են բուք, կոշտ առարկայով, հնարավոր է նշված ժամկետում, հնարավոր է առաջանային նաև որոշման մեջ նշված հանգամանքներում և պատճառել են առողջությանը թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 163-165):

5.2. 2014 թվականի հունիսի 17-ին Ն.Մադյանը, նույն թվականի հունիսի 18-ին Գ.Հովհաննիսյանը որպես կասկածյալներ, իսկ հունիսի 20-ին որպես մեղադրյալներ հարցաքննվելիս ընդունել են իրենց մեղավորությունը՝ ավագակություն կատարելու փաստի առնչությամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 33-39, 66-69, 144-145, 155-156):

2014 թվականի հուլիսի 7-ի և նույն թվականի սեպտեմբերի 4-ի՝ վերջիններիս հարցաքննությունների արձանագրությունների համաձայն՝ Ն.Մադյանը հայտնել է, որ ինքը Մովսես գյուղի բնակչուհի Գ.Վանեսյանի նկատմամբ կատարված ավագակային հարձակման հետ որևէ առնչություն չունի, իսկ Գ.Հովհաննիսյանը նշել է, որ ինքը Մովսես գյուղում չի եղել, ավագակային հարձակում չի կատարել, դրա վերաբերյալ որևէ տեղեկություն չունի (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 23-24, 28-29, 221-222, 229-230): Ն.Մադյանը և Գ.Հովհաննիսյանը նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել նաև Առաջին ատյանի դատարանում դատաքննության ժամանակ (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 11-34):

6. Գործի դատաքննությամբ Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, որ «2014 թվականի մարտի 17-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Նարեկ Մադյանը, (...) նախնական համաձայնության գալով Դավիթ Հովհաննիսյանի հետ, ուրիշի գույքը հափշտակելու նպատակով մուտք են գործել Տավուշի մարզի Մովսես գյուղում գտնվող՝ Գեղեցիկ Վանեսյանի առանձնատուն, որտեղ Նարեկ Մադյանը, առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով, հարձակվել և ծեծի է ենթարկել Գեղեցիկ Վանեսյանին, զումար պահանջել, սակայն մերժում ստանալով՝ Դավիթ Հովհաննիսյանին առաջարկել է ստուգել տուժողի գրպանները, ով, կատարելով այն, Գեղեցիկ Վանեսյանի գրպանից հանել է նրան պատկանող 30.000 ՀՀ դրամ արժողությամբ բջջային հեռախոսը, և հեռացել են (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 11-34):

6.1. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Պատիժ նշանակելիս [Առաջին ատյանի դատարանը] հաշվի է առնում կատարած արարքների հանրորեն վտանգավորության աստիճանը, հանցագործության բնույթն ու հետևանքները:

Դատարանն ամբաստանյալների պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ Նարեկ Մադյանը և Դավիթ Հովհաննիսյանն անչափահաս են, (...) բնութագրվում են դրական, աջակցել են հանցագործությունների բացահայտմանը (...), տուժողները քաղաքացիական հայց չեն ներկայացրել (...): Ամբաստանյալները զոջում են կատարածի համար: Նարեկ Մադյանը և Դավիթ Հովհաննիսյանը նախկինում արատավորված չեն եղել:

Միաժամանակ դատարանն արձանագրում է այն փաստը, որ բոլոր հանցագործությունների կատարման կազմակերպիչը և հեղինակը եղել է Նարեկ Մադյանը, իսկ հանցանքների կատարման ժամանակ ունեցել է առավել ակտիվ դերակատարում:

Ամբաստանյալներ Նարեկ Մադյանի և Դավիթ Հովհաննիսյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան: (...)

Վերլուծելով գործի նյութերը, հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսդրության պահանջները, հաշվի առնելով ամբաստանյալների անձը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները [Առաջին ատյանի դատարանը] գտավ, որ նրանց նկատմամբ պետք է պատիժ նշանակել ազատագրկման ձևով, որը նրանք պետք է կրեն, և դա կարող է բավարար լինել նրանց ուղղելու, ինչպես նաև հետագայում հանցագործությունները կանխելու համար: Միաժամանակ, հաշվի առնելով ամբաստանյալներ Նարեկ Մադյանի և Դավիթ Հովհաննիսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող այնպիսի **բացառիկ հանգամանքներ**, ինչպիսիք են հանցանքն անչափահաս տարիքում կատարելը, նախաքննության ընթացքում հանցագործության բացահայտմանն աջակցելը, ինչպես նաև հանցագործության կատարման եղանակը և տվյալ հոդվածի համար նախատեսվող գույքային վնասի մինիմում չափով վնաս պատճառելը, նկատի ունենալով նրանցից յուրաքանչյուրի մասնակցության չափը կատարված հանցագործությանը՝ դատարանը գտավ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով պետք է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 64 հոդվածը և նշված հոդվածով նրանց նկատմամբ նշանակել նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 11-34):

7. Մեղադրող Ն.Չիլինգարյանի վերաքննիչ բողոքի համաձայն՝ «(...) [Առաջին ատյանի դատարանը] գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով պետք է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը և նշված հոդվածով նրանց նկատմամբ նշանակել նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ: [Առաջին ատյանի դատարանը] թույլ է տվել նյութական իրավունքի խախտում: (...) [Ո]րևէ բացառիկ հանգամանքներ առկա չեն, որոնք կարող են նվազեցնել տվյալ հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, և ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մաս

սի 1-ին և 3-րդ կետերով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կիրառելի չէր (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 21-36)

8. Վերաքննիչ դատարանն իր որոշման շրջանակներում փաստել է. «(...) Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ն.Մադյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, հաշվի առնելով վերջինիս կատարած հանցագործությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դիտելով այն, որ անչափահաս է, բնութագրվում է դրական, աջակցել է հանցագործությունների բացահայտմանը (...), տուժողները քաղաքացիական հայց չեն ներկայացրել, (...) զոջում է կատարածի համար, նախկինում արատավորված չի եղել, միաժամանակ արձանագրելով այն փաստը, որ վերջինս եղել է բոլոր հանցագործությունների կատարման կազմակերպիչը և հեղինակը, իսկ հանցանքների կատարման ժամանակ ունեցել է առավել ակտիվ դերակատարում, պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում, վերջինիս նկատմամբ առանձին հանցանքների համար սահմանել է ազատագրկման ձևով նվազագույն պատժաչափեր, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ ազատագրկման ձևով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով՝ վերջնական համաչափ պատիժ:

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Գ.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, հաշվի առնելով վերջինիս կատարած հանցագործությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դիտելով այն, որ անչափահաս է, բնութագրվում է դրական, աջակցել է հանցագործությունների բացահայտմանը (...), տուժողները քաղաքացիական հայց չեն ներկայացրել, (...) զոջում է կատարածի համար, նախկինում արատավորված չի եղել, պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում, վերջինիս նկատմամբ առանձին հանցանքների համար սահմանել է ազատագրկման ձևով նվազագույն պատժաչափեր, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ ազատագրկման ձևով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով՝ վերջնական համաչափ պատիժ» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 187-226):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի համոզմամբ ստորադաս դատարաններն ամբաստանյալներ Ն.Մադյանի և Գ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակել են ակնհայտ մեղմ պատիժ՝ խախտելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը վերլուծել է ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 64-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ Վճարելի դատարանի՝ համապատասխանաբար թիվ ԵԱԶԳ/0078/01/09, թիվ ՎԲ-84/07, թիվ ՎԲ-145/07 և թիվ ՎԲ-13/08 որոշումները ու եզրահանգել, որ ստորադաս դատարանների կողմից ամբաստանյալներ Ն.Մադյանի և Գ.Հովհաննիսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, ինչպես նաև օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար որպես բացառիկ հաստատված են համարվել այնպիսի հանգամանքներ, որոնց իրավական վերլուծությունները հակասում են Վճարելի դատարանի՝ հիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին: Ավելին՝ բողոքի հեղինակը գտել է, որ դատարանների կողմից հիմք ընդունված որոշ հանգամանքներ չեն բխում գործով հետազոտված ապացույցներից:

Մասնավորապես՝ բողոք բերած անձը փաստարկել է, որ *հսկագործության բացահայտմանն* աջակցելու մեղմացնող հանգամանքն առկա չէ ավագակալին հարձակում կատարելու փաստն ամբաստանյալների կողմից սկզբում ընդունելու, ապա՝ նախաքննության և դատաքննության ընթացքում դա հերքելու պարագայում:

Անդրադառնալով մյուս մեղմացնող հանգամանքին՝ *հսկագործության կատարման եղանակին*, բողոքաբերը նշել է, որ իզական սեռի ներկայացուցիչ, 77-ամյա տուժողի մարմնի վրա հայտնաբերված մարմնական վնասվածքների քանակը և դրանց տեղակայումը վկայում են ամբաստանյալների կողմից գործադրված ինտենսիվ բռնության մասին, որպիսի պայմաններում հանցագործության կատարման եղանակը չի կարող համարվել պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք:

«Հանցագործության հետևանքով՝ տվյալ հոդվածի համար նախատեսվող միևնույն չափով գույքային վնաս պատճառելու» մեղմացնող հանգամանքի կապակցությամբ բողոքի հեղինակը վկայակոչել է ավագակության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածով նկարագրված դիսպոզիցիան և փաստել, որ տվյալ հանցակազմի առաջացման համար սահմանված չէ հափշտակված գույքի նվազագույն չափ: Հետևաբար, ըստ բողոքաբերի՝ «միևնույն գույքային վնաս» պատճառված լինելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունն անհիմն է և ոչ իրավաչափ:

10. Բողոք բերած անձը գտել է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ պատիժ նշանակելիս ստորադաս դատարաններն անտեսել են Վճարելի դատարանի՝ թիվ ԵՇԳ/0029/01/08 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ պատշաճ գնահատման

չարժանացնելով կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են հանցագործության կատարման եղանակը և հանցավոր մտադրության իրակամացման աստիճանը:

Բացի այդ, բողոքի հեղինակը վկայակոչել է ստորադաս դատարանների՝ այլ քրեական գործերով նախկինում կայացված դատական ակտեր և արձանագրել, որ նույնանման փաստական հանգամանքների պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է պատժի մասով բեկանել ամբաստանյալներ Ն.Մադյանի ու Դ.Հովհաննիսյանի վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալներ Ն.Մադյանի և Դ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

Նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ են՝*

(...)

2) հանցանք կատարելու պահին հանցավորի անչափահաս լինելը.

(...)

9) (...) հանցագործությունը բացահայտելուն (...) աջակցելը.

(...):

2. Պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի առաջին մասում:

(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմի բովանդակությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Պ.Բայրամյանի գործով որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են՝

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը,

գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները (...)» (տե՛ս Պարույր Բայրամյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշումը):

14. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ:

2. Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը»:

Սույն քրեաիրավական նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված որոշումներում (ՎԲ-55/07, ՎԲ-145/07, ՎԲ-185/07, ՎԲ-11/08, ՎԲ-13/08, ՎԲ-25/08, ՎԲ-ԵԲԲԳ/0057/01/08, ՏԳ/0094/01/09, ԱՎԳ-2/0057/01/09, ԵԱԲԳ/0164/01/09, ԵԱԲԳ/0195/01/09 և այլն), և կայուն նախադեպային իրավունք է ձևավորվել այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կարող է կիրառվել առնվազն հետևյալ երկու պայմանների առկայության պարագայում՝ գործի բացառիկ հանգամանքների և խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքի բացահայտմանն ակտիվորեն աջակցելու դեպքում: Օրենքում օգտագործվող «բացառիկ» բառը ենթադրում է, որ նշված հոդվածի կիրառման համար հիմք հանդիսացող մեղմացնող հանգամանքը կամ մեղմացնող հանգամանքների համակցությունը դուրս են սովորականի շրջանակներից և այն աստիճան առանձնահատուկ են, որ վերաժվում են բացառության: Մասնավորապես, դրանք կարող են կապված լինել հանցագործության շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի, ինչպես նաև այլ հանգամանքների հետ: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա:

Վերլուծելով քննարկվող հոդվածի՝ անչափահասների նկատմամբ կիրառման առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն *Ա.Նունուշյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է. «Բոլոր այն դեպքերում, երբ անչափահասին մեղսագրվող արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսվում է միայն ազատազրկում պատժատեսակը, դատարանը պետք է քննարկի ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ ավելի մեղմ պատժամիջոց ընտրելու կամ ավելի ցածր պատժաչափ նշանակելու հնարավորությունը՝ հաշվի առնելով առկա մեղմացնող հանգամանքների համակցությունը, անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, նրա վրա այլոց ազդեցությունը, անձը բնութագրող այլ տվյալները, ինչպես նաև հանցագործության՝ հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը (...)» (տե՛ս Արամայիս Նունուշյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱՆԳ/0094/01/13 որոշման 16-րդ կետը):

14.1. Վերահաստատելով *Ա.Նունուշյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ միայն այն հանգամանքը, որ հանցավորը հանցանք կատարելու պահին եղել է անչափահաս, չի կարող մեխանիկորեն հանգեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմանը, այլ այդ դեպքում նշյալ հոդվածի

կիրառման հնարավորությունը պետք է քննարկվի գործում առկա մեղմացնող հանգամանքների համակցության, հանցագործության՝ հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի և այլ հանգամանքների համատեքստում:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:*

Նույն օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով սույն հոդվածում շարադրված պահանջները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի և համապատասխանաբար նաև *Ֆ.Գալստյանի* և *Գ.Խնուսյանի* գործերով կայացված որոշումների համատեքստում մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանն *Է.Մարգարյանի* գործով որոշման շրջանակներում փաստել է. *«[Դատական ակտի պատճառաբանվածության չափանիշը վերաբերելի է նաև վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության, և որ իրավանորմերով է դեկլարվել նման որոշում կայացնելիս (...)]»* (տե՛ս *Էրիկ Մարգարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՍԳ-3/0045/01/13 որոշման 13-րդ կետը):

16. Սույն գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, որ 2014 թվականի մարտի 17-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Ն.Մադյանը և Գ.Հովհաննիսյանը, նախնական համաձայնության գալով, ուրիշի գույքը հափշտակելու նպատակով մուտք են գործել Տավուշի մարզի Մովսես գյուղում գտնվող՝ Գ.Վանեսյանի առանձնատուն, որտեղ Ն.Մադյանը, առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով, հարձակվել և ծեծի է ենթարկել Գ.Վանեսյանին, գումար պահանջել, սակայն մերժում ստանալով՝ Գ.Հովհաննիսյանին առաջարկել է ստուգել տուժողի գրպանները, ով, կատարելով այն, Գ.Վանեսյանի գրպանից հանել է նրան պատկանող՝ 30.000 ՀՀ դրամ արժողությամբ բջջային հեռախոսը, և հեռացել են (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը փաստել է նաև, որ ամբաստանյալներին վերագրվող բոլոր հանցագործությունների կատարման կազմակերպիչը և հեղինակը եղել է Ն.Մադյանը՝ այդ հանցանքների կատարման ժամանակ ունենալով առավել ակտիվ դերակատարում: Միևնույն ժամանակ ստորադաս դատարանն արձանագրել է, որ Ն.Մադյանի ու Գ.Հովհաննիսյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը որպես ամբաստանյալ-

ներ Ն.Մաղյանի ու Գ.Հովհաննիսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող **բացառիկ** հանգամանքներ է դիտել՝

- հանցանքն անչափահաս տարիքում կատարելը,

- նախաքննության ընթացքում հանցագործության բացահայտմանն աջակցելը,

- հանցագործության կատարման եղանակը,

- ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի համար նախատեսվող գույքային վնասի մինիմում չափով վնաս պատճառելը:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև նկատի ունենալով ամբաստանյալներից յուրաքանչյուրի մասնակցության չափը կատարված հանցագործությանը՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված արարքի համար ամբաստանյալներ Ն.Մաղյանի ու Գ.Հովհաննիսյանի նկատմամբ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը, և արդյունքում նրանց նկատմամբ նշանակել է նախատեսված պատժի նվազագույն չափից պելի ցածր պատիժ (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը մեջբերել է Առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված համարված՝ ամբաստանյալների պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայության վերաբերյալ պնդումները, ամբաստանյալ Ն.Մաղյանի՝ բոլոր հանցագործությունների կազմակերպիչն ու հեղինակը լինելու, դրանց կատարման ժամանակ առավել ակտիվ դերակատարում ունենալու վերաբերյալ դատողությունները և արձանագրել, որ Ն.Մաղյանի ու Գ.Հովհաննիսյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակվել է համաչափ պատիժ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

17. Մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից որպես **բացառիկ** ճանաչված չորս մեղմացնող հանգամանքներից երեքն իրենց բնույթով ոչ միայն բացառիկ չեն, այլև դրանք կա՛մ չեն բավարարում Վճռաբեկ դատարանի՝ *Պ.Բայրամյանի* գործով որոշմամբ սահմանված չափանիշներին, կա՛մ դրանց վերաբերյալ դատողությունները հիմնազուրկ են:

Այսպես՝

ա) Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ հանցագործությունը բացահայտելուն աջակցելու մեղմացնող հանգամանքի վերաբերյալ *Ս.Հունիկյանի* որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ հանցագործությունը բացահայտելուն աջակցելը որպես մեղմացնող հանգամանք կարող է արտահայտվել նախաքննության մարմնին և դատարանին այնպիսի տեղեկություններ հաղորդելով, որոնք նրանց համար հետաքրքրություն են ներկայացնում և վերջիններիս մինչ այդ անհայտ են եղել (տե՛ս *Սասվել Հունիկյանի* գործով Վճռաբեկ դատա-

րանի՝ 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08 որոշման 22-րդ կետը), արձանագրում է, որ քննարկվող մեղմացնող հանգամանքը չի հաստատվում սույն գործի փաստական տվյալներով: Մասնավորապես, տուժող Գ.Վանեսյանը 2014 թվականի մարտի 18-ին ներկայացրել է հաղորդում, որի հիման վրա նույն թվականի մարտի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ է հարուցվել: Նույն օրը նախաքննության մարմնի որոշմամբ Գ.Վանեսյանը տուժող է ճանաչվել և հարցաքննությամբ հայտնել դեպքի հանգամանքները (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): Մինչդեռ ամբաստանյալներ Ն.Մաղյանն ու Դ.Հովհաննիսյանը բերման են ենթարկվել 2014 թվականի հունիսի 17-ին, ցուցմունքներ են տվել նախաքննության մարմնին արդեն հայտնի փաստերի վերաբերյալ, ավելին՝ հետագայում՝ թե՛ նախաքննության և թե՛ դատաքննության փուլերում, ընդհանրապես հերքել են իրենց կողմից ավագակություն կատարելու փաստը (տե՛ս սույն որոշման 1-ին, 5.2-րդ կետերը):

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից չի պատճառաբանվել, թե հանցագործության բացահայտմանն աջակցելն ամբաստանյալների որ գործողություններով է դրսևորվել: Այսինքն՝ ստորադաս դատարանի կողմից չեն մատնանշվել կոնկրետ փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին քննարկվող մեղմացնող հանգամանքի առկայությունը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *«նախաքննության ընթացքում հանցագործության բացահայտմանն աջակցելու»* մեղմացնող հանգամանքն իրական չէ, իսկ դրա առկայությունը հերքվում է գործի նյութերով:

բ) Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ամբաստանյալներին մեղսագրվող արարքը՝ ավագակությունը, հափշտակության ամենաձանր տեսակն է, որը, պայմանավորված անձի կյանքը և առողջությունը վտանգի տակ դնելու հանգամանքով, ունի հանրային բարձր վտանգավորություն: Պետք է նկատի ունենալ նաև, որ հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի վրա մեծապես ազդում է տվյալ արարքի կատարման եղանակը (տե՛ս *Գարուշ Մաղաթյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08 որոշման 14-րդ կետը): Այդ համատեքստում հարկ է արձանագրել, որ ըստ սույն գործի նյութերի՝ մուտք գործելով Գ.Վանեսյանի առանձնատուն՝ Ն.Մաղյանը հարձակվել և ծեծի է ենթարկել 1938 թվականին ծնված Գ.Վանեսյանին (տուժողի դեմքի, պարանոցի, ուսահողի և կրծքավանդակի շրջաններում առկա են բազմաթիվ մարմնական վնասվածքներ (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը)), իսկ Դ.Հովհաննիսյանը տուժողի գրպանից հանել է նրան պատկանող բջջային հեռախոսը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *հանցագործության կատարման եղանակը* ողջամտորեն չի կարող նվազեցնել ամբաստանյալների կամ նրանց կատարած արարքի հանրային վտան-

գավորությունը: Հետևաբար իրավաչափ չի կարող համարվել քննարկվող հանգամանքը որպես մեղմացնող հաշվի առնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատողությունը:

զ) Առաջին ատյանի դատարանը որպես ամբաստանյալների պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող բացառիկ հանգամանք է հաշվի առել նաև «ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի համար նախատեսվող գույքային վնասի միևնույն չափով վնաս պատճառելը»: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ հիշյալ օրենսգրքի 175-րդ հոդվածը Ն.Մադյանին ու Գ.Հովհաննիսյանին մեղսագրվող արարքի՝ այն է՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ և բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված ավազակության համար չի նախատեսում հափշտակության տվյալ տեսակով պատճառված վնասի նվազագույն չափ: Հետևաբար հիմնավոր չէ Առաջին ատյանի դատարանի այն դատողությունը, որ ամբաստանյալների պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող բացառիկ հանգամանք է «ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի համար նախատեսվող գույքային վնասի միևնույն չափով վնաս պատճառելը»:

18. Հինք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև նկատի ունենալով սույն որոշման 14.1-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված արարքի համար ամբաստանյալներ Ն.Մադյանի և Գ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումն իրավաչափ չէ:

19. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշմանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել և որևէ պատճառաբանություն չի ներկայացրել մեղադրողի վերաքննիչ բողոքում մատնանշված այն փաստարկների առնչությամբ, որ սույն գործով ամբաստանյալների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կիրառելի չէր, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ նշանակելու հիմքերը բացակայում են (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

19.1. Վերոգրյալի հաշվառմամբ, ինչպես նաև հինք ընդունելով Վճռաբեկ դատարանի՝ *Է.Մարգարյանի* որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է չպատճառաբանված դատական ակտ: Մասնավորապես՝ ստորադաս դատարանը պատշաճ քննություն չի իրականացրել ամբաստանյալներ Ն.Մադյանի ու Գ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի խախտում:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալներ Ն.Մաղյանի և Գ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն անհիմն են:

21. Հիմք ընդունելով սույն որոշման 13-19.1-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ և 64-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Նշված խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածների համաձայն, հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակում պետք է պատշաճ քննության ենթարկի ամբաստանյալներ Ն.Մաղյանի ու Գ.Հովհաննիսյանի նկատմամբ համաչափ պատիժ նշանակելու հարցը և օրենքով սահմանված կարգով հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Նարեկ Վարդանի Մաղյանի և Դավիթ Հրանտի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հունիսի 18-ի որոշումը պատժի մասով բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալներ Նարեկ Վարդանի Մաղյանի և Դավիթ Հրանտի Հովհաննիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

13.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԳ/0039/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դատապարտյալ Արմեն Ռոբերտի Թամարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 71112014 քրեական գործը: Նույն օրը Արմեն Թամարյանը ձերբակալվել է:

2014 թվականի հոկտեմբերի 26-ին Ա.Թամարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2014 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 71112214 քրեական գործը: Նույն օրը որոշում է կայացվել թիվ 71112014 և թիվ 71112214 քրեական գործերը միացնել մեկ

վարույթում և նախաքննությունը շարունակել թիվ 71112014 քրեական գործի համարով:

2014 թվականի հոկտեմբերի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 71112314 քրեական գործը: Նույն օրը որոշում է կայացվել թիվ 71112014 և թիվ 71112314 քրեական գործերը միացնել մեկ վարույթում և նախաքննությունը շարունակել թիվ 71112014 քրեական գործի համարով:

2015 թվականի մարտի 13-ին Ա.Թամարյանին առաջադրված մեղադրանքը փոխվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, 118-րդ հոդվածով (երկու դրվագ), 34-185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

1.1. 2015 թվականի մարտի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ մուտք է եղել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2015 թվականի մայիսի 27-ին մեղադրող Ռ.Մինասյանի որոշմամբ ամբաստանյալ Ա.Թամարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (երկու դրվագ) և 137-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի մայիսի 29-ի դատավճռով Ա.Թամարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (երկու դրվագ) և 137-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով դրվագներից յուրաքանչյուրի համար պատիժ նշանակելով տուգանք՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 1 տարի 6 ամիս ժամկետով: Գեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով՝ նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով Ա.Թամարյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի հիման վրա վերոհիշյալ դատավճռով նշանակված պատժին մասնակի գումարելով նախորդ՝ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հունվարի 27-ի դատավճռով նշանակված պատժի չկրած մասից 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիսը՝ Ա.Թամարյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 29-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Թամարյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակի և փոփոխել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը. Ա.Թամարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (երկու դրվագ)՝ առանց պատիժ նշանակելու, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի

67-րդ հոդվածի կիրառմամբ 3 տարի ժամկետով ազատազրկման ձևով նշանակված վերջնական պատիժը՝ թողել անփոփոխ:

Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեկամսյա ժամկետում չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

4. 2015 թվականի հոկտեմբերի 20-ին Վճարելի դատարան է մուտք եղել Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճարելի բողոքը, որում վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ և 412-րդ հոդվածի 2-րդ մասերը՝ բողոքի հեղինակը խնդրել է այն ընդունել վարույթ:

Վճարելի դատարանը 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ վճարելի բողոքը վերադարձրել է՝ տրամադրելով 5-օրյա ժամկետ՝ բողոքի ձևական սխալը շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Վճարելի դատարանի որոշմամբ տրամադրված 5-օրյա ժամկետում բողոքի ձևական սխալը շտկելով՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը կրկին վճարելի բողոք է բերել, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի մարտի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացրել դատապարտյալ Ա.Թամարյանը, որն իր անհամաձայնությունն է հայտնել վճարելի բողոքի հետ և խնդրել է այն քննության չառնել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (երկու դրվագ) նախատեսված հանցավոր արարքների համար ամբաստանյալի նկատմամբ նշանակելով տուգանքի ձևով պատիժ, իր դատավճռում արձանագրել է. «(...) [Դ-]ատարանը հաստատված է համարում, որ Արմեն Թամարյանը 2014թ. հոկտեմբերի 21-ին, կենցաղային վեճի ընթացքում Վանաձոր քաղաքի Թամանցիների 2ա հասցեում գտնվող տանը ծեծի է ենթարկել կնոջը՝ Նաիրա Խաչատրյանին՝ դիտավորությամբ ոտքերով ու ձեռքերով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին և պատճառել թեթև վնասի հատկանիշներ չսպարունակող մարմնական վնասվածք:

Բացի այդ նա՝ 2014թ. հոկտեմբերի 22-ին, ժամը 9-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Թամանցիների 2 հասցեում գտնվող բնակարանում կրկին վիճաբանել է կնոջ հետ, որի ընթացքում ծեծի է ենթարկել նրան՝ դիտավորությամբ ձեռքերով հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, քաշել մազերից և պատճառել ֆիզիկական ցավ:

(...)

Նախաքննական մարմնի կողմից Արմեն Թամարյանի կատարած արարքին տրվել է ճիշտ քրեաիրավական գնահատական: Նա կատարել է

ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածով, 118 հոդվածով (...) նախատեսված հանցավոր արարքներ, որոնց համար պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության և պատժի:

(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 235-245):

6. Վերաքննիչ դատարանն իր որոշման շրջանակներում փաստել է. «(...) Վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածի սանկցիայով նախատեսված տուգանք պատժատեսակի նշանակման հնարավորությունը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ այդ պատժատեսակը չի կարող նշանակվել նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի ուժով ամբաստանյալ Ա.Թամարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1 հոդվածի կանոններով նշանակված պատիժը չի կարող պակաս լինել ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի՝ կալանքի երկու երրորդից:

Ըննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածի սանկցիայով նախատեսված կալանքի նշանակման հնարավորությանը՝ ՀՀ վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ այդ պատժատեսակը չի կարող կիրառվել, քանի որ նա գտնվել է նախնական կալանքի տակ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 57 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «/.../ կալանքը կարող է նշանակվել..., երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել»:

(...)

Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածով՝ 2 դրվագով նրան պետք է դատապարտել առանց պատիժ նշանակելու:

(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 50-57):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Վճռաբեկ բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, Ա.Թամարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (2 դրվագ) պատիժ չնշանակելով, թույլ է տվել դատական սխալ, մասնավորապես՝ կիրառել է քրեական օրենքի այն նորմը, որը ենթակա չէր կիրառման, արդյունքում խախտվել է նաև քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը:

Ի հիմնավորումն վերոգրյալ փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասում առկա «սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատիժ» ձևակերպումը, ելնելով, այդ թվում, տվյալ հոդվածի նորմատիվային նշանակությունից, ենթադրում է Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված «հնա-

րավոր թույլատրելի» պատժատեսակներից առավելագույնը: Այլ խոսքով՝ եթե Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված այլընտրանքային պատժատեսակներից մեկը Ընդհանուր մասի հոդվածների ուժով հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառելի չէ (անթույլատրելի պատժատեսակ), այն չի կարող հաշվի առնվել ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի իմաստով «առավելագույն պատիժը» որոշելիս:

Արդյունքում բողոքի հեղինակը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով սահմանված նորմերը: Քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառմամբ արտահայտված դատական սխալը հանգեցրել է հանցանք կատարած անձին օրենքով նախատեսված պայմանների բացակայության դեպքում պատժից ազատելուն, ուստի կայացված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունն ու խախտում սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

8. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի որոշումը և օրինական ուժ տալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 29-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնների առնչությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, ուստի անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (երկու դրվագ) նախատեսված հանցավոր արարքների համար ամբաստանյալ Ա.Թամարյանի նկատմամբ պատիժ չպետք է նշանակվի:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է օրինականության, օրենքի առջև հավասարության, պատասխանատվության անխուսափելիության, անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության, արդարության և պատասխանատվության անհատականացման ու մարդասիրության սկզբունքների վրա»:

ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատժի կամ քրեահրավական այլ ներգործության:

2. Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

2. Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները»:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական օրենսդրության սկզբունքներն այն ելակետային, հիմնարար, ղեկավար դրույթներն են, որոնք ընկած են քրեական օրենսդրության հիմքում. այդ դրույթների վրա հենվում, դրանց համապատասխան է կառուցվում քրեական իրավունքի համակարգը:

Վճարելի դատարանը փաստում է, որ ինչպես քրեական օրենսդրության, այնպես էլ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները քրեական օրենքով նախատեսված այն հիմնադրույթներն են, որոնցով պետք է առաջնորդվի և ղեկավարվի դատարանը: Ընդ որում, պատիժ նշանակելիս դա ունի առանցքային նշանակություն: Այդ համատեքստում Վճարելի դատարանը կրկնում է, որ *պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործությանը քրեաիրավական միջոցներով արձագանքելու պարտադիրությամբ, ինչպես նաև հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև քաղաքացի պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից (տե՛ս Նարեկ Սարգսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0042/01/11 որոշման 16-րդ կետը):*

Վերլուծելով քրեական օրենսդրության սկզբունքներից պատասխանատվության անխուսափելիության հիմնարար դրույթը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ վերջինիս էությունը հանգում է հետևյալին. յուրաքանչյուր անձ, ով հանցագործություն է կատարել, ենթակա է պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության, եթե առկա չեն քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու՝ քրեական օրենսգրքով սահմանված հիմքեր և պայմաններ: Վճարելի դատարանն ընդգծում է, որ ՀՀ

քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նպատակները (սոցիալական արդարության վերականգում, պատժի ենթարկված անձի ուղղում, հանցագործությունների կանխում) քրեաիրավական միջոցներով իրականացնելիս առաջնահերթ նշանակություն ունի քրեական պատասխանատվության անխուսափելիությունը: Այն սերտորեն փոխկապակցված է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի հետ, և այդ սկզբունքների անվերապահ կենսագործումը ուղիղ համեմատական է արդարադատության նկատմամբ հանրության վստահության աստիճանին:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«(...) Կալանքը կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով և միայն այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել»:*

Մեջբերված քրեաիրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ քրեական դատավարության շրջանակներում անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրված լինելու պարագայում կալանքի ձևով պատիժ չի կարող նշանակվել, այսինքն՝ «կալանք» պատժատեսակի կիրառումը նման իրավիճակում վերածվում է օրենքի ուժով նշանակման ոչ ենթակա քրեաիրավական միջոցի:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է. *«Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածը սահմանում է. *«1. Հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված հանցագործությունների քանակը, բնույթը և ծանրությունը, այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները»:*

2. *Հանցագործությունների ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից:*

Հանցագործությունների վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երկու երրորդից:

Հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երեք քառորդից»:

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ հանցագործությունների ռեցիդիվը հանցագործությունների բազմակիության տարատեսակ է, որը պետք է ունենա ինքնուրույն նորմատիվային արժեք և ուրույն դեր քրեախրավական հարաբերությունների կարգավորման կառուցակարգում: Հակառակ պարագայում կատարվի, որ հանցագործությունների ռեցիդիվը կազմող իրավադրույթները հասարակական հարաբերությունների որևէ շրջանակ չեն կանոնակարգում և առարկայագուրկ են, որպիսի ենթադրությունը չի բխում օրենսդրական կարգավորման տրամաբանությունից, արդյունքում վտանգվում է քրեական օրենսդրության խնդիրների իրականացումը (տե՛ս *mutatis mutandis*, Արմեն Պապիկյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-149/07 որոշումը):

Անդրադառնալով հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդպիսի կանոնների՝ օրենսդրի կողմից սահմանումը, ըստ էության, պայմանավորված է ռեցիդիվային հանցավորության դեպքում անձի՝ հանրային բարձր վտանգավորությամբ, ինչը դրսևորվում է նրանում, որ նա, իր նախկին հակաօրինական գործունեությանը պետության կողմից տրված բացասական գնահատականի պայմաններում նոր հանցանք կատարելով, արտահայտում է իր արհամարհական վերաբերմունքը հասարակության և պետության շահերի նկատմամբ (տե՛ս *mutatis mutandis*, Արամայիս Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՍԳ/0204/01/13 որոշման 16-րդ կետը): Սույն նկատառումներից ելնելով էլ օրենսդիրը սահմանել է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոններ՝ բացառելու, ի թիվս այլնի, չարդարացված մեղմ պատիժների նշանակման հնարավորությունը:

Վերոգրյալի համատեքստում վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատժաչափ որոշելիս դատարանի լիազորությունները որոշակիորեն սահմանափակված են: Մասնավորապես՝ հասարակ, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում դատական հայեցողության սահմանները արգելափակված են առավելագույն պատժաչափի համապատասխանաբար՝ կեսից, երկու երրորդից, երեք քառորդից ոչ պակաս չափով պատժի նշանակմամբ:

13.1. Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված *«առավելագույն պատիժ»* եզրույթը ենթադրում է սանկցիայով նախատեսված և նշանակման համար թույլատրելի, այսինքն՝ **կիրառման ենթակա** պատժատեսակներից *առավել խիստը*: Այլ կերպ՝ այն դեպքում, երբ սանկցիայով նախատեսված են մեկից ավելի պատժատեսակներ, իսկ դրանցից առավել խիստը ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի համապատասխան նորմի ուժով կիրառման ենթակա չէ, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով որպես *«առավելագույն պատիժ»* պետք է համարել *խստությամբ դրան նախորդող պատժատեսա-*

կը: Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը պայմանավորված է թե՛ քրեական օրենսդրության (մասնավորապես՝ պատասխանատվության անխուսափելիության) և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների ապահովման անհրաժեշտությամբ, թե՛ ռեցիդիվային հանցավորության՝ քրեախրավական հարաբերությունների կարգավորման կառուցակարգում ունեցած դերով և նշանակությամբ: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի այդպիսի մոտեցումը կոչված է բացառելու այն իրավիճակը, երբ հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը անձի համար կարող է ստեղծել ավելի բարենպաստ վիճակ, քան դրա բացակայությունը՝ խաթարելով ռեցիդիվի ինստիտուտի, ինչպես նաև քրեական օրենսդրության և պատժի նշանակման սկզբունքների տրամաբանությունը: Ավելին՝ այն հանգամանքը, որ դատարանի կողմից մեղավոր ճանաչվելու դեպքում միևնույն է անձի նկատմամբ պատիժ չի նշանակվելու, կարող է կանխորոշվել դեռևս մինչդատական վարույթում՝ պատժի մասով կայացվելիք դատական ակտը վերածելով կանխատեսելի իրողության, ինչն անթույլատրելի է, և բովանդակագրվում է արդարադատության էությունը: Այդպիսի իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, բոլոր այն դեպքերում, երբ անձին մեղսագրվող հանցավոր արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասը նախատեսում է միայն տուգանք կամ կալանք պատժատեսակներից որևէ մեկի կիրառման հնարավորություն (ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ, 118-րդ, 144-րդ, 155-րդ, 156-րդ, 160-րդ, 197-րդ, 260-րդ հոդվածներ, 120-րդ և 121-րդ, 124-րդ, 129-րդ, 130-րդ, 147-րդ հոդվածների 1-ին մասեր և այլն), և այդ անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվում կալանավորումը:

14. Սույն գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն իր՝ 2015 թվականի մայիսի 29-ի դատավճռով Ա.Թամարյանին մեղավոր է ճանաչել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (երկու դրվագ)՝ դրվագներից յուրաքանչյուրի համար նշանակելով պատիժ տուգանքի ձևով (տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի սանկցիայով նախատեսված տուգանք պատժատեսակի նշանակման հնարավորությունը, արձանագրել է, որ ամբաստանյալի նկատմամբ այդ պատժատեսակը չի կարող նշանակվել, քանի որ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի ուժով ամբաստանյալ Ա.Թամարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի կանոններով նշանակված պատիժը չի կարող պակաս լինել նույն օրենսգրքի 118-րդ հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի՝ կալանքի երկու երրորդից: Քննարկելով ամբաստանյալի նկատմամբ կալանքի նշանակման հնարավորությունը՝ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ այդ պատժատեսակը չի կարող կիրառվել, քանի որ Ա.Թամարյանը գտնվել է նախնական կալանքի տակ: Արդյունքում Վերաքննիչ դատարանը ամբաստանյալին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական

օրենսգրքի 118-րդ հոդվածով (2 դրվագ)՝ առանց պատիժ նշանակելու (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերի նկատմամբ կիրառելով 11-13.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ պայմանավորված ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով սահմանված կանոններով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի սանկցիայով նախատեսված տուգանք պատժատեսակի նշանակումը ամբաստանյալի նկատմամբ հնարավոր չէ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժի՝ կալանքի կիրառումը նույն օրենսգրքի ընդհանուր մասի 57-րդ հոդվածի 1-ին մասի ուժով սույն գործով կիրառելի չլինելու պարագայում ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով որպես *«առավելագույն պատիժ»* պետք է դիտարկվեր տուգանքը:

Վերոգրյալից հետևում է, որ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ ամբաստանյալին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (երկու դրվագ) սահմանված հանցագործությունների համար պատիժ չպետք է նշանակվի՝ նույն օրենսգրքի 67.1-րդ հոդվածի սխալ մեկնաբանության արդյունք է: Այս առումով Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում մաս բողոքաբերի կողմից ներկայացված փաստարկին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (երկու դրվագ) նախատեսված հանցավոր արարքների համար ամբաստանյալ Ա.Թամարյանի նկատմամբ պատիժ չպետք է նշանակվի, հիմնավոր չէ:

17. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ, 48-րդ, 61-րդ և 67.1-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է մաս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Նշված խախտումներն իրենց բնույթով էական են, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 419-րդ հոդվածների՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (երկու դրվագ) նախատեսված հանցավոր արարքների համար ամբաստանյալ Ա.Թամարյանի նկատմամբ նշանակելով տուգանքի ձևով պատիժ, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնե-

լով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 29-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բեկանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարել է արդարադատության բուն էությունը, խախտել սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Արմեն Ռոբերտի Թամարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 29-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

14.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0189/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՄԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2016 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արթուր Վիտալի Բոգոմազովի վերաբերյալ 2 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Չ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի ապրիլի 17-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 83154212 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2012 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ Արթուր Բոգոմազովը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական

օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրը Ա.Բոգոմազովի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2012 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ Ա.Բոգոմազովի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2012 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ թիվ 83154212 քրեական գործով վարույթը կասեցվել է:

2012 թվականի դեկտեմբերի 28-ին Ա.Բոգոմազովը հայտնաբերվել է, թիվ 83154212 քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է, և Ա.Բոգոմազովին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ Ա.Բոգոմազովի նկատմամբ որպես խափանման միջոց թողնվել է կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել գրավը՝ գրավի գումարի չափ սահմանելով 1.000.000 ՀՀ դրամը:

Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ դատախազ Բ.Պետրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը՝ Ա.Բոգոմազովի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասով, բեկանվել է:

Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ Ա.Բոգոմազովի պաշտպան Գ.Մադոյանի միջնորդությունը բավարարվել է, մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչվել է թույլատրելի, իսկ որպես գրավի գումարի չափ է սահմանվել 1.000.000 ՀՀ դրամը:

2013 թվականի սեպտեմբերի 6-ին Ա.Բոգոմազովին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

2013 թվականի սեպտեմբերի 19-ին Ա.Բոգոմազովին առաջադրված մեղադրանքը փոփոխվել ու լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով:

2013 թվականի սեպտեմբերի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան:

2. ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Բ.Պետրոսյանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ Ա.Բոգոմազովին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով:

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Բ.Պետրոսյանի՝ 2015 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ Ա.Բոգոմազովին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 2-ի դատավճռով Ա.Բոգոմազովը մեղավոր է ճանաչվել երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով, և յուրաքանչյուր դրվագի համար դատապարտվել ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ Ա.Բոգոմազովը դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամկետով:

Նույն դատավճռով ՀՀ գլխավոր դատախազության քաղաքացիական հայցը բավարարվել է, և Ա.Բոգոմազովից հօգուտ ՀՀ պետական բյուջե է բռնագանձվել 26.077.922 ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում:

3. Ամբաստանյալ Ա.Բոգոմազովի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2015 թվականի օգոստոսի 4-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 2-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու մասին: Ա.Բոգոմազովը մեղավոր է ճանաչվել երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով և յուրաքանչյուր դրվագի համար դատապարտվել ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամկետով: Կիրառվել է ՀՀ Ազգային ժողովի՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, և նա ազատվել է պատժից:

Նույն որոշմամբ Ա.Բոգոմազովից հօգուտ ՀՀ պետական բյուջե է բռնագանձվել 24.077.922 ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Բոգոմազովին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, «*հանդիսանալով ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչությունում հաշվառված՝ «Էռաստա» ՍՊ ընկերության հիմնադիր և տնօրեն,*

2008-2009թթ. ընթացքում Երևան քաղաքի Արովյան 1/3 հասցեում իրականացրել է շահույթ հետապնդող առևտրային գործունեություն, սակայն հարկերը վճարելուց խուսափելու դիտավորությամբ, խախտելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի և «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջները, գործունեության վերաբերյալ հարկման համար հիմք հանդիսացող՝ 2009 թվականի շահութահարկի հաշվարկ, ինչպես նաև՝ 2009թ. 3-րդ ու 4-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկները չկազմելու, Կենտրոնի հարկային տեսչություն չներկայացնելու միջոցով չարամտորեն խուսափել է պետություն վճարել խոշոր չափերով՝ 13.173.234 ՀՀ դրամ հարկերը, այդ թվում՝ ԱԱՀ-ի գծով՝ 3.266. 833 ՀՀ դրամ ու շահութահարկի գծով՝ 9.906.401 ՀՀ դրամ:

(...) Բացի այդ, Արթուր Վիտալիի Բոգոմագովը, հանդիսանալով ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչությունում հաշվառված «Բաց Երկնքի Տակ» ՍՊ ընկերության հիմնադիր և փաստացի ղեկավար, իսկ 2010 թ. սեպտեմբերի 1-ից նաև՝ ընկերության տնօրեն, 2009-2010թթ. ընթացքում Երևան քաղաքի Արովյան 3 հասցեում իրականացրել է շահույթ հետապնդող առևտրային գործունեություն, սակայն հարկերը վճարելուց խուսափելու դիտավորությամբ, խախտելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջները՝ 2010 թվականի համար շահութահարկի հաշվարկ չկազմելու և Կենտրոնի հարկային տեսչություն չներկայացնելու, «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ 2010 թ. հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների համար ընկերության կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, պահված եկամտահարկի հաշվարկ չկազմելու և Կենտրոնի հարկային տեսչություն չներկայացնելու, «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջները՝ 2009թ. 4-րդ, 2010թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների համար ընկերության կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, ԱԱՀ-ի հաշվարկներ չկազմելու և Կենտրոնի հարկային տեսչություն չներկայացնելու, «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝ 2010թ. ապրիլ և մայիս ամիսների համար կազմված և Կենտրոնի հարկային տեսչություն ներկայացված «գործատուների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների» հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու, իսկ 62.800 ՀՀ դրամ գումարի վճարը՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների խախտմամբ 2010թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար «գործատուների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների» հաշվետվություններ չկազմելու և Կենտրոնի հարկային տեսչություն չներկայացնելու միջոցով չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել խոշոր չափերով՝ 14.654.688 ՀՀ դրամ հարկերը, այդ թվում՝ շահութահարկի գծով՝ 2.312.745 ՀՀ դրամ, ԱԱՀ-ի գծով՝ 9.054.645 ՀՀ դրամ, եկամտահարկի գծով՝ 3.199.498 ՀՀ դրամ ու սոց. վճարի գծով՝ 87.800 ՀՀ դրամ (...)) (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 44-48):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) Սույն քրեական գործի դատական քննությանը հաստատվել է, որ ամբաստանյալ Ա.Բոգոմյանովի կատարած հանցագործության հետևանքով ՀՀ պետական բյուջեին անմիջականորեն պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 27.827.922 ՀՀ դրամ գումարի չափով գույքային վնաս, որից որպես շահութահարկ 1.750.000 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումար է փոխանցվել ՀՀ Կենտրոնական զանձապետարանի (...) հաշվեհամարին:

(...) Ուսումնասիրելով Ա.Բոգոմյանովի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները՝ ամբաստանյալ Արթուր Բոգոմյանովի նկատմամբ նրա կատարած յուրաքանչյուր հանցագործության համար պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը, այն, որ Ա.Բոգոմյանովը նախկինում դատված չի եղել, խնամքին են գտնվում երկու անչափահաս երեխաները, որոնցից մեկը՝ մինչև 14 տարեկան:

Որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք՝ յուրաքանչյուր դրվագով դատարանը հաշվի է առնում պատիժ նշանակելու պահին հանցավորի խնամքին մինչև 14 տարեկան մեկ երեխայի առկայությունը:

Ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն:

(...) Դատարանը հաշվի է առնում (...) ամբաստանյալ Արթուր Վիտալիի Բոգոմյանովի կողմից կատարված հանցագործությունների՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, այն, որ յուրաքանչյուր դրվագով ամբաստանյալին մեղսագրվող՝ հարկերը, տուրքերը, պարտադիր այլ վճարումները վճարելուց խուսափելու խոշոր չափի առավելագույն սահմանը ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգ-հազարապատիկն է՝ 15.000.000 (...) ՀՀ դրամ գումարը, իսկ Ա.Բոգոմյանովին մեղսագրվող հանցագործության առաջին դրվագի գումարը կազմում է 13.173.234 ՀՀ դրամ ընդհանուր գումար, երկրորդ դրվագին՝ 14.654.688 ՀՀ դրամ ընդհանուր գումար, այսինքն՝ այդ գումարները մոտ են նշված չափի առավելագույն սահմանին:

Հաշվի առնելով ամբաստանյալ Արթուր Բոգոմյանովի կատարած՝ երկու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններից յուրաքանչյուրի բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, դրանց կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցագործությունը կատարելուց հետո նրա դրսևորած վարքագիծը, խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը և այդ ուղորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը, դրանք համադրելով ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների հետ՝ դատարանը

նր գտնում է, որ Արթուր Բոգոմագովն իր կատարած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված յուրաքանչյուր հանցագործության համար ենթակա է պատժի այդ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստ պատժի՝ ազատազրկման ձևով, քանի որ այդ պատիժն է անհրաժեշտ և բավարար Ա.Բոգոմագովին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար, իսկ պատժի նվազ խիստ տեսակ տուգանքը տվյալ դեպքում չի կարող ապահովել պատժի նպատակները» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 66-92):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) [Վ]երաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը պատժատեսակի և պատիժը կրելու նպատակահարմարության հարցում հանգել է ճիշտ հետևության, սակայն պատժաչափի առումով՝ լիարժեք չի պահպանել ՀՀ քրեական օրենսդրության ընդհանուր մասով ամրագրված պատժի նշանակումը կանոնակարգող իրավադրույթները:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի հետևությունն առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատժի նվազ խիստ տեսակ տուգանքը չի կարող ապահովել պատժի նպատակները:

(...) Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով, որ ամբաստանյալ Ա.Բոգոմագովի կատարած հանցագործության հետևանքով ՀՀ պետական բյուջեին անմիջականորեն պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 27.827.922 ՀՀ դրամ գումարի չափով գույքային վնաս, որից, որպես շահութահարկ, 1.750.000 ՀՀ դրամ գումար է փոխանցվել ՀՀ Կենտրոնական գանձապետարանի թիվ 90005005012 հաշվեհամարին, պատշաճ գնահատման չի արժանացրել նշված հանգամանքը՝ այն, որ Արթուր Բոգոմագովը հանցագործությունների հետևանքով պատճառված վնասը հատուցելու ուղղությամբ միջոցներ է ձեռնարկել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Արթուր Բոգոմագովը դատարան է ներկայացրել ևս 2.000.000 ՀՀ դրամ գումար որպես շահութահարկ փոխանցելու վերաբերյալ անդորրագրեր:

Վերը նշված հանգամանքների վերլուծությամբ վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով յուրաքանչյուր դրվագով ազատազրկման ձևով նշանակված պատիժը մեղմացնելով՝ երկու տարի վեց ամիս ժամկետով պատիժ նշանակելով, հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 164-170):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներ-
քնիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն ամբաս-
տանյալ Ա.Բոգոմազովի նկատմամբ պատիժ նշանակելիս խախտել է ՀՀ
քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների պահանջնե-
րը՝ կայացնելով անհիմն և չպատճառաբանված դատական ակտ:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկների՝ բողոքաբերը
վերլուծել է Վճարելի դատարանի՝ թիվ ԵՇԳ/0029/01/08, թիվ
ԵԿԳ/0042/01/11, թիվ ԵՇԳ/0143/01/13 որոշումները և եզրահանգել, որ
հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի
վերաբերյալ հիշյալ նախադեպային որոշումներում արտահայտված իրա-
վական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով ամբաստանյալ
Ա.Բոգոմազովին մեղսագրվող արարքների նկատմամբ: Մասնավորապես,
բողոք բերած անձը փաստել է, որ հանցագործությամբ պետությանը
պատճառված 27.827.922 ՀՀ դրամ վնասի ընդամենը 13.5%-ը վերականգ-
նելն էականորեն չի նվազեցրել ամբաստանյալի կողմից կատարված ա-
րարքների հանրային վտանգավորության աստիճանը:

9. Վերոգրյալի հետ մեկտեղ բողոքի հեղինակն արձանագրել է, որ
Ա.Բոգոմազովի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դա-
տարանը հաշվի է առել ինչպես ամբաստանյալին մեղսագրվող հանցա-
գործությունների արդյունքում պատճառված վնասի չափը (այն, որ այդ
գումարները մոտ են ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 3-րդ մասով
սահմանված խոշոր չափի վնասի առավելագույն շեմին), այնպես էլ հան-
ցագործության կատարումից հետո նրա դրսևորած վարքագիծը: Ուստի
բողոքաբերը եզրահանգել է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի
պատճառաբանություններն այն մասին, որ ստորադաս դատարանը
պատշաճ գնահատման չի արժանացրել ամբաստանյալի՝ հանցագոր-
ծությունների հետևանքով պատճառված վնասը հարթելուն ուղղված գոր-
ծողությունները:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղա-
կալը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական
ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգու-
մը.**

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրա-
վական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության ան-
հատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավոր-
ված և պատճառաբանված են արդյոք ամբաստանյալ Ա.Բոգոմազովի

նկատմամբ նշանակված պատժաչափը փոփոխելու վերաբերյալ Վե-
րաքննիչ դատարանի հետևությունները:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-
ին մասի համաձայն՝ *«Գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն
անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճա-
ռով, չի համապատասխանում հանցագործության ծանրությանը և ամ-
բաստանյալի անձին, վերաքննիչ դատարանը մեղմացնում կամ խստաց-
նում է պատիժը՝ ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր
սկզբունքներով»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և
քրեախրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարա-
ցի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հան-
գամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար
լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

*«Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը,
ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործու-
թյունները»:*

Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատ-
մամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի
Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնե-
լով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

*2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հան-
րության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի
անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և
պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով (...):»:*

13. Մեջբերված նորմերի (պատիժ նշանակելու ընդհանուր
սկզբունքների վերլուծությանը Վճռաբեկ դատարանը մանրամասն անդ-
րադարձել է Նարեկ Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի
թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 14-23-րդ կետերում) լույսի ներքո մեկնա-
բանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին
մասը՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է.

*«[Վ]երաքննիչ դատարանն իրավասու է պատժի մասով փոփոխել
առաջին ատյանի դատարանի դատական ակտը հետևյալ դեպքերում.*

*1) առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս չեն
պահպանվել պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները,*

*2) առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս հաշ-
վի չեն առնվել հանցագործության՝ հանրության համար վտանգավորու-
թյան աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև
պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգա-
մանքները,*

3) առաջին ատյանի դատարանի կողմից վերոնշյալ հանգամանք(ներ)ը հաշվի չառնելը հանգեցրել է անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման:

(...) [Ա]ռաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս վերոնշյալ պահանջների չպահպանման վերաբերյալ վերաքննիչ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված: Այլ կերպ ասած՝ պատիժն ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու հիմքով առաջին ատյանի դատարանի դատական ակտը փոփոխելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե պատժի նշանակման հատկապես որ սկզբունքը կամ սկզբունքները չեն պահպանվել, հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող որ հանգամանքները հաշվի չեն առնվել և արդյոք այդ հանգամանքները հաշվի չառնելն է հանգեցրել անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման: Այսինքն՝ եթե վերաքննիչ դատարանը, գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, պետք է պատճառաբանի, թե ինչու է արտահայտվել պատժի խստության կամ մեղմության ակնհայտությունը (տե՛ս Նարեկ Սարգսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0042/01/11 որոշման 24-րդ կետը):

14. ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում խոշոր չափերով հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու համար, իսկ նույն հոդվածի 3-րդ մասով խոշոր չափ է համարվում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից տասնհինգհազարապատիկը չգերազանցող գումարը:

Վերահաստատելով իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն առ այն, որ *հանցագործության հանրային վտանգավորության տիպային բնութագիրն արտացոլվում է օրենսդրի կողմից սահմանված սանկցիայում, իսկ յուրաքանչյուր կոնկրետ գործով արարքի հանրային վտանգավորության գնահատականը դատարանի կողմից կարող է որոշվել կոնկրետ հանցագործության տարրերի առանձնահատկությունների, դրա կատարման հանգամանքների, հանցավորի անձնավորության, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հիման վրա* (տե՛ս, օրինակ, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշման 39-րդ կետը)՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով պատժի անհատականացման սկզբունքի տեսանկյունից արարքի հանրային վտանգա-

վորությունը որոշելիս դատարանը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի չվճարված հարկերի, տուրքերի կամ պարտադիր այլ վճարումների չափը: Այսինքն՝ յուրաքանչյուր գործով պատիժ նշանակելիս պետք է համապատասխան գնահատականի արժանանա այն հանգամանքը, թե որքանով է հանցագործությամբ պատճառված վնասը մոտ հարկերի, տուրքերի կամ պարտադիր այլ վճարումների խոշոր չափերի՝ նվազագույն կամ առավելագույն սահմանին: Հակառակ պարագայում նշանակված պատժով չի ապահովվի կատարված արարքի և կիրառված քրեախրավական միջոցի համաչափությունը, ինչպես նաև կխաթարվեն պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմինն Ա.Բոգոմազովին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով՝ համապատասխանաբար 13.173.234 և 14.654.688 ՀՀ դրամ խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել Ա.Բոգոմազովի կատարած հանցագործությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցագործությունները կատարելուց հետո նրա դրսևորած վարքագիծը, անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները: Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով հարկեր վճարելուց խուսափելու խոշոր չափի առավելագույն սահմանը նվազագույն աշխատավարձի տասնհինգհազարապատիկն է (15.000.000 ՀՀ դրամը), իսկ Ա.Բոգոմազովը չարամտորեն խուսափել է վճարել նշված առավելագույն սահմանին մոտ գումարներ, այն է՝ մի դրվագով՝ 13.173.234, մյուսով՝ 14.654.688 ՀՀ դրամ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել այն հանգամանքը, որ Ա.Բոգոմազովը միջոցներ է ձեռնարկել պետությանը պատճառված վնասը՝ 27.827.922 ՀՀ դրամ գումարը, հատուցելու ուղղությամբ և նշված գումարից վերականգնել է 1.750.000 ՀՀ դրամը: Հիմք ընդունելով նշյալը, ինչպես նաև այն, որ Ա.Բոգոմազովի կողմից վերականգնվել է ևս 2.000.000 ՀՀ դրամ՝ Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և մեղմացրել ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները դիտարկելով սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանն իրավասու չէր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա պատժի մասով փոփոխել ստորադաս դատարանի դատական ակտը:

Այսպես, Վճարելի դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանն արձանագրել է նախաքննության ընթացքում Ա.Բոգոմազովի կողմից 1.750.000 ՀՀ դրամ վերականգնելու փաստը և հաշվի է առել դա նրա նկատմամբ պատիժ նշանակելիս: Այս պայմաններում հիմնավոր չի կարող համարվել նշված հանգամանքը պատշաճ գնահատման չարժանացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատողությունը, առավել ևս այն դեպքում, երբ չի պատճառաբանվել, թե ինչու է դրսևորվել դրա գնահատման ոչ պատշաճ լինելը: Ավելին՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը չի պարունակում որևէ հիմնավորում առ այն, թե արդյոք պատճառոված վնասի մի մասի վերականգնման փաստը Առաջին ատյանի դատարանի կողմից պատշաճ գնահատման չարժանացնելը հանգեցրել է ամբաստանյալ Ա.Բոգոմազովի նկատմամբ անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանում դատաքննության ժամանակ ամբաստանյալի կողմից ևս 2.000.000 ՀՀ դրամ գումար վերականգնելուն, ապա Վճարելի դատարանը գտնում է, որ այդ հանգամանքը պետությանը պատճառված ընդհանուր վնասի՝ 27.827.922 ՀՀ դրամ գումարի պայմաններում օբյեկտիվորեն չի կարող նվազեցնել նրա կողմից կատարված հանցագործությունների հանրային վտանգավորության աստիճանը և հիմք հանդիսանալ Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժը մեղմացնելու համար:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, եզրահանգելով, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ լինելու պատճառով, բավարար չափով և պատշաճ կերպով չի պատճառաբանել, թե ինչու է արտահայտվել դրա խստության ակնհայտությունը:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված չեն ամբաստանյալ Ա.Բոգոմազովի նկատմամբ նշանակված պատժաչափը փոփոխելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

18. Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Նշված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-399-րդ, 419-րդ հոդվածների համաձայն, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս

պահպանել է պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, հաշվի է առել հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ընդ որում, պատշաճ գնահատման է ենթարկել կատարված հանցագործությունների՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը՝ մատնանշելով այն հանգամանքը, որ դրանցով պատճառված վնասը մոտ է հարկերի, տուրքերի կամ պարտադիր այլ վճարումների խոշոր չափերի առավելագույն սահմանին: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 2-ի դատավճռին՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արթուր Վիտալի Բոգոմազովի վերաբերյալ երկու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 4-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 2-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

15.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԳ/0195/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ ամբաստանյալ
պաշտպան

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ա.ԽԱԼԱՓՅԱՆԻ
Ա.ՋՈՀՐԱԲՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արշավիր Սերժիկի Խալափյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Խալափյանի, նրա պաշտպաններ Ա.Ջոհրաբյանի և Ա.Ֆանյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2014 թվականի մայիսի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ - հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 41106514 քրեական գործը՝ Արշավիր Խալափյանի կողմից Կապանի քաղաքապետարանի կողմից ներկայացված դիմումի ընթացքը կասեցնելու նպատակով ապօրինաբար 1500 ԱՄՆ դոլար կաշառք պահանջելու դեպքի առթիվ (այսուհետ՝ նաև 2-րդ դրվագ):

2014 թվականի հունիսի 26-ին ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 41108114 քրեական գործը՝ Արշավիր Խալափյանի կողմից Սյունիքի մարզի Սյունիք համայնքի տարածքում գերեզմանատեղեր ապօրինի հատկացնելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում, ի վնաս համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանի գործողություններ չկատարելու նպատակով, վերջինիս որդուց՝ Սարմեն Սարգսյանից, որպես կաշառք ապօրինի 10 000 ԱՄՆ դոլար պահանջելու դեպքի առթիվ (այսուհետ՝ նաև 1-ին դրվագ):

2014 թվականի հուլիսի 2-ին հիշյալ քրեական գործերը միացվել են, և գործի քննությունը շարունակվել է մեկ վարույթով:

2. Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ Ա.Խալափյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով (երկու դրվագով):

3. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2015 թվականի մայիսի 5-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Ա.Խալափյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով (1-ին դրվագով) նախատեսված հանցագործության կատարման մեջ, և նա արդարացվել է ապացույցների անբավարարության հիմքով:

Ա.Խալափյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով (2-րդ դրվագ) և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

4. Մեղադրող Գ.Դանիելյանի, ամբաստանյալ Ա.Խալափյանի, նրա պաշտպաններ Հ.Դավթյանի և Կ.Օվչյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 5-ի դատավճիռը:

5. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ամբաստանյալ Ա.Խալափյանը, նրա պաշտպաններ Ա.Զոհրաբյանը և Ա.Ֆանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Խալափյանի, նրա պաշտպաններ Ա.Զոհրաբյանի և Ա.Ֆանյանի վճռաբեկ բողոքները ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ Ա.Խալափյանին ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով (2-րդ դրվագով) մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն]ա 2014 թվականի ապրիլի 7-ին, նախ որպես Կապան քաղաքի Ռ.-Մինասյան փողոցի 17 շենքի բնակիչ, գրավոր դիմել է Կապանի քաղաքապետարան՝ Աշոտ Կույումջյանի կողմից նշված հասցեին հարակից տարածքում ապօրինի շինարարություն կատարելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար, իսկ 2014 թվականի ապրիլի 18-ին, որպես ՀՀ Փաստաբանների պալատի փաստաբան, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ Սյունիքի մարզային մասնաճյուղի նախագահ և Սյունիքի հակակոռուպցիոն կենտրոնի համակարգող, դարձյալ նույն նպատակով հերթական դիմումն է ներկայացրել քաղաքապետարան, որից հետո 2014 թվականի մայիսի 1-ին վերոհիշյալ հյուրանոցային համալիրի թիվ 210 առանձնասենյակում հանդիպել է Ա.Կույումջյանին ու իր կողմից ներկայացված դիմումների ընթացքի վերաբերյալ գործողություններ չկատարելու, այն է՝ հետևողականություն չցուցաբերելու, նոր դիմումներ չներկայացնելու, ավելի խիստ վարչական պատասխանատվության ենթարկելու համար խնդիրներ չառաջացնելու, դարձյալ հանդես գալով որպես փաստաբան և հիշյալ կառույցների մարզային ներկայացուցիչ՝ Աշոտ Կույումջյանից որպես կաշառք ապօրինի պահանջել է 1500 ԱՄՆ դոլար» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 244-245):

7. 2014 թվականի ապրիլի 18-ին ամբաստանյալ Ա.Խալափյանը Ա.Կույումջյանի ավտոտնակի վերաբերյալ հարցում է ներկայացրել Կապանի քաղաքապետարան՝ նշելով. «Ղեկավարվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ, ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1-րդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ, 11-րդ հոդվածներով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով՝ խնդրում եմ տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե Կապան քաղաքի Ռ.-Մինասյան փողոցի թիվ 17 շենքի անմիջական հարևանությամբ կատարվող շինարարության փաստի հետ կապված Կապանի քաղաքապետարանն ի՞նչ քայլեր է ձեռնարկել և ձեռնարկում» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-րդ, թերթ 26):

8. Վկա Ա.Կույումջյանն ամբաստանյալ Ա.Խալափյանի՝ որպես փաստաբան հանդես գալու հանգամանքի վերաբերյալ տվել է հետևյալ ցուցմունքը. «(...) [Բ]աղաքապետարանից տեղեկացա նաև, որ Ա.Խալափյանը, որին ճանաչել եմ որպես փաստաբան, բողոքել է քաղաքապետարան նշված հողամասի շինարարության համար(...)» (քրեական գործ, հատոր 1, թերթ 80): Ա.Կույումջյանը նշել է նաև, որ հյուրանոցում հանդիպման ժամանակ Ա.Խալափյանը հանդես էր գալիս և անընդհատ շեշ-

տում էր, որ ինքը փաստաբան է, լավ գիտելիքներ ունի, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի Սյունիքի մարզային մասնաճյուղի և հանրային հիմունքներով գործող Սյունիքի հակակոռուպցիոն կենտրոնի նախագահն է (քրեական գործ, հատոր 1, թերթ 90):

9. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում նշել է. «(...) 18.04.2014 թվականին Կապանի քաղաքապետարան ուղարկված հարցումը գնահատելիս դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Արշավիր Խալափյանն Աշոտ Կույումջյանի ավտոտնակի վերաբերյալ հարցում կատարելիս հանդես է եկել ոչ միայն որպես Կապան քաղաքի Ռ.Մինասյան փողոցի թիվ 17 շենքի թիվ 1ա տարածքի համասեփականատեր: Նշված հանգամանքը հիմնավորվում է այն փաստարկով, որ այդ հարցման մեջ նա նշել է, որ «ես հանդիսանում եմ նաև «Հայաստանի Երիտասարդ Իրավաբանների Ասոցիացիա» հասարակական կազմակերպության Սյունիքի մարզային մասնաճյուղի նախագահը և հանրային հիմունքներով գործող Սյունիքի հակակոռուպցիոն կենտրոնի համակարգողը և այսուհետ սույն գործով Ձեզ կղիմեմ ոչ միայն որպես Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի թիվ 17 շենքի թիվ 1ա հասցեում գտնվող տարածքի համասեփականատեր»: Բացի այդ, նշված հարցման մեջ Արշավիր Խալափյանը ղեկավարվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով, որը վկայում է այն մասին, որ հարցում կատարելիս նա հանդես է եկել նաև որպես փաստաբան:

(...)

Ամբաստանյալի կատարած հանցավոր արարքը՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 200 հոդվածի 3-րդ մասով (երկրորդ դրվագով), հիմնավորված է, մեղսագրվող արարքի նկատմամբ քրեական օրենքի որակումը՝ ճիշտ, որով էլ նա ենթակա է պատասխանատվության և պատժի» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 38, 45):

10. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ բավարար են ամբաստանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով (երկրորդ դրվագով) առաջադրված մեղադրանքը գնահատելու և այն հիմնավորված համարելու համար:

(...)

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի սուբյեկտը հատուկ է՝ ի թիվս այլոց, փաստաբան: Հատուկ սուբյեկտին ապօրինաբար դրամ, արժեթղթեր կամ այլ գույք է տրվում կամ նրանց գույքային բնույթի ծառայություններ են մատուցվում, որպեսզի նրանք, իրենց գրաված դիրքի հետ կապված, կաշառք տվողի օգտին կատարեն որոշակի գործողություններ (անգործություն):

Սույն գործի նյութերից երևում է, որ Արշավիր Խալափյանը հանդիսացել է փաստաբան, վերջինիս կողմից ապօրինաբար դրամ պահանջելը կապված է նրա դիրքի, լիազորությունների շրջանակի հետ: Հանդես գալով որպես փաստաբան, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների աս-

սոցիալիստական» ՀԿ Սյունիքի մարզային մասնաճյուղի նախագահ և Սյունիքի հակակոռուպցիոն կենտրոնի համակարգող, հարցում ներկայացնելով Կապանի քաղաքապետարան՝ Կապան քաղաքի Ռ.Մինասյան փողոցի թիվ 17 շենքի թիվ 1ա հասցեին հարակից տարածքում ապօրինի շինարարություն կատարելու վերաբերյալ, ներկայացված դիմումների ընթացքի վերաբերյալ գործողություններ չկատարելու համար Աշոտ Կույումջյանից որպես կաշառք ապօրինի պահանջել է 1500 ԱՄՆ դոլար: Հետևաբար, Արշավիր Խալափյանը հանդիսանում է առևտրային կաշառքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով հանցագործության սուբյեկտ» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 213, 219):

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերները գտնում են, որ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, մասնավորապես՝ սխալ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասը:

Ի հիմնավորումն իրենց փաստարկների՝ բողոքի հեղինակները, վկայակոչելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, նշել են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության սուբյեկտը հատուկ է, այն է՝ փաստաբան, ով իրավաբանական օգնություն է տրամադրում իր վստահորդին: Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն այն փաստերը, որ Ա.Կույումջյանն ապօրինի շինարարությունն իրականացրել է Կապան քաղաքի Ռ.Մինասյան փողոցի թիվ 17 շենքի բակում, որի 1ա հասցեում գտնվող տարածքը համասեփականության իրավունքով պատկանում է ամբաստանյալ Ա.Խալափյանին: Վերջինս նշված հարցով Ա.Կույումջյանի հետ առնչվել է իր անունից, իր շահերի համար և չի ներկայացրել որևէ վստահորդի շահ, որը հաստատվում է քրեական գործով վստահորդի առկայության վերաբերյալ որևէ ապացույցի բացակայությամբ:

12. Բացի այդ, բողոքաբերները գտնում են, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ, 17-րդ, 18-րդ, 23-րդ, 25-րդ, 35-րդ, 107-րդ, 126-րդ, 127-րդ, 358-րդ, 360-րդ, 365-րդ, 366-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 5-րդ հոդվածների պահանջները, քանի որ Ա.Խալափյանին մեղավոր են ճանաչել առանց բավարար ապացույցների, ինչպես նաև կոնկրետ ապացույցներով չեն հաստատել վերջինիս մեղավորությունը, այն է՝ ուղղակի դիտավորությամբ գործելը, որը մեղաագրվող հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 5-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 4-ի դատական ակտերը և ամբաստանյալ Ա.Խալափյանին ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով՝ 2-րդ դրվագով առաջադրված մեղադրանքում արդարացնել հանցակազմի բացակայության հիմքով՝ ճանաչելով և հռչակելով նրա անմեղությունը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

14. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ փաստաբանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված առևտրային կաշառք ստանալու հանցակազմի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

15. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ ամբաստանյալ Ա.Խալափյանը ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցակազմի սուբյեկտ է:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում հետևյալ արարքի համար.

«Առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի, արբիտրի, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությունը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրի, աուդիտորի կամ փաստաբանի կողմից կաշառք ստանալը, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իրենց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար»:

Մեջբերված քրեաիրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ նշյալ հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է ապօրինաբար համապատասխան անձանց կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իրենց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք,

արժեքներ կամ որևէ այլ առավելություն ստանալով կամ պահանջելով կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելով, որն ուղղված է կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելուն կամ չկատարելուն:

Ինչ վերաբերում է քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմին, ապա այն կարող է դրսևորվել մեղքի՝ միայն ուղղակի դիտավորության ձևով. առևտրային կաշառք ստացողը պետք է գիտակցի, որ ինքն ապօրինի վարձատրություն է ստանում, պահանջում կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունում, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա: Բացի այդ, օրենսդիրը որպես քննարկման առարկա հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ սահմանել է հանցագործության կատարման նպատակը, այն է՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելը կամ չկատարելը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առևտրային կաշառք ստացողի մոտ հանցանքը կատարելու ուղղակի դիտավորության առկայության համար անհրաժեշտ է վերջինիս կողմից հետևյալ հանգամանքների միաժամանակյա գիտակցումը.

1) արարքի հակաիրավական բնույթը, այն է՝ վարձատրություն ստանալու իրավական հիմքերի բացակայությունը,

2) ապօրինի վարձատրություն ստանալու նպատակը, այսինքն՝ այն, որ վարձատրությունը տրվում է համապատասխան անձի օգտին որոշակի գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

16.1. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ խնդրո առարկա հանցակազմի վերլուծությունից հետևում է, որ այն արտահայտված է հատուկ սուբյեկտով՝ փաստաբան, առևտրային կամ այլ կազմակերպության ծառայող, արբիտր և այլք:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով հանցագործության հատուկ սուբյեկտի հասկացությանը, հատուկ սուբյեկտի որոշման հիմքում ընկած չափանիշներին, իր՝ 2010 թվականի հունվարի 14-ի թիվ ՍԳ-Ո-851 որոշման 5-րդ կետում նշել է. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ հատուկ սուբյեկտի որոշումն արտահայտում է կոնկրետ տեսակի հանցագործությունների առանձնահատկությունները, դրանց հանրորեն վտանգավորության աստիճանը: Այս կամ այն անձին որպես տվյալ հանցագործության հատուկ սուբյեկտ ճանաչելը պայմանավորվում է նրանով, որ իրենց պաշտոնական կամ այլ դրության հիմքով նրանք կարող են կատարել հանցագործություններ, որոնք այլ անձինք կատարել չեն կարող: Այսինքն՝ տվյալ հանցագործության բնույթը և այն կատարելու հնարավորությունն են այն չափանիշները, որոնք օբյեկտիվորեն, անկախ օրենսդրի կամքից, կանխորոշում են հատուկ սուբյեկտի շրջանակը: Այս չափանիշները ենթադրում են, որ տվյալ հանցակազմի հատուկ սուբյեկտի շրջանակն անխուսափելիորեն պետք է համընկնի բոլոր այն անձանց

շրջանակի հետ, ովքեր իրենց պաշտոնական կամ այլ դրության ուժով ունակ են կատարել տվյալ արարքը: Մասնավորապես, առանձնացվում են հատուկ սուբյեկտի որոշման հետևյալ հատկանիշները. իրավական կարգավիճակը, ժողովրդագրական հատկանիշը, մասնագիտական պարտականությունները, կատարած աշխատանքի բնույթը, արդարադատության բնագավառում պետության և քաղաքացիների միջև հարաբերությունները և այլն (...):»:

16.2. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցակազմում հատուկ սուբյեկտի առանձնացումը պայմանավորված է դրա մեջ ներառված անձանց կարգավիճակի առանձնահատկություններով, այլ կերպ՝ անձին համապատասխան հանցակազմի սուբյեկտ ճանաչելու համար անհրաժեշտ է, որ քրեական օրենքով արգելված արարքի կատարումը կապված լինի նրա գրաված դիրքի, իրականացրած գործունեության հետ (տե՛ս, *mutatis mutandis*, *Ռուբեն Ազատյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅԲԲ-1/0074/01/08 որոշման 16-րդ կետը*):

17. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Փաստաբան է այն անձը, որն ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և ստացել է համապատասխան արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար»:

Սույն նորմի բովանդակությունից հետևում է, որ անձի կողմից փաստաբանական արտոնագիր ստանալու նպատակը փաստաբանական գործունեության իրականացումն է, իսկ դա փաստաբանի կարգավիճակից բխող և բացառապես վերջինիս օրենքով վերապահված հատուկ լիազորություն է:

Վերոնշյալի, ինչպես նաև սույն որոշման 16.1.-16.2.-րդ կետերում արված դատողությունների համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ փաստաբանը ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցավոր արարքի սուբյեկտ կարող է ճանաչվել միայն այն դեպքում, երբ նշյալ արարքի՝ վերջինիս կողմից կատարումը կապված լինի նրա կողմից իրականացվող փաստաբանական գործունեության հետ:

17.1. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են.

«1. Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

2. Փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ գործունեությունը՝

1) *խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը (...).*

2) *ներկայացուցչություն, ներառյալ՝ ներկայացուցչությունը դատարանում (...).*

3) *քրեական գործերով պաշտպանություն.*

4) *օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը»:*

Մեջբերված իրավանորմերի վերլուծության հիման վրա Վճարելի դատարանը փաստում է, որ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար արտոնագիր ստացած անձի կողմից իրականացվող ցանկացած գործունեություն չէ, որ համարվում է փաստաբանական, այլ կերպ ասած՝ փաստաբանի կարգավիճակից բխող:

Այդ համատեքստում Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ համապատասխան արտոնագիր ստացած անձի իրականացրած գործունեությունը որպես փաստաբանական համարելու համար միաժամանակ անհրաժեշտ է, որ՝

1) առկա լինի իրավաբանական օգնություն ստացող անձ,

2) իրականացվի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում մատնանշված գործունեության տեսակներից որևէ մեկը, և

3) իրականացվող այդ գործունեությունը ուղղված լինի իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը:

18. Այսպիսով, Վճարելի դատարանն եզրահանգում է, որ փաստաբանը ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանքի սուբյեկտ կարող է ճանաչվել այն դեպքում, երբ նշյալ նորմի դիսպոզիցիայում նկարագրված արարքի՝ վերջինիս կողմից կատարումը փոխկապված լինի նրա կողմից իրականացվող փաստաբանական գործունեության, այն է՝ իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանության հետ:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Խալափյանին ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով (2-րդ դրվագով) մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, **հանդես գալով որպես փաստաբան**, Ա.Կուլյումջյանից որպես կաշառք ապօրինի պահանջել է 1500 ԱՄՆ դոլար՝ իր կողմից 2014 թվականի ապրիլի 7-ին և 18-ին ներկայացված դիմումների ընթացքի վերաբերյալ գործողություններ չկատարելու, այն է՝ հետևողականություն չցուցաբերելու, նոր դիմումներ չներկայացնելու, ավելի խիստ վարչական պատասխանատվության ենթարկելու համար խնդիրներ չառաջացնելու համար (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

2014 թվականի ապրիլի 18-ին ամբաստանյալ Ա.Խալափյանը Ա.Կույունջյանի ավտոտնակի վերաբերյալ հարցում է ներկայացրել Կապանի քաղաքապետարան, որում հղում է կատարել, ի թիվս այլ իրավական ակտերի դրույթների, նաև **«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասին** (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վկա Ա.Կույունջյանն ամբաստանյալ Ա.Խալափյանի վերաբերյալ ցուցմունք տալիս նշել է, որ վերջինիս **ճանաչել է որպես փաստաբան** (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, ի թիվս այլնի, հաշվի առնելով ամբաստանյալ Ա.Խալափյանի կողմից Կապանի քաղաքապետարան 2014 թվականի ապրիլի 18-ին կատարված հարցման մեջ **«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասին հղում կատարելու** և դրանով ղեկավարվելու հանգամանքը, արձանագրել է, որ նշյալը վկայում է ամբաստանյալ **Ա.Խալափյանի՝ որպես փաստաբան հանդես գալու մասին**: Արդյունքում դատարանը եզրահանգել է, որ ամբաստանյալի կատարած հանցավոր արարքը՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով (երկրորդ դրվագով), հիմնավորված է, մեղսագրվող արարքի նկատմամբ քրեական օրենքի որակումը՝ ճիշտ, որով էլ նա ենթակա է պատասխանատվության և պատժի (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Իր հերթին Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ բավարար են ամբաստանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով (երկրորդ դրվագով) առաջադրված մեղադրանքը գնահատելու և այն հիմնավորված համարելու համար: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը, ի թիվս այլնի, հաշվի առնելով, որ Կապանի քաղաքապետարան կատարված հարցմամբ ամբաստանյալը **հանդես է եկել նաև որպես փաստաբան**, փաստել է, որ Ա.Խալափյանը հանդիսացել է փաստաբան, վերջինիս կողմից ապօրինաբար դրամ պահանջելը **կապված է նրա դիրքի, լիազորությունների շրջանակի հետ** (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

20. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-18-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Ա.Խալափյանին առևտրային կաշառքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով հանցագործության սուբյեկտ դիտարկելով, պատշաճ գնահատման չեն ենթարկել սույն գործի համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, թե արդյոք ամբաստանյալ Ա.Խալափյանի մոտ փաստաբանական արտոնագրի առկայությունը, Ա.Խալափյանին որպես փաստաբան ընկալելը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը) կամ Կապանի քաղաքապետարան կատարված համապատասխան հարցման մեջ **«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը վկայակոչելը** (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը) կարող էին վկայել Ա.Խալափյանի կողմից փաստաբանական գործու-

նեություն իրականացրած լինելու մասին, այլ կերպ՝ արդյոք Ա.Կույումջյանից դրամ պահանջելը փոխկապված էր Ա.Խալափյանի փաստաբանական գործունեության, այն է՝ **իրավաբանական օգնություն ստացող անձի** իրավունքների, ազատությունների և շահերի իրականացման ու պաշտպանության հետ:

21. Վերոգրյալի պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ ամբաստանյալ Ա.Խալափյանը ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցակազմի սուբյեկտ է, հիմնավոր չեն:

22. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները, չանդրադառնալով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքներին, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 419-րդ հոդվածների, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով սույն որոշման 16-18-րդ կետերում ձևավորած իրավական դիրքորոշումները և յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ, գործի լուծման համար բավարարության տեսանկյունից պետք է հետևություն անի, թե արդյոք ամբաստանյալ Ա.Խալափյանի մոտ փաստաբանական արտոնագրի առկայությունը, Ա.Խալափյանին որպես փաստաբան ընկալելը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը) կամ Կապանի քաղաքապետարան կատարված համապատասխան հարցման մեջ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը վկայակոչելը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը) կարող են բավարար հիմք համարվել Ա.Խալափյանին ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանքի սուբյեկտ համարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արշավիր Մերժիկի Խալափյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասութ-

յան առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 5-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 4-ի որոշումը՝ 2-րդ դրվագով բեկանել և այդ մասով գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արշավիր Սերժիկի Խալափյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

16.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԳ/0130/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
ամբաստանյալ
պաշտպան

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Գ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ժ.ԿՈՏԻԿՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գագիկ Անդրա-
նիկի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝
2015 թվականի հոկտեմբերի 16-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի
տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2015 թվականի ապրիլի 2-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քա-
ղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի
քննչական բաժնում հարուցվել է թիվ 16116215 քրեական գործը՝ ՀՀ քրեա-
կան օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

2015 թվականի ապրիլի 22-ին որպես մեղադրյալ է ներգրավվել Գա-
գիկ Պետրոսյանը, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օ-
րենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով: Նույն օրը մե-

դադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2015 թվականի մայիսի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանն արագացված դատաքննության կարգի կիրառմամբ 2015 թվականի հուլիսի 29-ի դատավճռով Գ.Պետրոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով և դատապարտել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Գ.Պետրոսյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Մեղադրող Վ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 29-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 16-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Ամբաստանյալ Գ.Պետրոսյանի պաշտպան Ժ.Կոտիկյանը 2015 թվականի նոյեմբերի 16-ին, իսկ տուժողներ Ռ.Սարգսյանը և Գ.Սելբոնյանը 2015 թվականի նոյեմբերի 19-ին վճարելի բողոքի պատասխան են ներկայացրել՝ փաստարկելով, որ ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական են և հիմնավորված, իսկ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի ներկայացրած վճարելի բողոքն անհիմն է և չի համապատասխանում բողոքը վարույթ ընդունելու պահանջներին:

Վճարելի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 18-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Գ.Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«[Նյա 2015 թվականի մարտի 19-ին՝ ժամը 22.30-ի սահմաններում, Հրազդանի կիրճից տուն վերադառնալու ճանապարհին, գտնվելով ալկոհոլային խմիչք օգտագործած վիճակում, Երևանի Էջմիածնի Հին խճուղու հասցեում գտնվող ՀՀ ԳԱԱ «Հիդրոպոնիկայի սրբաբնակների ինստիտուտի» շենքի դիմաց անհիմն և առանց որևէ պատճառի վիրավորել է նույն*

տարածքով քայլող, իրեն անձանոթներ՝ Գրիգոր Մելքոնյանին և Ռուբեն Սարգսյանին, որից հետո անհիմն վիճաբանության մեջ է մտել նրանց հետ, նրանց հասցեին հնչեցրել է վիրավորական արտահայտություններ, որի ընթացքում Գ.Պետրոսյանը, ցուցաբերելով եսամոլություն և արհամարհելով և հակադրվելով Գ.Մելքոնյանի և Ռ.Սարգսյանի կողմից իր վարքագծի վերաբերյալ արված օրինական դիտողություններին, այն է՝ անտեսելով վերջիններիս պահանջները իրենցից հեռանալու և իրենց հանգիստ թողնելու մասին, սեփական անձի առավելությունները ընդգծելու մոլուցքով լցված, ավելի է ոգևորվել, շարունակել, դրսևորել սանձարձակություն, անզուսպ եսասիրություն, խուլիգանական դրոշմներով և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու ձգտումով լցված, Գ.Մելքոնյանին և Ռ.Սարգսյանին մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ իր մոտ եղած դանակով նախ հարվածել է Ռ.Սարգսյանի ձախ գոտկային շրջանին՝ նրան պատճառելով առողջության տևական քայքայումով ձախ գոտկային շրջանի պատռած ծակած չթափանցող վերքի ձևով առողջության միջին ծանրության վնաս, իսկ հետո Գ.Մելքոնյանի որովայնին՝ նրան պատճառելով որովայնի առաջնային պատի պատռած-ծակած չթափանցող վերքի ձևով առողջության տևական քայքայումով միջին ծանրության վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 169):

6. Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով «ամբաստանյալ Գագիկ Անդրանիկի Պետրոսյանի կատարած արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ նրա գործողությունների վտանգավորության աստիճանը, նրա անձը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, այն, որ նա հանդիսանում է անժամկետ կենսաթոշակառու, բնութագրվում է դրականորեն», հանգել է հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ հնարավոր կլինի հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 74):

7. Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով նաև այն հանգամանքները, որ «ամբաստանյալ Գ.Պետրոսյանը ազատամարտիկ է, 1995-2013թթ. ծառայել է ՀՀ ՁՈւ-ում, զբաղեցրել է վարորդի, վարորդ-վարպետի և դասակի հրամանատարի պաշտոններ, 2013թ. սահմանային տարիքը լրանալու պատճառով արձակվել է ՀՀ ՁՈւ պահեստագոր, համաձայն ՀՀ ՊՆ 14746 գորամասի հրամանատար Ա.Հակոբյանի կողմից տված բնութագրի բնութագրվում է դրականորեն, պարզևատրվել է «ՀՀ զինված ուժերի 20 տարի» գերատեսչական մեդալով, կինը տառապում է զարկերակային գերճնշում 2-րդ, 3-րդ աստիճանի, երկաթղիֆեցիտային անեմիա հիվանդություններով, նաև այն, որ տուժողներ Հ.Սարգսյանը և Ռ.Մելքոն-

յանն ամբաստանյալի նկատմամբ բողոք և պահանջ չեն ներկայացրել», եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական է ու հիմնավորված (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 56):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերի կարծիքով ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում:

Այսպես՝ բողոքաբերի պնդմամբ ստորադաս դատարանները, ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, հաշվի չեն առել հանցագործության՝ հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող իրական հանգամանքների բացակայությունը, անձը բնութագրող տվյալները:

9. Մեջբերելով Վճռաբեկ դատարանի՝ *Գ.Հովհաննիսյանի և Ս.Մարգարյանի, Գ.Մաղաթյանի, Ա.Շահբազյանի* գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը նշել է, որ հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և դրա արդյունքում հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար ստորադաս դատարանները պատշաճ ուշադրություն չեն դարձրել արարքի կատարման եղանակին, հանցավորի մեղքի ձևին և տեսակին, օգտագործված գործիքին, այդ գործիքով կատարված հարվածի բնույթին ու տեղակայմանը, համապատասխան գնահատականի չեն արժանացրել նաև կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Վկայակոչելով արդեն իսկ հիշատակված՝ *Ա.Շահբազյանի*, ինչպես նաև *Է.Ստեփանյանի* գործերով որոշումներում Վճռաբեկ դատարանի ձևավորած դիրքորոշումները՝ բողոքաբերը փաստել է, որ ստորադաս դատարանների կողմից ամբաստանյալ Գ.Պետրոսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող գնահատված հանգամանքները, մասնավորապես այն, որ Գ.Պետրոսյանը անժամկետ կենսաթոշակառու է և բնութագրվում է դրական, ՀՀ զինված ուժերում նախկինում որոշակի պաշտոններ է զբաղեցրել, կամ նրա նկատմամբ տուժողները բողոք չեն ներկայացրել, չեն կարող նվազեցնել ամբաստանյալի կամ նրա կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն այն չափով, որ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառվի: Ստորադաս դատարանները հաշվի չեն առել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով ուղղակիորեն սահմանված՝ ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացող՝ արարքն ակոհողի ազդեցության տակ կատարելու հանգամանքը, որն օրենքով սահմանված պատշաճ իրավական ընթացակարգով,

ապացույցների հիման վրա հաստատվել է նախաքննության և դատաքննության ընթացքում: Գատարանների կողմից պատշաճ գնահատականի չի արժանացվել նաև Գ.Պետրոսյանի անձը բնութագրող այն հանգամանքը, որ հանցանքը կատարելու պահին վերջինս դանակ է կրել՝ պատրաստ լինելով ցանկացած պահի այն գործադրելու:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ դատարանների կողմից չի հստակեցվել, թե հանգամանքները, որոնք հիշատակվել են դատական ակտերում, մեղմ պատժաչափի հիմքում են դրվել, թե՞ հանդիսացել են նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքեր:

10. Ըստ բողոքի հեղինակի՝ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, չհետևելով *Ֆ.Գալստյանի*, *Գ.Մադաթյանի*, *Ա.Շահբազյանի*, *Ն.Սարգսյանի*, *Է.Ստեփանյանի* գործերով որոշումներում Վճարելի դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին, առանց որևէ պատճառաբանության գործով ձեռք բերված և դատարանում հետազոտված ապացույցների մի մասին տվել են առավել նշանակություն, դատավճռում չեն վերլուծել և չեն գնահատել այն ապացույցները, որոնք բացառում են ամբաստանյալի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը:

11. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ իրավաչափ են արդյոք ամբաստանյալ Գ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Սույն քրեաիրավական նորմերը Վճարելի դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորո-

շումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճարելի դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճարելի դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ-0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ-0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ-0252/01/13 որոշումները)՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (ԵԱԳ-Գ/0034/01/12, ԼԳ/0093/01/12, ՏԳ/0018/01/13, ԵԷԳ-0132/01/13, ԵԱԵԳ-0060/01/13, ԵԿԳ-0096/01/13, ԵԿԳ-0252/01/13, ԵՄԳ-0027/01/14, ԳԳ/0014/01/14, ՍԳ/0204/01/13, ՏԳ/0031/01/14, ՍԳ-3/0174/01/14, ԵԱԳ-Գ/0011/01/14, ԵԱԶԳ-0091/01/14, ԵԿԳ-0039/01/15, ԱԲԳ-0031/01/15 և այլն):

14. *Ա.Շահբազյանի* գործով որոշման մեջ անդրադառնալով առողջության դեմ ուղղված դիտավորյալ հանցագործությունների, մասնավորապես՝ առողջությանը դիտավորությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վրա ազդող գործոնների գնահատման իրավական խնդրին՝ Վճարելի դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [*ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված*] *հանրորեն վտանգավոր արարքների դեմ արդյունավետ պայքարը պահանջում է այս ոլորտում համապատասխան քրեական, այդ թվում՝ պատժողական քաղաքականության իրականացում: Իսկ դա իր հերթին ենթադրում է ոչ միայն համապատասխան օրենսդրական հիմքերի առկայություն, այլև դրանց գործնական կիրառման հնարավորության ապահովում:*

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքը կարող է կատարվել տարբեր եղանակներով: (...) Բննարկվող հանցագործության կատարման (...) եղանակները, ելնե-

յով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Այսպես՝ տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում դանակով հարված հասցնելիս հանցավորը ոչ միայն նախատեսում է հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիությունը, այլև գիտակցում է կամ առնվազն պարտավոր է գիտակցել, որ իր գործողություններով տուժողին պատճառում է առողջության ծանր վնաս, որը վտանգավոր է կյանքի համար և անգամ կարող է հանգեցնել մահվան: Այլ խոսքով՝ հանցավորը գործում է ուղղակի դիտավորությամբ և հստակ նախատեսում է իր արարքի և վտանգավոր հետևանքների միջև առկա միանշանակ պատճառական կապը և դրա զարգացումը, այդ թվում՝ գիտակցում է կամ պարտավոր է գիտակցել, որ տուժողին կարող է պատճառել մահ, սակայն ինքնավստահությամբ կամ անփութությամբ հույս է ունենում, որ նշված ծանր հետևանքը չի առաջանա: Վերոգրյալն ինքնին վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին, ուստի օբյեկտիվորեն պետք է գնահատվի և հաշվի առնվի դատարանների կողմից պատիժ նշանակելիս:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեախրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքներին, միջոցներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին ու տեղակայմանը: Համապատասխան գնահատականի պետք է արժանացվի նաև կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:

[Ա]ռանց նշված հանգամանքների գնահատման առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու վերաբերյալ գործերով հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին: Հետևաբար, նշանակված պատժով չի ապահովվի կատարված արարքի և կիրառված քրեախրավական ներգործության միջոցի համաչափությունը, ինչպես նաև կիսաթարվեն պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները» (տե՛ս Արմեն Շահբազյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշման 15-16-րդ կետերը):

15. ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածը սահմանում է. «1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որևէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար և չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հետևանք-

ներ, բայց առաջացրել է առողջության տևական քայքայում կամ ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ՝ պատժվում է կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

(...)

6) խուլիգանական դրդումներով,

(...)

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները, *mutatis mutandis*, կիրառելի են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածով նախատեսված՝ դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու հանցակազմի նկատմամբ: Նշված հանցագործության օբյեկտը ևս մարդու առողջությունն է՝ որպես նրա օրգանիզմի ամբողջական կենսաբանական վիճակ, ինչը ենթակա է քրեաիրավական հատուկ պաշտպանության: Հետևաբար, դրա դեմ ոտնձգելը նույնպես վկայում է կատարված հանցավոր արարքի՝ հանրային բարձր վտանգավորության մասին: Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելու դեպքում պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս ստորադաս դատարանները պետք է հաշվի առնեն ինչպես խախտվող սույն հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, այնպես էլ արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ, հանցագործության հանգամանքները (այդ թվում՝ հանցագործությանը նախորդող և ուղեկցող (*տե՛ս, mutatis mutandis, Հրանտ Պարսնյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԷԳ/0132/01/13 որոշման 13-րդ կետը*)), եղանակը, գործիքներն ու միջոցները, մարմնական վնասվածքների քանակը, տեղակայումը, բնույթը, հանցավորի անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները և այլն: Կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում վնաս պատճառելու համար օգտագործված տարատեսակ գործիքները կամ առարկաները (*հրազեն, դանակ, կացին, մուրճ, մետաղյա ձող, քար և այլն*), հանցավորի պատրաստվածությունը, մեղքի դիտավորյալ ձևն (հատկապես՝ ուղղակի դիտավորությունը) իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, մեծացնում հանցագործությունը հաջողությամբ ավարտին հասցնելու կամ ավելի մեծ վնաս պատճառելու հավանականությունը: Հետևաբար նման դեպքերում օբյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վտանգավորության աս-

տիճանը (տե՛ս, *mutatis mutandis*, Սարգիս Խաչատրյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԳ/0031/01/14, Նարեկ Խաչատրյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԳ/0191/01/14, Արսեն Կարապետյանի և Ռուբեն Գուլգույանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱԳԳ/0011/01/14 որոշումների համապատասխանաբար 14-րդ, 13-րդ և 15-րդ կետերը):

16. Սույն գործի նյութերից երևում է, որ Գ.Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Հրազդանի կիրճից տուն վերադառնալու ճանապարհին, գտնվելով ալկոհոլային խմիչք օգտագործած վիճակում, անհիմն և առանց որևէ պատճառի վիրավորել է նույն տարածքով քայլող, իրեն անձանոթներ՝ Գ.Մելքոնյանին և Ռ.Սարգսյանին, որից հետո անհիմն վիճաբանության մեջ է մտել նրանց հետ, նրանց հասցեին հնչեցրել է վիրավորական արտահայտություններ: Ապա անտեսելով տուժողների պահանջներն իրենցից հեռանալու և իրենց հանգիստ թողնելու մասին, սեփական անձի առավելություններն ընդգծելու նպատակով խուլիգանական դրդումներով և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով՝ Գ.Մելքոնյանին և Ռ.Սարգսյանին մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ իր մոտ եղած դանակով նախ հարվածել է Ռ.Սարգսյանի ձախ գոտկային շրջանին՝ պատճառելով առողջությանը միջին ծանրության վնաս՝ պատռածակած չթափանցող վերքի ձևով, իսկ հետո Գ.Մելքոնյանի որովայնին՝ նրան պատճառելով միջին ծանրության վնաս՝ որովայնի առաջնային պատի պատռածակած չթափանցող վերքի ձևով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Գ.-Պետրոսյանի արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ նրա գործողությունների վտանգավորության աստիճանը, նրա անձը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, այն, որ նա անժամկետ կենսաթոշակառու է, բնութագրվում է դրականորեն, եկել է հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները համադրելով սույն որոշման 13-15-րդ կետերում շարադրված վերլուծության հետ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները Գ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պատշաճ վերլուծության չեն ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության

բնույթն ու աստիճանը: Մասնավորապես, ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել՝

ա) խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ ամբաստանյալը ոտնձգել է այնպիսի հասարակական հարաբերության դեմ, որի խախտումը բացասաբար է անդրադարձել տուժողների առողջական վիճակի վրա,

բ) այն, որ Գ.Պետրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարել է մեկից ավելի ծանրացնող հանգամանքներով՝ **խուլիգանական դրդումներով և մեկից ավելի անձանց** նկատմամբ,

գ) ամբաստանյալի մոտ **դանակի** առկայության և հանրորեն վտանգավոր արարքը **դանակի** գործադրմամբ կատարելու հանգամանքը,

դ) հանցավորի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ, մասնավորապես այն, որ ամբաստանյալը գիտակցել է, որ իր գործողություններով տուժողների առողջությանը պատճառում է վնաս, նախատեսել է իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը,

ե) պատճառված մարմնական վնասվածքների տեղակայումը, մասնավորապես այն, որ ամբաստանյալը հարվածը հասցրել է տուժողներ Ռ.-Սարգսյանի և Գ.Մելքոնյանի կենսականորեն կարևոր օրգաններին՝ համապատասխանաբար **ձախ գոտկային շրջանին և որովայնին:**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ստորադաս դատարաններն ընդհանրապես չեն անդրադարձել և վերլուծության չեն ենթարկել այն հանգամանքը, որ Գ.Պետրոսյանը հանրորեն վտանգավոր արարքը կատարելիս եղել է ալկոհոլ օգտագործած վիճակում: Այդ առումով Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հանցանքն ալկոհոլի ազդեցության տակ կատարելը կարող է պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք համարվել կամ չհամարվել՝ ելնելով հանցագործության բնույթից: Ընդ որում, այն դեպքում, երբ ալկոհոլի ազդեցությունը հանդիսացել է հանցանքը կատարելուն նպաստող պայման, դատարանը դա պետք է համարի ծանրացնող հանգամանք: Այլ կերպ՝ քննարկվող հարցը լուծելիս դատարանը **պարտավոր է հանգամանորեն պարզել**՝ հանցավոր արարքն իր բնույթով կապված է արդյոք հանցանք կատարած անձի՝ ալկոհոլ օգտագործած լինելու հետ, թե՞ ոչ (տե՛ս, *mutatis mutandis*, *Դավիթ Հովհաննիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԸԴ/0078/01/09 որոշման 14-15-րդ կետերը):

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Գ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս ստորադաս դատարաններն ինչպես առանձին վերցրած, այնպես էլ իրենց համակցության մեջ պատշաճ ուշադրություն չեն դարձրել խախտված հասարակական հարաբերության բնույթին ու կարևորությանը, օգտագործված գործիքին, կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա

հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքին, պատճառված մարմնական վնասվածքների տեղակայմանը, ինչպես նաև այն հանգամանքին, որ ամբաստանյալին մեղսագրվում է մեկից ավելի ծանրացնող հանգամանքներով հանցանք:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունը չի կարող հիմնավոր համարվել այն պայմաններում, երբ վերջիններս որևէ կերպ չեն անդրադարձել և վերլուծության չեն ենթարկել այն հանգամանքը, որ Գ.Պետրոսյանը հանցավոր արարքը կատարելիս գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ:

19. Վերոշարադրյալը Վճռաբեկ դատարանի համար հիմք է գալու այն եզրահանգման, որ ամբաստանյալ Գ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գ-ազիկ Անդրանիկի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 29-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Գագիկ Անդրանիկի Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անվտուխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

17.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0192/11/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դատախազ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Վ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշման դեմ մեղադրյալ Արամ Հակոբյանի պաշտպաններ Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի ապրիլի 10-ին Արամ Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա գործով չպարզված հանգամանքներում ապօրինի ձեռք է բերել և իր՝ Գյումրի քաղաքի Դուկասյան 15 հասցեի տան կտուրում ապօրինի պահել է ռազմամթերք հանդիսացող «Ֆ-1» տեսակի մարտական նռնակ և «ՈՒՋՈ-ԳՄ» տեսակի մարտական պայթուցիչ, որոնք հայտնաբերվել են 2015 թվականի ապրիլի 7-ին՝ նշված հասցեում կատարված խուզարկությամբ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2015 թվականի ապ-

րիլի 10-ի թիվ ԵԿԳ/0100/06/15 որոշմամբ բավարարել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մակինյանի միջնորդությունը և մեղադրյալ Արամ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը, որը միաժամանակ փոխարինել է գրավով՝ 500.000 ՀՀ դրամի չափով: Նույն օրը մեղադրյալի հարազատների կողմից գրավի գումարը դատարանի դեպոզիտ հաշվին մուտքագրվելուց հետո Ա.Հակոբյանը ազատվել է կալանքից:

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մակինյանը (այսուհետ նաև՝ Քննիչ) 2015 թվականի հուլիսի 14-ին որոշում է կայացրել կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի գումարը և անձնագիրը վերադարձնելու վերաբերյալ մեղադրյալ Արամ Հակոբյանի պաշտպան Տիգրան Եգորյանի միջնորդությունը մերժելու մասին:

Քննիչի վերոհիշյալ որոշումը պաշտպան Տ.Եգորյանը բողոքարկել է նախ՝ ՀՀ գլխավոր դատախազություն, իսկ մերժման որոշում ստանալուց հետո՝ դատական կարգով:

2. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2015 թվականի հոկտեմբերի 12-ին դատական ակտ է կայացրել՝ Քննիչի վերոհիշյալ որոշման դեմ պաշտպան Տ.Եգորյանի ներկայացրած բողոքը մերժելու մասին:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի դեկտեմբերի 25-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մերժելու, իսկ բողոքարկված դատական ակտը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ մեղադրյալ Ա.Հակոբյանի պաշտպան Տ.Եգորյանը վճարելի բողոք է բերել, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի մարտի 11-ի որոշմամբ վերադարձվել է և տրամադրվել 5-օրյա ժամկետ՝ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Վճարելի դատարանի որոշմամբ տրամադրված ժամկետում բողոքի ձևական սխալները շտկելով՝ մեղադրյալ Ա.Հակոբյանի պաշտպաններ Տիգրան Եգորյանը և Դավիթ Գյուրջյանը վճարելի բողոք են բերել, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Քննիչը իր՝ 2015 թվականի հուլիսի 14-ի որոշման մեջ արձանագրել է. «(...) 09.07.2015թ. ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն է ստացվել (...) պաշտպան Տիգրան Եգորյանի միջնորդությունը՝ Արամ Հակոբյանին մուծված գրավը և նրա անձնագիրը վերադարձնելու պահանջով՝ պատճառաբանությամբ, որ լրացել է և չի երկարացվել նրա կալանավորման ժամկետը:

Քննարկելով Տիգրան Եգորյանի միջնորդությունը՝ գտնում եմ, որ այն չի կարող բավարարվել, ենթակա է մերժման, քանի որ Արամ Հակոբյանը փաստացի 10.04.2015 թվականից գտնվում է ազատության մեջ և թեև նրա նկատմամբ դատարանի կողմից ընտրվել է խափանման միջոց կալանավորում, սակայն կալանավորումը չի կիրառվել, այն փոխարինվել է գրավով, այս պայմաններում փաստացի կալանքի ժամկետները չեն հոսում, ուստի և խոսք չի կարող լինել դրա երկարացման և ընդհանրապես կալանքի տակ չգտնվող անձի կալանքի ժամկետների հաշվարկի և կալանքի ժամկետն անցնելու մասին (...)» (տե՛ս քրեական գործի նյութեր, թերթեր 14-15):

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման մեջ նշվել է. «(...) 2015թ. ապրիլի 10-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԳ/0100/06/15 որոշմամբ մեղադրյալ Արամ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, միաժամանակ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի չափ է սահմանվել 500.000 ՀՀ դրամ: Նույն օրը մեղադրյալ Արամ Հակոբյանի հարազատների կողմից գրավի գումարը դատարանի դեպոզիտ հաշվին մուտքագրվելու հիմքով որոշում է կայացվել Արամ Հակոբյանին արգելանքից ազատելու մասին:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Արամ Հակոբյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառված գրավը՝ որպես խափանման միջոց չի վերացվել կամ չի փոխվել, ուստի մեղադրյալ Արամ Հակոբյանի հարազատների կողմից Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. ապրիլի 10-ի թիվ ԵԿԳ/0100/06/15 որոշմամբ որպես Արամ Հակոբյանի կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի՝ 500.000 ՀՀ դրամ չափով գումարը ենթակա չէ վերադարձման:

(...)

Վերոգրյալի հիման վրա դատարանը գտնում է, որ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա. Մակինյանի 14.07.2015թ.-ի՝ միջնորդությունը քննության առնելու մասին որոշումը կայացվել է օրենքին համապատասխան և որևէ անձի իրավուն-

քերն ու ազատությունները խախտված չեն, ուստի ներկայացված բողոքը ենթակա է մերժման (...)» (տե՛ս քրեական գործի նյութեր, թերթեր 20-22):

7. Գատակյան ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «(...) [Մ]յուն գործով դատական ակտ կայացնելիս ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից նյութական և դատավարական նորմերի խախտումներ թույլ չեն տրվել, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, կոնկրետ դեպքում առաջին ատյանի դատարանն ըստ էության հանգել է վերջնական ճիշտ հետևության, հետևաբար վիճարկվող դատական ակտը պետք է թողնել օրինական ուժի մեջ, իսկ ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել (...)

(տե՛ս քրեական գործի նյութեր, թերթեր 74-82):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակները նշել են, որ Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումն անօրինական է, չհիմնավորված և չպատճառաբանված, կայացվել է քրեադատավարական իրավունքի նորմերի էական խախտումներով: Մասնավորապես՝ ըստ բողոքաբերների՝ խախտվել են Ա.Հակոբյանի՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ և 63-րդ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ և 13-րդ - հոդվածներով, ինչպես նաև նշյալ կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները: Բացի այդ, բողոք բերած անձանց կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ և 143-րդ հոդվածի 7-րդ մասերը, չի կիրառել 139-րդ հոդվածի 1-ին, 142-րդ հոդվածի 4-րդ և 151-րդ հոդվածի 2-րդ մասերը, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջները:

9. Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկների՝ բողոքի հեղինակները նշել են, որ կալանավորման ժամկետի երկարացման անհրաժեշտության դեպքում քննիչը պետք է պատճառաբանված միջնորդություն ներկայացնի դատարան: Իսկ միջնորդությունը դատարան չներկայացնելու հանգամանքը խոսում է տվյալ խափանման միջոցը կիրառելու անհրաժեշտության բացակայության մասին, և որպես դրա հետևանք՝ քննիչը կրում է խափանման միջոցի վերացման մասին որոշում կայացնելու պարտականություն: Բողոքաբերները շեշտել են, որ գրավը հանդիսանում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, որի կիրառման փաստով կալանավորումը չի վերացվում, այլ ընդամենը փոխարինվում է, ուստի նախաքննության մարմինը խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ պետք է որոշում կայացնի նաև գրավի գումարը վերադարձնելու մասին:

Բողոք բերած անձինք փաստել են, որ կալանավորման փոխարինումը այլընտրանքային խափանման միջոց գրավով չի նշանակում գրավի կիրառում՝ անկախ ժամկետներից, և չի նշանակում, որ չպետք է իրականացվի դրա պարբերական վերանայում: Այս առնչությամբ վերջիններս նշել են, որ գրավը՝ որպես այլընտրանքային խափանման միջոց, կիրառվել է անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության ծագման ու գնահատման հետևանքով և որպես ինքնուրույն խափանման միջոց՝ չի կարող ընտրվել: Միաժամանակ օրենսդիրը սահմանել է կալանավորման անհրաժեշտության ստուգման պարտադիր ընթացակարգ՝ երկամսյա հաճախականությամբ, և եթե նախաքննության մարմինը չի իրականացնում իր պարտականություններն ըստ այդ ընթացակարգի, ապա երկու ամիս անց խափանման միջոցը վերացվում է, և անձն ազատ է արձակվում: Հաշվի առնելով, որ գրավը կիրառվել է բացառապես ի հետևանք այն բանի, որ դատարանը որոշել է անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը, ուստի անկախ այն հանգամանքից՝ անձը փաստացի գտնվում է կալանքի տակ, թե ոչ՝ խափանման միջոցի անհրաժեշտության հարցը պետք է քննարկվի դրա համար սահմանված նույն ժամանակահատվածում:

9.1. Վճռաբեկ բողոք բերած անձինք փաստարկել են նաև, որ կալանավորումը խափանման միջոց է, որը կիրառվում է հստակ ժամկետով, այլ ոչ մինչև նախաքննության ավարտը կամ անձի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցումը: Բողոքաբերները նշել են, որ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով, պարզապես ընտրված խափանման միջոցը թույլատրվել էր փոխարինել գրավով: Կիրառված գրավը կոչված է ապահովելու մեղադրյալի պատշաճ վարքագիծը հենց այդ երկու ամսվա ժամանակահատվածում, քանի որ այն ինքնուրույն խափանման միջոց չէ և փոխարինել է կոնկրետ ժամկետով կիրառված մեկ այլ խափանման միջոցի, հետևաբար գրավի կիրառման ժամկետը չի կարող գերազանցել այն խափանման միջոցի կիրառման ժամկետը, որին փոխարինել է: Հակառակ դեպքում խախտվում է նաև իրավական որոշակիության սկզբունքը, մասնավորապես՝ ստացվում է մի իրավիճակ, որ եթե քրեական մեղադրանքով հետապնդվող անձի նկատմամբ դատարանը որոշում է կայացնում կալանքը գրավով փոխարինելու մասին, ապա իր նկատմամբ համարժեք սահմանափակումն արդեն առանց ժամկետային սահմանափակումների փաստի ուժով շարունակում է կիրառվել՝ անկախ այն հանգամանքից, որ դրա կիրառման հիմքում ընկած մեկ այլ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը հնարավոր է արդեն վերացել է:

10. Արդյունքում բողոքի հեղինակները եզրահանգել են, որ թե՛ նախաքննության մարմնի պատճառաբանություններն առ այն, որ փաստացի կալանքի ժամկետները չեն հոսում, ուստի և խոսք չի կարող գնալ դրա երկարացման և ընդհանրապես կալանքի տակ չգտնվող անձի՝ կալանքի ժամկետների հաշվարկի և կալանքի ժամկետն անցնելու մասին, թե՛ դա-

տարանի դիրքորոշումն առ այն, որ գրավի գումարը ենթակա չէ վերադարձման, քանի դեռ խափանման միջոցը չի վերացվել, չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 139-րդ, 142-րդ, 143-րդ և 151-րդ հոդվածների կարգավորումներից՝ արդյունքում խախտելով Ա.Հակոբյանի սեփականության, ինչպես նաև արդար դատաքննության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները:

11. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերները խնդրել են բեկանել Վերքաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ ճանաչելով Արամ Հակոբյանի իրավունքների խախտումը և այն վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը, մասնավորապես՝ Արամ Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացնելու և գրավի գումարը վերադարձնելու վերաբերյալ:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման ժամկետների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Ա.Հակոբյանի նկատմամբ կիրառված գրավը կալանավորման ժամկետով պայմանավորված չլինելու մասին Վերքաքննիչ դատարանի հետևությունը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

« Խափանման միջոցներն են՝

1) կալանավորումը.

2) գրավը.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«(...) Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մեղադրյալը քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմնի որոշման հիման վրա կալանքից ենթակա է ազատման, եթե՝*

(...)

6) մուծված է անձին կալանքից ազատելու համար դատարանի կողմից նշանակված գրավը»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գրավը՝ որպես խափանման միջոցի տեսակ, կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ առկա է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշում: Այլ կերպ՝ գրավը կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է և ենթակա է կիրառման բացառապես այն դեպքում, երբ դատարանը կայացրել է մեղադրյալին կալանավորելու մասին որոշում:

Միևնույն ժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված նորմի հիմքով անձին կալանքից ազատելու պահից, ըստ էության, դադարում են գործել կալանքի՝ որպես խափանման ինքնուրույն միջոցի համար նախատեսված քրեադատավարական կանոնները, այլ կերպ՝ չնայած կալանավորման այլընտրանքային խափանման միջոց լինելուն, այնուամենայնիվ, գրավի կիրառման դեպքում կալանավորման իրավական ռեժիմը չի պահպանվում: Այսինքն՝ համապատասխան դեպքում այլևս կիրառելի են դառնում գրավի՝ որպես խափանման միջոցի տեսակի, առանձնահատկությունները կանոնակարգող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված նորմերը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Դատարանի թույլտվությամբ որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը:

2. Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի սնտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:

3. Գրավի արժեքի ապացուցման պարտականությունը կրում է գրավատուն:

4. Դատարանի նշանակած գրավի չափը չի կարող պակաս լինել՝

1) նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափից՝ ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու մեջ մեղադրվելիս.

2) նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափից՝ միջին ծանրության հանցանք կատարելու մեջ մեղադրվելիս:

5. Գրավի մուծված լինելու մասին ապացույցներ ստանալով՝ քրեական վարույթն իրականացնող մարմինն անմիջապես հանձնարարում է մեղադրյալին ազատել կալանքից:

6. Եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ՝ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք, դատախազը դիմում է դատարան՝ գրավը պետության եկամուտ դարձնելու միջնորդությամբ: Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատարանի որոշումը գրավատուն կարող է բողոքարկել վերադաս դատարան:

7. Գրավը վերադարձվում է գրավատուին բոլոր դեպքերում, երբ չեն ապացուցվել սույն հոդվածի վեցերորդ մասով նախատեսված խախտումները կամ գրավը՝ որպես խափանման միջոց վերացվում կամ փոխվում է: Գրավը վերադարձնելու մասին որոշումն ընդունում է քրեական վարույթն իրականացնող մարմինը՝ համապատասխան խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ:

8. Դրված պարտականությունները և նախատեսված սահմանափակումները մեղադրյալի կողմից խախտելիս, գրավը որպես խափանման միջոց կարող է փոխարինվել կալանքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անհրաժեշտության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից խափանման միջոցը կարող է փոխվել:

2. Խափանման միջոցը վերացվում է, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը:

3. Կալանավորման և գրավի ձևով դատարանի ընտրած խափանման միջոցը կարող է փոփոխվել և վերացվել դատարանի կողմից, իսկ քրեական գործով մինչդատական վարույթում՝ նաև դատախազի կողմից:

Գրավի ձևով դատարանի ընտրած խափանման միջոցը քրեական գործով մինչդատական վարույթում կարող է փոփոխվել և վերացվել նաև քննիչի կողմից՝ դատախազի համաձայնությամբ:

(...)»:

Մեջբերված նորմերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ի տարբերություն կալանավորման՝ գրավի՝ որպես խափանման միջոցի կիրառման կոնկրետ ժամկետ օրենսդիրը չի սահմանել: Այսինքն՝ եթե կալանավորումը մինչդատական վարույթում կիրառվում է որոշակի ժամկետով, և այդ ժամկետի լրացման ու չերկարացման պարագայում անձն ազատվում է կալանքից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-139-րդ, 142-րդ հոդվածներ), ապա գրավի դեպքում առկա չէ որևէ ժամկետային սահմանափակում: Ընդ որում, կալանք կիրառելիս դրա պարբերական վերանայման անհրաժեշտությունը, ըստ էության, պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն գրավի՝ վերջինիս դեպքում անձի ազատության իրավունքի սահմանափակումը շարունակական բնույթ է կրում:

Հաշվի առնելով նշյալը, ինչպես նաև նկատի ունենալով սույն որոշման նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն եզրահանգում է, որ գրավի կիրառումը չի կարող սահմանափակվել կալանավորման համար նախատեսված ժամկետներով:

Վճռաբեկ դատարանի վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նաև նրանով, որ անձի՝ անազատության մեջ չգտնվելու դեպքում կալանքի ժամկետները, ըստ էության, չեն կարող հոսել, քանի որ հակառակ մտեցումը ոչ միայն համահունչ չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասին, ըստ որի՝ *մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը հաշվվում է ձերբակալելիս անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից, իսկ եթե նա չի ձերբակալվել, ապա այդ խափանման միջոցն ընտրելու մասին դատարանի որոշումը կատարելու պահից*, այլև կարող է հանգեցնել այնպիսի ոչ իրավաչափ վիճակի առաջացմանը, երբ հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ ընտրված կալանքի ժամկետը լրանում է, առկա է այն յուրաքանչյուր անգամ երկարացնելու անհրաժեշտություն՝ անկախ այն հանգամանքից՝ մեղադրյալը հայտնաբերվել է, թե ոչ:

15.1. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ կիրառված գրավը կալանավորման ժամկետով պայմանավորված չլինելը չի ենթադրում, որ անձը գրկված է գրավի՝ որպես խափանման միջոցի տեսակի հետագա պահպանումը վիճարկելու հնարավորությունից. յուրաքանչյուր պահին համապատասխան հիմքերի առկայության դեպքում վերջինս իրավասու է հանդես գալու խափանման միջոց գրավը փոխելու կամ վերացնելու մասին միջնորդությամբ, իսկ այն մերժվելու դեպքում կայացված որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կարող է բողոքարկել համապատասխան մարմիններին:

15.2. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավի՝ որպես խափանման միջոցի տեսակի կիրառման հստակ ժամկետ օրենսդիրը չի նախատեսել, իսկ գրավի կիրառումը կալանավորման ժամկետներով սահմանափակվելն իրավաչափ չէ, քանի որ չնայած կալանավորման

այլընտրանքային խափանման միջոց լինելուն, այնուամենայնիվ, գրավի նշանակման դեպքում կալանավորման իրավական ռեժիմը չի պահպանվում:

16. Սույն գործի նյութերից երևում է, որ 2015 թվականի ապրիլի 10-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ մեղադրյալ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, որը միաժամանակ փոխարինվել է գրավով՝ 500.000 ՀՀ դրամի չափով: Նույն օրը մեղադրյալի հարազատների կողմից գրավի գումարը դատարանի դեպոզիտ հաշվին մուտքագրվելուց հետո որոշում է կայացվել Ա.Հակոբյանին արգելանքից ազատելու մասին (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): Քննիչը 2015 թվականի հուլիսի 14-ին որոշում է կայացրել կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի գումարը վերադարձնելու վերաբերյալ մեղադրյալ Ա.Հակոբյանի պաշտպան Տ.Եգորյանի միջնորդությունը մերժելու մասին՝ որպես հիմնավորում նշելով, որ մեղադրյալը 2015 թվականի ապրիլի 10-ից գտնվում է ազատության մեջ և թեև նրա նկատմամբ դատարանի կողմից ընտրվել է խափանման միջոց կալանավորում, սակայն կալանավորումը չի կիրառվել, այն փոխարինվել է գրավով. այս պայմաններում փաստացի կալանքի ժամկետները չեն հոսում, ուստի և խոսք չի կարող լինել դրա երկարացման, և ընդհանրապես, կալանքի տակ չգտնվող անձի կալանքի ժամկետների հաշվարկի և կալանքի ժամկետն անցնելու մասին (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը): Մեղադրյալ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը վերացված կամ փոխված չլինելու պայմաններում Առաջին ատյանի դատարանը եկել է այն եզրահանգման, որ Քննիչի որոշումը իրավաչափ է և արդյունքում մերժել է դրա դեմ բերված բողոքը (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը), իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 14-15.2.-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ա.Հակոբյանի նկատմամբ կիրառված գրավը կալանավորման ժամկետով պայմանավորված չլինելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր է:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ անհիմն է բողոքաբերների այն պնդումը, որ խափանման միջոց գրավ կիրառված լինելու դեպքում պետք է իրականացվի դրա պարբերական վերանայում՝ անկախ այն հանգամանքից, անձը փաստացի գտնվում է կալանքի տակ, թե ոչ, քանի որ գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հետևանքով, իսկ օրենսդիրը սահմանել է կալանավորման անհրաժեշ-

տության ստուգման պարտադիր ընթացակարգ՝ երկամսյա հաճախականությամբ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Այդ առնչությամբ Վճարելի դատարանը փաստում է, որ խափանման միջոցի ժամկետի երկարացում օրենքով սահմանված է բացառապես խափանման միջոց կալանավորման համար, և եթե Ա.Հակոբյանը գտնվելիս լիներ կալանքի տակ, ապա կալանավորման ժամկետի երկարացման անհրաժեշտության դեպքում քրեական վարույթ իրականացնող մարմինը պետք է օրենքով սահմանված կարգով միջնորդություն ներկայացներ դատարան՝ կալանքի ժամկետը երկարացնելու մասին: Սինչդեռ Ա.Հակոբյանը կալանքի տակ չի գտնվել, նրա նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է մեկ այլ խափանման միջոցով՝ գրավով: Գրավն իր իրավական ռեժիմով նույնական չէ կալանավորման հետ, գրավի կիրառումը չի նախատեսում մեկ այլ խափանման միջոցի՝ տվյալ դեպքում կալանավորման իրավական ռեժիմի պահպանում:

Անդրադառնալով համապատասխան դեպքում իրավական որոշակիության սկզբունքի հնարավոր խախտման վերաբերյալ բողոքաբերի՝ սույն որոշման 9.1.-րդ կետում հիշատակված փաստարկին՝ Վճարելի դատարանը, հաշվի առնելով սույն որոշման 15.1-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, այն նույնպես հիմնագուրկ է համարում:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել դատական սխալ, հետևաբար բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը մերժել: Մեղադրյալ Արամ Ստեփանի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

18.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0224/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

ղեկնաբանությամբ դատական նիստում, քննության առնելով Արամայիս Կամոյի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2014 թվականի մայիսի 29-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում հարուցվել է թիվ 15100314 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2014 թվականի հունիսի 3-ի որոշմամբ Արամայիս Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հու-

նիսի 3-ի որոշմամբ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2014 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ Ա.Հակոբյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ Ա.Հակոբյանի նկատմամբ խուլիգանության դեպքի առթիվ քրեական հետապնդում չի իրականացվել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

2014 թվականի դեկտեմբերի 15-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 30-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Ա.Հակոբյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, Ա.Հակոբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, և նա արդարացվել է՝ կատարված հանցագործությունը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 30-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ «*Նյա 2014թ. մայիսի 28-ին, ժամը 23.30-ին Երևան քաղաքի Տ.Սեմ պողոտայի թիվ 23/1 հասցեում տեղի ունեցած վիճաբանության ընթացքում սուր ծակող-կտրող գործիքով հարվածել է Ադամ Բաբկենի Աբրահամյանի կրծքավանդակի աջ կեսի կողմնային մակերեսին և նրա առողջությանը դիտավորությամբ պատճառել ծանր վնաս:*

Այսպես.

2014թ. մայիսի 28-ին Ադամ Աբրահամյանը եղբոր՝ Յուրի Աբրահամյանի կնոջ՝ Մոնիկա Ջաղացպանյանի ծննդյան տարեդարձը նշելու նպատակով վերջիններիս, ինչպես նաև ընտանիքի մյուս անդամների և Ալլա Առուշանյանի հետ գնացել են Կոտայքի մարզի «Արզնու ձոր» կոչվող տարածք, որտեղ կերուխում են կազմակերպել և ժամանակ անցկացրել:

Հիշյալ միջոցառման ընթացքում Ա.Առուշանյանը զանգահարել է նախկին ընկերոջը՝ Միեր Ռշտունուն և նրան տեղեկացրել, որ գտնվում է «Արզնու ձոր» կոչվող տարածքում և մասնակցում է Մ.Ջաղացպանյանի ծննդյան տոնակատարությանը: Տեղեկանալով այդ մասին, Մ.Ռշտունին միայնակ գնացել է «Արզնու ձոր» կոչվող տարածք, որտեղ հանդիպել է Ա.Առուշանյանին ու գրույցի ընթացքում նախկին հարաբերությունները վերականգնելու ապարդյուն փորձեր է կատարել:

Խոսակցության ավարտից հետո Ա.Առուշանյանը հրաժեշտ է տվել Մ.Ռշտունուն և միացել տոնակատարության մասնակիցներին: Յու.Աբրահամյանը տեղեկանալով, որ Ա.Առուշանյանը քիչ առաջ հանդիպում է ունեցել Մ.Ռշտունու հետ, ապա՝ Ա.Առուշանյանի լացակամած տեսքից վրդովվելով, հեռախոսագրույց է ունեցել Մ.Ռշտունու հետ և հիշյալ հարցի կապակցությամբ պարզաբանումներ կատարելու համար նույն օրը, ժամը 23.00-ի սահմաններում Երևան քաղաքի Տ.Մեծ պողոտայի թիվ 23/1 հասցեի մոտակայքում հանդիպելու պայմանավորվածություն ձեռք բերել:

2014թ. մայիսի 28-ին, ժամը 23.00-ի սահմաններում Յու.Աբրահամյանը եղբայրների՝ Ալբերտ և Ադամ Աբրահամյանների հետ գնացել է նշված վայր, որտեղ հանդիպել է Միեր և Դավիթ Ռշտունիներին, Հակոբ, Արամայիս և Հովհաննես Հակոբյանների հետ:

Դրանից հետո Յու.Աբրահամյանը և Դ.Ռշտունին առանձնացել են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի ուղղությամբ և գրուցել, իսկ Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 23/1 հասցեում գործող Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքի հարևանությամբ գտնվող «Մարի Ստեր» ՍՊ ընկերության փաստաբանական գրասենյակի դիմաց Միեր Ռշտունին, վերջինիս ընկերներ Հակոբ, Արամայիս, և Հովհաննես Հակոբյանները վիճաբանել են Ադամ և Ալբերտ Աբրահամյանի հետ, որի ընթացքում Արամայիս Հակոբյանը հարվածել է Ադամ Աբրահամյանի ձախ արմնկային հողի շրջանին, ձախ ծոծրակ-գազաթային շրջանին, ինչպես նաև նախապես իր հետ վերցրած սուր կտրող-ծակող առարկայով հարվածել է Ադամ Աբրահամյանի կրծքավանդակի աջ կեսի կողմնային մակերեսին, կրծքավանդակի աջ կեսի առաջնային մակերեսին, պոչուկի շրջանին և դիտավորությամբ նրա առողջությանը պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս՝ աջ թոքի վնասումով (...)
(տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 1-ին, թերթ 331):

6. Ապացույց ճանաչված այլ փաստաթուղթ հանդիսացող Ա.Հակոբյանի հեռախոսային խոսակցությունները պարունակող ամփոփաթերթերի համաձայն՝ մեղադրյալ Ա.Հակոբյանն իր ծանոթներին պատմում է վիճաբանելու, իր կողմից տուժողի մարմնի կոնկրետ հատվածներին հարվածելու, ինչպես նաև դեպքից հետո Հայաստանի Հանրապետությանից մեկնելու նախապատրաստության մասին (տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 1-ին, թերթեր 58-71):

7. Ապացույց ճանաչված այլ փաստաթուղթ հանդիսացող՝ Ա.Հակոբյանին բերման և անձնական խուզարկության ենթարկելու մասին 2014 թվականի մայիսի 31-ի արձանագրությունների համաձայն՝ Ա.Հակոբյանը նույն օրը՝ ժամը 11:30-ին, Բագրատաշենի հսկիչ անցագրային կետից բերման է ենթարկվել ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք, և նրան անձնական խուզարկության ենթարկելու արդյունքում հայտնաբերվել է 2.100 ԱՄՆ դոլար (տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 1-ին, թերթեր 78-79, հատոր 3-րդ, թերթեր 265-266):

8. Փորձագետի թիվ 874/հ եզրակացության համաձայն՝ *«(...) Ա.Աբրահամյանի մարմնական վնասվածքները՝ ձախ արմնկային հողի շրջանի քերծվածքի, ձախ ծոծրակ-գագաթային շրջանի սալջարդ վերքի, կրծքավանդակի աջ կեսի առաջնային մակերեսի, պոչուկի շրջանների չթափանցող, աջակողմյան պնևմոթորաքսով զուգորդված, աջ թոքի վնասումով՝ կրծքավանդակի աջ կեսի կողմնային մակերեսի թափանցող, ծակված-կտրված վերքերի ձևով, հասցվել են. ձախ արմնկային հողի քերծվածքը, ձախ ծոծրակ-գագաթային շրջանի սալջարդ վերքը՝ բութ առարկաներով, կրծքավանդակի աջ կեսի առաջնային մակերեսի, պոչուկի շրջանների չթափանցող, աջակողմյան պնևմոթորաքսով զուգորդված, աջ թոքի վնասումով՝ կրծքավանդակի աջ կեսի կողմնային մակերեսի թափանցող ծակված-կտրված վերքերը՝ սուր կտրող-ծակող գործիքով/ներով/, հնարավոր է՝ նշված ժամկետում, և պատճառել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (...)»* (տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 1-ին, թերթեր 196-197):

9. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. *«(...) Գատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմինը պարտավոր էր տուժող Ա.Աբրահամյանի, վկաներ Յու.Աբրահամյանի, Հ.Հակոբյանի, Մ.Գազարյանի, Հ.Պետրոսյանի նախաքննական ցուցմունքների արժանահավատությունը գնահատելու նպատակով վերլուծել դրանցում առկա տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրանց պատճառները, որը սակայն կատարվել է թերի: Առանց բավարար ապացույցների և բավարար հիմնավորումների՝ նախաքննության մարմինը եզրակացության է հանգել Արամայիս Հակոբյանի մեղավորության վերաբերյալ:*

(...)

Նախաքննության մարմինը վկա Հակոբ Հակոբյանի ցուցմունքների վերլուծության համատեքստում կարևորել է Արամայիս Կամոյի Հակոբյանի գաղտնագերծված հեռախոսային խոսակցությունները, մասնավորապես՝ 077-48-44-44 հեռախոսահամարն օգտագործող Արման Ազատյանի հետ հեռախոսագրույցը, որի ընթացքում, երբ Ա.Հակոբյանը Ա.Ազատյանին հայտնել է իր կողմից կատարած դանակահարության մասին և հայտնել, թե մարմնի որ հատվածներից է դանակահարել՝ նշել է հետևյալը. «Խառը էլի, գլխից, կողից», որը համընկնում է տուժող Ադամ Աբրահամյանի դատաբժշկական փորձաքննությամբ նկարագրված մարմնական վնասվածքների տեղակայությանը:

Մինչդեռ, նախաքննության մարմնի հիշյալ վերլուծությունը չի բխում գործի նյութերում առկա փաստական տվյալներից: Մասնավորապես՝ վերոհիշյալ հեռախոսային խոսակցության ժամանակ Ա.Հակոբյանն Ա.Ազատյանին ամենևին չի հայտնել իր կողմից կատարված դանակահարության և հարվածների տեղակայության մասին:

(...)

Վերլուծելով վկա Մարինե Գազարյանի ցուցմունքը՝ նախաքննության մարմինը գտել է, որ այդ ցուցմունքով ևս մեկ անգամ հիմնավորվում է Արամայիս Հակոբյանի կողմից ունեցած գաղտնագերծման արդյունք հանդիսացող հեռախոսային խոսակցությունների իսկությունը, որոնց ընթացքում Ա.Հակոբյանը ներկայացնում է դեպքի և իր կողմից կատարված դանակահարության հանգամանքները:

Գատարանում տված իր ցուցմունքում Մ.Գազարյանը նշել է, որ Ա.Հակոբյանի հետ ունեցած հեռախոսագրույցի մանրամասները չի հիշում:

(...)

Հետևաբար, վկաներ Մ.Գազարյանի և Հ.Պետրոսյանի ցուցմունքները տեղեկություններ չեն պարունակում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին, դրանցով չեն հաստատվում կոնկրետ գործով ապացուցման առարկան կազմող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են Ա.Հակոբյանի առնչությունը դեպքին և նրա մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված և նրան մեղսագրված արարքը կատարելու մեջ: Այլ խոսքով՝ նրանց կողմից տրված ցուցմունքները՝ որպես ածանցյալ ապացույցներ, գործում առկա մնացած ապացույցների հետ համակցությամբ չեն կարող օգտագործվել ապացուցման առարկան կազմող հանգամանքները հաստատված համարելու համար:

(...)

Որպես այլ փաստաթուղթ՝ ապացույց ճանաչված, ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնից ստացված, հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու մասին որոշումը գաղտնագերծելու մասին որոշման հիման վրա Արամայիս Կամոյի Հակոբյանի գաղտնագերծված հեռախոսային խոսակցությունները պա-

րունակող ձայնասկավառակի ձայնագրությամբ և գաղտնագերծված հեռախոսային խոսակցությունները պարունակող ամփոփաթերթերով նույնպես չի հաստատվում ամբաստանյալ Արամայիս Հակոբյանի կողմից տուժող Ադամ Աբրահամյանին բազմաթիվ մարմնական վնասվածքներ (...) պատճառելու հանգամանքը: **Այդ կապակցությամբ նախաքննության մարմնի հետևությունները հիմնված են զնահատողական դատողությունների, կանխատեսումների և կարծիքի, այլ ոչ թե օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա:**

(...)

[Մ]յուն գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Ա.Հակոբյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարք: Մեղադրական եզրակացության հիմքում դրված ապացույցների համակցությունը բավարար չէ Ա.Հակոբյանի անմեղության կանխավարկածը հաղթահարելու և նրան մեղսագրվող հանցավոր արարքի փաստական հանգամանքները հաստատված համարելու այն ծավալով, որը կբացատրի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած (...):» (տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 4-րդ, թերթեր 124-127):»:

10. Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, նախաքննության ընթացքում ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված բոլոր ապացույցների համադրման և զնահատման արդյունքներով, պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-127-րդ հոդվածների դրույթները, դատավճռում շարադրված ապացույցները ենթարկելով բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ հանգել է ճիշտ հետևության, որ Արամայիս Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը գործով ձեռք բերված թույլատրելի, վերաբերելի, փոխկապակցված ու հավաստի ապացույցներով չի հիմնավորվել» (տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 4-րդ, թերթեր 220-221):»

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջները.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերի պնդմամբ ստորադաս դատարանները չեն պահպանել ապացույցների զնահատման ընդհանուր կանոնները սահմանող քրեադատավարական նորմերը և Վճարելի դատարանի իրավական դիրքորոշումները, սույն գործում առկա ապացույցները ենթարկել են կամայական զնահատման, չեն նշել ապացույցների մի մասին մյուսների նկատմամբ առավելություն տալու պատճառները՝ թույլ տալով դատական

սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը դատական ակտը բեկանելու հիմք է:

Բողոք բերած անձի կարծիքով՝ նախաքննական մարմինը մեղադրանքի հիմքում դրված յուրաքանչյուր ապացույց վերլուծել է ինչպես ինքնին, այնպես էլ գործով ձեռք բերված այլ ապացույցների համակցությամբ և ապացույցներից մեկի արժևորումը պայմանավորել է այդ վերլուծության արդյունքում ձևավորված հետևություններով: Նախաքննական մարմինը, ի տարբերություն դատարանի, չի անտեսել կոնկրետ սուբյեկտների կարգավիճակը, շփումները գործով շահագրգիռ անձանց հետ՝ որպես նրանց ցուցմունքների ձևավորման վրա ազդող հանգամանքներ:

Այսպես՝ բողոքի հեղինակը նշել է, որ Ա.Հակոբյանի և նրա եղբոր՝ Հ.Հակոբյանի հայտնած տվյալները դեպքի վայր գալու, այնտեղ իրականացված գործողությունների, դեպքի վայրից հեռանալու, առավել ևս ՀՀ սահմանն անցնելու փորձի կապակցությամբ ողջամիտ չեն, քանի որ հերքվում են ինչպես հեռախոսային խոսակցությունների վերծանումներից բխող օբյեկտիվ տվյալներով, այնպես էլ գաղտնալսումների արդյունքներով, որոնց վերլուծությունը ցույց է տալիս, որ Ա.Հակոբյանը դեպքից անմիջապես հետո տեղի ունեցած հեռախոսագրույցների ընթացքում Մ.Գ.ազարյանին և Ա.Ազատյանին պատմում է դեպքի մանրամասները:

Մասնավորապես, Ա.Ազատյանի հետ խոսակցության ժամանակ Ա.Հակոբյանն ուղղակիորեն հայտնել է իր կողմից դանակով մարմնական վնասվածք հասցնելու մասին՝ հստակ նշելով հասցրած վնասվածքների տեղակայումները, որը համապատասխանում է տուժողի՝ դատաբժշկական փորձաքննությամբ արձանագրված մարմնական վնասվածքների նկարագրությանը, ինչպես նաև ՀՀ-ից մեկնելու մտադրության ու այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին: Ա.Ազատյանը պատրաստակամություն է հայտնել ապահովելու նրան Վրաստանում դիմավորելը և մտահոգվել Ա.Հակոբյանի մոտ գումարի առկայության կապակցությամբ: Մ.Գ.ազարյանին Ա.Հակոբյանն ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է վիճաբանության պատճառը՝ կապված Մ.Ռ.շտունու ընկերուհու հետ, հայտնել է իր մոտ դանակ ունենալու և տեղի ունեցած դանակահարության մասին:

12. Բողոք բերած անձը, մեջբերելով Ա.Ազատյանի հետ Ա.Հակոբյանի ունեցած հեռախոսային խոսակցության գաղտնալսման արդյունքները, իր անհամաձայնությունն է արտահայտել Առաջին ատյանի դատարանի այն հետևության կապակցությամբ, որ Ա.Հակոբյանն Ա.Ազատյանին ամենևին չի հայտնել իր կողմից կատարված դանակահարության և հարվածների տեղակայության մասին: Մինչդեռ, ըստ բողոքաբերի՝ նշված հեռախոսային խոսակցությունն ուղղակիորեն հաստատում է, որ Ա.Հակոբյանն է վիճաբանության ժամանակ դանակով հարվածել:

Բողոքի հեղինակն ընդգծել է, որ հեռախոսային խոսակցությունների վերաբերյալ դատական ակտում շարադրված հետևությունները որևէ առնչություն չունեն քրեադատավարական օրենքով կարգավորվող ապացուց-

ման գործընթացի հետ և ակնհայտ անիրավաչափորեն ծավալուն քննարկման առարկա չեն դարձել: Ներկայացված և վերլուծված ապացույցների համադրությունն անհերքելիորեն վկայում է, որ Ա.Հակոբյանը կատարել է իրեն մեղսագրված հանցագործությունը և դրանից հետո փորձել է դիմել փախուստի, իսկ ի հերքում դրա՝ Ա.Հակոբյանի և նրա եղբոր կողմից բերված փաստարկները ողջամիտ չեն, հերքվում են գործով ձեռքբերված այլ ապացույցների բավարար համակցությամբ:

13. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 30-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը և քրեական գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ա.Հակոբյանի մասնակցությունն ապացուցված չլինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

«Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:

Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մտեցնում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝

«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ա-

պացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճարելի դատարանը մշտապես ընդգծել է, որ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը՝ որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, թեև ապացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում է առկա ապացույցները բարեխիղճ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով (տե՛ս, *mutatis mutandis*, *Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԲԳ/0632/01/08 և *Հմայակ Դավթյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԳ/0126/01/12 որոշումները):

Վճարելի դատարանը կրկնում է նաև, որ նախապես հաստատված ապացույցի ուժ չունենալու օրենսդրական արգելքը բացառում է որևէ ապացույցի նկատմամբ կանխակալ մոտեցում ցուցաբերելը (մյուս ապացույցների նկատմամբ այդ փաստական տվյալի ապացուցողական արժեքին առավելություն վերագրելը կամ այդ արժեքը նվազեցնելը), քանի դեռ այդ ապացույցը քրեադատավարական օրենսգրքով ամրագրված ընթացակարգով օրինականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման և այլ սկզբունքների պահպանմամբ չի հետազոտվել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում: Այնուհանդերձ, ապացույցների ազատ գնահատման սկզբունքն ապացույցների նկատմամբ կանխակալ մոտեցման արգելքը պայմանավորում է «մինչև դրանց հետազոտումը» բառակապակցությամբ, ուստի նշված նորմը չի կարող մեկնաբանվել այնպես, որ օրենսդիրն ապացույցների հետազոտումից հետո նույնպես արգելում է ապացույցների գնահատման արդյունքում դրանցից մի մասին մյուսների նկատմամբ առավելություն կամ նվազ կարևորություն վերագրելու հնարավորությունը, հակառակ դեպքում, հակասական ապացույցների առկայության պարագայում հնարավոր չէ հիմնավորված հետևության հանգել անձի մեղավորության կամ անմեղության և այլ հարցերի վերաբերյալ

(տե՛ս Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԶԲԳ/0632/01/08 որոշման 19-րդ կետը):

15.1. Անդրադառնալով ապացույցի արժանահավատության հատկանիշին՝ Վճարելի դատարանն *Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի* գործով որոշմամբ արձանագրել է. «(...) *Ապացույցի արժանահավատության հատկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.*

ա) ապացույցի աղբյուրի հատկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հատկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հատկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

գ) ապացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը,

դ) ապացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը,

ե) նույն տեղեկության ստացումն այլ աղբյուրից (...)» (տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշման 31.3-րդ կետը):

16. Չարգացնելով սույն որոշման 15-15.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը փաստում է, որ ապացույցի առանձին տեսակներ, պայմանավորված ապացուցողական տեղեկատվության ձեռք բերման միջոցներով և դրանց արդյունքների՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ ամրագրված լինելու հանգամանքով (օրինակ՝ տեսանկարահանումների, լուսանկարահանումների, հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքները և այլն), օժտված են բարձր արժանահավատություն ունեցող ապացույց համարվելու համար անհրաժեշտ չափանիշներով և կարող են այս կամ այն փաստական հանգամանքի հաստատման կամ հերքման առումով անփոխարինելի նշանակություն ունենալ: Հետևաբար, այդպիսի ապացույցների արժանահավատությունը չի կարող կասկածի տակ դրվել այնպիսի ապացույցով, որն իր ապացուցողական արժեքի տեսանկյունից ունի դրանցից պակաս նշանակություն: Այլ կերպ՝ քննարկման առարկա ապացույցներով հաստատվող փաստական տվյալները կարող են հերքվել ոչ այլ կերպ,

քան այդ ապացույցներին արժանահավատությամբ չզիջող ապացույցով կամ ապացույցների համակցությամբ:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.

դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Դատական ակտերի պատճառաբանվածության օրենսդրական պահանջը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Ֆ.Գալստյանի գործով որոշման մեջ՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմներով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման (...)» (տե՛ս Ֆ.Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

Վերահաստատելով Ֆ.Գալստյանի գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Գ.Խնուսյանի գործով որոշման շրջանակներում արձանագրել է. «(...) [Հ]աշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ

պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: (...)» (տե՛ս *Գ.Խնուսյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԳ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

17.1. Վերահաստատելով *Ֆ.Գալստյանի* և *Գ.Խնուսյանի* գործերով որոշումներում արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը կրկնում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դատողությունն այն մասին, որ դատարանը պարտավոր է դատական ակտում ամրագրել և թույլատրելիության, վերաբերելիության ու արժանահավատության տեսանկյունից գնահատման ենթարկել այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև նշել այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները: Հակառակ դեպքում ապացույցների գնահատումը, դրա արդյունքում դատարանի ներքին համոզմունքի ձևավորումը կկրեն սուբյեկտիվ բնույթ և կհանգեցնեն կամայականության: Դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստի դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին (տե՛ս, *mutatis mutandis*, *Արարատ Ավագյանի* և *Վահան Սահակյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշման 32-րդ կետը, *Արսեն Մակարյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0016/11/15 որոշման 14-րդ կետը):

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել տուժող Ա.Աբրահամյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ մեղսագրվող արարքում Ա.Հակոբյանին մեղավոր ճանաչելու համար: «Դատարանի իրավական վերլուծությունները» բաժնում Առաջին ատյանի դատարանն անդրադարձել է Ա.Հակոբյանի՝ գործում առկա գաղտնալսված հեռախոսային խոսակցություններից միայն Ա.Ագատյանի և Մ.Գազարյանի հետ տեղի ունեցած խոսակցությանը՝ առաջինի դեպքում նշելով, որ Ա.Հակոբյանն Ա.Ագատյանին ամենևին չի հայտնել իր կողմից կատարված դանակահարության և հարվածների տեղակայության մասին, իսկ երկրորդի դեպքում՝ անդրադառնալով Մ.Գազարյանի ցուցմունքներին, նշել է, որ այն անանցյալ ապացույց է և գործում առկա մնացած ապացույցների հետ համակցությամբ չի հաստատում ապացուցման առարկան կազմող հանգամանքները (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, համաձայնվելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտում շարադրված հետևություններին, ներկայացված բողոքը մերժել է՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

19. Գործում առկա հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝

- Ա.Հակոբյանը տեղյակ է եղել դեպքի մանրամասներին, վիճաբանության պատճառներին, մասնակցություն է ունեցել վիճաբանությանը, հայտնել է իր մոտ դանակի առկայության և տեղի ունեցած դանակահարության մասին,

- Ա.Հակոբյանն ուղղակիորեն հայտնել է վիճաբանության ընթացքում իր կողմից դանակով հարվածելու մասին, ընդ որում, Ա.Ազատյանի հետ հեռախոսային խոսակցության ընթացքում ներկայացրել է հարվածելու մանրամասները՝ մոտավոր հայտնելով, թե մարմնի որ հատվածներին է հարվածներ հասցրել, որը համապատասխանում է տուժողի՝ դատաբժշկական փորձաքննությամբ արձանագրված մարմնական վնասվածքների նկարագրությանը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը),

- Ա.Հակոբյանը դեպքից անմիջապես հետո մտադրություն է ունեցել շտապ դուրս գալու երկրից: Այսպես՝ հեռախոսային խոսակցություններից պարզ է դառնում, որ վերջինս իմացել է, որ իրեն փնտրում են, սակայն թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից, խուսափել է իր գտնվելու կոնկրետ վայրը որևէ մեկին հայտնելուց, խնդրել է, որ անձնագիրը վերցնեն տնից ու փոխանցեն իրեն: Ա.Ազատյանն Ա.Հակոբյանի հետ հեռախոսային խոսակցության ժամանակ առաջարկել է վերջինիս գնալ Վրաստան, նշել է, որ այնտեղ նրան կդիմավորեն՝ մի քանի անգամ ընդգծելով, որ շտապի, իսկ Ա.Հակոբյանը հայտնել է, որ սպասում է անձնագրին: Սույն փաստերն օբյեկտիվորեն վկայում են, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանը մտադիր է եղել դիմել փախուստի, ինչը հաստատվել է նաև վերջինիս՝ Բագրատաշենի հսկիչ անցագրային կետից բերման ենթարկելու մասին 2014 թվականի մայիսի 31-ի արձանագրությամբ (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

20. Սույն որոշման 18-19-րդ կետերում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 15-17.1.-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել գործում առկա ամբաստանյալ Ա.Հակոբյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքները, որոնք գործի ճիշտ լուծման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող տեղեկություններ են պարունակում: Այսպես՝ վերանայվող դատական ակտերի ուսումնասիրությունից բխում է, որ ստորադաս դատարանները վերլուծության չեն ենթարկել հեռախոսային խոսակցությունների բովանդակությունը, որևէ գնահատականի չեն արժանացրել դրանցում առկա այն տեղեկությունները, որ Ա.Հակոբյանն անմիջական մաս-

նակցություն է ունեցել վիճաբանությանը, դանակով հարվածներ է հասցրել, այնուհետև պատրաստվել է փախուստի դիմել և բերման է ենթարկվել Բագրատաշենի հսկիչ անցագրային կետից, այլ բավարարվել են ընդհանրական ձևակերպումներ տալով այն մասին, որ հեռախոսային խոսակցությունները պարունակող ձայնասկավառակի ձայնագրությամբ և գաղտնագերծված հեռախոսային խոսակցությունների ամփոփաթեթերով չեն հաստատվել ամբաստանյալի կողմից հանցանքը կատարելու հանգամանքները, իսկ այդ կապակցությամբ նախաքննության մարմնի հետևությունները հիմնված են գնահատողական դատողությունների վրա:

21. Ամփոփելով սույն որոշման 18-20-րդ կետերում շարադրված փաստական տվյալների վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ապացույցների համակցության վերլուծությամբ չի հաստատվում Ա.Հակոբյանի առնչությունը դեպքին, չեն բխում գործի փաստերից: Մասնավորապես՝ դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն որոշման 19-րդ կետում մեջբերված տվյալները:

Վերոշարադրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ա.Հակոբյանի մասնակցությունն ապացուցված չլինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

22. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները խախտել են ապացույցները գնահատելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջները, կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտեր, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Արամայիս Կամոյի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մարտի 30-ի արդարացման դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ - վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Արամայիս Կամոյի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

19.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԳ/0016/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ
դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
պաշտպան
տուժողի իրավահաջորդ
տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ե.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Գ.ՄԻՍԱԿՅԱՆԻ
Տ.ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Լիլիթ Ավետիքի
Վարդանյանի և Ջարինե Արթուրի Այվազյանի վերաբերյալ ՀՀ քրեական
օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատա-
րանի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման դեմ տուժողի իրավահա-
ջորդ Գ.Միսակյանի ներկայացուցիչ Ա.Սաքունցի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հուլիսի 9-ին ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդ-
վածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 14134513 քրեական
գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հունվարի 31-ի որոշում-
ներով Լիլիթ Ավետիքի Վարդանյանը և Ջարինե Արթուրի Այվազյանը

ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով:

2015 թվականի փետրվարի 18-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի հունիսի 15-ի դատավճռով Լիլիթ Վարդանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ առանց լրացուցիչ պատիժ նշանակելու: ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման (այսուհետ՝ նաև Համաներման ակտ) 4-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա Լ.Վարդանյանն ազատվել է հիմնական պատժից:

Չարինե Այվազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց լրացուցիչ պատիժ նշանակելու: Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա Չ.Այվազյանն ազատվել է հիմնական պատժից:

Լ.Վարդանյանի և Չ.Այվազյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ:

3. Ամբաստանյալ Չ.Այվազյանի պաշտպան Ե.Սարգսյանի, ամբաստանյալ Լ.Վարդանյանի պաշտպան Գ.Հովհաննիսյանի, տուժողի իրավահաջորդ Գ.Միսակյանի ներկայացուցիչներ՝ Տ.Սիրադեղյանի և Ա.Սաքունցի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի հունիսի 15-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել տուժողի իրավահաջորդ Գ.Միսակյանի ներկայացուցիչ Ա.Սաքունցը, ամբաստանյալ Չ.Այվազյանի պաշտպան Ե.Սարգսյանը և ամբաստանյալ Լ.Վարդանյանի պաշտպան Գ.Հովհաննիսյանը:

Վճռաբեկ դատարանը 2016 թվականի մարտի 4-ի որոշումներով ամբաստանյալ Չ.Այվազյանի պաշտպան Ե.Սարգսյանի և ամբաստանյալ Լ.Վարդանյանի պաշտպան Գ.Հովհաննիսյանի ներկայացրած բողոքները թողել է առանց քննության, իսկ 2016 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ՝ տուժողի իրավահաջորդ Գ.Միսակյանի ներկայացուցիչ Ա.Սաքունցի ներկայացրած վճռաբեկ բողոքը՝ ընդունել վարույթ:

Ամբաստանյալ Չ.Ալվազյանի պաշտպան Ե.Սարգսյանը և ամբաստանյալ Լ.Վարդանյանի պաշտպան Գ.Հովհաննիսյանը կրկին ներկայացրել են վճռաբեկ բողոքներ՝ միաժամանակ միջնորդելով հարգելի համարել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը և այն վերականգնել:

Վճռաբեկ դատարանը 2016 թվականի հունիսի 21-ի որոշմամբ բավարարել է վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին պաշտպաններ Ե.Սարգսյանի և Գ.Հովհաննիսյանի միջնորդությունները և մերժել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման դեմ ամբաստանյալ Ջարինե Ալվազյանի պաշտպան Ե.Սարգսյանի և ամբաստանյալ Լիլիթ Վարդանյանի պաշտպան Գ.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Լիլիթ Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) *հանդիսանալով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձ՝ «Արաբկիր» ԲՀ-ի բոքսային բաժանմունքի մանկաբույժ, ոչ պատշաճ է կատարել մասնագիտական պարտականությունները՝ դրանց նկատմամբ անփույթ վերաբերմունքի հետևանքով, ինչն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ: Այսպես՝*

2012թ. դեկտեմբերի 31-ին ժամը 20:20-ին «Արաբկիր» բժշկական համալիրի բոքսային բաժանմունք է ընդունվել 2010թ. ծնված Լիա Գեորգիի Միսակյանը: Հերթապահ բժիշկ Լիլիթ Վարդանյանի կողմից կատարվել է թերի ախտորոշում /սուր շնչառական ինֆեկցիա/, քանի որ հիվանդի անամնեստիկ և օբյեկտիվ տվյալները վկայել են օրգանիզմի արտահայտված ինտոքսիկացիայի մասին, ինչը բնորոշ է եղել ոչ թե սուր շնչառական ինֆեկցիային, այլ՝ թոքաբորբին: Թերի ախտորոշման հետևանքով Լ.Միսակյանին չի նշանակվել հակաբակտերիալ բուժում: Բացի այդ, 31.12.2012թ. չի կատարվել ռենտգեն նկարահանում՝ թոքաբորբի առկայությունը ժխտելու կամ հաստատելու նպատակով, որպիսի գործողությունների ժամանակին կատարումը հնարավորություն կտար հիվանդին վերակենդանացման բաժանմունք տեղափոխելու և կոմքինացված հակաբակտերիալ բուժում և արյան փոխարինիչների ներարկումներ կատարելու համար: Այսինքն՝ 31.12.2012թ. Լիլիթ Վարդանյանի կողմից Լ.Միսակյանի առողջական վիճակի ճիշտ գնահատման, ճիշտ և ժամանակին ախտորոշման և համապատասխան բուժման նշանակման պայմաններում հնարավոր կլինեի կանխելու հիվանդության արագ և հարածուն բացասական պրոգրեսիվող ընթացքը:

Դրանից բացի *Լ.Վարդանյանը* հիվանդի ընդունման ժամանակ նշանակելով արյան ընդհանուր քննություն, ցուցաբերել է անգործություն, հետևողական չի եղել նույն օրը արյան նմուշ վերցնելու, ընդհանուր քննություն անցկացնելու և արդյունքները ստանալու ուղղությամբ, այն դեպքում, երբ «Արաբկիր» ԲՀ-ի լաբորատորիան գործել է շուրջօրյա և որևէ խոչընդոտ չի եղել արյան ընդհանուր քննությունն անցկացնելու հարցում: Մինչդեռ, 02.01.2013թ. հերթապահությունն ընդունած մանկաբույժ Իրինա Մամյանը հենց արյան ընդհանուր քննության արդյունքներից ելնելով է գնահատել *Լ.Միսակյանի* ծանր վիճակը և նշանակել հիմնական հիվանդության համապատասխան ցուցված բուժում: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 284):

Չարինե Այվազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) հանդիսանալով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձ՝ «Արաբկիր» ԲՀ-ի բոքսային բաժանմունքի մանկաբույժ, չի կատարել մասնագիտական պարտականությունները՝ դրանց նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, ինչն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ: Այսպես՝

2013թ. հունվարի 1-ին *Լ.Վարդանյանից* հերթապահությունն ընդունած մանկաբույժ *Չարինե Այվազյանը* դրսևորել է բացահայտ անգործություն, չի կատարել իր մասնագիտական պարտականությունները՝ անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելով դրանց նկատմամբ: Այն է՝ հերթապահությունը ստանձնելիս *Լ.Միսակյանի* հիվանդության պատմագրում տեսնելով, որ 31.12.2012թ. նշանակվել է արյան ընդհանուր քննություն, իր հերթապահության ընթացքում չի անդրադարձել արյան քննության արդյունքներին այն դեպքում, երբ 01.01.2013թ. ժամը 11:00-ին դրանք արդեն պատրաստ են եղել և վկայել են լեյկոպեմիայի /լեյկոցիտների ցածր քանակի/ և ագրանուլոցիտոզի /լեյկոցիտների հակաբակտերիալ իմունիտետի պատասխանատու ձևերի՝ սեզմենտակորիզավոր նեյտրոֆիլների քանակի խիստ նվազման/ մասին, որպիսի գործողության ժամանակին կատարումը *Լ.Միսակյանի* հիվանդության ճիշտ ախտորոշման, համապատասխան ցուցված բուժման և սպաքինման հնարավորություն կտար: Չ.Այվազյանի կողմից մասնագիտական պարտականությունների չկատարումը անզգուշությամբ առաջացրել է *Լ.Միսակյանի* մահը: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 284-285):

6. Առաջին ատյանի դատարանը, 2015 թվականի հունիսի 15-ի դատավճռի պատճառաբանական մասում անդրադառնալով ամբաստանյալներ *Լ.Վարդանյանի* և *Չ.Այվազյանի* նկատմամբ պատիժ նշանակելու հարցին, ի թիվս այլ հանգամանքների, արձանագրել է. «Որպես ամբաստանյալներ *Լ. Վարդանյանի* և *Չ. Այվազյանի* անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում այն, որ նրանք նախկինում դատված չեն եղել, բնութագրվում են դրական, ինչպես նաև Արաբկիր բժշկական համալիրի տնօ-

րենի խնդրանքը մեղմ պատիժ նշանակելու և լրացուցիչ պատիժ չնշանակելու վերաբերյալ:

Ամբաստանյալների պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն:

(...)

Գատարանը քննության առնելով ամբաստանյալներ Լիլիթ Վարդանյանի և Ջարինե Այվազյանի նկատմամբ լրացուցիչ պատիժ նշանակելու հարցը, գտնում է, որ նպատակահարմար չէ նրանց նկատմամբ որպես լրացուցիչ պատիժ, մանկաբույժ աշխատելու իրավունքից զրկում նշանակելը հետևյալ պատճառաբանությամբ.

Լ.Վարդանյանը 2011թ. օգոստոսի 1-ից, իսկ Չ.Այվազյանը 2010թ. նոյեմբերի 17-ից աշխատել են Արաբկիր բժշկական համալիրում որպես մանկաբույժներ: Ամբաստանյալներ Լիլիթ Վարդանյանի և Ջարինե Այվազյանի կողմից նրանց մեղսագրվող արարքը կատարվել է 2012թ. դեկտեմբերի 31-ից մինչև 2013թ. հունվարի 2-ը: Քրեական գործի նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրյալների նկատմամբ չի կիրառվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152 հոդվածով նախատեսված «պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում» դատավարական հարկադրանքի միջոցը: Ամբաստանյալները դեպքից հետո մինչև օրս, շուրջ երկուսուկես տարի, շարունակում են աշխատել Արաբկիր բժշկական համալիրում, որպես մանկաբույժներ: Համաձայն նշված համալիրի տնօրենի 12.06.2015թ. գրության, Լ.Վարդանյանն ու Չ.Այվազյանը իրենց դրսևորել են որպես բարեխիղճ և կարգապահ աշխատողներ և որևէ կարգապահական խախտում թույլ չեն տվել:

Վերը նշված հանգամանքները հաշվի առնելով, դատարանը գտնում է, որ Լ.Վարդանյանի ու Չ.Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասով նախատեսված լրացուցիչ պատիժ նշանակելու անհրաժեշտությունը վերացել է (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 297):

7. Վերաքննիչ դատարանը, 2015 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է. «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Չ.Այվազյանի նկատմամբ պատժի տեսակը որոշելիս Առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ըստ էության բազմակողմանի ստուգման ու օբյեկտիվ գնահատության է ենթարկել ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Չ.Այվազյանի կատարած հանցանքների հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթն, անձը բնութագրող, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող տվյալները՝ մասնավորապես այն, որ նրանք երիտասարդ են, նախկինում դատված չեն եղել, բնութագրվում են դրական, ինչպես նաև Արաբկիր բժշկական համալիրի տնօրենի խնդրանքը՝ մեղմ

պատիժ նշանակելու և լրացուցիչ պատիժ չնշանակելու վերաբերյալ, ինչպես նաև պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ վերջիններիս նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ:

(...)

Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարում տուժողի իրավահաջորդ Գ.Միսակյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի ու Տ.Սիրադեղյանի վերաքննիչ բողոքի փաստարկները, որ «Արաբկիր» ԲԿ-ի գործադիր տնօրենը, որպես ամբաստանյալների ղեկավար կարող էր՝ շահագրգռված լինելով հիվանդանոցի հեղինակությամբ, ամբաստանյալներին դրական բնութագիր տալ: Հենց վերաքննիչ բողոքից երևում է, որ բողոք բերած անձինք ոչ թե համոզված են, այլ ընդամենը հնարավոր են համարել ամբաստանյալների բնութագրերը ոչ օբյեկտիվ ներկայացրած լինելը: Ամբաստանյալներին բացասական բնութագրող այլ հիմնավոր փաստարկներ տուժող կողմը վերաքննիչ բողոքում չի ներկայացրել:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը հիմնավոր պատճառաբանել է ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Չ.Այվազյանի նկատմամբ լրացուցիչ պատիժ չնշանակելու հանգամանքը: Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունները համարելով հիմնավոր, Վերաքննիչ դատարանը, լրացուցիչ պատիժ նշանակելու նպատակահարմարության հարցը լուծելիս, հաշվի է առնում նաև ամբաստանյալների անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև այն, որ դեպքից հետո՝ անցած երեք տարիների ընթացքում մասնագիտական գործունեության հետ կապված ամբաստանյալների գործունեության մեջ այլ թերություններ չեն արձանագրվել: Վերոհիշյալ հանգամանքները ողջամտորեն նվազեցրել են ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Չ.Այվազյանի կատարած արարքի հանրային վտանգավորությունը:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ տուժողի իրավահաջորդ Գ.Միսակյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցն ու Տ.Սիրադեղյանը վերաքննիչ բողոքում բերած՝ ամբաստանյալների կողմից մեղքը չընդունելու, «Արաբկիր» ԲԿ-ի աշխատակիցների կողմից հակասական ցուցմունքներ տալու հանգամանքները, դատավճիռը հրապարակելուց հետո ամբաստանյալ Լ.Վարդանյանի վարքագիծը, ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Չ.Այվազյանի նկատմամբ նշանակված պատժի՝ այդ թվում նաև լրացուցիչ պատժի համար նշանակություն ունենալ չեն կարող:

(...)

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով լրացուցիչ պատժի նշանակումը պարտադիր չլինելու պայմաններում՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է օրինական և պատճառաբանված դատական ակտ: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 268):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից որպես ամբաստանյալների անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հաշվի առնված հանգամանքները, այն է՝ նրանց նախիկինում դատված չլինելը, դրական բնութագրվելը, ինչպես նաև «Արաբկիր» բժշկական համալիրի տնօրենի խնդրանքը՝ մեղմ պատիժ նշանակելու և լրացուցիչ պատիժ չնշանակելու վերաբերյալ, չեն կարող բավարար և հիմնավոր գնահատվել հանցավորների անձը բնութագրելու համար:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ «Արաբկիր» ԲՀ-ի տնօրենի տված բնութագրերը չեն կարող հիմք հանդիսանալ ամբաստանյալների անձը դրական բնութագրելու համար, քանի որ ամբաստանյալները նախաքննության և դատաքննության ընթացքում շարունակել են աշխատել տվյալ կազմակերպությունում, որտեղ տեղի է ունեցել դեպքը: Մասնավորապես՝ տվյալ հիմնարկի տնօրենը չէր կարող անձնական և մասնագիտական շահագրգռվածություն չունենալ իր աշխատող բժիշկների մասնագիտական որակները դրական բնութագրելու հարցում, քանզի դա նաև անմիջականորեն առնչվում է բժշկական կենտրոնի հեղինակության հետ: Ավելին՝ ամբաստանյալները Լ.Միսակյանի մահվան դեպքի առթիվ չեն ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

Բողոքաբերը, անդրադառնալով «Արաբկիր» ԲՀ-ի տնօրենի՝ մեղմ պատիժ նշանակելու խնդրանքին, Պարույր Բայրամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների վկայակոչմամբ գտել է, որ այն ողջամտորեն չի կարող նվազեցնել ամբաստանյալների կատարած արարքի հանրային վտանգավորությունը և չի կարող դիտարկվել որպես մեղմացնող հանգամանք:

Բողոքաբերը նշել է նաև, որ հիմնավոր չեն ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Ջ.Այվազյանի նկատմամբ լրացուցիչ պատիժ չնշանակելու՝ ստորադաս դատարանների այն հիմնավորումները, որ նախաքննության ընթացքում վարույթ իրականացնող մարմնի կողմից մեղադրյալների նկատմամբ չի կիրառվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով նախատեսված պաշտոնավարման ժամանակավոր դադարեցում դատավարական հարկադրանքի միջոցը, ամբաստանյալները դեպքից հետո շարունակել են աշխատել նշված բժշկական հիմնարկում

որպես մանկաբույժ, նրանք չեն ենթարկվել կարգապահական պատասխանատվության և այլն:

9. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը, ամբաստանյալներ Լիլիթ Վարդանյանի և Ջարիմե Այվազյանի նկատմամբ նշանակել ազատագրկման ձևով պատիժ՝ համապատասխանաբար երեք և երեք տարի վեց ամիս ժամկետներով՝ նրանց նկատմամբ որպես լրացուցիչ պատիժ նշանակելով որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը, համապատասխանաբար երեք և երկու տարի ժամկետներով:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Վճարելի դատարանն արձանագրում է, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատիժ նշանակելու հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. քրեական պատժի նպատակների և պատժի արդարության սկզբունքի տեսանկյունից հիմնավորված են արդյոք ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Ջ.Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատիժ չնշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի

անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

Վճարելի դատարանը, թիվ ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ԵՇԳ/0029/01/08, ԵԿԳ/0042/01/11, ԵՇԳ/0143/01/13, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում անդրադառնալով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին, կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ հանցավորի անձին և հանցագործության վտանգավորության բնույթին ու աստիճանին համաչափ քրեաիրավական ներգործության միջոց ընտրելու, ինչպես նաև դրա շրջանակներում համաչափ պատժաչափ սահմանելու պահանջն ուղղակիորեն բխում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների, մասնավորապես՝ արդարության և պատասխանատվության անհատականացման հիմնարար սկզբունքների բովանդակությունից: Արդարացի է այն պատիժը, որի ընտրությունը գործի բոլոր հանգամանքների՝ հանցագործության վտանգավորության բնույթի և աստիճանի (հանցագործության մեղքի ձև, շարժառիթ, նպատակ, պատճառված վնասի չափ, եղանակ, գործիքներ ու միջոցներ և այլն), հանցավորի անձը բնութագրող տվյալների, մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ամբողջական ու բազմակողմանի վերլուծության արդյունք է և բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից: Վերոնշյալ պահանջներից նահանջը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման:

Պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործությանը քրեաիրավական միջոցներով արձագանքելու պարտադիրությամբ, ինչպես նաև հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար՝ պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: Պատիժ նշանակելու սկզբունքի բովանդակությունն ընդգրկում է դատապարտյալի, տուժողի և հասարակության վերաբերմունքը նշանակված պատժի նկատմամբ: Ուստի պատիժ նշանակելիս արդարության սկզբունքը դատարանից պահանջում է ողջամտորեն հաշվի առնել արդարության մասին վերոնշյալ սուբյեկտների կարծիքը, որը պետք է կիրառվի պատժի նշանակման մյուս սկզբունքների, ինչպես նաև պատժի նպատակների համատեքստում (*տես Նարեկ Գևորգի Սարգսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0042/01/11 որոշման 16-րդ կետը*):

13. ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ պատիժները դասակարգվում են հիմնական և լրացուցիչ պատիժների, ընդ որում, օրենքը նախատեսում է դեպքեր, երբ կոնկրետ հանցանք կատարած անձի նկատմամբ կարող է կիրառվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատիժ:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքը չի մասնավորեցնում և չի տարբերակում հիմնական և լրացուցիչ պա-

տիժ նշանակելու սկզբունքները և նպատակները, որից հետևում է, որ անկախ այն հանգամանքից, թե անձի նկատմամբ նշանակվում է հիմնական թե հիմնական և լրացուցիչ պատիժ իրար հետ համակցված, դատարանը բոլոր դեպքերում պարտավոր է առաջնորդվել քրեական օրենսգրքում ամրագրված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով (օրինակա-նություն, արդարություն, պատժի անհատականացում, մարդասիրություն) և պատժի նպատակներին հասնելու օրենսդրական կարգադրանքով: Այլ կերպ՝ պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներն ու նպատակները հավասարապես վերաբերում են ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատիժներին: Օրենքով սահմանված պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից դատարանը, հաշվի առնելով հանցագործության բնույթը, արարքի հանրային վտանգավորության աստիճանը և հանցագործի անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պետք է նշանակի այնպիսի պատիժ (հիմնական կամ հիմնական և լրացուցիչ), որը կբխի վերոթվարկած չափանիշներից և կապահովի պատժի նպատակների լիարժեք իրացվելիությունը:

13.1. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ որոշակի հողվածի սանկցիայով նախատեսված է ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) լրացուցիչ պատիժ, վերջինիս նշանակման հարցը լուծելիս պատժի արդարացիության սկզբունքի ապահովման հիմնական երաշխիքը դատարանների կողմից յուրաքանչյուր գործի քննության ժամանակ այնպիսի հանգամանքների բացահայտումն է, որոնք ազդել են անձի կամ նրա կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության վրա: Այն դեպքերում, երբ որոշակի հանցագործության առանձնահատկությունից ելնելով՝ դատարանը, պահպանելով պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, կգա եզրահանգման, որ ամբաստանյալի նկատմամբ միայն հիմնական պատիժ նշանակելով հնարավոր չէ հասնել քրեական օրենսգրքում ամրագրված պատժի նպատակներին, հողվածի սանկցիայով նախատեսված դեպքերում պետք է նշանակի լրացուցիչ պատիժ, որը կապահովի պատժի անհատականացման սկզբունքի արդյունավետ իրացումը և ամբաստանյալի կողմից տվյալ բնույթի հանցավոր վարքագիծ դրսևորելու հետագա հնարավոր ռիսկի չեզոքացումը:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հողվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, որն անգոյությունս առաջացրել է բուժվող հիվանդի մահ կամ մարդու իմունային անբավարարության վարակի հարուցիչով վարակում»*

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղ-

վելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

Մեջբերված նորմի սանկցիայով նախատեսված է հիմնական պատժի հետ միասին որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պատիժ նշանակելու հնարավորություն:

14.1. ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելը, իսկ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կատարված հանցանքի բնույթի հետ կապված որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելելն է:*

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես հիմնական պատիժ սահմանվում է երկուսից յոթ տարի ժամկետով դիտավորյալ հանցագործությունների համար, և մեկից հինգ տարի ժամկետով անզույժ հանցագործությունների համար, իսկ որպես լրացուցիչ պատիժ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. *Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարող է նշանակվել այն դեպքում, երբ դատարանը, ելնելով հանցավորի պաշտոնավարության կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու ժամանակ նրա կատարած հանցագործության բնույթից, հնարավոր չի գտնում պահպանել որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու նրա իրավունքը:*

4. *Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարգապահական գումարտակում պահելու, կալանքի կամ որոշակի ժամկետով ազատագրկման հետ միասին որպես լրացուցիչ պատիժ նշանակելիս լրացուցիչ պատժի ժամկետը տարածվում է հիմնական պատիժը կրելու ամբողջ ժամանակի վրա, ընդ որում, լրացուցիչ պատժի ժամկետը հաշվարկվում է հիմնական պատիժը կրելուց հետո: Մնացած դեպքերում լրացուցիչ պատժի ժամկետը հաշվարկվում է դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից»:*

Մեջբերված նորմի վերլուծությունից երևում է, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարող է կիրառվել որպես հիմնական կամ լրացուցիչ պատիժ՝ կախված կոնկրետ հոդվածով ամրագրված սանկցիայից:

Պատժի նշված տեսակի բովանդակությունը մի շարք գրկանքների և սահմանափակումների առաջացման մեջ է: Դրանք են, ի թիվս այլնի, որոշակի ժամանակով անձի աշխատանքային իրավունակության, պաշտոնի, մասնագիտական գործունեության կամ զբաղվածության տեսակի ազատ ընտրության իրավունքի սահմանափակումները, որոնք որոշ դեպքերում առաջացնում են որակավորման կորուստ, որոշակի նյութական կորուստ, առավելությունների և արտոնությունների սահմանափակում: Այս պատ-

ժատեսակի հիշյալ պատժիչ տարրերն արտացոլում են դրա վառ արտահայտված կանխարգելիչ ուղղվածությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածը սահմանում է երկու առանձին պատժամիջոցներ, առաջին՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկում և որոշակի գործունեությանը զբաղվելու սահմանափակում: Առաջինի կիրառման դեպքում դատապարտյալը զրկվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից: Իսկ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելու դեպքում սահմանափակվում է որոշակի մասնագիտական կամ այլ գործունեությանը մեղավոր ճանաչված անձի զբաղվելու իրավունքը:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելու նպատակներից է՝ կանխել տվյալ բնույթի հանցագործության հետագա կատարման հավանականությունը, քանի որ այս պատժատեսակը նշանակվում է հատուկ կարգավիճակ ունեցող կամ որոշակի գործունեությանը զբաղվող անձանց նկատմամբ: Այլ կերպ՝ տվյալ պատժատեսակի կիրառումը բխում է այն հանցագործությունների կանխման անհրաժեշտությունից, որոնք այս կամ այն առումով կապված են հանցավորի պաշտոնական դիրքի կամ մասնագիտական կամ այլ գործունեության հետ:

Այլ խոսքով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը կիրառվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմի սանկցիայով նախատեսված սահմաններում՝ նպատակ հետապնդելով կանխելու զբաղեցրած պաշտոնից կամ որոշակի գործունեությանը զբաղվելուց բխող համանման հանցագործությունների կատարման հավանականությունը:

15. Սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալներ Լ.Վարդանյանը և Ջ.Այվազյանն Առաջին ատյանի դատարանի դատավճռով մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ հանդիսանալով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձինք՝ «Արաբկիր» ԲՀ-ի բոքսային բաժանմունքի մանկաբույժներ, ոչ պատշաճ են կատարել մասնագիտական պարտականությունները՝ դրանց նկատմամբ անփույթ վերաբերմունքի հետևանքով, ինչն անզուրկամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, մեղավոր ճանաչելով ամբաստանյալներին, պատիժ նշանակելիս որպես նրանց անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ նրանք նախկինում դատված չեն եղել, բնութագրվում են դրական, նրանց նկատմամբ մեղմ պատիժ նշանակելու և լրացուցիչ պատիժ չնշանակելու մասին Արաբկիր բժշկական համալիրի տնօրենը ներկայացրել է համապատասխան խնդրանք, ամբաստանյալների պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակա-

յությունը: Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ամբաստանյալների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատիժ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, տվյալ դեպքում՝ մանկաբույժ աշխատելու իրավունքից զրկումը նպատակահարմար չէ, քանի որ նրանց նկատմամբ նախաքննության փուլում կիրառված չի եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով նախատեսված «պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում» դատավարական հարկադրանքի միջոցը, և հանցագործության կատարման պահից մինչև դատավճռի կայացման օրը նրանք շարունակել են աշխատել «Արաբկիր» ԲՀ-ում որպես մանկաբույժներ: Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել նաև «Արաբկիր» ԲՀ-ի տնօրենի գրությունը, համաձայն որի՝ Լ.Վարդանյանն ու Ջ.Այվազյանն իրենց դրսևորել են որպես բարեխիղճ և կարգապահ աշխատողներ և որևէ կարգապահական խախտում թույլ չեն տվել: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը Լիլիթ Վարդանյանի նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 2 տարի ժամկետով և Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա նրան ազատել պատժից, իսկ Ջարինե Այվազյանի նկատմամբ պատիժ է նշանակել 2 տարի 6 ամիս ժամկետով և Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա նրան նույնպես ազատել պատժից (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ ստորադաս դատարանն ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Ջ.Այվազյանի նկատմամբ պատիժ նշանակելիս բազմակողմանի ստուգման ու օբյեկտիվ գնահատության է ենթարկել ամբաստանյալների կատարած հանցանքների հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, անձը բնութագրող, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող տվյալները և նրանց նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ ամբաստանյալների անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև այն, որ դեպքից հետո՝ երեք տարիների ընթացքում մասնագիտական գործունեության հետ կապված ամբաստանյալների գործունեության մեջ այլ թերություններ չեն արձանագրվել, ողջամտորեն նվազեցրել են ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Ջ.Այվազյանի կատարած արարքի հանրային վտանգավորությունը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14.1.-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ «Արաբկիր» ԲՀ-ի տնօրենի կողմից տրված՝ Լ.Վարդանյանի և Ջ.Այվազյանի դրական բնութագիրը, նույն անձի խնդրանքը՝ նրանց նկատմամբ մեղմ պատիժ նշանակելու և լրացուցիչ պատիժ չնշանակելու մասին, և այն հանգամանքը, որ ամբաստանյալները հանցանքը կատարելուց հետո շարունակում են աշխատել նույն հիմնարկում որպես մանկաբույժ, ողջամտորեն չեն նվազեցնում նրանց կատարած արարքի

հանրային վտանգավորության աստիճանն այնքանով, որ դատարանին հնարավորություն տան եզրահանգելու, որ տվյալ դեպքում պատժի նպատակները կարող են իրացվել առանց լրացուցիչ պատժի կիրառման:

Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների այն պատճառաբանությանը, որ ամբաստանյալների նկատմամբ լրացուցիչ պատժի՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը սույն գործով կիրառման ենթակա չէ այն հիմնավորմամբ, որ նրանց նկատմամբ նախաքննության փուլում կիրառված չի եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով նախատեսված «պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում» դատավարական հարկադրանքի միջոցը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող լրացուցիչ պատժատեսակը նշանակելու այդպիսի սահմանափակում օրենքով նախատեսված չէ: Հետևաբար ստորադաս դատարանների կողմից հիշատակված վերոնշյալ հանգամանքը որևէ իրավական նշանակություն չի կարող ունենալ ամբաստանյալների նկատմամբ պատժ նշանակելու հարցի լուծման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Չ.Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով մեղավոր ճանաչելով, նրանց նկատմամբ լրացուցիչ պատժի, այն է՝ մանկաբույժ աշխատելու իրավունքից զրկումը, չկիրառելով և Համաներման ակտի հիման վրա պատժից ազատելով, սույն գործի փաստերը գնահատման չեն ենթարկել կատարած արարքի և վրա հասնող հետևանքների համաչափության պահանջի, համանման բնույթի հանցագործությունների կանխման անհրաժեշտության, նշանակված պատժի նկատմամբ տուժողի և հասարակության սպասվելիք վերաբերմունքի համատեքստում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական պատժի նպատակների և պատժի արդարության սկզբունքի տեսանկյունից հիմնավորված չեն ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Չ.Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատժի չնշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

17. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, Լ.Վարդանյանի և Չ.Այվազյանի նկատմամբ լրացուցիչ պատժի չնշանակելով, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա լրացու-

ցիչ պատժի մասով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն այդ մասով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Լիլիթ Ավետիքի Վարդանյանի և Ջարիմե Արթուրի Այվազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 15-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը՝ լրացուցիչ պատժի մասով բեկանել և գործն այդ մասով ուղարկել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալներ Լիլիթ Ավետիքի Վարդանյանի և Ջարիմե Արթուրի Այվազյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Գատավորներ՝

ստորագրություններ

20.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԶԳ/0105/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
ամբաստանյալ
պաշտպան
մեղադրող

Մ.Ավագյանի
Մ.Դիլանչյանի
Ա.Գարիբյանի
Ն.Աշրաֆյանի

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սիքայել Մարտիրոսի Դիլանչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի մայիսի 19-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 14137914 քրեական գործը:

2014 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ Մ.Գիլանչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Մ.Գիլանչյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2014 թվականի հուլիսի 14-ին Մ.Գիլանչյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի հուլիսի 14-ի դատավճռով Մ.Գիլանչյանին մեղսագրված արարքը վերադրակվել է, նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-184-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Մ.Գիլանչյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ:

3. Մեղադրող Ն.Աշրաֆյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի հուլիսի 14-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ստացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Մ.Գիլանչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(...) նա, 2014 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 19:40-ի սահմաններում, իր կողմից վարվող «Վազ 2107» մակնիշի 11 SL 279 հ/հ ավտոմեքենայով Բաքայան և Արաբկիր 49 փողոցների հատման խաչմերուկում բախվելով Ս.Ասատրյանի կողմից վարած «Մերսեդես-Բենց» մակնիշի 59 PV 999 հ/հ-ի ավտոմեքենային և, չունենալով իր կողմից վարվող ավտոտրանսպորտային միջոցի պարտադիր ապահովագրություն, խոշոր չափի գույք խարդախությամբ համիշտակելու դիտավորությամբ, վթարից անմիջապես հետո՝ 2014 թվականի ապրիլի 25-ին, ժամը 20:30-ին, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի Ազատության 12 հասցեում գործող մասնաճյուղում*

կնքել է իր վարած տրանսպորտային միջոցի ապահովագրության պայմանագիր, որից հետո՝ ժամը 20:39-ին զանգահարել է «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կոնտակտ կենտրոն և հայտնել վթարի մասին, ընդունել իր մեղավորությունը, իսկ 2014 թվականի ապրիլի 28-ին Ա.Ասատրյանը հայտային դիմում է ներկայացրել 580.000 ՀՀ դրամ հատուցում ստանալու համար, սակայն նշված հանգամանքը պարզվել է «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի անվտանգության աշխատակիցների կողմից և Մ.Դիլանչյանը չի կարողացել ավարտին հասցնել հանցագործությունը՝ իր կամքից անկախ հանգամանքներում» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 78):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի համաձայն՝ «ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով և ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածով նախատեսված հանցանքներն օբյեկտիվ կողմից ունեն որոշակի ընդհանրություն, մասնավորապես երկուսն էլ կատարվում են խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով: Մինչդեռ դրանցում առկա տարբերությունն արտահայտվում է հետևյալում. խարդախության դեպքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն: Այնինչ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու /ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդված/ դեպքում ուրիշի գույքի հափշտակություն տեղի չի ունենում:

(...) Մ.Դիլանչյանը պայմանագիր կնքելով խարդախություն /խարդախության փորձ/ կատարելու դիտավորություն չի ունեցել, այլ նրա դիտավորությունն ուղղված է եղել սեփական միջոցները խնայելուն և ոչ թե այլ անձի գույքը հափշտակելուն: Սույն պարագայում Մ.Դիլանչյանը որևէ կերպ չէր կարող հափշտակել «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲ ընկերության գույքը:

(...) Մ.Դիլանչյանին մեղսագրվող արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-184-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 38):

7. Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումը, արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը, նախաքննական մարմնի կողմից Մ.Դիլանչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրվող արարքը վերաորակելով նույն օրենսգրքի 34-184-րդ հոդվածի 1-ին մասով, հանգել է ճիշտ հետևության այն մասին, որ ապացուցված չէ Մ.Դիլանչյանի կողմից «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ից

խարդախությամբ 580.000 ՀՀ դրամ գումար հափշտակելու փորձը (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 85):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանը, Մ.Դիլանչյանին մեղսագրվող արարքը վերադասակարգելով, իսկ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելով, թույլ են տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Այսպես՝ վկայակոչելով Մ.Դիլանչյանին մեղսագրվող արարքի փաստական հանգամանքները՝ բողոքաբերը փաստել է, որ Մ.Դիլանչյանը «Ռոսգոսստրախարմենիա» ԱՓԲԸ ներկայացուցչին խաբելու, այն է՝ վթարից հետո կնքված պայմանագիրը որպես վթարից առաջացած գույքային վնասը վերականգնելու պատշաճ հիմք ներկայացնելով, փորձել է «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի գույքը, այն է՝ ապահովագրական վճարը, ուղղել «Մերսեդես-Բենց» մակնիշի 59 PV 999 h/h-ի ավտոմեքենայի սեփականատիրոջը՝ իր իսկ կողմից պատճառված և ապահովագրական ընկերության կողմից հատուցման ոչ ենթակա վնասը հատուցելու նպատակով: Բողոքաբերի պնդմամբ՝ ամբաստանյալը գիտակցել է, որ խաբեության միջոցով ուրիշի (տվյալ դեպքում «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի) գույքը դարձնում է այլ անձի («Մերսեդես-Բենց» մակնիշի ավտոմեքենայի սեփականատիրոջ) սեփականությունը, գիտակցել է, որ իր գործողությունների արդյունքում ապահովագրական ընկերությունը զրկվում է իրեն պատկանող գույքից՝ իր փոխարեն հատուցելով իր իսկ պատճառած և հատուցման ոչ ենթակա վնասը, նախատեսել և ցանկացել է դա:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալին մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածից 184-րդ հոդվածով վերադասակարգելով, հաշվի չի առել այն հանգամանքը, որ, ի տարբերություն խարդախության, խաբեությանը կամ վստահությունը չարաշահելով գույքային բնույթի վնաս պատճառելու դեպքում անձը ոչ թե հափշտակում է ուրիշի գույքը, այլ գույքային վնաս է պատճառում սեփականատիրոջը կամ գույքի այլ տիրապետողին: Բողոքաբերի կարծիքով, եթե խարդախության դեպքում գույքը դուրս է գալիս սեփականատիրոջ ֆոնդից, ապա քննարկվող հանցագործությանը սեփականատիրոջ գույքային ֆոնդը չի պակասում, պարզապես գույքը, որը պետք է ստանար սեփականատերը, հանցավորի գործողությունների պատճառով մուտք չի գործում նրա ֆոնդ կամ նրան գույքային վնաս է հասցվում բաց թողնված օգուտի ձևով:

9. Բողոքաբերը նաև նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածը տարբեր գործերով ստորադաս դատարանների դատական ակտեր-

ում կիրառվել է միմյանց հակասող մեկնաբանությամբ: Մասնավորապես՝ նույնանման փաստական հանգամանքներով թիվ ԵԷԳ/0022/01/14 քրեական գործով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 22-ին կայացված դատավճռով անձը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խարդախության (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված) և խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու (ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդված) հանցակազմերի մեկնաբանման և սահմանագատման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ օրինական և հիմնավորված են արդյոք ստորադաս դատարանների հետևությունները Մ.Դիլանչյանին մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-184-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելու մասին:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խարդախությունը *«խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերել[ն]»* է:

Խարդախության հանցակազմի իրավական վերլուծությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Լ.Ավետիսյանի* և *Վ.Մաթևոսյանի* գործերով կայացրած որոշումներում:

Մասնավորապես, *Լ.Ավետիսյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. *«Խարդախությունը դասվում է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ հափշտակությունների շարքին: (...) Թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ, սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է: (...):*

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի խմաստով վերոնշյալ հանցավոր ներգործությունն իրականացվում է խաբեությանը կամ վստահությունը չարաշահելով: Այսինքն՝ օբյեկտիվ կողմից խարդախության հանցակազմը դրսևորվում է կատարման հատուկ եղանակով՝ խաբեությանը կամ վստահությունը չարաշահելով:

(...)

Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով:

Խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով. հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա:

Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները» (տե՛ս Լիա Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0176/01/09 որոշման 22-26.2-րդ կետերը):

Վ.Մաթևոսյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) խարդախությունը սեփականության դեմ ուղղված հանցագործություն է, հետևաբար դրա առարկա է հանդիսանում նյութական աշխարհի այն իրը (առարկան), որը հանդես է գալիս շարժական կամ անշարժ գույքի ձևով և ենթակա է դրամական գնահատման: Ասվածից հետևում է, որ խարդախության առարկա կարող են հանդիսանալ ցանկացած տեսքով ապրանքանյութական արժեքները, որոնք ունեն փոխանակման արժեք, գին, հանդիսանում են արժեքի դրամական արտահայտություն: Քննարկվող հանցագործության առարկա չեն կարող հանդիսանալ ոչ նյութական բնույթի արժեքները՝ գիտական աշխատությունները, տեղեկատվությունը, ծառայությունները և այլն:

Վերոգրյալից հետևում է, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով աշխատանք կամ որոշակի ծառայություն ձեռք բերելը կամ պարտավորությունները չկատարելը չեն կարող որակվել որպես խարդախություն՝ այդ հանցագործության առարկայի բացակայության պատճառով» (տե՛ս Վարդան Մարատի Մաթևոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԾԳ/0037/01/11 որոշման 24-րդ կետը):

13.1. Վերահաստատելով և զարգացնելով Լ.Ավետիսյանի և Վ.Մաթևոսյանի գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խարդախությունը՝ որպես հափշտակության տարատեսակ, ենթադրում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքը

ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով **վերցնելը և այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը**, եթե վերջիններս այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու փաստացի հնարավորություն են ունեցել: Հափշտակությունն անխուսափելիորեն հանգեցնում է նյութական բնույթի որոշակի բացասական հետևանքների, որոնք հանդես են գալիս իրական նյութական վնասի ձևով՝ առաջացնելով սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի գույքի իրական նվազում:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքային վնաս պատճառելը *«խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով սեփականատիրոջը կամ գույքի այլ տիրապետողին խոշոր չափերի վնաս պատճառել[ն է], եթե բացակայում են հափշտակության հատկանիշները»:*

Մեջբերված նորմի բովանդակությունից հետևում է, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմը որոշակի հատկանիշներով նման է խարդախությանը: Մասնավորապես, թե՛ խարդախությունը և թե՛ գույքային վնաս պատճառելը սեփականության դեմ ուղղված հանցագործություններ են, սուբյեկտիվ կողմից դրսևորվում են ուղղակի դիտավորությամբ, իսկ օբյեկտիվ կողմից՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով: Սակայն, ի տարբերություն խարդախության՝ գույքային վնաս պատճառելու դեպքում բացակայում են հափշտակության հատկանիշները (ինչն ուղղակի ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի դիսպոզիցիայում), այն է՝ ուրիշի գույքն ապօրինի անհատույց շահադիտական նպատակով **վերցնելը և այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը**, եթե վերջիններս այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն են ունեցել:

15. Այսպես՝ խարդախությունը դրսևորվում է ուրիշի գույքը **վերցնելով և այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով**: Այլ խոսքով՝ խարդախության առարկան փաստացի կամ իրավաբանորեն սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի ֆոնդում գտնվող գույքն է, որը դուրս է գալիս նրա ֆոնդից և մուտք է գործում հանցավորի կամ այլ անձի ֆոնդ:

Ինչ վերաբերում է խաբեությանը կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմին, ապա դրա առարկան կարող է հանդես գալ.

- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում չգտնվող գույքը, որը հանցավորի ապօրինի գործողությունների հետևանքով մուտք չի գործում նրանց ֆոնդ (բաց թողնված օգուտ): Օրինակ՝ հանցավորն անօրինական գիծ անցկացնելու կամ հաշվիչի ցուցիչը խախտելու միջոցով չի վճարում գազի կամ էլեկտրաէներգիայի վճարը և այլն:

- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում գտնվող գույքը, որը ապօրինի օգտագործվելու արդյունքում մաշվում է: Այս դեպ-

քում գույքային վնասը դրսևորվում է մաշվածության (ամորտիզացիայի) հետևանքով նշված գույքի արժեքի նվազման միջոցով:

- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում գտնվող գույքը, որը քննարկվող հանցագործության հետևանքով դուրս է գալիս նրա ֆոնդից, սակայն այդ գույքը դուրս է բերվում ոչ ուղղակիորեն հանցավորի կողմից և չի դարձվում նրանը կամ նրա դիտավորությունում ընդգրկված այլ անձինը: Այս դեպքում գույքի դուրսբերումը սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդից դրսևորվում է որպես վերջիններիս կողմից իրենց **օրինական պարտավորությունների կատարում** (օրինակ՝ վարձակալի կողմից կոմունալ վճարումների չկատարման հետևանքով սեփականատիրոջ կողմից դրանց վճարումը, աշխատողի կողմից աշխատանքային գործունեության հետ չկապված անձնական նպատակներով գործատուի կողմից վճարվող կապի ծառայություններն օգտագործելը և այլն):

16. Վերոնշյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմը նույն եղանակով կատարվող հափշտակությունից՝ խարդախությունից, տարբերակելու հիմնական հատկանիշն այն է, որ քննարկվող հանցագործության առարկան կամ չի գտնվում սեփականատիրոջ (այլ տիրապետողի) ֆոնդում և վնասը դրսևորվում է բաց թողնված օգուտի ձևով, կամ գտնվում է այդ ֆոնդում, սակայն վնասը դրսևորվում է գույքի մաշվածության կամ հանցավորի գործողությունների հետևանքով սեփականատիրոջ (այլ տիրապետողի) համար առաջացած **օրինական պարտավորությունների կատարման** հետևանքով: Քննարկվող հանցակազմի դեպքում բացակայում են խարդախության հանցակազմի այնպիսի պարտադիր հատկանիշներ, ինչպիսիք են ուրիշի գույքը սեփականատիրոջ ֆոնդից **վերցնելը և հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը**:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Գիլանչյանին խարդախության փորձի համար մեղադրանք է առաջադրվել, քանի որ վերջինս, բախվելով Սարգիս Ասատրյանի կողմից վարած ավտոմեքենային և չունենալով իր կողմից վարվող ավտոտրանսպորտային միջոցի պարտադիր ապահովագրություն, վթարից անմիջապես հետո կնքել է իր վարած տրանսպորտային միջոցի ապահովագրության պայմանագիր, ապա զանգահարել է «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կոնտակտ կենտրոն և հայտնել վթարի մասին, ընդունել իր մեղավորությունը, իսկ 2014 թվականի ապրիլի 28-ին մեքենայի սեփականատեր Աշոտ Ասատրյանը հայտային դիմում է ներկայացրել 580.000 ՀՀ դրամ հատուցում ստանալու համար: Նշված հանգամանքը պարզվել է «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի անվտանգության աշխատակիցների կողմից և հանցագործությունն ավարտին չի հասցվել (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը Մ.Գիլանչյանին մեղսագրվող արարքը վերադրակել է խաբեությանը կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու փորձ (ՀՀ քրեական օրենսգրքի 34-184-րդ հոդվածի 1-ին մաս) այն պատճառաբանությամբ, որ Մ.Գիլանչյանը, պայմանագիր կնքելով, խարդախության փորձ կատարելու դիտավորություն չի ունեցել, նրա դիտավորությունն ուղղված է եղել սեփական միջոցները խնայելուն և ոչ թե այլ անձի գույքը հափշտակելուն, որպիսի պարագայում ամբաստանյալը որևէ կերպ չէր կարող հափշտակել «Ռ-ոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ ընկերության գույքը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունը, գտել է, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

18. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 15-16-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել այն հանգամանքը, որ Մ.Գիլանչյանը «Ռ-ոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ-ի ներկայացուցչին խաբելու, այն է՝ վթարից հետո կնքված պայմանագիրը որպես վթարից առաջացած գույքային վնասը վերականգնելու կեղծ հիմք ներկայացնելով, փորձել է «Ռ-ոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ-ի գույքը, այն է՝ ապահովագրական վճարը, ուղղել Աշոտ Ասատրյանին՝ իր իսկ կողմից պատճառված և ապահովագրական ընկերության կողմից հատուցման ոչ ենթակա վնասը հատուցելու նպատակով: Այլ կերպ՝ Մ.Գիլանչյանը փորձել է խաբեության եղանակով «Ռ-ոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ-ի **ֆոնդում գտնվող գույքը դուրս բերել այնտեղից և դարձնել այլ անձինը**: Ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ «Ռ-ոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ-ի կողմից նման վճարում կատարելը չէր կարող ուղղված լինել նրա **օրինական պարտավորությունների կատարմանը**, քանի որ վերջինիս կողմից ապահովագրական վճար կատարելու օրինական հիմքը բացակայել է: Այսինքն, Մ.Գիլանչյանի արարքը չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշները:

19. Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մ.Գիլանչյանին մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-184-րդ հոդվածի 1-ին մասով վերադրակելու մասին ստորադաս դատարանների հետևությունները օրինական և հիմնավորված չեն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Նշված խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-

398-րդ հոդվածների համաձայն, հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար: Նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակում պետք է պատշաճ քննության ենթարկի ամբաստանյալ Մ.Դիլանչյանին մեղսագրվող արարքի որակման հարցը և կայացնի համապատասխան դատական ակտ:

Անդրադառնալով ամբաստանյալ Մ.Դիլանչյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցի հարցին՝ Վճարելի դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրությունը, պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Միքայել Մարտիրոսի Դիլանչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-184-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թվականի հուլիսի 14-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Միքայել Մարտիրոսի Դիլանչյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

21.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԶԴ/0146/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
տուժող
դատախազ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ա.ԱԼԻԽԱՆՅԱՆԻ
Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արթուր Հենրիկի Ադամյանի վերաբերյալ 2 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի հոկտեմբերի 22-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ադամյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի հունվարի 11-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին) Արթուր Ալիխանյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 62200314 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի մարտի 11-ի որոշմամբ Արթուր Ադամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2014 թվականի ապրիլի 2-ին ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության (այսուհետ՝ նաև Ոստիկանություն) քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնի Նաիրիի քննչական բաժանմունքում Մանվել Հովհաննիսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 46104314 քրեական գործը:

2014 թվականի ապրիլի 11-ին Ա.Ադամյանը բերման է ենթարկվել Ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժանմունք, իսկ նույն թվականի ապրիլի 12-ին նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ Ա.Ադամյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ թիվ 46104314 քրեական գործը միացվել է թիվ 62200314 քրեական գործին, և քննությունը շարունակվել է մեկ վարույթում՝ 62200314 համարով:

2014 թվականի մայիսի 20-ին Ա.Ադամյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել 2 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2014 թվականի սեպտեմբերի 9-ին Ա.Ադամյանին առաջադրված մեղադրանքը կրկին լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել 2 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2014 թվականի սեպտեմբերի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 4-ի դատավճռով ճանաչվել է հռչակվել է ամբաստանյալ Ա.Ադամյանի անմեղությունը Յաշա Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Ա.Ադամյանը մեղավոր է ճանաչվել Արթուր Ալիխանյանից հափշտակություն կատարելու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարք կատարելու մեջ և դատապարտվել ազատազրկման՝ 2 տարի 6 ամիս ժամկետով:

Նույն դատավճռով տուժող Ա.Ալիխանյանի քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակիորեն, և ամբաստանյալից հօգուտ տուժողի բռնագանձվել է 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք 1.842.300 ՀՀ դրամ գումար:

3. Մեղադրողի, ամբաստանյալի և նրա պաշտպանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2015 թվականի հոկտեմբերի 22-ին որոշում է կայացրել ամբաստանյալի և պաշտպանի բողոքը մերժելու, մեղադրողի բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 4-ի դատավճիռը մասնակի բեկանելու մասին: Ա.Աղամյանը մեղավոր է ճանաչվել երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և յուրաքանչյուր դրվագի համար դատապարտվել ազատազրկման՝ 2 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ ամբաստանյալի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել 3 տարի ժամկետով ազատազրկումը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 22-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Ա.Աղամյանը:

Վճարելի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 21-ի որոշմամբ ամբաստանյալի բողոքը վերադարձվել է, և սահմանվել է 5-օրյա ժամկետ՝ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Ամբաստանյալ Ա.Աղամյանը կրկին ներկայացրել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 6-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Աղամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, «երեք առևտրային բանկերում ունենալով 1.400.000 դրամից ավելի վարկային պարտավորություններ, իսկ մասնավոր անձանց՝ 2.370.000 ՀՀ դրամի գումարային պարտավորություններ, չունենալով խոշոր չափի արժեքով գույք գնելու անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ու բավարարելի ամուտներ, խարդախություն կատարելու նախնական դիտավորությամբ ծանոթանալով ավտոմեքենայի վաճառքով զբաղվող Արթուր Ալիխանյանի հետ, նրա հետ հարաբերություններում ընդգծելով իր զբաղեցրած՝ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության քննիչի պաշտոնը, դրանով ձեռք է բերել վերջինիս վստահությունը և ավտոմեքենայի արժեքը 4 ամսում վճարելու կեղծ խոստմամբ նրան զգել է մոլորության մեջ, որի արդյունքում՝ 2011թ. սեպտեմբերի 4-ին Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում Ա.Ալիխանյանից խարդախությամբ հավիշտակել է խոշոր չափի արժեք ունեցող՝ 2.394.990 ՀՀ դրամին համարժեք 6500 ԱՄՆ դոլար արժողության «OPEL VECTRA

2.0 Խ՝ մակնիշի, 29 SO 095 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, վաճառել և ստացված գումարները տնօրինել իր հայեցողությամբ:

Բացի այդ, Արթուր Ադամյանը, համացանցում ծանոթանալով Յաշա Հովհաննիսյանի հայտարարությանն այն մասին, որ վերջինս վաճառում է «Ֆորդ Էսքորտ» մակնիշի, 35 VL 154 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, արդեն իսկ ունենալով վերոհիշյալ՝ մոտ 6.170.000 ՀՀ դրամի պարտքեր, չունենալով խոշոր չափի արժեք ունեցող գույք գնելու անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, բավարար եկամուտներ, խարդախություն կատարելու նախնական դիտավորությամբ 2014թ. հունվարի 22-ին այցելել է Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի բնակիչ Յաշա Հովհաննիսյանի բնակության վայր: Հանդիպման ժամանակ առանց սակարկման համաձայնել է Յ.Հովհաննիսյանից ավտոմեքենան գնել նրա իսկ առաջարկած՝ 1.465.000 ՀՀ դրամ արժեքով, տվել է կեղծ խոստում, որ առաջին վճարումը կկատարի 2014 թ. հունվարի 27-ին՝ 120.000 ՀՀ դրամի չափով, իսկ մնացած գումարը՝ հաջորդող ամիսների ընթացքում՝ յուրաքանչյուր ամսվա 27-ին՝ 200.000 ՀՀ դրամի չափով: Իր իրական հանցավոր մտադրությունները քողարկելու, Յ.Հովհաննիսյանի մոտ վստահություն առաջացնելու նպատակով, այն հաշվարկով, որ Յ.Հովհաննիսյանը, մոլորության մեջ ընկնելով, ինքնակամ իրեն հանձնի ցանկալի գույքը, նրան հայտնել է, թե իբրև կադրերի ռեգերվում գտնվող զինմառայող է ու իր նախաձեռնությամբ, անձամբ կազմել է իր կողմից պարտավորություններ ստանձնելու վերաբերյալ «Ավտոմեքենայի նախնական առուվաճառքի պայմանագիր» անվանումով գրավոր փաստաթուղթ: Արդյունքում Յ.Հովհաննիսյանը, հավատարկվ Ա.Ադամյանի կեղծ խոստմանն ու տեղի տալով վերջինիս վստահություն առաջացնող խոսքերին ու գործողություններին, ընկնելով մոլորության մեջ, նրան է հանձնել ավտոմեքենայի տեխանձնագիրն ու բանալիները, որով վերջինիս հնարավորություն է տվել տիրապետելու հիշյալ գույքը: Ա.Ադամյանը խոշոր չափի արժեք ունեցող ավտոմեքենան հափշտակելուց հետո Յ.Հովհաննիսյանի՝ իր հանդեպ ունեցած վստահությունն ամրապնդելու, վերջինիս մոտ բարեխիղճ գնորդի ու ճշտապահ անձի պատրանք ստեղծելու և նրա կողմից իրավապահ մարմիններին հնարավոր բողոք չներկայացնելու նպատակով 2014 թ. հունվարի 27-ին այցելել է Յ.Հովհաննիսյանին, նրան հանձնել պայմանավորված 120.000 ՀՀ դրամի փոխարեն 60.000 ՀՀ դրամ՝ խոստանալով մնացած 60.000 ՀՀ դրամը հանձնել 2014 թ. փետրվարի 27-ին նախատեսված՝ 200.000 ՀՀ դրամի հետ: Հիշյալ հանդիպումից հետո Ա.Ադամյանը Յ.Հովհաննիսյանին որևէ այլ գումար չի հանձնել, չի մարել ավտոմեքենայի արժեքը, նշված ավտոմեքենայով մեկնել է ՀՀ-ից, իսկ ՀՀ վերադառնալով՝ ավտոմեքենան թողել է արտասահմանում և դրա արժեքը չի հանձնել Յ.Հովհաննիսյանին (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 170-185):

6. Ամբաստանյալ Ա.Ադամյանը Յ.Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագով նախաքննության ընթացքում հրաժարվել է

ցուցմունք տալուց, իսկ դատաքննության ժամանակ ցուցմունքներ է տվել այն մասին, որ 2014 թվականի հունվարի 22-ին ինքը Յ.Հովհաննիսյանից գնել է «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենա: [Ա.Ադամյանը] հայտնել է, որ խոստացած վճարի դիմաց կարող է վճարել 60.000 ՀՀ դրամ, ինչին (...) չեն առարկել: Այդպես վճարել է 60.000 ՀՀ դրամ: Հետագայում [Ա.Ադամյանը] տեղեկացրել է (...), որ **մեքենայով գնում է Վրաստան՝ առևտրով զբաղվելու:** Այնուհետև հայտնել է, որ մեքենան գտնվում է Վրաստանի Հանրապետությունում, և դրա անսարքության պատճառով թողել է ու վերադարձել Հայաստան առանց մեքենայի: Մեքենան ունեցել է արգելակման համակարգի հետ կապված անսարքություն, բացի այդ, գազի տարան ունեցել է խնդիր՝ միջի սարքավորումն ամբողջությամբ այրված է եղել, այդ պատճառով իր պահանջով գազի սարքավորումները մասնագետները ասպանոտաժել են Վրաստանում: Նոր կոճղակներ ինքը գնել ու դրել էր մեքենայի մեջ, սակայն քանի որ մեքենան բենզինով է աշխատել, իսկ ինքը չի ունեցել բավարար միջոցներ այդ մեքենան բենզինով վարելով գալու Հայաստան ու նորից հետ գնալու, այն թողել է ապահով տեղում կանգնած: Իրենց միջև հստակ պայմանավորվածություն է եղել, որ այն օրը, երբ ինքն այդ մեքենան նրանց հետ վերադարձնի, ապա ամեն օրվա համար վճարելու է 5000-ական ՀՀ դրամ, ինչը հետագայում ինքը կատարել է ու մեքենան վերադարձրել է նրանց (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 48-64):

6.1. Տուժող Յաշա Հովհաննիսյանի դատաքննական ցուցմունքների համաձայն՝ 2013 թվականի սեպտեմբերին իր հորեղբորորդի Մանվել Հովհաննիսյանից գնել է վերջինիս պատկանող և նրա անվամբ հաշվառված «Ֆորդ Էսքորտ» մակնիշի, 35 VL 154 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, սակայն չի անվանափոխել: Մի քանի ամիս անց որոշել է վաճառել նշված ավտոմեքենան և այդ մասին համապատասխան հայտարարություն է տեղադրել համացանցում: 2014 թվականի հունվարի 20-ին զանգահարել է Արթուր անունով մի տղամարդ, ով հունվարի 22-ին այցելել է իր տուն: Ներկայացել է որպես Իջևան քաղաքի բնակիչ Արթուր Ադամյան, կադրերի ռեզերվում գտնվող զինվորական, **հայտնել է, որ ցանկանում է զբաղվել առևտրով:** Արթուրը հայտնել է, որ մեքենան պատրաստ է գնել մաս-մաս վճարելու պայմանով: Ինքը հայտնել է, որ այդ դեպքում մեքենայի գինը չի իջեցնի և այն կվաճառի 3600 ԱՄՆ դոլարին համարժեք 1.465.000 ՀՀ դրամով: Այդպես, փոխադարձ համաձայնությամբ կազմվել է մեքենայի առուվաճառքի պայմանագիր, ըստ որի՝ Արթուրը պարտավորվել է 120.000 ՀՀ դրամը վճարել հունվարի 27-ին, իսկ մնացած գումարը՝ հաջորդող ամիսների ընթացքում՝ յուրաքանչյուր ամսվա 27-ին՝ 200.000 ՀՀ դրամի չափով: Քանի որ ավտոմեքենան եղել է հաշվառված Մանվել Հովհաննիսյանի անվամբ, ուստի Արթուր Ադամյանը պարտավորագիրը գրել է նրա անվամբ՝ վերջինիս ներկայությամբ: 2014 թվականի հունվարի 27-ին՝ առաջին վճարման օրը, այցելել է իրեն, 120.000 դրամի փոխարեն տվել 60.000 դրամ՝ ասելով, որ առևտուրը լավ

չէ, և փետրվարի 27-ին նախատեսված 200.000 դրամի փոխարեն խոստացել է տալ 260.000 դրամ: Որոշ ժամանակ Արթուրից ոչ մի տեղեկություն չի ունեցել, իսկ նրա բջջային հեռախոսահամարը եղել է անջատված, և չեն կարողացել գտնել նրան: 2014 թվականի մարտի սկզբին Ա.Ադամյանը Վրաստանի հեռախոսահամարով զանգահարել է իրեն և հայտնել, որ Վրաստանում է, գործերը վատ են, առևտուրը լավ չէ, ինչի պատճառով չի կարող վերադառնալ: Հեռախոսագրույցի ընթացքում ինքը նրան ասել է. «Ինչ եղել, չի եղել, անցած լինի, խաբել ես, լավ ես արել, քարը փեշիցդ քցի, ավտոն բեր տուր ինձ, թե չէ ոստիկանություն կբողոքեմ»: Ա.Ադամյանն իրեն ասել է, որ կան ավտոմեքենայի ամբողջ գումարը կտա, կան կվերադարձնի ավտոմեքենան՝ օգտագործած յուրաքանչյուր օրվա համար վճարելով 5000 դրամ: Դրանից հետո փորձել է այդ նույն համարով կապվել Արթուրի հետ, սակայն նրա հեռախոսն անջատված է եղել: Իր մոտ կասկած է առաջացել, և ինքը մարտի 24-ին կամ 27-ին դիմել է Նաիրիի ոստիկանություն, որտեղ մինչև հայտարարություն տալն իրեն ցույց են տվել Արթուրի նկարը ու հայտնել, որ վերջինս գտնվում է հետախուզման մեջ: Հետագայում, մայիս ամսվա վերջին Ա.Ադամյանի ծնողները կապ են հաստատել իր հետ և հայտնել, որ իրենց ավտոմեքենան գտնվում է Վրաստանում, և նրանք ցանկանում են գնալ ու բերել այն Հայաստան: 2014 թվականի հունիսի 2-ին որդին՝ Ռուստամ Հովհաննիսյանը, և ավտոմեքենայի հաշվառված սեփականատեր Մանվել Հովհաննիսյանն Ա.Ադամյանի ծնողների հետ մեկնել են Վրաստանի Հանրապետության Բաքում քաղաք, որտեղ ավտոմեքենան կայանված է եղել ինչ-որ շենքի բակում: Ավտոմեքենայի բանալիները գտնվել են Արթուրի հոր մոտ: Պարզել են, որ մեքենայի վրայից բացակայել են հաշվառման համարանիշերը, մարտկոցը, ինչպես նաև գազի սնուցման ամբողջ համակարգը: Մեքենայում գտնվել են նոր կոճղակներ, որոնք տեղադրելուց հետո կարողացել են մեքենան բեռնակցելով վարելով վերադարձնել Հայաստան: Ա.Ադամյանի ծնողները կատարել են բոլոր ծախսերը, նրանց միջոցներով տեղադրվել են գազի սարքավորումները և վերականգնվել են մեքենայի պետհամարանիշերը, վճարել են նաև վարչական տուգանքները: Հետագայում կատարված հաշվարկների համաձայն՝ պարզվել է, որ Արթուրի ծնողների կողմից կատարվել է ընդհանուր մոտ 200.000 ՀՀ դրամի ծախս: Կարծում է, որ Արթուրը չէր կարող հանել ավտոմեքենայի մարտկոցը և գազի սնուցման ամբողջ համակարգը: Արթուրը մեքենան Հայաստան չի տեղափոխել, քանի որ կարծում է, որ վերջինս չի կարողացել փոխել մեքենայի կոճղակները և առանց արգելակման համակարգի չի կարողացել մեքենան վարել: Իր մեքենայի մարտկոցի, ինչպես նաև գազի սնուցման ամբողջ համակարգի գողության վերաբերյալ հայտարարություն է տվել ոստիկանությունում: Նախաքննության ընթացքում տված իր ցուցմունքներում կատարված մի շարք ձևակերպումներ, մասնավորապես՝ «Ադամյանը հափշտակեց», «Ադամյանը խարդախ է» չափազանցված են:

Ավտոմեքենան Վրաստանից տեղափոխելուն ինքը չի մասնակցել (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 48-64):

6.2. Նմանարժանողակ ցուցմունք է տվել նաև վկա Ռուստամ Հովհաննիսյանը: Ավտոմեքենայի գնի կապակցությամբ վերջինս հայտնել է, որ 2014 թվականի հունվար ամսին «List.am» կայքում տրված հայտարարության հետ կապված իրենց է զանգահարել Արթուր Ադամյանը, իսկ հունվարի 22-ին եկել է իրենց տուն և ցանկություն հայտնել **իր քիզնեսի համար** գնելու նշված ավտոմեքենան իրենց որոշած գնով՝ 3600 ԱՄՆ դոլարին համարժեք 1.465.000 ՀՀ դրամով. մեքենայի վրա առկա թերության պատճառով դրա նախնական 3700 ԱՄՆ դոլար արժեքից իջեցրել են 3600 ԱՄՆ դոլարի (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 48-64):

6.3. Վկա Մանվել Հովհաննիսյանը դատաքննության ժամանակ ցուցմունքներ է տվել այն մասին, որ տուժող Յաշա Հովհաննիսյանն իր հոր հորեղբոր որդին է: Ինքը 2013 թվականի սեպտեմբեր ամսին 3000 ԱՄՆ դոլարով՝ մաս-մաս վճարելու պայմանով, նրան է վաճառել իր անվամբ հաշվառված «Ֆորդ Էսքորտ» մակնիշի, 35 VL 154 հաշվառման համարանիշի ավտոմեքենան: Հետագայում տեղեկացել է, որ Յաշան ևս վաճառում է նշված ավտոմեքենան: 2014 թվականի հունվարի 22-ին պատահական գնացել է նրանց տուն, որտեղ առաջին ու վերջին անգամ հանդիպել է Արթուր Ադամյանին, ով պատրաստվել է գնելու այդ ավտոմեքենան: Յաշան հայտնել է, որ վերջինս նախնական վճարել է 60.000 ՀՀ դրամ: Սակայն տեղյակ չէ, թե մեքենան որքան գումարով է Յաշան վաճառել: Հետագայում Յաշայից տեղեկացել է, որ խոստացված գումարը նրան Արթուրը չի վճարել, բացի այդ, չի վճարել նաև մեքենայի խախտման վերաբերյալ 2 վարչական տուգանքները, որոնք վճարել է Յաշան: Հետագայում Յաշան իրեն հայտնել է, որ մեքենան գտնվում է Վրաստանում, դրա համարները բացակայում են, և ինքը պետք է գնա Վրաստան՝ մեքենան բերելու: Այդպես, Յաշայի որդու՝ Ռուստամի, Արթուրի ծնողների հետ 2014թ. հունիսի 2-ին գնացել են Վրաստան և Բաթում քաղաքի ինչ-որ շինհրապարակի տարածքում կայանված են գտել իրենց մեքենան: Մեքենայի դռները փակ են եղել, իսկ բանալին գտնվել է Արթուրի հոր մոտ: Մեքենայի վրայից բացակայել է գազի համակարգը՝ գազաբալոն, ռեզուկտոր, իսկ խողովակները հանել են, թե՛ ոչ, տեղյակ չէ: Էլեկտրական մարտկոցը չի բացակայել, իսկ արգելակման կոճղակները մաշված են եղել, դրանց նորերը գտնվել են մեքենայում և Ռուստամը տեղում մաշվածները փոխել է նորերով: Այդպես ռստիկանությունից վերցրել են տրանզիտ համարներ ու մեքենան անձամբ վարելով՝ բերել է Հայաստան: Բոլոր ծախսերը կատարվել են Արթուրի ծնողների կողմից: Յաշան իրեն չի ասել, որ Արթուրը խաբեբա է, փոխարենն ասել է, որ եթե Արթուրը մեքենայի գումարը չկարողանա վճարել, ապա այն պետք է ետ վերադարձնի (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 48-64):

6.4. Վկա Լիլիթ Շիրինյանը դատաքննության ժամանակ ցուցմունքներ է տվել այն մասին, որ Արթուր Ադամյանն իր որդին է, նրանից

տեղեկացել է, որ վերջինս Արթուր Ալիխանյանից մեքենա է գնել և ունի որոշակի գումարային խնդիրներ: Ա.Ալիխանյանի պարտքը վերադարձնելու նպատակով **որդին վերցրել է 2-րդ ավտոմեքենան, որպեսզի կարողանա այդ մեքենայով Վրաստանում առևտրով զբաղվել ու գումար աշխատել:** Այդպես, որդին այդ ավտոմեքենայով մեկնել է Վրաստան, այնտեղ բնակվող իրենց բարեկամների օգնությամբ Ախալքալաքի տարածաշրջանից բնամթերք է ձեռք բերել ու փոխանակել դրանք այլ մթերքով Բաթում քաղաքում կամ մոտակա տարածքներում: Այդ ընթացքում, երբ որդին գտնվել է Վրաստանում, իրենց տուն են եկել ոստիկանության աշխատակիցներ ու հայտնել, որ Արթուրի նկատմամբ հետախուզում է հայտարարվել: Իրենք տեղյակ են պահել Արթուրին դրա մասին, և վերջինս վերադարձել է Հայաստան, իսկ այդ 2-րդ ավտոմեքենայի անսարքության պատճառով այն թողել է Վրաստանում: Նշված ավտոմեքենայի տեխնիկական անձնագիրը և բանալիները որդին տվել է իրեն, հայտնել է դրա գտնվելու վայրը և հանձնարարել այն բերել ու վերադարձնել [Յաշա Հովհաննիսյանից]: Արթուրն իրեն ասել է նաև, որ մեքենայի մարտկոցը բացակայում է, խնդրել է հնարավորության դեպքում այն փոխել, միաժամանակ հայտնել է, որ եթե չտապեր ու մեքենան սարքին լիներ, ապա ինքն անձամբ այն կբերեր Հայաստան: Ինքը մայիսի վերջերին գնացել է Վրաստան, և այնտեղ բնակվող քրոջ ու վերջինիս ամուսնու հետ փորձել են մեքենան բերել Հայաստան: Մեքենան կանգնեցրած է եղել Բաթում քաղաքում ապրող իրենց բարեկամի շենքի բակում: Փոխել են մաշված կոճղակները մեքենայում գտնվող նորերով, սակայն նկատել են, որ բացակայում են մեքենայի համարանիշերը: Պարզել են, որ տրանզիտ համարներ ստանալու համար անհրաժեշտ է մեքենայի սեփականատիրոջ ներկայությունը: Այդ պատճառով վերադարձել է Հայաստան, և արդեն հունիսի 2-ին մեքենայի սեփականատիրոջ և ամուսնու հետ կրկին գնացել են Վրաստան, որտեղից մեքենան վերադարձրել են Հայաստան ու հանձնել դրա տերերին: Ողջ ծախսերը հոգացել են ինքն ու ամուսինը (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 48-64):

6.5. Մանվել Հովհաննիսյանի և Արթուր Ադամյանի միջև կնքված՝ «Ավտոմեքենայի նախնական առուվաճառքի պայմանագիր» վերնագրված փաստաթղթի («22» հունվարի 2014թ.) համաձայն՝ գնորդ Արթուր Ադամյանը վաճառող Մանվել Հովհաննիսյանից 3600 ԱՄՆ դոլարին համարժեք 1.465.000 ՀՀ դրամով գնել է «Ֆորդ Էսքորտ» մակնիշի ավտոմեքենա՝ պարտավորվելով դրա արժեքը վճարել ըստ ժամանակացույցի՝ 2014 թվականի հունվարի 27-ին՝ 120.000, իսկ հաջորդող յուրաքանչյուր ամսվա 27-ին՝ 200.000-ական ՀՀ դրամի չափով (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 31):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) [Գ]ատարանը ձեռք բերված ապացույցները բավարար է գտնում և գործի փաստական հանգամանքներով հաստատված է համարում, որ ամբաստանյալ Արթուր Ադամյանը, երեք առևտրային բանկերում ունենալով

1.400.000 դրամից ավելի վարկային պարտավորություններ, իսկ մասնավոր անձանց՝ 2.370.000 ՀՀ դրամի գումարային պարտավորություններ, չունենալով խոշոր չափի արժեքով գույք գնելու անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ու բավարար եկամուտներ, խարդախություն կատարելու նախնական դիտավորությամբ ծանոթանալով ավտոմեքենա վաճառող Արթուր Ալիխանյանի հետ, նրա հետ հարաբերություններում ընդգծելով իր գրադեցրած՝ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության քննիչի պաշտոնը, դրանով ձեռք է բերել վերջինիս վստահությունը և ավտոմեքենայի արժեքը 4 ամսում վճարելու խոստմամբ 2011թ. սեպտեմբերի 4-ին Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում Ա.Ալիխանյանից ստացել և խարդախությամբ հափշտակել է խոշոր չափի արժեք ունեցող՝ 2.394.990 ՀՀ դրամին համարժեք 6500 ԱՄՆ դոլար արժողության «OPEL VECTRA 2.0L» մակնիշի, 29 SO 095 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, վաճառել և ստացված գումարները տնօրինել իր հայեցողությամբ:

Նման եզրահանգման համար դատարանը հիմք է ընդունում հատկապես տուժող Արթուր Ալիխանյանի, վկաներ Վահե Վիրաբյանի, Կարեն Ղանդիլյանի, Սարգիս Գեղամյանի, Սամվել Խաթայանի, Արկադիկ Սարգսյանի, Կարեն Սարգսյանի, Լիանա Այվազյանի, Արման Մանուչարյանի, Աշոտ Այվազյանի, Գոռ Ուլիխանյանի, Արծրուն Ալիխանյանի, Սուրեն Մանվելյանի, Հրաչիկ Աղամյանի ցուցմունքները, դատաքննության ժամանակ հետազոտված մյուս ապացույցները, քանի որ դրանք օբյեկտիվ ու ճշմարտացի են, համապատասխանում են դատարանի կողմից հաստատված գործի փաստական հանգամանքներին և հաստատվում են գործի մյուս ապացույցների հետ համակցության մեջ: Դատարանը գտնում է, որ Ա.Ալիխանյանից հափշտակություն կատարելու դրվագով ամբաստանյալ Արթուր Աղամյանի մեղքը հիմնավորող վերը շարադրված ապացույցները ձեռք են բերվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 48-64):

7.1. Անդրադառնալով Յաշա Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու մասով Ա.Աղամյանին առաջադրված մեղադրանքին՝ Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է հետևյալը. «(...) [վ]երլուծելով ամբաստանյալի, տուժող Յաշա Հովհաննիսյանի, վկաներ Մանվել Հովհաննիսյանի, Ռուստամ Հովհաննիսյանի և Լիլիթ Շիրինյանի ցուցմունքները, գործով ձեռք բերված մյուս ապացույցները՝ «Ավտոմեքենայի նախնական առուվաճառքի պայմանագիր» վերնագրված փաստաթուղթը, ՀՀ ԱԱԾ սահմանային գորքերի հրամանատարի 18.04.2014թ 5/3-205 գրությունը, զննում կատարելու մասին 20.06.2014թ.-ին կազմված արձանագրությունը, ստուգելով ամբաստանյալ Արթուր Աղամյանի կողմից Յաշա Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործություն կատարելու վերաբերյալ գործով ձեռք բեր-

ված ապացույցները՝ դրանց վերլուծության, այլ ապացույցների հետ համադրելու միջոցով, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով՝ դատարանը գտնում է, որ Արթուր Ադամյանի կողմից Յաշա Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված հանցագործության կատարմանը նրա մասնակցությունն ապացուցված չէ հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, նրա արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմը:

(...) Գործով ձեռք բերված ապացույցներով, չփարատված կասկածները ամբաստանյալի օգտին մեկնաբանելով՝ դատարանը հաստատված է համարում այն, որ Արթուր Ադամյանը Յաշա Հովհաննիսյանից «Ֆորդ Էսթորտ» մակնիշի ավտոմեքենան տարածանկետ վճարելու պայմանով ձեռք է բերել 2014թ. հունվարի 22-ին՝ առևտրով զբաղվելու նպատակով: Պայմանավորվածության համաձայն՝ հունվարի 27-ին Ա.Ադամյանը պետք է վճարեր 120.000 ՀՀ դրամ, իսկ հաջորդող յուրաքանչյուր ամսվա 27-ին՝ 200.000 ՀՀ դրամ: Խոստացված օրը Ա. Ադամյանը վճարել է 60.000 ՀՀ դրամ և խոստացել է մնացած 60.000 ՀՀ դրամը վճարել փետրվարի 27-ին վճարվելիք գումարի հետ միասին: Դրանից հետո 2014թ. փետրվարի 2-ին Յաշա Հովհաննիսյանին և նրա որդուն տեղեկացրել է, որ ցանկանում է այդ ավտոմեքենայով մեկնել Վրաստանի Հանրապետություն՝ առևտրով զբաղվելու: Վերջինս տվել է իր համաձայնությունը և բացատրել է, որ նման դեպքում լիազորագիր չի պահանջվում և բավարար է միայն սեփականատիրոջ՝ Մանվել Հովհաննիսյանի անձնագրի պատճենը, ինչը և փոխանցել է: Ա.Ադամյանը մարտի 3-ին մեկնել է Վրաստան, իր հարազատների օգնությամբ Ախալքալաքի տարածաշրջանից բնամթերք է ձեռք բերել ու փոխանակել դրանք այլ մթերքով Բաթում քաղաքում կամ մոտակա տարածքներում: Ավտոմեքենայի արժեքի հերթական վճարումը չի կատարել, մարտ ամսվա սկզբին զանգահարել է Յաշա Հովհաննիսյանին, այնուհետև խոսել է վերջինիս որդու հետ, հայտնել է, որ գործերը լավ չեն ընթանում, և եթե ավտոմեքենայի արժեքը չվճարի, ապա ավտոմեքենան հետ կվերադարձնի և այն իր մոտ պահելու յուրաքանչյուր օրվա դիմաց կվճարի 5000 ՀՀ դրամ: Հետագայում գործերի վատ ընթանալու և իր վերաբերյալ քրեական գործի առկայության մասին տեղեկանալով՝ Ա. Ադամյանը 2014թ. ապրիլի 11-ին վերադարձել է Հայաստան, իսկ ավտոմեքենան իր հետ չի բերել՝ գումար չունենալու պատճառով: Իր խնդրանքով ծնողները փորձել են ավտոմեքենան Բաթում քաղաքից տեղափոխել Հայաստան՝ Յաշա Հովհաննիսյանին հանձնելու համար, բայց չեն կարողացել, քանի որ ավտոմեքենայի վրայից պետհա-

մարանիչները բացակայել են: Վերջիններս կապնվել են Յաշա Հովհաննիսյանի հետ, տեղեկացրել են ավտոմեքենայի գտնվելու վայրի մասին և վերջինիս որդու՝ Ռուստամ Հովհաննիսյանի, ու Մանվել Հովհաննիսյանի հետ հունիսի 2-ին մեկնել են Բաթում քաղաք և ավտոմեքենան վերադարձրել են Յաշա Հովհաննիսյանին: Ա.Աղամյանի պահանջով իր ծնողները ավտոմեքենայի մեջ տեղադրել են մինչ այդ իր կողմից ապամոնտաժված գազի սարքավորումները:

(...) Այն հանգամանքը, որ Ա.Աղամյանը, շուրջ 2 ամսից ավելի օգտագործելով ավտոմեքենան, այն անօրինական ճանապարհով որևէ մեկին չի օտարել /ավտոմեքենան գրանցված է եղել Մանվել Հովհաննիսյանի անվամբ և, հետևաբար, առանց վերջինիս համապատասխան համաձայնության չէր կարողանա օրինական կարգով օտարել/ և ծնողների օգնությամբ այն վերադարձրել է Յաշա Հովհաննիսյանին, նույնպես վկայում է նրա արարքում հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող ուղղակի դիտավորության բացակայության մասին և հետևաբար՝ արարքում հանցակազմի բացակայության մասին:

Նշված իրավիճակում դատարանը գտնում է, որ դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցները բավարար չեն հետևության հանգեղու, թե Արթուր Աղամյանը Յաշա Հովհաննիսյանից ավտոմեքենան ձեռք բերելիս այն խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակելու դիտավորություն է ունեցել: Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Ա.Աղամյանի գործողություններում ակնհայտորեն բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող դիտավորությունը: Այսինքն՝ հանցակազմը (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 48-64):

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) [Ա]նդրադառնալով Արթուր Այիխանյանից հափշտակություն կատարելու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ամբաստանյալի անմեղության վերաբերյալ ամբաստանյալի և պաշտպանի փաստարկներին՝ քրեական գործի ուսումնասիրությամբ եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանը (...) Արթուր Այիխանյանից հափշտակություն կատարելու դրվագով ամբաստանյալ Արթուր Աղամյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության:

Այսպիսով՝ ամբաստանյալ Արթուր Աղամյանի մեղքը Արթուր Այիխանյանից հափշտակություն կատարելու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հաստատված է, և նրա կատարած հանցանքն ապացուցված, իսկ ամբաստանյալի և պաշտպանի պատճառաբանությունները հերքվում են քրեական գործով ձեռք բերված և պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում Առաջին ատյանի դատարանում հետազոտված, մասնավորապես՝ տուժող Արթուր Այիխանյանի, վկաներ Վահե Վիրաբյանի, Կարեն Ղանդիլյանի, Սարգիս Գեղամյանի, Մանվել Խաթայանի, Արկադիկ Սարգսյանի, Կարեն Սարգս-

յանի, Լիանա Այվազյանի, Արման Մանուչարյանի, Աշոտ Այվազյանի, Գոռ Ուլիխանյանի, Արծրուն Ալիխանյանի, Սուրեն Մանվելյանի, Հրաչիկ Արամյանի ցուցմունքները, Երևան քաղաքի Մալաթիա-Մերաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից թիվ ԵՄՂ/0121/02/12 գործով 2012 թվականի ապրիլի 20-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճիռը, Երևան քաղաքի Մալաթիա-Մերաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից թիվ ԵՄՂ/0095/02/12 գործով 2013 թվականի օգոստոսի 16-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճիռը, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության 2014 թվականի հունվարի 31-ի թիվ ԵՎ 90 գրությունը, ՀՀ ԴԱՀԿ ապահովող ծառայության 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՆՎ 636 ուղեկցական գրությամբ նախաքննական մարմնին ներկայացված պարտապան Արթուր Արամյանի նկատմամբ հարուցված կատարողական վարույթների նյութերը, փոխկապակցված ապացույցների բավարար ամբողջությամբ» (տես քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 56-90):

8.1. Անդրադառնալով Յաշա Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ դատախազի փաստարկներին՝ Վերաքննիչ դատարանը նշել է հետևյալը. «(...) Առաջին ատյանի դատարանն այդ դրվագով ամբաստանյալ Արթուր Արամյանի անմեղության վերաբերյալ հանգել է ոչ ճիշտ հետևության:

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արթուր Արամյանի մեղքը Յաշա Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հաստատված է, և նրա կատարած հանցանքն ապացուցված՝ քրեական գործով ձեռք բերված և պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում Առաջին ատյանի դատարանում հետազոտված, մասնավորապես՝ տուժող Յաշա Հովհաննիսյանի, վկաներ Ռուստամ Հովհաննիսյանի, Մանվել Հովհաննիսյանի ցուցմունքները, «Ավտոմեքենայի նախնական առուվաճառքի պայմանագիր» վերնագրված փաստաթուղթը, ՀՀ ԱԱԾ սահմանային գորքերի հրամանատարի 2014 թվականի ապրիլի 18-ի թիվ 5/3-205 գրությունը, զննում կատարելու մասին 2014 թվականի հունիսի 20-ի արձանագրությունը, փոխկապակցված ապացույցների բավարար ամբողջությամբ:

Ինչ վերաբերում է տուժող Յաշա Հովհաննիսյանի այն հայտարարությանը, որ Արթուրն ավտոմեքենան Հայաստան չի տեղափոխել, քանի որ կարծում է, որ վերջինը չի կարողացել փոխել ավտոմեքենայի կոճ-դակները և առանց արգելակման համակարգի չի կարողացել ավտոմեքենան վարել, ապա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ դա ուղղակի տուժող Յաշա Հովհաննիսյանի սուբյեկտիվ կարծիքն է:

Իսկ ինչ վերաբերում է տուժող Յաշա Հովհաննիսյանի այն հայտարարությանը, որ նախնական քննության ընթացքում իր ցուցմունքներ-

րում նշված «Ադամյանը հափշտակեց», «Ադամյանը խարդախ է» չափազանցված են, ինչպես նաև վկա Մանվել Հովհաննիսյանի այն հայտարարությանը, որ Յաշան իրեն չի ասել, որ Արթուրը խաբեբա է, փոխարենն ասել է, որ եթե Արթուրն ավտոմեքենայի գումարը չկարողանա վճարել, ապա այն պետք է ետ վերադարձնի, ապա Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, տուժող Յաշա Հովհաննիսյանը ետ ստանալով իր ավտոմեքենան, փորձել է մեղմացնել ամբաստանյալ Արթուր Ադամյանի պատասխանատվությունն ու պատիժը: Ավելին, եթե նույնիսկ տուժող Յաշա Հովհաննիսյանը, հայտարարեր, որ ամբաստանյալ Արթուր Ադամյանը խարդախ է, ապա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ նշված հայտարարությունը չի կարող հանդիսանալ ամբաստանյալ Արթուր Ադամյանի արարքը հիմնավորող տվյալ, քանի որ նման բնորոշումն անձի սուբյեկտիվ ընկալման հետևանքն է (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 56-90):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 16-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի ոչ ճիշտ կիրառում:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոքաբերը վերլուծել է սույն գործի փաստական հանգամանքները և արձանագրել, որ Ա.Ալիխանյանից ենթադրյալ հափշտակություն կատարելու դրվագով իր արարքում բացակայում է խարդախության հանցակազմը: Մասնավորապես, բողոքի հեղինակը փաստել է, որ ինքը խաբեության կամ վստահությունը չարաշահելու դիտավորություն չի ունեցել, իսկ Ա.Ալիխանյանի հետ հարաբերությունները բացառապես քաղաքացիաիրավական բնույթ են կրել:

10. Բացի այդ, բողոքաբերը գտել է, որ Յ.Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագով Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնավոր են, համահունչ են Վճարելի դատարանի՝ *Լիա Ավետիսյանի* վերաբերյալ թիվ ԵԿԴ/0176/01/09 գործով որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, որպիսի պայմաններում այդ դրվագով ևս իրեն մեղավոր ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն անհիմն են և չպատճառաբանված:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ամբաստանյալ Ա.Ադամյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և կարճել գործի վարույթը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք Յ.Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագով Ա.Ադամյանին մեղաազրված արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *խարդախությունը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունն է կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը:*

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:*

Խարդախության հանցակազմի իրավական վերլուծությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Լ.Ավետիսյանի* և *Վ.Սաթևոսյանի* գործերով կայացրած որոշումներում:

Մասնավորապես, *Լ.Ավետիսյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ, սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է:*

(…) ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի իմաստով վերոնշյալ հանցավոր ներգործությունն իրականացվում է խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով: Այսինքն՝ օբյեկտիվ կողմից խարդախության հանցակազմը դրսևորվում է կատարման հատուկ եղանակով՝ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով:

(…) Վստահությունը չարաշահելն ուրիշի գույքին տիրանալու կամ դրա նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակով հանցավորի կողմից, նրա և գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի միջև ձևավորված վստահության հարաբերությունների օգտագործումն է: Արարքը խարդախություն որակելու համար բավարար չէ, որ անձն իր արարքներով կամ որոշակի հանգամանքների բերումով տուժողի մոտ վստահություն վայելի, այլ անհրաժեշտ է, որպեսզի վերջինս համոզի տուժողին իրեն փոխանցել գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները:

Հանցագործի նկատմամբ տուժողի վստահությունը կարող է ինչպես իրավական, այնպես էլ փաստական հիմքեր ունենալ: Այլ կերպ՝ հանցավորի և տուժողի միջև առկա՝ վստահության վրա հիմնված հարաբերությունները կարող են բխել ինչպես նրանց միջև առկա պայմանագրից, լիազորագրից և այլն, այնպես էլ առաջանալ հանցավորի և գույքը հանձ-

նողի անձնական հարաբերություններից, հանցավորի կողմից նախկինում դրսևորած վարքագծից, հանցավորի անձնավորությունից և այլն:

(...) [Օ]բյեկտիվ կողմից խարդախությունը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն:

(...) Խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով. հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա:

(...) Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները:

Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու, խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո (անկախ շարժառիթից), խարդախության հանցակազմը բացակայում է:

(...) [Խ]արդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:

բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (գույքը փոխանցել, կատարել վարկային պարտավորությունը, պարտքը վերադարձնել և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը» (տե՛ս Լիա Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0176/01/09 որոշման 22-26.2.-րդ և 29-րդ կետերը):

Վ.Մաթևոսյանի վերաբերյալ գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [Խ]արդախության մեղադրանքով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է ապացույցների բավարար ամբողջությամբ հիմնավորել, որ հանցավորը դիտավորություն է ունեցել խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պատկանող գույքը:

Այն դեպքում, երբ առկա է մասնավոր-իրավական պայմանագրի կամ այլ տեսակի քաղաքացիաիրավական պարտավորության խախտում, ապա նշվածը որպես խարդախություն որակելու համար անհրաժեշտ է հաստատված համարել, որ անձն ի սկզբանե նպատակ չի ունեցել իրականացնելու գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի փոխանցման հետ կապված իր վրա վերցրած պարտավորությունները:

(...) Անձի կողմից խարդախություն կատարելու դիտավորության առկայության մասին, մասնավորապես, կարող են վկայել պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կամ տեխնիկական միջոցների, համապատասխան արտոնագրերի բացակայությունը, հանցավորի կողմից կեղծ փաստաթղթերի, երաշխավորագրերի օգտագործումը, ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը, կեղծ ձեռնարկություն ստեղծելը, որը հանդես է եկել որպես պայմանագրի կողմ և այլն:

(...) [Վ]երը նշված փաստական հանգամանքների հետ մեկտեղ յուրաքանչյուր դեպքում, գործով ձեռք բերված ապացույցների ամբողջ զանգվածի գնահատմամբ, պետք է հիմնավորվի, որ անձը նպատակադրված չի եղել իրականացնելու իր վրա վերցված քաղաքացիաիրավական պարտավորությունները և ցանկացել է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պատկանող գույքը:

Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հաստատվում վերոգրյալը, ապա անձի արարքում բացակայում է խարդախության հանցակազմը, հետևաբար նրան պատասխանատվության ենթարկելու հարցը պետք է լուծվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով» (տե՛ս Վարդան Մաթևոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԳ/0037/01/11 որոշման 25-27-րդ կետերը):

Վերահաստատելով և զարգացնելով վերոնշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Ն.Ափոյանի գործով որոշմամբ ընդգծել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված՝ յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքներից առաջինը՝ հանցագործության դեպքը (ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքը) և այն բնութագրող հանգամանքները (հանցագործության տեղ, ժամանակ, եղանակ, միջոցներ և այլն) բացահայտելու պահանջն է (հանցագործության օբյեկտիվ կողմը), ինչից հետո միայն անհրաժեշտ է անդրադառնալ դեպքին անձի առնչությանը և նրա մեղավորությանը՝ քրեական օրենքով արգելված արարք կատարելու մեջ (հանցագործության սուբյեկտիվ կողմը): Հետևաբար խարդախության հանցակազմի առկայությունը հավաստելու համար նախևառաջ պետք է պարզել հանցագործության օր-

յեկտիվ կողմը բնութագրող հատկանիշների առկայությունը, այնուհետև անցնել սուբյեկտիվ կողմի բացահայտմանն ու վերլուծությանը:

Այսպես՝ խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներն են հանրորեն վտանգավոր արարքը՝ ուրիշի գույքը հափշտակելը, այսինքն՝ այն վերցնելը, հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, և հանցագործության եղանակը՝ ուրիշի գույքը հափշտակելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով: Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական դրդումներով (*տե՛ս Ն.Ափոյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԶԳ/0009/01/13 որոշման 22.1.-րդ կետը*):

14. . ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝

«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, դեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Խարդախության գործերով ապացույցների բավարարության չափանիշի վերլուծությունը Վճռաբեկ դատարանը կատարել է Ն.Ափոյանի գործով որոշմամբ՝ արձանագրելով, որ քննարկվող գործերով անձինքրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների այնպիսի համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը,

անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն հանցագործության դեպքի և այն բնութագրող հանգամանքների (մասնավորապես՝ ուրիշի գույքը հափշտակելու և խաբեության կամ վատահոթությունը չարաշահելու եղանակի) առկայության, դրանում անձի մեղավորության (մասնավորապես՝ հանցավորի մոտ ի սկզբանե ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության առկայության) վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնելու հիմնավորված ու պատճառաբանված որոշում (տե՛ս Ն.Ափոյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0009/01/13 որոշման 26-րդ կետը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Ա. դամյանին երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել համապատասխանաբար տուժող Ա.Ալիխանյանից և տուժող Յ.Հովհաննիսյանից խարդախությամբ խոշոր չափի արժեք ունեցող մեկական ավտոմեքենա հափշտակելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Անդրադառնալով Յ.Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագին՝ Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել հետևյալը.

ա) Ա.Ադամյանը Յ.Հովհաննիսյանից առևտրով զբաղվելու նպատակով 2014 թվականի հունվարի 22-ին ձեռք է բերել «Ֆորդ Էսքորտ» մակնիշի ավտոմեքենան տարածամկետ՝ նույն թվականի հունվարի 27-ին 120.000 ՀՀ դրամ, իսկ հաջորդող յուրաքանչյուր ամսվա 27-ին՝ 200.000 ՀՀ դրամ վճարելու պայմանով:

բ) 2014 թվականի հունվարի 27-ին Ա. Ադամյանը վճարել է 60.000 ՀՀ դրամ և խոստացել մնացած 60.000 ՀՀ դրամը վճարել փետրվարի 27-ին վճարվելիք գումարի հետ միասին:

գ) 2014 թվականի փետրվարի 2-ին Ա.Ադամյանը Յ.Հովհաննիսյանին և նրա որդուն՝ Ռ.Հովհաննիսյանին տեղեկացրել է, որ ցանկանում է զնված ավտոմեքենայով մեկնել Վրաստանի Հանրապետություն՝ առևտրով զբաղվելու: Ռ.Հովհաննիսյանը տվել է իր համաձայնությունը՝ հայտնելով, որ նման դեպքում լիազորագիր չի պահանջվում, և բավարար է միայն սեփականատիրոջ՝ Մ.Հովհաննիսյանի անձնագրի պատճենը, ինչը և փոխանցել է:

դ) Ա.Ադամյանը 2014 թվականի մարտի 3-ին մեկնել է Վրաստան, իր հարազատների օգնությամբ Ախալքալաքի տարածաշրջանից բնամթերք է ձեռք բերել ու փոխանակել դրանք այլ մթերքով Բաթում քաղաքում կամ մոտակա տարածքներում: Ավտոմեքենայի արժեքի հերթական վճարումը չի կատարել և մարտ ամսվա սկզբին զանգահարել է Յ.Հովհաննիսյանին, այնուհետև խոսել է վերջինիս որդու հետ՝ հայտնելով, որ գործերը լավ չեն ընթանում, և եթե ավտոմեքենայի արժեքը չվճարի, ապա ավտոմեքենան

հետ կվերադարձնի՝ այն իր մոտ պահելու յուրաքանչյուր օրվա դիմաց վճարելով 5000 ՀՀ դրամ:

ե) Ա.Ադամյանը, տեղեկանալով իր վերաբերյալ քրեական գործի առկայության մասին, 2014 թվականի ապրիլի 11-ին վերադարձել է ՀՀ, իսկ ավտոմեքենան իր հետ չի բերել՝ գումար չունենալու պատճառով:

զ) Ա.Ադամյանի խնդրանքով իր ծնողները կապվել են Յ.Հովհաննիսյանի հետ, տեղեկացրել ավտոմեքենայի գտնվելու վայրի մասին, ապա 2014 թվականի հունիսի 2-ին Ռ.Հովհաննիսյանի ու Մ.Հովհաննիսյանի հետ մեկնել են Բաթում քաղաք և Յ.Հովհաննիսյանին վերադարձրել ավտոմեքենան՝ դրա մեջ տեղադրելով մինչ այդ Ա.Ադամյանի կողմից ապամոնտաժված գազի սարքավորումները:

Առաջին ատյանի դատարանը վերոնշյալ փաստական հանգամանքները հաստատված է համարել՝ վերլուծելով ամբաստանյալ Ա.Ադամյանի, տուժող Յ.Հովհաննիսյանի, վկաներ Մ.Հովհաննիսյանի, Ռ.Հովհաննիսյանի և Լ.Շիրինյանի ցուցմունքները, ինչպես նաև՝ գործով ձեռք բերված մյուս ապացույցները՝ «Ավտոմեքենայի նախնական առուվաճառքի պայմանագիր» վերնագրված փաստաթուղթը, ՀՀ ԱԱԾ սահմանային գորքերի հրամանատարի՝ 2014 թվականի ապրիլի 18-ի թիվ 5/3-205 գրությունը և զննում կատարելու մասին 2014 թվականի հունիսի 20-ի արձանագրությունը:

Վերոգրյալի հետ մեկտեղ՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Ա.Ադամյանի կողմից տևական ժամանակ ավտոմեքենան օգտագործելու, այն որևէ մեկին չօտարելու և ծնողների օգնությամբ տուժողին վերադարձնելու հանգամանքները վկայում են ամբաստանյալի մոտ հափշտակություն կատարելու ուղղակի դիտավորության բացակայության մասին՝ փաստելով, որ Ա.Ադամյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմը (տե՛ս սույն որոշման 7.1.-րդ կետը):

Յաշա Հովհաննիսյանից խարդախությամբ գույք հափշտակելու կապակցությամբ Վերաքննիչ դատարանը նշել է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալի անմեղության վերաբերյալ հանգել է ոչ ճիշտ հետևության: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ *Արթուր Ադամյանի մեղքը Յաշա Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հաստատված է, և նրա կատարած հանցանքն ապացուցված՝ քրեական գործով ձեռք բերված և պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում Առաջին ատյանի դատարանում հետազոտված համապատասխան ապացույցներով:* Վերաքննիչ դատարանն իր վերոգրյալ եզրահանգման համար հիմք է ընդունել, մասնավորապես, տուժող Յաշա Հովհաննիսյանի, վկաներ Ռուստամ Հովհաննիսյանի, Մամվել Հովհաննիսյանի ցուցմունքները, «Ավտոմեքենայի նախնական առուվաճառքի պայմանագիր» վերնագրված փաստաթուղթը, ՀՀ ԱԱԾ սահմանային գորքերի հրամանատարի

2014 թվականի ապրիլի 18-ի թիվ 5/3-205 գրությունը և գնում և կատարելու մասին 2014 թվականի հունիսի 20-ի արձանագրությունը:

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտով անդրադարձել է նաև տուժող Յ.Հովհաննիսյանի ու վկա Մ.Հովհաննիսյանի ցուցմունքներում առկա՝ Ա.Ադամյանի կողմից մեքենան ՀՀ չտեղափոխելու պատճառների ու Ա.Ադամյանին «խարդախ» անվանելու վերաբերյալ մի շարք դատողությունների՝ արձանագրելով, որ դրանք անձի սուբյեկտիվ ընկալման հետևանք են (տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը):

16. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով 13-14-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական գործում առկա ապացույցների համակցությունը չի ձևավորում համոզվածությունն առ այն, որ Ա.Ադամյանն այնպիսի հանցավոր վարքագիծ է դրսևորել, որով ներգործել է տուժողի գիտակցության և կամքի վրա, ինչի արդյունքում, ընկնելով մոլորության մեջ՝ Յ.Հովհաննիսյանն իր գույքը հանձնել է Ա.Ադամյանին: Այս առումով Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ գործի նյութերով չի հիմնավորվել Ա.Ադամյանի մեղադրանքի ծավալում ընգրկված այն հանգամանքը, թե Ա.Ադամյանն առանց սակարկման համաձայնել է գնել Յ.Հովհաննիսյանի մեքենան նրա իսկ առաջարկած արժեքով և այդ մասին վճարման կեղծ խոստում է տվել: Ասվածը հերքվում է Յ.Հովհաննիսյանի ցուցմունքներով այն մասին, որ մեքենայի արժեքը մաս-մաս վճարելու պարագայում ինքը որոշել է չիջեցնել այն, բացի այդ էլ՝ Ռ.Հովհաննիսյանը հայտնել է, որ մեքենայի վրա առկա թերության պատճառով դրա նախնական՝ 3700 ԱՄՆ դոլար արժեքն իջեցրել են 3600 ԱՄՆ դոլար (տե՛ս սույն որոշման 6.1-6.2-րդ կետերը): Ինչ վերաբերում է ամբաստանյալի կողմից վճարման կեղծ խոստում տալուն, ապա Վճարելի դատարանը փաստում է, որ Ա.Ադամյանի և Մ.Հովհաննիսյանի միջև կնքվել է «Ավտոմեքենայի նախնական առուվաճառքի պայմանագիր», որով ամրագրվել են կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Այսինքն՝ քաղաքացիաիրավական պայմանագրով հստակ սահմանվել են գույքի ձեռքբերման համար տարածանկետ վճարման պայմանները (տե՛ս սույն որոշման 6.5-րդ կետը), իսկ գործի նյութերում առկա չեն դրա կեղծ լինելը հավաստող փաստեր:

Ինչ վերաբերում է իր իրական հանցավոր մտադրությունները քողարկելու և տուժողի մոտ վստահություն առաջացնելու նպատակով իբրև կադրերի ռեգերվում գտնվող զինծառայող ներկայանալուն՝ Վճարելի դատարանը փաստում է, որ կապիտան Արթուր Ադամյանը ՀՀ պաշտպանության նախարարի՝ 2012 թվականի մայիսի 18-ի հրամանով (իր զեկուցագրի համաձայն) արձակվել է զինված ուժերի պահեստագոր (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 136): Միևնույն ժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ կադրերի ռեգերվում գտնվող զինծառայող ներկայանալը սույն գործով ողջամտորեն չէր կարող ազդեցություն ունենալ տուժողի գիտակցության և կամքի վրա, առավել ևս՝ մոլորության

մեջ գցել նրան: Բացի այդ, հարկ է արձանագրել, որ սույն գործում առկա չէ որևէ փաստական տվյալ առ այն, որ Ա.Ադամյանը համոզել է Յ.Հովհաննիսյանին իրեն փոխանցել վերջինիս պատկանող գույքը: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ադամյանի արարքում բացակայում է խարդախության հանցակազմի **օբյեկտիվ կողմը**՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով ուրիշի գույքին տիրանալը:

Անդրադառնալով խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ա.Ադամյանը Յ.Հովհաննիսյանից մեքենա է ձեռք բերել՝ **առևտրով** զբաղվելու նպատակով, որի մասին տեղյակ է եղել տուժողը: Նշված հանգամանքները հաստատվում են Ա.Ադամյանի, Յ.Հովհաննիսյանի, Ռ.Հովհաննիսյանի, Լ.Շիրինյանի ցուցմունքներով (տե՛ս սույն որոշման 6-6.2-րդ և 6.4-րդ կետերը): Ասվածի հետ կապված՝ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ամբաստանյալը մեքենան ձեռք բերելուց հետո, նախապես այդ մասին տեղեկացնելով Յ.Հովհաննիսյանին և Ռ.Հովհաննիսյանին, մեկնել է Վրաստան, իր հարազատների օգնությամբ Ախալքալաքի տարածաշրջանից բնամթերք ձեռք բերել ու փոխանակել դրանք այլ մթերքով Բաթում քաղաքում և մոտակա տարածքներում, ինչն էական նշանակություն ունի Ա.Ադամյանի մտադրությունները գնահատելու հարցում: Հակառակ դրան՝ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքում առկա չեն հիմնավորումներ առ այն, որ Ա.Ադամյանը մտադրված չի եղել իրականացնելու իր վրա վերցված քաղաքացիաիրավական պարտավորությունները և ցանկացել է հափշտակել տուժողին պատկանող գույքը:

Ինչ վերաբերում է 6.170.000 ՀՀ դրամի պարտքեր ունենալու և խոշոր չափի գույք գնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ու բավարար եկամուտներ չունենալու վերաբերյալ նախաքննության մարմնի դատողություններին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն այս հանգամանքները, գործի մնացած փաստերից կտրված, բավարար չեն Ա.Ադամյանի կողմից խարդախություն կատարելու դիտավորության առկայությունը հաստատված համարելու համար:

Վերոգրալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ադամյանի արարքում բացակայում է նաև խարդախության հանցակազմի **սուբյեկտիվ կողմը**: Այլ խոսքով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում առկա ապացույցները բավարար չեն հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ մինչև Յ.Հովհաննիսյանի գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը Ա.Ադամյանը գույքի հափշտակության ուղղակի դիտավորություն է ունեցել:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Յ.Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագով Ա.Ադամյանի արարքում հանցակազմի բացակայության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնավորված են և բխում են գործի նյութերից: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, քննարկվող

դրվագով մեղավոր ճանաչելով Ա.Ադամյանին, հիմք է ընդունել Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցները՝ առանց պատճառաբանելու, թե խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմն ու այն բնութագրող հանգամանքները և սուբյեկտիվ կողմն ու այն բնութագրող հանգամանքները սույն գործի նյութերում առկա որ փաստական տվյալներով են հաստատվում: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «ամբաստանյալ Արթուր Ադամյանը, **խարդախություն կատարելու նախնական դիտավորությամբ (...)** Յաշա Հովհաննիսյանի վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել է նրան պատկանող (...) ավտոմեքենան», սակայն չի մատնանշել այնպիսի փաստական տվյալներ, որոնք կհաստատեն Ա.Ադամյանի մոտ ի սկզբանե Յ.Հովհաննիսյանի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության առկայությունը կամ այդ գույքը վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակելը:

Վերոգրյալի հաշվառմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի՝ *Լ.Ավետիսյանի*, *Վ.Մաթևոսյանի* և *Ն.Ափոյանի* որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Յ.Հովհաննիսյանից հափշտակություն կատարելու դրվագով Ա.Ադամյանին մեղսագրված արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

18. Ինչ վերաբերում է Ա.Ալիխանյանից հափշտակություն կատարելու դրվագով Ա.Ադամյանի անմեղության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա ապացույցները, այդ դրվագով ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության (տե՛ս սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերը):

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ադամյանի մեղքն Ա.Ալիխանյանից հափշտակություն կատարելու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքում հաստատված է, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքվում են տուժող Արթուր Ալիխանյանի, վկաներ Վահե Վիրաբյանի, Կարեն Ղանդիլյանի, Սարգիս Գեղամյանի, Սամվել Խաթայանի, Արկաղիկ Սարգսյանի, Կարեն Սարգսյանի, Լիանա Այվազյանի, Արման Մանուչարյանի, Աշոտ Այվազյանի, Գոռ Ուլիխանյանի, Արծրուն Ալիխանյանի, Սուրեն Մանվելյանի, Հրաչիկ Ադամյանի ցուցմունքներով, ինչպես նաև՝ ստորադաս դատարանների դատական ակտերում վկայակոչված այլ ապացույցներով:

19. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ապացույցները գնա-

հատելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջները, որը հանգեցրել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառման: Արդյունքում Վերաքննիչ դատարանը կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ: Նշված խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածների համաձայն, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է հիմնավորված, պատճառաբանված և գործն քստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 4-ի դատավճռին՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Մ Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արթուր Հենրիկի Աղամյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 22-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թվականի հունիսի 4-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

22.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0002/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝
վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դատախազ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Հ.ՉԱԽՈՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սիեր Ազատի Հա-
րությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015
թվականի հոկտեմբերի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղա-
կալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2014 թվականի սեպտեմբերի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-
րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 10146214
քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի սեպտեմբերի 26-ի որոշ-
մամբ Սիեր Ազատի Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և
նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-131-րդ հոդ-
վածի 2-րդ մասի 3-րդ կետով ու 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով:
2015 թվականի հունվարի 26-ի որոշումներով Սիեր Ազատի Հարությունյա-

նի նկատմամբ առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, նա ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով:

2015 թվականի փետրվարի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի հունիսի 15-ի դատավճռով Մ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերադրակել է, նրան մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և պատիժ նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի հիման վրա Մ.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատժին հաշվակցվել է 2014 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև 2015 թվականի փետրվարի 13-ն անազատության մեջ գտնվելու չորս ամիսը, և վերջնական պատիժ նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 8 (ութ) ամիս ժամկետով:

Վճռվել է նաև Մ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չեռանալու մասին ստորագրությունը վերացնել, և նրան կալանքի վերցնել դատական նիստերի դահլիճից:

3. Մեղադրող Հ.Չախոյանի, ամբաստանյալ Մ.Հարությունյանի պաշտպան Մ.Թորոսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը և ամբաստանյալ Մ.Հարությունյանի պաշտպան Մ.Թորոսյանը:

Վճռաբեկ դատարանը 2016 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ ամբաստանյալ Մ.Հարությունյանի պաշտպան Մ.Թորոսյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ վարույթ է ընդունել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Մ.Հարությունյանի պաշտպան Մ.Թորոսյանը՝ խնդրելով մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Մ.Հարությունյանին նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունվարի 26-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «Նա 2014 թվականի սեպտեմբերի 13-ին ժամը 23:30-ի սահմաններում Երևան քաղաքի 16-րդ թաղամասի 11-րդ շենքի բակում Վահագն Իսրայելյանի և նրա անչափահաս որդու՝ 08.02.1997թ. ծնված Արեգ Իսրայելյանի հետ չնչին առիթից՝ վերջիններիս բարեկամին՝ Անի Արտակի Մելիքսեթյանին փողոցում անհանգստացնելու հետ կապված խոսակցության ընթացքում, սանձարձակ և անպարկեշտ արտահայտություններ է հասցրել Վահագն Իսրայելյանի հասցեին, Արեգ Իսրայելյանի ներկայությամբ՝ հրահրելով քաշքշուկ և վիճաբանություն, սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլորցրով տարված խուլիգանական դրդումներով, ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ հարձակվել է Արեգ Իսրայելյանի վրա, որի ընթացքում իր մոտ եղած սուր կտրող-ծակող գործիքով երկու անգամ հարվածել է վերջինիս կրծքավանդակին, ձախ գոտկային շրջանին և դիտավորությամբ պատճառել կյանքի համար վտանգավոր առողջությանը ծանր վնաս (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 263):

5.1. Մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասի համաձայն՝ «(...) Սհեր Ազատի Հարությունյանը 2014 թվականի սեպտեմբերի 13-ին ժամը 21:00-ի սահմաններում իրենց շենքի բակում հանդիպել է ընկերոջը, (...) [ընկերոջ մեքենայով] երթևեկելու ընթացքում հանդիպել են (...) Մարգարիտ Վահագի Իսրայելյանին և վերջինիս մորեղբոր աղջկան՝ Անի Արտակի Մելիքսեթյանին (...): Հասնելով աղջիկներին, Սհեր Հարությունյանը (...) սկսել է անպարկեշտ արտահայտություններ արտահայտել ուղղված Անի Մելիքսեթյանին և առաջարկել նստել մեքենան և միասին գնալ գարեջուր խմելու: Վերջինից մերժում ստանալով՝ իջել է ավտոմեքենայից, մոտեցել է Ա.Մելիքսեթյանին և ցանկություն հայտնել ծանոթանալ նրա հետ, որից հետո պահանջել է նստել ավտոմեքենան իրենց հետ գնալու համար, ինչին ի պատասխան կրկին մերժում է ստացել, որից հետո դանակի գործադրմամբ պահանջել է նստել ավտոմեքենան, նման պարագայում ևս մերժում է ստացել, իսկ Սհեր Հարությունյանը այլևս իր հետ գալու կամ ավտոմեքենան նստելու պահանջ չի ներկայացրել (...): Մարգարիտ Իսրայելյանը այդ ամենը տեսնելով զանգահարել է իր հորը՝ Վահագն Իսրայելյանին և տեղյակ պահել կատարվածի մասին: Վերջինս էլ որդու՝ անչափահաս Արեգ Իսրայելյանի հետ տանից իջել է բակ և կատարվածի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար քայլելով տղայի հետ մոտեցել է (...) Սհեր Հարությունյանին (...): Վահագն Իսրայելյանի այն հարցին, թե ինչու են անհանգստացրել աղջիկներին Սհեր Հարությունյանը հեզանական տոնայնությամբ առանց որևէ հաշիվ տալու, որ խոսում է իրենից տարեց անձնավորության հետ

ընդգծելով իր կարծեցյալ առավելությունները անձնական վիրավորանքներ հասցնելով պատասխանել է «լավ եմ արել աղջիկ եմ խոսեցրել, բա աղջիկը խոսեցնելու համար է»: Նման արտահայտությունները Սիեր Հարությունյանի կողմից ուղղված Վահագն Իսրայելյանին դուր չի եկել Արեգ Իսրայելյանին, ով էլ այդ խոսակցության վրա մեկ անգամ ձեռքով հարվածել է Սիեր Հարությունյանի դեմքին, վերջինս էլ իր իսկ հրահրած քաշքշուկի ընթացքում անպարկեշտ արտահայտություններով սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքով տարված՝ խուլիգանական դրդումներով մարմնական վնասվածքներ հասցնելու դիտավորությամբ հարձակվել է Արեգ Իսրայելյանի վրա, որի ընթացքում իր մոտ եղած սուր կտրող-ծակող գործիքով երկու անգամ հարվածել է վերջինիս կրծքավանդակին, ձախ գոտկային շրջանին և դիտավորությամբ պատճառել կյանքի համար վտանգավոր առողջությանը ծանր վնաս (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, քերթեր 292-293):

6. Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Մ.Հարությունյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետից վերադարձվելով նույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և այդ հոդվածով նրան մեղավոր ճանաչելով, արձանագրել է. «(...) [Վ]իճաքանության առիթը և պատճառը եղել է տուժող Արեգ Իսրայելյանի, տուժողի հոր՝ Վահագն Իսրայելյանի և ամբաստանյալ Սիեր Հարությունյանի այդ պահին լարված հարաբերություններն ու դրանց պարզաբանումը, ինչը նախաքննական մարմինը նույնպես հիմնավորված է համարել, քանի որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքում նշել է, որ «վերջիններիս /Վահագն Իսրայելյանի և Արեգ Իսրայելյանի/ քարեկամին՝ Անի Արտակի Մելիքսեթյանին փողոցում անհանգստացնելու հետ կապված խոսակցության ընթացքում», սակայն դա դիտելով որպես «չնչին առիթ» արարքին տվել է ոչ ճիշտ քրեահրավական գնահատական: Դատաքննությամբ հաստատվեց, որ արարքն սկսվել է տուժող Արեգ Իսրայելյանի հարվածից հետո, ի պատասխան որի՝ ամբաստանյալ Սիեր Հարությունյանը իր մոտ գտնվող սուր կտրող-ծակող գործիքով դիտավորությամբ երկու անգամ հարվածել է նրան, այսինքն տուժողի գործողությունների արդյունքում ձևավորված վիրավորանքի դիմաց է ամբաստանյալը, վրեժ լուծելով, ցանկացել քավարարում ստանալ: (...)

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները վկայում են այն մասին, որ ամբաստանյալ Սիեր Հարությունյանը տուժող Արեգ Իսրայելյանի նկատմամբ հանցավոր ոտնձգությունը կատարելիս «սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքից մղված» չի գործել, այլ իր վարքագիծը պայմանավորված է եղել տուժողի գործողություններով: Դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ հանցավորի վարքագիծն ուղղված է կոնկրետ անձի դեմ, պայմանավորված է նրա հակաօրինական կամ հակաքարոջական վարքագծով և հանդիսանում է հանցավորի հուզական վիճակի արտահայտություն, խուլիգանության հանցակազմն այս դեպքում բացակայում է լիովին: Նման պայմաններում խոսք լինել չի կա-

րող վնասվածքը խուլիզանական դրոշմներով պատճառելու մասին: Ամբաստանյալ Մհեր Հարությունյանի կատարած գործողությունները չի կարող որակվել անշարժառիթ, քանի որ տուժող Արեգ Իսրայելյանը հարվածել է ամբաստանյալին, ով գրուցել է նրա հոր Վահագն Իսրայելյանի հետ, որից հետո ամբաստանյալ Հարությունյանը դիտավորությամբ սուր կտրող-ծակող գործիքով հարվածել ու մարմնական ծանր վնասվածք է պատճառել Արեգ Իսրայելյանին:

Վերոգրյալը հաստատվում է ամբաստանյալի, տուժողի, վկաների թե նախաքննական, թե դատաքննական ցուցմունքներով:

(...)

Նման պայմաններում նախաքննական մարմինը ճիշտ չի գնահատել վիճարանության առիթը, հանցագործության կատարման շարժառիթը և իրական դրդապատճառները՝ արարքի իրավական որակման հարցում հանգեղով ակնհայտ սխալ եզրակացության (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 455-456):

6.1. Գործով վկա Մ.Իսրայելյանի՝ դատարանում հրապարակված նախաքննական ցուցմունքների համաձայն՝ «(...) [Ի]նքը և (...) Անի Մելիքսեթյանը դուրս են եկել զբոսնելու: (...) Քայլելու ընթացքում իրենց է հավասարվել սպիտակ գույնի իրեն անհայտ մակնիշի ավտոմեքենա և վարորդի կողքին նստած անձնավորությունը, որը իրեն անձանոթ է եղել, ցինիկ տոնայնությամբ առաջարկել է նստել ավտոմեքենան և գնալ միասին զարեջուր խմելու: Իրենք ոչ մի ուշադրություն չդարձնելով շարունակել են ճանապարհը, որից հետո ավտոմեքենան կանգնեցրել են և դեկի կողմից իջել է իրեն ծանոթ Արմեն Սարգսյանը, որին ճանաչել է թաղամասից, վերջինս իրեն բարևել է և ասել, որ ամեն ինչ լավ է անհանգստանալու կարիք չկա, իսկ ինքը Արմեն Սարգսյանին տեսնելով փոքր ինչ հանգստացել է: Իսկ իրեն անձանոթ տղան գրուցել է Անի Մելիքսեթյանի հետ, սակայն վերջինս կտրականապես մերժել է նրա առաջարկները: Հետո իրենք արագ քայլելով գնացել են տան ուղղությամբ և գրեթե հասել շենքի բակ, իսկ ավտոմեքենան իրենց հետևից: Հասնելով իրենց կանգնեցրել են ավտոմեքենան և իջել: Արմեն Սարգսյանը եկել է իր ուղղությամբ, իսկ մյուս տղան՝ Անի Մելիքսեթյանի: Արմեն Սարգսյանը իրեն ասել է, որ այդ աղջիկը ընկերոջ դուրը եկել է և նա ցանկանում է խոսել նրա հետ, իսկ ինքը պատասխանել է, որ եթե Անի Մելիքսեթյանը չի ցանկանում, պետք չէ ստիպել և գնացել է վերջինիս կողմը: Հետո, երբ նկատելով, որ իրեն անձանոթ տղան Անի Մելիքսեթյանի որովայնի հատվածին դանակ է պահել և պահանջել է նստել ավտոմեքենան և իր հետ գնալ, իսկ Անին համարձակորեն ասել է, որ կարող է խփի, միևնույն է նրա մեքենան չի նստելու: Տեսնելով, որ այդ անձանոթ տղայի ուշադրությունը Անիի կողմն է, անմիջապես վազել է իրենց շենքի ուղղությամբ և մուտքից զանգահարել է հորը՝ Վահագն Իսրայելյանին և շտապ կանչել շենքի բակ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 453):

6.2. Վկա Ա.Մելիքսեթյանը նախաքննության ընթացքում ցուցմունքներ է տվել այն մասին, որ «(...) 2014 թվականի սեպտեմբերի 13-ին ժամը 17:00-ի սահմաններում ինքը և հորաքրոջ աղջիկը՝ Մարգարիտ Իսրայելյանը դուրս են եկել զբոսնելու: (...) Քայլելու ընթացքում իրենց է հավասարվել սայիտակ գույնի իրեն անհայտ մակնիշի ավտոմեքենա և վարորդի կողքին նստած անձնավորությունը, որը իրեն անծանոթ է եղել առաջարկել է ծանոթանալ, նստել ավտոմեքենան և գնալ միասին զարեջուր խմելու: Իրենք ոչ մի ուշադրություն չդարձնելով շարունակել են ճանապարհը, ինչից հետո ավտոմեքենան կանգնեցրել և իջել են երկու անձնավորություն, վարորդը Մարգարիտ Իսրայելյանին ծանոթ է եղել Արմեն անունով և ասել է, որ ընկերը ցանկանում է ծանոթանալ իր հետ, իսկ այդ ընթացքում մյուս տղան զարեջրի շիշը ձեռքին մոտեցել է, ձեռքով բռնել իր ձեռքից, ներկայացել, որ իր անունը Սիեր է, հետո հայտնել է, որ շատ է հավանել և առաջարկել է նստել մեքենան միասին գնալ: Նրա բոլոր առաջարկներին ինքը մերժել է, հետո վերջինս դանակի գործադրմամբ պահանջել է նստել ավտոմեքենան, նման պարագայում ևս ինքը մերժել է, որից հետո Սիերը տոնայնությունը փոխել է և դանակը պահել գրպանում, ասելով որ ինքը աղջիկներին դանակով չի հարվածում: Այդ ամենը տեսնելով Մարգարիտ Իսրայելյանը վազել է տան ուղղությամբ, ինքը նույնպես ցանկացել է գնալ, սակայն այդ անձնավորությունը, որը Սիեր է ներկայացել ամեն կերպ փորձել է իրեն պահել, հեռախոսահամարը իմանալու համար: Հետո, երբ շենքի մոտից Մարգարիտ Իսրայելյանը բղավել է, որ հայրը գալիս է Սիերը իր ձեռքը բաց է բողել, ինչից հետո ինքը գնացել է Մարգարիտ Իսրայելյանի մոտ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 454):

6.3. Գործով տուժող Ա.Իսրայելյանի դատաքննական ցուցմունքների համաձայն՝ «(...) Երբ մոտեցել է [Մ.Հարությունյանին և Ա.Մարգարյանին] հայրը (Վ.Իսրայելյանը) սկսել է խոսել Սիերի հետ, փորձել է նրան հանգստացնել, նրան ասել է, որ գնա տուն «տաքացած ես» այն ժամանակ ինքը նույնպես փորձել է նրան հանգստացնել, որ տուն գնա, սակայն Սիերը իրեն ասել է «դու ինչի ես եկել», հետո էլ հորը ասել է «ինչի ես գրի-գիտ լինում», այսինքն Սիերը հոր տարիքը չհարգելով ճիշտ չի արտահայտվել, որի ժամանակ ինքը աջ ձեռքով խփել է նրան, որից մի քանի վայրկյան հետո էլ նա է իրեն երկու անգամ դանակով խփել (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 452):

6.4. Դատաքննության ժամանակ հրապարակված և հետագոտված վկա Վ.Իսրայելյանի նախաքննական ցուցմունքների համաձայն. «(...) [Մ.Հարությունյանը] ագրեսիվ հեզմական տոնայնությամբ միջամտել է խոսակցությանը, հաշվի չառնելով տարիքային տարբերությունը շատ վատ արտահայտություններ է արել, և տպավորություն է ստեղծել, որ ինքը ամենակարող է և ում հետ ինչպես ցանկանա, այնպես էլ կխոսի, ապա ասել է՝ «լավ եմ արել աղջիկ եմ խոսեցրել, բա աղջիկը խոսեցնելու համար է»: Այդ վիրավորական խոսքերի ընթացքում իր որդին՝ Ա.Իսրայելյանը, մեկ անգամ ձեռքով հարվածել է նրա դեմքին, ինչից հետո վերջինս շատ

արագ հարձակվել է որդու վրա (...» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 453):

7. Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով նախաքննական մարմնի կողմից Մ.Հարությունյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպմանը և այդ համատեքստում մեջբերելով Վճռաբեկ դատարանի՝ *Ա.Պապյանի* գործով թիվ ՏՂ-0115/01/09 որոշմամբ արտահայտված առանձին իրավական դիրքորոշումները, արդյունքում փաստել է. «(...) [Թ-]են քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ, այդ թվում տուժող Ա.Իսրայելյանի ցուցմունքներով հիմնավորվել է, որ ամբաստանյալը տուժող Արեգ Իսրայելյանին իր մոտ եղած սուր կտրող-ծակող գործիքով դիտավորությամբ երկու անգամ հարված է հասցրել՝ նրան պատճառելով կյանքի համար վտանգավոր առողջությանը ծանր վնաս, միայն այն բանից հետո, երբ տուժող Ա.Իսրայելյանն իրենց բարեկամուհի Անի Մելիքսեթյանին փողոցում անհանգստացնելու հետ կապված, խոսակցության ընթացքում աջ ձեռքով հարվածել է Մհեր Հարությունյանի դեմքին, ինչից էլ վրդովված, վերջինս երկու անգամ հարվածել ու ծանր վնաս է պատճառել տուժողի առողջությանը, սակայն նշված էական հանգամանքը ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ձևակերպման մեջ նախաքննական մարմնի կողմից չի ներառվել, ինչն էլ հանգեցրել է նրա արարքի սխալ քրեաիրավական գնահատման, իսկ արդյունքում նաև՝ դատական սխալի:

Վերոշարադրյալը հիմք է տալիս Վերաքննիչ դատարանին եզրակացնելու, որ հիմնավոր պետք է համարել [Առաջին ատյանի] Դատարանի՝ վիճարկվող դատական ակտում տեղ գտած հետևությունն այն մասին, որ ամբաստանյալ Մհեր Հարությունյանի գործողությունները՝ տուժող Ա.Իսրայելյանին երկու անգամ հարվածելը, եղել է ոչ թե «չնչին առիթով, խուլիզանական դրդումներով» և «սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքով տարված խուլիզանական դրդումներով», ինչպես գնահատել է նախաքննական մարմինը, այլ պայմանավորված է եղել տուժողի գործողություններով, հետևաբար տուժողի կողմից ամբաստանյալ Մ.Հարությունյանին հասցված հարվածին հաջորդող վերջինիս գործողությունները չեն կարող գնահատվել իբրև ակնհայտ անհամապատասխան, ոչ ադեկվատ ու ոչ համարժեք ռեակցիա (արձագանք) տուժողի գործողություններին և հիմք հանդիսանալ ամբաստանյալի արարքը իբրև խուլիզանական դրդումներով կատարված որակելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 115-118):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, ՀՀ քրեական դատավարութ-

յան օրենսգրքի 8-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև չեն կիրառել Վճռաբեկ դատարանի՝ *Այիկ Մաթևոսյանի, Գարուշ Մադաթյանի* և մի շարք այլ նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանների այն հետևությունը, որ ամբաստանյալն իր մոտ գտնվող սուր կտրող-ծակող գործիքով դիտավորությամբ՝ երկու անգամ հարվածել է տուժողին՝ վերջինիս գործողությունների արդյունքում ձևավորված վիրավորանքի դիմաց, վրեժ լուծելով՝ ցանկացել է բավարարում ստանալ, անհիմն են, չեն բխում գործով ձեռք բերված փաստական տվյալներից: Մասնավորապես՝ բողոքի հեղինակը նշել է, որ դատաքննությամբ հիմնավորվել է, որ հակաօրինական, հակահասարակական, բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերին հակադրվելու վարքագիծն ի սկզբանե դրսևորվել է ամբաստանյալի կողմից թե՛ հանցագործությանը նախորդող, թե՛ բուն կատարման ընթացքում: Ամբաստանյալը տուժողի հոր այն հարցին, թե ինչու են անհանգստացրել աղջիկներին, հեզմանքով, առանց որևէ հաշիվ տալու, որ խոսում է իրենից տարիքով ավագ անճանաչողության հետ, իր անձի «առավելությունները» ընդգծելու, ինքնահաստատման, սանձարձակության մոլուցքով տարված, դրսևորելով անպարկեշտ և ցինիկ վարքագիծ, պատասխանել է. «լավ եմ արել, աղջիկ եմ խոսեցրել, բա աղջիկը խոսեցնելու համար է»: Այդ արտահայտություններն՝ ուղղված Վ.Իսրայելյանին, բնականաբար, բարկացրել են Ա.Իսրայելյանին, ով նրա վարքագիծը կանխելու, նույն խուլիգանական արարքի դրսևորումները դադարեցնելու նպատակով ձեռքով մեկ անգամ հարվածել է Մ.Հարությունյանի դեմքին: Մ.Հարությունյանի սանձարձակ վարքագիծը կանխելուն ուղղված Ա.Իսրայելյանի նշյալ արարքը դատարանները գնահատել են որպես ամբաստանյալին ուղղված վիրավորանք, ինչի դիմաց ամբաստանյալը կատարել է հանցանքը: Մինչդեռ Ա.Իսրայելյանի այդ արարքը ոչ թե հանդիսացել է ծանր հանցագործության կատարման գերակա և գլխավոր շարժառիթ, այլ միայն նպաստել է դրա կատարմանը: Բողոքաբերի կարծիքով՝ դատարանները, փաստորեն, իրավաչափ են համարել ամբաստանյալի՝ մինչև տուժողի առողջությանը վնաս պատճառելը դրսևորած հակաբարոյական և հակահասարակական նշված վարքագիծը, որն անմիջական պատճառահետևանքային կապի մեջ է գտնվել տուժողի, ապա նաև ամբաստանյալի հետագա գործողությունների հետ:

9. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ ամբաստանյալ Մ.Հարությունյանի նկատմամբ չորս տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ նշանակելու վերաբերյալ դատարանների հետևությունները հիմնավորված չեն: Ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարաններն օբյեկտիվ ստուգման ու գնահատման չեն ենթարկել ամբաստանյալի կողմից կատարված հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները, հաշվի չեն առել օրենքով

պաշտպանվող հարաբերությունների սոցիալական նշանակությունը՝ այն, որ ամբաստանյալը հանցագործությունը կատարել է սուր կարող-ծակող գործիքի գործադրմամբ՝ երկու անգամ հարվածելով տուժողի կենսական կարևոր օրգանների ուղղությամբ: Բողոքաբերի կարծիքով՝ պատշաճ գնահատականի չի արժանացել նաև արարքը կատարելուց հետո ամբաստանյալի դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ տուժողին օգնություն ցույց տալու փոխարեն փախուստի դիմելը:

10. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 15-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանը գտնում է, որ խուլիգանական դրոշումներով դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետ) հանցակազմի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Մ.Հարությունյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի ոչ թե 2-րդ մասի 9-րդ կետով, այլ 1-ին մասով նախատեսված արարք կատարված լինելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունն արդյոք հիմնավոր է:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը սահմանում է. *«1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը (...)*

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

(...)

9) խուլիգանական դրոշումներով

(...)

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով»:

Խուլիգանական դրոշումներով կատարված սպանության՝ որպես ուրակյալ հանցակազմի էությանը Վճարելի դատարանն անդրադարձել է *Այիկ Մաթևոսյանի* վերաբերյալ որոշմամբ՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. *«Խուլիգանական դրոշումներով սպանությունը կատարվում է հասարակության և բարոյականության համընդհանուր ճանա-*

չում ստացած նորմերի նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի հողի վրա, երբ հանցավորի վարքագիծը բացահայտ մարտահրավեր է հասարակական կարգին և պայմանավորված է իրեն շրջապատին հակադրելու, նրա նկատմամբ արհամարհական վերաբերմունք ցուցադրելու ցանկությամբ:

Իրենց բովանդակությամբ խուլիգանական դրդումները ներկայացնում են բարդ շարժառիթ, որի մեջ միահյուսվում են անսահման եսամալությունը, խեղաթյուրված պատկերացումներն անձնական ազատությունների սահմանների մասին, բիրտ ուժի պաշտամունքը, իր անձի «առավելությունները» ընդգծելու մոլուցքը, «ինքնահաստատման» պահանջը, սանձարձակությունը, անպարկեշտ վարքագիծը, ցինիզմը, դաժանությունը, հանդգնությունը, ակնհայտ աննշան վիրավորանքի, չնչին առիթով ճիշտ արված դիտողության համար վրեժ լուծելը և այլն: Նշված շարժառիթների ամբողջությունը բնորոշ է յուրաքանչյուր խուլիգանության, սակայն խուլիգանական դրդումներով սպանություն կատարելիս դրանց միանում է նաև մարդկային կյանքի նկատմամբ արհամարհական վերաբերմունքն ընդհանրապես՝ անկախ տուժողի անձից:

Խուլիգանական դրդումներով սպանություն կատարելիս հանցավորը գործում է ոչ այնքան տուժողի հետ ունեցած անձնական փոխհարաբերություններից ելնելով, որքան հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու ձգտումից:

Սպանության այս տեսակին բնորոշ են ոչ թե անձնական, այլ խուլիգանական շարժառիթները, այսինքն՝ դրդումներ, մղումներ, որոնք ցույց են տալիս բացահայտ անհարգալից վերաբերմունք համակեցության կանոնների և բարոյականության տարրական նորմերի նկատմամբ:

Փաստորեն խուլիգանական դրդումներով սպանությանը հատուկ է բազմաթիվ, այդ թվում նաև մրցակցային շարժառիթների առկայությունը, որի պայմաններում կարևոր է այն հիմնական, առաջատար, գլխավոր շարժառիթը, որով ղեկավարվել է հանցավորը սպանություն կատարելիս:

Բոլոր դեպքերում, երբ սպանության հիմնական շարժառիթը խուլիգանական է, հանցավորի արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով» (տե՛ս Ալիկ Մաթևոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման 17-րդ կետը):

13.1. Վերահաստատելով և զարգացնելով Ա.Մաթևոսյանի վերաբերյալ որոշմամբ վերն արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ հիշյալ նախադեպային որոշմամբ վերլուծված՝ խուլիգանական դրդումներով կատարված սպանության հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշ հանդիսացող խուլիգանական դրդումների՝ որպես հանցագործության կատարման շարժառիթի էությունը վերաբերելի մասով կիրառելի է նաև խուլիգանական դրդումներով առողջությանը ծանր վնաս պատճառելուն: Մասնավորապես՝ խուլի-

զանական դրոշումներով անձի առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցավորի կամքի ձևավորման հիմքում ընկած է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են հասարակության և բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերին նետված բացահայտ մարտահրավերը, իրեն հասարակությանը և շրջապատին հակադրելու ու հակազդելու ցանկությունը, իր անձի «առավելությունները» ընդգծելու մոլուցքը, ցինիզմը, սանձարձակությունը, «ինքնահաստատման» պահանջը, էսամոլությունը, անպարկեշտ վարքագիծը և այլն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «խուլիզանական դրոշումները» որպես դիտավորությամբ առողջությանը ծանր մարմնական վնաս պատճառելու հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք, արտացոլված են կատարված հանցագործության սուբյեկտիվ կողմի հատկանիշներում, ուստի դրա լիարժեք բացահայտումը հնարավոր է միայն գործի բոլոր հանգամանքներն իրենց ամբողջության մեջ գնահատելու դեպքում: Այլ կերպ` խուլիզանական դրոշումները` որպես հանցագործության կատարման շարժառիթ, հանցավորի մոտ կարող են դրսևորվել ոչ միայն բուն հանցավոր արարքը կատարելիս, այլև մինչ այդ կամ դրանից հետո: Հետևաբար, արարքին քրեաիրավական գնահատական տալիս անհրաժեշտ է համակողմանի վերլուծության ենթարկել հանցանք կատարած անձի` թե՛ նախքան հանցանքի կատարումը, թե՛ դրա կատարման բուն ընթացքում և թե՛ հանցանքի կատարումից հետո դրսևորած վարքագիծը, այդ թվում` հանցավորի և տուժողի գործողությունների բնույթը, նրանց փոխհարաբերությունները և այլն: Այդ առումով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործության հանգամանքներն իրենց ամբողջության մեջ չվերլուծելը, դրանք իրարից անջատ գնահատելը կարող է հանգեցնել կատարված արարքին սխալ քրեաիրավական որակումն տալուն:

13.2. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ հանցագործության հանգամանքների ոչ լրիվ, տարանջատված գնահատման արդյունքում հնարավոր է առանձին դեպքերում հիմնավորվի հանցանք կատարելու այս կամ այն շարժառիթի առկայությունը, սակայն դրանց ամբողջական վերլուծությունը, հանցավորի և տուժողի գործողությունների հաջորդականության հանգամանալի հետազոտությունը հանգեցնի այդ շարժառիթի ընդհանրապես բացառմանը կամ դրա չնչին, երկրորդական նշանակություն ունենալուն և մեկ այլ` հանցագործությունը կատարելու գերակա, առաջնային շարժառիթի բացահայտմանը: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է գործի օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության, հետազոտված ապացույցների պատշաճ գնահատման արդյունքում պարզել այն հիմնական մղումը, որն ընկած է եղել օրենքով արգելված արարքի կատարման հիմքում:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե հանցավորի և տուժողի գործողությունների, գործի այլ հանգա-

մանքների ամբողջական վերլուծության արդյունքում պարզվում է, որ տուժողի գործողությունը ոչ թե պատճառ, այլ միայն «ամիթ» է հանդիսացել, նպաստել է, որպեսզի հանցավորն իր ի սկզբանե դրսևորած հակաօրինական կամ հակաբարոյական վարքագիծն արդեն հանցանքի կատարմամբ ավարտին հասցնի, ապա արարքը, որպես կանոն, ենթակա է որակման որպես խուլիգանական դրդումներով կատարված: Այլ կերպ՝ այն դեպքում, երբ տուժողի գործողությունը հանցավորի սանձարձակ, անպարկեշտ, ցինիկ վարքագծի արդյունք է, ապա այն, նույնիսկ եթե դրսևորված է լինում ֆիզիկական ուժի գործադրմամբ, ինքնին չի կարող բացառել հանցավորի արարքում խուլիգանական դրդումների առկայությունը:

14. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն եզրահանգում է, որ իր բնույթով բարդ շարժառիթ համարվող խուլիգանական դրդումների բացահայտումը և, ըստ այդմ, կատարված հանրորեն վտանգավոր արարքի ճիշտ որակումը հնարավոր է միայն գործի հանգամանքների ամբողջական վերլուծության, այդ թվում՝ հանցագործությանը նախորդող հանգամանքների մանրամասն ուսումնասիրության պարագայում:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից ամբաստանյալ Մ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ Ա.Մելիքսեթյանին փողոցում անհանգստացնելու հետ կապված խոսակցության ընթացքում սանձարձակ և անպարկեշտ արտահայտություններ է հասցրել Վ.Իսրայելյանի հասցեին, Ա.Իսրայելյանի ներկայությամբ հրահրելով քաշքշուկ և վիճաբանություն՝ սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքով տարված խուլիգանական դրդումներով, ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ հարձակվել է Ա.Իսրայելյանի վրա, որի ընթացքում իր մոտ եղած սուր կտրող-ծակող գործիքով երկու անգամ հարվածել է վերջինիս կրծքավանդակին, ձախ գոտկային շրջանին և դիտավորությամբ պատճառել կյանքի համար վտանգավոր առողջությանը ծանր վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Սույն գործով կազմված մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասի համաձայն՝

ա. Մ.Հարությունյանը սկսել է անպարկեշտ արտահայտություններ անել՝ ուղղված Ա.Մելիքսեթյանին, և առաջարկել նստել մեքենան ու միասին գնալ գարեջուր խմելու: Վերջինից մերժում ստանալով՝ իջել է ավտոմեքենայից, մոտեցել Ա.Մելիքսեթյանին և ցանկություն հայտնել ծանոթանալու նրա հետ, որից հետո պահանջել է նստել ավտոմեքենան՝ իրենց հետ գնալու համար, ինչին ի պատասխան կրկին մերժում է ստացել, որից հետո դանակի գործադրմամբ պահանջել է նստել ավտոմեքենան:

բ. Մ.Հարությունյանը Վ.Իսրայելյանի այն հարցին, թե ինչու են անհանգստացրել աղջիկներին, հեզնական տոնայնությամբ, առանց որևէ հաշիվ տալու, որ խոսում է իրենից տարեց անձնավորության հետ, ընդգծելով իր կարծեցյալ առավելությունները, անձնական վիրավորանքներ

հասցնելով, պատասխանել է. «լավ եմ արել, աղջիկ եմ խոսեցրել, բա աղջիկը խոսեցնելու համար է»,

գ. Մ.Հարությունյանի կողմից Վ.Իսրայելյանին ուղղված արտահայտությունը դուր չի եկել Ա.Իսրայելյանին, ով էլ այդ խոսակցության վրա մեկ անգամ ձեռքով հարվածել է Սիեր Հարությունյանի դեմքին, վերջինս էլ իր իսկ հրահրած քաշքշուկի ընթացքում անպարկեշտ արտահայտություններով, սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքով տարված խուլիգանական դրդումներով մարմնական վնասվածքներ հասցնելու դիտավորությամբ հարձակվել է Ա.Իսրայելյանի վրա, որի ընթացքում իր մոտ եղած սուր կտրող-ծակող գործիքով երկու անգամ հարվածել է վերջինիս կրծքավանդակին, ձախ գոտկային շրջանին և դիտավորությամբ պատճառել կյանքի համար վտանգավոր առողջությանը ծանր վնաս (տե՛ս սույն որոշման 5.1.-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը Մ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերադրակել է 112-րդ հոդվածի 1-ին մասով և Մ.Հարությունյանի արարքում խուլիգանական դրդումների բացակայությունը հիմնավորել նրանով, որ արարքը սկսվել է տուժող Ա.Իսրայելյանի հարվածից հետո, ի պատասխան որի՝ ամբաստանյալ Մ.Հարությունյանն իր մոտ գտնվող սուր կտրող-ծակող գործիքով դիտավորությամբ երկու անգամ հարվածել է նրան, այսինքն՝ տուժողի գործողությունների արդյունքում ձևավորված վիրավորանքի դիմաց է ամբաստանյալը, վրեժ լուծելով, ցանկացել բավարարում ստանալ: Արդյունքում դատարանը եզրահանգել է, որ նախաքննական մարմինը ճիշտ չի գնահատել վիճաբանության առիթը, հանցագործության կատարման շարժառիթը և իրական դրդապատճառները՝ արարքի իրավական որակման հարցում հանգելով ակնհայտ սխալ եզրակացության (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վկա Մ.Իսրայելյանն իր ցուցմունքներում նշել է, որ իրեն և Ա.Մելիքսեթյանին մոտեցել է ավտոմեքենա, և վարորդի՝ Ա.Սարգսյանի կողքին նստած տղան ցինիկ տոնայնությամբ առաջարկել է նստել ավտոմեքենան և գնալ միասին գարեջուր խմելու, իսկ մերժում ստանալուց հետո հետապնդել է նրանց, և Ա.Մելիքսեթյանի որովայնի հատվածին դանակ պահելով՝ պահանջել է, որ վերջինս նստի ավտոմեքենան և նրա հետ գնա (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը):

Վկա Ա.Մելիքսեթյանի ցուցմունքների համաձայն՝ իրեն անձանոթ անձնավորությունն առաջարկել է ծանոթանալ, նստել ավտոմեքենան և գնալ միասին գարեջուր խմելու: Մերժում ստանալուց հետո վերջինս դանակի գործադրմամբ պահանջել է նստել մեքենան (տե՛ս սույն որոշման 6.2-րդ կետը):

Տուժող Ա.Իսրայելյանը դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ իր հայրը՝ Վ.Իսրայելյանը, մոտենալով և խոսելով ամբաստանյալի հետ, փորձել է նրան հանգստացնել, այդ ժամանակ ինքը նույնպես փորձել է նրան հանգստացնել, սակայն ամբաստանյալն իրեն ասել է՝ «դու ին-

չի ես եկել», հետո էլ հորը ասել է. «ինչի ես գրիզիտ լինում», այսինքն՝ ամբաստանյալը, հոր տարիքը չհարգելով, ճիշտ չի արտահայտվել, որի ժամանակ ինքն աջ ձեռքով խփել է նրան, որից մի քանի վայրկյան հետո էլ նա է իրեն երկու անգամ դանակով խփել (տե՛ս սույն որոշման 6.3.-րդ կետը):

Դատաքննության ժամանակ հրապարակված և հետագուոված վկա Վ.Իսրայելյանի նախաքննական ցուցմունքների համաձայն՝ Մ.Հարությունյանն ագրեսիվ, հեզմական տոնայնությամբ միջամտել է իր խոսակցությանը, հաշվի չառնելով տարիքային տարբերությունը, շատ վատ արտահայտություններ է արել, և տպավորություն է ստեղծել, որ ինքն ամենակարող է և ում հետ ինչպես ցանկանա, այնպես էլ կխոսի, ապա ասել է. «լավ եմ արել աղջիկ եմ խոսեցրել, բա աղջիկը խոսեցնելու համար է» (տե՛ս սույն որոշման 6.4.-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով նախաքննական մարմնի կողմից Մ.Հարությունյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպմանը և այդ համատեքստում մեջբերելով Վճարելի դատարանի՝ *Ա. Պասյանի* գործով թիվ ՏԳ/0115/01/09 որոշմամբ արտահայտված առանձին իրավական դիրքորոշումները, փաստել է, որ թեև քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ հիմնավորվել է, որ ամբաստանյալը տուժող Ա.Իսրայելյանին դանակով հարվածել է միայն այն բանից հետո, երբ վերջինս ձեռքով հարվածել է Մ.Հարությունյանի դեմքին, ինչից էլ վրդովված՝ ամբաստանյալը ծանր վնաս է պատճառել տուժողի առողջությանը, սակայն նշված էական հանգամանքն ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ձևակերպման մեջ նախաքննական մարմնի կողմից չի ներառվել, ինչն էլ հանգեցրել է նրա արարքի սխալ քրեաիրավական գնահատման, իսկ արդյունքում նաև՝ դատական սխալի:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ հիմնավոր է Առաջին ատյանի դատարանի այն հետևությունը, որ ամբաստանյալի գործողությունները՝ տուժող Ա.Իսրայելյանին երկու անգամ հարվածելը, եղել է ոչ թե «չնչին առիթով, խուլիզանական դրդումներով» և «սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքով տարված խուլիզանական դրդումներով», ինչպես գնահատել է նախաքննական մարմինը, այլ պայմանավորված է եղել տուժողի գործողություններով, հետևաբար տուժողի կողմից ամբաստանյալ Մ.Հարությունյանին հասցված հարվածին հաջորդող վերջինիս գործողությունները չեն կարող գնահատվել իբրև ակնհայտ անհամապատասխան, ոչ աղեկվատ ու ոչ համարժեք ռեակցիա (արձագանք) տուժողի գործողություններին և հիմք հանդիսանալ ամբաստանյալի արարքն՝ իբրև խուլիզանական դրդումներով կատարված որակելու համար (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չի

կարող համարվել ստորադաս դատարանների այն հետևությունը, որ **առաքըն սկսվել է տուժող Ա.Իսրայելյանի հարվածից հետո, ի պատասխան որի՝ ամբաստանյալ Մ.Հարությունյանը իր մոտ գտնվող սուր կտրող-ծակող գործիքով դիտավորությանը երկու անգամ հարվածել է նրան, այսինքն՝ տուժողի գործողությունների արդյունքում ձևավորված վիրավորանքի դիմաց է ամբաստանյալը, վրեժ լուծելով, ցանկացել բավարարում ստանալ** (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների նշյալ դիրքորոշումը վերջիններիս կողմից գործի հանգամանքներն իրենց ամբողջության մեջ չվերլուծելու, դրանք իրարից անջատ գնահատելու արդյունք է: Այլ կերպ՝ ստորադաս դատարանները չեն անդրադարձել, պատշաճ գնահատականի չեն արժանացրել հանցավորի՝ նախքան հանցանքի կատարումը դրսևորած վարքագիծը, հանցավորի և տուժողի գործողությունների հաջորդականությունը, ինչի արդյունքում հանգել են սխալ եզրակացության արարքի որակման հարցում:

16.1. Այսպես՝ ստորադաս դատարանները վերլուծության չեն ենթարկել այն փաստական տվյալները, որ Մ.Հարությունյանն ի սկզբանե, մինչ բուն հանցավոր արարքի կատարումը բացահայտ մարտահրավեր է նետել հասարակության և բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերին, փորձել է իրեն հակադրել շրջապատին և հասարակությանը, դրսևորել է ցինիկ, սանձարձակ ու անպարկեշտ վարքագիծ: Նշյալը դրսևորվել է նրանում, որ ամբաստանյալը նախ՝ առանց որևէ առիթի սկսել է **անպարկեշտ արտահայտություններ անել՝ ուղղված Ա.Մելիքսեթյանին, և առաջարկել նստել մեքենան ու միասին գնալ զարեջուր խմելու**, իսկ վերջինից մերժում ստանալով՝ իջել է ավտոմեքենայից, մոտեցել Ա.Մելիքսեթյանին և **ցանկություն հայտնել ծանոթանալու նրա հետ, որից հետո պահանջել է նստել ավտոմեքենան՝ իրենց հետ գնալու համար**, ինչին ի պատասխան կրկին մերժում է ստացել, որից հետո **դանակի գործադրմամբ պահանջել է նստել ավտոմեքենան**: Այնուհետև՝ մինչ Վ.Իսրայելյանի որդու՝ Ա.Իսրայելյանի կողմից Մ.Հարությունյանին ձեռքով մեկ անգամ հարվածելը, կատարվածի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար Վ.Իսրայելյանի այն հարցին, թե ինչու են անհանգստացրել աղջիկներին, Մ.Հարությունյանը պատասխանել է **«լավ եմ արել, աղջիկ եմ խոսեցրել, բա աղջիկը խոսեցնելու համար է»** խոսակցության ընթացքում իրեն թույլ տալով նաև այլ անպարկեշտ արտահայտություններ՝ **«ինչի ես գրիզիտ լինում»** (տե՛ս սույն որոշման 5.1.-րդ, 6.1.-6.4.-րդ կետերը):

Սույն փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տուժողի գործողությունը՝ ամբաստանյալին մեկ անգամ ձեռքով հարվածելու փաստը, եղել է ոչ թե վերջինիս կողմից Ա.Իսրայելյանի առողջությանը ծանր վնաս հասցնելու պատճառ, այլ «առիթ» է հանդիսացել է, որպեսզի ամբաստանյալն իր ի սկզբանե դրսևորած հակաօրինական և հակաբարոյական վարքագիծն արդեն հանցանքի կատարմամբ ավարտին հասցնի: Ա.Իսրայելյանի կողմից Մ.Հարություն-

յանին ձեռքով մեկ անգամ հարվածելը եղել է հենց վերջինիս դրսևորած սանձարձակ, անպարկեշտ և ցինիկ վարքագծի արդյունք: Հետևաբար, Մ.Հարությունյանի կողմից Ա.Իսրայելյանին սուր կտրող-ծակող գործիքով երկու անգամ հարվածելու և վերջինիս առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու հիմնական, գերակա շաժառիթը եղել է ոչ թե վրեժը, այլ խուլիգանական դրդումը:

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով նախաքննական մարմնի կողմից Մ.Հարությունյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպմանը և այդ համատեքստում մեջբերելով Վճռաբեկ դատարանի՝ *Ա.Պապյանի* գործով թիվ ՏԳ/0115/01/09 որոշմամբ արտահայտված առանձին իրավական դիրքորոշումները, փաստել է, որ *թեև քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ հիմնավորվել է, որ ամբաստանյալը տուժող Ա.Իսրայելյանին դանակով հարվածել է միայն այն բանից հետո, երբ վերջինս ձեռքով հարվածել է Մ.Հարությունյանի դեմքին, ինչից էլ վրդովված՝ ամբաստանյալը ծանր վնաս է պատճառել տուժողի առողջությանը, սակայն նշված էական հանգամանքն ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ձևակերպման մեջ նախաքննական մարմնի կողմից չի ներառվել, ինչն էլ հանգեցրել է նրա արարքի սխալ քրեախրավական գնահատման, իսկ արդյունքում նաև՝ դատական սխալի (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):*

Վերոգրյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ չնայած նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունվարի 26-ի որոշմամբ առաջադրված մեղադրանքում չի ներառվել այն փաստը, որ ամբաստանյալը տուժող Ա.Իսրայելյանին դանակով հարվածել է այն բանից հետո, երբ վերջինս ձեռքով հարվածել է Մ.Հարությունյանի դեմքին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը), սակայն այդ հանգամանքը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում չէր կարող որևէ կերպ ազդել արարքի քրեախրավական որակման վրա, ավելին՝ նշյալ փաստական հանգամանքն իր արտացոլումն էր ստացել մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասում (տե՛ս սույն որոշման 5.1.-րդ կետը): Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով և *Ա.Պապյանի* գործով փաստական հանգամանքները նույնական չեն, հետևաբար *Ա.Պապյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի չեն:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, չիրականացնելով գործի հանգամանքների ամբողջական վերլուծություն, իրենց եզրահանգումները կառուցել են՝ ելնելով Ա.Իսրայելյանի կողմից Մ.Հարությունյանին մեկ անգամ ձեռքով հարվածելու փաստից՝ առանց պատշաճ գնահատականի արժանեցնելու Մ.Հարությունյանի՝ մինչ բուն հանցավոր արարքի կատարումը դրսևորած վար-

քազիծը: Արդյունքում Մ.Հարությունյանի հանցավոր արարքի հիմքում ընկած հիմնական շարժառիթը մնացել է չբացահայտված և չգնահատված:

19. Վերոգրյալի պայմաններում Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Մ.Հարությունյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի ոչ թե 2-րդ մասի 9-րդ կետով, այլ 1-ին մասով նախատեսված արարք կատարված լինելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

20. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Մ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով մեղսագրված արարքը նույն հոդվածի 1-ին մասով վերադրակելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունը և վերջինիս կողմից կայացված դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի և նույն հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, ինչը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանելու Առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկելու նույն դատարան՝ նոր քննության:

21. Ինչ վերաբերում է ամբաստանյալ Մ.Հարությունյանի նկատմամբ մեղմ պատիժ նշանակված լինելու վերաբերյալ բողոքաբերի բարձրացրած փաստարկներին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա Վճարելի դատարանն արձանագրում է, որ դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումը վերացնելուց հետո:

Անդրադառնալով ամբաստանյալ Մ.Հարությունյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորմանը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Միեր Ազատի Հարությունյանի վերաբերյալ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 15-ի դատավճիռն օրինա-

կան ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Միեր Ազատի Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

23.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԲ-04/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ փաստաբան
դիմող

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ս.ԱՍՖԱՐՅԱՆԻ
Բ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի օգոստոսի 12-ի որոշման դեմ Բագրատ Նապոլեոնի Նալբանդյանի և Նարինե Ալեքսանդրի Նալբանդյանի լիազորած անձ, փաստաբան Ս.Սաֆարյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Մյուզաննա Սարգսյանի անհայտ կորելու կապակցությամբ ներկայացված հաղորդման հիման վրա ոստիկանության Վարդենիսի բաժնում 2004 թվականի հունիսի 8-ին հարուցվել է թիվ 31201004 քրեական գործը:

2004 թվականի հուլիսի 12-ին որոշումներ են կայացվել Բագրատ և Նարինե Նալբանդյաններին որպես մեղադրյալներ ներգրավելու մասին, և

նրանց մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով:

2004 թվականի օգոստոսի 31-ին Գեղարքունիքի մարզի դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը, և գործն ուղարկվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի փետրվարի 4-ի դատավճռով ամբաստանյալ Ն.Նալբանդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման՝ 12 (տասներկու) տարի ժամկետով: Նշանակված պատժին ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի հիման վրա մասնակիորեն գումարվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2004 թվականի փետրվարի 10-ի դատավճռով նշանակված 3 (երեք) տարի ժամկետով ազատազրկումը, և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 14 (տասնչորս) տարի ժամկետով:

Ամբաստանյալ Բ.Նալբանդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման՝ 9 (ինը) տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալները և նրանց շահերի պաշտպան Ս.Սաֆարյանը: ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2005 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ ներկայացված վերաքննիչ բողոքները թողել է առանց բավարարման, իսկ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի հուլիսի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել փաստաբան Ս.Սաֆարյանը, ամբաստանյալ Ն.Նալբանդյանը և տուժողի իրավահաջորդ Աղաբեկ Սարգսյանը: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի դատական ակտը թողնվել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքները՝ առանց բավարարման: Ս.Սաֆարյանի բողոքը թողնվել է առանց քննության:

5. Նարինե, Բագրատ և Արևիկ Նալբանդյանների զանգատների հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան կամ Դատարան) 2015 թվականի մարտի 31-ին *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով (զանգատներ թիվ 9935/06 և 23339/06) վճիռ է կայացրել, որով ճանաչել է դիմումատուների՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) երաշխավորված իրավունքների խախտման փաստը:

Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ 2015 թվականի մարտի 31-ի՝ *Նայբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ Բագրատ և Նարինե Նայբանդյանների լիազորած անձ, փաստաբան Ս.Սաֆարյանը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի օգոստոսի 12-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք է ներկայացրել:

Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով հարուցվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի օգոստոսի 12-ի որոշման վերանայման վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Բագրատ և Նարինե Նայբանդյաններին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *2004 թվականի մայիսի 30-ին՝ ժամը 18:30-19:00-ի սահմաններում, Վարդենիս քաղաքի Սայաթ-Նովա փողոցի թիվ 60 հասցեում գտնվող տան խոհանոցում Նարինե Նայբանդյանն իր դուստր Արևիկ Նայբանդյանի համադասարանցի, Վարդենիս քաղաքի անչափահաս բնակչուհի Սյուզաննա Սարգսյանի և իր դստեր անբարյացակամ փոխհարաբերությունների պատճառով կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել է Ս.Սարգսյանի հետ, որի ընթացքում, սեղանի վրայից վերցնելով «Ջերմուկ» տեսակի հանքային ջրի շիշը, որը կիսով չափ լիքն է եղել, դիտավորությամբ հարվածել է նրա քթի շրջանին՝ պատճառելով քթուկրի բեկորային կտրվածք, այնուհետև նույն շշով երկու-երեք անգամ հարվածել է Ս.Սարգսյանի գլխի տարբեր մասերին՝ պատճառելով փակ, բութ գանգուղեղային վնասվածք: Ստացված վնասվածքների հետևանքով Ս.Սարգսյանը գիտակցությունը կորցրել է և անգիտակից վիճակով ընկել հատակին:*

Տեղի ունեցածից և ստեղծված իրավիճակից Ն.Նայբանդյանը մի պահ կորցրել է գիտակցությունը: Այդ պահին խոհանոց է մտել վերջինիս ամուսին Բագրատ Նայբանդյանը և տեսնելով տեղի ունեցածը՝ ջուր է ցաննել կնոջ դեմքին, ուշքի բերել նրան և իմացել, որ կինն է շշով հարվածել Ս.Սարգսյանի դեմքին ու գլխին:

Այնուհետև, Բ.Նայբանդյանը կնոջ հորդորով գնացել է իրենց տանը կից օժանդակ կառույց, որտեղից մետաղյա հաղորդալար է բերել և դրանով մարմնի հետևում կապել է Ս.Սարգսյանի ձեռքերը, որպեսզի ավելորդ շարժումներ և փախչելու փորձ չկատարի, իսկ Ն.Նայբանդյանը շորի կտորով կապել է նրա բերանը, որպեսզի չգոռա և օգնություն չկանչի: Նշված գործողությունները կատարելու պահին Ս.Սարգսյանը թեև անգիտակից վիճակում է գտնվել, բայց կենդանի է եղել: Անգիտակից վիճակում

Ս.Սարգսյանին թողել են խոհանոցում, իրենք դուրս եկել այնտեղից և դուռը փակել՝ մտածելով, որ վերջինս ստացած վնասվածքներից դանդաղ կմահանա:

Շուրջ 5-6 ժամ անց՝ լույս մայիսի 31-ի գիշերը՝ ժամը 01:30-ի սահմաններում, Նարինե և Բագրատ Նալբանդյանները, մտածելով, որ Ս.Սարգսյանն ստացած վնասվածքներից արդեն մահացել է, երկուսով միասին նրա մարմինը խոհանոցից դուրս են բերել բակ, այնուհետև իրենց հողամասի միջով տարել մինչև հողամասի վերջը, դռնակով դուրս բերել փողոց և տարել, զցել իրենց պարսպից շուրջ 15-20 մետր հեռավորության վրա գտնվող Վարդենիս քաղաքի նախկին կենտրոնական ջեռուցման չգործող համակարգի մագուրի բետոնապատ հորը, որը շուրջ 1.5 մետր խորությամբ լցված է եղել ջրով, որտեղ էլ վերջինս մահացել է:

Կատարած հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով Ն.Նալբանդյանը պոլիէթիլենային տոպրակում եղած Ս.Սարգսյանի վերնաշապիկով մաքրել է խոհանոցում եղած արյունը և մյուս հետքերը: Վերնաշապիկը, ինչպես նաև Բ.Նալբանդյանի կողմից Ս.Սարգսյանի անդրավարտիքի հետևի գրպանից հանած չորս հազար դրամը տոպրակի հետ միասին այրել է իրենց տանը կից օժանդակ կառույցի ջրատաքացուցիչ վառարանում, իսկ գոյացած մոխիրը հավաքել, տարել լցրել է նույն հորի մեջ:

Այսպիսով, քթոսկրի բազմաբեկոր կոտրվածքներ և գանգուղեղային փակ, բութ վնասվածք պատճառած վիճակում Ս.Սարգսյանի ձեռքերը և բերանը կապելով և շուրջ 5-6 ժամ խոհանոցում պահելուց հետո կիսակենդանի վիճակում հորը զցելով՝ Ն.Նալբանդյանն իր ամուսնու՝ Բ.Նալբանդյանի հետ միասին, դիտավորությամբ, առանձին դաժանությամբ սպանել է Ս.Սարգսյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 199-202):

7. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է. «(...) Դատարանը, գնահատելով և վերլուծելով դատաբնության ընթացքում հետազոտված ապացույցները իրենց համակցությամբ և ներքին համոզմամբ, գտնում է, որ ձեռք բերված ապացույցները ավելի քան բավարար են գործով մեղադրական դատավճիռ կայացնելու համար և ապացուցված է համարում, որ ամբաստանյալները կատարել են արարք, որը համապատասխանում է ՀՀ քր. օր-ի 104 հոդ. 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերին, այն է՝ Նարինե և Բագրատ Նալբանդյանները այօրինաբար, դիտավորությամբ և առանձին դաժանությամբ, Սյուզաննա Սարգսյանին զրկել են կյանքից (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 325-331):

8. Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալներ Նարինե և Բագրատ Նալբանդյանների ՀՀ քր. օր. -ի 104-րդ հոդ. 2-րդ մասի 5-րդ, 7-րդ կետերով կատարած հանցավոր արարքը հիմնավորված է սույն և առաջին ատյանի դատավճռում շարադրված ապացույցներով, եզրահանգումներով, հետևություններով և արարքին տրվել է քրեաիրավական ճիշտ գնահատական (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 167-174):

8.1. Վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի հուլիսի 1-ի դատական նիստի արձանագրության համաձայն՝ «(...) Ն.Նալբանդյանը հայտնեց, որ իր շահերի պաշտպան Ս.Սաֆարյանը իրեն հանդիպել է մեկուսարանում, և պայմանավորվել են, որ նա դատաքննությանը չի ներկայանալու, որի կապակցությամբ ինքը այս պահից հրաժարվում է պաշտպանից և այլ պաշտպան չի ցանկանում, խնդրեց շարունակել և ավարտել գործի քննությունը:

Ամբաստանյալ Բագրատ Նալբանդյանը միացավ Նարինե Նալբանդյանի միջնորդությանը և նույնպես խնդրեց նիստը շարունակել փաստաբանի բացակայությամբ և որ ինքը նույնպես այլ պաշտպան ունենալ չի ցանկանում:

Նախագահողը հայտարարեց, որ նկատի ունենալով, որ ամբաստանյալները հայտարարել են այս փուլից պաշտպանից հրաժարվելու մասին, ուստի ընդունում է փաստը (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 56-57):

9. ՀՀ վճարելի դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշման համաձայն՝ «(...) [Վ]ճարելի բողոքներում նշված հիմքերով դատապարտյալ Նարինե Նալբանդյանի և տուժողի իրավահաջորդ Աղաբեկ Սարգսյանի նյութական և դատավարական իրավունքի խախտումներ թույլ չեն տրվել, այդ առումով վերաքննիչ դատարանի դատավճիռն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված: Վճարելի դատարանը գտնում է, որ բողոքներում բերված փաստարկները դատավճիռը բեկանելու հիմքեր չեն կարող հանդիսանալ, ուստի վճարելի բողոքները պետք է թողնել առանց բավարարման:

Ինչ վերաբերում է փաստաբան Սեդա Սաֆարյանի վճարելի բողոքին, ապա դատական քննության ընթացքում նրա հետ ունեցած համաձայնությունը լուծելուց և ամբաստանյալների կողմից նրանից հրաժարվելուց հետո նա դադարել է որպես պաշտպան մասնակցել քրեական գործով վարույթին, հետևաբար, նա չի դատվում այն սուբյեկտների շարքը, որոնք ՀՀ քր. դատ.օր-ի 404 հոդվածի 3-րդ մասի համաձայն իրավունք ունեն վճարելության կարգով բողոքարկել վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատավճիռը: Փաստորեն, վճարելի բողոք է բերել այն անձը, ով չունի այդ իրավունքը, ուստի ՀՀ քր.դատ.օր-ի 407 հոդվածի 3-րդ մասի համաձայն բողոքը պետք է թողնել առանց քննության (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 236):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

10. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերի պնդմամբ Եվրոպական դատարանի դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումները հիմք են ՀՀ վճարելի դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվակա-

նի օգոստոսի 12-ի որոշումը և ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ Եվրոպական դատարանը երեք դիմումատուների նկատմամբ ճանաչել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում, ինչը կասկածի տակ է դնում նախաքննության ընթացքում՝ 2004 թվականի հուլիսի 9-14-ն ընկած ժամանակահատվածում, ապացույցների ձեռքբերման աղբյուրների օրինականությունը: Նալբանդյանների մեղադրանքի հիմքում առանցքային և հիմնական դեր են ունեցել նրանց ինքնախոստովանական ցուցմունքները, որոնք, սակայն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ անթույլատրելի են և պետք է հանվեն ապացույցների շարքից:

Անդրադառնալով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ զուգակցված 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետի հետ, և 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումներին՝ բողոքաբերն ընդգծել է, որ ամբաստանյալների՝ պաշտպանից հրաժարումը եղել է ոչ թե անձանց կամքի ազատ դրսևորում, այլ կրել է հարկադրված բնույթ, քանի որ դատարանի կողմից չեն ձեռնարկվել անհրաժեշտ անվտանգության միջոցներ, անտեսվել են պաշտպանի կողմից դատարան չներկայանալու օբյեկտիվ և հարգելի պատճառների առկայությունը, ուստի թույլ է տրվել պաշտպանության իրավունքի խախտում: Ամբաստանյալների պաշտպանության իրավունքը խախտվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի կողմից պաշտպանի ներկայացրած բողոքն առանց քննության թողնելու արդյունքում, որը Եվրոպական դատարանի կողմից գնահատվել է որպես բողոքաբերների՝ դատարան դիմելու մատչելիության իրավունքի խախտում:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է հարուցել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի օգոստոսի 12-ի որոշման վերանայման վարույթ, բեկանել վերոնշյալ որոշումը, ինչպես նաև բեկանել Բագրատ և Նարինե Նալբանդյանների վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի փետրվարի 4-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի հուլիսի 2-ի դատավճիռները, գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել՝ կատարված հանցագործությանը նրանց մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ, կամ գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Եվրոպական դատարանի՝ Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով վճիռն արդյոք ՀՀ վճռաբեկ դատարանի

քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի օգոստոսի 12-ի որոշումը վերանայելու հիմք է:

12.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճարելի դատարանների դատական ակտերը՝ վճարելի դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(...)»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (*տե՛ս, mutatis mutandis, Արարատ Մուրադխանյանի գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՎԲ/01/13, Գրիշա Վիրաբյանի գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ/05/13, Ժիրայր Մեֆիլյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշումները*):

13. Այսպես՝ Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Նարինե Նալբանդյանի (Երկրորդ դիմումատու) և Արևիկ Նալբանդյանի (Երրորդ դիմումատու) նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութական բաղադրիչի խախտում, բոլոր երեք դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական բաղադրիչի խախտում: Եվրոպական դատարանը փաստել է նաև, որ Բագրատ Նալբանդյանի (Առա-

ջին դիմումատու) նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատարանի մատչելիության իրավունքի խախտում, Առաջին և Երկրորդ դիմումատուի նկատմամբ՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավունքների խախտումներ՝ զուգակցված 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետի հետ՝ այն առումով, որ Առաջին և Երկրորդ դիմումատուները զրկված են եղել արդյունավետ իրավաբանական օգնությունից:

14. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման կապակցությամբ Եվրոպական դատարանը, վերահաստատելով իր նախադեպային իրավունքում ձևավորած՝ խոշտանգումների բացարձակ արգելքի և Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ գործերով ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ իրավական դիրքորոշումները և դրանք կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ, նշել է, որ Երկրորդ և Երրորդ դիմումատուների ներկայացրած ապացույցները վկայում են քննարկվող ժամանակահատվածում նրանց մոտ մարմնական վնասվածքների առկայության մասին: Այսպես՝ ոստիկանության Վարդենիսի բաժնից «Արովյան» քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելուց անմիջապես հետո Երկրորդ դիմումատուն հետազոտվել է բժշկի կողմից, և նրա մոտ հայտնաբերվել են ոտքերի վնասվածքներ: Կառավարությունը չի կարողացել բացատրել, թե ինչպես է Երկրորդ դիմումատուի մոտ առաջացել նման լուրջ այտուցվածություն, որը հանգեցրել է արյունատար անոթների վնասվածքի և կապտուկների, իսկ այն փաստարկը, որ այտուցվածությունն առաջացել է Երկրորդ դիմումատուի արյան բարձր ճնշման հետևանքով, չի հիմնավորվել որևէ բժշկական կամ այլ ապացույցով: Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ Երկրորդ դիմումատուն ոստիկանության Վարդենիսի բաժնից ազատ է արձակվել ոտքերի բավականին լուրջ վնասվածքներով, ինչի կապակցությամբ Կառավարությունը որևէ արժանահավատ բացատրություն չի ներկայացրել:

Ինչ վերաբերում է 2004 թվականի հուլիսի 10-ին Երկրորդ դիմումատուի մասնակցությամբ անցկացված քննչական գործողության տեսագրությանը, ապա Եվրոպական դատարանը նշել է, որ այն ինքնին չի կարող դիտվել որպես բավարար ապացույց անազատության մեջ գտնվելու ընթացքում Երկրորդ դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունք չդրսևորելու վերաբերյալ՝ հատկապես, որ նրա մոտ հայտնաբերված վնասվածքները եղել են ոտքերի վրա և չէին կարող տեսանելի լինել տեսագրության մեջ: Եվրոպական դատարանը, անդրադառնալով 2004 թվականի հուլիսի 12-ի կալանքի նիստի ժամանակ Երկրորդ դիմումատուի կողմից տրված ցուցմունքներին, ընդգծել է, որ եթե ենթադրյալ վատ վերաբերմունքից տուժած անձը դրանից անմիջապես հետո որևէ բողոք չի ներկայացրել կամ, ինչպես սույն գործում, ժխտել է վատ վերաբերմունքի ենթարկված լինելու փաստը, ապա այն դեռևս չի կարող ծառայել որպես վատ վերաբերմունքի բացակայության մասին վկայող բավարար ապացույց, քանի որ տուժողի արած հայտարարությունների վրա կարող են լուրջ ազդե-

ցուքյուն ունենալ նման վատ վերաբերմունքի հետևանքով առաջացած սքրետը, տրավման և վախը, հատկապես, երբ անձինք շարունակում են մնալ անազատության մեջ:

Վերոշարադրյալի արդյունքում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Երկրորդ դիմումատուի նկատմամբ ոստիկանության Վարդենիսի բաժնում դրսևորված վատ վերաբերմունքը հասել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված դաժանության նվազագույն աստիճանի (տե՛ս - Նայբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 99-103-րդ կետերը):

14.1. Երրորդ դիմումատուի կապակցությամբ Եվրոպական դատարանը փաստել է, որ 2004 թվականի հուլիսի 16-ին կատարված հետազոտության ընթացքում նրա մոտ բազմաթիվ վնասվածքներ են արձանագրվել:

Եվրոպական դատարանն անընդունելի է համարել Կառավարության այն հայտարարությունը, որ «Արմենիա» բժշկական կենտրոնի բժշկական եզրակացությունը պատշաճ ապացույց չէ, քանի որ նրանում նշված չեն արձանագրված վնասվածքների պատճառները՝ շեշտելով, որ այդ փաստաթուղթը ներկայացվել է քրեական հետապնդման մարմիններին, ովքեր, սակայն, չեն վիճարկել դրա արժանահավատությունը կամ ճշգրտությունը, չեն հերքել այդ վնասվածքների և Երրորդ դիմումատուի՝ ոստիկանության Վարդենիսի բաժնում մնալու միջև հնարավոր կապը (տե՛ս Նայբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 104-105-րդ կետերը):

Ինչ վերաբերում է նրան, որ Երրորդ դիմումատուն հիվանդանոց է գնացել ոստիկանության բաժնից ազատվելուց միայն հինգ կամ վեց օր անց, Եվրոպական դատարանն ընդգծել է՝ «(...) Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ գործի քննության ժամանակ նա եղել է անչափահաս և ում ծնողները դեռևս կալանավորված են եղել: Դատարանը չի թերագնահատում այն չափազանց խոցելի իրավիճակը, որի մեջ հայտնվել էր երրորդ դիմումատուն, ինչպես նաև այն վախն ու տառապանքը, որ նա ամենայն հավանականությամբ վերապրել է գործի քննության ժամանակ, որի պատճառով էլ ազատ արձակվելուց անմիջապես հետո նա բողոքներ ներկայացնելու համար որևէ քայլ չի ձեռնարկել: Հետևաբար, և հաշվի առնելով այն փաստը, որ ուշացումը գործի հատուկ հանգամանքներում չի կարող դիտարկվել որպես ոչ խելամիտ ուշացում, Դատարանը չի ցանկանում որևէ մեծ կարևորություն տալ այս ուշացմանը, որն ամեն դեպքում չի կարող համարվել այնքան կարևոր, որ կասկածի տակ դնի երրորդ դիմումատուի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն ներկայացրած գանգատը (տե՛ս *mutatis mutandis*, Բալոդն ընդդեմ Հունգարիայի, թիվ 47940/99, § 49, 2004 թվականի հուլիսի 20)» (տե՛ս Նայբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 106-րդ կետը):

Բացի այդ, Եվրոպական դատարանը փաստել է, որ թե՛ ներպետական մակարդակում, թե՛ Դատարանում Երրորդ դիմումատուի՝ վատ վերաբերմունքի վերաբերյալ տված ցուցմունքները համապատասխանում են

բժշկական եզրակացությունում առկա վնասվածքների նկարագրությանը, իսկ Երկրորդ դիմումատուն՝ երրորդ դիմումատուի մայրը, ազատությունից զրկված լինելու ընթացքում վատ վերաբերմունքի է արժանացել մոտավորապես նույն ժամանակահատվածում, ենթադրաբար նույն մարդկանց կողմից և նույն քրեական գործի շրջանակներում իրականացված քննության ընթացքում (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 107-108-րդ կետերը):

Արդյունքում Եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) *Հաշվի առնելով երկրորդ և երրորդ դիմումատուների նկատմամբ վերաբերմունքի առանձնահատկությունները, խոստովանական ցուցմունքներ ստանալու համար նման վերաբերմունք ցուցաբերելու ուստիականների ակնհայտ մտադրությունները, այն փաստը, որ երկրորդ և երրորդ դիմումատուները մայր ու աղջիկ են և հետևաբար, երկուսն էլ հավանաբար ուժգին տառապել են մեկը մյուսի կրած ցավից, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ երրորդ դիմումատուն անչափահաս էր, Դատարանը գտնում է, որ խնդրո առարկա վերաբերմունքը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով կարող է որակվել որպես խոշտանգում» (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 110-րդ և 112-րդ կետերը):*

14.2. Ինչ վերաբերում է Առաջին դիմումատուին, ապա Եվրոպական դատարանը նշել է, որ գործի նյութերում չկա բժշկական բնույթի որևէ ապացույց, որը թույլ կտար եզրակացնել, որ դիմումատուն ենթարկվել էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջների հետ անհամատեղելի վերաբերմունքի (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 111-րդ կետը):

14.3. Եվրոպական դատարանը եզրակացրել է նաև, որ իշխանությունների կողմից վատ վերաբերմունքի մասին դիմումատուների պնդումների առնչությամբ արդյունավետ և պատշաճ քննություն չի իրականացվել, ուստի բոլոր երեք դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 128-130-րդ կետերը):

15. Եվրոպական դատարանն արձանագրել է Առաջին և Երկրորդ դիմումատուների՝ արդյունավետ իրավաբանական օգնությունից զրկված լինելու փաստն այն հանգամանքով պայմանավորված, որ դատարանում դատավարության մասնակիցների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ վարույթն իրականացնող մարմինների կողմից անհրաժեշտ միջոցառումներ չեն ձեռնարկվել: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը նշել է. «(...) *[ԵՎ Առաջին ատյանի], և՛ վերաքննիչ դատարանների նիստերը, ըստ երևույթին, անցկացվել են առաջին և երկրորդ դիմումատուների, նրանց ընտանիքի անդամների և փաստաբանների նկատմամբ անընդհատ սպառնալիքների, հայիոյանքների և ֆիզիկական բնույթի ոտնձգությունների մթնոլորտում: Պարզվում է, որ բազմաթիվ առիթներով ծեծկռտուքներ են եղել, կամ փաստաբանները ֆիզիկական վնասվածքներ են ստացել: Իրավիճակն այնքան վատ է եղել, որ փաստաբան-*

ները ստիպված են եղել չներկայանալ դատական նիստերին՝ վախենալով իրենց անվտանգության համար, և ներկայացրել են բազմաթիվ բողոքներ, այդ թվում՝ մեկը ռատիկանությանը: *Դատարանը կասկած չունի, որ դատարանում նման իրավիճակը պետք է որ բացասաբար ազդեր փաստաբանների ուշադրության կենտրոնացման վրա և նրանց թույլ չտար պատշաճ ձևով կատարել իրենց գործառնությունները: Այն պետք է որ վախի զգացողություններ առաջացրած լիներ և, հնարավոր է, բացասաբար ազդած լիներ դատարանում փաստաբանների վարքագծի, ինչպես նաև գործի հետ կապված ընդհանուր աշխատանքների վրա: Ի վերջո Դատարանը նշում է, որ այս իրավիճակը շարունակվել է ամբողջ դատավարության ընթացքում՝ առաջին և երկրորդ ատյաններում, որոնք կոչված են եղել հրապարակային դատական նիստի ժամանակ պարզել փաստերի և իրավունքի հետ կապված հարցերն ու կայացնել դատավճիռ (...)*» (տե՛ս Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 143-րդ կետը):

Եվրոպական դատարանը համոզիչ չի համարել Կառավարության փաստարկն այն մասին, որ փաստաբանների անվտանգությունն ապահովելու համար ձեռնարկվել էին համապատասխան միջոցներ՝ ընդգծելով, որ երբեք չի նշվել, ինչպես նաև գործում չի եղել որևէ ապացույց առ այն, որ ձեռնարկվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածում թվարկված պաշտպանության միջոցներից որևէ մեկը: Ի հակադրություն Կառավարության դիրքորոշման՝ Եվրոպական դատարանը շեշտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածը թույլատրում է վարույթն իրականացնող մարմիններին սեփական նախաձեռնությամբ ձեռնարկելու պաշտպանության միջոցներ, ինչը, ըստ երևույթին, չի արվել:

Արդյունքում արձանագրվել է, որ դատական նիստերի անցկացման ձևը խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի (գ) ենթակետով սահմանված երաշխիքները (տե՛ս Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 141-142-րդ, 144-րդ կետերը):

16. Առաջին դիմումատուի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման կապակցությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ թեև բողոքը պատշաճ լիազորված անձի կողմից դատարան ներկայացնելու պահանջն ինքնին չի խախտում դատարանի մատչելիության իրավունքը, այնուամենայնիվ, կոնկրետ դեպքում Վճարելի դատարանը, Առաջին դիմումատուի փաստաբանի ներկայացրած վճարելի բողոքը քննության չառնելով, հաշվի չի առել, որ վերջինիս կողմից փաստաբանի ծառայություններից հրաժարվելու հանգամանքը եղել է շատ անորոշ:

Մասնավորապես, Եվրոպական դատարանը նախ և առաջ ընդգծել է այն փաստը, որ 2005 թվականի հուլիսի 8-ին փաստաբանն այցելել է քրեակատարողական հիմնարկում գտնվող Երկրորդ դիմումատուին՝ ըստ երևույթին պաշտպանի կարգավիճակով, ինչից հետո մի քանի օր անց բողոք է ներկայացրել: Եվրոպական դատարանը զարմանալի է համարել այն, որ Երկրորդ դիմումատուն, ով միայն մի քանի օր առաջ ենթադրա-

բար հրաժարվել էր իր փաստաբանի ծառայություններից, կհանդիպեր այդ փաստաբանի հետ, և որը կհանգեցներ վերջինիս կողմից բողոքը ներկայացնելուն: Ավելին՝ զուգահեռ դատավարություններում այդ փաստաբանը շարունակել է ներկայացնել դիմումատուներին (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 146-147-րդ կետերը):

Եվրոպական դատարանն առավել կարևորել է Առաջին և Երկրորդ դիմումատուների կողմից փաստաբանական ծառայություններից հրաժարվելու համապատասխան հանգամանքների գնահատումը՝ նշելով, որ «(...) *Կոնվենցիայով երաշխավորված իրավունքից թույլատրելիության սահմաններում հրաժարվելը, պետք է հստակ հիմնավորվի և պետք է իրագործվի այնպիսի նվազագույն երաշխիքների պահպանմամբ, որոնք կհամապատասխանեն դրա կարևորությանը (...): Դատարանն արդեն հաստատել է, որ մտավորապես տասն ամիս տևող դատավարության ամբողջ ընթացքում դատական նիստերն անցկացվել են շարունակական վախի և դիմումատուներին ու իրենց փաստաբաններին ուղղված հայիոյանքների և ֆիզիկական բնույթի ոտնձգության մթնոլորտում: 2005 թվականի հուլիսի 1-ի դատական նիստին նախորդող նիստերը աչքի են ընկել հատուկ բռնությամբ, այդ թվում՝ փաստաբան Ս.-ի նկատմամբ ենթադրյալ ֆիզիկական հարձակմամբ, որի հետևանքով փաստաբանը հրաժարվել է ներկայանալ, եթե դատարանի դահլիճում չապահովվի անվտանգությունը: Դատարանը լուրջ կասկածներ ունի, արդյոք մեան հանգամանքներում փաստաբանի ծառայություններից հրաժարվելու որոշումը կարող է իսկապես համարվել կամավոր և անվերապահ, ինչպես նաև պայմանավորված լինել առաջին և երկրորդ դիմումատուների ազատ՝ առանց որևէ արտաքին ազդեցությունների, կամքի դրսևորմամբ (...)*» (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 148-րդ կետը):

Վերոշարադրյալի հիման վրա Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Վճռաբեկ դատարանը հիմնականում սահմանափակվել է 2005 թվականի հուլիսի 1-ի դատական նիստի արձանագրությանը հղում կատարելով և մանրամասն չի ուսումնասիրել համապատասխան հանգամանքները, ինչի արդյունքում անհամաչափորեն սահմանափակվել է անձի՝ դատարան դիմելու իրավունքը (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 149-րդ կետը):

17. Հիմք ընդունելով *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված՝ դիմումատուների՝ Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված համապատասխան իրավունքների խախտման փաստը և ղեկավարվելով Կոնվենցիոն պահանջներով ու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի օգոստոսի 12-ի որոշումը վերանայելու հիմք է:

18. Այսպես՝ Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտում արձանագրվելու դեպքում պետությունները Նախարարների կոմիտեի հսկողությամբ ազատ են Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սահմանված իրենց պարտավորությունների կատարումն ապահովող այնպիսի ընդհանուր և (կամ) անհրաժեշտության դեպքում՝ անհատական միջոցների ընտրության հարցում, որոնք վերջ կտան Դատարանի արձանագրած խախտումները և հնարավորինս կշտկեն դրանց հետևանքները (տե՛ս Scozzari and Giunta v. Italy գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250): Սակայն որոշ դեպքերում Եվրոպական դատարանը նպատակահարմար է գտել մատնանշել կոնկրետ միջոցառումների տեսակները, որոնք ամենապատշաճը կլինեն մինչև խախտումն առկա իրավիճակի վերականգնումը («*restitutio in integrum*») հնարավորինս ապահովելու համար (տե՛ս, *Assanidze v. Georgia* [GC], գանգատ թիվ 71503/01, կետ 202, *Broniowski v. Poland* [GC], գանգատ թիվ 31443/96, կետ 194): Միևնույն ժամանակ, եթե «*restitutio in integrum*»-ը գործնականում հնարավոր չէ ապահովել, ապա պատասխանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (տե՛ս *Seleuk and Asker v. Turkey* գործով Եվրոպական դատարանի 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125):

Հաշվի առնելով Եվրոպական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը *Տ.Սեֆիլյանի* գործով որոշմամբ արձանագրել է. «(...) Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պետություններն ունեն հետևյալ պարտավորությունները.

1. վճարել նշանակված փոխհատուցումը,

2. անհրաժեշտության դեպքում հոգուտ դիմումատուի ձեռնարկել անհատական միջոցառումներ, այն է՝

- դադարեցնել Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտումը կամ դրա հետևանքների ներգործությունը,

- հնարավորինս վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (*restitutio in integrum*), իսկ դրա անհնարինության դեպքում Դատարանի վճռի մեջ տեղ գտած եզրակացությունների հետ համատեղելի այլ միջոցներով ապահովել իր ստանձնած պարտավորությունների կատարումը,

3. ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ կանխելու համար նմանատիպ խախտումներն ապագայում (...)» (տե՛ս Ժիրայր Սեֆիլյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 24-րդ կետը):

19. Այսպիսով, Կոնվենցիայի խախտում արձանագրվելու դեպքում պետությունն արդարացի փոխհատուցում տրամադրելուց զատ պարտավորվում է հնարավորության դեպքում ձեռնարկել որոշակի անհատական միջոցառումներ, որոնք հնարավորինս կվերականգնեն մինչև խախտումը եղած իրավիճակը: Այլ կերպ՝ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշ-

վի առնել կոնկրետ գործի հանգամանքները, խախտման բնույթը, գործի ելքի վրա ունեցած ազդեցությունը, ինչպես նաև «*restitutio in integrum*»-ն ապահովելու հնարավորությունը: Եթե վերոնշյալ հանգամանքների գնահատումը վկայում է, որ գործի վերաբացման արդյունքում հնարավոր է վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը, ապա վարույթի նորոգում պետք է տեղի ունենա:

Սույն դիրքորոշումը բխում է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին 2000 թվականի հունվարի 19-ի հանձնարարականի դրույթներից, ըստ որի՝ գործի վերաքննությունը կամ դատաքննության վերաբացումը **բացառիկ դեպքերում** հանդես է գալիս որպես ամենապատշաճ, եթե ոչ միակ միջոցը՝ հասնելու «*restitutio in integrum*»-ին, եթե նյութական կամ դատավարական իրավունքի խախտումն **իր բնույթով** այնպիսին է, որ լուրջ կասկած է հարուցում ներպետական մարմիններում բողոքարկման առարկա **վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ**, և դիմումատուն **շարունակում է կրել խնդրո առարկա ներպետական որոշման քացասական հետևանքները**, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ (*տե՛ս, mutatis mutandis, Տիրայր Սեֆիլյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 27-րդ կետը*):

20. Հաշվի առնելով «Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի» վճռով Եվրոպական դատարանի արտահայտած և սույն որոշման 13-16-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև գնահատելով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումների բնույթը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ մինչև խախտումը եղած իրավիճակի վերականգնման ամենապատշաճ միջոցը վարույթի վերաբացումն ու արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ գործի նոր քննության իրականացումն է:

20.1. Հետևաբար, Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքարկման առարկա հանդիսացող՝ ՀՀ վճարելի դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի օգոստոսի 12-ի որոշման վերանայման արդյունքում Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի փետրվարի 4-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի հուլիսի 2-ի դատավճիռները պետք է բեկանել և գործն ուղարկել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ նոր դատաքննության ընթացքում դատարանը, վերացնելով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն ի-

րենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բագրատ Նապոլեոնի Նալբանդյանի և Նարինե Ալեքսանդրի Նալբանդյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի օգոստոսի 12-ի որոշումը վերանայել:

2. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի փետրվարի 4-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի հուլիսի 2-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Նարինե Նալբանդյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

24.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԲ-06/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ փաստաբան
դիմողներ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ս.ՍԱՖԱՐՅԱՆԻ
Բ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ
Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշման դեմ Բագրատ Նապոլեոնի Նալբանդյանի, Արևիկ Բագրատի Նալբանդյանի և Նարինե Ալեքսանդրի Նալբանդյանի լիազորած անձ, փաստաբան Ս.Սաֆարյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Գեղարքունիքի մարզի դատախազի ավագ օգնական Յու.Իսկոյանի՝ 2004 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ Նարինե և Արևիկ Նալբանդյանների նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2005 թվականի մարտի 25-ի որոշմամբ Նարինե, Բագրատ, Արևիկ Նալբանդյանների և պաշտպան Ս.Սաֆարյանի բողոքը թողել է առանց քննության:

2. ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2005 թվականի մայիսի 11-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի մարտի 25-ի որոշումը թողել է անփոփոխ, այդ մասով վերաքննիչ բողոքները՝ առանց բավարարման, իսկ Գեղարքունիքի մարզի դատախազության 2004 թվականի օգոստոսի 31-ի որոշման դեմ վերաքննիչ բողոքները՝ առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

Վճարելի դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի մայիսի 11-ի որոշումը բեկանվել է, և նյութերն ուղարկվել են նույն դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ դատարանը 2005 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ Ա.Նալբանդյանի և պաշտպան Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի մարտի 25-ի որոշումը՝ Նարինե, Բագրատ և Արևիկ Նալբանդյանների և պաշտպան Ս.Սաֆարյանի բողոքն առանց քննության թողնելու մասին՝ բեկանել: Գեղարքունիքի մարզի դատախազության՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2004 թվականի օգոստոսի 31-ի որոշումը հիշյալ անձանց կողմից բողոքարկելու բաց թողնված ժամկետը համարել է հարգելի և իրավունք վերապահել 2004 թվականի օգոստոսի 31-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված կարգով բողոքարկելու:

Վերաքննիչ դատարանը 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ պաշտպան Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց բավարարման՝ հաստատելով Գեղարքունիքի մարզի դատախազի ավագ օգնական Յու.Իսկոյանի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2004 թվականի օգոստոսի 31-ի որոշումը:

3. Նարինե, Բագրատ և Արևիկ Նալբանդյանների գանգատների հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան կամ Դատարան) 2015 թվականի մարտի 31-ին *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատներ թիվ 9935/06 և 23339/06) վճիռ է կայացրել, որով ճանաչել է դիմումատուների՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) երաշխավորված իրավունքների խախտման փաստը:

Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ 2015 թվականի մարտի 31-ի՝ *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների լիազորած անձ, փաստաբան Ս.Սաֆարյանը Վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նո-

յնների 10-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք է ներկայացրել:

4. Փաստաբան Ս.Սաֆարյանի վճարելի բողոքի հիման վրա թիվ ՎԲ-06/15 նյութերը (նախկինում՝ թիվ ԲԳՀ-62(բ)05) վճարելի դատարան է ստացվել 2016 թվականի հունվարի 27-ին:

Վճարելի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով հարուցվել է վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշման վերանայման վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2004 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ արձանագրվել է. «(...) Արևիկ և Նարինե Նալբանդյաններին ծեծի ենթարկելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ դիմումներում նշված փաստերը հերքվել են:

Շարադրված հանգամանքները հիմնավորվել են մարզի դատախազի տեղակալ Ֆեդրիկ Բաղդասարյանի, դատախազի օգնական Վարդան Հարությունյանի, դատախազության քննիչ Գագիկ Հովսեփյանի, ոստիկանության Վարդենիսի բաժնի պետ Վիկտոր Հակոբյանի, նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Սերգո Մանուկյանի, նույն բաժանմունքի օպեր-լիազորներ Յուրիկ Մուրադյանի, Կարեն Մելիքյանի և ՉՊՎ-ի պետ Վանիկ Ալեքսանյանի բացատրություններով, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի 30.08.04թ. տեղեկանքով այն մասին, որ Նարինե Նալբանդյանը «Աբովյան» ԲԿՀ-ի կալանավորված անձանց պահելու վայր մուտք գործելու օրը (14.07.04թ.) ենթարկվել է բժշկական զննման և զանգատվել է հաճախակի զարկերակային ճնշման բարձրությունից, ոտքերի ցավերից, ոտնաթաթերի այտուցներից: Ոտնաթաթերի վրայի կապտուկները առաջացել են պատռված մազանոթների պատճառով առաջացած այտուցների հետևանքով (...)» (տե՛ս նյութեր, թերթ 12):

6. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է՝ «(...) ՀՀ քր. դատ. օր-ի 185 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քրեական գործի հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին կամ վերաքննիչ դատարան: Հետևաբար մեղադրյալներ Նարինե և Բագրատ Նալբանդյանների, վկա Արևիկ Նալբանդյանի և պաշտպան Սեդա Սաֆարյանի բողոքը պետք է թողնել առանց քննության, քանի որ նշված հարցի վերաբերյալ կայացվել է որոշում, որն էլ կարող է բողոքարկվել միայն վերադաս դատախազին կամ վերաքննիչ դատարան (...)» (տե՛ս նյութեր, թերթ 15):

7. Վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշման համաձայն՝ «(...) Նախաքննական մարմինը, պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, կայացրել է օրինական և հիմնավորված որոշում:

Արևիկ և Նարինե Նալբանդյաններին ծեծի ենթարկելու կամ նրանց նկատմամբ այլ կարգի բռնություն գործադրելու վերաբերյալ դիմումներում նշված փաստերը հերքվել են Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Ֆեդրիկ Բաղդասարյանի, դատախազի օգնական Վարդան Հարությունյանի, դատախազության քննիչ Գագիկ Հովսեփյանի, ոստիկանության Վարդենիսի բաժնի պետ Վիկտոր Հակոբյանի, նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Սերգո Մանուկյանի, նույն բաժանմունքի օպեր-լիազորներ Յուրիկ Մուրադյանի, Կարեն Մելիքյանի և ԶՊՎ-ի պետ Վանիկ Ալեքսանյանի բացատրություններով:

Նյութերում առկա է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կողմից 30.08.04թ. տեղեկանքը, ըստ որի Նարինե Նալբանդյանը «Աբովյան» ԲԿՀ-ի կալանավորված անձանց պահելու վայր մուտք գործելու օրը՝ 14.07.04թ., ենթարկվել է բժշկական զննման և զանգատվել է հաճախակի զարկերակային ճնշման բարձրությունից, ոտքերի ցավերից, ոտնաթաթերի այտուցներից: Ոտնաթաթերի վրայի կապտուկները առաջացել են պատռված մազանոթների պատճառով առաջացած այտուցների հետևանքով (...)» (տե՛ս նյութեր, թերթեր 6-7):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով վճիռը՝ բողոքաբերն ընդգծել է, որ Արևիկ, Նարինե և Բագրատ Նալբանդյանների նկատմամբ թույլ են տրվել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական և ընթացակարգային խախտումներ, իրականացված քննությունը գնահատվել է անարդյունավետ, ուստի անհրաժեշտ է հարուցել դատական ակտի վերանայման վարույթ: Մասնավորապես, վերանայման է ենթակա Վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը, որով հաստատվել է Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Յու.Իսկոյանի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

Բողոքի հեղինակը նշել է, որ Բագրատ և Նարինե Նալբանդյանների մեղադրանքի հիմքում դրվել են նրանց նկատմամբ բռնության կիրառման արդյունքում ստացված ինքնախոստովանական ցուցմունքները: Բռնության կիրառումը վերջիններիս համար առաջացրել է ծանր հետևանքներ, հետևաբար ներպետական իրավասու մարմինները պարտավոր են իրականացնել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված արդյունավետ քննություն:

Բողոքաբերը շեշտել է, որ Եվրոպական դատարանը քննարկվող գործով արձանագրել է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության հատկանիշներ ունեցող հանգամանքներ, որոնց պետք է նոր քննությամբ քրեախրավական գնահատական տրվի: Հետևաբար, ըստ բողոք բերած անձի՝ պետք է վերանայման վարույթ հարուցվի և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը հաստատելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը բեկանվի:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է հարուցել դատական ակտի վերանայման վարույթ, բեկանել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը և գործն ուղարկել նախաքննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Եվրոպական դատարանի՝ *Նայքանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռն արդյոք ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը վերանայելու հիմք է:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճարելի դատարանների դատական ակտերը՝ վճարելի դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(...)»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (*տե՛ս, mutatis mutandis, Արարատ Մուրադխանյանի գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՎԲ/01/13, Գրիշա Վիրաբյանի գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ/05/13, Ժիրայր Սեֆիլյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշումները*):

12. Այսպես՝ Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Նարինե Նալբանդյանի (Երկրորդ դիմումատու) և Արևիկ Նալբանդյանի (Երրորդ դիմումատու) նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութական բաղադրիչի խախտում, մինչդեռ Բագրատ Նալբանդյանի (Առաջին դիմումատու) նկատմամբ նման խախտում տեղի չի ունեցել, և բոլոր երեք դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական բաղադրիչի խախտում:

I. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական խախտում.

13. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման կապակցությամբ Եվրոպական դատարանը վերահաստատել է իր նախադեպային իրավունքում ձևավորած կայուն իրավական դիրքորոշումն առ այն, որ «(...) 3-րդ - հոդվածը հանդիսանում է ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնարար արժեքներից մեկը: Նույնիսկ ամենաբարդ իրավիճակներում, ինչպես օրինակ՝ ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում, Կոնվենցիայով բացարձակ իմաստով արգելվում են խոշտանգումները և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ տուժողի վարքագծից (...): 3-րդ հոդվածով որևէ բացառություն չի նախատեսվում, և Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ - կետի համաձայն՝ չի թույլատրվում որևէ շեղում կատարել այդ պայմանից, նույնիսկ բնակչության կյանքին սպառնացող արտակարգ դրության դեպքում (...):

(...) Երբ Դատարանը գնահատում է 3-րդ հոդվածով նախատեսված խախտման մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ ապացույցները, այն գլխավորապես կիրառում է ապացուցման «ողջամիտ կասկածից դուրս» չափանիշը: Այնուամենայնիվ, նման ապացույցը կարող է բխել այն հանգամանքից, որ առկա են բավականաչափ ծանրակշիռ, հստակ և համապատասխանող հետևություններ կամ փաստի առկայության մասին վկայող նման անհերքելի կանխավարկածներ (...):

(...) Եթե պետական մարմիններն ամբողջությամբ կամ մեծամասամբ ծանոթ են խնդրահարույց իրադարձություններին, ինչպես օրինակ իրենց վերահսկողության տակ գտնվող ազատությունից զրկված անձանց

դեպքում, ապա ազատությունից զրկված լինելու ընթացքում վնասվածքների առաջացման փաստի մասին կծագեն հիմնավոր կանխավարկածներ: Իսկապես, ապացուցման բեռը, այն է՝ տալ բավարար և համոզիչ բացատրություններ, կրում են իշխանությունները (...): Նույն կերպ, երբ անհատին առողջ վիճակում տանում են ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայր, իսկ ազատվելիս նրա մոտ հայտնաբերվում են վնասվածքներ, ապա պետությունը պարտավորվում է վնասվածքների առաջացման մասին արժանահավատ բացատրություններ տալ (...): Այսպես, խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի կասկածները փարատվում են հոգուտ դիմումատուի, և այս կապակցությամբ հարց կարող է բարձրացվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն (...):» (տե՛ս Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 95-րդ, 97-98-րդ կետերը):

13.1. Վերոշարադրյալ դրույթները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Եվրոպական դատարանը նշել է, որ Երկրորդ և Երրորդ դիմումատուների ներկայացրած ապացույցները վկայում են քննարկվող ժամանակահատվածում նրանց մոտ մարմնական վնասվածքների առկայության մասին: Այսպես՝ ոստիկանության Վարդենիսի բաժնից «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելուց անմիջապես հետո Երկրորդ դիմումատուն հետազոտվել է բժշկի կողմից, և նրա մոտ հայտնաբերվել են ոտքերի վնասվածքներ: Կառավարությունը չի կարողացել բացատրել, թե ինչպես է Երկրորդ դիմումատուի մոտ առաջացել նման լուրջ այտուցվածություն, որը հանգեցրել է արյունատար անոթների վնասվածքի և կապտուկների, իսկ այն փաստարկը, որ այտուցվածությունն առաջացել է Երկրորդ դիմումատուի արյան բարձր ճնշման հետևանքով, չի հիմնավորվել որևէ բժշկական կամ այլ ապացույցով: Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ Երկրորդ դիմումատուն ոստիկանության Վարդենիսի բաժնից ազատ է արձակվել ոտքերի բավականին լուրջ վնասվածքներով, ինչի կապակցությամբ Կառավարությունը որևէ արժանահավատ բացատրություն չի ներկայացրել:

Ինչ վերաբերում է 2004 թվականի հուլիսի 10-ին Երկրորդ դիմումատուի մասնակցությամբ անցկացված քննչական գործողության տեսագրությանը, ապա Եվրոպական դատարանը նշել է, որ այն ինքնին չի կարող դիտվել որպես բավարար ապացույց անազատության մեջ գտնվելու ընթացքում Երկրորդ դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունք չդրսևորելու վերաբերյալ՝ հատկապես, որ նրա մոտ հայտնաբերված վնասվածքները եղել են ոտքերի վրա և չէին կարող տեսանելի լինել տեսագրության մեջ: Եվրոպական դատարանը, անդրադառնալով 2004 թվականի հուլիսի 12-ի կալանքի նիստի ժամանակ Երկրորդ դիմումատուի կողմից տրված ցուցմունքներին, ընդգծել է, որ եթե ենթադրյալ վատ վերաբերմունքից տուժած անձը դրանից անմիջապես հետո որևէ բողոք չի ներկայացրել կամ, ինչպես սույն գործում, ժխտել է վատ վերաբերմունքի ենթարկված լինելու փաստը, ապա այն դեռևս չի կարող ծառայել որպես վատ վերաբերմունքի բացակայության մասին վկայող բավարար ապացույց, քա-

նի որ տուժողի արած հայտարարությունների վրա կարող են լուրջ ազդեցություն ունենալ նման վատ վերաբերմունքի հետևանքով առաջացած սթրեսը, տրավման և վախը, հատկապես, երբ անձինք շարունակում են մնալ անազատության մեջ:

Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Երկրորդ դիմումատուի նկատմամբ ոստիկանության Վարդենիսի բաժնում դրսևորված վատ վերաբերմունքը հասել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված դաժանության նվազագույն աստիճանի (տե՛ս *Նայբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 99-103-րդ կետերը):

13.2. Երրորդ դիմումատուի կապակցությամբ Եվրոպական դատարանը փաստել է, որ 2004 թվականի հուլիսի 16-ին կատարված հետազոտության ընթացքում նրա մոտ բազմաթիվ վնասվածքներ են արձանագրվել:

Եվրոպական դատարանն անընդունելի է համարել Կառավարության այն հայտարարությունը, որ «Արմենիա» բժշկական կենտրոնի բժշկական եզրակացությունը պատշաճ ապացույց չէ, քանի որ նրանում նշված չեն արձանագրված վնասվածքների պատճառները՝ շեշտելով, որ այդ փաստաթուղթը ներկայացվել է քրեական հետապնդման մարմիններին, ովքեր, սակայն, չեն վիճարկել դրա արժանահավատությունը կամ ճշգրտությունը, չեն հերքել այդ վնասվածքների և Երրորդ դիմումատուի՝ ոստիկանության Վարդենիսի բաժնում մնալու միջև հնարավոր կապը (տե՛ս *Նայբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 104-105-րդ կետերը):

Ինչ վերաբերում է նրան, որ Երրորդ դիմումատուն հիվանդանոց է գնացել ոստիկանության բաժնից ազատվելուց միայն հինգ կամ վեց օր անց, Եվրոպական դատարանն ընդգծել է. «(...) *Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ գործի քննության ժամանակ նա եղել է անչափահաս և ում ծնողները դեռևս կալանավորված են եղել: Դատարանը չի թերագնահատում այն չափազանց խոցելի իրավիճակը, որի մեջ հայտնվել էր երրորդ դիմումատուն, ինչպես նաև այն վախն ու տառապանքը, որ նա ամենայն հավանականությամբ վերապրել է գործի քննության ժամանակ, որի պատճառով էլ ազատ արձակվելուց անմիջապես հետո նա բողոքներ ներկայացնելու համար որևէ քայլ չի ձեռնարկել: Հետևաբար, և հաշվի առնելով այն փաստը, որ ուշացումը գործի հատուկ հանգամանքներում չի կարող դիտարկվել որպես ոչ խելամիտ ուշացում, Դատարանը չի ցանկանում որևէ մեծ կարևորություն տալ այս ուշացմանը, որն ամեն դեպքում չի կարող համարվել այնքան կարևոր, որ կասկածի տակ դնի երրորդ դիմումատուի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն ներկայացրած գանգատը (...)*» (տե՛ս *Նայբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 106-րդ կետը):

Բացի այդ, Եվրոպական դատարանը փաստել է, որ թե՛ ներպետական մակարդակում, թե՛ Դատարանում Երրորդ դիմումատուի՝ վատ վերաբերմունքի վերաբերյալ տված ցուցմունքները համապատասխանում են

բժշկական եզրակացությունում առկա վնասվածքների նկարագրությանը, իսկ Երկրորդ դիմումատուն՝ երրորդ դիմումատուի մայրը, ազատությունից զրկված լինելու ընթացքում վատ վերաբերմունքի է արժանացել մոտավորապես նույն ժամանակահատվածում, ենթադրաբար նույն մարդկանց կողմից և նույն քրեական գործի շրջանակներում իրականացված քննության ընթացքում (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 107-108-րդ կետերը):

Արդյունքում Եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) Հաշվի առնելով երկրորդ և երրորդ դիմումատուների նկատմամբ վերաբերմունքի առանձնահատկությունները, խոստովանական ցուցմունքներ ստանալու համար նման վերաբերմունք ցուցաբերելու ուստիկանների ակնհայտ մտադրությունները, այն փաստը, որ երկրորդ և երրորդ դիմումատուները մայր ու աղջիկ են և հետևաբար, երկուսն էլ հավանաբար ուժգին տառապել են մեկը մյուսի կրած ցավից, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ երրորդ դիմումատուն անչափահաս էր, Դատարանը գտնում է, որ խնդրո առարկա վերաբերմունքը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով կարող է որակվել որպես խոշտանգում» (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 110-րդ և 112-րդ կետերը):

13.3. Ինչ վերաբերում է Առաջին դիմումատուին, ապա Եվրոպական դատարանը նշել է, որ գործի նյութերում չկա բժշկական բնույթի որևէ ապացույց, որը թույլ կտար եզրակացնել, որ դիմումատուն ենթարկվել էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջների հետ անհամատեղելի վերաբերմունքի (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 111-րդ կետը):

II. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում.

14. Եվրոպական դատարանը սույն գործի շրջանակներում վերահաստատել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման դեպքում արդյունավետ քննություն իրականացնելու պետության պարտավորության մասին իր նախադեպային իրավունքի շրջանակներում արտահայտված ընդհանուր իրավական դիրքորոշումները՝ փաստելով. «(...) [Ե]րբ անհատը ներկայացնում է փաստարկված պահանջ առ այն, որ Ոստիկանությունը կամ պետական այլ մարմինները վատ վերաբերմունք են ցուցաբերել իր նկատմամբ՝ խախտելով 3-րդ հոդվածը, ապա այդ դրույթով՝ զուգակցված Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված պետության ընդհանուր պարտավորության մասին դրույթի հետ, այն է՝ «Ֆիրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայում ...», ինքնին ենթադրվում է, որ պետք է իրականացվի արդյունավետ պաշտոնական քննություն (...):

(...) Քննություն իրականացնելու պարտավորությունը «արդյունքի պարտավորություն չէ, այլ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն». պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ հանգի

մի եզրակացության, որը համապատասխանում է դիմումատուի կողմից նշված դեպքերի շարադրանքին, սակայն դրա միջոցով գործնականում պետք է հնարավոր լինի արձանագրել գործի փաստերը: Այն դեպքում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ են, այն պետք է հանգեցնի հանցանքի համար պատասխանատուների բացահայտմանը և, համապատասխան հիմքերի առկայության դեպքում՝ նրանց պատժին: Այսպիսով, վատ վերաբերմունքի մասին արժանահավատ հայտարարությունների վերաբերյալ քննությունը պետք է բազմակողմանի լինի: Դա նշանակում է, որ իշխանությունները միշտ պետք է ձգտեն պարզել, թե ինչ է տեղի ունեցել և չպետք է անեն հապճեպ կամ անհիմն եզրակացություններ՝ իրենց քննությունը փակելու կամ դրանք իրենց որոշումների հիմք դարձնելու համար: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր ողջամիտ միջոցները միջադեպի հետ կապված ապացույցներ ձեռք բերելու համար, որը, *inter alia*, ներառում է, վկաների ցուցմունքները, դատաբժշկական փորձաքննությունը և այլն: Հետաքննության ցանկացած թերություն, որը կարող է խաթարել վնասվածքների պատճառի կամ հանցանքի համար պատասխանատու անձանց ինքնության հաստատումը, կարող է այս չափանիշին չհամապատասխանելու վտանգ առաջացնել (...):

(...) *Վերջապես, Դատարանը վերահաստատում է, որպեսզի պետական մարմինների կողմից ենթադրյալ վատ վերաբերմունքի առթիվ իրականացվող քննությունը լինի արդյունավետ, այն պետք է լինի անկախ: Քննության անկախությունն ենթադրում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև գործնական իմաստով անկախություն (...)*» (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 118-120-րդ կետերը):

14.1. Վերոգրյալ դրույթները կիրառելով սույն գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Երկրորդ և Երրորդ դիմումատուների՝ վատ վերաբերմունքի մասին ներպետական մարմիններին ներկայացված պահանջները եղել են փաստարկված, իսկ Առաջին դիմումատուի դեպքում իրավիճակն այլ է եղել և պահանջել է առավել մանրամասն վերլուծություն: Այսպես՝ թեև Առաջին դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման մասին վկայող բժշկական բնույթի որևէ ապացույց չի եղել, այնուամենայնիվ, նրան մյուս երկու դիմումատուների հետ նույն ժամանակահատվածում տարել են ոստիկանության նույն բաժին և, ըստ երևույթին, հարցաքննել են իրավապահ մարմինների նույն աշխատակիցները: Քննություն իրականացնող մարմինը տեղյակ է եղել Առաջին դիմումատուի՝ վատ վերաբերմունքի ենթարկված լինելու մասին պնդումներին՝ նույնիսկ եթե այդ պնդումներն ուղղակիորեն ինքը չի արել, այլ ներկայացրել են մյուս երկու դիմումատուներն ու նրա փաստաբանը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Եվրոպական դատարանը գտել է, որ պետական մարմինները Առաջին դիմումատուի դեպքում նույնպես պարտավոր էին արդյունավետ քննություն իրականացնել (տե՛ս *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 121-122-րդ կետերը):

14.2. Անդրադառնալով դիմումատուների նկատմամբ իրականացված քննության պատշաճությանը՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) Դատարանն ի սկզբանե նշել է, որ միակ հարցումը եղել է 2004 թվականի օգոստոսին Գեդարքունիքի մարզի դատախազության արած հարցումը: Հաշվի առնելով այն, որ պետական մարմինները ներգրավվել էին քննելու միևնույն դատախազության աշխատակիցների և տեղական ոստիկանության բաժնի նրանց ենթակաների գործողությունները, Դատարանը չի կարող նման քննությունը համարել անկախության և անկողմնակալության պահանջները բավարարող: Հարկ է նշել, որ քննություն իրականացնող մարմինները քննության ոչ մի փուլում չեն տրամադրել որևէ բացատրություն այն մասին, թե ինչու են նրանք համարում ոստիկանների կողմից տրված ցուցմունքները հավաստի, իսկ դիմումատուի ցուցմունքները՝ անվստահելի՝ չնայած, որ բժշկական բնույթի ապացույցները դիմումատուների օգտին էին: Քրեական գործի հարուցումը մերժող որոշումը պարունակում է որևէ պատճառաբանությունից զուրկ ընդհանրական եզրակացություններ (...): Այսպիսով, պարզվում է, որ քննություն իրականացնող մարմինը, առանց որևէ հիմնավորման, նախապատվությունը տվել է ոստիկանների կողմից տրամադրված ցուցմունքներին և դրանով, կարելի է ասել, չի ցուցաբերել անհրաժեշտ օբյեկտիվություն և անկախություն:

(...)

Ինչ վերաբերում է բժշկական բնույթի ապացույցներին, ապա Դատարանը նշում է, որ քննություն իրականացնող մարմինը պատրաստակամորեն ընդունել է այն բացատրությունը, որ երկրորդ դիմումատուի ոտքերի վրա կապտուկներն առաջացել են այտուցվածությունից՝ առանց նույնիսկ նախևառաջ փորձելու պարզել, թե ինչպես է առաջացել այտուցվածությունը: Լրացուցիչ բժշկական հետազոտություններ չեն նշանակվել, այս առնչությամբ չեն հարցաքննվել ոչ այդ եզրակացությունները տրամադրած բժիշկները, ոչ էլ որևէ այլ բժշկական փորձագետ: Երրորդ դիմումատուի դեպքում քննություն իրականացնող մարմինը նույնիսկ չի հետազոտել առկա բժշկական բնույթի ապացույցները, ինչպես օրինակ՝ 2004 թվականի հուլիսի 16-ին տրամադրված «Արմենիա» բժշկական կենտրոնի եզրակացությունները: Այսպիսով, պարզվում է, որ քննության որևէ փուլում այս ակնհայտ կարևոր ապացույցի վրա ուշադրություն չի դարձվել: Նույն կերպ, համապատասխան բժիշկները չեն հարցաքննվել և այս առնչությամբ որևէ լրացուցիչ բժշկական հետազոտություն չի նշանակվել: Վերջապես, առաջին դիմումատուի հետ կապված որևէ բժշկական հետազոտություն չի նշանակվել: Առաջին դիմումատուի դեպքում սա ավելի կարևոր էր՝ հաշվի առնելով այն, որ չկար նրա հետ կապված որևէ բժշկական բնույթի ապացույց:

(...) Դատարանը նաև նշում է, որ ոչ առաջին դիմումատուն, ոչ երրորդը երբևէ չեն հարցաքննվել վատ վերաբերմունքի մասին իրենց պնդումների առնչությամբ: Պարզվում է նաև, որ որևէ փորձ չի կատարվել՝

բացահայտելու և հարցաքննելու որևէ այլ հնարավոր վկայի, իսկ դիմումատուների և ենթադրյալ վատ վերաբերմունք դրսևորած անձանց միջև չի եղել որևէ առերեսում: Բնչ վերաբերում է տեղի ունեցած հարցաքննությանը, ապա Դատարանը գտնում է, որ նման բազմաթիվ դեպքերում հարցաքննվողներին պարզապես խնդրել են տրամադրել իրադարձությունների վերաբերյալ իրենց հայտնի տեղեկությունները և որևէ հարց չի տրվել: Նույնիսկ այն քիչ դեպքերում, երբ քննիչը հարցեր է տվել, երբեք չի եղել մեկ ստանդարտ և ոչ կոնկրետ հարցից ավելի հարց (...): Ուստի պարզվում է, որ տվյալ հարցաքննությունները եղել են պարզապես ձևական, և Դատարանը չի կարող դրանք համարել լուրջ փորձ՝ պարզելու այն հանգամանքները, որոնց պարագայում դիմումատուները տուժել են կամ կարող են տուժած լինել վատ վերաբերմունքից (...)» (տե՛ս Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 123-126-րդ կետերը):

14.3. Եվրոպական դատարանը նշել է նաև, որ դիմումատուների՝ վատ վերաբերմունքի մասին պնդումներն ավելի բարձր ատյանների վերանայմանը ներկայացնելու փորձերը նույնպես ապարդյուն են եղել, քանի որ գլխավոր դատախազություն ուղարկված բազմաթիվ բողոքներին տրվել են ձևական պատասխաններ, իսկ ներպետական դատարանները, մերժելով վատ վերաբերմունքի մասին ներկայացված բողոքները, հանգել են ակնհայտորեն ոչ ճիշտ եզրահանգումների: Հետևաբար դատարանները ևս չեն կարողացել իրականացնել պատշաճ և բազմակողմանի քննություն:

Վերոշարադրյալի արդյունքում Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ իշխանությունների կողմից վատ վերաբերմունքի մասին դիմումատուների պնդումների առնչությամբ արդյունավետ և պատշաճ քննություն չի իրականացվել, ուստի բոլոր երեք դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում (տե՛ս Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 128-130-րդ կետերը):

15. Հիմք ընդունելով Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված՝ դիմումատուների՝ Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված համապատասխան իրավունքների խախտման փաստը և ղեկավարվելով Կոնվենցիոն պահանջներով ու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը վերանայելու հիմք է:

16. Սկոցցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ վճռի, որով Դատարանը խախտում է արձանագրում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարելու արդարացի փոխհատուցման կարգով տրա-

մադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրելու ընդհանուր և (կամ) անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ վերջ տալու համար Դատարանի արձանագրած խախտումները և հնարավորինս շտկելու դրա հետևանքները (տե՛ս Scozzari and Giunta v. Italy գործով Եվրոպական դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետ 249):

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից, ինչպես նաև Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված Դատարանի վճիռները կատարելու՝ պետությունների ստանձնած պարտավորությունից բխում է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտում արձանագրվելու դեպքում վերջիններս պարտավորվում են ձեռնարկել այնպիսի անհատական միջոցառումներ, որոնք կդադարեցնեն իրավունքի խախտումը և հնարավորինս կապահովեն մինչև խախտումը եղած վիճակի վերականգնումը (*restitutio in integrum*), ինչպես նաև ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ ապագայում նմանատիպ խախտումները կանխելու նպատակով (տե՛ս, *mutatis mutandis*, *Տիրայր Սեֆիլյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 24-րդ կետը): Թեև եթե *restitutio in integrum*-ը գործնականում հնարավոր չէ, պետությունները, որպես կանոն, ազատ են վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (տե՛ս, *mutatis mutandis*, *Scozzari and Giunta v. Italy* գործով Եվրոպական դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98), այնուամենայնիվ, որոշ դեպքերում Եվրոպական դատարանը նպատակահարմար է գտել մատնանշել կոնկրետ միջոցառումների տեսակները, որոնք ամենապատշաճը կլինեն մինչև խախտումն առկա իրավիճակի վերականգնումը (*«restitutio in integrum»*) հնարավորինս ապահովելու համար (տե՛ս, *Assanidze v. Georgia* [GC], գանգատ թիվ 71503/01, կետ 202, *Broniowski v. Poland* [GC], գանգատ թիվ 31443/96, կետ 194):

16.1. Եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման դեպքում պետությունները Կոնվենցիայի 1-ին հոդվածով ստանձնած իրենց պարտավորությունների շրջանակներում պարտավորվում են իրականացնել արդյունավետ քննություն: Որպեսզի քննությունը համարվի «արդյունավետ», պետք է ունակ լինի հանգեցնելու վիճելի փաստերի հաստատմանը և, հնարավորության դեպքում՝ անթույլատրելի վերաբերմունք դրսևորելու համար պատասխանատու անձանց բացահայտմանն ու պատժին (տե՛ս, *mutatis mutandis*, *Jeroničs v. Latvia* գործով Եվրոպական դատարանի [ՄԳ]՝ 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 44898/10, կետ 103): Մասնավորապես, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ 3-րդ հոդվածի խախտումը չի կարող շտկվել սուկ խախտման գոհին փոխհատուցում տրամադրելու միջոցով: Եթե իշխանությունները վատ վերաբերմուն-

քի համար պետական գործակալներին չպատժեն, այլ բավարարվեն միայն տուժածին փոխհատուցում տրամադրելով, ապա վերջիններս հնարավորություն կստանան անպատիժ մնալու և ոտնահարելու իրենց հսկողության տակ գտնվող անձանց իրավունքները: Նման պարագայում խոշտանգման, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի իրավական արգելքը, անկախ իր հիմնարար կարևորությունից, գործնականում արդյունավետ չի գործի (տե՛ս, *mutatis mutandis, Jeronovičs v. Latvia* գործով Եվրոպական դատարանի [ՄՊ]՝ 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 44898/10, *Gafgen v. Germany* գործով Եվրոպական դատարանի՝ 2010 թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 22978/05, *Krastanov v. Bulgaria* գործով Եվրոպական դատարանի՝ 2004 թվականի սեպտեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 50222/99):

17. Հաշվի առնելով «Նայբանդյանն ընդդեմ Հայաստանի» վճռով Եվրոպական դատարանի արտահայտած և սույն որոշման 12-14.3-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև գնահատելով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումների բնույթը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թույլ տված խախտումները վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և նոր քննության ուղարկելն է:

17.1. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքարկման առարկա հանդիսացող՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշման վերանայման արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի մարտի 25-ի ու ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշումները պետք է բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բագրատ Նապոլեոնի Նայբանդյանի, Նարինե Ալեքսանդրի Նայբանդյանի և Արևիկ Բագրատի Նայբանդյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով

վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը վերանայել:

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի մարտի 25-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

25.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԳ/0094/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Կարապետ Խաչիկի Խաչատրյանի և Նարեկ Սերոբի Սիրաքյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի դեկտեմբերի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի ապրիլի 30-ին ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ պահեստարան, շինություն, ինչպես նաև բնակարան ապօրինի մուտք գործելով գողություններ և գողության փորձ կատարելու դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 32101815 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մայիսի 9-ի որոշմամբ անչափահաս Կարապետ Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել 6 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մայիսի 10-ի որոշմամբ անչափահաս Նարեկ Սիրաքյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել 6 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2015 թվականի հուլիսի 9-ին Կ.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով և 5 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով:

2015 թվականի հուլիսի 9-ին Ն.Սիրաքյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով և 5 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով:

2015 թվականի հուլիսի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 2-ի դատավճռով Կարապետ Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 5 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման՝ 5 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Կ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով:

Նարեկ Սիրաքյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 5 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման՝ 5 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Ն.Սիրաքյանի

նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Գևորգ Էլյազյանը:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2015 թվականի դեկտեմբերի 1-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 2-ի դատավճիռն՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Կարապետ Խաչատրյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա, «անչափահաս Նարեկ Միրաքյանի հետ նախապես պայմանավորվելով գողությունը համատեղ կատարելու մասին, 2015 թվականի մարտի 20-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածում՝ ժամը 21:30-ի սահմաններում, տնամերձ այգու ցանկապատը մագլցելով մտել է Գորիս քաղաքի Երվանդունիների շա հասցեում գտնվող, Արշակ Երվանդի Գալստյանին պատկանող տան տարածք, ապա իր հետ տարած գործիքներով 1-ին հարկի՝ որպես պահեստարան ծառայող նկուղային սենյակի մուտքի դռան փականները սղոցելու, այնուհետև լնգել-ջարդելու միջոցով ապօրինի մուտք գործելով այնտեղ, գաղտնի հափշտակել է զգալի չափերով՝ ընդհանուր 8.200 ՀՀ դրամ արժողության գազօջախ, բամբակյա կտորներ, ապա նախքան ցանկապատն անցնելը՝ գողացված իրերը փոխանցել է հափշտակության կատարման գաղտնիությունն ապահովելու համար տան դիմացի ճանապարհահատվածում ապաստո Նարեկ Միրաքյանին, ու միասին տիրանալով դրանց՝ տեղափոխել են:

Բացի այդ, նա, Նարեկ Միրաքյանի հետ նախապես պայմանավորվելով գողությունը համատեղ կատարելու մասին, 2015 թվականի ապրիլի 10-ից մինչև 13-ն ընկած ժամանակահատվածում՝ ժամը 21-ի սահմաններում, դարպասը մագլցելով մտել է Գորիս քաղաքի Յուրի Բախշյանի 3-րդ հասցեում գտնվող, Սարատ Միրաքյանին պատկանող տան տարածք և պատուհանի փեղկը բացելու միջոցով ապօրինի մուտք գործելով 1-ին հարկի՝ որպես պահեստարան ծառայող նկուղային սենյակ, այնուհետև լոգարանի պատուհանի բաց փեղկով՝ տուն, գաղտնի հափշտակել է զգալի չափերով՝ ընդհանուր 50.500 ՀՀ դրամ արժողության փոխմետր, ջրատաքացուցիչ՝ դրա խողովակաձև պղնձյա 2 դետալներով, «DVD» և «VHS» տեսակի 2 տեսանվագարկիչ, արդուկ, ապա նախքան դարպասն

անցնելը՝ գողացված իրերը փոխանցել է հափշտակության կատարման գաղտնիությունն ապահովելու համար դարպասի դիմաց սպասող Նարեկ Միրաքյանին, ու միասին տիրանալով դրանց՝ տեղափոխել են:

Դրանից հետո, նա, Նարեկ Միրաքյանի հետ նախապես պայմանավորվելով գողությունը համատեղ կատարելու մասին, 2015 թվականի ապրիլի 20-ին կամ 21-ին՝ ժամը 21-ի սահմաններում, մտել է Գորիս քաղաքի Թանգու Չոր 22-րդ հասցեում գտնվող, Անահիտ Շահնուբարյանին պատկանող բնակելի տան տարածք և տեղում եղած փայտով մուտքի դռան փականը լնգել-սղկելու միջոցով ապօրինի մուտք գործելով 1-ին հարկի՝ որպես պահեստարան ծառայող հավաքուն, գաղտնի հափշտակել է զգալի չափերով՝ ընդհանուր 17.000 ՀՀ դրամ արժողության 3 թև հավ, 1 աքլոր, ապա տեղափոխելով պարկի մեջ՝ իրեն մոտեցած հափշտակության կատարման գաղտնիությունն ապահովող Նարեկ Միրաքյանի հետ տիրանալով դրանց՝ տեղափոխել են:

Բացի այդ, նա, ուրիշի զգալի չափերով գույքի գաղտնի հափշտակությունը համատեղ կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով Նարեկ Միրաքյանի հետ, 2015 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 21-ի սահմաններում, դարպասը մագլցելու միջոցով ապօրինի մուտք գործելով Գորիս քաղաքի Օրբելյանների 26-րդ հասցեում գտնվող, Կարինե Ավետիսյանին պատկանող բնակելի տանը կից՝ որպես պահեստարան ծառայող ավտոտնակ, փնտրել է գունավոր մետաղներով պատրաստված ապրանքներ, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցվել իր կամքից անկախ հանգամանքներով, այն է՝ փնտրելու արդյունքում այդպիսի ապրանքներ չհայտնաբերելու պատճառով հեռացել է հափշտակության կատարման գաղտնիությունն ապահովելու համար ավտոտնակի դարպասի դիմաց սպասող Նարեկ Միրաքյանի հետ՝ իրենց հետ տանելով արժեք չունեցող «Սովետական լիմոնադ» ապրանքային պիտակով 1,2 լիտր տարողության 34 շիշ ըմպելիք:

Բացի այդ, նա, Նարեկ Միրաքյանի հետ նախապես պայմանավորվելով գողությունը համատեղ կատարելու մասին, 2015 թվականի ապրիլի 17-ից մինչև 22-ն ընկած ժամանակահատվածում՝ ժամը 21-ի սահմաններում, 1-ին հարկի պատուհանի կաղապարամածը հրելու միջոցով ապօրինի մուտք գործելով Գորիս քաղաքի Օրբելյանների 41-րդ հասցեում գտնվող, Սամվել Ասատրյանին պատկանող կիսակառույց շինություն, 2-րդ հարկից գաղտնի հափշտակել է զգալի չափերով՝ ընդհանուր 35.000 ՀՀ դրամ արժողության 1 փաթեթ ջրամերժ թաղանթ, պղնձյա երկֆազ 100 մետր հաղորդալար, ապա նախքան շինությունից դուրս գալը՝ դրանք փոխանցել է հափշտակության կատարման գաղտնիությունն ապահովելու համար շինության դիմացի ճանապարհահատվածում սպասող Նարեկ Միրաքյանին, ու միասին տիրանալով դրանց՝ տեղափոխել են:

Բացի այդ, նա, ուրիշի զգալի չափերով գույքի գաղտնի հափշտակությունը համատեղ կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով Նարեկ Միրաքյանի հետ, 2015 թվականի ապրիլի 17-ից մինչև 22-ն

ընկած ժամանակահատվածում՝ ժամը 22-ի սահմաններում, պատուհանի բաց փեղկով ապօրինի մուտք գործելով Գորիս քաղաքի Սաթյան 35-րդ - հասցեում գտնվող, Վահրամ Հովհաննիսյանին պատկանող տուն, տեղաշարժել է տան գույքը, փնտրել գունավոր մետաղներով պատրաստված ապրանքներ, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցվել իր կամքից անկախ հանգամանքներով, այն է՝ տան գույքը տեղաշարժելու, փնտրելու արդյունքում այդպիսի ապրանքներ չհայտնաբերելու պատճառով հեռացել է հափշտակության կատարման գաղտնիությունն ապահովելու համար տան հարակից տարածքում սպասող Նարեկ Միրաքյանի հետ՝ տնից վերցված զգալի չափեր չունեցող՝ 3.500 ՀՀ դրամ արժողության նկարը թողնելով դարպասներից ներս:

Ավելին, նա, Նարեկ Միրաքյանի և Գևորգ Էլյազյանի հետ նախապես պայմանավորվելով գողությունը համատեղ կատարելու մասին, 2015 թվականի ապրիլի 23-ին՝ ժամը 22-ի սահմաններում, վերջինիս հետ 2-րդ - հարկի բաց պատշգամբը մագլցելու միջոցով ապօրինի մուտք գործելով Գորիս քաղաքի Օրբելյանների 47-րդ հասցեում գտնվող, Սուրեն Խանոյանին պատկանող կիսակառույց շինություն, 1-ին հարկից գաղտնի հափշտակել են զգալի չափերով՝ ընդհանուր 56.000 ՀՀ դրամ արժողության ինքնանեռ, ջրի էլեկտրական պոմպ, 20 լիտր տարողության ապակյա 3 տարա, ապա նախքան շինությունից դուրս գալը՝ դրանք փոխանցել են հափշտակության կատարման գաղտնիությունն ապահովելու համար շինության դիմացի ճանապարհահատվածում սպասող Նարեկ Միրաքյանին ու միասին տիրանալով դրանց՝ տեղափոխել են:

Բացի այդ, նա, Նարեկ Միրաքյանի և Գևորգ Էլյազյանի հետ նախապես պայմանավորվելով գողությունը համատեղ կատարելու մասին, 2015 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 22-ի սահմաններում, վերջինիս հետ 2-րդ հարկի բաց պատշգամբը մագլցելու միջոցով մտել են Գորիս քաղաքի Ավանգարդ 1-ին փողոցի 13-րդ հասցեում գտնվող, Վարյա Մուրադյանին պատկանող տան տարածք և ներսից բացված դարպասով իրենց միացած Նարեկ Միրաքյանի հետ մուտքի դռան փականի շրջակայքը պտուտակահանով փորելու, այնուհետև լնգել-բացելու միջոցով ապօրինի մուտք գործելով 1-ին հարկի՝ որպես պահեստարան ծառայող նկուղային սենյակներ, գաղտնի հափշտակել են զգալի չափերով՝ ընդհանուր 176.600 ՀՀ դրամ արժողության օդի թորելու համար նախատեսված պոմպային կաթսա՝ դրա կափարիչով, էլեկտրական կտրող-հարթեցնող գործիք, կարգավորվող պտուտակաբանալի, ձեռքի մեխանիկական կառավարմամբ գալլիկոնիչ, փռելուլ, ալյումինե և մետաղյա 40 լիտր տարողության 2-ական տարա, 3 էլեկտրաշարժիչ, մալուխ, ճուպան, ապա միասին տիրանալով դրանց՝ տեղափոխել են»:

5.1. Նարեկ Միրաքյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, «անչափահաս Կարապետ Խաչատրյանի հետ նախապես պայմանավորվելով գողությունը համատեղ կատարելու մասին, 2015 թվականի մարտի 20-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածում՝ ժամը

21:30-ի սահմաններում, սպասելով Գորիս քաղաքի Երվանդունիների 2ա հասցեում գտնվող, Արշակ Գալստյանին պատկանող տան դիմացի ճանապարհահատվածում՝ ապահովել է Կարապետ Խաչատրյանի կողմից հիշյալ տան 1-ին հարկի՝ որպես պահեստարան ծառայող նկուղային սենյակներ ապօրինի մուտք գործելով զգալի չափերով՝ ընդհանուր 8.200 ՀՀ դրամ արժողության գազօջախի, բամբակյա կտորների հափշտակության գաղտնիությունը, ապա վերցրել է Կարապետ Խաչատրյանի՝ նախքան ցանկապատն անցնելը փոխանցած վերը նշված ապրանքները և միասին տիրանալով դրանց՝ տեղափոխել են:

Բացի այդ, նա, Կարապետ Խաչատրյանի հետ նախապես պայմանավորվելով գողությունը համատեղ կատարելու մասին, 2015 թվականի ապրիլի 10-ից մինչև 13-ն ընկած ժամանակահատվածում՝ ժամը 21-ի սահմաններում, սպասելով Գորիս քաղաքի Յուրի Բախշյանի 3-րդ հասցեում գտնվող, Մարատ Միրաքյանին պատկանող տան դիմացի ճանապարհահատվածում, ապահովել է Կարապետ Խաչատրյանի կողմից հիշյալ տան՝ որպես պահեստարան ծառայող նկուղային սենյակ, այնուհետև տուն ապօրինի մուտք գործելով զգալի չափերով՝ ընդհանուր 50.500 ՀՀ դրամ արժողության վոլտմետրի, ջրատաքացուցչի, դրա խողովակաձև պղնձյա 2 դետալների, «DVD» և «VHS» տեսակի 2 տեսանվագարկիչների, արդուկի հափշտակության գաղտնիությունը, ապա վերցրել է Կարապետ Խաչատրյանի՝ նախքան տան դարպասն անցնելը փոխանցած վերը նշված ապրանքները, և միասին տիրանալով դրանց՝ տեղափոխել են:

Գրանից հետո նա, Կարապետ Խաչատրյանի հետ նախապես պայմանավորվելով գողությունը համատեղ կատարելու մասին, 2015 թվականի ապրիլի 20-ին կամ 21-ին՝ ժամը 21-ի սահմաններում, սպասելով Գորիս քաղաքի Թանգու Չոր 22-րդ հասցեում գտնվող, Անահիտ Շահնուբարյանին պատկանող բնակելի տան հարակից տարածքում, ապահովել է Կարապետ Խաչատրյանի կողմից տան 1-ին հարկի՝ որպես պահեստարան ծառայող հավաքուն ապօրինի մուտք գործելով զգալի չափերով՝ ընդհանուր 17.000 ՀՀ դրամ արժողության 3 հավերի, 1 աքլորի հափշտակության գաղտնիությունը, ապա մոտենալով վերցրել է Կարապետ Խաչատրյանի կողմից պարկի մեջ տեղավորած հավերն ու աքլորը, և միասին տիրանալով դրանց՝ տեղափոխել են:

Բացի այդ, նա, ուրիշի զգալի չափերով գույքի գաղտնի հափշտակությունը համատեղ կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով Կարապետ Խաչատրյանի հետ, 2015 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 21-ի սահմաններում, սպասելով Գորիս քաղաքի Օրբելյանների 26-րդ - հասցեում գտնվող, Կարինե Ավետիսյանին պատկանող բնակելի տանը կից՝ որպես պահեստարան ծառայող ավտոտնակի դարպասի դիմաց, ապահովել է Կարապետ Խաչատրյանի կողմից ավտոտնակ ապօրինի մուտք գործելով գունավոր մետաղներով պատրաստված զգալի չափերով ապրանքների հնարավոր հափշտակության գաղտնիությունը, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցվել իրենց կամքից անկախ հան-

գամանքներով, այն է՝ Կարապետ Խաչատրյանի կողմից փնտրելու արդյունքում այդպիսի ապրանքներ չհայտնաբերելու պատճառով հեռացել են՝ տանելով արժեք չունեցող «Սովետական լիմոնադ» ապրանքային պիտակով 34 շիշ ըմպելիք:

Բացի այդ, նա, Կարապետ Խաչատրյանի հետ նախապես պայմանավորվելով գողությունը համատեղ կատարելու մասին, 2015 թվականի ապրիլի 17-ից մինչև 22-ն ընկած ժամանակահատվածում՝ ժամը 21-ի սահմաններում, սպասելով Գորիս քաղաքի Օրբելյանների 41-րդ հասցեում գտնվող, Սամվել Ասատրյանին պատկանող կիսակառույց շինության դիմացի ճանապարհահատվածում, ապահովել է Կարապետ Խաչատրյանի կողմից հիշյալ շինությունն ապօրինի մուտք գործելով զգալի չափերով՝ ընդհանուր 35.000 ՀՀ դրամ արժողության 1 փաթեթ ջրամերժ թաղանթի, պղնձյա երկֆազ 100 մետր հաղորդալարի հափշտակության գաղտնիությունը, սպա վերցրել է Կարապետ Խաչատրյանի՝ նախքան շինությունից դուրս գալը փոխանցած վերը նշված ապրանքները, և միասին տիրանալով դրանց՝ տեղափոխել են:

Բացի այդ, նա, ուրիշի զգալի չափերով գույքի գաղտնի հափշտակությունը համատեղ կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով Կարապետ Խաչատրյանի հետ, 2015 թվականի ապրիլի 17-ից մինչև 22-ն ընկած ժամանակահատվածում՝ ժամը 22-ի սահմաններում, սպասելով Գորիս քաղաքի Սաթյան 35-րդ հասցեում գտնվող, Վահրամ Հովհաննիսյանին պատկանող տան հարակից տարածքում, ապահովել է Կարապետ Խաչատրյանի կողմից տունն ապօրինի մուտք գործելով գունավոր մետաղներով պատրաստված զգալի չափերով ապրանքների հնարավոր հափշտակության գաղտնիությունը, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցվել իրենց կամքից անկախ հանգամանքներով, այն է՝ Կարապետ Խաչատրյանի կողմից տան գույքը տեղաշարժելու, փնտրելու արդյունքում այդպիսի ապրանքներ չհայտնաբերելու պատճառով հեռացել են՝ տնից վերցված 3.500 ՀՀ դրամ արժողության նկարը թողնելով դարպասներից ներս:

Ավելին՝ նա, Կարապետ Խաչատրյանի և Գևորգ Էլյազյանի հետ նախապես պայմանավորվելով գողությունը համատեղ կատարելու մասին, 2015 թվականի ապրիլի 23-ին՝ ժամը 22-ի սահմաններում, սպասելով Գորիս քաղաքի Օրբելյանների 47-րդ հասցեում գտնվող, Սուրեն Խանոյանին պատկանող կիսակառույց շինության դիմացի ճանապարհահատվածում, ապահովել է Կարապետ Խաչատրյանի և Գևորգ Էլյազյանի կողմից հիշյալ շինությունն ապօրինի մուտք գործելով և զգալի չափերով՝ ընդհանուր 56.000 ՀՀ դրամ արժողության ինքնաեռի, ջրի էլեկտրական պոմպի, 20 լիտր տարողության ապակյա 3 տարաների հափշտակության գաղտնիությունը, սպա վերցրել է վերջիններիս՝ նախքան շինության ներսից դուրս գալը փոխանցած վերը նշված ապրանքները, և միասին տիրանալով դրանց՝ տեղափոխել են:

Բացի այդ, նա, Կարապետ Խաչատրյանի և Գևորգ Էլյազյանի հետ նախապես պայմանավորվել է պահեստարան ապօրինի մուտք գործելով ուրիշի զգալի չափերով գույքի գողությունը համատեղ կատարելու մասին, այն է՝ 2015 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 22-ի սահմաններում, վերջիններս 2-րդ հարկի բաց պատշգամբը մագլցելու միջոցով մտել են Գորիս քաղաքի Ավանգարդ 1-ին փողոցի 13-րդ հասցեում գտնվող, Վարյա Մուրադյանին պատկանող տան տարածք, որից հետո ներսից փականը բացված դարպասով մտել է նաև նա, և մուտքի դռան փականի շրջակայքը պտուտակահանով փորելու, այնուհետև լնդել-բացելու միջոցով ապօրինի մուտք գործելով 1-ին հարկի՝ որպես պահեստարան ծառայող նկուղային սենյակներ, գաղտնի հափշտակել են զգալի չափերով՝ ընդհանուր 176.600 ՀՀ դրամ արժողության օղի թորելու համար նախատեսված պղնձյա կաթսա՝ դրա կափարիչով, էլեկտրական կտրող-հարթեցնող գործիք, կարգավորվող պտուտակաբանալի, ձեռքի մեխանիկական կառավարմամբ գայլիկոնիչ, փռչեկուլ, ալյումինե և մետաղյա 40 լիտր տարողության 2-ական տարա, 3 էլեկտրաշարժիչ, մալուխ, ճուպան, ապա միասին տիրանալով դրանց՝ տեղափոխել են» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 257-282):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Ամբաստանյալներ [Կ.Խաչատրյանի, Ն.Միրաբյանի] պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ են կատարած հանցագործությունների համար իրենց լիովին մեղավոր ճանաչելն ու անկեղծորեն գոջալը (տվել են խոստովանական ցուցմունքներ), մեղայականով ներկայանալը, հանցագործությամբ պատճառված գույքային վնասը կամովին հատուցելը, (...) հանցանքը կատարելու պահին նրանց անչափահաս լինելը:

Ամբաստանյալները բնութագրվում են դրականորեն, նախկինում դատապարտված և արատավորված չեն եղել, (...) Կարապետ Խաչատրյանը (...) միակողմանի ծնողագուրկ է]:

Տուժողները և տուժողի ներկայացուցիչները հայտնել են, որ ամբաստանյալներից պարտք ու պահանջ չունեն և խնդրել են նրանց նկատմամբ մեղմ վերաբերվել:

Դատարանը (...), հաշվի առնելով կատարված հանցագործությունների հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորների անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ նրանց պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, գտնում է, որ վերը թվարկված հանգամանքներն էականորեն նվազեցնում են հանցագործությունների հանրության համար վտանգավորության աստիճանն ու իրենց համակցությամբ հնարավորություն են տալիս հանգելու հետևության, որ ամբաստանյալների ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու ու վերջիններիս նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրա-

ռելու միջոցով, տվյալ գործով հնարավոր է հասնել (...) պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը: Տվյալ դեպքում դրանով կապահովվեն նաև (...) արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 152-186):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման շրջանակներում փաստել է. «(...) [Ա]մբաստանյալներ Կ.Խաչատրյանի և Ն.Միրաքյանի նկատմամբ պատիժ նշանակելիս՝ պատժի տեսակը և չափը որոշելիս, Առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է (...) պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ամբաստանյալների նկատմամբ նշանակել է արդարացի ու համաչափ պատիժ, որը բխում է (...) արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից, համապատասխանում է կատարված հանցանքների ծանրությանը, դրանք կատարելու հանգամանքներին, հանցավորների անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրանց ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար և կարող է ապահովել (...) պատժի նպատակների իրագործումը, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

(...) Վերաքննիչ դատարանի գնահատմամբ [Առաջին ատյանի դատարանը] վերջնական իրավաչափ հետևության է հանգել այն մասին, որ ամբաստանյալների ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու պայմաններում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցում ըստ էության հանգելով իրավաչափ ու հիմնավոր հետևության» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 106-129):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերի համոզմամբ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ և 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ համապատասխանաբար թիվ ԵՇՂ/0029/01/08, թիվ ԵՇՂ/0143/01/13, թիվ ՎԲ-192/07 և թիվ ՏԳ/0018/01/13 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, գտել է, որ ստորադաս դատարանների կողմից պատշաճ վերլուծության չեն ենթարկվել Կ.Խաչատրյանին ու Ն.Միրաքյանին մեղաագրվող արարքների հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի վրա ազդող մի շարք հանգամանքներ, ինչի արդյունքում դատարաններն ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ հանգել են սխալ հետևության:

Մասնավորապես՝ բողոք բերած անձը փաստել է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները հաշվի չեն առել Կ.Խաչատրյանի ու Ն.Միրաքյանի կողմից կատարված արարքների բազմադրվագ լինելը, դրանց կազմակերպվածության աստիճանը, գողությունների կատարման եղանակը, ամբաստանյալների միջև դերերի կոնկրետ բաժանումը, ինչպես նաև՝ նրանց պատրաստվածության աստիճանը: Բացի այդ, անչափահասներ Կ.Խաչատրյանն ու Ն.Միրաքյանը վեց դրվագ հափշտակություններ կատարելուց հետո հանցագործությունների կատարմանն են ներգրավել նախկինում չարատավորված, առողջական խնդիրներ ունեցող չափահաս Գ.Էլյազյանին, որպիսի հանգամանքն, ըստ բողոքի հեղինակի, էապես բարձրացնում է հանցավորների և նրանց կատարած արարքների հանրային վտանգավորության աստիճանը:

9. Վերոգրյալի հետ մեկտեղ բողոք բերած անձը վերլուծել է մեղմացնող հանգամանքների և դրանց կիրառման չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-84/07, թիվ ԵԷԴ/0048/01/14, թիվ ԳԴ/0014/01/14 որոշումները և եզրահանգել, որ ստորադաս դատարանների կողմից որպես ամբաստանյալներ Կ.Խաչատրյանի և Ն.Միրաքյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող են համարվել այնպիսի հանգամանքներ, որոնք չէին կարող այդպիսին գնահատվել: Մասնավորապես՝ բողոք բերած անձը փաստարկել է, որ Կ.Խաչատրյանի և Ն.Միրաքյանի կողմից անկեղծորեն զոջալն ու մեղայականով ներկայանալը որպես մեղմացնող հանգամանքներ դիտելն անհիմն է՝ կատարված հանցագործության մասին իրավապահ մարմինների տեղյակ լինելու և ամբաստանյալների կողմից իրենց հայտնի ոչ բոլոր հանգամանքների վերաբերյալ ցուցմունքներ տալու պարագայում:

Տուժողների կողմից բողոք չունենալու և ամբաստանյալներին մեղմ վերաբերվելու խնդրանքի կապակցությամբ բողոք բերած անձն արձանագրել է, որ Կ.Խաչատրյանին և Ն.Միրաքյանին մեղսագրվող հանցագործությունները գտնվում են հանրային հետապնդման տիրույթում, ինչից հետևում է, որ քննարկվող հանգամանքները չէին կարող որևէ կերպ ազդել վերջիններիս կողմից կատարված արարքների հանրային վտանգավորության վրա:

Անդրադառնալով ամբաստանյալների՝ նախկինում դատապարտված և արատավորված չլինելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևություններին՝ բողոքաբերը եզրահանգել է, որ այդ հանգամանքները Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԳԴ/0014/01/14 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների ուժով չեն կարող դիտվել որպես անձի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգու-
մը.**

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ամբաստանյալներ Կարապետ Խաչատրյանի և Նարեկ Միրաքյանի նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Մեջբերված քրեաիրավական նորմերը Վճարելի դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի գոյություն ունեցող այնպիսի օբյեկտիվ տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճարելի դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքի ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլնի, հիմնված լինեն հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճարելի դատարանի՝ *Գարուշ Մառաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Մահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները)՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքն ու հանցագործությանը նրա մասնակցության

աստիճանը և այլն (ԵԱԳ-Գ/0034/01/12, ԼԳ/0093/01/12, ՏԳ/0018/01/13, ԵԷԳ/0132/01/13, ԵԱՆԳ/0060/01/13, ԵԿԳ/0096/01/13, ԵԿԳ/0252/01/13, ԵՄԳ/0027/01/14, ԳԳ/0014/01/14, ՍԳ/0204/01/13, ՏԳ/0031/01/14, ՍԳ/0174/01/14, ԵԱԳ-Գ/0011/01/14, ԵԱԶԳ/0091/01/14, ԵԿԳ/0039/01/15, ԱՐԳ/0031/01/15 և այլն):

13. Սույն գործի նյութերից երևում է, որ Կարապետ Խաչատրյանին և Նարեկ Սիրաքյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 5 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք նախապես պայմանավորվել և 2015 թվականի մարտի 20-ից մինչև ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում համատեղ կատարել են հափշտակություններ (տե՛ս սույն որոշման 5-5.1-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է, որ ամբաստանյալներ Կարապետ Խաչատրյանի և Նարեկ Սիրաքյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ են կատարած հանցագործությունների համար իրենց լիովին մեղավոր ճանաչելն ու անկեղծորեն զոջալը (տվել են խոստովանական ցուցմունքներ), մեղայականով ներկայանալը, հանցագործությամբ պատճառված գույքային վնասը կամովին հատուցելը, հանցանքը կատարելու պահին նրանց անչափահաս լինելը: Առաջին ատյանի դատարանը փաստել է նաև, որ ամբաստանյալները բնութագրվում են դրականորեն, նախկինում դատապարտված և արատավորված չեն եղել, ամբաստանյալ Կ.Խաչատրյանը միակողմանի ծնողագուրկ է, ինչպես նաև տուժողներն ու տուժողի ներկայացուցիչներն ամբաստանյալներից պարտք ու պահանջ չունեն և խնդրել են նրանց նկատմամբ մեղմ վերաբերվել: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ ամբաստանյալներ Կ.Խաչատրյանի և Ն.Սիրաքյանի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու ու վերջիններիս նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով տվյալ գործով հնարավոր է հասնել պատժի նպատակներին և ապահովել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները համադրելով սույն որոշման 12-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները Կ.Խաչատրյանի և Ն.Սիրաքյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պատշաճ վերլուծության չեն ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Մասնավորապես՝ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել՝

ա) խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, այն, որ ամբաստանյալները ոտնձգել են անձանց՝ բնակարանի անձեռնմխելիության և սեփականության իրավունքների դեմ,

բ) Կ.Խաչատրյանին և Ն.Միրաքյանին մեղսագրվում են մեկից ավելի ծանրացնող հանգամանքներով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, պահեստարան և շինություն, ինչպես նաև՝ բնակարան ապօրինի մուտք գործելով) հանցանքներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով և նույն հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով,

գ) հանցագործությունների կատարման եղանակը, գործիքներն ու միջոցները, մասնավորապես այն, որ ամբաստանյալներն Արշակ Գալստյանի տան տարածքից հափշտակություն կատարելիս իրենց հետ նախապես գործիքներ են տարել և տրոցել, ապա լնգել-ջարդել են մուտքի դռան փականները, իսկ Անահիտ Շահնուբարյանի տան տարածքից հափշտակություն կատարելիս փայտով լնգել-պոկել են դռան փականը,

դ) հանցավորների կատարած արարքներն ու հանցագործություններին նրանցից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանը, մասնավորապես այն, որ համակատարողներ Կ.Խաչատրյանը և Ն.Միրաքյանը նախապես կատարել են դերաբաշխում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ստորադաս դատարանները ընդհանրապես չեն անդրադարձել և գնահատման ենթարկել այն հանգամանքը, որ Կ.Խաչատրյանի և Ն.Միրաքյանի մոտ առկա է հանցավոր վարքագծի պարբերականություն: Մասնավորապես՝ ամբաստանյալների կողմից ութ նույնաբնույթ հանցանքների (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ և պահեստարան ապօրինի մուտք գործելով գողություն, այդ հանցանքի փորձ, բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն և դրա փորձ) կատարումը վկայում է հանցանք կատարած անձանց հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին, ինչը դատարանների կողմից պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս պետք է համարժեք գնահատականի արժանանար:

15. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալներ Կ.Խաչատրյանի և Ն.Միրաքյանի նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառելիս ստորադաս դատարաններն ինչպես առանձին վերցրած, այնպես էլ իրենց համակցության մեջ պատշաճ գնահատման չեն ենթարկել խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, հանցագործությունների կատարման եղանակը ու օգտագործված գործիքները, հանցավորների կատարած արարքներն ու հանցագործություններին նրանցից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանը, ինչպես նաև այն, որ ամբաստանյալներին մեղսագրվում են մեկից ավելի ծանրացնող հանգամանքներով հանցանքներ:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Կ.Խաչատրյանի և Ն.Միրաքյանի նկատմամբ նշա-

նակված պատիժները պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները իրավաչափ չեն:

16. Անդրադառնալով Առաջին ատյանի ու Վերաքննիչ դատարանների կողմից հաստատված՝ ամբաստանյալների պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների հիմնավորվածության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

- Կ.Խաչատրյանի և Ն.Միրաքյանի կողմից անկեղծորեն գղջալու և նրանց մեղայականով ներկայանալու հանգամանքների կապակցությամբ պետք է փաստել, որ իրավապահ մարմինները տեղյակ են եղել ամբաստանյալներին մեղազրկող ութ հանցագործություններից միայն մեկի մասին, և հանցավորների փաստացի ներկայանալն ու ինքնախոստովանական ցուցմունքներ տալը կարևոր նշանակություն են ունեցել այդ հանցագործությունների արագ բացահայտման և գործի քննության համար (տե՛ս *mutatis mutandis* *Էդվարդ Ադամյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷՂ-0048/01/14 որոշման 22-րդ կետը): Այս պայմաններում բողոքի հեղինակի մատնանշած այն հանգամանքը, որ ամբաստանյալները վարույթն իրականացնող մարմինն չեն հայտնել իրենց մասնակցությամբ կատարված և հետագայում բացահայտված ևս մեկ հափշտակության մասին, չի կարող ի չիք դարձնել քննարկվող մեղմացնող հանգամանքների առկայությունը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկվող մեղմացնող հանգամանքների վերաբերյալ ստորադաս դատարանները եկել են իրավաչափ հետևության, իսկ բողոքաբերի փաստարկներն այդ մասով անհիմն են:

- անդրադառնալով Կ.Խաչատրյանի և Ն.Միրաքյանի՝ նախկինում դատապարտված ու արատավորված շլինելու և տուժողների ու նրանց ներկայացուցիչների կողմից բողոքներ չունենալու հանգամանքներին՝ պետք է նշել, որ ստորադաս դատարաններն այս հանգամանքները չեն դիտել որպես ամբաստանյալների պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, ուստի դրանց իրավաչափության վերաբերյալ բողոքաբերի դատողությունները ևս հիմնագուրկ են:

17. Հիմք ընդունելով սույն որոշման 15-17-րդ կետերում շարադրված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ - հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Կարապետ Խաչիկի Խաչատրյանի և Նարեկ Սերոբի Միրաքյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ - հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, հինգ դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 2-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Կարապետ Խաչիկի Խաչատրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, թողնել անփոփոխ, իսկ ամբաստանյալ Նարեկ Սերոբի Միրաքյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ծնողի հսկողությանը հանձնելը, փոփոխել և նրա նկատմամբ խափանման միջոց ընտրել՝ ստորագրություն չհեռանալու մասին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

26.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԳ/0200/01/13

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արթուր Վասիլի Անդրեասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշման դեմ տուժող Ա.Գալստյանի ներկայացուցիչ Ս.Սարգսյանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի ապրիլի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 182-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի և 213-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62204013 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ Արթուր Վասիլի Անդրեասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ քրեական գործով քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերն ապահովելու համար կալանք է դրվել ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող տարածքի վրա:

Նույն մարմնի՝ 2013 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ Ա.Անդրեասյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, երկու դրվագ՝ 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նույն մարմնի՝ 2013 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ Արտակ Գավրուշայի Գալստյանը ճանաչվել է քաղաքացիական հայցվոր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս մեղադրյալ Ա.Անդրեասյանի դեմ ներկայացրել է ընդհանուր 48.832.840 ՀՀ դրամի և 94.005.000 ՀՀ դրամ արժողությամբ անշարժ գույքի (ք. Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող) նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ քաղաքացիական հայց (տե՛ս քրեական գործ, հատոր 12-րդ, թերթեր 19-20):

2013 թվականի հոկտեմբերի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ստյանի դատարան):

Գատաքննության ընթացքում 2015 թվականի մայիսի 22-ի որոշմամբ մեղադրողը ամբաստանյալ Ա.Անդրեասյանին առաջադրված մեղադրանքը փոփոխել և լրացրել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երկու դրվագ), 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2. Առաջին ստյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 10-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Անդրեասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երկու դրվագ), և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ՝ 200.000.000 ՀՀ դրամի չափով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել և հռչակվել է նրա անմեղությունը, և նա արդարացվել է հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Նույն դատավճռով վճռվել է նաև Արտակ և Վեներա Գալստյանների քաղաքացիական հայցն ընդդեմ Ա.Անդրեասյանի՝ 52.458.000 ՀՀ դրամի բռնագանձման և գրավի ու սեփականության իրավունքների վերականգնման պահանջների մասին, թողնել առանց քննության:

3. Մեղադրող Ա.Երիցյանի, ամբաստանյալ Ա.Անդրեասյանի պաշտպան Մ.Մարգարյանի, դիմող Ա.Գևորգյանի ներկայացուցիչ Գ.Սողոմոնյա-

նի և դիմող Գ.Նազարյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ մեղադրող Ա.Երիցյանի, ամբաստանյալ Ա.Անդրեասյանի պաշտպան Մ.Սարգսյանի, դիմող Ա.Գևորգյանի ներկայացուցիչ Գ.Սուլումնյանի վերաքննիչ բողոքները մերժել է, իսկ Գ.Նազարյանի վերաքննիչ բողոքը բավարարել է, փոփոխել է Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 10-ի դատավճիռը և վերացրել ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը: Գատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշման դեմ վճարելի բողոքներ են բերել ամբաստանյալ Ա.Անդրեասյանի պաշտպան Մ.Սարգսյանը և տուժող Ա.Գալստյանի ներկայացուցիչ Ս.Սարգսյանը:

Վճարելի դատարանը 2016 թվականի հունիսի 14-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Անդրեասյանի պաշտպան Մ.Սարգսյանի վճարելի բողոքը վարույթ ընդունելը մերժել է, իսկ տուժող Ա.Գալստյանի ներկայացուցիչ Ս.Սարգսյանի բողոքը 2016 թվականի հունիսի 15-ի որոշմամբ ընդունել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացրել Գ.Նազարյանը՝ խնդրելով մերժել վճարելի բողոքը և օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5. Ամբաստանյալ Ա.Անդրեասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երկու դրվագ) մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա խարդախությամբ հափշտակել է Արտակ Գալստյանի, Արտյոմ Շախպազյանի, Էդվարդ Ներսիսյանի, Գևորգ Թադևոսյանի, Մուշեղ Մաֆարյանի, Արթուր Քոչինյանի և Թաթուլ Բամայանի առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 328.251.210 ՀՀ դրամին համարժեք 110.000 եվրոն, 622.000 ԱՄՆ դոլարը, 30 մլն ՀՀ դրամը:

Բացի այդ, Արթուր Անդրեասյանը 2013 թվականի ապրիլի 3-ին խարդախությամբ հափշտակել է նաև Արտյոմ Շախպազյանի խոշոր չափերով 1.671.360 ՀՀ դրամին համարժեք 4.000 ԱՄՆ դոլարը:

Բացի այդ, Արթուր Անդրեասյանը 2011 թվականի ապրիլի 12-ին խարդախությամբ սեփականության իրավունք է ձեռք բերել Արտակ Գալստյանի առանձնապես խոշոր չափերի՝ 94.005.000 ՀՀ դրամ արժուողությամբ՝ Երևանի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 անշարժ գույքի նկատմամբ:

Այսպես՝ Արթուր Անդրեասյանը, փաստացի Արտակ Գալստյանի սեփականությունը հանդիսացող, սակայն նրա ծանոթ Կարեն Թումիկյա-

նի անվամբ գրանցված՝ Երևանի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 հասցեում գտնվող, անշարժ գույքի նկատմամբ խաբեության և վատահոթյունը չարաշահելու եղանակով սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով, խարդախություն կատարելու ուղղակի դիտավորությամբ, 2011 թվականի ապրիլին համոզել է նրան տարածքը 250.000 ԱՄՆ դոլար գնով վաճառել իրեն՝ խոստանալով այդ տարածքի գրավադրմամբ բանկից ստացված վարկային միջոցները ներդնել ձեռնարկատիրական գործունեության մեջ, տարածքի արժեքն Արտակ Գալստյանին վճարել 21 ամիս անց՝ 2012 թվականի դեկտեմբերին, իսկ մինչ այդ նրան վճարել ամսական 1,2 տոկոս (3.000 ԱՄՆ դոլար) գումար: Արտակ Գալստյանի վատահոթյունն ավելի ամրապնդելու համար նրան ցույց է տվել, ապա «Յունիբանկ» ՓԲԸ ներկայացրած հայտարարագրում մտացածին կերպով՝ որպես իր եկամուտներ, ներառել է նաև «Մոսկվիչկա» խանութների ցանցի արտարժույթի առք ու վաճառքի գրասենյակների եկամուտները՝ ի հավաստումն դրա կցելով նաև փոխանակման այդ կետերի դրամարկղային գործարքների հաշվետվությունները:

Արտակ Գալստյանը, վատահեղով Արթուր Անդրեասյանին և հավատալով նրա կեղծ խոստումներին, համաձայնել է, որից հետո 2011 թվականի ապրիլի 12-ին Արթուր Անդրեասյանի (գնորդ-գրավատու), Կարեն Թումիկյանի (վաճառող) և «Յունիբանկ» ՓԲ ընկերության (գրավառու) միջև կնքվել է «Անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի» պայմանագիր, որով Արթուր Անդրեասյանը, չարաշահելով Արտակ Գալստյանի վատահոթյունը, խաբեությամբ ձեռք է բերել սեփականության իրավունք նրան պատկանող, 94.005.000 ՀՀ դրամ արժողության՝ Երևանի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 անշարժ գույքի նկատմամբ: Հետագայում Արթուր Անդրեասյանն իր դիտավորության համաձայն Արտակ Գալստյանին չի վճարել տարածքի արժեքը, ավելին՝ այն վերադարձնելու հնարավորությունը բացառելու նպատակով վերջինից գաղտնի 2012 թվականի նոյեմբերի 11-ին այն վաճառել է Ռուբեն և Կարեն Բաբակեխյաններին» (տե՛ս քրեական գործ, հատոր 20-րդ, թերթեր 16-28):

6. 2010 թվականի օգոստոսի 31-ին Վեներա Ֆարուսի Գալստյանի ու Արտակ Գավրուշայի Գալստյանի և Կարեն Նորայրի Թումիկյանի միջև կնքվել է ք.Երևանի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 բնակարանի առուվաճառքի պայմանագիր (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 132, հատոր 10-րդ, թերթեր 143-144):

6.1. 2011 թվականի ապրիլի 12-ին Կարեն Նորայրի Թումիկյանի և Արթուր Վասիլի Անդրեասյանի, «Յունիբանկ» ՓԲԸ-ի միջև կնքվել է ք.Երևանի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 բնակարանի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիր (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 128-131, հատոր 10-րդ, թերթեր 150-157):

6.2. 2012 թվականի նոյեմբերի 11-ին Արթուր Վասիլի Անդրեասյանի ու Իրինա Վալերիի Անդրեասյանի և Դոնարա Հենրիկի Նազարյանի միջև կնքվել է ք.Երևանի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 բնակարան-

նի առուվաճառքի պայմանագիր (տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 165-166):

7. Նախաքննության մարմնի՝ գույքի վրա կալանք դնելու մասին 2013 թվականի սեպտեմբերի 12-ի որոշման մեջ արձանագրվել է. *«Նկատի ունենալով, որ քննությանը ստուգվում է մեղադրյալ Ա.Անդրեասյանի կողմից նշված անշարժ գույքի նկատմամբ խաբեությանը սեփականության իրավունք ձեռք բերելու վարկածը, ուստի քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կալանք դնել Երևանի քաղաքի Բաղրամյան պողոտայի 77-8 հասցեում գտնվող տարածքի վրա»* (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 146):

8. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2014 թվականի հունիսի 3-ի վճռով ներկայացված քաղաքացիական հայցը մերժել է՝ հաստատված համարելով, որ *«Դռնարա Նազարյանը և Կարեն Բարսեղյանը հանդիսանում են բարեխիղճ ձեռքբերողներ»* (տե՛ս քրեական գործ, հատոր 23-րդ, թերթ 208):

9. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. *«(...) Ամբաստանյալի կատարած արարքներին տրվել են ճիշտ քրեաիրավական գնահատականներ, քրեական գործի ապացույցները ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի պահանջների պահպանմամբ և դատաքննությանը ապացուցվեց, որ ամբաստանյալը կատարել է հանցանքներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ու 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որոնցով և նա պետք է պատասխանատվության ենթարկվի:*

(...)

(...) [Ն]կատի ունենալով, որ տուժող Ա. Գալստյանի ներկայացուցիչը, հայտնելով, որ տուժողը և նրա կինը ցանկանում են դատարան դիմել քաղաքացիական դատավարության կարգով, խնդրեց քննության չառնել Արտակ և Վեներա Գալստյանների ընդդեմ Արթուր Անդրեասյանի՝ գույքի բռնագանձման և գրավի ու սեփականության իրավունքների վերականգնման պահանջների մասին հայցը, գտնում է, որ նշված հայցը պետք է թողնել առանց քննության:

(...)

(...) [Ն]կատի ունենալով, որ հանցագործությամբ պատճառված գույքային վնասների հատուցումը և գույքի բռնագրավումն ապահովելու համար նախաքննության ընթացքում կալանք է դրվել ամբաստանյալ Ա.Անդրեասյանի գույքի՝ ք.Երևանի Փափագյան փողոցի 11-րդ շենքի հ. 60 բնակարանի վրա, կալանք է դրվել նաև ք.Երևանի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի հ. 8 հասցեում գտնվող տարածքի վրա, գտնում է, որ նշված անհրաժեշտությունը դեռևս չի վերացել, հետևաբար նշված անշարժ գույ-

քերի վրա դրված կալանքը պետք է պահպանվի (տե՛ս քրեական գործ, հատոր 22-րդ, թերթ 100):

10. Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով Ա.Անդրեասյանի մեղավորությունը վերջինիս մեղսագրված հանցագործությունների կատարման մեջ և Առաջին ատյանի դատարանի դատավճիռը համապատասխան մասերով թողնելով անփոփոխ, միաժամանակ փաստել է. «(...) **Վեներա Գալստյանը, որը լիազորագրի հիման վրա գործել է նաև Արտակ Գալստյանի անունից, այնպես էլ Կարեն Թումիկյանը, Արթուր Անդրեասյանը վիճելի բնակարանը չեն կորցրել, նշված գույքը նրանցից չի հափշտակվել և հաստատվել է, որ նշված գույքը Վեներա Գալստյանի, այնպես էլ Կարեն Թումիկյանի, Արթուր Անդրեասյանի տիրապետումից դուրս է եկել նրանց կամքով՝** իրավական նորմերի պահպանմամբ՝ բոլոր գործարքները սեփականատերերի միջև վավերացվել է նոտարական կարգով (...):

Այսինքն, Գ.Նազարյանը և Ռ.Բարակեխյանը նշված բնակարանը սեփականատիրոջից ձեռք են բերել հատուցմամբ և հատկանշական է, որ վիճելի բնակարանը Արթուր Անդրեասյանի տիրապետումից դուրս է եկել նրա կամքով, այսինքն՝ Դոնարա Նազարյանը և Ռուբեն Բարակեխյանը գույքը ձեռք են բերել բարեխղճորեն:

Բացի այդ, Երևան քաղաքի Արաբկիր և Զանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2014թ. թիվ ԵԱԲԳ/1112/02/13 վճռով Վեներա Գալստյանի հայցը՝ 31.02.2010 թվականի Արտակ Գալստյանի, Վեներա Գալստյանի և Կարեն Թումիկյանի միջև Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Է.Մակարյանի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագիրը, 12.04.2011 թվականի Կարեն Թումիկյանի, Արթուր Անդրեասյանի և <<Յունիբանկ>> ՓԲԸ-ի միջև կնքված առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը, 07.11.2012 թվականի Արթուր Անդրեասյանի և Դոնարա Նազարյանի միջև կնքված գույքի առուվաճառքի պայմանագիրը, 02.05.2013 թվականի Ռուբեն Բարակեխյանի, Կարեն Բարակեխյանի, Դոնարա Նազարյանի և <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ի միջև կնքված անշարժ գույքի գրավադրմամբ վարկային պայմանագիրը անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու՝ Արտակ Գալստյանի և Վեներա Գալստյանի Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին՝ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառով:

(...)

Այսպիսով, Առաջին ատյանի դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ Դոնարա Նազարյանը՝ Երևան քաղաքի Արաբկիր և Զանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2014թ. թիվ ԵԱԲԳ/1112/02/13 օրինական ուժ ստացած վճռով որպես գույքի բարեխիղճ ձեռք բերող, գրկված է իր սեփականությունը տնօրինելու իրավունքից: Այդ գույքի վրա դրված արգելանքի պահպան-

մամբ՝ շարունակվում է խախտվել ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով սահմանված գույքից անարգել օգտվելու Գ.Նազարյանի իրավունքը:

Հատկանշական է նաև, որ Առաջին ատյանի դատարանի նշված դատավճռի պատճառաբանական մասում չկա որևէ հիմնավորում՝ Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 անշարժ գույքի վրա դրված արգելանքի վերաբերյալ:

Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի կոպիտ խախտում՝ ուստի Առաջին ատյանի դատարանի 10.08.2015թ. թիվ ԵԿԳ/0200/01/13 դատավճիռը այդ մասով ենթակա է փոփոխման՝ Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 անշարժ գույքի վրա դրված արգելանքը պետք է վերացնել՝ սույն որոշման օրինական ուժի մեջ մտնելուց հետո» (տե՛ս քրեական գործ, հատոր 24-րդ, թերթեր 238-239):

Վճարելի բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ, 232-րդ, 238-րդ, 376-րդ, 379-րդ, 380-րդ, 382-րդ, 398-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև Վճարելի դատարանի՝ Լիա Ավետիսյանի և Արման Կարախանյանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Բողոքաբերը փաստարկել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, Գ.Նազարյանի՝ վերաքննության կարգով բողոք բերելու բացթողնված ժամկետը հարգելի համարելով, բողոքը վարույթ ընդունելով, այն բավարարելով, մասնավորապես՝ ք.Երևան Բաղրամյան պողոտայի 77 շենքի թիվ 8 տարածքի վրա քննիչի կողմից դրված արգելանքը վերացնելով, թույլ է տվել դատավարական նորմերի կոպիտ խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

12. Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ Գ.Նազարյանը իրավունք չունեի բողոքարկելու սույն գործով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քանի որ վերջինս, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի համաձայն, վերաքննիչ բողոք բերելու իրավասությամբ օժտված անձ չէ: Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Գ.Նազարյանը բաց է թողել Առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռը բողոքարկելու ժամկետը, քանի որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի՝ սույն գործով

Առաջին ատյանի դատարանի դատական ակտը կարող էր վերաքննության կարգով բողոքարկվել այն հրապարակվելու պահից մեկամսյա ժամկետում, մինչդեռ Գ.Նազարյանը, տեղյակ լինելով քննիչի կողմից նախաքննության ընթացքում ք.Երևան, Բաղրամյան 77 շենքի թիվ 8 բնակարանի վրա դրված արգելանքի մասին, այն հանելու պահանջով չի դիմել նախաքննության մարմնին, դատական կարգով չի բողոքարկել արգելանքը դնելու մասին որոշումը, Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում նման պահանջ չի ներկայացրել և միայն Առաջին ատյանի դատավճիռը հրապարակվելուց հետո երկուսուկես ամիս անց, առանց բողոքարկման համար բացթողնված ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու, գույքի վրա դրված արգելանքը հանելու պահանջով դիմել է Վերաքննիչ դատարան՝ խախտելով բողոքարկման ժամկետները և կարգը:

13. Բողոքաբերը նշել է նաև, որ սույն գործով բացակայել են ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77 շենքի թիվ 8 տարածքն արգելանքից հանելու իրավական հիմքերը: Մասնավորապես՝ ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանցագործությամբ պատճառված գույքային վնասների հատուցումը և գույքի բռնագրավումը ապահովելու համար նախաքննության ընթացքում կալանք է դրվել Ա.Անդրեասյանի՝ խնդրո առարկա բնակարանի վրա, իրավացիորեն գտել է, որ արգելանքի տակ մնալու անհրաժեշտությունը դեռ չի վերացել: Բացի այդ, տվյալ անշարժ գույքի հետ կապված քաղաքացիական հայցը չի քննվել, այլ թողնվել է քննվելու քաղաքացիական դատավարության կարգով, ուստի նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, գույքն արգելանքից հանելով, զրկել է տուժողին իր խախտված իրավունքները դատական կարգով արդյունավետորեն վերականգնելու հնարավորությունից:

14. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը, հետազոտելով Գ.Նազարյանի ներկայացրած՝ Երևանի Քննաքնն-Չեյքային վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ թիվ ԵԱԶԳ/0112/02/13 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը, որով Գ.Նազարյանը ճանաչվել է ք.Երևան, Բաղրամյան 77 շենքի թիվ 8 բնակարանի բարեխիղճ ձեռքբերող, խախտել է վերաքննության սահմանները, քանի որ Գ.Նազարյանը չի հիմնավորել, որ օբյեկտիվ հնարավորություն չի ունեցել այն ներկայացնելու Առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ այդ վճիռը կայացվել է 2014 թվականի հունիսի 3-ին:

15. Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ սույն գործով Վերաքննիչ դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ ք.Երևանի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 հասցեում գտնվող տարածքի վրա դրված կալանքի հարցը կարող է քննարկվել տուժող Ա.Գալստյանի քաղաքացիական հայցը քննության առնելուց հետո միայն, քանի որ արգելանքի քննարկ-

ման հարցն անմիջական պատճառական կապի մեջ է գտնվում քաղաքացիական հայցի հետ և բացառապես կարող է լինել քաղաքացիական հայցի ածանցյալ հետևանք, իսկ Վերաքննիչ դատարանը քաղաքացիական հայցը քննված չլինելու պայմաններում անդրադարձել է դրա հետևանքին:

Նշվածից բողոքի հեղինակն ամփոփել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դուրս է եկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից՝ գույքը կալանքից ազատելով հանդես է եկել որպես ընդհանուր իրավասության դատարան, իսկ Գ.Նազարյանին ապօրինաբար բարեխիղճ գնորդ ճանաչելով՝ որպես քաղաքացիական գործով քննություն իրականացնող ընդհանուր իրավասության դատարան: Այս առումով Վերաքննիչ դատարանը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հանդես չի եկել որպես օրենքի հիման վրա ստեղծված դատարան:

16. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը վերացնելու մասով բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 10-ի դատավճի:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ գույքի վրա կալանք դնելը կիրառելու նպատակների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

17. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

I. Գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերն ապահովելու նպատակով գույքի վրա կալանք դնելը.

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գույքի վրա կալանք դնելը կիրառվում է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերն ապահովելու համար:

2. Կալանքը դրվում է կասկածյալի և մեղադրյալի, ինչպես նաև այն անձանց գույքի վրա, որոնց վրա, կասկածյալի և մեղադրյալի գործողությունների համար, կարող է դրվել նյութական պատասխանատվություն՝ անկախ նրանից, թե ինչպիսի գույք է և ում մոտ է գտնվում (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Գույքի վրա կալանք դնելը քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ գործով հավաքված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը, մեղադրյալը կամ այն անձը, որի մոտ գտնվում է գույքը, կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել բռնագրավման ենթակա գույքը:

Մեջբերված նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը սահմանել է գույքի վրա կալանք դնելու՝ որպես քրեադատավարական հարկադրանքի միջոցի կիրառման իրավական հիմքերը և նպատակները: Մասնավորապես, մատնանշված քրեադատավարական դրույթների բովանդակությունից հետևում է, որ գույքի վրա կալանք դնելը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ գործով հավաքված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել առկա գույքը: Ընդ որում, կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցը կոչված է սեփականության կամ այլ գույքային իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու՝

- 1) քաղաքացիական հայցը,
- 2) գույքի հնարավոր բռնագրավումը,
- 3) բռնագանձումը,
- 4) դատական ծախսերը:

19. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը անհրաժեշտ է համարում նախևառաջ անդրադառնալ գույքի հնարավոր բռնագրավման, բռնագանձման և դատական ծախսերի ապահովման նպատակով գույքի վրա կալանք դնելու առանձնահատկություններին:

19.1. ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«Գույքի բռնագրավումը (...)՝ որպես լրացուցիչ պատիժ (...) կարող է] նշանակվել միայն սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում»:

ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գույքի բռնագրավումը դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության:

(...)

6. Բռնագրավման ենթակա չէ դատապարտյալի կամ նրա խնամքի տակ գտնվող անձանց համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապատասխան, որը սահմանված է օրենքով»:

ՀՀ քրեական օրենսգրքի մեջբերված նորմերի ուսումնասիրությունից բխում է, որ որպես լրացուցիչ պատժատեսակ՝ օրենսդիրը նախատեսել է դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հօգուտ պետության բռնագրավելը: Ընդ որում, անձի նկատմամբ գույքի բռնագրավումը որպես լրացուցիչ պատժատեսակ կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ որպես այդպիսին ուղղակիորեն նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայում:

Հարկ է նկատել նաև, որ քննարկվող պատժատեսակի նշանակման դեպքում կարող է բռնագրավվել միայն այն գույքը, որը համարվում է դատապարտյալի սեփականությունը (բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 6-րդ մասում նշված գույքի): Նշյալը ուղղակիորեն բխում է անձնական պատասխանատվության սկզբունքից, ըստ որի՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն անձամբ իր կատարած հանցանքի համար (ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդված):

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու նպատակով կալանք կարող է դրվել միայն որոշակի անձի այնպիսի գույքի վրա, որը բռնագրավման առարկա է: Հակառակ դեպքում գույքի վրա կալանք դնելը կլինի ոչ իրավաչափ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ նպատակով կալանք կարող է դրվել՝

1) միայն այն կասկածյալի կամ մեղադրյալի գույքի վրա, ում մեղսագրվում է այնպիսի հանցագործություն, որի համար որպես լրացուցիչ պատժատեսակ նախատեսված է գույքի բռնագրավումը,

2) կասկածյալի կամ մեղադրյալի միայն այն գույքի վրա, որը համարվում է վերջիններիս սեփականությունը (բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 6-րդ մասում նշված գույքի):

19.2. ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքը (...), բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությանը պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, ենթակա է բռնագանձման՝ հօգուտ պետության:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի համաձայն՝ բռնագանձման ենթակա գույքի վրա կալանքը դրվում է անկախ հանցանք կատարած անձի կամ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1.-րդ մասի համաձայն՝

«Քրեական վարույթն իրականացնող մարմինն անհապաղ կալանք է դնում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բռնագանձման ենթակա գույքի վրա»:

Գույքի վրա կալանք դնելը կիրառելու հաջորդ նպատակը դրա բռնագանձման ապահովումն է: Քրեադատավարական իրավակարգավորումների համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը անհապաղ կալանք է դնում այն գույքի վրա, որը ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 1-ին մասի իմաստով ենթակա է բռնագանձման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում ևս առանցքային նշանակություն ունի գույքի՝ բռնագանձման ենթակա լինելու հանգամանքի պարզումը: Այլ կերպ՝ անհրաժեշտ է բացահայտել, թե արդյոք քրեական գործի համապատասխան ելքի դեպքում գույքը կարող է բռնագանձվել հօգուտ պետության, թե ոչ:

Ընդ որում, հարկ է նշել, որ բռնագանձման ենթակա գույքի վրա կալանք կարող է դրվել անկախ դրա՝ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրա կողմից տիրապետելու հանգամանքից: Այդ առումով Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ հանցանք կատարած անձը կարող է բռնագանձման ենթակա գույքը, օրինակ, սեփականության իրավունքով տրամադրել մեկ այլ անձի՝ հանցագործության կատարման արդյունքում դրա ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված լինելու փաստը քողարկելու նպատակով: Ուստի նման իրավիճակները բացառելու անհրաժեշտությունից ելնելով՝ օրենսդիրը բռնագանձման ենթակա գույքի վրա կալանք դնելու հարցում չի սահմանափակվել այդպիսի գույքի՝ սեփականության իրավունքով միայն կասկածյալին կամ մեղադրյալին պատկանելու հանգամանքով:

Չնայած դրան՝ հաշվի առնելով մասնավոր և հանրային շահերի հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունը՝ նախատեսվել է գույքի վրա բռնագանձում տարածելը բացառող երկու դեպք.

- 1) երբ տվյալ գույքը պատկանում է բարեխիղճ երրորդ անձին,
- 2) երբ տվյալ գույքն անհրաժեշտ է տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար:

Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ բռնագանձման ենթակա գույք չի կարող համարվել, հետևաբար նաև բռնագանձումն ապահովելու նպատակով կալանք չի կարող դրվել այն գույքի վրա, որ թեև համարվում է հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված, սակայն պատկանում է բարեխիղճ երրորդ անձին կամ անհրաժեշտ է տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար:

19.3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատական ծախսերը բաղկացած են՝*

1) տուժողին հանցագործության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման գումարներից, 2) տուժողին, մասնագետին, փորձագետին, վկային ներկայանալու և օրապահիկի ծախսերի հատուցման գումարներից, 3) մասնագետի, փորձագետի, թարգմանչի վարձատրության գումարներից, 4) նշանակված պաշտպանին վճարվելիք գումարներից, 5) իրեղեն ապացույցների պահպանման, առաքման և հետազոտման համար ծախսված գումարներից, 6) հետախուզման համար քրեական հետապնդման մարմնի կողմից ծախսված գումարներից, 7) փորձաքննություն, քննչական փորձարարություն կատարելիս փչացած կամ ոչնչացած իրերի արժեքի և սովյալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած նման այլ ծախսերի հատուցման համար ծախսված գումարներից, 8) քրեական գործով վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների համար ծախսված գումարներից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Սույն օրենսգրքի 168 հոդվածի առաջին մասի 1-6-րդ կետերում թվարկված դատական ծախսերը կարող են դատարանի կողմից դրվել դատապարտյալի վրա»:

Մեջբերված դրույթների վերլուծությունը վկայում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված առանձին դատական ծախսերը դատարանը կարող է դնել դատապարտյալի վրա: Իսկ դրանից անմիջականորեն հետևում է, որ կալանք չի կարող դրվել այն գույքի վրա, որը չի պատկանում կասկածյալին կամ մեղադրյալին, այլ կերպ՝ գույքի վրա կալանք դնելը կիրառելու մյուս նպատակի՝ դատական ծախսերի ապահովումը կենսագործելու համար կարող են սահմանափակվել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի գույքային իրավունքները:

II. Քաղաքացիական հայցի ապահովման նպատակով գույքի վրա կալանք դնելը և դրա հետագա պահպանման հարցի լուծումը.

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, որը դատարանի կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ»:

2. Քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար

(...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի համաձայն՝

«Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարտավոր են քաղաքացիական հայցվորի կամ նրա ներկայացուցչի կամ սեփական նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու քաղաքացիական հայցը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քաղաքացիական հայց ներկայացրած անձն իրավունք ունի հրաժարվել հայցից քրեական գործով վարույթի ցանկացած պահի, եթե դրանով չեն խախտվում այլ անձանց իրավունքները և օրինական շահերը (...):

2. Քաղաքացիական հայցից հրաժարվելն ընդունելը հանգեցնում է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցով վարույթի կարճման և համապատասխան անձին զրկում է տվյալ քաղաքացիական հայցը քրեական դատավարության կարգով կրկին հարուցելուց»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գույքը, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, ազատվում է կալանքից, եթե քաղաքացիական հայցը հետ վերցվելու, կասկածյալին կամ մեղադրյալին վերագրվող արարքի որակումը փոխվելու հետևանքով կամ այլ պատճառներով վերացել է գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը:

(...)

2. Քաղաքացիական հայցվորի կամ այլ շահագրգիռ անձանց միջնորդությամբ դատարանն իրավունք ունի գույքի վրա դրված կալանքը պահպանել նաև քրեական գործով վարույթի ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդվածի համաձայն՝

«Դատավճիռ կայացնելիս դատարանը, ելնելով քաղաքացիական հայցի հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքից, հարուցված հայցը բավարարում է լրիվ կամ մասնակիորեն, կամ մերժում է դրա բավարարումը, կամ այն թողնում է առանց քննության»:

Գույքի վրա կալանք դնելը կիրառելու նպատակներից վերջինը քաղաքացիական հայցի ապահովումն է: Վերը մեջբերված դրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ քաղաքացիական հայցը հանցագործությունից վնաս կրած անձի գույքային շահերի՝ քրեական դատավարության կարգով պաշտպանության նպատակով համապատասխան անձի դեմ ներկայացված հայցադիմումի հիման վրա հարուցված հայցն է:

Քաղաքացիական հայցի քննության արդյունքում դատարանը կարող է կայացնել հետևյալ որոշումներից որևէ մեկը.

- 1) այն լրիվ կամ մասնակիորեն բավարարել,
- 2) մերժել դրա բավարարումը,
- 3) թողնել այն առանց քննության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ երեք որոշումներից յուրաքանչյուրն օժտված է իր ուրույն բնույթով, և դրանցից ամեն մեկի կայացումը տարբեր կերպ է ազդում գույքի վրա դրված կալանքի հետագա պահպանման հարցի լուծման վրա:

20.1. Այսպես՝ քաղաքացիական հայցի բավարարումը ենթադրում է վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին հայցադիմումում նշված խնդրանքի բավարարում: Հետևաբար այն դեպքում, երբ քաղաքացիական հայցը բավարարվում է լրիվ կամ մասնակիորեն, ապա գույքի վրա դրված կալանքը համապատասխան՝ քաղաքացիական հայցով բավարարված հայցապահանջի մատով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մատով սահմանված հիմքերի առկայության պարագայում պետք է, որպես կանոն, պահպանվի մինչև դատական ակտի փաստացի կատարումը: Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մինչև դրա կատարումը համապատասխան անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել առկա գույքը:

Անդրադառնալով քաղաքացիական հայցը դատարանի կողմից մերժելուն՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն դեպքում գույքի վրա դրված կալանքը, ըստ էության, պետք է վերացվի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցը մերժելու դեպքում փաստացի վերանում է նաև գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը:

20.2. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու դեպքում, որպես կանոն, դատարանը պետք է վերացնի գույքի վրա դրված կալանքը: Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը պայմանավորված է նրանով, որ քաղաքացիական հայց չլինելու դեպքում վերանում է նաև այդպիսի հայցի՝ քրեական դա-

տավարության կարգով ապահովման անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ Վճարելի դատարանը փաստում է, որ քրեադատավարական իրավակարգավորումների համաձայն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մաս)՝ քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը դատարանի կողմից առանց քննության թողնվելու դեպքում անձը չի գրկվում հետագայում քաղաքացիական դատավարության կարգով այդպիսի հայց հարուցելու հնարավորությունից:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված գործիքը, այն է՝ քաղաքացիական հայցվորի կամ այլ շահագրգիռ անձանց միջնորդությամբ քրեական գործով վարույթի ավարտից հետո ևս մեկ ամիս գույքի վրա դրված կալանքը պահպանելու հնարավորությունը, լրացուցիչ երաշխիք է քաղաքացիական հայցից հրաժարված անձի համար՝ մինչ քաղաքացիական դատավարության կարգով իր գույքային իրավունքների պաշտպանության հայց ներկայացնելը:

Վերոգրյալի համատեքստում Վճարելի դատարանը, սակայն, հարկ է համարում ընդգծել, որ քաղաքացիական հայցը դատարանի կողմից առանց քննության թողնվելու դեպքում գույքի վրա դրված կալանքը կարող է պահպանվել քրեական գործով վարույթի ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, միայն այն դեպքում, երբ դրա վերաբերյալ առկա է **քաղաքացիական հայցվորի կամ այլ շահագրգիռ անձանց կողմից** դատարան ներկայացված միջնորդություն: Այլ կերպ՝ այդպիսի միջնորդության բացակայության դեպքում դատարանն իրավունք չունի սեփական նախաձեռնությամբ պահպանելու գույքի վրա դրված կալանքը:

21. Մույն գործի փաստերի համաձայն՝ ամբաստանյալ Ա.Անդրեասյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2011 թվականի ապրիլի 12-ին խարդախությամբ սեփականության իրավունք է ձեռք բերել տուժող Ա.Գալստյանի՝ առանձնապես խոշոր չափերի՝ 94.005.000 ՀՀ դրամ արժողությամբ՝ ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ: Մասնավորապես՝ ամբաստանյալ Ա.Անդրեասյանը խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով, խարդախություն կատարելու ուղղակի դիտավորությամբ համոզել է տուժող Ա.Գալստյանին նշված գույքը 250.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց վաճառել իրեն: Այդ գույքի գրավադրման արդյունքում բանկից ստացված վարկային միջոցները ամբաստանյալ Ա.Անդրեասյանը խոստացել է ներդնել ձեռնարկատիրական գործունեության մեջ, իսկ գույքի արժեքը վճարել 2012 թվականի դեկտեմբերին: Ա.Գալստյանը, վստահելով Ա.Անդրեասյանին և հավատարով նրա կեղծ խոստումներին, համաձայնել է, որից հետո՝ 2011 թվականի ապրիլի 12-ին, Ա.Անդրեասյանի, Կ.Թումիկյանի և «Յունիբանկ» ՓԲ ընկերության միջև կնքվել է «Անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի» պայմանագիր: Սակայն հետագայում

ամբաստանյալ Ա.Անդրեասյանը, իր դիտավորության համաձայն, տուժող Ա.Գալստյանին չի վճարել գույքի արժեքը, իսկ այն վերադարձնելու հնարավորությունը բացառելու նպատակով 2012 թվականի նոյեմբերի 11-ին վաճառել է Ռ.և Կ. Բաբակեխյաններին *(տե՛ս սույն որոշման 5-րդ կետը)*:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ խնդրո առարկա անշարժ գույքի վրա դրվել է կալանք՝ քրեական գործով քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերն ապահովելու նպատակով *(տե՛ս սույն որոշման 1-ին և 7-րդ կետերը)*:

Նույն մարմնի՝ 2013 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ Ա.Գալստյանը ճանաչվել է քաղաքացիական հայցվոր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս մեղադրյալ Ա.Անդրեասյանի դեմ ներկայացրել է ընդհանուր 48.832.840 ՀՀ դրամի և 94.005.000 ՀՀ դրամ արժուողությամբ անշարժ գույքի (ք. Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող) նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ քաղաքացիական հայց *(տե՛ս սույն որոշման 1-ին կետը)*:

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է, որ ամբաստանյալը կատարել է հանցանքներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երկու դրվագ), 178-րդ - հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, որոնցով և նա պետք է պատասխանատվության ենթարկվի: Միևնույն ժամանակ Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում տուժող Ա.Գալստյանի ներկայացուցիչ Ս.Սարգսյանը հայտնել է քաղաքացիական հայցը քննության չառնելու վերաբերյալ տուժող Ա.Գալստյանի և նրա կնոջ՝ Վ.Գալստյանի ցանկության մասին, որպիսի հանգամանքը հիմք ընդունելով՝ ներկայացված քաղաքացիական հայցը Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 10-ի դատավճռով **թողնվել է առանց քննության**: Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է նաև, որ հանցագործությամբ պատճառված գույքային վնասների հատուցման և գույքի բռնագրավման ապահովման նպատակով նախաքննության ընթացքում **գույքի վրա դրված կալանքը պետք է պահպանվի, քանի որ դրա անհրաժեշտությունը չի վերացել** *(տե՛ս սույն որոշման 9-րդ կետը)*:

Վերաքննիչ դատարանը փոփոխել է Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 10-ի դատավճիռը և վերացրել ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով Ա.Անդրեասյանի մեղավորությունը համապատասխան հանցագործությունների կատարման մեջ և Առաջին ատյանի դատարանի դատավճիռը համապատասխան մասերով թողնելով անփոփոխ, միաժամանակ փաստել է, որ **Վ.Գալստյանը**, որը լիազորագրի հիման վրա գործել է նաև **Ա.Գալստյանի** անունից, այնպես էլ **Կ.Թումիկյանը**, Ա.Անդրեասյանը **վիճելի բնակարանը չեն կորցրել, նշված գույքը նրանցից**

չի հափշտակվել, և հաստատվել է, որ նշված գույքը **Վ.Գալստյանի, այն-պես էլ Կ.Թումիկյանի, Ա.Անդրեասյանի** տիրապետումից դուրս է եկել **Նրանց կամքով**՝ իրավական նորմերի պահպանմամբ՝ բոլոր գործարքները սեփականատերերի միջև վավերացվել է նոտարական կարգով:

Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ Առաջին ատյանի դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դ.Նազարյանը՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 03.06.2014թ. թիվ ԵԱԲԴ/1112/02/13 օրինական ուժ ստացած վճռով որպես գույքի բարեխիղճ ձեռք բերող, գրկված է իր սեփականությունը տնօրինելու իրավունքից, և գույքի վրա դրված արգելանքի պահպանմամբ շարունակվում է խախտվել գույքից անարգել օգտվելու նրա իրավունքը (*տե՛ս սույն որոշման 3-րդ և 9-րդ կետերը*):

22. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 18-20.2-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը պահպանելու իրավական հիմքերը բացակայում են: Մասնավորապես՝

1) այն սեփականության իրավունքով չի պատկանում ամբաստանյալ Ա.Անդրեասյանին (*տե՛ս սույն որոշման 6.2.-րդ կետը*), ուստի սույն որոշման 19.1.-րդ և 19.3.-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բացակայում է դրա վրա դրված կալանքի՝ գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերը ապահովելու նպատակով պահպանման անհրաժեշտությունը,

2) այն ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի իմաստով բռնագանձման ենթակա գույք չէ, քանի որ թեև ստացվել է հանցագործության կատարման արդյունքում, սակայն սեփականության իրավունքով պատկանում է բարեխիղճ երրորդ անձին (*տե՛ս սույն որոշման 8-րդ կետը*): Հետևաբար հիմք ընդունելով սույն որոշման 19.2.-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բացակայում է դրա վրա դրված կալանքի՝ գույքի բռնագանձումն ապահովելու նպատակով պահպանման անհրաժեշտությունը,

3) քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության, իսկ գույքի վրա դրված կալանքը պահպանելու միջնորդություն դատարան չի ներկայացվել (*տե՛ս սույն որոշման 9-րդ կետը*), ուստի հաշվի առնելով սույն որոշման 20.2-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բացակայում է խնդրո առարկա գույքի վրա դրված կալանքի՝ քաղաքացիական հայցն ապահովելու նպատակով պահպանման անհրաժեշտությունը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առկա չեն գույքի վրա դրված կալանքը պահպանելու՝

քրեադատավարական օրենքով սահմանված իրավական հիմքերը, ուստի հիմնավոր չէ Առաջին ատյանի դատարանի այն եզրահանգումը, որ ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը դեռևս չի վերացել (*տե՛ս սույն որոշման 9-րդ կետը*):

23. Միևնույն ժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ **Վ.Գալստյանը, որը լիազորագրի հիման վրա գործել է նաև Ա.Գալստյանի անունից, այնպես էլ Կ.Թումիկյանը վիճելի բնակարանը չեն կորցրել, նշված գույքը նրանցից չի հափշտակվել, և հաստատվել է, որ նշված գույքը Վ.Գալստյանի, այնպես էլ Կ.Թումիկյանի տիրապետումից դուրս է եկել նրանց կամքով՝ իրավական նորմերի պահպանմամբ**: Վճարելի դատարանի վերջին դիրքորոշումը պայմանավորված է նրանով, որ ամբաստանյալ Ա.Անդրեասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղավոր ճանաչելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները Վերաքննիչ դատարանի կողմից ճանաչվել են հիմնավոր: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ ապացուցված է ամբաստանյալ Ա.Անդրեասյանի մեղավորությունն իրեն մեղսագրված հանցագործության կատարման մեջ (*այն է՝ 2011 թվականի ապրիլի 12-ին խարդախությամբ սեփականության իրավունք է ձեռք բերել Ա.Գալստյանի առանձնապես խոշոր չափերի՝ 94.005.000 ՀՀ դրամ արժողությամբ՝ Երևանի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 անշարժ գույքի նկատմամբ*), որպիսի պայմաններում փաստելով, որ նշված անշարժ գույքը չի հափշտակվել՝ չի կարող իրավաչափ համարվել (*տե՛ս սույն որոշման 10-րդ կետը*):

24. Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն եկել է ճիշտ եզրահանգման առ այն, որ սույն գործով առկա չեն գույքի վրա դրված կալանք պահպանելու՝ քրեադատավարական օրենքով սահմանված իրավական հիմքերը, սակայն սխալ է պատճառաբանել դատական ակտը: Ուստի հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունն իրավաչափ է:

25. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 12-րդ կետում բարձրացրած փաստարկներին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնավորված ու պատճառաբանված չեն, գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, մասնավորապես՝ դիմող Գ.Նազարյանի վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունից հետևում է, որ վերջինս միջնորդություն է ներկայացրել վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին (տե՛ս քրեական գործ, հատոր 23-րդ, թերթ 176):

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 13-րդ կետում բարձրացրած փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով սույն որոշման 22-24-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները, դրանք հիմնագուրկ է համարում:

Անդրադառնալով բողոք բերած անձի՝ սույն որոշման 14-15-րդ կետերում մատնանշված փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը գործել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, հետևաբար բողոքաբերի փաստարկներն անհիմն են:

26. Այսպիսով, հիմք ընդունելով վերը շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, հետևաբար բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը վերացնելու մասով, թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

2. Տուժող Ա.Գալստյանի ներկայացուցիչ Ս.Սարգսյանի վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Արթուր Վասիլի Անդրեասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը՝ ք.Երևան, Բաղրամյան պողոտայի 77-րդ շենք, թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը վերացնելու մասով, թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

27.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ/0034/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Սկրտիչ Արայիկի Պողոսյանի, Հովհաննես Վարդյայի Մարտիրոսյանի և Սեյրան Մանվելի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հոկտեմբերի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 68121914 քրեական գործը:

2014 թվականի դեկտեմբերի 20-ին Հովհաննես Մարտիրոսյանը, Սկրտիչ Պողոսյանը և Սեյրան Պետրոսյանը ձերբակալվել են:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումներով Հովհաննես Մարտիրոսյանը և Սկրտիչ Պողոսյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2014 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումներով Հ.Մարտիրոսյանի և Ս.Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ Սեյրան Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ Ս.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

2015 թվականի ապրիլի 27-ին Ս.Պողոսյանին, Հ.Մարտիրոսյանին և Ս.Պետրոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրանց նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով:

2015 թվականի մայիսի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 21-ի դատավճռով Ս.Պողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման՝ 3 տարի 6 ամիս ժամկետով: Դատավճիռների համակցությամբ Ս.Պողոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 տարի 6 ամիս ժամկետով և տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

Հ.Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման՝ 3 տարի 6 ամիս ժամկետով:

Ս.Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով և դատապարտվել տուգանքի՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ Ս.Պետրոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել տուգանք՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2015 թվականի հոկտեմբերի 22-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 21-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի մարտի 11-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Մ.Պողոսյանին, Հ.Մարտիրոսյանին և Ս.Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, «նախնական համաձայնությամբ 2014թ-ի դեկտեմբերի 19-ին՝ ժամը 22-ի սահմաններում, Գյումրի քաղաքի կայարանամերձ հրապարակի 2 հասցեում գտնվող գնացքների կայարանից դեպի արևելք ընկած տեղանքում Շիրակի մարզի Փոքր Սարիար գյուղի բնակիչ Արսեն Մամբրեի Գրիգորյանի գույքը բացահայտ հափշտակելու դիտավորությամբ, տեղյակ լինելով, որ Արսեն Գրիգորյանը տեղանքին անձանոթ է, խանութ է փնտրում՝ գնումներ կատարելու համար և նրա մոտ գումար կա, օգտվելով նրա միայնակ լինելու, շրջապատում մարդ չլինելու և տեղանքն ամայի լինելու հանգամանքներից, պահանջել են գումար: Արսեն Գրիգորյանից մերժում ստանալով՝ Սկրտիչ Պողոսյանը, Արսեն Գրիգորյանի առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել՝ մեկ անգամ բռունցքով հարվածել է վերջինիս դեմքին՝ պատճառելով առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք, որից հետո Հովհաննես Մարտիրոսյանը բռնել է Արսեն Գրիգորյանի ձեռքերից, իսկ Սկրտիչ Պողոսյանը և Սեյրան Պետրոսյանը ստուգել են Արսեն Գրիգորյանի գրպանները և բաճկոնի գրպանից հայտնաբերելով հափշտակել են զգալի չափի՝ 57.000 ՀՀ դրամ գումար և դիմել փախուստի: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 123-131):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) [Ա]մբաստանյալներ Սկրտիչ Պողոսյանի, Սեյրան Պետրոսյանի և Հովհաննես Մարտիրոսյանի [նկատմամբ] պատիժ նշանակելիս [Առաջին ատյանի դատարանը] հաշվի է առնում կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, յուրաքանչյուրի կատարած գործողությունները և հանցավորների անձը.

Ամբաստանյալ Սկրտիչ Արայիկի Պողոսյանի պատասխանատվությունը և պատիժն ինչպես մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքներ չի նշում, իսկ անձը բնութագրող հանգամանք է համարում բնակության վայրում դրական բնութագրվելը, անկեղծորեն խոստովանելն ու գղջալը:

Ամբաստանյալ Հովհաննես Վոլոդյայի Մարտիրոսյանի պատասխանատվությունը և պատիժն ինչպես մեղմացնող, այնպես էլ ծանրացնող

հանգամանքներ չի նշում, իսկ անձը բնութագրող հանգամանք է համարում բնակության վայրում դրական բնութագրվելը:

Ամբաստանյալ Սեյրան Մանվելի Պետրոսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է համարում պատճառված վնասը կամովին վերականգնելը, խնամքին մինչև 14 տարեկան (...)՝ հիվանդ երեխա ունենալը, իսկ անձը բնութագրող հանգամանքներ է համարում կատարածի համար անկեղծորեն խոստովանելն ու գղջալը, դրական բնութագրվելը, նախկինում արատավորված չլինելը:

Պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ չի նշում:

(...) [Ա]նդրադառնալով ամբաստանյալներ Սկրտիչ Պողոսյանի և Հովհաննես Մարտիրոսյանի [նկատմամբ] նշանակվող պատժի տեսակի հարցին, (...) [Առաջին ատյանի դատարանը] հանգում է հետևության, որ նրանց [նկատմամբ] պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով:

(...) [Ա]նդրադառնալով ամբաստանյալ Սեյրան Մանվելի Պետրոսյանի [նկատմամբ] նշանակվող պատժի տեսակի հարցին, (...) հաշվի առնելով նրա անձը բնութագրող տվյալները պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները՝ հանգում է հետևության, որ նրա [նկատմամբ] պատիժ պետք է նշանակել տուգանքի ձևով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 74-78):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում մեղադրող Կ.Հովհաննիսյանը նշել է. «(...) [Ա]ռաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ, այն է՝ Սկրտիչ Պողոսյանի և Հովհաննես Մարտիրոսյանի արարքում որպես ծանրացնող հանգամանք չի նշել հանցանքը կատարելու ռեցիդիվը:

Այսպես.

ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված տեղեկանքի համաձայն՝ Սկրտիչ Պողոսյանը 15.06.2012 թվականին Ռ-Գ Լազարևսկի շրջանի դատարանի կողմից Ռ-Գ քրեական օրենսգրքի 158-րդ - հոդվածի 2-րդ մասով /գողություն, որը կատարվել է զգալի չափերով/ դատապարտվել է ազատազրկման՝ 1 տարի ժամկետով: Այնուհետև Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 19.12.2014 թվականի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով դատապարտվել է տուգանքի նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

Հովհաննես Մարտիրոսյանը՝ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.09.2012 թվականի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 177-րդ հոդվածի 2-րդ - մասի 3-րդ կետով դատապարտվել է տուգանքի 500.000 ՀՀ դրամի չափով, այնուհետև 13.12.2012 թվականին տուգանքի վճարման համար սահմանվել է 1 տարի ժամանակ, որից հետո 04.03.2013 թվականին տուգանքը փոխարինվել է 2200 ժամ հանրային աշխատանքով:

(...)

Ինչ վերաբերում է Սեյրան Պետրոսյանի նկատմամբ տուգանքի ձևով պատիժ նշանակելուն, ապա ակներև է, որ դատարանն անհամաչափ, ակնհայտ մեղմ պատիժ է նշանակել և հաշվի չի առել Հայաստանի Հանրապետությունում ձևավորված դատական պրակտիկան, կատարված հանցագործության բնույթն ու հանրորեն վտանգավորության աստիճանը» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 2-9):

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Սույն քրեական գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ամբաստանյալներ Մ.Պողոսյանի, Հ.Մարտիրոսյանի և Ս.Պետրոսյանի նկատմամբ պատիժներ նշանակելիս ընդհանուր իրավասության դատարանը հաշվի է առել նրանց կողմից կատարած հանցանքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, մասնավորապես այն, որ Սկրտիչ Արայիկի Պողոսյանի՝ բնակության վայրում դրական բնութագրվելը, անկեղծորեն խոստովանելն ու զղջալը, Հովհաննես Վոլոդյայի Մարտիրոսյանի՝ բնակության վայրում դրական բնութագրվելը, Սեյրան Մանվելի Պետրոսյանի կողմից պատճառված վնասը կամովին վերականգնելը, խնամքին մինչև 14 տարեկան (...)՝ հիվանդ երեխա ունենալը, կատարածի համար անկեղծորեն խոստովանելն ու զղջալը, դրական բնութագրվելը, նախկինում արատավորված չլինելը: Տուժող Ա.Գրիգորյանը գրավոր դիմում է ներկայացրել այն մասին, որ ամբաստանյալներից որևէ պահանջ կամ բողոք չունի, խնդրում է նրանց նկատմամբ մեղմ մոտենալ: (...)

Ընդհանուր իրավասության դատարանը նման պայմաններում ամբաստանյալներ Մ.Պողոսյանի, Հ.Մարտիրոսյանի և Ս.Պետրոսյանի [նկատմամբ] նշանակել է արդարացի պատիժներ, որոնք բխում են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

Այսպիսով, մեղադրողի վերաքննիչ բողոքը, որով վերջինս ըստ էության վիճարկում է ամբաստանյալների կողմից կատարած արարքների բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը և գտնում, որ դատարանը, ամբաստանյալների նկատմամբ նշանակելով մեղմ պատիժներ, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի վերոգրյալ դրույթների /10-րդ, 48-րդ հոդվածի 2-րդ մասի, 61-62-րդ հոդվածների/ պահանջները՝ պետք է մերժել՝ նկատի ունենալով, որ մեղադրողի վերաքննիչ բողոքի փաստարկները բավարար չեն ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատիժները խստացնելու համար: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 68-76):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալների նկատմամբ պատիժ նշանակելիս խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ հոդվածների պահանջները՝ կայացնելով անհիմն և անօրինական դատական ակտ:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկների՝ բողոքաբերը վկայակոչել է ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ և 84-րդ հոդվածներով ամրագրված նորմերը և գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ արձանագրել, որ ամբաստանյալներ Մ.Պողոսյանի և Հ.Մարտիրոսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել հանցանքը կատարելու ռեցիդիվը՝ որպես այդ անձանց պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք:

Բացի այդ, բողոք բերած անձը վերլուծել է Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մարաթյանի* գործով թիվ ԵՇԳ-0029/01/08 որոշմամբ շարադրված իրավական դիրքորոշումները և եզրահանգել, որ ամբաստանյալ Մ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված տուգանք պատժատեսակը չի բխում նրան մեղսագրվող հանցագործության դեմ իրականացվող քրեական քաղաքականության պահանջներից: Հետևաբար, ըստ բողոքաբերի՝ նշանակված պատժով անտեսվել է քրեական օրենսդրությամբ պահպանվող՝ կոնկրետ հասարակական հարաբերությունների սոցիալական նշանակությունը:

Ամփոփելով՝ բողոքի հեղինակը գտել է, որ ամբաստանյալներ Մ.Պողոսյանի, Հ.Մարտիրոսյանի և Մ.Պետրոսյանի նկատմամբ նշանակվել են անհամաչափ պատիժներ, ինչը հակասում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին:

10. Բողոքաբերը վերլուծել է նաև դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ քրեադատավարական նորմերն ու դրանց մեկնաբանման կապակցությամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ արձանագրելով, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է չպատճառաբանված դատական ակտ: Մասնավորապես, բողոք բերած անձը փաստել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից որևէ անդրադարձ չի կատարվել մեղադրողի վերաքննիչ բողոքում բարձրացված փաստարկներին, ինչը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ, 393-րդ հոդվածի 2-րդ մասերին, ինչպես նաև՝ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԳ-0058/11/09, թիվ ԵԷԳ-0030/01/12 և թիվ ԱՐԳ-0121/01/11 որոշումներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանը գտնում է, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշների տեսանկյունից վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալու իրավական հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այս առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի կողմից քննության առնվող իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանը գնահատման ենթարկել է արդյոք մեղադրողի վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկները, և նույն դատարանի որոշումը բավարարու՞մ է դատական ակտերի պատճառաբանվածության վերաբերյալ պահանջին:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:*

Նույն օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով (...):»:*

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել *Ֆ.Գալստյանի, Գ.Խնուսյանի, Է.Մարգարյանի* գործերով կայացված որոշումներում: Մասնավորապես *Ֆ.Գալստյանի* գործով որոշման մեջ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանդություն է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:*

(...) Պատճառաբանված որոշման քացակայությունն արդեն իսկ օրենկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման (...):» (տե՛ս Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

Չարգացնելով Ֆ.Գ.ալստյանի գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ *Գ.Խնուսյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) *հաշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ (...) քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է (...)*» (տե՛ս Գևորգ Խնուսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԳ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

Է.Մարգարյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) *դատական ակտի պատճառաբանվածության չափանիշը վերաբերելի է նաև վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության և որ իրավանդությունը է դեկավարվել նման որոշում կայացնելիս:*

(...) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերոնշյալ պահանջների պահպանման պարագայում միայն վճռաբեկ դատարանը հնարավորություն կունենա ստուգելու կայացված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը» (տե՛ս Էրիկ Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՍԳ-3/0045/01/13 որոշման 13-րդ կետը):

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:*

Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառաբանվածության չափանիշների տեսանկյունից վերլուծելով մեջբերված նորմը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ոչ միայն նախանշում են վերաքննիչ վերանայման սահմանները, այլ նաև կանխորոշում են այն հարցերի շրջանակը, որոնք պետք է քննարկման առարկա դարձվեն վերաքննիչ վարույթի շրջանակներում և որոնց կապակցությամբ վերաքննիչ դատարանի եզրահանգումները պետք է արտացոլվեն վարույթը եզրափակող դատական ակտում: Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին՝ արդյոք վերաքննիչ դատարանը պարտավոր է անդարադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին և պատճառաբանել դրանցից յուրաքանչյուրի կապակցությամբ իր եզրահանգումները:

Այսպես՝ արդար դատաքննության իրավունքի համատեքստում անդրադառնալով դատական ակտի պատճառաբանվածության խնդրին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան)՝ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մա-

սին, որ չնայած «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը պարտավորեցնում է դատարաններին պատճառաբանել իրենց դատական ակտերը, սակայն դա չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած փաստարկի առնչությամբ պատճառաբանված պատասխան ներկայացնելու պահանջ (տե՛ս *Van de Hurk v. the Netherlands* գործով Եվրոպական դատարանի՝ 1994 թվականի ապրիլի 19-ի վճիռը, գանգատ թիվ 16034/90, կետ 61): Դատարանի որոշումից պետք է պարզ դառնա, որ գործի համար էական նշանակություն ունեցող հարցերը քննարկվել են (տե՛ս *Boldea v. Romania* գործով Եվրոպական դատարանի՝ 2007 թվականի փետրվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 19997/02, կետ 30), և ներկայացված պատճառաբանությունները սուկ՝ առանց լրացուցիչ հիմնավորումների, ստորադաս ատյանի եզրահանգումների հավանություններ չեն (տե՛ս *Helle v. Finland* գործով Եվրոպական դատարանի՝ 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 20772/92, կետ 60):

15. Սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ պետք է անդրադառնա բողոքի հիմքերին: Վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ վերաքննիչ բողոք բերելու հիմքը դատական սխալն է, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև նոր երևան եկած կամ նոր հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 308.1-րդ հոդված): Այլ խոսքով՝ վերաքննիչ բողոքի հիմքն ինքնին օժտված է գործի ելքի վրա ազդեցություն ունենալու հատկանիշով:

Ինչ վերաբերում է բողոքի հիմնավորումներին անդրադառնալու հարցին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ բողոքի այն հիմնավորումներին, որոնք ողջամտորեն կարող են ազդեցություն ունենալ գործի համար նշանակություն ունեցող հարցերի լուծման համար և պատշաճ պատճառաբանել դրանց վերաբերյալ իր եզրահանգումները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ չափանիշների պահպանման դեպքում միայն վերաքննիչ դատարանի որոշումը կհամապատասխանի դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ օրենսդրական պահանջին և դրա կապակցությամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալներ Մ.Պողոսյանի և Հ.Մարտիրոսյանի պատասխանատվությունն ու պատիժն ինչպես մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքներ չի արձանագրել, հաշվի է առել ամբաստանյալների դրական բնութագրվելը, Մ.Պողոսյանի դեպքում նաև՝ անկեղծորեն խոստովանելն ու զղջալը, և նրանց նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկման ձևով: Առաջին ատյանի դատարանը Ս.Պետրոսյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգա-

մանքներ չի արձանագրել, մեղմացնող է համարել պատճառված վնասը կամովին վերականգնելը, խնամքին մինչև 14 տարեկան՝ վատառողջ երեխա ունենալը, ինչպես նաև հաշվի է առել մեղքն անկեղծորեն խոստովանելն ու զոջալը, դրական բնութագրվելը, նախկինում արատավորված չլինելը և պատիժ է նշանակել տուգանքի ձևով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մեղադրող Կ.Հովհաննիսյանն իր վերաքննիչ բողոքում փաստել է, որ ամբաստանյալներ Մ.Պողոսյանի և Հ.Մարտիրոսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես ծանրացնող հանգամանք պետք է հաշվի առնվեր հանցագործությունների ռեցիդիվը, քանի որ նրանցից յուրաքանչյուրը դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված արարքի համար: Բացի այդ, բողոքաբերը գտել է, որ ամբաստանյալ Ս.Պետրոսյանի նկատմամբ նշանակվել է ոչ համաչափ պատիժ՝ տուգանք, ինչը չի համապատասխանում կատարված հանցագործության հանրային վտանգավորության բնույթին: Ավելին՝ ըստ մեղադրողի՝ նշանակված պատժով անտեսվել է քրեական օրենսդրությամբ պահպանվող կոնկրետ հասարակական հարաբերությունների սոցիալական նշանակությունը և այս ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը, իր որոշման «Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը» բաժնում մանրամասն շարադրել է դատախազի վերաքննիչ բողոքը, սակայն դատական ակտի պատճառաբանական մասում որևէ անդրադարձ չի կատարել բողոքի փաստարկներին՝ բավարարվելով Առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի առնված հանգամանքները վերաշարադրելով: Արդյունքում առանց որևէ լրացուցիչ հիմնավորման Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալների նկատմամբ նշանակել է արդարացի պատիժներ, որոնք բխում են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ - հոդվածներով սահմանված արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

17. Սույն որոշման 15-րդ կետում ձևավորված իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքի հիմնավորումներն առ այն, որ Առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս ամբաստանյալներ Մ.Պողոսյանի և Հ.Մարտիրոսյանի նկատմամբ որպես ծանրացնող հանգամանք հանցագործությունների ռեցիդիվը, իսկ Ս.Պետրոսյանի նկատմամբ՝ կատարված հանցագործության հանրային վտանգավորության բնույթը և աստիճանը հաշվի չեն առնվել, ողջամտորեն կարող են ազդել գործի համար նշանակություն ունեցող հարցի՝ պատժի արդարացիության

գնահատման վրա: Նման պայմաններում դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի իմաստով Վերաքննիչ դատարանը պարտավոր էր քննարկման առարկա դարձնել բողոքի նշված հիմնավորումները և արդյունքում պատճառաբանված որոշում կայացնել այն մասին, թե ո՞ր իրավանորմերով ղեկավարվելու արդյունքում և ի՞նչ հանգամանքների հիման վրա է եկել այս կամ այն հետևության:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրողի վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկները գնահատման չենթարկելու պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը չի բավարարում դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ պահանջին:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 385-րդ և 393-րդ հոդվածների խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալներ Մ.Պողոսյանի, Հ.Մարտիրոսյանի և Ս.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատիժների անհամաչափ լինելու մասին բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը) հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Սկրտիչ Արայիկի Պողոսյանի, Հովհաննես Վոլոդյայի Մարտիրոսյանի և Սեյրան Մանվելի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 21-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալներ Սկրտիչ Արայիկի Պողոսյանի և Հովհաննես Վոլոդյայի Մարտիրոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, և ամբաստանյալ Սեյրան Մանվելի Պետրոսյանի

նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

28.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0337/06/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
պաշտպան Մ.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի հունվարի 11-ի որոշման դեմ մեղադրյալ Լևոն Պավլուշայի Հարությունյանի պաշտպան Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի դեկտեմբերի 3-ին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 58217215 քրեական գործը:

2015 թվականի դեկտեմբերի 15-ին Լևոն Հարությունյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ Լ.Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադր-

րանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ միջնորդություն է հարուցվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Լ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց 2 ամիս ժամկետով կալանավորում կիրառելու մասին:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ Լ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2016 թվականի հունվարի 11-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունվարի 11-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրյալ Լ.Հարությունյանի պաշտպան Մ.Սարգսյանը:

Վճարելի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 11-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Լ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա, զբաղեցնելով ՀՀ ԱԱԾ սահմանապահ գործերի թիվ 5073 գործմասի հրամանատարի պաշտոնը, հանդիսանալով պաշտոնատար անձ, նույն գործմասի վաշտի հրամանատար Արտյոմ Ավետիսյանի միջնորդությամբ, վերջինիս ծանոթ Արմինե Խաչատրյանին պայմանագրային ծառայության ընդունելու համար 2013 թվականի մայիսին պահանջել և որպես կաշառք ստացել է խոշոր չափերով՝ 324.000 ՀՀ դրամին համարժեք 1.500 ԱՄՆ դոլար, որից հետո Արմինե Խաչատրյանը որպես պայմանագրային ծառայող, ծառայության է անցել նշված գործմասում:*

Թիվ 5073 գործմասի ծառայողական ավտոմեքենայի վարորդ Արթուր Քոչարյանի ներկայացրած անձանց նույն գործմասում պայմանագրային ծառայության ընդունելու համար պահանջել և Արթուր Քոչարյանի միջոցով 2015թ. հուլիսին որպես կաշառք Էդգար Մելքոնյանից ստացել է խոշոր չափերով՝ 381.720 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար, իսկ 2015թ. սեպտեմբերին Վալերի Մուրադովից՝ խոշոր չափերով՝ 384.992 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար, որից հետո նշված անձինք՝ որպես պայմանագրային զինծառայողներ, ծառայության են անցել գործմասում» (տե՛ս նյութեր, թերթ 9):

6. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքում Լ.Հարությունյանի պաշտպան Մ.Սարգսյանը խնդրել է. «(...) Լևոն Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին՝ [Առաջին ատյանի դատարանի] (...) որոշումը վերացնել» (տե՛ս նյութեր, թերթեր 52-60):

7. Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաձայն՝ «(...) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ և 394-րդ հոդվածների] բովանդակությունից ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատական ակտը վերացնելու լիազորությամբ օժտված չէ:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը պետք է մերժել:

Վերաքննիչ դատարանը, (...) հաշվի առնելով, որ վերաքննիչ բողոքով ներկայացվել է այնպիսի պահանջ, որը լուծելու լիազորությամբ դատարանն օժտված չէ, ուստի գտնում է, որ նման պայմաններում բողոքում բերված հիմքերը և հիմնավորումները քննության առարկա չեն կարող դառնալ (...)» (տե՛ս նյութեր, թերթեր 77-80):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ պաշտպան Մ.Սարգսյանն արձանագրել է, որ իր ներկայացրած բողոքը Վերաքննիչ դատարանը մերժել է՝ ստորադաս դատարանի դատական ակտը վերացնելու լիազորությամբ օժտված չլինելու պատճառաբանությամբ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն, ըստ բողոքաբերի, պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 6-րդ մասի կարգով վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժեր, քանի որ այդ բողոքի պահանջի ձևակերպման ժամանակ տեղի էր ունեցել տեխնիկական վրիպակ, այն է՝ դրանում ներկայացվել էր Առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերացնելու պահանջ:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել վերաքննիչ բողոքում բերված հիմքերը և հիմնավորումները, ինչի հետևանքով մեղադրյալ Լ.Հարությունյանը գրվել է արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքներից: Արդյունքում, ըստ բողոքաբերի, խախտվել են ՀՀ Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 18-րդ, 19-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 13-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ հոդվածի, «Քաղաքացիական և քաղաքական իրա-

վունքների մասին» միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները:

9. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ պաշտպան Մ.Սարգսյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված է արդյոք մեղադրյալ Լ.Հարությունյանի պաշտպան Մ.Սարգսյանի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

11. «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով գրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհասպաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:*

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Անձնական ազատությունից գրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից գրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից գրկելը ոչ իրավաչափ է»:*

Մեջբերված նորմերով նախատեսված է անձի ազատության իրավունքի ապահովման կարևոր դատավարական երաշխիք՝ ի դեմս իրեն ազատությունից գրկելը դատական կարգով վիճարկելու իրավունքի: Սարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դատական վարույթին, արձանագրել է, որ պարտադիր չէ, որ դրա վրա տարածվեն քրեական և քաղաքացիական վարույթների համար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված երաշխիքները: Այդուհանդերձ, էական է, որ տվյալ անձը օգտվի դատարանի մատչելիության իրավունքից և անձամբ կամ, անհրաժեշտության դեպքում, ներկայացուցչի միջոցով լաված լինելու հնարավորություն ունենա, հակառակ դեպքում կհամարվի, որ նրան չեն տրամադրվել «ազատությունից գրկելու վարույթի հիմնարար երաշխիքները» (տե՛ս Winterwerp v. The Netherlands գործով Եվրոպական դատարանի՝ 1979 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 6301/79, կետ 60):

12. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական*

մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր որ ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր որ ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր որ ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:*

Մեջբերված միջազգային և ներպետական իրավանորմների համադրված վերլուծությունից բխում է, որ դատարանի մատչելիության իրավունքի ապահովումն արդար դատաքննության հիմնարար իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից մեկն է: Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն սահմանված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Եվրոպական դատարանն այդ իրավունքը ճանաչել է որպես 6-րդ հոդվածի անբաժանելի տարր՝ գտնելով, որ եթե անձը գրկված է դատարանի մատչելիության իրավունքից, իմաստագուրկ է նաև արդար դատաքննության իրավունքը: Այսպես՝ *Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով վճռում Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ արդարադատության մատչելիության իրավունքը Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների անբաժանելի մասն է: Ընդ որում, այս եզրակացությունը հիմնված է նշված հոդվածի առաջին նախադասության տերմինաբանության վրա, որը մեկնաբանվել է այդ հոդվածի համատեքստում՝ հաշվի առնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նպատակն ու առարկան, ինչպես նաև իրավունքի համընդհանուր սկզբունքները (տե՛ս *Golder v. The United Kingdom* գործով 1975 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 4451/70, կետեր 28, 36):

Հիրշհորն ընդդեմ Ռումինիայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրությի հիման վրա, որ դատարան լու իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է Եվրոպական

դատարանը: Անհրաժեշտ է հիմնավորել, որ կիրառված սահմանափակումները դատարանն դիմելու՝ անձի իրավունքն այն աստիճան չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ դրա արդյունքում խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չհետապնդի, և առկա չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև (տե՛ս Hirschhorn v. Romania գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, զանգատ թիվ 29294/02, կետ 50):

12.1. Վերոնշյալ կոնվենցիոն, սահմանադրական և օրենսդրական դրույթների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն *Ա.Այվազյանի* գործով որոշմամբ արձանագրել է, որ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները (տե՛ս Արթուր Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇՂ-2/0007/15/12 որոշման 16-րդ կետը):

13. Սույն որոշման 12-12.1-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական վարույթի համար Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներից դատարանի մատչելիության իրավունքը հավասարապես կիրառելի է անձի՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու իրավունքի նկատմամբ: Վերջինս պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձը ողջամիտ սահմանափակումների պայմաններում պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի ազատության և դատարանի մատչելիության իրավունքները:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ մեղադրյալ Լևոն Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել 2 ամիս ժամկետով կալանավորումը (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Վերոգրյալ որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքում Լ.Հարությունյանի պաշտպան Մ.Սարգսյանը խնդրել է մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը վերացնել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ վերաքննիչ բողոքում ներկայացվել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերացնելու պահանջ, որը լուծելու լիազորությամբ Վերաքննիչ դատարանն օժտված չէ: Արդյունքում ստորադաս դատարանը քննարկման առարկա չի դարձրել պաշտպան Մ.Սարգսյանի վերաքննիչ բողոքում բերված հիմքերն ու հիմնավորումները և մերժել է այն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալ Լ.Հարությունյանի պաշտպան Մ.Սարգսյանի բողոքի հիմքերը և հիմնավորումները քննության առարկա չդարձնելու պատճառաբանությունը՝ կապված այդ բողոքի պահանջի ձևակերպման հետ, կրում է ձևական բնույթ: Նման մոտեցումը հանգեցրել է անձի՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու այնպիսի սահմանափակման, որի արդյունքում անձի քննարկվող իրավունքը դարձել է վերացական և պատրանքային՝ խախտելով գործադրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև հավասարակշռության ողջամիտ հարաբերակցությունը:

Ուստի Վճարելի դատարանը գտնում է, որ մեղադրյալ Լ.Հարությունյանը զրկվել է իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու և դատարանի մատչելիության իրավունքներից, ինչն էլ հանգեցրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի, 6-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Սահմանադրության 27-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ օրինական և հիմնավորված չէ մեղադրյալ Լ.Հարությունյանի պաշտպան Մ.Սարգսյանի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և*

այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված քրեադատավարական օրենքի խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է պատշաճ քննարկման առարկա դարձնի վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները և դրա արդյունքում կայացնի համապատասխան որոշում (*վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալու իրավական հարցի վերլուծությունը մանրամասն տես՝ Ս. Պողոսյանի և մյուսների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՇԳ/0034/01/15 որոշումը*):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Սեղադրյալ Լևոն Պավլուշայի Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2016 թվականի հունվարի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

29.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0038/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դատախազ
պաշտպան
ամբաստանյալ
ամբաստանյալի օրինական ներկայացուցիչ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Հ.ՉԱԽՈՅԱՆԻ
Կ.ԶԱՄԱԼՅԱՆԻ
Ս.ԱԲՈՎՅԱՆԻ
Ս.ԱԲՈՎՅԱՆԻ

2016 թվականի հունիսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Սերգեյ Սերոբի Աբովյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի փետրվարի 22-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ

հողվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 10109515 քրեական գործը:

2015 թվականի փետրվարի 23-ին Սերգեյ Աբովյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ծնողի հսկողության հանձնելը:

2015 թվականի փետրվարի 28-ին Ս.Աբովյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ: 2015 թվականի մայիսի 27-ի որոշմամբ Ս.Աբովյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի հունիսի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Աջափնյակ և Գավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռով Ս.Աբովյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

Ս.Աբովյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված հսկողության հանձնելը թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 3-ի որոշմամբ վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բավարարվել է, և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ս.Աբովյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. *«[Նյա 2015 թվականի փետրվարի 22-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Մազմանյան և Բաշինջաղյան փողոցների խաչմերուկում, հանդիպել է իր ծանոթ Վարդգես Մարտիրոսյանին, ով զանգահարելու համար խնդրել է*

նրա բջջային հեռախոսը: Հեռախոսով գրուցելով քայլել են Երևան քաղաքի Մազմանյան և Բաշինջաղյան փողոցների խաչմերուկում գտնվող թիվ 195-րդ միջնակարգ դպրոցի բակ, որտեղ հանդիպել են Բենիկ Նիկողոսյանին: Վերջինս և նրա ընկերները մտածել են, որ Ս.Աբովյանը եկել է իրենց հետ վիճելու ու դրա հետ կապված միմյանց սկսել են քաշքշել: Բ.Նիկողոսյանը դիմել է փախուստի, իսկ Ս.Աբովյանը, **հետապնդելով և հասնելով նրան**, իր մոտ գտնվող **դանակով** հարվածել է Բ.Նիկողոսյանի կրծքավանդակի ձախ հատվածին՝ **դիտավորությամբ** պատճառելով **կյանքին վտանգ սպառնացող** ծանր մարմնական վնասվածք՝ կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած թափանցող արյունահոսող վերքի ձևով, որն ուղեկցվել է **ձախ թոքի վնասումով, ձախակողմյան հեմոպնևոթորաքսով և ենթամաշկային էմֆիզեմայով**» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 286):

5.1. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ ամբաստանյալ Ս.Աբովյանի կատարած արարքը, բացի նրա ինքնախոստովանական ցուցմունքներից, հիմնավորվել է նաև քրեական գործով ձեռք բերված, ի թիվս այլնի, տուժող Բ.Նիկողոսյանի՝ նախաքննության և դատաքննության ընթացքում տված նույնաբովանդակ ցուցմունքներով այն մասին, որ. «(...) [Ն]կատելով, որ այդ տղան [ամբաստանյալը] ձեռքը տարել է ծոցագրպանը և գրպանից դանակ է հանել [ի]նքը գոռալով զգուշացրել է ընկերներին, որ նրա մոտ դանակ կա և **վախենալով դրանից բոլորով հետ են քաշվել**: Դրանից հետո այդ տղան դանակը բացելով **վազել է իր ետևից**, իսկ ինքն էլ **փախուստի է դիմել**, սակայն **վայրը այնպիսին է եղել, որ փախչելու տեղ չի եղել**: Իրեն **մոտենալուց հետո** այդ տղան հարվածել է կրծքավանդակի ձախ հատվածին (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 463):

6. Արդյունքում Առաջին ատյանի դատարանն եզրահանգել է. «(...) [Հ]աշվի առնելով Սերգեյ Աբովյանի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանցանքը կատարելուց հետո դրսևորած վարքագիծը՝ մասնավորապես այն, որ ութ ամսից ավելի գտնվելով ազատության մեջ գիտակցել է կատարած հանցանքի վտանգավորությունը և մինչ օրս զերծ է մնացել այլ հակաօրինական արարքների կատարելուց, անչափահաս է, դպրոցական է, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, ընդունել է մեղքը, զղջացել է կատարածի համար, իր ցուցմունքներով օգնել է վարույթն իրականացնող մարմնին ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ, հանցանքի կատարմանը նպաստել է տուժողի հակաօրինական վարքագիծը, տուժողը որևէ բողոք չի ներկայացրել, նաև այն, որ անչափահասների մեկուսացման բացասական հետևանքների վտանգը շատ ավելի մեծ է, դատարանը գտնում է, որ թվարկված հանգամանքներն էականորեն նվազեցնում են հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու իրենց համակցությամբ

հնարավորություն են տալիս հանգելու հետևության, որ Սերգեյ Աբովյանի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու, և վերջինիս նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով տվյալ գործով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը ու հանցագործությունների կանխմանը: Տվյալ դեպքում դրանով կապահովվեն նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության, պատասխանատվության անհատականացման ու պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 466):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում փաստել է. «(...) Առաջին ատյանի դատարանը (...) հիմնավորված կերպով հանգել է այն հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ հիմնավորված որոշում է կայացրել ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին՝ սահմանելով համապատասխան փորձաշրջան (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 32-33):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերի պնդմամբ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Մասնավորապես՝ ամբաստանյալի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, որը ենթակա չէր կիրառման:

Բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանները պատշաճ իրավական ընթացակարգերի շրջանակներում չեն հետազոտել և գնահատել ամբաստանյալի դիտավորության տեսակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը: Թվարկված մեղմացող հանգամանքները զուտ դատարանների սուբյեկտիվ գնահատման արդյունք են և իրականում չեն նվազեցնում կատարված արարքի վտանգավորության աստիճանն այն չափով, որ նրա նկատմամբ կիրառելի լինի ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Մասնավորապես, պատշաճ գնահատականի չի արժանացվել հանցավորի անձը բնութագրող այնպիսի հանգամանք, որ հանցանքը կատարելու պահին վերջինս դանակ է կրել՝ պատրաստ լինելով ցանկացած ժամանակ այն գործադրելու: Բացի այդ, ըստ բողոքի հեղինակի՝ արարքի վտանգավորության աստիճանի գնահատման համար էական նշանակություն ունի կատարված արարքի և դրա հետևանքների նկատմամբ ամբաստանյալի հոգեբանական վերաբերմունքի վերլուծությունը: Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել դատաքննության ընթացքում ամբաստանյալի տված ցուցմունքներն այն մասին, որ վիճաբանությունը սկսե-

լուն պես գրպանից հանել է դանակը և տեսնելով, որ որևէ մեկն իրեն այլևս չի քաշքշել և չի հարվածել, այլ, ընդհակառակը, բոլորը փախուստի են դիմել՝ հետապնդել է տուժողին և դանակով հարվածել վերջինիս կրծքավանդակի ձախ հատվածին:

Ավելին՝ հանցավորը վնասը պատճառելուց հետո որևէ միջոց չի ձեռնարկել տուժողին օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բողոքն ընդունել վարույթ, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ամբաստանյալ Ս.Ա. բովյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Սույն քրեաիրավական նորմերը Վճարելի դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճարելի դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (*հանցագործությ-*

յան հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճարելի դատարանի՝ Գարուշ Մադաթյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08, Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ/0143/01/13, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշումները՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (ԵԱԳԳ/0034/01/12, ԼԳ/0093/01/12, ՏԳ/0018/01/13, ԵԷԳ/0132/01/13, ԵԱԵԳ/0060/01/13, ԵԿԳ/0096/01/13, ԵԿԳ/0252/01/13, ԵՄԳ/0027/01/14, ԳԳ/0014/01/14, ՍԳ/0204/01/13, ՏԳ/0031/01/14, ՍԳ3/0174/01/14, ԵԱԳԳ/0011/01/14, ԵԱԶԳ/0091/01/14, ԵԿԳ/0039/01/15, ԱԲԳ/0031/01/15 և այլն):

12. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *«Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը (...)*

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով»:

Մեջբերված հանցակազմը Վճարելի դատարանը վերլուծել է Ա.Շահբազյանի գործով որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված] հանրորեն վտանգավոր արարքների դեմ արդյունավետ պայքարը պահանջում է այս ոլորտում համապատասխան քրեական, այդ թվում՝ պատժողական քաղաքականության իրականացում: Իսկ դա իր հերթին ենթադրում է ոչ միայն համապատասխան օրենսդրական հիմքերի առկայություն, այլև դրանց գործնական կիրառման հնարավորության ապահովում:*

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդու առողջության դեմ ուղղված հանցագործություններից ամենավտանգավորի՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար: Զննարկվող հանցագործության հանրային առավել բարձր վտանգավորությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ համապատասխան հակաիրավական արարքի արդյունքում մարդուն պատճառվում է վնաս, որը խիստ բացասական է անդրադառնում նրա առողջական վիճակի վրա, այլև նրանով, որ կարող է առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև տուժողի մահ: Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի (...):

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքը կարող է կատարվել տարբեր եղանակներով: Մասնավորապես, հանցավորը տուժողի առողջությանը ծանր

վնաս կարող է պատճառել՝ իր ֆիզիկական հնարավորությունները գործադրելով (ձեռքով կամ ոտքով հարվածելով, հրել-վայր գցելով, մարմնի որևէ մաս ջարդելով և այլն), տարբեր գործիքներ, իրեր կամ առարկաներ (դանակ, կացին, մուրճ, մետաղյա ձող, քար և այլն) օգտագործելով, գանազան մեխանիզմներ, միջոցներ կամ նյութեր (հրազեն, թույն, թմրանյութ և այլն) կիրառելով, տարերային աղետի իրադրությունը կամ առավել վտանգի աղբյուրն օգտագործելով և այլն: Զննարկվող հանցագործության կատարման նշված եղանակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Այսպես՝ տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում դանակով հարված հասցնելիս հանցավորը ոչ միայն նախատեսում է հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիությունը, այլև գիտակցում է կամ առնվազն պարտավոր է գիտակցել, որ իր գործողություններով տուժողին պատճառում է առողջության ծանր վնաս, որը վտանգավոր է կյանքի համար և անգամ կարող է հանգեցնել մահվան: Այլ խոսքով՝ հանցավորը գործում է ուղղակի դիտավորությամբ և հստակ նախատեսում է իր արարքի և վտանգավոր հետևանքների միջև առկա միանշանակ պատճառական կապը և դրա զարգացումը, այդ թվում՝ գիտակցում է կամ պարտավոր է գիտակցել, որ տուժողին կարող է պատճառել մահ, սակայն ինքնավստահությամբ կամ անփութությամբ հույս է ունենում, որ նշված ծանր հետևանքը չի առաջանա: Վերոգրյալն ինքնին վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին, ուստի օբյեկտիվորեն պետք է գնահատվի և հաշվի առնվի դատարանների կողմից պատիժ նշանակելիս:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքներին, միջոցներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին ու տեղակայմանը: Համապատասխան գնահատականի պետք է արժանացվի նաև կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:

[Ա]ռանց նշված հանգամանքների գնահատման առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու վերաբերյալ գործերով հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին: Հետևաբար, նշանակված պատժով չի ապահովվի կատարված արարքի և կիրառված քրեաիրավական ներգործության միջոցի համաչա-

փությունը, ինչպես նաև կխաթարվեն պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները» (տե՛ս Արմեն Շահբազյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ/0143/01/13 որոշման 15-17-րդ կետերը):

13. Վերահաստատելով *Ա.Շահբազյանի* որոշմամբ արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը առողջության դեմ ուղղված հանցագործությունների շարքում առանձնանում է իր առավել բարձր հանրային վտանգավորությամբ, ինչը պահանջում է այս ոլորտում համապատասխան քրեական, այդ թվում՝ պատժողական քաղաքականության իրականացում: Այդ համատեքստում Վճարելի դատարանը փաստում է, որ քննարկվող հոդվածով նախատեսված հանցանք կատարելու դեպքում պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս ստորադաս դատարանները պետք է հաշվի առնեն ինչպես խախտվող սույն հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, այնպես էլ արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ, հանցագործության հանգամանքները (այդ թվում՝ հանցագործությանը նախորդող և ուղեկցող *(տե՛ս, mutatis mutandis, Հրանտ Պարանյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԷԳ/0132/01/13 որոշման 13-րդ կետը)*), եղանակը, գործիքներն ու միջոցները, մարմնական վնասվածքների քանակը, տեղակայումը, բնույթը և այլն: Ընդ որում, մարմնական վնասվածքների բնույթը գնահատելիս պետք է նկատի ունենալ, որ առողջությանը պատճառված ծանր վնասը կարող է տարբեր լինել՝ կյանքի համար վտանգ ներկայացնող և կյանքի համար թեև վտանգ չներկայացնող, սակայն օրենքում հատուկ նշված հետևանքների առաջացմամբ արտահայտվող (օրինակ՝ տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ դեմքի անջնջելի ալլանդակում, մասնագիտական աշխատունակության լրիվ կորուստ և այլն): Այլ կերպ՝ Վճարելի դատարանը գտնում է, որ կյանքի համար վտանգ չներկայացնող վնասի համեմատությամբ այդպիսի վտանգ ներկայացնող վնասի պատճառումը, որպես կանոն, իրենից առավել բարձր հանրային վտանգավորություն է ներկայացնում: Հետևաբար պատիժ նշանակելիս և պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը որոշելիս սույն հանգամանքը ևս պետք է պատշաճ իրավական գնահատականի արժանանա դատարանի կողմից:

13.1. Այսպիսով, Վճարելի դատարանը ընդգծում է, որ կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում վնաս պատճառելու համար օգտագործված տարատեսակ գործիքները կամ առարկաները *(հրազեն, դանակ, կացին, մուրճ, մետաղյա ձող, քար և այլն)*, կյանքի համար վտանգ ներկայացնող վնասի պատճառումը, հանցավորի պատ-

րաստվածությունը, մեղքի դիտավորյալ ձևը (հատկապես՝ ուղղակի դիտավորությունը) իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, մեծացնում հանցագործությունը հաջողությամբ ավարտին հասցնելու կամ ավելի մեծ վնաս պատճառելու հավանականությունը: Հետևաբար նման դեպքերում օբյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վտանգավորության աստիճանը (*տե՛ս, mutatis mutandis, Սարգիս Խաչատրյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԳ/0031/01/14, Նարեկ Խաչատրյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԳ/0191/01/14, Արսեն Կարապետյանի և Ռուբեն Գուլգուլյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱԳԳ/0011/01/14 որոշումների համապատասխանաբար 14-րդ, 13-րդ և 15-րդ կետերը*):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Աբովյանի և Բ.Նիկողոսյանի ու նրա ընկերների միջև տեղի ունեցած վիճաբանության արդյունքում վերջիններս սկսել են միմյանց քաշքշել: Այնուհետև Բ.Նիկողոսյանը դիմել է փախուստի, իսկ Ս.Աբովյանը **հետապնդել է հասել է նրան**, իր մոտ գտնվող **դանակով** հարվածել Բ.Նիկողոսյանի կրծքավանդակի ձախ հատվածին՝ առողջությանը **դիտավորությամբ** պատճառելով **կյանքին վտանգ սպառնացող** ծանր մարմնական վնասվածք, որն ուղեկցվել է **ձախ թոքի վնասումով, ձախակողմյան հեմոպնևոթորաքսով և ենթամաշկային էմֆիզեմայով** (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ս.Աբովյանի կատարած արարքը հիմնավորված է համարել, ի թիվս այլնի, տուժող Բ.Նիկողոսյանի ցուցմունքով առ այն, որ երբ վերջինս նկատել է, որ ամբաստանյալը ձեռքը տարել է ծոցագրպանը և գրպանից դանակ հանել, գոռալով զգուշացրել է ընկերներին, որ նրա մոտ դանակ կա, և **վախենալով դրանից՝ բոլորով հետ են քաշվել**: Դրանից հետո Ս.Աբովյանը, դանակը բացելով, **վազել է իր ետևից**, իսկ ինքն էլ **փախուստի** է դիմել, սակայն **վայրն այնպիսին է եղել, որ փախչելու տեղ չի եղել**: Իրեն **մոտենալուց հետո** ամբաստանյալը հարվածել է կրծքավանդակի ձախ հատվածին (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը):

Պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել այն, որ Ս.Աբովյանն անչափահաս է, դպրոցական, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, ընդունել է մեղքը, գղջացել է կատարվածի համար, իր ցուցմունքներով օգնել է վարույթն իրականացնող մարմնին ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ, բացի այդ, հանցանքի կատարմանը նպաստել է տուժողի հակաօրինական վարքագիծը, տուժողը որևէ բողոք չի ներկայացրել: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ Ս.Աբովյանի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու, և վերջինիս նկատմամբ ազատագրկ-

ման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը հիմնավորված հետևության է հանգել ամբաստանյալ Ս.Աբովյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները համադրելով սույն որոշման 11-13.1.-րդ կետերում շարադրված վերլուծության հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները Ս.Աբովյանի նկատմամբ պատիժ նշանակելիս և այն պայմանականորեն չկիրառելիս պատշաճ վերլուծության չեն ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Մասնավորապես՝ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել՝

- խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ ամբաստանյալը ոտնձգել է առողջության և այն ապահովող այնպիսի հասարակական հարաբերության դեմ, որի խախտումը ոչ միայն խիստ քաջասաբար է անդրադարձել տուժողի առողջական վիճակի վրա, այլև կարող էր առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև մահ,

- հանցագործության առանձնահատուկ հանգամանքները, մասնավորապես այն, որ փոխադարձ քաշքշուկի ընթացքում ամբաստանյալը գրպանից հանել է դանակը և տեսնելով, որ տուժողը **փախուստի** է դիմում, **հետապնդել** է վերջինիս: Վայրն այնպիսին է եղել, որ **տուժողը փախչելու տեղ չի ունեցել**, իսկ Ս.Աբովյանը, **հասնելով նրան**, հարված է հասցրել (տե՛ս սույն որոշման 5.1.-րդ կետը),

- հանցավորի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ, մասնավորապես այն, որ ամբաստանյալը գիտակցել է, որ իր գործողություններով տուժողի առողջությանը պատճառում է ծանր վնաս, նախատեսել է իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը,

- ամբաստանյալի մոտ **դանակի** առկայության և հանրորեն վտանգավոր արարքը **դանակի** գործադրմամբ կատարելու հանգամանքը,

- պատճառված մարմնական վնասվածքի տեղակայումը և բնույթը, մասնավորապես այն, որ ամբաստանյալը հարվածը հասցրել է **կրծքավանդակի ձախ հատվածին** և պատճառել **կյանքին վտանգ սպառնացող** ծանր մարմնական վնասվածք, որն ուղեկցվել է ձախ թոքի վնասումով, ձախակողմյան հեմոպնևոթորաքսով և ենթամաշկային էմֆիզեմայով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Ինչ վերաբերում է ամբաստանյալի անչափահաս լինելու հանգամանքին, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ միայն այն հանգամանքը, որ հանցավորը հանցանք կատարելու պահին եղել է անչափահաս, չի կարող մեխանիկորեն հանգեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ

հողվածի կիրառմանը, այլ այդ դեպքում նշյալ հողվածի կիրառման հնարավորությունը պետք է քննարկվի, ի թիվս այլնի, հանցագործության՝ հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի համատեքստում (տե՛ս, *mutatis mutandis*, Նարեկ Մաղյանի և Դավիթ Հովհաննիսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ՏԳ-2/0045/01/14 որոշման 14.1.-րդ կետը):

15.1. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ Ս.Աբովյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս ստորադաս դատարաններն ինչպես առանձին վերցրած, այնպես էլ իրենց համակցության մեջ պատշաճ ուշադրություն չեն դարձրել խախտված հասարակական հարաբերության բնույթին ու կարևորությանը, հանցավոր վարքագծի դրսևորմանն ուղեկցող հանգամանքներին, կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքին, օգտագործված գործիքին, պատճառված մարմնական վնասվածքի տեղակայմանն ու բնույթին:

16. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ս.Աբովյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարան

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սերգեյ Սերոբի Աբովյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ

քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Սերգեյ Աբովյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց հսկողության հանձնելը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

30.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳ/0025/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 7-ի որոշման դեմ Շահեն Թովմասի Հովսեփյանի պաշտպան Հայկազ Գալստյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով 2015 թվականի մայիսի 7-ին հարուցվել է թիվ 29153315 քրեական գործը:

2015 թվականի մայիսի 11-ին քրեական գործը վարույթ է ընդունվել ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային վարչության ավագ քննիչ Վ.Հարությունյանի կողմից:

2. 2015 թվականի մայիսի 19-ին կասկածյալ Շահեն Թովմասի Հովսեփյանի նկատմամբ ընտրվել է խափանման միջոց՝ ստորագրություն չհեռանալու մասին:

2015 թվականի մայիսի 26-ին Շ.Հովսեփյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ Շ.Հովսեփյանի նկատմամբ առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2015 թվականի հոկտեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռով Շ.Հովսեփյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել Արագածոտնի մարզի դատախազության դատախազ, գործով մեղադրող Մ.Արզումանյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2016 թվականի ապրիլի 7-ին որոշում է կայացրել մեղադրողի բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճիռը բեկանելու և գործը նույն դատարան այլ կազմով նոր քննության ուղարկելու մասին:

Իր հատուկ կարծիքն է շարադրել Վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Խաչատրյանը՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ դատավճիռը պետք է թողնվեր օրինական ուժի մեջ, իսկ մեղադրողի վերաքննիչ բողոքը՝ մերժվեր:

5. Շ.Հովսեփյանի պաշտպան Հ.Գալստյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ Շ.Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով այն բանի համար, որ «(...) նա, 2015 թ-ի փետրվար ամսին, քննությամբ չսպարզված օրը, ժամը 15:00-ի սահմաններում գնացել է Աշտարակ քաղաքի Ալիխանյան եղբայրներ 1 հասցեում գտնվող Ռ-ադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի վարչական տարածք՝ մետաղական ջարդոններ հավաքելու, որտեղ էլ ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, երկաթյա ձողի գործադրմամբ կտրել է Ռ-ադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտու-

տին պատկանող պահեստարանի մուտքի դռան կախտվի կողպեքը, ապօրինի մուտք գործել պահեստարան և գաղտնի հափշտակել զգալի չափի 19.200 ՀՀ դրամ ընդհանուր արժողության խառը տեսակի ապրանքներ՝ էլեկտրական սարքավորումների թվով 5 իրաններ, 5 մետր երկարության պղնձյա հաղորդալար, 1 հատ հարթաշուրթ, 1 հատ կցաշուրթ և 2 հատ պտուտակահան, որի հետևանքով Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտին պատճառվել է զգալի չափի գույքային վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 179-180):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. «(...) [Մ]յուն գործով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները այն մասին, որ Շահեն Հովսեփյանը ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտին պատկանող պահեստից գաղտնի հափշտակել է զգալի չափի՝ 19.200 ՀՀ դրամ ընդհանուր արժողության խառը տեսակի ապրանքներ, դատաքննության ընթացքում հերքվեցին:

(...)

Դատաքննությամբ հիմնավորվեց, որ Շահեն Հովսեփյանը մուտք է գործել ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտին պատկանող, ինստիտուտի հաշվեկշռից դուրս գրված ապրանքների պահեստ և գողացել է հափշտակություն կատարելու պահին՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը չգերազանցող գումարի (արժեքի) ապրանքներ:

Նշված դատողությունը դատարանը հիմնավորում է գնահատելով.

ա/ տուժողի ներկայացուցչի, վկաների դատարանում տված ցուցմունքները, այն մասին, որ պահեստում պահվել են ինստիտուտի հաշվեկշռից դուրս գրված, արժեք չներկայացնող ապրանքները, այդ թվում սարքավորումներ, դետալներ, մետաղական տուփեր և իրաններ, եղել է նաև մետաղական ջարդոն, որ ալյումինե իրանները և շուրջ մեկ մետր երկարությամբ պղնձյա լարերը հանդիսացել են ջարդոն, իսկ գործիքները օգտագործված և հնամաշ,

բ/ քննիչի կողմից կազմված՝ լուսանկարչական հավելվածներով քննչական փորձարարության մասին արձանագրությունը, որով հիմնավորվում է, որ նշված պահեստում անկանոն տեղադրված և թափված են եղել ինչպես ապակոմպլեկտավորված սարքավորումներ, մետաղական դետալներ, այնպես էլ առկա է մետաղական ջարդոն և այլ տեսակի թափոն,

գ/ ապրանքագիտական և նյութագիտական համալիր փորձաքննության թիվ 15-1303 եզրակացությունը այն մասին, որ փորձաքննության ներկայացված թվով 2/երկու/ հատ տարբեր տեսակի ու չափսերի մետաղական արկղերի իրանները դիտարկվել են ՀՀ շուկայում որպես օգտագործվող պիտանի դետալ, սակայն դրանց վերաբերյալ որևէ տեղեկատվություն ՀՀ շուկայում չհայտնաբերելու պատճառով դրանք գնահատվել են որպես մետաղական ջարդոն՝ մեկ կգ. ալյումինի արժեքը 300 ՀՀ դրամով,

դ/ ամբաստանյալ Շահեն Հովսեփյանի նախաքննության և դատաքննության ընթացքում տված ցուցմունքները այն մասին, որ պահեստում եղած մետաղական ջարդոնի միջից վերցրել է հինգ հատ ծոմոված իրաններ, պղնձյա լարի կտորներ՝ հինգ հատ, յուրաքանչյուրը շուրջ մեկ մետր երկարությամբ, որ պահեստում որևէ սարքավորման վրայից մետաղական իրան չի հանել և նման նպատակ չի ունեցել:

Այսպիսով, դատաքննությամբ հիմնավորվեց, որ Շահեն Հովսեփյանի կողմից գողացված առարկաների առավելագույն արժեքը չի գերազանցում 5000 ՀՀ դրամը (...):

(...)

Այսպիսով դատարանը չփարատված կասկածները հօգուտ ամբաստանյալ Շահեն Հովսեփյանի մեկնաբանելով հաստատված է համարում, որ նրա կողմից ՀՀ ԳԱԱ Ռ-ադիոֆիզիկայի և Էլեկտրոնիկայի ինստիտուտի՝ դուրս գրված սայրանքների պահեստից գողացված առարկաների շուկայական առավելագույն արժեքը չի գերազանցում հափշտակություն կատարելու պահին՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, այսինքն Շահեն Հովսեփյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածով սահմանված հանցակազմը:

(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 252-256):

7.1. Ամբաստանյալ Շ.Հովսեփյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ մետաղական ջարդոնները վաճառել է 6.800 ՀՀ դրամով (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 86):

Ամբաստանյալ Շ.Հովսեփյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ պահեստից իր կողմից գողացված, ինչպես նաև իր և Գևորգի կողմից հավաքված մետաղական ջարդոնները վաճառել են գյուղ եկած մետաղաջարդոնի գնումով զբաղվող անձանոթի, ով **դրա դիմաց վճարել է 6800 ՀՀ դրամ**, որից 1000 դրամը տվել է Գևորգին, իսկ մնացածը ծախսել իր կարիքների համար (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 250):

7.2. Տուժողի ներկայացուցիչ Վ.Վարդանյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ինստիտուտին պատճառվել է ընդհանուր՝ 19.200 ՀՀ դրամ գույքային վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 119-121):

Տուժողի ներկայացուցիչ Վ.Վարդանյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել առ այն, որ «իրականում նշված պահեստում պահվում են ինստիտուտի հաշվեկշռից տաս և ավելի տարի առաջ դուրս գրված, ոչ պիտանի սարքավորումներ, դետալներ, այնտեղ կա նաև մետաղական ջարդոն: Այդ սարքավորումները և դետալները արժեք չեն ներկայացնում, սակայն դրանց պահեստամասերը, այդ թվում նաև մետաղական տուփերի իրանները երբեմն օգտագործվում են որպես հումք: (...) Ինչ վերաբերում է նրան, որ նշել է, թե նշված սայրանքները գտնվում են ինստիտուտի հաշվեկշռում, ապա դա շփոթմունք է, պնդում է, որ նշված սայ-

րանքները՝ իրանները և պղնձյա հաղորդալարերի կտորները ինստիտուտի հաշվապահական հաշվեկշռում չեն գտնվել՝ արժեք չներկայացնելու պատճառով, դրանք ընդհամենը հնարավոր է գնահատել որպես հումք կամ ջարդոն՝ մեկ կիլոգրամը հաշվելով շուրջ 100 ՀՀ դրամ, իսկ գործիքները եղել են հնամաշ և **իր կարծիքով դրանց շուկայական արժեքը չի կարող գերազանցել 1200 ՀՀ դրամը**» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 250):

8. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է. «(...) *Ամբաստանյալ Շ.Հովսեփյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքների ուսումնասիրությունից և վերլուծությունից պարզ է դառնում, որ վերջինս, գումար վաստակելու նպատակով, ըստ էության, սխտեմատիկաբար զբաղվել է մետաղական թափոններ հավաքելով և այն մետաղի ընդունման կետերին հանձնելով:*

Գեայքի օրը՝ իր նյութական կարիքները հոգալու համար, գույքի գաղտնի հափշտակություն կատարելու նպատակով Շ.Հովսեփյանը որոշել է մուտք գործել ՀՀ ԳԱԱ Ռ-ադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտին պատկանող պահեստարան և հափշտակել մետաղական ջարդոններ, ինչն իրականացրել է պահեստարանի դռան կողպեքը կտրելու միջոցով պահեստարանի դուռը բացելու և այնտեղ մուտք գործելու եղանակով՝ հստակ գիտակցելով, որ կողպեքը ջարդելով պահեստարան մուտք գործելն արդեն իսկ ենթադրում է, որ այնտեղից կարող է հափշտակել առնվազն զգալի չափի նյութական արժեքներ, քանի որ դրանից ավելի ցածր արժեք ունեցող առարկաները /ջարդոնը/ կարող էր գտնել /գողանալ/ նաև դրսում՝ առանց պահեստարան մուտք գործելու, ինչն էականորեն բարձրացնում է արարքի հասարակական վտանգավորության աստիճանը:

Այդ մասին է վկայում այն փաստը, որ վերջինս, պահեստից իր կողմից գողացված մետաղական ջարդոնները փաճառելով գյուղ եկած մետաղաջարդոնի գումով զբաղվող անձանոթին, դրա դիմաց ստացել է 5000 ՀՀ դրամը գերազանցող գումար, ինչն օգտագործել է իր անձնական կարիքները հոգալու համար:

Ինչ վերաբերում է դատավճռի հիմքում դրված ապրանքագիտական և նյութագիտական համալիր փորձաքննության 20.07.2015 թվականի թիվ 15-1303 եզրակացությանը, ըստ որի՝ հափշտակված իրերի արժեքը չի գերազանցում 5000 ՀՀ դրամը, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Շ.Հովսեփյանի գործողությունների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ վերջինս, մինչև պահեստարան մուտք գործելը, արդեն իսկ գիտակցել է, որ մուտք գործելով պահեստարան, իր հանցավոր մտադրությունն իրականացնելու համար, պետք է հաղթահարի որոշակի խոչընդոտներ, ինչն իրեն հնարավորություն կտա հափշտակելու զգալի չափի գերազանցող գումար, որով կարող է բավարարել իր անձնական կարիքները:

Վերոգրյալից հետևում է, որ թեև ապրանքագիտական և նյութագիտական համալիր փորձաքննության 20.07.2015 թվականի թիվ 15-1303 եզ-

րակացության համաձայն՝ ամբաստանյալ Շ.Հովսեփյանի կողմից գողացված առարկաների շուկայական առավելագույն արժեքը չի գերազանցում հափշտակություն կատարելու պահին՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, սակայն սույն քրեական գործով ձեռք բերված և վիճելի դատական ակտի հիմքում դրված ապացույցների վերլուծության ու գնահատության արդյունքում՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Շ.Հովսեփյանը, ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, երկաթյա ձողի գործադրմամբ կոտրելով Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտին պատկանող պահեստարանի մուտքի դռան կախովի կողպեքը, սպորինի մուտք է գործել պահեստարան և **գաղտնի հափշտակել խառը տեսակի այնքան ապրանքներ, ինչն ըստ իր նախնական դիտավորության՝ անհրաժեշտ և բավարար է համարել իր կարիքները հոգալու համար:**

Վերոգրյալ փաստն իր հաստատումն է գտել ամբաստանյալ Շ.Հովսեփյանի կողմից վաճառված գողոնի արժեքով, որն **ինչպես արդեն նշվել է, գերազանցում է ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը:**

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Դատարանը՝ սույն գործի քննության ընթացքում բազմակողմանի ուսումնասիրության և օբյեկտիվ գնահատության չի ենթարկել ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի փոխստորեն՝ Վահան Հրանտի Վարդանյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքները, և չի պատճառաբանել, թե ինչու է արժանահավատ համարել և նախապատվությունը տվել Վ.Վարդանյանի դատաքննական ցուցմունքներին՝ արձանագրելով, որ նախաքննական ցուցմունքներում առկա են էական հակասություններ:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ փաստում է, որ սույն որոշմամբ արված եզրահանգումները չեն կարող մեկնաբանվել որպես հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի կամ որևէ այլ անձի մեղքի առկայության կամ բացակայության վերաբերյալ դատողություններ, այլ ընդամենն արձանագրում է, որ Դատարանի դատավճռում արված եզրահանգումներն այն մասին, որ ամբաստանյալ Շ.Հովսեփյանի կողմից պահեստարանից գողացված առարկաների շուկայական առավելագույն արժեքը չի գերազանցում հափշտակություն կատարելու պահին՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, հիմնված չեն գործով ձեռք բերված բոլոր ապացույցների վերլուծության և գնահատման վրա, և բավարար չեն հանգելու հետևության, որ ամբաստանյալի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված հանցակազմը:

(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 48-56):

9. Վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Խաչատրյանը հասուն կարծիք է շարադրել՝ արտահայտելով հետևյալ դիրքորոշումը. «(...) Վերաքննիչ դատարանի՝ վերը նշված եզրահանգումները չէին կարող բավարարել

րար հիմք հանդիսանալ վիճարկվող դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

(...) Դատարանն ամբաստանյալ Շահեն Հովսեփյանի արարքի ուրակման առումով հիմնավոր հետևության հանգելու համար, անհրաժեշտ և բավարար վերլուծության և գնահատման է ենթարկել գործի լուծման համար անհրաժեշտ բացահայտման ենթակա հանգամանքները, որի արդյունքում սույն գործի շրջանակներում կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի այն Վերաքննիչ դատարանի կողմից պետք է թողնվեր օրինական ուժի մեջ:

(...) Վերաքննիչ դատարանի որոշմամբ ներկայացված պատճառաբանությունները բավարար չափով փաստարկված չեն, դրանք հանդիսանում են Վերաքննիչ դատարանի կողմից՝ գործով ձեռք բերված ապացույցների յուրովի մեկնաբանման արդյունք: (...)

(...)

(...) Դատարանի կողմից կայացվել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, այն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից պետք է թողնվեր օրինական ուժի մեջ: (...)

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 7-ի որոշումն անօրինական է, չհիմնավորված և չպատճառաբանված, կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով:

Բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի՝ ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները հիմնված չեն գործի տվյալների վրա, այլ դրանք հանդիսանում են Վերաքննիչ դատարանի՝ գործի տվյալներից չբխող ենթադրություններ, որոնք հերքվում են հենց Շ.Հովսեփյանի ցուցմունքով այն մասին, որ ինքը շինություններից մեկի պատուհանից ներս մայելով՝ տեսել է մետաղական ջարդոններ ու որոշել այնտեղից մետաղական ջարդոններ գողանալ: Ընդ որում, Շ.Հովսեփյանը վերցրել է բացառապես այն ջարդոնները, որոնք ծածկված են եղել և անկանոն նետված են եղել պատի անկյունում, այսինքն՝ պետքական չեն եղել:

11. Բողոքի հեղինակն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել այն հանգամանքը, որ պահեստարանից գողացված ապրանքների շուկայական արժեքը չի գերազանցում 5000 ՀՀ դրամը, իսկ այն, որ մետաղական ջարդոնները հանձնելուց հետո ստացվել է 6.800 ՀՀ դրամ գումար, ապա հարկ է նշել, որ այդ գումարը վճարվել է ամբողջ հավաքված ջարդոնի դիմաց, որը ներառում է նաև դրսից հա-

վաքված ջարդոնը, որպիսի հանգամանքը հիմնավորվում է գործի նյութերով:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է գողոնը տուժող ընկերության հաշվեկշռային գույք չհանդիսանալու, այդ իրերը ոչ պիտանի լինելու հիմքով հաշվեկշռից դուրս գրված լինելու և պահեստարանում որպես թափոն պահվելու հանգամանքը: Բողոքաբերը շեշտել է, որ այս հանգամանքի վերաբերյալ իր ցուցմունքներում մանրամասն նշել է տուժողի ներկայացուցիչը՝ ընդգծելով, որ պահեստում պահվում են ինստիտուտի հաշվեկշռից տասը և ավելի տարի առաջ դուրս գրված, ոչ պիտանի սարքավորումներ, դետալներ, մետաղական ջարդոն, որոնք արժեք չեն ներկայացնում, սակայն երբեմն օգտագործվում են որպես հումք:

12. Բողոքաբերը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը, հետազոտելով գործում առկա բոլոր ապացույցները իրենց համակցության մեջ, իրավացիորեն հաստատված է համարել այն հանգամանքը, որ Շ.Հովսեփյանի արարքում առկա չէ հանցակազմ, քանի որ տուժող ընկերության պահեստարանից գողացված ապրանքների շուկայական արժեքը չի գերազանցում 5000 ՀՀ դրամ գումարը: Իսկ Վերաքննիչ դատարանն անհիմն բեկանել է արդարացման դատավճիռը, դրանով թույլ տալով նյութական և դատավարական իրավունքի էական խախտումներ:

13. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 7-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ամբաստանյալ Շ.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում անմեղ ճանաչելու և արդարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գողությունը՝ ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակությունը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Գողությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով՝

(...)

3. Գողությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

1.1) բնակարան ապօրինի մուտք գործելով,

2) կազմակերպված խմբի կողմից

(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Սույն գլխում զգալի չափ է համարվում հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), իսկ գողության միջոցով հափշտակություն կատարելու պահին՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը):

(...)»:

Մեջբերված քրեաիրավական դրույթների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված է գողության հիմնական (հասարակ) հանցակազմը, որում արտահայտված են հանցագործության տվյալ տեսակին բնորոշ հիմնական հատկանիշները, այն է՝ (1) *ուրիշի գույքի* (2) *զգալի չափերով* (3) *գաղտնի հափշտակություն*: Հանցագործությունների որակման տեսանկյունից հիմնական հանցակազմի նշանակությունն այն է, որ դրա հատկանիշները ընդգրկվում են հանցակազմի բոլոր դրսևորումների մեջ:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նկարագրված են գողության՝ համապատասխանաբար ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներով զուգորդված հանցակազմերը, որոնք իրենց մեջ ներառելով գողության հիմնական հանցակազմի հատկանիշները (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մաս)՝ նախատեսում են համապատասխան արարքը որակյալ դարձնող առանձին հատկանիշներ:

Վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հասարակ, և նույն հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերով նախատեսված որակյալ հանցակազմերը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ արարքը ծանրացնող կամ առավել ծանրացնող հատկանիշով որակելու համար անհրաժեշտ է նախ պարզել, հավաստել, որ առկա են հասարակ հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները: Այլ կերպ՝ եթե անձի արարքում բացակայում է գողության հասարակ (հիմնական) հանցակազմի պարտադիր հատկանիշներից որևէ մեկը, ապա այն այլևս չի կարող որակվել ծանրացնող կամ առավել ծանրացնող հատկանիշով:

16. Աննեղության կանխավարկածի սկզբունքն ամրագրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածը սահմանում է.

«(...)

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ:»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.

դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները:»:

Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը՝ որպես ապացույցների գնահատման

արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, թեև ապացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ապացույցների կամայական գնահատման արգելքը դատարաններին պարտավորեցնում է ապացուցման ենթակա հանգամանքների, այդ թվում՝ կոնկրետ հանցանքի հատկանիշների և այդ հանցանքի մեջ անձի մեղավորության վերաբերյալ իր հետևությունները հիմնավորել վերաբերելի, փոխկապակցված, հավաստի ապացույցներով և ոչ թե ենթադրություններով: Այլ խոսքով՝ հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա: Մեղսագրվող հանցագործության և դրա հատկանիշների ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում է առկա ապացույցները բարեխիղճ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով: Դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ կամ ենթադրություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստիև դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների կամ ենթադրությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին (տե՛ս, *mutatis mutandis*, Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԶԲԳ/0632/01/08, Հմայակ Դավթյանի գործով 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԳ/0126/01/12, Մարգար Հակոբյանի գործով 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԳ/0168/01/12, Արսեն Մակարյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ

ԵԿԳ/0016/11/15, *Արամայիս Հակոբյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԳ/0224/01/14 որոշումները):

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմինը Շ.Հովսեփյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով այն բանի համար, որ նա «*տրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, երկաթյա ձողի գործադրմամբ կտտրել է Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտին պատկանող պահեստարանի մուտքի դռան կախտվի կողպեքը, ապօրինի մուտք գործել պահեստարան և գաղտնի հափշտակել զգալի չափի 19.200 ՀՀ դրամ ընդհանուր արժողության խառը տեսակի ապրանքներ՝ էլեկտրական սարքավորումների թվով 5 իրաններ, 5 մետր երկարության պղնձյա հաղորդալար, 1 հատ հարթաշուրթ, 1 հատ կցաշուրթ և 2 հատ պտուտակահան, որի հետևանքով Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտին պատճառվել է զգալի չափի գույքային վնաս*» (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է, որ.

ա) նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցներն այն մասին, որ Շ.Հովսեփյանը ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտին պատկանող պահեստից գաղտնի հափշտակել է զգալի չափի՝ 19.200 ՀՀ դրամ ընդհանուր արժողության խառը տեսակի ապրանքներ, դատաքննության ընթացքում հերքվեցին,

բ) դատաքննությամբ հիմնավորվեց, որ Շ.Հովսեփյանը մուտք է գործել ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտին պատկանող, ինստիտուտի հաշվեկշռից դուրս գրված ապրանքների պահեստ և գողացել հափշտակություն կատարելու պահին՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը չգերազանցող գումարի (արժեքի) ապրանքներ: Ըստ Առաջին ատյանի դատարանի՝ դա հիմնավորվում է ինչպես քննիչի կողմից կազմված՝ լուսանկարչական հավելվածներով քննչական փորձարարության մասին արձանագրությամբ և ամբաստանյալ Շ.Հովսեփյանի նախաքննության և դատաքննության ընթացքում տված ցուցմունքներով, այնպես էլ ապրանքագիտական և նյութագիտական համալիր փորձաքննության եզրակացությամբ և տուժողի ներկայացուցչի ու վկաների՝ դատարանում տված ցուցմունքներով այն մասին, որ պահեստում պահվել են ինստիտուտի հաշվեկշռից դուրս գրված, արժեք չներկայացնող ապրանքները,

գ) չփարատված կասկածները հոգուտ ամբաստանյալ Շ.Հովսեփյանի մեկնաբանելով՝ դատարանը հաստատված է համարում, որ նրա կողմից ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի՝ դուրս գրված ապրանքների պահեստից գողացված առարկաների շուկայական առավելագույն արժեքը չի գերազանցում հափշտակություն կատարելու պահին՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, այսինքն՝ Շ.Հովսեփյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օ-

րենսգրքի 177-րդ հոդվածով սահմանված հանցակազմը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր որոշման շրջանակներում, ի թիվս այլնի, փաստել է, որ.

ա) գույքի գաղտնի հափշտակություն կատարելու նպատակով Շ.-Հովսեփյանը որոշել է մուտք գործել ՀՀ ԳԱԱ Ռ-ադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտին պատկանող պահեստարան և հափշտակել մետաղական ջարդոններ, ինչն իրականացրել է պահեստարանի դռան կողպեքը կոտրելու միջոցով պահեստարանի դուռը բացելու և այնտեղ մուտք գործելու եղանակով՝ **հստակ գիտակցելով, որ կողպեքը ջարդելով պահեստարան մուտք գործելն արդեն իսկ ենթադրում է, որ այնտեղից կարող է հափշտակել առնվազն զգալի չափի նյութական արժեքներ, քանի որ դրանից ավելի ցածր արժեք ունեցող առարկաները /ջարդոնը/ կարող էր գտնել /գողանալ/ մաս դրսում՝ առանց պահեստարան մուտք գործելու:** Ըստ Վերաքննիչ դատարանի՝ այդ մասին է վկայում այն փաստը, որ վերջինս, **պահեստից** իր կողմից գողացված մետաղական ջարդոնները վաճառելով գյուղ եկած մետաղաջարդոնի գնումով զբաղվող անձանոթին, **դրա դիմաց ստացել է 5000 ՀՀ դրամը գերազանցող գումար**, ինչն օգտագործել է իր անձնական կարիքները հոգալու համար,

բ) ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմքում դրված ապրանքագիտական և նյութագիտական համալիր փորձաքննության եզրակացությանը, ըստ որի՝ հափշտակված իրերի արժեքը չի գերազանցում 5000 ՀՀ դրամը, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Շ.-Հովսեփյանի գործողությունների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ **վերջինս մինչև պահեստարան մուտք գործելը արդեն իսկ գիտակցել է, որ մուտք գործելով պահեստարան՝ իր հանցավոր մտադրությունն իրականացնելու համար պետք է հաղթահարի որոշակի խոչընդոտներ, ինչն իրեն հնարավորություն կտա հափշտակելու զգալի չափը գերազանցող գումար, որով կարող է բավարարել իր անձնական կարիքները,**

գ) Առաջին ատյանի դատարանը բազմակողմանի ուսումնասիրության և օբյեկտիվ գնահատության չի ենթարկել Վ.Վարդանյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքները և չի պատճառաբանել, թե ինչու է արժանահավատ համարել և նախապատվությունը տվել Վ.Վարդանյանի դատաքննական ցուցմունքներին՝ արձանագրելով, որ նախաքննական ցուցմունքներում առկա են էական հակասություններ:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ իր որոշմամբ արված եզրահանգումները չեն կարող մեկնաբանվել որպես հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի կամ որևէ այլ անձի մեղքի առկայության կամ բացակայության վերաբերյալ դատողություններ, այլ ընդամենը արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռում արված եզրահանգումներն այն մասին, որ ամբաստանյալ Շ.-Հովսեփյանի կողմից պահեստարանից գողացված առարկաների շուկայական առավել-

լագույն արժեքը չի գերազանցում հափշտակություն կատարելու պահին՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, հիմնված չեն գործով ձեռք բերված բոլոր ապացույցների վերլուծության և գնահատման վրա, և բավարար չեն հանգելու հետևության, որ ամբաստանյալի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված հանցակազմը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Շ.Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում անմեղ ճանաչելու և արդարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

Այսպես, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ Շ.Հովսեփյանը *«հատակ գիտակցել է, որ կողպեքը ջարդելով պահեստարան մուտք գործելն արդեն իսկ ենթադրում է, որ այնտեղից կարող է հափշտակել առնվազն զգալի չափի նյութական արժեքներ, քանի որ դրանից ավելի ցածր արժեք ունեցող առարկաները /ջարդոնը/ կարող էր գտնել /գողանալ/ նաև դրսում՝ առանց պահեստարան մուտք գործելու, ինչպես նաև այն դիրքորոշմանը, որ ամբաստանյալը «մինչև պահեստարան մուտք գործելը, արդեն իսկ գիտակցել է, որ մուտք գործելով պահեստարան, իր հանցավոր մտադրությունն իրականացնելու համար, պետք է հատթահարի որոշակի խոչընդոտներ, ինչն իրեն հնարավորություն կտա հափշտակելու զգալի չափը գերազանցող գումար»*՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դրանք չեն բխում գործի նյութերից, հիմնված են ոչ թե օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների, այլ ենթադրությունների վրա, ուստի չեն կարող հիմնավոր համարվել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ ամբաստանյալ Շ.Հովսեփյանը *«պահեստից (...) գողացված մետաղական ջարդոնները վաճառելով գյուղ եկած մետաղաջարդոնի գնումով զբաղվող անձանոթին, դրա դիմաց ստացել է 5000 ՀՀ դրամը գերազանցող գումար»*, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քրեական գործում առկա չէ որևէ փաստական տվյալ, որը կհիմնավորի Վերաքննիչ դատարանի այն պնդումը, թե 5.000 դրամը գերազանցող գումարը Շ.Հովսեփյանը ստացել է բացառապես պահեստից գողացված մետաղական ջարդոնների դիմաց: Ավելին, Շ.Հովսեփյանը թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ժամանակ ցուցմունք է տվել, որ գնորդն իրեն վճարել է 6.800 դրամ **ամբողջ հավաքված ջարդոնի դիմաց** (տե՛ս սույն որոշման 7.1.-րդ կետը): Ուստի Վերաքննիչ դատարանի նշյալ դատողությունը նույնպես չի կարող հիմնավոր համարվել:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ *Առաջին ատյանի դատարանը բազմակողմանի ուսումնասիրության և օրյեկտիվ գնահատության չի ենթարկել տուժողի ներկայացուցիչ Վ.Վարդանյանի նախաքննական ու դատաքննական ցուցմունքները և չի պատճառաբանել, թե ինչու է արժանահավատ համարել և նախապատվությունը տվել Վ.Վարդանյանի դատաքննական ցուցմունքներին՝ արձանագրելով, որ նախաքննական ցուցմունքներում առկա են էական հակասություններ* (տե՛ս սույն որոշման 7.2.-րդ և 8-րդ կետերը)՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իր կողմից վերը արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում Վերաքննիչ դատարանի սույն փաստարկը չէր կարող բավարար հիմք համարվել Առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը բեկանելու համար հատկապես այն պարագայում, երբ ապրանքագիտական և նյութագիտական համալիր փորձաքննության եզրակացությունից հետևում է, որ համապատասխան առարկաների շուկայական առավելագույն արժեքը չի գերազանցում հափշտակություն կատարելու պահին՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը (տե՛ս սույն որոշման 7.3.-րդ կետը):

19. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, իր պատճառաբանությունները չկառուցելով գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ոչ իրավաչափ որոշում է կայացրել արդարացման դատավճիռը բեկանելու մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ, 358-րդ հոդվածների խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է:

20. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, չփարատված կասկածները մեկնաբանելով հոգուտ ամբաստանյալ Շ.Հովսեփյանի, իրավաչափորեն հաստատված է համարել, որ վերջինիս արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված հանցակազմը: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-

րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Շահեն Թովմասի Հովսեփյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 7-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 21-ի արդարացման դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

31.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0110/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի փետրվարի 15-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Մովսես Խաչատրյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ջինժառայող Հայկ Մովսեսի Խաչատրյանի մահվան փաստի առթիվ 2012 թվականի հունվարի 9-ին ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 4-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90250112 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2012 թվականի հունվարի 21-ի որոշմամբ Սինաս Սկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն թվականի հունվարի 22-ին Մովսես Խաչատրյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Մ.Սկրտչյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով և 376-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2012 թվականի հուլիսի 12-ի որոշումներով Մ.Սկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը վերացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Միքայել Միքայելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով:

2012 թվականի օգոստոսի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. 2014 թվականի դեկտեմբերի 8-ին ամբաստանյալներ Մ.Սկրտչյանը և Մ.Միքայելյանը միջնորդություններ են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով իրենց նկատմամբ կիրառել ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշումը (այսուհետ՝ նաև Համաներման ակտ):

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ ամբաստանյալների վերոնշյալ միջնորդությունները բավարարվել են: Համաներման ակտի 5-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, և ամբաստանյալների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

3. Տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2015 թվականի մայիսի 21-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 5-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության ուղարկելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Մ.Շուշանյանը վճարելի բողոքներ են բերել, որոնց վարույթ ընդունելը մերժվել է Վճարելի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ:

5. 2015 թվականի նոյեմբերի 17-ին ամբաստանյալ Մ.Միքայելյանի պաշտպան Վ.Էլբակյանը, իսկ նույն թվականի նոյեմբերի 19-ին ամբաստանյալ Մ.Սկրտչյանի պաշտպան Լ.Պողոսյանը միջնորդություններ են

ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով դադարեցնել տուժող Հայկ Խաչատրյանի և տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի դատավարական կարգավիճակը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ ամբաստանյալների պաշտպանների վերոնշյալ միջնորդությունները բավարարվել են: Տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի և նրա ներկայացուցիչ Մ.Շուշանյանի դատավարական կարգավիճակը դադարեցվել է, և նրանք հեռացվել են գործի վարույթից:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության:

7. 2016 թվականի փետրվարի 26-ին ամբաստանյալներ Մ.Սկրտչյանը և Մ.Սիբայեյանը միջնորդություններ են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով իրենց նկատմամբ կիրառել Համաներման ակտը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի որոշմամբ ամբաստանյալների վերոնշյալ միջնորդությունները բավարարվել են: Համաներման ակտի 5-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Մ.Սկրտչյանի և Մ.Սիբայեյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ նրանց վերաբերյալ գործի վարույթը՝ կարճվել:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 15-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 2-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

9. Մ.Սկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, *«հանդիսանալով պաշտոնատար անձ՝ ՀՀ ՊՆ թիվ 14203 գործամասի նյարդաբանական բաժանմունքի պետ, կոչումով փոխգնդապետ, միաժամանակ և հիշյալ բաժանմունքում «դինալին ներվի բողբոջում մոնոնեյրապատիա» ախտորոշմամբ ստոգիռնար բուժման մեջ գտնվող՝ ՀՀ ՊՆ թիվ 68617 գործամասի ժամկետային զինձառայող Հայկ Մովսեսի Խաչատրյանի բուժող բժիշկ, վերջինիս մոտ 28.12.2011 թվականին «ջրծաղիկ» վարակը հայտնաբերելուց հետո, վիրաբույժի կողմից անցկացվող հետազոտությունների ընթացքում հիվանդի նկատմամբ հակավիրուսային թերապիա, նեղ մասնագիտական դինամիկ հսկողություն, դեզինոտոքսիկացիոն թերապիա և անհրաժեշտ համապատասխան բժշկական միջոցառումներ ապահովելու համար վարակաբանի մասնակցություն չի ապահովել, այդ ուղղությամբ հիվանդը լիարժեք բուժօգնություն չի ստացել և նույնիսկ վիրաբուժական*

սուր պաթոլոգիա չհայտնաբերվելուց հետո վերջինիս ինֆեկցիոն հիվանդանոց չի տեղափոխել, այլ «ջրծաղիկ» ախտորոշումից հետո 23 ժամ մնացել է վարակաբանության միջոցառումների տեսանկյունից անօգնական վիճակում, նրա մոտ արագ կերպով զարգացել են ջրծաղիկի ծանր հետևանքները, առաջացել գլխուղեղի ախտահարման երևույթներ, ցնցումներ, լյարդի ծանր ախտահարում, հեմոռագիկ սինդրոմ և ներքին արյունահոսություն, որի հետևանքով հիվանդը հետագայում ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխվել է Նորթ ինֆեկցիոն հիվանդանոց, ինչի հետևանքով խախտվել է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով սահմանված անձի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը՝ առաջացնելով էական վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 119-126):

9.1. Մ.Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, «*հանդիսանալով պաշտոնատար անձ՝ ՀՀ ՊՆ թիվ 14203 գործմասի հրամանատար՝ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի պետ, կոչումով գնդապետ, 2011 թվականի դեկտեմբերի 11-ին նյարդաբանական բաժանմունքում բուժվող ժամկետային զինծառայող Յուրա Բադալյանի մոտ ջրծաղիկ հիվանդություն հայտնաբերելուց հետո, անփույթ վերաբերմունք դրսևորելով ծառայության նկատմամբ և խախտելով ՀՀ ՁՈւ ներքին ծառայության կանոնագրքի 341-րդ հոդվածի պահանջները, ինչպես նաև անտեսելով ՀՀ ՊՆ ՌԲՎ պետի կողմից հաստատված՝ սուր շնչառական հիվանդությունների դեմ կանխարգելիչ ու հակահամաճարակային միջոցառումների անցկացման ծրագրի և ՀՀ ՁՈւ ԳՇ պետի՝ 01.12.2009 թվականի թիվ 330/ԳՇ հրամանի համաձայն՝ ՀՀ ՊՆ ՌԲՎ պետի կողմից հաստատված կանխարգելիչ միջոցառումների անցկացման վերաբերյալ մեթոդական նամակի պահանջները, հիշյալ դեպքի մասին ՀՀ ՁՈւ հիգիենիկ հակահամաճարակային անվտանգության ծառայությանը չի հայտնել և բաժանմունքում օբսերվացիոն ռեժիմ չի հայտարարել: Բացի այդ, Մ.Միքայելյանը վարակի հետագա տարածումը կանխարգելելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ չի կազմակերպել, մասնավորապես այդ գործընթացը ղեկավարելու համար համաճարակաբանի և վարակաբանի մասնակցություն չի ապահովել, նշված բաժանմունք քաղաքացիների մուտքը չի արգելել: Միքայել Միքայելյանի կողմից ժամանակին և լիարժեք միջոցառումներ չկազմակերպելու հետևանքով հիշյալ բաժանմունքում վարակի դեմ պայքարը լիարժեք չի կատարվել, վարակի հետագա տարածումը լիարժեք չի կանխվել, «ջրծաղիկ» հիվանդության դեպքերը կրկնվել են, ինչով էական վնաս է պատճառել զինծառայողների առողջությանը և զինծառայության կրման սահմանված կարգին» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 119-126):*

10. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Ինչպես ամբաստանյալ Մ.Սկրտչյանի, այնպես էլ ամբաստանյալ Մ.Միքայելյանի մեղադրանքի որոշումներում, քրեական հետապնդումն իրակա-

նացնող մարմինը նրանց գործողությունների կամ անգործության և ժամկետային զինծառայող Հ.Խաչատրյանի մահվան միջև անմիջական պատճառահետևանքային կապ չի արձանագրել, հակառակ դեպքում ամբաստանյալների արարքները ենթակա էին որակման ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2-րդ մասով (անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ):

Ամբաստանյալներ Մ.Սկրտչյանի և Մ.Միքայելյանի գործողությունների (անգործության) և ժամկետային զինծառայող Հ.Խաչատրյանի մահվան միջև պատճառահետևանքային կապի բացակայության հիմնավորումներ են հանդիսացել նաև ինչպես նախաքննության, այնպես էլ գործի դատաքննության ընթացքում իրականացված հանձնաժողովային դատաբժշկական երեք փորձաքննությունների եզրակացությունները, սակայն այս ապացույցների առկայության պայմաններում մահացած ժամկետային զինծառայող Հ.Խաչատրյանի հայրը՝ Մովսես Խաչատրյանը, գործով շարունակել է մնալ տուժողի իրավահաջորդի դատավարական կարգավիճակում (...)» (տե՛ս քրեական գործի հավելված, թերթեր 28-33):

11. Վերաքննիչ դատարանն իր որոշման շրջանակներում փաստել է. «(...) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ] հոդվածի բովանդակությունից ակնհայտ է, որ «դատավարական կարգավիճակը դադարեցնելու և նրանց գործի վարույթից հեռացնելու մասին» դատարանի կողմից կայացված որոշման բողոքարկում տվյալ հոդվածով նախատեսված չէ:

Հետևաբար հիմք ընդունելով վերոգրյալը Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ [Ա]ռաջին ատյանի դատարանի (...) որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի ուժով չի կարող բողոքարկվել Վերաքննիչ դատարան:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ [Ա]ռաջին ատյանի դատարանի (...) որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Մովսես Խաչատրյանի ներկայացուցիչ Մուշեղ Շուշանյանի կողմից բերված բողոքը բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման, հետևաբար նշված [բողոքը] պետք է թողնել առանց քննության» (տե՛ս քրեական գործի հավելված, թերթեր 51-55):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանները կայացրել են անհիմն, ՀՀ Սահմանադրության ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթներին հակասող դատական ակտեր:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու հիմքեր և

կարգ չի նախատեսել, ինչից հետևում է, որ դատարանը նման որոշում կայացնելու լիազորությամբ օժտված չէ: Բողոքաբերի համոզմամբ՝ Առաջին ատյանի դատարանը, դադարեցնելով տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի դատավարական կարգավիճակը և հեռացնելով նրան գործի վարույթից, գրկել է վերջինիս իր որդու մահվան փաստով հարուցված քրեական գործով դատաքննությանը մասնակցելու, դիրքորոշում ներկայացնելու, դատավարության այլ մասնակիցների փաստարկները վիճարկելու, ինչպես նաև դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Առաջին ատյանի դատարանի՝ տուժողի իրավահաջորդի ու նրա ներկայացուցչի կարգավիճակը դադարեցնելու և վարույթից հեռացնելու մասին որոշումը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման՝ բողոք բերած անձը գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նման դատական ակտ կայացնելու հնարավորություն չի նախատեսում, հետևաբար այդ որոշումը չէր կարող ընգրկված լինել նույն օրենսգրքի 376.1-րդ հոդվածի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերի ցանկում:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ներկայացուցիչ Մ.Շուշանյանը խնդրել է բեկանել Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների որոշումները:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության, մասնավորապես՝ իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այդ առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու հիմքերի, ինչպես նաև այդ կարգավիճակը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման հնարավորության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

I. Տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակի դադարեցման հիմքերը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի և նրա ներկայացուցիչ Մ.Շուշանյանի դա-

տավարական կարգավիճակը դադարեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն՝

«1. Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

2. Տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը»:

Նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն՝

«1. Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի իրավունքները և պարտականությունները:

2. Տուժողի մերձավոր ազգականին նրա իրավահաջորդ ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը՝ նրա խնդրանքով (...):

3. Տուժողի իրավահաջորդ ճանաչված անձն իրավունք ունի քրեական գործով վարույթի ցանկացած պահին դադարեցնել իր լիազորությունները:

4. Տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և ունի վերջինիս իրավունքները և պարտականությունները, բացի ցուցմունքներ տալու և տուժողի անձից անբաժանելի այլ իրավունքներից և պարտականություններից (...):

6. Տուժողի իրավահաջորդն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ»:

Մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը հիմնարար վերլուծության է ենթարկել Ս.Անտոնյանի վերաբերյալ որոշմամբ և իրավական դիրքորոշումներ է հայտնել այն մասին, որ «(...) քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլև հանցագործության արդյունքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այլ խոսքով՝ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության կարևորագույն խնդիրներից մեկը:

«Տուժող» հասկացությունը՝ որպես իրավաբանական կատեգորիա, բնութագրվում է ինչպես իրավական, այնպես էլ դատավարական հատկանիշներով: Որպես իրավական հասկացություն՝ այն արտացոլում է ֆիզիկական կամ իրավաբանական անձին անմիջականորեն հանցագոր-

ծությամբ վնաս պատճառելու օբյեկտիվ փաստը: Դատավարական իմաստով այն սահմանում է, թե ինչպիսի պայմաններում և կարգով է հանցագործությունից վնաս կրած անձը դառնում քրեական դատավարության մասնակից՝ ձեռք բերելով որոշակի դատավարական իրավունքներ և պարտականություններ: Քրեադատավարական օրենքը նախատեսում է նաև տուժողի իրավահաջորդի ինստիտուտը, որը մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի իրավունքների և շահերի ներկայացման ինքնուրույն ձև է: Իրավահաջորդության առաջացման համար անհրաժեշտ է, որ տուժողի մերձավոր ազգականներից մեկը ցանկություն հայտնի ներկայացնելու նրա իրավունքները և պարտականությունները:

(...) [Տ]ուժողի իրավաչափ շահերի շրջանակում է նրան հասցված վնասի վերականգնումը, վնաս պատճառած արարքի հանգամանքների ամբողջական բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, հանցանք կատարած անձի դատապարտումը և նրա նկատմամբ արդարացի պատժի նշանակումը: Հետևաբար քրեական դատավարության ընթացքին տուժողի (տուժողի իրավահաջորդի) մասնակցությունը մի կողմից անհրաժեշտ նախապայման է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար, մյուս կողմից նպաստում է քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը: Քրեական վարույթում անհնար է իրականացնել դատավարական իրավունքներ և պարտականություններ՝ առանց դատավարության մասնակից լինելու, իսկ հանցագործության հետևանքով վնաս կրած անձի դեպքում արդյունավետ մասնակցությունը հնարավոր է միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից վերջինիս տուժող ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:

Տուժող ճանաչելու քրեադատավարական կարգին վերաբերող դրույթների համադրված վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը նշված դատավարական ակտի կայացման համար անհրաժեշտ նախապայման է համարում հանցագործության արդյունքում անձին բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս պատճառված լինելու կամ այդպիսի վնաս պատճառելու հավանականության հաստատումը, ինչը, սակայն, չի կարող մեկնաբանվել այնպես, որ անձին տուժող ճանաչելու համար անհրաժեշտ լինի հանցակազմի բոլոր տարրերի հաստատում կամ վնաս պատճառելու վերաբերյալ սպառնիչ տվյալների հավաքագրում» (տե՛ս Մուսաննա Անտոնյանի գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշման 25-26-րդ կետերը):

16.1. Վերահաստատելով Ս.Անտոնյանի գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ տուժողին դատավարական կարգավիճակ է տրվում վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ հիմք ընդունելով այդ անձին ենթադրյալ հանցագործությամբ անմիջականորեն բարոյական, ֆիզիկական

կամ գույքային վնաս պատճառված լինելու (կամ այդպիսի վնաս պատճառելու հավանականության) հանգամանքը: Նշված կարգավիճակը հնարավորություն է ընձեռում տուժողին (տուժողի իրավահաջորդին) հանդես գալու որպես դատավարության մասնակից և իրականացնելու քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները:

Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է նշել, որ քրեական դատավարության ընթացքում կարող են ի հայտ գալ այնպիսի հանգամանքներ, որոնց հաշվառմամբ վարույթն իրականացնող մարմինը կարող է ունենալ բավարար հիմքեր տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու համար: Օրինակ՝ վարույթի ընթացքում կարող է պարզ դառնալ, որ անձը սխալմամբ է տուժող ճանաչվել: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը քննարկվող կարգավիճակը տվել է, օրինակ, ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասի հետ առնչություն չունեցող անձի (այլ կերպ՝ վնասն օբյեկտիվորեն գոյություն ունի, սակայն այն պատճառվել է ոչ թե տուժող ճանաչված անձին, այլ մեկ ուրիշի) կամ հանրային-իրավական այնպիսի միավորի, որն իրավաբանական անձ չէ:

Ուստի Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերը նկարագրված կամ այլ իրավիճակներում, երբ ի հայտ են գալիս տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու բավարար հիմքեր, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից այդպիսի որոշում կայացնելը հիմնավորված և պատճառաբանված լինելու պայմաններում կարող է իրավաչափ դիտարկվել:

17. Միևնույն ժամանակ անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ և 80-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված իրավանորմների բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե անձին քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս (կամ կարող էր պատճառվել այդպիսի վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը), սակայն նրա մահվան փաստի կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցնելու ուժով վերջինս չի կարող քրեական գործի շրջանակներում մասնակցություն ունենալ, ապա նրա մերձավոր ազգականը կարող է ճանաչվել տուժողի իրավահաջորդ՝ անկախ նրանից՝ մահը կամ կամքն արտահայտելու ունակությունը կորցնելը հանցագործության անմիջական հետևանք են, թե ոչ: Այլ կերպ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին բավարարող անձի մահվան (իր կամքն արտահայտելու ունակությունը կորցնելու) բոլոր դեպքերում վերջինիս մերձավոր ազգականը կարող է ճանաչվել տուժողի իրավահաջորդ: Ընդ որում, մահացած (իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած) անձի մերձավոր ազգականի պահանջն այդ անձին տուժող, իսկ իրեն՝ տուժողի իրավահաջորդ ճանաչելու վերաբերյալ, պետք է անհապաղ քննության

առնվի քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ այն ստանալու պահից 3 օրվա ընթացքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդված):

Այսպիսով, անձը կարող է տուժողի իրավահաջորդ ճանաչվել ինչպես այն դեպքում, երբ տուժողի մահը (իր կամքն արտահայտելու ունակությունը կորցնելը) եղել է կատարված հանցագործության անմիջական հետևանք, այնպես էլ այն պարագայում, երբ կատարված հանցագործության և տուժողի մահվան (իր կամքն արտահայտելու ունակությունը կորցնելու) միջև չի եղել անմիջական պատճառահետևանքային կապ, սակայն մահացած (իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած) տուժողին այդպիսի հանցավոր արարքով անմիջականորեն պատճառվել է այլ ֆիզիկական, ինչպես նաև բարոյական կամ գույքային վնաս (կամ կարող էր պատճառվել այդպիսի վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը): Ընդ որում, նյութական հանցակազմերի պարագայում որոշակի հետևանքների վրա հասնելու հանգամանքը, հավասարապես նաև արարքի և այդ հետևանքների միջև առկա պատճառական կապի բացահայտումը՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ, պարտադիր է, իսկ այդպիսի կապի բացակայությունը կարող է բերել քրեական պատասխանատվության հիմքի չեզոքացման: Հետևաբար անձին մեղսագրված արարքի և առաջացած վնասի միջև պատճառական կապի առկայությունը կամ բացակայությունը հնարավոր է հավաստել միայն գործով ձեռք բերված և պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված ապացույցները գնահատելու արդյունքում:

18. Սույն գործով դատաքննության փուլում՝ 2015 թվականի նոյեմբերի 17-ին, ամբաստանյալ Մ.Միքայելյանի պաշտպան Վ.Էլբակյանը, իսկ նույն թվականի նոյեմբերի 19-ին ամբաստանյալ Մ.Սկրտչյանի պաշտպան Լ.Պողոսյանը միջնորդություններ են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով դադարեցնել տուժող Հ.Խաչատրյանի և տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի դատավարական կարգավիճակը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ ամբաստանյալներ Մ.Սկրտչյանի և Մ.Միքայելյանի մեղադրանքի որոշումներում քրեական հետապնդում իրականացնող մարմինը նրանց գործողությունների (անգործության) և ժամկետային զինժառայող Հ.Խաչատրյանի մահվան միջև անմիջական պատճառահետևանքային կապ չի արձանագրել, հակառակ դեպքում, ըստ ստորադաս ատյանի, ամբաստանյալների արարքները ենթակա էին որակման ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով:

Առաջին ատյանի դատարանը նշել է նաև, որ ամբաստանյալներ Մ.Սկրտչյանի և Մ.Միքայելյանի գործողությունների (անգործության) և ժամկետային զինժառայող Հ.Խաչատրյանի մահվան միջև պատճառահետևանքային կապի բացակայության հիմնավորումներ են հանդիսացել

նախաքննության և դատաքննության ընթացքում իրականացված հանձնաժողովային դատաբժշկական երեք փորձաքննությունների եզրակացությունները, որպիսի ապացույցների առկայության պայմաններում մահացած ժամկետային զինծառայող Հ.Խաչատրյանի հայրը՝ Մ.Խաչատրյանը, գործով շարունակել է մնալ տուժողի իրավահաջորդի դատավարական կարգավիճակում:

Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի և նրա ներկայացուցիչ Մ.Շուշանյանի դատավարական կարգավիճակը պետք է դադարեցնել, և նրանց հետացնել գործի վարույթից (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

19. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 16-17-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալ Մ.Սկրտչյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով զինծառայող Հայկ Խաչատրյանի բուժող բժիշկը, վերջինիս մոտ 2011 թվականի դեկտեմբերի 28-ին «ջրծաղիկ» վարակը հայտնաբերելուց հետո համապատասխան բժշկական միջոցառումներ ապահովելու համար վարակաբանի մասնակցություն չի ապահովել, այդ ուղղությամբ հիվանդը լիարժեք բուժօգնություն չի ստացել և նույնիսկ վիրաբուժական սուր պարթլոզիա չհայտնաբերվելուց հետո վերջինիս ինֆեկցիոն հիվանդանոց չի տեղափոխել, այլ «ջրծաղիկ» ախտորոշումից հետո 23 ժամ Հ.Խաչատրյանը մնացել է վարակաբանության միջոցառումների տեսանկյունից անօգնական վիճակում, նրա մոտ արագ կերպով զարգացել են ջրծաղիկի ծանր հետևանքները, առաջացել գլխուղեղի ախտահարման երևույթներ, ցնցումներ, լյարդի ծանր ախտահարում, հեմոռագիկ սինդրոմ և ներքին արյունահոսություն, որի հետևանքով հիվանդը հետագայում ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխվել է Նորք ինֆեկցիոն հիվանդանոց, ինչի հետևանքով խախտվել է ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 38-րդ հոդվածով սահմանված՝ անձի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը՝ առաջացնելով էական վնաս: Իսկ Մ.Սիքայելյանին նույն հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի պետ, 2011 թվականի դեկտեմբերի 11-ին նյարդաբանական բաժանմունքում բուժվող ժամկետային զինծառայող Յ.Բաղալյանի մոտ ջրծաղիկ հիվանդություն հայտնաբերելուց հետո, հիշյալ դեպքի մասին ՀՀ ՋՈՒ հիգիենիկ հակահամաճարակային անվտանգության ծառայությանը չի հայտնել և բաժանմունքում օբսերվացիոն ռեժիմ չի հայտարարել, վարակի հետագա տարածումը կանխարգելելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ չի կազմակերպել, մասնավորապես այդ գործընթացը ղեկավարելու համար համաճարակաբանի և վարակաբանի մասնակցություն չի ապահովել, նշված բաժանմունք քաղաքացիների մուտքը չի արգելել: Սիքայել Սիքայելյանի

կողմից ժամանակին և լիարժեք միջոցառումներ չկազմակերպելու հետևանքով հիշյալ բաժանմունքում վարակի դեմ պայքարը լիարժեք չի կատարվել, վարակի հետագա տարածումը լիարժեք չի կանխվել, «ջրծաղիկ» հիվանդության դեպքերը կրկնվել են, ինչով էական վնաս է պատճառել զինծառայողների առողջությանը և զինծառայության կրման սահմանված կարգին (տե՛ս սույն որոշման 9-9.1-րդ կետերը):

Վերոգրյալից հետևում է, որ ծառայության նկատմամբ ամբաստանյալների անփույթ վերաբերմունքը դրսևորվել է Մ.Սկրտչյանի դեպքում՝ զինծառայող Հ.Խաչատրյանի մոտ «ջրծաղիկ» վարակը հայտնաբերելուց հետո նրան լիարժեք բուժօգնություն չտրամադրելով և ինֆեկցիոն հիվանդանոց չտեղափոխելով, որի արդյունքում Հ.Խաչատրյանի մոտ արագ կերպով զարգացել են նշված հիվանդության ծանր ախտանիշները, իսկ Մ.Սիքայեյանի դեպքում՝ «ջրծաղիկ» վարակը հայտնաբերելուց հետո դրա հետագա տարածումը կանխարգելելու ուղղությամբ ժամանակին և լիարժեք համապատասխան միջոցառումներ չկազմակերպելով, որի արդյունքում քննարկվող հիվանդության դեպքերը կրկնվել են: Այսինքն՝ ամբաստանյալներին մեղսագրված հանցավոր արարքների հետևանքները Հ.Խաչատրյանի՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի խախտումն ու նրա առողջությանն էական վնասի պատճառումն են, և ոչ թե վերջինիս մահը: Այլ խոսքով՝ ամբաստանյալներին ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքների էությունն այն է, որ զինվորական ծառայության նկատմամբ ամբաստանյալների անփույթ վերաբերմունքի հետևանքով պատճառվել է էական վնաս, որն արտահայտվել է ինչպես Հ.Խաչատրյանի՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքի խախտման, այնպես էլ Հ.Խաչատրյանի առողջությանը և զինվորական ծառայության սահմանված կարգին էական վնասի պատճառման տեսքով:

20. Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեպետ ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքներից հետևում է, որ նրանց մեղսագրված արարքների և տուժողի մահվան միջև անմիջական պատճառահետևանքային կապը բացակայում է, սակայն մահացած Հ.Խաչատրյանին ամբաստանյալներին մեղսագրված արարքներով անմիջականորեն պատճառվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վնաս: Հետևաբար հիմք ընդունելով սույն որոշման 17-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, մասնավորապես այն, որ անձը կարող է տուժողի իրավահաջորդ ճանաչվել նաև այն դեպքում, երբ կատարված հանցագործության և տուժողի մահվան միջև չի եղել անմիջական պատճառահետևանքային կապ, սակայն մահացած տուժողին այդպիսի հանցավոր արարքով անմիջականորեն պատճառվել է այլ ֆիզիկական, ինչպես նաև բարոյական կամ գույքային վնաս՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի հետևությունն այն մասին, որ մահացած ժամկետային

զինծառայող Հ.Խաչատրյանի հայրը՝ Մ.Խաչատրյանը, գործով անհիմն շարունակել է մնալ տուժողի իրավահաջորդի դատավարական կարգավիճակում, հիմնավոր չէ:

21. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը եզրահանգում է, որ տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի և նրա ներկայացուցիչ Մ.Շուշանյանի դատավարական կարգավիճակը դադարեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն իրավաչափ չէ: Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի խախտում, իսկ արդյունքում անհամաչափորեն սահմանափակել է Մ.Խաչատրյանի իրավունքներն ու օրինական շահերը՝ գրկելով նրան քրեադատավարական օրենքով իրեն վերապահված իրավունքներից օգտվելու փաստացի հնարավորությունից:

II. Տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու մասին որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման հնարավորությունը.

22. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

23. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: (...) Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունք-*

ներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»:*

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

ա) ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կատարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը դրանք տրամադրելու դեպքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Քրեական դատավարությունն իրականացվում է՝ ապահովելու համար անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից»:*

Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:*

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների վերաբերյալ հիմնահարցերին, ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումները՝

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները,

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՄԳ-Ո-936, 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՄԳ-Ո-1257 որոշումների համապատասխանաբար 6-րդ և 7-րդ կետերը):

23.1. Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան): Մասնավորապես՝ Հիրշհորն ընդդեմ Ռումինիայի գործով վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրույթի հիման վրա, որ դատարան դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է Եվրոպական դատարանը: Անհրաժեշտ է հիմնավորել, որ կիրառված սահմանափակումները դատարան դիմելու՝ անձի իրավունքն այն աստիճան չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ դրա արդյունքում խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չհետապնդի, և առկա չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև (տե՛ս *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, կետ 50):

Խնդրո առարկա հիմնարար իրավունքների էությանն անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և

ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները» (տե՛ս Արթուր Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԳ-2/0007/15/12 որոշման 16-րդ կետը):

24. Սույն որոշման նախորդ կետում վերլուծության առարկա դարձած հիմնարար իրավունքների ապահովման անհրաժեշտությունը Վճռաբեկ դատարանը հարկ է համարում քննարկել հանցագործությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության համատեքստում:

Այդ առումով Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հանցագործության արդյունքում տուժած անձը ոչ միայն արդար դատաքննության և դատարանի մատչելիության հիմնարար իրավունքները կրող սուբյեկտ է, այլև միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերով որպես պետության պարտավորություն է սահմանվում հենց վերջինիս իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովումը:

Այսպես՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (այսուհետ՝ նաև Կոմիտե)՝ 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժածի կարգավիճակի մասին» R(85)11, 2006 թվականի հունիսի 14-ի՝ «Հանցագործության զոհերի աջակցության վերաբերյալ» R(2006)8 հանձնարարականներում առաջարկվում է ազգային մակարդակներով միջոցներ ձեռնարկել տուժողների իրավունքների պաշտպանության համար: Մասնավորապես, Կոմիտեի՝ 1985 թվականի հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակները ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործադրումը հաճախ բարդացնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Սինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը:

Ելնելով վերոշարադրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ամրացնել տուժողի վստահությունը քրեական արդարադատության համակարգի նկատմամբ՝ Կոմիտեն անդամ պետություններին հանձնարարել է վերանայել իրենց օրենսդրությունը և դատական պրակ-

տիկան քրեական արդարադատության համակարգում տուժողի դերը բարձրացնելու մի շարք ուղղություններով:

Մինևույն ժամանակ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի՝ 1985 թվականի նոյեմբերի 29-ի՝ «Հանցագործության և իշխանության շարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքները» A/RES/40/34 հռչակագրի 4-րդ և 5-րդ կետերը վկայում են, որ հանցագործությունից տուժողները պետք է արդարադատության մեխանիզմներից օգտվելու հնարավորություն ունենան: Դատական և վարչական կառուցակարգերը պետք է հաստատվեն և ամրապնդվեն այնպես, որ հնարավորություն ընձեռեն տուժողին ստանալու փոխհատուցում արագ, արդար, սակավարժեք և մատչելի ընթացակարգերի միջոցով:

25. Հիմք ընդունելով սույն որոշման 23-24-րդ կետերում շարադրված համակարգային վերլուծությունը և հաշվի առնելով տուժողի (տուժողի իրավահաջորդի) իրավունքների պաշտպանության՝ պետության պոզիտիվ պարտավորության, ինչպես նաև վերջինիս՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացվելիության ապահովման անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու մասին դատարանի որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման: Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը հիմնավորվում է նաև նրանով, որ այդպիսի որոշման բողոքարկման հնարավորություն չընձեռելու միջոցով տուժողի (տուժողի իրավահաջորդի)՝ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակելը խաթարում է այդ հիմնարար իրավունքի բուն էությունը՝ վերջինիս վերածելով պատրանքային հիմնադրույթի: Այդպիսի սահմանափակումը խախտում է նաև գործադրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև հավասարակշռության ողջամիտ հարաբերակցությունը:

26. Սույն գործով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «դատավարական կարգավիճակը դադարեցնելու և նրանց գործի վարույթից հեռացնելու մասին» դատարանի կողմից կայացված որոշման բողոքարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածով նախատեսված չէ, և եզրահանգել, որ բողոք է բերվել այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման: Արդյունքում ստորադաս դատարանն առանց քննության է թողել տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքը (տես սույն որոշման 11-րդ կետը):

27. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 23-25-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը՝ տուժողի իրավահաջորդի դատավարական կարգավիճակը դադարեցնելու մասին որոշումը բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ, հանգեցրել է տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի՝ դատարանի մատչելիության իրավունքի այնպիսի

սահմանափակման, որի արդյունքում խաթարվել է նրա՝ հիշյալ իրավունքի բուն էությունը՝ վերածվելով պատրանքային հիմնադրույթի: Այդպիսի սահմանափակումը խախտել է նաև գործադրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև հավասարակշռության ողջամիտ հարաբերակցությունը:

Այսպիսով, Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանին զրկելով դատարանի մատչելիության իրավունքից, խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածների պահանջները:

28. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

29. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված քրեադատավարական օրենքի խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Միևնույն ժամանակ ելնելով արդարադատության արդյունավետության շահերից՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը պետք է փոփոխել և տուժողի իրավահաջորդ Մ.Խաչատրյանի և նրա ներկայացուցիչ Մ.Շուշանյանի դատավարական կարգավիճակը վերականգնել: Վճարելի դատարանը հարկ է համարում նշել նաև, որ տուժողի իրավահաջորդը կաշկանդված չէ օգտվելու՝ քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքներից, այդ թվում՝ Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը օրենքով սահմանված ընդհանուր կարգով բողոքարկելու հնարավորությունից, որպիսի պարագայում վերաքննիչ բողոք բերելու՝ բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (ex jure) պետք է համարվի հարգելի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Տուժողի իրավահաջորդ Մովսես Խաչատրյանի և նրա ներկայացուցիչ Մ.Շուշանյանի դատավարական

կարգավիճակը դադարեցնելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 29-ի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 15-ի որոշումները բեկանել և փոփոխել:

2. Տուժողի իրավահաջորդ Մովսես Խաչատրյանի և նրա ներկայացուցիչ Մ.Շուշանյանի դատավարական կարգավիճակը վերականգնել՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

32.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԳ/0044/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ
դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ
ամբաստանյալ՝

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Աշոտ Սարգսի
Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվա-
կանի դեկտեմբերի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի մայիսի 27-ին Սյունիքի մարզի քննչական բաժ-
նում հարուցվել է թիվ 41106614 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի
230-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2015 թվականի մարտի 23-ի որոշմամբ Ա.Գևորգյանը ներգրավվել է
որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օ-
րենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Գևորգյանի նկատմամբ որպես
խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2015 թվականի ապրիլի 22-ին Ա.Գևորգյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճռով Ա.Գևորգյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով՝ առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ա.Գևորգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Մեղադրող Ա.Առաքելյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 3-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Ա.Գևորգյանը, որտեղ իր անհամաձայնությունն է հայտնել բողոքաբերի փաստարկներին և խնդրել վճռաբեկ բողոքը մերժել, ստորադաս դատարանների դատական ակտերը՝ թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ - մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա, աշխատելով «Դանդի Փրիշս Մեթալս Կասպան» ՓԲ ընկերությունում որպես հերթափոխի պետ, 2014 թվականի մայիսի 27-ին ընկերության Շահումյան հանքի հարավային տեղամասի 670-րդ հորիզոնի 17-րդ երակում լեռնահանքային աշխատանքների կատարման ընթացքում խախտել է անվտանգության կանոնները, որն անզգուշությամբ առաջացրել է Խաչատուր Առաքելյանի մահը:

Այսպես. Աշոտ Գևորգյանը, աշխատելով որպես հերթափոխի պետ և աշխատանքի նկարագրով սահմանված կարգով պարտավոր լինելով ապահովել անվտանգ աշխատանքային միջավայր իր և իր գործընկերների համար, մշտապես հետևել անվտանգության ընթացակարգերին և զեկուցել աշխատանքային միջավայրում առկա վտանգավոր պայմանների մասին, 2014 թվականի մայիսի 27-ին՝ ժամը 08-ի սահմաններում, հորատող

Խաչատուր Առաքելյանին Շահումյան հանքի հարավային տեղամասի 670-րդ հորիզոնի տեխնիկական անվտանգության կանոնների խախտումներ ունեցող, անվտանգ վիճակում չգտնվող 17-րդ երակում հորատման աշխատանքներ կատարելու հրահանգ տալով, ինչպես նաև ժամը 09-ի սահմաններում նշված երակում շրջայց կատարելիս անվտանգության կանոնների խախտումները, կախված ապարները չհայտնաբերելով ու աշխատանքների կատարումը չդադարեցնելով խախտել է ՀՀ կառավարության 27.08.2009 թվականի 1083-Ն որոշմամբ [ամրագրված պահանջները,] (...) խախտել է նաև ընկերության ղեկավարի կողմից հաստատված «Կախված քարերի վնասագերծման ընթացակարգի» պահանջները, բացի այդ, հայտնաբերելով հորատող Խաչատուր Առաքելյանի կողմից նշված ընթացակարգի խախտումներով կատարվող աշխատանքը, անվտանգ աշխատանքային միջավայր ապահովելու համար պատշաճ հսկողություն չի իրականացրել նրա կողմից կանոնակարգի ու ընթացակարգի պահանջների պահպանման գործընթացի նկատմամբ, ինչի հետևանքով առաստաղի քարերը փլուզվել են Խաչատուր Առաքելյանի վրա և անգոյությունը առաջացրել նրա մահը» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 250-251):

6. Առաջին ատյանի դատարանը, իր դատավճռի պատճառաբանական մասում անդրադառնալով ամբաստանյալ Ա.Գևորգյանի նկատմամբ պատիժ նշանակելու հարցին, արձանագրել է. «Ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ են կատարած հանցագործության համար իրեն լիովին մեղավոր ճանաչելն ու անկեղծորեն գոջալը, առաջին անգամ անգոյությունը միջին ծանրության հանցանք կատարելը:

Ամբաստանյալը բնութագրվում է դրականորեն, նախկինում դատապարտված և արատավորված չի եղել, կենսաթոշակառու է, ընտանիքի միակ կերակրողն է:

Տուժողի իրավահաջորդը հայտնել է, որ ամբաստանյալից պարտք ու պահանջ չունի և խնդրել է նրա նկատմամբ մեղմ վերաբերվել:

(...)

Դատարանը, վերլուծելով և գնահատելով վերը նշված տվյալները, հաշվի առնելով կատարված հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, գտնում է, որ վերը թվարկված հանգամանքներն էականորեն նվազեցնում են հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու իրենց համակցությամբ հնարավորություն են տալիս հանգելու հետևության, որ Աշոտ Գևորգյանի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու ու վերջինիս նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պա-

տիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով տվյալ գործով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը: Տվյալ դեպքում դրանով կապահովվեն նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները:

(...)

Դատարանը, հաշվի առնելով, որ ամբաստանյալը դեպքից հետո՝ 2014 թվականի մայիսի 27-ից մինչ օրս, շարունակում է աշխատել ստորգետնյա պայմաններում հերթափոխի պետ, բնութագրվում է դրականորեն, նրա աշխատանքի մեջ որևէ թերություն չի արձանագրվել, բարեխղճորեն կատարում է իր վրա դրված աշխատանքային պարտականությունները, նպատակահարմար չի գտնում կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ - հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ ոչ պարտադիր պատժատեսակը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 260-262):

7. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, փաստել է. «(...) [Առաջին ատյանի դատարանն] իրավացիորեն գտել է, որ (...) [ամբաստանյալի] ուղղվելը հնարավոր է ազատագրված ձևով նշանակված հիմնական պատիժը նրա կողմից առանց կրելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառման միջոցով:

Անդրադառնալով մեղադրողի վերաքննիչ բողոքի այն պահանջին, որ ամբաստանյալի նկատմամբ որպես լրացուցիչ պատիժ պետք է նշանակել՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ այս կամ այն իրավունքից զրկելը կիրառվում է, երբ հանցագործության բնույթից ելնելով դատարանն անհնարին է համարում որոշակի պաշտոն զբաղեցնելը կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը: (...)

Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ քննարկվող պարագայում ամբաստանյալի նկատմամբ լրացուցիչ պատիժ նշանակելով հնարավոր չէ հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածով նախատեսված պատժի նպատակներին, քանի որ ամբաստանյալ Աշոտ Գևորգյանը «ԴՓՄԿ» ՓԲ ընկերության կողմից տրված դրական բնութագրի համաձայն, դեպքից հետո մինչ օրս աշխատում է նույն կազմակերպությունում, զբաղեցնում է նույն պաշտոնը, իր վրա դրված պարտականությունները կատարում է բարեխղճորեն և օժտված է կազմակերպչական ունակություններով:

Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ տուժողի իրավահաջորդ Լատուրա Հարությունյանը ամբաստանյալի

նկատմամբ բողոք, պահանջ չունի և խնդրում է նրան չզրկել ազատությունից (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 44-45):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը փաստել է, որ ամբաստանյալ Ա.Գևորգյանի նկատմամբ լրացուցիչ պատիժ չնշանակելով, ինչպես նաև նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

8.1. Անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատիժ չնշանակելու իրավաչափությանը՝ բողոքաբերը նշել է, որ «ԴՓՄԿ» ՓԲԸ-ի կողմից ամբաստանյալի՝ դրականորեն բնութագրվելը որևէ ձևով չի կարող գնահատվել որպես անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը ողջամտորեն նվազեցնող փաստարկ, իսկ դեպքից հետո աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում որևէ խախտում չկատարելը ամբաստանյալի պարտականությունն է:

Տուժողի իրավահաջորդի դիրքորոշման առումով բողոքաբերը նշել է, որ վերջինս Ա.Գևորգյանին որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու հարցում չի կարող որևէ էական նշանակություն ունենալ, քանի որ ամբաստանյալին այդ իրավունքից չզրկելն այսուհետ վտանգելու է ոչ թե տուժողի իրավահաջորդի, այլ ուրիշ անձանց իրավունքները:

8.2. Ինչ վերաբերում է ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցին՝ բողոքաբերը Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-84/07, թիվ ԵՇԴ-0029/01/08, թիվ ԵԱՆԴ-0060/01/13 գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա նշել է, որ ստորադաս դատարաններն այդպիսի որոշում են կայացրել պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող իրական հանգամանքների բացակայության պայմաններում:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը փաստել է, որ ամբաստանյալի կողմից առաջին անգամ անգոյությունը միջին ծանրության հանցանք կատարելը որևէ ձևով չի նվազեցնում նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, քանի որ վերջինիս կողմից հանցանքը կատարվել է ոչ թե հանգամանքների պատահական զուգորդմամբ, այլ կանոնները, որոնց պահանջները նա խախտել է, եղել են իր ամենօրյա աշխատանքի անբաժանելի մասը, և նա անձամբ պատասխանատու է եղել դրանց պահպանման համար: Ըստ բողոքաբերի՝ առաջադրված մեղադրանքում լիովին մեղավոր ճանաչելն ու անկեղծորեն զղջալը նույնպես որևէ ձևով չի նվազեցնում Ա.Գևորգյանի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, քանի որ Ա.Գևորգյանն իրեն մեղավոր է ճանաչել և անկեղծորեն զղջացել միայն դատական վիճաբանությունների փուլում:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ ստորադաս դատարանների կողմից որպես մեղմացնող նշված մյուս՝ դրականորեն բնութագրվելու, նախկինում դատապարտված և արատավորված չլինելու, կենսաթոշակառու և ընտանիքի միակ կերակրողը լինելու հանգամանքները ևս չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը: Բացի այդ, բողոքաբերը փաստել է, որ դրականորեն բնութագրվելու և ընտանիքի միակ կերակրողը լինելու հանգամանքների վերաբերյալ համապատասխան ապացույցներ Առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ չեն եղել, սակայն ստորադաս դատարանները դա հաշվի չեն առել:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. քրեական պատժի նպատակների և պատժի արդարության սկզբունքի տեսանկյունից հիմնավորված են արդյոք ամբաստանյալ Ա.Գ.Լորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ - հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատիժ չնշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ *«Պատժի տեսակներն են՝ (...)*

2) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը.

(...)»:

Նույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը կիրառվում է և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ պատիժ»:

Նույն օրենսգրքի 52-րդ հոդվածի համաձայն՝ «1. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելը, իսկ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը կատարված հանցանքի բնույթի հետ կապված որոշակի գործունեությանը զբաղվելն արգելելն է:

(...)

3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը կարող է նշանակվել այն դեպքում, երբ դատարանը, ելնելով հանցավորի պաշտոնավարության կամ որոշակի գործունեությանը զբաղվելու ժամանակ նրա կատարած հանցագործության բնույթից, հնարավոր չի գտնում պահպանել որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու նրա իրավունքը:

(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածի համաձայն՝ «1. Լեռնահանքային, շինարարական կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության կանոնները խախտելը, եթե մարդու առողջությանն անգոյությունը պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս (...)

2. Նույն արարքը, որն անգոյությունը առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը տասը տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

12. Պատժի արդարությանը, նպատակներին, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին, դրանց համատեքստում պատժի տեսակներից որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելու էությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Լ. Վարդանյանի և Զ. Այվազյանի գործով որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումները. «Վճռաբեկ դատարանը թիվ ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ԵՇԳ/0029/01/08, ԵԿԳ/0042/01/11, ԵՇԳ/0143/01/13, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում անդրադառնալով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին, կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ հանցավորի անձին և հանցագործության վտանգավորության

բնույթին ու աստիճանին համաչափ քրեախրավական ներգործության միջոց ընտրելու, ինչպես նաև դրա շրջանակներում համաչափ պատժաչափ սահմանելու պահանջն ուղղակիորեն բխում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների, մասնավորապես՝ արդարության և պատասխանատվության անհատականացման հիմնարար սկզբունքների բովանդակությունից: Արդարացի է այն պատիժը, որի ընտրությունը գործի բոլոր հանգամանքների՝ հանցագործության վտանգավորության բնույթի և աստիճանի (հանցագործության մեղքի ձև, շարժառիթ, նպատակ, պատճառված վնասի չափ, եղանակ, գործիքներ ու միջոցներ և այլն), հանցավորի անձը բնութագրող տվյալների, մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ամբողջական ու բազմակողմանի վերլուծության արդյունք է և բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից: Վերոնշյալ պահանջներից նահանջը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման:

Պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործությանը քրեախրավական միջոցներով արձագանքելու պարտադիրությամբ, ինչպես նաև հանցագործության և քրեախրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար՝ պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: Պատիժ նշանակելու սկզբունքի բովանդակությունն ընդգրկում է դատապարտյալի, տուժողի և հասարակության վերաբերմունքը նշանակված պատժի նկատմամբ: Ուստի պատիժ նշանակելիս արդարության սկզբունքը դատարանից պահանջում է ողջամտորեն հաշվի առնել արդարության մասին վերոնշյալ սուբյեկտների կարծիքը, որը պետք է կիրառվի պատժի նշանակման մյուս սկզբունքների, ինչպես նաև պատժի նպատակների համատեքստում (...):

(...) ՀՀ քրեական օրենսգրքը չի մասնավորեցնում և չի տարբերակում հիմնական և լրացուցիչ պատիժ նշանակելու սկզբունքները և նպատակները, որից հետևում է, որ անկախ այն հանգամանքից, թե անձի նկատմամբ նշանակվում է հիմնական, թե հիմնական և լրացուցիչ պատիժ իրար հետ համակցված, դատարանը բոլոր դեպքերում պարտավոր է առաջնորդվել քրեական օրենսգրքում ամրագրված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով (օրինականություն, արդարություն, պատժի անհատականացում, մարդասիրություն) և պատժի նպատակներին հասնելու օրենսդրական կարգադրանքով: Այլ կերպ՝ պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներն ու նպատակները հավասարապես վերաբերում են ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատիժներին: Օրենքով սահմանված պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից դատարանը, հաշվի առնելով հանցագործության բնույթը, արարքի հանրային վտանգավորության աստիճանը և հանցագործի անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պետք է նշանակի այն-

պիսի պատիժ (հիմնական կամ հիմնական և լրացուցիչ), որը կբխի վերոթվարկած չափանիշներից և կապահովի պատժի նպատակների լիարժեք իրացվելիությունը:

(...)

(...) [Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելու՝ որպես պատժի տեսակի] բովանդակությունը մի շարք զրկանքների և սահմանափակումների առաջացման մեջ է: Դրանք են, ի թիվս այլնի, որոշակի ժամանակով անձի աշխատանքային իրավունակության, պաշտոնի, մասնագիտական գործունեության կամ զբաղվածության տեսակի ազատ ընտրության իրավունքի սահմանափակումները, որոնք որոշ դեպքերում առաջացնում են որակավորման կորուստ, որոշակի նյութական կորուստ, առավելությունների և արտոնությունների սահմանափակում: Այս պատժատեսակի հիշյալ պատժիչ տարրերն արտացոլում են դրա վառ արտահայտված կանխարգելիչ ուղղվածությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածը սահմանում է երկու առանձին պատժամիջոցներ, առաջին՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկում և որոշակի գործունեությանը զբաղվելու սահմանափակում: Առաջինի կիրառման դեպքում դատապարտյալը զրկվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից: Իսկ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելու դեպքում սահմանափակվում է որոշակի մասնագիտական կամ այլ գործունեությանը մեղավոր ճանաչված անձի զբաղվելու իրավունքը:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելու նպատակներից է՝ կանխել տվյալ բնույթի հանցագործության հետագա կատարման հավանականությունը, քանի որ այս պատժատեսակը նշանակվում է հատուկ կարգավիճակ ունեցող կամ որոշակի գործունեությանը զբաղվող անձանց նկատմամբ: Այլ կերպ՝ տվյալ պատժատեսակի կիրառումը բխում է այն հանցագործությունների կանխման անհրաժեշտությունից, որոնք այս կամ այն առումով կապված են հանցավորի պաշտոնական դիրքի կամ մասնագիտական կամ այլ գործունեության հետ:

Այլ խոսքով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը կիրառվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմի սանկցիայով նախատեսված սահմաններում՝ նպատակ հետապնդելով կանխելու զբաղեցրած պաշտոնից կամ որոշակի գործունեությանը զբաղվելուց բխող համանման հանցագործությունների կատարման հավանականությունը (տես Լիլիթ Վարդանյանի և Չարինե Այվազյանի գործով Վճարելի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԲԳ/0016/01/14 որոշման 12-13-րդ, 14.1-րդ կետերը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Գ.Լորգյանը Առաջին ատյանի դատարանի դատարանի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդ-

վածի 2-րդ մասով այն բանի համար, որ նա, աշխատելով «Դանդի Փրիշու Մեթալս Կապան» ՓԲ ընկերությունում որպես հերթափոխի պետ, 2014 թվականի մայիսի 27-ին ընկերության Շահումյան հանքի հարավային տեղամասի 670-րդ հորիզոնի 17-րդ երակում լեռնահանքային աշխատանքների կատարման ընթացքում խախտել է անվտանգության կանոնները, որն անգոյություն ունի առաջացրել է Խ.Առաքելյանի մահը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ - մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատժատեսակը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, ամբաստանյալի նկատմամբ կիրառելուն՝ Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ ամբաստանյալը դեպքից հետո՝ 2014 թվականի մայիսի 27-ից մինչև դատական ակտ կայացնելու օրը, շարունակել է կատարել նույն աշխատանքը, բնութագրվում է դրականորեն, նրա աշխատանքի մեջ որևէ թերություն չի արձանագրվել, բարեխղճորեն կատարում է նրա վրա դրված աշխատանքային պարտականությունները: Իսկ արդյունքում եզրահանգել, որ վերջինիս նկատմամբ նշյալ պատժատեսակի կիրառումը նպատակահարմար չէ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, իր հերթին նշել է, որ քննարկվող պարագայում ամբաստանյալի նկատմամբ լրացուցիչ պատիժ նշանակելով՝ հնարավոր չէ հասնել պատժի նպատակներին: Վերաքննիչ դատարանը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ տուժողի իրավահաջորդն ամբաստանյալի նկատմամբ բողոք, պահանջ չունի և խնդրում է նրան չզրկել ազատությունից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով *Լ. Վարդանյանի* և *Չ. Այվազյանի* գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած և սույն որոշման 12-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալ Ա.Գ.Լորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատիժ չնշանակելով, սույն գործի փաստերը գնահատման չեն ենթարկել կատարած արարքի և վրա հասնող հետևանքների համաչափության պահանջի, համանման բնույթի հանցագործությունների կանխման անհրաժեշտության, նշանակված պատժի նկատմամբ հասարակության՝ սպասվելիք վերաբերմունքի շրջանակներում:

Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դեպքից հետո նույն կազմակերպությունում, նույն պաշտոնում աշխատանքի կատարումը շարունակելը, այդ կազմակերպության կողմից դրականորեն բնութագրվելը ողջամտորեն չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանն այնքանով, որ ստորադաս դատարաններին բավարար հնարավորություն տալին եզրահան-

գելու, որ տվյալ դեպքում պատժի նպատակները կարող են իրացվել առանց լրացուցիչ պատժի կիրառման:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ համապատասխան եզրահանգման գալիս Վերաքննիչ դատարանը հաշվի է առել նաև այն, որ տուժողի իրավահաջորդն ամբաստանյալի նկատմամբ բողոք, պահանջ չունի և խնդրել է նրան չզրկել ազատությունից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), ապա Վճարելի դատարանը փաստում է, որ այդ խնդրանքն ամբաստանյալի նկատմամբ լրացուցիչ պատիժ նշանակելու հարցում չէր կարող նշանակություն ունենալ առնվազն այն պատճառով, որ դա վերաբերում էր ոչ թե վերջինիս նկատմամբ լրացուցիչ պատիժ չնշանակելուն, այլ նրան ազատությունից չզրկելուն:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ քրեական պատժի նպատակների և պատժի արդարության սկզբունքի տեսանկյունից հիմնավորված չեն ամբաստանյալ Ա.Գ.Լորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատիժ չնշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

16. Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ա.Գ.Լորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունների՝ ոչ հիմնավոր լինելու մասին բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 8.2-րդ կետը), ապա Վճարելի դատարանը դրանց կապակցությամբ փաստում է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում թույլ չեն տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող այնպիսի դատական սխալ, որ կարող էր բավարար հիմք համարվել հիշյալ դատարանների դատական ակտերը այդ մասով բեկանելու համար: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա.Գ.Լորգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելով, իսկ Վերաքննիչ դատարանն այդ մասով անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր:

17. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, Ա.Գ.Լորգյանի նկատմամբ լրացուցիչ պատիժ չնշանակելով, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտերի կայացմանը: Նշված խախտումներն իրենց բնույթով էական են, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածների, լրացուցիչ պատժի մասով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն այդ մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Աշոտ Սարգսի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը՝ լրացուցիչ պատժի մասով, բեկանել և գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Աշոտ Սարգսի Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

33.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԳ-3/0010/06/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.Պետրոսյանի

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

ռոնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Ռաֆայել Արայի Քոթանջյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ պաշտպան Է.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐՁԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 20806114 քրեական գործը:

2015 թվականի հունիսի 6-ին Ռաֆայել Քոթանջյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունիսի 7-ի որոշմամբ Ռ.Քոթանջյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

2015 թվականի հունիսի 8-ին նախաքննության մարմինը միջնորդություն է հարուցել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Ռ.Քոթանջյանի նկատմամբ որպես խափանման միջոց 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորում կիրառելու մասին:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 8-ի որոշմամբ Ռ.Քոթանջյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Նույն որոշմամբ բավարարվել է մեղադրյալին կալանքից գրավով ազատելու մասին պաշտպանի միջնորդությունը:

3. Գատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հուլիսի 6-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու և մեղադրյալ Ռ.Քոթանջյանի նկատմամբ գրավ կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 8-ի որոշումը բեկանելու մասին՝ գրավի կիրառումը ճանաչելով անթույլատրելի:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ Ռ.Քոթանջյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2015 թվականի նոյեմբերի 6-ը, իսկ 2015 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ՝ ևս 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2016 թվականի հունվարի 6-ը:

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 6-ի որոշման դեմպաշտպան Է.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2015 թվականի նոյեմբերի 24-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու և Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

6. Մեղադրյալ Ռ.Քոթանջյանի պաշտպան Է.Խաչատրյանը Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 6-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ստացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Ռ.Քոթանջյանին ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «2014 թվականի դեկտեմբերի 22-ին, ժամը 20:30-ի սահմաններում, Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքի Տոռոզյան 15 հասցեում տեղակայված «ՎիվաՍել» ընկերության գրասենյակի դիմաց խուլիգանական դրդումներով Գագիկ Մուրադյանի առողջությանը դիտավորությամբ պատճառել է միջին ծանրության վնաս» (տե՛ս նյութեր, թերթեր 8-9):

8. Նախաքննության մարմինը 2015 թվականի նոյեմբերի 6-ին միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ թիվ 20806114 քրեական գործով մեղադրյալ Ռ.Քոթանջյանին կալանքի տակ պահելու ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու վերաբերյալ: Միջնորդությունը և կից նյութերը Առաջին ատյանի դատարանի գրասենյակ են մուտքագրվել 2015 թվականի նոյեմբերի 6-ին՝ ժամը 13:10-ին (տե՛ս նյութեր, թերթեր 1-5):

8.1. Միջնորդության քննարկումը նշանակվել է 2015 թվականի նոյեմբերի 6-ին՝ ժամը 14:30-ին, որի վերաբերյալ գրություն է ուղարկվել վարույթն իրականացնող մարմնին՝ առաջարկելով ներկայանալ դատական նիստին՝ միաժամանակ ապահովելով մեղադրյալ Ռ.Քոթանջյանի և նրա շահերի պաշտպան՝ ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբան Մ.Թովմասյանի մասնակցությունը (տե՛ս նյութեր, թերթ 19):

8.2. Գատական նիստի օրվա և ժամի մասին հեռախոսակապի միջոցով իրազեկվել է պաշտպան Մ.Թովմասյանը, ինչի վերաբերյալ կազմվել է համապատասխան հեռախոսագիր: Պաշտպանը հայտարարել է, որ դատական նիստի մասին նոր է տեղեկացել և չի կարող ներկայանալ, քանի որ նույն ժամին այլ դատարանում պետք է մասնակցի մեկ այլ դատական նիստի (տե՛ս նյութեր, թերթ 20):

8.3. Նույն օրը գրություն է հասցեագրվել նաև ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի պետին և ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետին՝ առաջարկելով ապահովել մեղադրյալ Ռ.Քոթանջյանի մասնակցությունը դատական նիստին (տե՛ս նյութեր, թերթ 21):

8.4. Առաջին ատյանի դատարանում 2015 թվականի նոյեմբերի 6-ին տեղի ունեցած դատական նիստին մասնակցել է միայն քննիչ Վ.Ալեքսանյանը:

Պաշտպան Մ.Թովմասյանը և մեղադրյալ Ռ.Քոթանջյանը դատական նիստին չեն մասնակցել:

8.5. Գատական նիստը բացվել է ժամը 14:34-ին, որից հետո ընդմիջվել 30 րոպեով՝ դատական նիստին մեղադրյալին ներկայացնելու վերաբերյալ նախապես ուղարկված ծանուցման կապակցությամբ պատասխան չստացվելու պատճառաբանությամբ:

Գատական նիստը վերսկսվել է ժամը 15:04-ին, որի ընթացքում քննիչը հայտարարել է, որ մեղադրյալը հրաժարվում է ներկայանալ դատական նիստին, ուստի մեկուսարանից պետք է դատարան ուղարկեն համապատասխան փաստաթուղթ:

Գատական նիստը կրկին ընդմիջվել է 10 րոպեով և վերսկսվել ժամը 15:25-ին: Նախագահող դատավորը հայտարարել է, որ էլեկտրոնային տարբերակով համապատասխան գրություն է ուղարկվել մեկուսարան՝ մեղադրյալի մասնակցությունն ապահովելու նպատակով, ինչը, սակայն, չի ապահովվել:

Դատարանը որոշել է միջնորդության քննարկումը շարունակել մեղադրյալի կաշառույթի բացակայությամբ:

8.6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտը հրապարակվել է նույն օրը՝ 2015 թվականի նոյեմբերի 6-ին՝ ժամը 15:58-ին (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

9. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է. *«(...) [Այնպես է հիմնավոր կատարված և ողջամիտ ենթադրություն, մեղադրյալի առնչակցությանը նախաքննության մարմնի կողմից նրան մեղաազդվող հանցագործությանը և դեռևս չեն վերացել և առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերը և պայմանները, այն է՝ Ռաֆայել Քոթանջյանը ազատության մեջ մնալով կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում և դատարանում գործի քննությանը՝ դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով, կատարել քրեական օրենսգրքով չթույլատրված արարք:*

(...)

Դատարանը միաժամանակ նշում է, որ նախաքննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն, գործի քննության ընթացքն սպառնալից է համար (...)» (տե՛ս նյութեր, թերթեր 31-32):

10. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատականակտը թողնելով օրինական ուժի մեջ, փաստել է. *«(...) Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Ռ.Քոթանջյանի կալանավորման ժամկետը երկարացնելու մասին կայացրել է հիմնավորված և պատճառաբանված որոշում (...):*

(...)

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում քննիչի պատճառաբանությունը, որ չեն վերացել Ռ.Քոթանջյանին կալանքի տակ պահելու հիմքերը, որ նա մեղադրվում է դիտավորությամբ միջին ծանրության հանցանք կատարելու մեջ, ինչպես նաև այն, որ ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն կատարելուն, թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում և դատարանում գործի քննությանը՝ դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով, ինչպես նաև կատարել քրեական օրենսգրքով չթույլատրված այլ արարքներ, և որ նա նախկինում դատապարտվել է նույնատես հանցանք կատարելու համար և դատվածությունը դեռևս մարված չէ, ուստի նման վարքագիծը նույնպես մեծացնում է նրա կողմից քրեական օրենքով չթույլատրված այլ արարքներ կատարելու հավանականությունը:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առկա է մեղսագրված արարքում մեղադրյալ Ռ.Քոթանջյանի առնչությունը՝ հիմնավոր կասկածը:

(...)

Ինչ վերաբերում է քննիչի միջնորդությունը նույն օրը քննելու մասին վերաքննիչ բողոքի փաստարկին, ապա Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի գործողություններում օրենքի պահանջների խախտում չի արձանագրում: Քննիչի միջնորդությունը դատարանի կողմից քննության առնելու ժամանակի մասին օրենսդրի միակ պայմանն այն է, որ դատարանը համապատասխան որոշումը կայացնի ոչ ուշ կալանքի տակ պահելու մասին դատարանի որոշած ժամկետը լրանալուց առաջ, որն Առաջին ատյանի դատարանն ապահովել է:

Դատախազը հայտնեց, որ քննարկվում է քննիչի կողմից թույլ տրված խախտումների մասով միջնորդագիր ներկայացնելու հարցը:

(...)

(...) Վերաքննիչ բողոքի պատճառաբանությունները, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումը կայացվել է մրցակցության սկզբունքի խախտմամբ՝ մեղադրյալը և պաշտպանը չեն մասնակցել դատական նիստին և չեն կարողացել քննիչի միջնորդության դեմ փաստարկներ ներկայացնել՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այդ հանգամանքները ևս վերաքննիչ բողոքը բավարարելու հիմք հանդիսանալ չեն կարող:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը պատշաճ իրազեկել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչակազմին և ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչությանը՝ մեղադրյալին դատական նիստին ապահովելու մասին:

(...)

[Քննիչը] դատական նիստի ժամանակ հայտնել է, որ մեղադրյալը հրաժարվել է մասնակցել դատական նիստին, որն Առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել միջնորդությունը մեղադրյալի բացակայությամբ քննելու համար: Եթե այդ տեղեկությունը դիմողի մոտ կասկած է հարուցում, ապա տեղեկատվության հավաստիության պատասխանատվությունը կրում է քննիչը: Մեղադրյալը դատարան չի ներկայացվել, պաշտպանը ևս չի ներկայացել դատական նիստին:

Առաջին ատյանի դատարան ներկայացրած նյութերից երևում է, որ դատավոր Յ.Բաղդասարյանի կազմած հեռախոսագրի համաձայն, դատական նիստի տեղի և ժամանակի մասին պաշտպան Մ.Թովմասյանը տեղեկացվել է, ով պատճառաբանելով ծանրաբեռնվածությունը հայտնել է, որ դատարան ներկայանալ չի կարող: Պաշտպան Մ.Թովմասյանի դատարան չներկայանալն արգելք չէր կարող հանդիսանալ քննիչի միջնորդությունը քննելու համար: Գործի նյութերում առկա է նաև փաստաբան, Ռ.Քոթանջյանի պաշտպան Մ.Թովմասյանի դատական նիստից հետո ներկայացրած դիմումը, որով խնդրել է իրեն հանձնել դատարանի որոշ-

ման պատճենը և քննիչի միջնորդությանը կից նյութերը: Դիմումին կցվել է նաև պետական տուրքը մուծելու մասին անդորրագիրը՝ պահանջված փաստաթղթերն իրեն տրամադրելու համար: Վերջինս նաև Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշման դեմ վերաքննիչ բողոք էր ներկայացրել:

Վերոգրյալը Վերաքննիչ դատարանին բերում է համոզման, որ Ռ.Քոթանջյանի պաշտպանը եղել է Մ.Թովմասյանը: Վերջինիս վերաքննիչ բողոքից Ռ.Քոթանջյանի հրաժարվելը չի կարող հիմք հանդիսանալ հետևություն անելու, որ Մ.Թովմասյանը Ռ.Քոթանջյանի պաշտպանը չի հանդիսացել: Հակառակը հիմնավորող փաստական տվյալներ նյութերում առկա չեն: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պաշտպանյալի կողմից հրաժարվելու հիմքով, պաշտպան Մ.Թովմասյանի վերաքննիչ բողոքը քննարկման առարկա չի դարձվում:

(...)

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) Առաջին ատյանի դատարանի (...) որոշումը հիմնավորված է և օրինական, հիմքեր չկան այն վերացնելու համար (...) վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ օրինական ուժի մեջ թողնելով նշված դատական ակտը (...):» (տե՛ս նյութեր, թերթեր 93-96):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները որոշումներ են կայացրել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով: Դատարանների որոշումներն օրինական, հիմնավորված ու պատճառաբանված չեն, իսկ արդյունքում խախտվել է քրեական դատավարության մրցակցության սկզբունքը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 138-139-րդ, 285-րդ և այլ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոնշյալ փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի պահանջը, մասնավորապես՝ դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով չի ծանուցել մեղադրյալին և պաշտպանին, ինչի արդյունքում մեղադրյալը և նրա պաշտպանը զրկվել են միջնորդության քննարկմանը մասնակցելու, հետևաբար նաև՝ գրավի կամ այլ միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունից:

11.1. Բողոքաբերը փաստել է նաև, որ սույն գործով կալանավորման ժամկետի երկարացման միջնորդությունն Առաջին ատյանի դատարան է ներկայացվել, իսկ դրա քննարկման արդյունքում վերջինիս կողմից համապատասխան որոշում է կայացվել՝ ՀՀ քրեական դատավարության օ-

րենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետների խախտմամբ:

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջների՝ սույն գործով պահպանված լինելուն՝ բողոքի հեղինակը նշել է, որ դատարան ներկայացված կալանավորման ժամկետի երկարացման միջնորդությունը պատճառաբանված չէր, ինչպես նաև չէր բովանդակում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության մասին որևէ հիմնավորում, որը հիմնված կլիներ փաստական հանգամանքների վրա՝ պայմանավորված և բավարարող օրենսգրքի 135-րդ հոդվածում նշված նախապայմաններին: Բացի այդ, բողոքաբերի կարծիքով՝ ներկայացված միջնորդությունը չէր բխում նաև օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից, ըստ որի՝ միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտությունը, ինչպես նաև որոշմանը պետք է կցվեն միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը: Նշվածի պայմաններում, ըստ բողոքաբերի՝ դատարանը որևէ վերլուծություն չի կատարել, իսկ արդյունքում կայացրել է անօրինական ու անհիմն որոշում:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ մեղադրյալ Ռ.Քոթանջյանը հրաժարվել էր պաշտպան Մ.Թովմասյանի կողմից իր պաշտպանությունն իրականացնելուց, հետևաբար անհիմն է Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ Ռ.Քոթանջյանի պաշտպանը եղել է Մ.Թովմասյանը:

12. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ պաշտպան Է.Խաչատրյանը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 6-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 24-ի որոշումները:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ պաշտպան Մ.Թովմասյանի և մեղադրյալ Ռ.Քոթանջյանի՝ Առաջին ատյանի դատարան չներկայանալը չէր կարող արգելք լինել կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը քննելու համար:

14. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր որ ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք:

(...)

4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ (...):

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետի համաձայն՝

«Սեղադրյալը (...) իրավունք ունի մասնակցել առաջին ստյանի և վերաքննիչ դատարանների նիստերին և գործի նյութերի հետազոտմանը (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝

«Պաշտպանը (...) իրավունք ունի մասնակցել առաջին ստյանի և վերաքննիչ դատարանների նիստերին և գործի նյութերի հետազոտմանը (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

«2. Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություններ կայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը: Դատարանը պարտավոր է դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություններ կայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին:

(...)

3. Անազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քննության դատական նիստին նրա մասնակցության հարցը պետք է ապահովի վարույթն իրականացնող մարմինը»:

15. Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ մրցակցության սկզբունքն արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր է. այդ սկզբունքի իմաստով դատաքննության ժամանակ և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերի համար պետք է հավասարապես երաշխավորվի ողջամիտ հնարավորություն՝ իր գործը ներկայացնելու այնպիսի պայմաններում, որը նվազ բարենպաստ չի լինի, քան այն հնարավորությունը, որը տրամադրվում է մրցակից կողմին: Այսինքն՝ մրցակցության սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել կողմերի հավասարության հիմնարար պահանջի հետ միասնության մեջ, ինչը, ի թիվս այլոց, ենթադրում է, որ կողմը պետք է հնարավորություն ունենա պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը, ծանոթանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին և ապացույցներին: Նշվածն արդար դատական քննության իրավունքի ապահովման կարևորագույն նախապայման է, քանի որ քննության իրականացումն առանց կողմերի հավասար տեղեկացվածության նշանակում է մրցակցության և կողմերի հավասարության հիմնարար դրույթների անհամաչափ ձևականացում և առարկայազրկում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ արդար դատական քննություն իրականացնելու պահանջը հավասարապես վերաբերելի է նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում անցկացվող դատական քննություններին: Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կալանավորման կիրառման, կալանքի ժամկետի երկարացման հարցերի քննարկման, ինչպես նաև վերաքննության կարգով դրանց օրինականության դատական ստուգման ընթացքում դատարանը համապատասխան որոշում է կայացնում քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տեղեկությունների, փաստերի կամ ապացույցների հետազոտման արդյունքում: Հետևաբար ինչպես առաջին ատյանի դատարանը կալանք կիրառելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը քննելիս, այնպես էլ վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի կողմից կայացրած որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս պարտավոր են միջոցներ ձեռնարկել կողմերի հավասարության և մրցակցային դատավարության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով դատարանները, ի թիվս այլ գործողությունների, պետք է միջոցներ ձեռնարկեն նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին կողմերին նպատշաճ ձևով ծանուցելու և վերջիններիս՝ դատական քննությանը մասնակցելու իրավունքի անխափան իրացումն ապահովելու համար (տե՛ս, *mutatis mutandis*, *Ամսյա Ղարիբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԿԴ/0008/06/11, *Նոյ*

Մուսայելյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԿԳ-1/0007/06/12, *Հակոբ Մկրտչյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԳ/0230/01/14 որոշումները):

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Ռ.Քոթանջյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը նախաքննության մարմինն Առաջին ատյանի դատարան է ներկայացրել 2015 թվականի նոյեմբերի 6-ին՝ ժամը 13:10-ին, իսկ միջնորդության քննարկումը նշանակվել է նույն օրը՝ ժամը 14:30-ին: Դատական նիստի օրվա և ժամի մասին պաշտպան Մ.Թովմասյանն իրազեկվել է նիստի օրը՝ հեռախոսակապի միջոցով: Պաշտպանը հայտարարել է, որ դատական նիստին ներկայանալ չի կարող, քանի որ նույն ժամին պետք է մասնակցի մեկ այլ դատական նիստի (տե՛ս սույն որոշման 8-8.2.-րդ կետերը):

Դատական նիստին մեղադրյալ Ռ.Քոթանջյանի մասնակցությունն ապահովելու նպատակով նույն օրը գրություններ են ուղարկվել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի պետին և ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետին: Դատական նիստը բացվել է ժամը 14:34-ին, որից հետո ընդմիջվել 30 րոպեով՝ դատական նիստին մեղադրյալին ներկայացնելու վերաբերյալ նախապես ուղարկված ծանուցման կապակցությամբ պատասխան չստացվելու պատճառաբանությամբ: Դատական նիստը վերսկսվել է ժամը 15:04-ին, որի ընթացքում քննիչը հայտարարել է, որ մեղադրյալը հրաժարվում է ներկայանալ դատական նիստին, և մեկուսարանից պետք է դատարան ուղարկվի համապատասխան փաստաթուղթ: Դատական նիստը կրկին ընդմիջվել է 10 րոպեով և վերսկսվել ժամը 15:25-ին: Նախագահող դատավորը հայտարարել է, որ էլեկտրոնային տարբերակով համապատասխան գրություն է ուղարկվել մեկուսարան՝ մեղադրյալի մասնակցությունն ապահովելու նպատակով, ինչը, սակայն, չի ապահովվել: Արդյունքում դատարանը որոշել է միջնորդության քննարկումը շարունակել մեղադրյալի կաշտպանի բացակայությամբ (տե՛ս սույն որոշման 8.3.-8.5.-րդ կետերը):

Անդրադառնալով պաշտպան Մ.Թովմասյանի և մեղադրյալ Ռ.Քոթանջյանի՝ Առաջին ատյանի դատարան չներկայանալու հետ կապված հարցերին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավորի կազմած հեռախոսագրի համաձայն՝ դատական նիստի տեղի և ժամանակի մասին պաշտպան Մ.Թովմասյանը տեղեկացվել է, ով պատճառաբանելով ծանրաբեռնվածությունը, հայտնել է, որ դատարան ներկայանալ չի կարող, հետևաբար պաշտպան Մ.Թովմասյանի դատարան չներկայանալն արգելք չէր կարող հանդիսանալ քննիչի միջնորդությունը քննելու համար: Ինչ վերաբերում է մեղադրյալի՝ դատական նիստին չներկայանալուն, ապա Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը պատշաճ իրազեկել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ-ի վարչակազմին և ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչությանը՝ մեղադրյալին դատական նիստին ապահովելու մասին:

Քննիչը դատական նիստի ժամանակ հայտնել է, որ մեղադրյալը հրաժարվել է մասնակցել դատական նիստին, որն Առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել՝ միջնորդությունը մեղադրյալի բացակայությամբ քննելու համար: Եթե այդ տեղեկությունը դիմողի մոտ կասկած է հարուցում, ապա տեղեկատվության հավաստիության պատասխանատվությունը կրում է քննիչը(տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 15-րդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ արձանագրում է, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի՝ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 10 օր առաջ (բացառությամբ այն դեպքերի, երբ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությունը կապված է նրա կամ նրա պաշտպանի կողմից գործի նյութերին ծանոթանալու հետ), իսկ դատարանը, համաձայնելով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությանը, ոչ ուշ, քան դատարանի կալանքի տակ պահելու որոշած ժամկետը լրանալուց 5 օր առաջ, կայացնում է համապատասխան որոշում: Հետևաբար վերոգրյալի համատեքստում հաշվի առնելով այն, որ պաշտպան Մ.Թովմասյանը մեղադրյալ Ռ.Քոթանջյանի կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդության քննության համար նշանակված դատական նիստի մասին հեռախոսակապի միջոցով իրազեկվել է նիստից գրեթե անմիջապես առաջ, ինչպես նաև նկատի ունենալով այն, որ վերջինս ներկայացրել է դատական նիստին մասնակցելու հնարավորություն չունենալու վերաբերյալ ողջամիտ փաստարկ (տե՛ս սույն որոշման 8-8.2.-րդ կետերը)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդպիսի իրազեկումը սույն գործով չի կարող համարվել որպես պատշաճ ձևով ծանուցում:

Անդրադառնալով մեղադրյալ Ռ.Քոթանջյանի՝ նշանակված դատական նիստին չմասնակցելու հարցին՝ հարկ է նկատել, որ այդ կապակցությամբ Վերաքննիչ դատարանը փաստել է. «(...) *Առաջին ատյանի դատարանը պատշաճ իրազեկել է ՀՀ ԱՆ ,Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչակազմին և ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչությանը՝ մեղադրյալին դատական նիստին ապահովելու մասին: (...) [Ք]ննիչը դատական նիստի ժամանակ հայտնել է, որ մեղադրյալը հրաժարվել է մասնակցել դատական նիստին, որն Առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել միջնորդությունը մեղադրյալի բացակայությամբ քննելու համար: Եթե այդ տեղեկությունը դիմողի մոտ կասկած է հարուցում, ապա տեղեկատվության հավաստիության պատասխանատվությունը կրում է քննիչը (...)*» (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Վերոգրյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի նյութերում բացակայում է մեղադրյալի՝ դատական նիստին մասնակցելուց հրաժարվելու մասին որևէ կերպ ձևակերպված տվյալ,

իսկ այդ պայմաններում վերջինի մասին քննիչի կողմից արված հայտարարությունը հիմք ընդունելը՝ առանց պատշաճ հավաստիացման, չէր կարող իրավաչափ հիմք համարվել մեղադրյալի բացակայությամբ գործի քննությունն իրականացնելու համար: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի դատողությանն առ այն, որ *եթե այդ տեղեկությունը դիմողի մոտ կասկած է հարուցում, ապա տեղեկատվության հավաստիության պատասխանատվությունը կրում է քննիչը*, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն չի կարող բավարար հիմք համարվել մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքի իրացումը սահմանափակելու համար:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որպաշտպան Մ.Թովմասյանը և մեղադրյալ Ռ.Քոթանջյանը չի իրավաչափորեն գրկվել են գործի դատական քննությանը մասնակցելու հնարավորությունից, հետևաբար նաև հնարավորություն չեն ունեցել պաշտպանելու իրենց իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկանալու և մեկնաբանելու մյուս կողմի ներկայացրած փաստարկները, այսինքն՝ մյուս կողմի համեմատությամբ հայտնվել են խիստ անբարենպաստ վիճակում: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ պաշտպան Մ.Թովմասյանի և մեղադրյալ Ռ.Քոթանջյանի՝ Առաջին ատյանի դատարան չներկայանալը չէր կարող արգելք լինել կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը քննելու համար, հիմնավոր չեն:

19. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 11.1.-րդ կետում բարձրացրած փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց կապակցությամբ ստորադաս դատարանները թույլ չեն տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող այնպիսի դատական սխալ, որը կարող էր բավարար հիմք համարվել հիշյալ դատարանների դատական ակտերն այդ մասերով բեկանելու համար:

20. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 63-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 23-րդ, 285-րդ հոդվածների խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա դրանք բեկանելու հիմք են: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ բողոքարկված դատական ակտերը եղել են ժամանակավոր, այդպիսիք կորցրել են իրենց իրավական նշանակությունը և սույն որոշումը կայացնելու պահին դադարել են իրավաբանորեն գոյություն ունենալուց, հետևաբար դրանք չեն կարող բեկանվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ, 422-423-րդ հոդված-

ներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը մերժել: Ռաֆայել Արայի Քոթանջյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

34.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԳ-3/0226/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԳԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
պաշտպան
ամբաստանյալ

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ԱՊՐԵՍՅԱՆԻ
Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արտեմ Արմենի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունվարի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի և ամբաստանյալի պաշտպան Ա.Ապրեսյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2014 թվականի սեպտեմբերի 25-ին ՀՀ պաշտպանության նախարարության առաջին կայագորային քննչական բաժնի 2-րդ բաժանմունքի պետ Ս.Բաղդասարյանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 90967314 քրեական գործը:

2014 թվականի նոյեմբերի 8-ի որոշմամբ Արտեմ Հարությունյանը ներգրավել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 112-րդ հոդվածի 1-ին մասով: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել հրամանատարության հսկողությանը հանձնելը:

2014 թվականի նոյեմբերի 12-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 21-ի դատավճռով Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 112-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով վերջինիս նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Հարությունյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել պաշտպան Ա.Ապրեսյանը, որի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հունվարի 25-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելու և Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 21-ի դատավճիռը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու մասին:

Ամբաստանյալ Ա.Հարությունյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով արդարացվել է՝ ապացույցների անբավարարության հիմքով, իսկ նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատիժը՝ 4 տարի ժամկետով ազատազրկումը, թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունվարի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը (այսուհետ՝ նաև Առաջին բողոքաբեր) և ամբաստանյալի պաշտպան Ա.Ապրեսյանը (այսուհետ՝ նաև Երկրորդ բողոքաբեր):

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 30-ի որոշմամբ Առաջին և Երկրորդ բողոքաբերների վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն]ա, հանդիսանալով ՊԼ թիվ 35383 գործմասի Գ-30 հրետանային դիվիզիոնի 3-րդ մարտկոցի 1-ին հաշվարկի համար, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2014 թվականի սեպտեմբերի 10-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու, այն է՝ նույն հաշվարկի հրամանատար, կրտսեր սերժանտ Ստեփան Գեղամի Վասիլյանի կողմից 2014 թվականի սեպտեմբերի 9-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, «Տիգրանակերտ» ուսումնական կենտրոնի հավաքակայանում հրանոթը ոչ ճիշտ եղանակով մաքրելու, ինչպես նաև աշխատանքը ընդհատելու համար իրեն դիտորդություն անելու կապակցությամբ առաջացած գրույցի ընթացքում «քյալ» անվանելու համար, Ստեփան Վասիլյանի առողջությանը ծանր մարմնական վնաս պատճառելու դիտավորությամբ, մարտկոցի վրանում որպես զենք օգտագործվող սաղավարտի գործադրմամբ, բռնություն է գործադրել իր նկատմամբ անմիջական պետ հանդիսացող, կրտսեր սերժանտ Ստեփան Վասիլյանի նկատմամբ՝ սաղավարտով հարվածել նրա գլխին՝ Ստեփան Վասիլյանի առողջությանը պատճառելով ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 71):

6. Փորձագետի՝ 2014 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1635/հ եզրակացության համաձայն՝ «(...) Ստեփան Վասիլյանի մարմնական վնասվածքներն ըստ բժշկական փաստաթղթերի և օբյեկտիվ ուսումնասիրության տվյալների՝ գլխուղեղի թեթև աստիճանի սալջարդի, էպիդուրալ արյունազեղման, ճակատոսկրի, հիմոսկրի կոտրվածքների ձևով, հասցվել են բուք, կոշտ առարկայով, հնարավոր է որոշմամբ նշված ժամկետում և հանգամանքում, որն առաջացրել է առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 59-60):

Առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում փորձագետ Իշխան Մելքոնյանը նշված եզրակացության կապակցությամբ պարզաբանում է տվել այն մասին, որ «(...) [Ն]շված եզրակացությունն ինքը տվել է բժշկական փաստաթղթերի և օբյեկտիվ ուսումնասիրության տվյալների հիման վրա: Մասնավորապես՝ նշված եզրակացության հիմքում ընկած է եղել 2014 թվականի սեպտեմբերի 15-ին կատարված համակարգչային շերտագատման տվյալները: Համակարգչային շերտագատման արդյունքների սկավառուակը իր կողմից որևէ մասնագետի ուսումնասիրության չի ուղարկվել, քանի որ տվյալ դեպքում արդեն իսկ առկա է եղել նեղ մասնագետի՝ ռադիոլոգի տված եզրակացությունը՝ հայտնաբերված վնասվածքների վերաբերյալ, ինչն իր համար բավարար է եղել փորձաքննություն կատարելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 7):

7. «Էրեբունի» ԲԿ ռադիոլոգիայի բաժանմունքի՝ 2015 թվականի փետրվարի 16-ի գրության համաձայն՝ «Ներկայացված 11.09.2014թ. [ԼՂՀ ԱՆ համապատասխան ԲԿ ՓԲԸ-ում] Ստեփան Վասիլյանի գլխուղեղի ԿՏ հետազոտությունը SD-ով առանց վերակառուցման: 4.8մմ շերտի կտրվածքի հաստությամբ և վերակառուցման բացակայությունը հնարավորություն չի տալիս տվյալ հետազոտության մեջ հատուկ դատել կտրվածքների և արյունագեղման առկայությանը» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 33, 35):

«Ուլտրաիմիջինգ» ռադիոլոգիայի գիտամեթոդական կենտրոնի գլխավոր ռադիոլոգ Ա.Քոչարյանի՝ 2015 թվականի փետրվարի 13-ի գրության համաձայն՝ «Նկարագրված 11.09.2014թ [ԼՂՀ ԱՆ համապատասխան ԲԿ ՓԲԸ-ում կատարված Ստեփան Վասիլյանի] գլխուղեղի ԿՏ հետազոտության մեջ տեսանելի ծավալային գոյացություններ և օջախային ախտահարումներ չեն հայտնաբերվել: (...) ԿՏ բնութագիրը առանց տեսանելի էական փոփոխությունների է: Հաստատման համար խորհուրդ է տրվում կրկնակի հետազոտություն (...)», իսկ 2015 թվականի հուլիսի 15-ի գրության համաձայն՝ «(...) Ստեփան Վասիլյանի մոտ մարմնական վնասվածքի առկայության կամ բացակայության մասին (...) 11.09.14թ. ԿՏ տվյալների հիման վրա [տեղեկատվություն տալը] հնարավոր չէ միանշանակ բավարարել: Պատճառը ինչպես մեթոդի սահմանափակ լինելն է, այնպես էլ կիրառված տեխնոլոգիայի ոչ լիարժեք համապատասխանությունը բարձրացված խնդիրների լուծման տեսանկյունից: Այդ իսկ պատճառով, վերոհիշյալ վերապահումներով կարելի է եզրակացնել, որ ԿՏ հետազոտության արդյունքում մարմնական վնասվածքի տեսանելի հավաստի նշանները բացակայում են» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 30, 32, 94):

«Կենսաբանական համակարգերի միջազգային ինստիտուտի բժշկաախտորոշիչ կենտրոն Երևան» ՍՊ ընկերության՝ 2015 թվականի հուլիսի 6-ի թիվ 34 գրության համաձայն՝ «(...) [Ստեփան Վասիլյանի գլխուղեղի՝ 2014 թվականի սեպտեմբերի 10-ին և 11-ին ԼՂՀ ԱՆ ԲԿ ՓԲԸ-ում կատարված ԿՏ հետազոտության պատկերները] կատարված են 4.88մմ քայլով: Պատկերները վերծանելու և ախտաբանական փոփոխությունների, այդ թվում վնասվածքների առկայության կամ բացակայության մասին տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է ստացված պատկերների 0.75մմ քայլով ռեկոնստրուկցիա: Հետևաբար, պատասխանել վնասվածքների առկայության կամ բացակայության մասին (...) հնարավոր չէ, քանի որ ներկայացված կրիչները ԿՏ պատկերների 0.75մմ քայլով ռեկոնստրուկցիա չեն պարունակում, մինչդեռ բժշկական ճշգրիտ ախտորոշման համար դրանք պարտադիր են» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 90):

«Նաիրի» ԲԿ-ի՝ 2015 թվականի հուլիսի 7-ի թիվ 101 գրության համաձայն՝ «(...) Գլխուղեղի ԿՏ հետազոտություն արքիալ պատկերներով, որոնք իրականացվել են 4.8մմ հաստության շերտերով առանց լրացուցիչ ուղեկ-

ցող ռեկոնստրուկցիաների, գանգոսկրի կոտրվածքների մասին միանշանակ դատել հնարավոր չէ: Նշված հարցին առավել հստակ պատասխանելու նպատակով ցանկալի է պատկերներ առավել բարակ շերտերով, առնվազն 1.0մմ-1.5մմ և լրացուցիչ հետազոտություն: Ուղեղահյուսվածքում ԿՏ տեսանելի օջախային փոփոխություններ հետազոտման պատկերներում չի հայտնաբերվել: Գլխուղեղի միջային բաղկացուցիչ մասերի տեղաշարժ չի հայտնաբերվել: Լիկվորոդինամիկան խախտված չէ:» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 91):

8. Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով փորձագետի՝ 2014 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1635/հ եզրակացությանը, գտել է, որ «(...) [Ա]յն հիմնավորված է, կասկած չի հարուցում, դրա հիմքում դրված ապացույցները չեն ճանաչվել ոչ հավաստի և չեն խախտվել այդ փորձաքննության կատարման դատավարական կանոնները: Ինչ վերաբերում է Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում իրականացված՝ Ստեփան Վասիլյանի գլխուղեղի համակարգչային շերտավորման արդյունքները պահպանված չլինելուն, սպա Դատարանը գտնում է, որ այն ինքնին չի կարող կասկածի տակ դնել կատարված հետազոտության արդյունքները:

Անդրադառնալով դատական քննության ընթացքում ամբաստանյալ Արտեմ Հարությունյանի տված այն ցուցմունքին, որ իր հարվածի արդյունքում Ստեփան Վասիլյանի առողջությանը չէր կարող պատճառվել ծանր վնաս, քանի որ հարվածը եղել է թույլ՝ Դատարանը հարկ է համարում նշել, որ այն չի կարող Ստեփան Վասիլյանի առողջությանը ծանր վնաս պատճառվելու հանգամանքը հերքող տվյալ համարվել, քանի որ դա ընդամենը ամբաստանյալ Արտեմ Հարությունյանի սուբյեկտիվ ենթադրությունն է: Ավելին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ - հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քրեական գործով վարույթում առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը կարող են հաստատվել միայն դատաբժշկական փորձագետի եզրակացությունը նախապես ստանալով և հետազոտելով, որպիսին տվյալ դեպքում հանդիսանում է փորձագետի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1635/հ եզրակացությունը, համաձայն որի՝ Ստեփան Վասիլյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 114-115):

9. Վերաքննիչ դատարանի կողմից հրավիրված ՀՀ առողջապահության նախարարության ախտորոշիչ ճառագայթաբանության գլխավոր մասնագետ Արամ Քոչարյանը հայտնել է, որ «(...) [Ն]երկայացված երկու ԿՏ հետազոտություններում բացակայում են հավաստի տվյալներ այն մասին, որ անձի մոտ առկա է կոտրվածք: Որպեսզի պարզվի կոտրվածքի առկայությունն անհրաժեշտ է կրկին կատարել հետազոտություն: Սակայն նոր հետազոտություն կատարել չի թույլատրվում, քանի որ ճառագայթային հետազոտության անհրաժեշտությունը բխում է միայն բժշկական ցուցումներից: Եթե բժշկական ցուցումից բացի կատարվում է ճառա-

գայթաթյան մեթոդով որևէ հետազոտություն, ապա պետք է առկա լինեն որոշ հանգամանքներ, առաջինը դա էթիկայի հանձնաժողովի թույլտվությունն է, իսկ երկրորդը՝ անձի համաձայնությունը, որպեսզի կատարվի այդ հետազոտությունը: Ըստ ՄԱԳԱՏԵ-ի ցուցումների միայն բժշկի ցուցումի հիման վրա կարող է կատարվել ճառագայթային հետազոտություն: Ոչ բժշկական անձնակազմը, ոչ հիվանդները, ոչ էլ կամավորները իրավասու չեն կատարել որևէ ճառագայթային հետազոտություն, քանի դեռ չկա բժշկական ցուցում: Այն դեպքում, երբ անձը կամավոր ցանկանում է կատարել ճառագայթային հետազոտություն, էթիկայի հանձնաժողովը կարող է թույլ չտալ կատարել հետազոտություն:

ճառագայթային հետազոտությունն իրենից ներկայացնում է որոշակի վտանգ՝ հետագայում զարգացող բարդությունների հետ կապված, մասնավորապես ուռուցքի առաջացում: (...) [Տ]ուժողի ԿՏ հետազոտության սկսվառակի պարամետրերը թույլ չեն տալիս, որ միանշանակ պնդել կա կոտրվածք, թե ոչ (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 58-59):

10. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է՝ «(...) [Բ]րեական գործով ձեռք բերված և դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները բավարար չեն ամբաստանյալ Արտեմ Հարությունյանի անմեղության կանխավարկածը հաղթահարելու և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ նա կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 112 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարք, այն է՝ Ա.Հարությունյանի հարվածի արդյունքում Ստեփան Վասիլյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

(...)

Համաձայն փորձագետի 2014թ. հոկտեմբերի 6-ի թիվ 1635/հ եզրակացության, Ստեփան Վասիլյանին պատճառվել է առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Համաձայն «Էրեբունի» ԲԿ ռադիոլոգիայի բաժանմունքի, «Ուլտրախիմիջինգ» ռադիոլոգիայի գիտամեթոդական կենտրոնի գլխավոր ռադիոլոգ Արամ Բոչարյանի, «Կենսաբանական համակարգերի միջազգային ինստիտուտի բժշկասախտորոշիչ կենտրոն Երևան» ՍՊ ընկերության և «Նաիրի» ԲԿ-ի գրությունների կատարված հետազոտության արդյունքերով վնասվածքների առկայության կամ բացակայության մասին տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է ստացված պատկերների 0.75 քայլով ռեկոնստրուկցիան, հետևաբար պատասխանել վնասվածքի առկայության կամ բացակայության մասին հնարավոր չէ:

Համաձայն՝ մասնագետ Արամ Բոչարյանի արտահայտած դիրքորոշման՝ ԿՏ հետազոտության սկսվառակի հետազոտությամբ հնարավոր չէ միանշանակ պնդել արդյոք կա կոտրվածք, թե ոչ:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ վերը նշված հակասական հանգամանքներն ինքնին բավարար են ապացույցների անբավարարու-

յան հիմքով Արտեմ Հարությունյանին անմեղ ճանաչելու և արդարացնելու համար: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 61):

Վճարելի բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Առաջին բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը 2016 թվականի հունվարի 25-ի որոշմամբ թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական իրավունքի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, բողոքաբերի պնդմամբ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ, 107-րդ, 108-րդ, 114-րդ և 127-րդ հոդվածների պահանջները:

Հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ և 85-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումները՝ բողոք բերած անձը նշել է, որ մասնագետի կարծիքն ինքնին ապացույց չէ և չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը: Բացի այդ, մասնագետի կարծիքը կարող է տրվել առանց որևէ հետազոտություն կատարելու, մինչդեռ փորձագետի եզրակացությունը տրվում է համապատասխան հետազոտության հիման վրա, փորձագետն իրավունք ունի վարույթն իրականացնող մարմնից պահանջելու անհրաժեշտ օբյեկտներ, նմուշներ, ծանոթանալու վարույթի վերաբերելի նյութերին, հարցեր տալու մեղադրյալին, տուժողին, վկային և այլն: Փորձագետի և մասնագետի տարբերությունը կայանում է նաև նրանում, որ մասնագետը նշանակվում է ոչ թե եզրակացություն տալու, այլ քննչական կամ այլ դատավարական գործողություններին աջակցելու նպատակով:

11.1 Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածը (առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը կարող են հաստատվել միայն դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ)՝ բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործով դատաբժշկական փորձագետի եզրակացության համաձայն՝ ամբաստանյալ Ա.Հարությունյանի գործողությունների հետևանքով տուժող Ս.Վասիլյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով «Էրեբունի» ԲԿ ռադիոլոգիայի բաժանմունքի, «Ուլտրաիմիջինգ» ռադիոլոգիայի գիտամեթոդական կենտրոնի գլխավոր ռադիոլոգ Ա.Քոչարյանի, «Կենսաբանական համակարգերի միջազգային ինստիտուտի բժշկաախտորոշիչ կենտրոն Երևան» ՍՊԸ-ի և «Նաիրի» ԲԿ-ի գրությունները, ինչպես նաև Վերաքննիչ դատարանում որպես մասնագետ ներգրավված՝ ՀՀ առողջապահության նախարարության ախտորոշիչ ճառագայթաբանության գլխավոր մասնագետ Արամ Քոչարյանի դիրքորոշումը, այն է՝ առանց ռենտգեն հետազոտության և համապատասխան ռեկոնստրուկցիայի հնարավոր չէ հետևության հանգել վնասվածքի առկայության կամ բացակայության մասին, ոչ իրավաչափորեն արձանագրել է, որ նշված հակասական հան-

գամանքները հիմք են ապացույցների անբավարարության պատճառաբանությամբ Ա.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնելու համար:

11.2. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունվարի 25-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճիռին:

12. Երկրորդ բողոքաբերի կարծիքով՝ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ և 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ:

Մասնավորապես, բողոքի հեղինակն ընդգծել է, որ դատարանները Ա.Հարությունյանի նկատմամբ պատիժ նշանակելիս պատշաճ գնահատականի չեն արժանացրել ամբաստանյալի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող մի շարք հանգամանքներ: Այսպես՝ ամբաստանյալն օժանդակել է գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելուն, տվել է ճիշտ ցուցմունքներ, զոջացել է կատարած արարքի համար, երիտասարդ է, դատավաժություն չունի, ունի առողջական (լսողական) խնդիր, զինծառայությանը պիտանի է ճանաչվել սահմանափակումներով, բնութագրվում է դրական, դեպքից հետո բարեխղճորեն շարունակել է զինվորական ծառայությունը, վերջինիս արարքը պայմանավորված է եղել տուժողի հակաօրինական վարքագծով:

Բողոքաբերը նշել է նաև, որ ամբաստանյալը Երևանի ճարտարապետության և շինարարության համալսարանի երկրորդ կուրսի և Հայաստանի Ամերիկյան համալսարանի 1-ին կուրսի ուսանող է, ըստ ՀՀ ՊՆ 88863 գորամասից տրված բնութագրի՝ ծառայության ընթացքում իրեն դրսևորել է դրական, իսկ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ գործում առկա չեն: Բացի այդ, Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարաններում տուժողը հայտնել է, որ Ա.Հարությունյանից որևէ պահանջ չունի և չի ցանկանում, որ նա ենթարկվի պատասխանատվության:

Բողոքաբերի պնդմամբ՝ նշված հանգամանքներն իրենց համակցությամբ նվազեցնում են հանցանքի և հանցավորի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և վկայում ամբաստանյալի ուղղված լինելու մասին:

12.1. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատժի մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել ու փոփոխել, Ա.Հարությունյանի նկատմամբ 4 տարի ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան կամ գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգու-
մը.**

13. Վճարելի դատարանը գտնում է, որ փորձագետի և մասնագետի՝ որպես քրեական դատավարությանը մասնակցող անձանց կարգավիճակի և նրանց լիազորությունների առանձնահատկությունների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Ա.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով արդարացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մասնագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմինը նշանակում է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ՝ գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառներում իր մասնագիտական հմտությունները և գիտելիքներն օգտագործելով աջակցելու քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելիս:

(...)

4. Մասնագետը պարտավոր է՝

(...)

5) օգտագործել իր մասնագիտական հմտություններն ու գիտելիքներն առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու, փորձագետին հարցեր առաջադրելու գործում քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձին օգնություն ցույց տալու, ինչպես նաև նշված անձին, քրեական վարույթն իրականացնող մարմնին և դատարանի նիստին ներկա գտնվող կողմերին իր մասնագիտական իրավասության մեջ մտնող հարցեր պարզաբանելու համար, բացատրել իր գործողությունները.

(...)

6. Մասնագետն իրավունք ունի՝

1) քրեական վարույթն իրականացնող մարմնի կամ քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձի թույլտվությամբ ծանոթանալ գործի նյութերին և հարցեր տալ ներկաներին.

2) ներկաների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքների վրա, որոնք կապված են առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու, փորձագետին հարցեր առաջադրելու, ինչպես նաև իր մասնագիտական իրավասության մեջ մտնող հարցերի բովանդակության հետ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի համաձայն՝

«1. Փորձագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին որոշման համապատասխան՝ նշանակում է փորձագիտական հաստատության ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար:

(...)

6. Փորձագետն իրավունք ունի՝

1) քրեական վարույթն իրականացնող մարմնից եզրակացություն տալու համար պահանջել անհրաժեշտ օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր՝ համեմատական հետազոտման համար.

2) քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ ծանոթանալ եզրակացություն տալու համար անհրաժեշտ նյութերին և գործի նյութերից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ, իր պարտականությունները պատշաճ կատարելու համար հարցեր տալ կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկաներին, ծանոթանալ փորձաքննության առարկային վերաբերող նյութերին, դրանցից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ. (...):»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից երևում է, որ մասնագետը և փորձագետը դասվում են քրեադատավարական այն սուբյեկտների շարքին, ովքեր գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում իրենց ունեցած հատուկ գիտելիքներով և հմտություններով օժանդակում են գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքների բացահայտմանը, որոնք չեն կարող պարզվել առանց համապատասխան մասնագիտություն, որակավորում կամ փորձ ունեցող անձանց ներգրավվածության և համապատասխան գիտելիքների կիրառման:

Միևնույն ժամանակ մասնագետը և փորձագետը քրեադատավարական օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորություններն իրականացնելիս օժտված են տարբեր իրավունքներով ու պարտականություններով, և վերջիններիս գործունեությունը տարբեր նպատակներ է հետապնդում: Մասնավորապես, փորձագետը համապատասխան հետազոտություն իրականացնելու և եզրակացություն տալու համար իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմնից պահանջել անհրաժեշտ օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր, ինչպես նաև վերջինիս թույլտվությամբ ծանոթանալու եզրակացություն տալու համար անհրաժեշտ նյութերին և գործի նյութերից դուրս գրելու անհրաժեշտ տեղեկություններ, ծանոթանալու փորձաքննության առարկային վերաբերող նյութերին և դրանցից դուրս գրելու տեղեկություններ:

Միևնույն ժամանակ հիմնական պարտականությունը իր մասնագիտական հմտություններն ու գիտելիքներն օգտագործելով առարկաներ

և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու, փորձագետին հարցեր առաջադրելու գործում քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձին օգնություն ցույց տալն է: Վերոնշյալով պայմանավորված՝ մասնագետի իրավունքների շրջանակը սահմանափակվում է վարույթն իրականացնող մարմնի կամ քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձի թույլտվությամբ գործի նյութերին ծանոթանալով և ներկաներին հարցեր տալով, ինչպես նաև առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու, փորձագետին հարցեր առաջադրելու հետ կապված հանգամանքներին ներկաների ուշադրությունը հրավիրելով:

15.1. Անդրադառնալով մասնագետի և փորձագետի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակներին՝ Վճարելի դատարանն ընդգծում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ և 85-րդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետը հատուկ գիտելիքներն օգտագործում է հետազոտություն կատարելու և դրա արդյունքում եզրակացություն տալու համար, իսկ մասնագետն իր մասնագիտական հմտություններով ու գիտելիքներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելիս: Հետևաբար փորձաքննության արդյունքում փորձագետի կողմից կազմվող եզրակացությունը և մասնագետի կողմից տրվող կարծիքը նույնպես ունեն տարբեր իրավական բնույթ և նշանակություն:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քրեական դատավարությունում որպես սպացույցներ թույլատրվում են՝*

(...)

6) փորձագետի եզրակացությունը.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հաղվածի համաձայն՝ *«1. Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են իրեն առաջադրած հարցերի, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է՝ գործի համապատասխան նյութերը հետազոտելով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) [Մասնագետների (...) հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անհրաժեշտ հետազոտություններ կատարելուց հետո փորձագետը կազմում է գրավոր եզրակացություն (...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«(...) Մասնագետի հայտնած կարծիքը չի փոխարինում փորձագետի եզրակացությանը»:*

Մեջբերված նորմերի համակարգված վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետի եզրակացությունը քրեական դատավարության օրենսդրությամբ հստակ կանոնակարգված գործողության արդյունք է: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ գլուխը մանրամասն կարգավորում է փորձաքննության նշանակման և կատարման հետ կապված հարցերը: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի համաձայն՝ փորձաքննությունը կատարվում է վարույթն իրականացվող մարմնի որոշման հիման վրա, որտեղ, ի թիվս այլ հանգամանքների, պետք է շարադրվեն նաև փորձաքննության ուղարկվող իրեղեն ապացույցները, այլ օբյեկտները, փորձագետին առաջադրված հարցերը և անհրաժեշտ այլ տեղեկությունները: Համապատասխան նյութերի հետազոտության արդյունքում փորձագետը կազմում է գրավոր եզրակացություն, որը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն, ապացույցի ինքնուրույն տեսակ է:

Այսպիսով, փորձագետի եզրակացությունն իրենից ներկայացնում է գրավոր շարադրված հետևություններ, որտեղ փորձագետը հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարված հետազոտությունների հիման վրա պատասխանում է վարույթն իրականացնող մարմնի առաջադրած հարցերին:

16.1. Ինչ վերաբերում է մասնագետին, ապա վերջինս հետազոտություններ չի իրականացնում և եզրակացություն չի տալիս, այլ որևէ բնագավառում իր ունեցած հմտություններով և գիտելիքներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին այս կամ այն քննչական կամ այլ դատավարական գործողությունը կատարելիս: Այլ խոսքով՝ վերջինիս կողմից տրվող կարծիքը ոչ թե հետազոտության արդյունք է, այլ կոնկրետ հարցի վերաբերյալ մասնագիտական գիտելիքների կամ փորձի վրա հիմնված դիրքորոշում: Ուստի պատահական չէ, որ օրենքով մասնագետի կարծիքը չի դիտվում որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, և այն չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը: Այն վարույթն իրականացնող մարմնի համար կարող է ունենալ ուղղորդող, խորհրդատվական նշանակություն:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական գործով վարույթում ստորև նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով՝*

1) մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը՝ դատաբժշկական փորձագետի եզրակացությունը.(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը համաձայն չեն փորձագետի եզրակացության հետ՝ վերջինիս ոչ*

բավարար չափով պարզ կամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, կարող են նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով նույն կամ մեկ ուրիշ փորձագետի:

2. Կրկնակի փորձաքննությունը կատարվում է, երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ կամ կասկած է հարուցում, կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել է ոչ հավաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները: (...) Կրկնակի փորձաքննություն նշանակելիս փորձագետի առջև կարող է դրվել նախկին հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության հարցը: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Փորձագետի եզրակացությունը բավականաչափ պարզ կամ լրիվ չհամարվելու, ինչպես նաև փորձագետների միջև տարաձայնություններ լինելու դեպքում դատարանը կարող է նշանակել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն (...)»:

Միայն որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածում թվարկված հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը կարող է հաստատվել ոչ այլ կերպ, քան դատաբժշկական փորձագետի եզրակացությունը նախապես ստանալով և հետազոտելով: Այլ խոսքով՝ նշված դեպքում փորձաքննության նշանակումն ու կատարումը պարտադիր է, իսկ առողջությանը հասցված վնասի վերաբերյալ փորձագետի կողմից տրված եզրակացությանը որևէ փաստաթուղթ կամ ապացույցի այլ տեսակ չի կարող փոխարինել:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը կրկնում է իր նախադեպային իրավունքում արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ եթե փորձագետի եզրակացությունը հիմնավորված, բավարար չափով հստակ կամ լրիվ չէ, ապա օրենսդիրը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմնին օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են, օրինակ, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը (*տես mutatis mutandis Վճռաբեկ դատարանի՝ Արայիկ Օնիկի Խաչատրյանի գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԿԳ-1/0006/01/14 որոշման 17-րդ կետը*):

17.1. Վերահաստատելով *Ա.Խաչատրյանի* որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը և հաշվի առնելով համապատասխան օրենսդրական կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն առաջանում է այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված է, կասկած չի հարուցում, սակայն պարզ կամ լրիվ չէ: Իսկ կրկնակի փորձաքննություն նշանակվում է, երբ փորձագետի եզրակացությունն ինքնին

կամ իր հիմքում դրված հանգամանքների ուժով կասկածելի է կամ հստակ չէ: Այլ կերպ ասած՝ կրկնակի փորձաքննություն նշանակվում է, երբ փորձագետի եզրակացության հիմնավորվածությունը և արժանահավատությունը կասկածի տակ է դրվում:

18. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ամբաստայալ Ա.Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել որպես զենք օգտագործվող սաղավարտով կրտսեր սերժանտ Ս.Վասիլյանի գլխին հարվածելու և վերջինիս առողջությանը ծանր վնաս պատճառելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, գնահատելով փորձագետի՝ 2014 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1635/հ եզրակացությունը, գտել է, որ այն հիմնավորված է, կասկած չի հարուցում, դրա հիմքում դրված ապացույցները չեն ճանաչվել ոչ հավաստի, և չեն խախտվել այդ փորձաքննության կատարման դատավարական կանոնները: Ինչ վերաբերում է Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում իրականացված՝ Ս.Վասիլյանի գլխուղեղի համակարգչային շերտավորման արդյունքները պահպանված չլինելուն, ապա Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ այն ինքնին չի կարող կասկածի տակ դնել կատարված հետազոտության արդյունքները (տե՛ս սույն որոշման 6-րդ և 8-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, հիմնվելով «Էրեբունի» ԲԿ ռադիոլոգիայի բաժանմունքի, «Ուլտրաիմիջինգ» ռադիոլոգիայի գիտամեթոդական կենտրոնի, «Կենսաբանական համակարգերի միջազգային ինստիտուտի բժշկաախտորոշիչ կենտրոն Երևան» ՍՊ ընկերության, «Նաիրի» ԲԿ-ի գրությունների և ՀՀ ԱՆ ախտորոշիչ ճառագայթաբանության գլխավոր մասնագետ Արամ Քոչարյանի կարծիքի վրա, եզրահանգել է, որ փորձագետի եզրակացության և նշված գրություններում առկա հակասական հանգամանքները (մասնավորապես այն, որ կատարված հետազոտության արդյունքներով վնասվածքների առկայության կամ բացակայության մասին տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է ստացված պատկերների 0.75 քայլով ռեկոնստրուկցիա, ուստի վնասվածքի առկայության կամ բացակայության հարցին հնարավոր չէ պատասխանել) ինքնին բավարար են Ա.Հարությունյանին ապացույցների անբավարարության հիմքով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով անմեղ ճանաչելու և արդարացնելու համար (տե՛ս սույն որոշման 7-րդ, 9-10-րդ կետերը):

19. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 15-17.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը տուժողի առողջությանը պատճառված վնասի առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրահանգման է եկել հիմնվելով ոչ թե փորձագետի եզրակացության, այլ համապատասխան բժշկական կենտրոններից ստացված գրությունների և մասնագետի՝ դատարանում հայտնած կարծիքի վրա:

Մասնավորապես, հիմնվելով մասնագետների հայտնած կարծիքների վրա՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ փորձագետի կատարած հետազոտությամբ հնարավոր չէ հաստատված համարել տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը, փորձագետի՝ 2014 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1635/հ եզրակացությունը քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով արժանահավատության և հիմնավորվածության տեսանկյունից գնահատելու փոխարեն, այն փոխարինել է մասնագետի կարծիքով, ինչն անթույլատրելի է: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանով Վերաքննիչ դատարանն անտեսել է քրեադատավարական օրենսդրությամբ առկա պահանջն առ այն, որ տուժողի առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը կարող են հաստատվել միայն դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ, իսկ մասնագետի հայտնած կարծիքը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը: Ավելին՝ արդյունքում անպատասխան է մնացել, թե Ստեփան Վասիլյանի առողջությանն ինչ բնույթի և ծանրության աստիճանի վնաս է պատճառվել այն պայմաններում, երբ Վերաքննիչ դատարանի կողմից չի հերքվել ամբաստանյալի կողմից տուժողին սաղավարտով հարվածելու փաստը:

20. Ինչ վերաբերում է «Էրեբունի» ԲԿ ռադիոլոգիայի բաժանմունքի, «Ուլտրաիմիջինգ» ռադիոլոգիայի գիտամեթոդական կենտրոնի, «Կենսաբանական համակարգերի միջազգային ինստիտուտի բժշկաախտորոշիչ կենտրոն Երևան» ՍՊ ընկերության, «Նաիրի» ԲԿ-ի գրություններին և ՀՀ ԱՆ ախտորոշիչ ճառագայթաբանության գլխավոր մասնագետ Արամ Զոչարյանի հայտնած կարծիքին, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դրանցում պարունակվող տեղեկությունները կարող էին ուղղորդող նշանակություն ունենալ դատարանի համար փորձագետի՝ 2014 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1635/հ եզրակացությունը ստուգելու նպատակով կատարելու համապատասխան դատավարական գործողություններ:

21. Սույն որոշման 14-20-րդ կետերում կատարված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով արդարացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Ա.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ապացույցների անբավարարության հիմքով արդարացնելով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ, 108-րդ և 243-րդ - հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ քրեադատավարական օրենքի էական խախտում է:

22. Ինչ վերաբերում է Ա.Հարությունյանի պաշտպանի այն փաստարկներին, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատականի չեն արժանացրել ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատու-

վությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչի արդյունքում սխալ եզրահանգման են եկել ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում (տե՛ս սույն որոշման 12-12.1-րդ կետերը), Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Ա.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի չկիրառման վերաբերյալ բողոքաբերի նշված փաստարկներին հնարավոր է անդրադառնալ սույն որոշման մեջ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 398-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արտեմ Արմենի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 112-րդ հոդվածի 1-ին մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 21-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունվարի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արտեմ Արմենի Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված հրամանատարության հսկողության հանձնելը փոխել և որպես խափանման միջոց ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

35.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԳ/0007/11/15

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

նախազահությամբ մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԳԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ՝ դիմողի ներկայացուցիչ

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 4-ի որոշման դեմ դիմող Հմայակ Բաբայանի ներկայացուցիչ Արսեն Գրիգորյանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի ավագ հետաքննիչ Գ.Պետրոսյանի (այսուհետ նաև՝ Հետաքննիչ)՝ 2015 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ Հմայակ Բաբայանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Հետաքննիչի որոշման դեմ Հ.Բաբայանի ներկայացրած բողոքը Երևան քաղաքի դատախազ Ա.Գավթյանի (այսուհետ նաև՝ Դատախազ)՝ 2015 թվականի մարտի 20-ի որոշմամբ մերժվել է:

2. Վերոնշյալ որոշումների դեմ Հ.Բաբայանի կողմից ներկայացված բողոքը Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2015 թվականի հունիսի 10-ի որոշմամբ մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 10-ի որոշումը բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

3. Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ ներկայացված բողոքը բավարարել է և պարտավորեցրել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու բողոքաբերի իրավունքների խախտմամբ կայացված, նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին Հետաքննիչի՝ 2015 թվականի փետրվարի 28-ի և Դատախազի՝ 2015 թվականի մարտի 20-ի որոշումները:

4. Վերոնշյալ դատական ակտի դեմ դատախազ Ա.Մուրադյանի ներկայացրած բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 4-ի որոշմամբ բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը բեկանվել է և հաստատվել Հետաքննիչի՝ 2015 թվականի փետրվարի 28-ի և Դատախազի՝ 2015 թվականի մարտի 20-ի որոշումների օրինականությունը:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 4-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դիմող Հ.Բաբայանի ներկայացուցիչ Արսեն Գրիգորյանը, որը վճարելի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 31-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Հ.Բաբայանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերը ուղարկվել են Առաջին ատյանի դատարան, և դրանց ուսումնասիրության արդյունքում 2015 թվականի դեկտեմբերի 7-ին կայացվել է դատական ակտ (տե՛ս նյութեր, 3-րդ հատոր, գ.թ.1, 41-45):

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 28-ի գրությամբ բողոքի վերաբերյալ ստացված նյութերը վերադարձվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժին (տե՛ս նյութեր, 3-րդ հատոր, գ.թ. 50):

8. Վերաքննիչ բողոքի քննության ընթացքում Վերաքննիչ դատարան չեն ներկայացվել Առաջին ատյանի դատարան ուղարկված նյութերը (տե՛ս նյութեր, 4-րդ հատոր):

9. Վճարելի դատարան չեն ներկայացվել, իսկ բողոքի կապակցությամբ ստորադաս դատարաններում կազմված և այնուհետև վճարելի դատարան ներկայացված նյութերում առկա չեն ՀՀ ոստիկանության Երևան

քաղաքի վարչության Շենգավիթի բաժնում նախապատրաստված նյութերը:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 4-ի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով:

Բողոքաբերի պնդմամբ գործի նյութերով ապացուցվում է, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան աշխատակիցների կողմից կատարվել է սեփականության իրավունքով Հ.Բաբայանին պատկանող բաց պատշգամբի տարածքի նկատմամբ Շողիկ Սկրտչյանի սեփականության իրավունքի անօրինական գրանցում, ինչի արդյունքում խախտվել են տվյալ պատշգամբի սեփականատեր Հ.Բաբայանի իրավունքները: Մինչդեռ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան աշխատակիցները պարտավոր էին ստուգել իրենց մոտ գտնվող կադաստրային գործը և ճշտել՝ արդյոք բաց պատշգամբի նկատմամբ առկա էր գրանցված իրավունք կամ սահմանափակում, թե ոչ:

Բողոք քերած անձն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվել է Հ.Բաբայանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքը: Բացի այդ, քննարկվող դատական ակտը հակասում է Վճարելի դատարանի՝ թիվ ԵԿԳ/0058/11/09 և ԵԿԳ/0044/11/13 որոշումներին:

11. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմանը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված է արդյոք Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 4-ի որոշումն այն պայմաններում, երբ բողոքի կապակցությամբ կազմված նյութերում բացակայում են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը:

13. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյու-
նավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գոր-
ծի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրա-
վունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համա-
ձայն՝

*«1. Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների
պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ
ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:*

(...)

4. (...) քրեական դատավարության ընթացքում օրինականության
խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի
քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համա-
ձայն՝

*«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի,
օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմին-
ների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողություննե-
րի օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են
ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեա-
կան դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրա-
վունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործո-
ղություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի
կողմից:*

(...)

4. (...) Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան
ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր (...)»:

14. Մեջբերված իրավական նորմերը Վճարելի դատարանը վերլու-
ծության է ենթարկել *Պյեր Շան Մուրադյանի* վերաբերյալ որոշմամբ, որով
դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) վարույթն իրականացնող
մարմինների որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքի
քննության դատական վարույթի օբյեկտը բողոքի կապակցությամբ ներ-
կայացված նյութերն են, որոնց հիման վրա դատարանը գնահատում է
անձի իրավունքների և ազատությունների խախտման առկայությունը:
Հաշվի առնելով, որ վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գոր-
ծողության հիմքում դրված նյութերը գտնվում են նրա տիրապետության
ներքո՝ օրենսդիրն անձի՝ դատական պաշտպանության իրավունքի ապա-
հովման նպատակով վարույթն իրականացնող մարմնի համար սահմանել
է այդ նյութերը դատարան ներկայացնելու պարտականություն (ՀՀ քրեա-
կան դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մաս): Ընդ որում,

վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան պետք է ներկայացվեն բողոքին վերաբերող նյութերը՝ ինչպես բողոքարկվող որոշման կամ գործողության օրինականությունը ենթադրաբար հիմնավորող, այնպես էլ՝ հերքող:

Այսպիսով, վարույթն իրականացնող մարմնի կողմից բողոքի վերաբերյալ նյութերը դատարան ներկայացնելու պահանջը կոչված է ապահովելու մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանին անհրաժեշտ փաստական հիմքը: Նշված նյութերով է պայմանավորված դատարանի կողմից մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության ու հիմնավորվածության պատշաճ ստուգում իրականացնելու և դրա արդյունքում հիմնավորված եզրահանգումներ կատարելու օբյեկտիվ հնարավորությունը:

(...) Նույն կերպ վերադաս դատական ատյանը մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության դատական ստուգման արդյունքում կայացված դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս պետք է հիմք ընդունի բողոքը քննելիս ստորադաս ատյանի տրամադրության տակ եղած նյութերը և դրանց համատեքստում համապատասխան գնահատական տա բողոքաբերի փաստարկներին: Միայն այդ պարագայում հնարավոր կլինի պարզել դատարանի հետևությունների համապատասխանությունը գործում առկա նյութերին: Այլ խոսքով՝ վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատական ատյանի որոշման վերանայումը հնարավոր է դատական ակտը կայացրած դատարանի հետագոտած նյութերի հիման վրա, հակառակ դեպքում վերադաս դատական ատյանի որոշումը չի համապատասխանի դատական ակտերին ներկայացվող օրինականության և հիմնավորվածության պահանջներին՝ հանգեցնելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի արդար դատաքննության իրավունքի խախտման (դատական ակտին ներկայացվող պահանջների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս, mutatis mutandis, Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԳ/0058/11/09 որոշումը):

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա դատարան ներկայացված և վերջինիս կողմից հետագոտված նյութերը վարույթն իրականացնող մարմնին վերադարձնելու վերաբերյալ պահանջ: Իսկ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության դեմ ներկայացված բողոքի քննության հետ կապված նյութերը կազմվում են առանձին դատական գործի տեսքով, որի բաղկացուցիչ մասն են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը: Այլ խոսքով՝ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը դատարանը պարտավոր է կցել բողոքի կապակցությամբ դատարանում կազմված նյութերին, որպիսի պահանջն ուղղակիորեն հետևում է անձի արդար դատաքնն-

նության իրավունքը՝ դատական ակտը բողոքարկելու և վերադաս դատական ատյանների կողմից բողոքարկված դատական ակտը վերանայելու տեսանկյունից, ինչպես նաև պետական մարմինների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունն ապահովելու պահանջներից» (տե՛ս Պլեր ժան Մուրադյանի վերաբերյալ Վճարելի դատարանի 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԳ/0143/11/14 որոշման 14-15-րդ, 17-րդ կետերը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հետազոտելով Հ.Բաբայանի դիմումի հիման վրա ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնում նախապատրաստված և դատարան ուղարկված նյութերը, 2015 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ բավարարել է ներկայացված բողոքը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը), այնուհետև 2015 թվականի դեկտեմբերի 28-ի գրությամբ վերոհիշյալ նյութերը հետ է վերադարձրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի (տե՛ս - սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ բողոքի քննության ընթացքում Վերաքննիչ դատարան չեն ներկայացվել Առաջին ատյանի դատարան ուղարկված նյութերը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերոնշյալ նյութերը Վճարելի դատարան նույնպես չեն ներկայացվել, իսկ բողոքի կապակցությամբ ստորադաս դատարաններում կազմված և այնուհետև Վճարելի դատարան ներկայացված նյութերում դրանք առկա չեն (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

16. Նախորդ կետում շարադրված փաստերը վերլուծելով սույն որոշման 13-14-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Հ.Բաբայանի բողոքի կապակցությամբ ստորադաս դատարաններում կազմված նյութերում առկա չեն վարույթն իրականացնող մարմնի՝ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը: Հիշյալ նյութերը Առաջին ատյանի դատարանի կողմից վերադարձվել են վարույթն իրականացնող մարմնին: Հետևաբար, Առաջին ատյանի դատարան ուղարկված և հետազոտված նյութերը Վերաքննիչ դատարանի կողմից չեն հետազոտվել, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը չի կարող գնահատվել որպես օրինական և հիմնավորված: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Հ.Բաբայանի բողոքի կապակցությամբ ստորադաս դատարանում կազմված նյութերում առկա չեն վարույթն իրականացնող մարմնի՝ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը:

Առաջին ատյանի դատարանը, բողոքի կապակցությամբ կազմված նյութերին չլսելով և վարույթն իրականացնող մարմնին վերադարձնելով ներկայացված նյութերը, սահմանափակել է իր կողմից կայացված որոշումը վերադաս դատական ատյանների կողմից վերանայելու հնարավորությունը: Նման պայմաններում Վճարելի դատարանը զրկված է վճարելի բողոքում ներկայացված փաստարկները (տե՛ս սույն որոշման 10-11-րդ

կետերը) ըստ էության քննարկելու և ստորադաս դատարանների որոշումներին իրավական գնահատական տալու հնարավորությունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրինական և հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 4-ի որոշումն այն պայմաններում, երբ բողոքի կապակցությամբ կազմված նյութերում բացակայում են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը:

17. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 290-րդ հոդվածների խախտումներ, որոնք հանգեցրել են անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացնելուն: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, հիմք են Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Հմայակ Բաբայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

36.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0013/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
մեղադրող

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հովհաննես Մարքսի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի սեպտեմբերի 24-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում Վաչագան Մեխակյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13802814 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Հովհաննես Մարքսի Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադր-

յալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ Հ.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի փետրվարի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի հունիսի 8-ի դատավճռով Հ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացրել է՝ ճանաչելով և հռչակելով նրա անմեղությունն այդ հանցանքի կատարման մեջ՝ վերջինիս մասնակցությունը մեղսագրված արարքին ապացուցված չլինելու հիմքով:

3. Մեղադրող Հ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 8-ի դատավճիռը բեկանել է, ամբաստանյալ Հ.Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով (դիմողի բողոքի բացակայություն) Հ.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է, թիվ ԵԿԳ/0013/01/15 քրեական գործի վարույթը՝ կարճել:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Հ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն]ա,

2014թ. սեպտեմբերի 20-ին, ժամը 17:30-ի սահմաններում Երևան քաղաքի Վարդանանց 22 շենքի քիվ 38 բնակարանում տեղի ունեցած վիճարանության ընթացքում ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Վաչագան Վանուշի Մեխակյանի մարմնի տարբեր մասերին և դիտավորությանը վերջինիս առողջությանը պատճառել ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող՝ կրծքավանդակի փակ բուք վնասվածքի, կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսի արյունազեղման, ձախից կողոսկրերի կոտրվածքների՝ ուղեկցված ձախակողմյան լարված պնևմոթորաքսով, գանգուղեղային վնասվածքի, քթոսկրերի կոտրվածքի, գլխի աջ ճակատակողմնային շրջանի, գլխի ձախ գագաթային շրջանի, քթի մեջքի շրջանի սալջարդ պատռված վերքերի, ստորին շրթունքի աջ կեսի քերծվածքի, ձախից՝ ստորին կուպի արյունազեղման ձևերով (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 166-167):

5.1. Դատաբժշկական փորձաքննության քիվ 1621/հ եզրակացության համաձայն՝ «Վաչագան Մեխակյանի ստացած մարմնական վնասվածքները, կրծքավանդակի փակ բուք վնասվածքի, կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսի արյունազեղման, ձախից կողոսկրերի կոտրվածքների՝ ուղեկցված ձախակողմյան լարված պնևմոթորաքսով, գանգուղեղային վնասվածքի, քթոսկրերի կոտրվածքի, գլխի աջ ճակատակողմնային շրջանի, գլխի ձախ գագաթային շրջանի, քթի, մեջքի շրջանի սալջարդ պատռված վերքերի, ստորին շրթունքի աջ կեսի քերծվածքի, ձախից՝ ստորին կուպի արյունազեղման ձևով պատճառվել են բուք առարկաների ներգործության հետևանքով (...), որոնք միասին վերցված պատճառել են առողջությանը ծանր վնաս կյանքին վտանգ սպառնացող, իսկ առանձին վերցված՝ կրծքավանդակի փակ բուք վնասվածքը, կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսի արյունազեղումը, ձախից կողոսկրերի կոտրվածքները՝ ուղեկցված ձախակողմյան լարված պնևմոթորաքսով պատճառել են առողջությանը ծանր վնաս որպես կյանքին վտանգ սպառնացող, քթոսկրերի կոտրվածքը, գլխի աջ ճակատակողմնային շրջանի, գլխի ձախ գագաթային շրջանի սալջարդ վերքերը պատճառել են առողջությանը թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, (...) քթի մեջքի շրջանի սալջարդ-պատռված վերքը, ստորին շրթունքի աջ կեսի քերծվածքը, ձախից՝ ստորին կուպի արյունազեղումը առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 144-145):

6. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է՝ «(...) [Վ]երլուծելով և ապացույցների ընդհանուր համադրության մեջ գնահատելով ամբաստանյալի ցուցմունքները, դրանցից առավել արժանահավատ և փաստարկված է համարում դատաքննականը, քանի որ այն հաստատվեց նաև գործի դատական քննությանը ձեռք բերված այլ ապացույցներով:

(...)

[Դ]ատարանը համադրելով (...) ապացույցները, արձանագրում է, (...) ամբաստանյալ Հովհաննիսյանը բռնուցքով 2 անգամ հարվածել է Մե-

խակյանի դեմքին, որպիսի հանգամանքը հաստատվում է նախ՝ ամբաստանյալ Հովհաննիսյանի, ապա նաև վկա Ղորղանյանի՝ ինչպես դատաքննության, այնպես էլ նախաքննության ժամանակ որպես վկա տրված ցուցմունքներով:

Դատարանն արձանագրում է, որ տվյալ փաստը չի հերքվում նաև ամբաստանյալի նախաքննական և ոչ մի ցուցմունքով: Նախաքննության ընթացքում ամբաստանյալն իր որևէ ցուցմունքում չի նշել, որ ինչպես կանգնած վիճակում, այնպես էլ գետնին ընկնելուց հետո, ինքը հարվածներ է հասցրել տուժողի կրծքավանդակի կամ կողային հատվածներին, վերջինս ընդամենը նշել է, որ «տեղից ոտքի կանգնելով, նյարդայնացած վիճակում 2 անգամ բռունցքով հարվածել եմ Սեխակյանի դեմքին»:

(...)

Ավելին, հետազոտելով տուժող Վ.Սեխակյանի նախաքննական ցուցմունքները, դատարանն արձանագրում է, որ դրանով տուժողի կողմից առաջ է քաշված իր մարմնական վնասվածքները ստանալու միանգամայն այլ իրավիճակ:

(...)

Այլ խոսքով, տուժողը հայտնել է տեղեկություններ մինչև դատաբժիշկ փորձագետի կողմից տրված եզրակացությունը ստանալը, ինչը նույնպես պետք է նախաքննական մարմնին բերեր այն եզրահանգման, որ առավել արժանահավատ են ու փաստարկված տուժողի ցուցմունքները, որտեղ վերջինս հերքելով Հ.Հովհաննիսյանի կողմից ծեծի ենթարկվելու փաստը, նշել է, որ վնասվածքները հասցրել է ոչ թե ամբաստանյալ Հովհաննիսյանը, այլ իրեն անձանոթ հինգ անձինք և ոչ թե Ղորղանյանի բնակարանում, այլ մինչև այնտեղ գնալը՝ տոնավաճառի հարակից հատվածում:

(...)

Դատարանն արձանագրում է, որ գործի ելքով որևէ կերպ չչափազորված փորձագետն իր եզրակացության մեջ արձանագրել է մի փաստ, ինչը մշտապես, իր բոլոր ցուցմունքներում հայտնել է նույն ինքը, տուժողը:

Բացի այդ, դատարանը որպես արժանահավատ ապացույց է դիտում նաև փորձագետի դատարանում տված ցուցմունքը, համաձայն որի՝ Վ.Սեխակյանին պատճառվել են տարբեր մարմնական վնասվածքներ՝ մարմնի տարբեր հատվածներում: Այդ մարմնական վնասվածքները եղել են տարբեր խմբերի և բնույթի՝ թեթև և ծանր: Փորձագետը դատարանում հաստատապես նշել է, որ վնասվածքները՝ գլխի գազաթային շրջանի սալջարդ վերքը, կողոսկրերի կոտրվածքը, կրծքավանդակի ճախ կեսի արյունազեղումը և ճախակողմյան պնևմոթորաքսը չէին կարող առաջանալ հավասար, հարթ մակերեսային ընկնելու հետևանքով, ինչպիսին է բնակարանի հատակը: Նախ այն պատճառով, որ այդպիսի վնասվածքներ կարող էին պատճառվել միայն արտացոլված մակերես ունեցող առարկաներից, կամ բութ առարկաների ներգործության միջոցով: Բացի

այդ, ըստ փորձագետի՝ վնասվածքներն իրենց ամբողջ համադրությամբ, եղել են մարմնի տարրեր հատվածներում, տարրեր մասերում, ուստի նկարագրված պայմաններում և առավել ևս հարթ հատակին ընկնելու հետևանքով նման վնասվածքներ չէին կարող առաջանալ:

(...)

Դատարանն արձանագրում է, որ գործի նախաքննությամբ և դատական քննության ընթացքում ձեռք չեն բերվել այնպիսի ապացույցներ, որոնցով կարելի է հաստատված համարել, որ Հ. Հովհաննիսյանը հարվածել է նաև տուժող Մեխակյանի կողերի կամ կրծքավանդակի հատվածներին, բացի այդ՝ դատարանը փաստում է, որ քաշքշելու արդյունքում նրանք ընկել են հարթ հատակին, այլ ոչ թե արտացցված մակերես ունեցող ինչ-որ տեղ:

Այլ խոսքով, դատարանը հաստատված է համարում այն փաստը, որ Մեխակյանի մարմնի տարրեր հատվածներում առկա մարմնական վնասվածքները չէին կարող առաջանալ միմյանց քաշքշելու, ինչպես նաև այդ կերպ հավասար հատակին ընկնելու արդյունքում:

(...)

Այսպիսով, դատարանն արձանագրում է, որ հետազոտված ապացույցների ընդհանուր ամբողջությունը վերլուծելով և գնահատելով ՀՀ վճարելի դատարանի կողմից կայացված որոշումների լույսի ներքո, դրանք համադրելով մեղադրանքի ձևակերպման, գործով հավաքված ապացույցների և դատարանի մոտ դրանց հիման վրա ձևավորված ներքին համոզմունքի հետ, հնարավոր չէ հանգել հիմնավոր հետևության առ այն, որ Հ. Հովհաննիսյանը դիտավորությամբ մարմնական վնասվածքներ է հասցրել Վ. Մեխակյանին կրծքավանդակի և կողային շրջաններին ու պատճառել է ծանր մարմնական վնասվածք» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 110-112, 131-132):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Դ]ատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, հանգել է ճիշտ հետևության, որ ամբաստանյալ Հովհաննես Հովհաննիսյանը չի կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք:

(...)

Քրեական գործի քննության ընթացքում ձեռք բերված տվյալներով միանշանակ հաստատվում է այն, որ ամբաստանյալ Հովհաննես Հովհաննիսյանը բռնուցքով 2 անգամ հարվածել է Վաչագան Մեխակյանի դեմքին՝ ճախ այտի հատվածին (...): Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանման սկզբունքը հաշվի առնելով, հարկ է համարում նշել, որ Հովհաննես Հով-

հաննիսյանի գործողություններում, մասնավորապես՝ երկու հարված հասցնելու պարագայում, չի ապացուցվում տուժող Վաչագան Մեխակյանի առողջությանը թեթև մարմնական վնասվածք պատճառելու հանգամանքը ևս: Ավելին՝ երկու հարված հասցնելն օբյեկտիվորեն չէր կարող առաջացնել փորձագետի եզրակացությամբ նշված առողջությանը պատճառված վնասվածքները:

(...)

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը, գնահատելով և համադրելով թե նախնական քննության, թե դատական քննության ընթացքում տրված ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, ձևավորում է ներքին համոզմունք առ այն, որ Հովհաննես Հովհաննիսյանի մեղավորությունը՝ բռունցքով Վաչագան Մեխակյանին երկու հարված հասցնելու մասով, ապացուցված է, որպիսի պայմաններում Հովհաննես Հովհաննիսյանի գործողությունները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

(...)

Վերաքննիչ դատարանն առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով փոփոխելը հնարավոր է համարում, քանի որ մեղադրանքի նման փոփոխությունով ամբաստանյալի վիճակը չի վատթարանում:

(...)

[Տյուժողի բողոքի բացակայության հիմքով Հովհաննես Մարքսի Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել և թիվ ԵԿԴ/0013/01/15 քրեական գործի վարույթը պետք է կարճել, քանի որ նրան մեղսագրվող արարքը համարվում է ոչ մեծ ծանրության հանցագործություն և դասվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերի թվին» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 47-52):

7.1. Արդյունքում Վերաքննիչ դատարանը որոշել է՝ «(...) [Ա]մբաստանյալ Հովհաննես Մարքսի Հովհաննիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով:

ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (դիմողի բողոքի բացակայություն) հիմքով Հովհաննես Մարքսի Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և թիվ ԵԿԴ/0013/01/15 քրեական գործի վարույթը կարճել»: (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 52-53):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերի պնդմամբ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի

վրա: Մասնավորապես, քրեական գործի վարույթը կարճելու որոշում կայացնելով՝ ստորադաս դատարանը գրկել է քրեական հետապնդում իրականացնող մարմիններին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարած անձին բացահայտելու, իսկ տուժողին՝ իր խախտված իրավունքներն ու հանցագործությամբ պատճառված վնասը վերականգնելու հնարավորությունից: Բողոք բերած անձը փաստարկել է, որ նման պայմաններում քրեական հետապնդման մարմինը չի կարող իրականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով իր վրա դրված՝ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձին բացահայտելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու պարտականությունը:

9. Բողոքի հեղինակն ընդգծել է նաև, որ քրեական գործում առկա փաստական տվյալներն իրենց համակցությամբ հաստատում են ամբաստանյալ Հ.Հովհաննիսյանի կողմից տուժող Վ.Մեխակյանին ծանր մարմնական վնաս պատճառելու հանգամանքը, մինչդեռ ստորադաս դատարանները դրանք պատշաճ գնահատման չեն ենթարկել, իրականացրել են ապացույցների կամայական գնահատում՝ դրանց մի մասին մյուսների համեմատությամբ տալով առավելություն:

Այսպես՝ Հ.Հովհաննիսյանը որպես կասկածյալ և մեղադրյալ հարցաքննվելիս ցուցմունք է տվել այն մասին, որ Վ.Մեխակյանի մոտ առկա մարմնական վնասվածքներն ինքն է պատճառել: Դատարանները պատշաճ գնահատական չեն տվել Կ.Գորդանյանի՝ նախաքննության ընթացքում տված և դատարանում հրապարակված լրացուցիչ այն ցուցմունքին, որ ինքը նախորդ ցուցմունքում ոչ բոլոր հանգամանքներն է ճիշտ ներկայացրել: Իրականում Հ.Հովհաննիսյանի և Վ.Մեխակյանի վիճաբանությունն սկսվել է վերջինիս խանութից վերադառնալուց և օդի խմելուց հետո, իսկ մինչ այդ Վ.Մեխակյանի դեմքին վնասվածքներ չեն եղել: Նրա դեմքի և մարմնի վնասվածքներն առաջացել են Հ.Հովհաննիսյանի հարվածների հետևանքով:

Բողոքաբերն ընդգծել է, որ ո՛չ վկա Կ.Գորդանյանը, ո՛չ էլ ամբաստանյալ Հ.Հովհաննիսյանը որևէ հիմնավոր փաստարկ չեն ներկայացրել նախաքննական ցուցմունքները փոխելու և դատարանում այլ ցուցմունք տալու վերաբերյալ:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել համապատասխան դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանը գտնում է, որ քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման հարաբերակցության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիր-

քորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք թիվ ԵԿԳ/0013/01/15 քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն պայմաններում, երբ տուժողի առողջությանը ծանր մարմնական վնասվածք պատճառած անձը կամ անձինք չեն բացահայտվել:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «(...)

2) քրեական գործ[ը]՝ քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի կողմից իրականացվող առանձին վարույթ [է]՝ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ.

(...)

4) գործով վարույթ՝ քրեական դատավարական ընթացակարգ, որն սկսվում է քրեական գործի հարուցման հարցը լուծելիս և իր մեջ ներառում է գործով իրականացվող և ընդունվող դատավարական որոշումները և գործողությունները.

(...)

17) քրեական հետապնդում[ը]՝ այն բոլոր դատավարական գործողություններ[ն են], որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը.

18) քրեական հետապնդման հարուցում[ը]՝ քրեական հետապնդման մարմնի որոշումն [է] անձին որպես մեղադրյալ ներգրավելու. ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին.

(...):

Մեջբերված նորմերի վերլուծության արդյունքում Վճարելի դատարանը Վ.Գրիգորյանի գործով որոշմամբ փաստել է. «(...) ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործը հարուցվում է քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրաբար կատարված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի (արարքների) կապակցությամբ, այլ կերպ՝ փաստի առթիվ, և որևէ անձի համար քրեական դատավարությունում այն իրավական որևէ հետևանք չի առաջացնում (...)» (տե՛ս Վալերի Գրիգորյանի գործով Վճարելի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ԵԿԳ/0031/11/08 որոշման 14-րդ կետը):

Չարգացնելով Վ.Գրիգորյանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ «քրեա-

կան գործ» և «քրեական հետապնդում» հասկացությունները չեն նույնանում և ունեն իրենց բովանդակությամբ տարբեր նշանակություն: Այսպես՝ քրեական գործը վարույթ է, որը հարուցվում է ենթադրաբար կատարված քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի (փաստի) կապակցությամբ: Մինչդեռ քրեական հետապնդումը հարուցվում և իրականացվում է միայն կոնկրետ անձի նկատմամբ, այսինքն՝ ենթադրում է հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող դատավարական սուբյեկտի առկայություն: Այլ կերպ՝ քրեական գործի հարուցման փուլում վարույթն իրականացնող մարմնի գործողություններն ուղղված են հանցագործության դեպքի և հանգամանքների, հանցանք կատարած անձի բացահայտմանը, իսկ այն պահից սկսած, երբ ի հայտ է գալիս ենթադրյալ հանցանք կատարած անձը, հարուցվում և իրականացվում է քրեական հետապնդումը (ձերբակալում, որպես մեղադրյալ ներգրավում, դատավարական հարկադրանքի միջոցների կիրառում և այլն): Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քրեական գործի հարուցումը և քրեական հետապնդման սկիզբը կարող են համընկնել միայն այն դեպքում, երբ ենթադրյալ հանցանք կատարած անձը քրեական գործ հարուցելիս հայտնի է:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ *«[Վ]երջնական որոշում[ը]՝ քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում[ն է], որը բացառում է գործով վարույթն սկսելը, կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ *«Զրեական գործով վարույթն ավարտվում է՝*

1) քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 19-րդ կետի համաձայն՝ *«[Զ]րեական հետապնդման դադարեցում[ը]՝ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշում[ն է]՝ առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Զրեական հետապնդում կարող է իրականացվել միայն հարուցված քրեական գործով»:*

Վերոշարադրյալ քրեադատավարական նորմերի համակարգված վերլուծությունը ցույց է տալիս, որ «քրեական գործի վարույթի կարճում» և «քրեական հետապնդման դադարեցում» հասկացությունները ևս չեն նույնանում (այդ համատեքստում նաև՝ քրեական գործի հարուցումը մերժելը և քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելը):

Վճռաբեկ դատարանը, *Ս.Շահնազարյանի* գործով որոշմամբ անդրադառնալով քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշումների հարաբերակցությանը, արձանագրել է. *«(...) [Զ]րեական գործի հարուցումը մերժ-*

ժելու մասին որոշումը չի կարող նույնացվել քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման հետ, քանի որ դրանք իրենցից ներկայացնում են տարբեր իրավական բնույթ, բովանդակություն, նպատակ և հետևանքներ ունեցող դատավարական որոշումներ:

Մասնավորապես քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն իրենից ներկայացնում է քրեական գործ հարուցելու փուլը եզրափակող և դատավարության հետագա ընթացքը բացառող որոշում: Այն կայացվում է ենթադրյալ հանցանքի հիմքերի բավարարության ստուգման ուղղությամբ իրականացվող դատավարական և (կամ) այլ գործողությունների արդյունքում, ընդ որում, դրա կայացման համար իրավական նշանակություն չունի ենթադրաբար հանցանք կատարած անձի փաստացի առկայությունը: Մինչդեռ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կայացվում է կոնկրետ անձի նկատմամբ՝ բացառելով տվյալ անձի նկատմամբ կոնկրետ դեպքի առթիվ քրեական հետապնդում իրականացնելը, այլ ոչ թե այդ դեպքի առթիվ իրականացվող վարույթի ընթացքը, որն ուղղված է մեղավոր անձին (անձանց) բացահայտելուն և օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելուն (...)» (տես Մամվել Շահնազարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԵՇԳ/0002/11/14 որոշման 19-րդ կետը):

Չարգացնելով *Ս.Շահնազարյանի* որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով վերջնական որոշում է, որը եզրափակում է գործով վարույթը՝ բացառելով այն սկսելու կամ շարունակելու հնարավորությունը: Քրեական գործի կարճմամբ հանցագործության փաստով ծավալված բոլոր հարաբերություններն ավարտվում են, և քրեական հետապնդման մարմինը գրկվում է տվյալ քրեական գործով որևէ դատավարական գործողություն կատարելու, այդ թվում՝ քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունից: Ի տարբերություն քրեական գործի կարճման՝ քրեական հետապնդման դադարեցումը կոնկրետ անձի նկատմամբ դատավարական գործողություններ իրականացնելուց վարույթն իրականացնող մարմնի հրաժարումն է: Այն ինքնին գործով վարույթը շարունակելու խոչընդոտ չէ և մեխանիկորեն չի հանգեցնում քրեական գործի կարճման:

Այսպիսով, քրեական գործի վարույթն ավելի լայն հասկացություն է, քան քրեական հետապնդումը. քրեական հետապնդում իրականացնելու պարտադիր պայման է հարուցված քրեական գործի առկայությունը, իսկ վերջինիս կարճումը փաստացի հանգեցնում է նաև քրեական հետապնդման դադարեցման: Մինչդեռ կոնկրետ անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը հարուցված քրեական գործի վարույթի մասն է, հետևաբար այդ անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդման դադարեցումն ինքնին չի կարող հանգեցնել քրեական գործով վարույթի կարճմանը՝ բացառելով այդ վարույթում քննչական կամ դատավարական

անհրաժեշտ այլ գործողություններ, այդ թվում՝ այլ անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.

(...):

2. Քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

3. Դատախազը, քննիչը, հայտնաբերելով քրեական գործի վարույթը բացառող հանգամանքներ, քրեական գործով մինչդատական վարույթի յուրաքանչյուր փուլում որոշում են կայացնում քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին (...):

(...)

5. Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

Վկայակոչված հոդվածն սպառիչ կերպով թվարկում է քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը (1-ին և 2-րդ մասեր)՝ սահմանելով, որ մինչդատական վարույթում քրեական գործի վարույթը բացառող հանգամանքներ հայտնաբերելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացնում *քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը* դադարեցնելու մասին (3-րդ մաս), իսկ դատարանում ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծում է դատարանը (5-րդ մաս): «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության իմաստով (*«Այն պայմանների թվարկման ժամանակ, երբ բոլոր թվարկված պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը (...)* պետք է կիրառվի *«կամ» շաղկապը*») ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում «կամ» շաղկապի օգտագործումը ևս վկայում է, որ միշտ չէ, որ քրեական հետապնդման դադարեցման հիմքի առկայությունը հանգեցնում է նաև քրեական գործի վարույթի կարճման:

14.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝*

1) քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են (...) օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Եթե արդարացման դատավճիռ կայացնելիս անհայտ է մնում այդ հանցանքը կատարած անձը, դատարանը, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, գործն ուղարկում է դատախազին՝ լուծելու նոր անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցը»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից բխում է, որ հանցագործություն կատարած անձանց և հանցագործության բացահայտումը քրեական դատավարության առանցքային խնդիրներից մեկն է և քրեական հետապնդում իրականացնող մարմինների պարտականությունը: Դրանով է պայմանավորված, որ արդարացման դատավճիռ կայացնելու այն դեպքերում, երբ անհայտ է մնում այդ հանցանքը կատարած անձը, օրենքը դատարանին պարտավորեցնում է դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո գործն ուղարկել դատախազին՝ լուծելու նոր անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցը:

15. Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքին՝ *կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելուն*, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այս հիմքով քրեական հետապնդումը դադարեցվում է, եթե պարզվում է, որ հանցագործության դեպքը տեղի է ունեցել և բովանդակում է հանցակազմի հատկանիշներ, բայց այն կատարել է ոչ թե կոնկրետ գործով կասկածյալը կամ մեղադրյալը (ամբաստանյալը), այլ ուրիշ անձ: Այս պարագայում քրեական հետապնդում իրականացնող մարմնին պետք է հնարավորություն տրվի շարունակելու գործի վարույթը՝ հանցանք կատարած իրական անձին բացահայտելու և քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով, ինչը, սակայն, գործի վարույթը կարճելու պարագայում կարող է արգելք լինել:

Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը հիմնված է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կայացված թիվ ՍԳ-Ռ-871 որոշման վրա, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «(...) *իսկ գործի վարույթը ենթակա է կարճման*» դրույթը՝ կատարված

հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու առնչությամբ, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 18-րդ և 21-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «[ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում] (...) «առկա է հանցագործությունը» եզրույթն արդեն իսկ վկայում է հանցակազմի առկայության մասին, սակայն այն առարկայացված չէ կոնկրետ սուբյեկտի առնչությամբ:

(...)

Մեղավորությունը հիմնավորելու համար ապացույցների բավարար համակցության բացակայության դեպքում է միայն դադարեցվում քրեական հետապնդումը՝ 35-րդ հոդվածի երկրորդ մասի հիմքով: Մինչդեռ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «(...) իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը կարող է հանգեցնել իրավական կարգավորման ներքին հակասականության ու իրավական անորոշության: Ըստ էության նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում հստակ չեն առանձնացված գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման կամ այդ երկու ինստիտուտների համատեղ կիրառման հիմքերը: Հոդվածի երկու մասերի համադրված վերլուծությունը, ինչպես նաև միջազգային պրակտիկան վկայում են, որ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասն սկզբունքորեն վերաբերում է քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերին:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «(...) իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթի գոյությունն ու կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով դրա գործադրումը նախաքննության և դատաքննության փուլերում կվտանգի տուժողի շահերի պաշտպանությունը և կարող է արգելք հանդիսանալ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքի պաշտպանության համար, ինչպես նաև կասկածի տակ է մնում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղությունը՝ հանցագործությանը նրանց մասնակցությունն ապացուցված չլինելու պարագայում» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի մարտի 30-ի թիվ ՍԳՌ-871 որոշման 8-րդ կետը):

15.1. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ համանման իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, այն դեպքում, երբ անձին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ոչ բոլոր փաստերն են հաստատվում: Այսպես՝ հնարավոր է, որ գործի քննության արդյունքում ձեռք բերված ապացույցները բավարար չլինեն մեղադրանքի հիմքում դրված փաստերը ողջ ծավալով հաստատված համարելու համար, և ամբաստանյալի (մեղադրյալի) մեղավորությունը հաստատվի հանցավոր ոտնձգության միայն մի մասով: Այդ առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ե-

թե առաջադրված մեղադրանքը կոնկրետ անձի նկատմամբ փոփոխվելու արդյունքում ի հայտ է գալիս վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը բացառող հանգամանք (օրինակ՝ բացակայում է դիմողի բողոքը, անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները և այլն), իսկ միևնույն ժամանակ սկզբնական մեղադրանքով հանցանքի կատարման փաստը չի հերքվում, և նշված արարքը կատարած անձի ինքնությունը դեռևս մնում է չբացահայտված, ապա քրեական հետապնդումը դադարեցնելուն զուգահեռ քրեական գործի վարույթը կարճելը կարող է խոչընդոտել քրեական հետապնդում իրականացնող մարմնին կատարելու՝ օրենքով իր վրա դրված՝ կատարված հանցագործությունը բացահայտելու, մեղավոր անձին կամ անձանց հայտնաբերելու և քրեական պատասխանատվության ենթարկելու պարտականությունը՝ վտանգելով նաև տուժողի շահերի պաշտպանությունը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Հ.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել տուժող Վ.Մեխակյանի մարմնի տարբեր մասերին ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցնելու և վերջինիս առողջությանը դիտավորությանը ծանր վնաս պատճառելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Դատաբժշկական փորձաքննության թիվ 1621/հ եզրակացության համաձայն՝ Վ.Մեխակյանի մարմնի վրա ըստ ծանրության աստիճանի առկա են եղել տարբեր մարմնական վնասվածքներ, որոնք **միասին վերցրած տուժողի առողջությանը պատճառել են ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:**

Մինչդեռ **առանձին վերցրած Վ.Մեխակյանի առողջությանը պատճառվել են՝**

- կրծքավանդակի փակ բուք վնասվածք, կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսի արյունազեղում, ձախից կողոսկրերի կոտրվածքներ՝ ուղեկցված ձախակողմյան լարված պլեմոթորաքսով՝ **առողջությանը ծանր վնաս՝ որպես կյանքին վտանգ սպառնացող,**

- քթոսկրերի կոտրվածք, գլխի աջ ճակատակողմնային շրջանի, գլխի ձախ գագաթային շրջանի սալջարդ վերքեր՝ **առողջությանը թեթև վնաս՝** առողջության կարճատև քայքայումով, նկատի ունենալով վնասվածքների հետ անմիջական պատճառական կապի մեջ եղած հետևանքների տևողությունը վեց օրից ավելի, բայց ոչ ավելի 21 օրից,

- քթի մեջքի շրջանի սալջարդ-պատռված վերք, ստորին շրթունքի աջ կեսի քերծվածք, ձախից՝ ստորին կոպի արյունազեղում՝ **առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող** (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը գործով ձեռք բերված ապացույցների գնահատման և վերլուծության արդյունքում Հ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացրել է՝ արձանագրելով, որ հնարավոր չէ հանգել հիմնավոր հետևության այն մասին, որ Հ.Հովհաննիսյանը դիտավորությանը մարմ-

նական վնասվածքներ է հասցրել Վ.Մեխակյանի կրծքավանդակի և կողային շրջաններին ու վերջինիս առողջությանը պատճառել է ծանր մարմնական վնասվածք (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության առ այն, որ ամբաստանյալ Հ.Հովհաննիսյանը չի կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանել և փոփոխել է՝ նկատի ունենալով, որ Հ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքն իր մեջ ներառել է նաև Վ.Մեխակյանի դեմքին բռուցքով երկու հարված հասցնելը, և ապացուցված համարելով ամբաստանյալի մեղավորությունը միայն այդ արարքի մեջ, Հ.Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու մեջ: Նկատի ունենալով, որ նրան մեղաազրվող արարքը ոչ մեծ ծանրության հանցագործություն է և դասվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերի թվին, տուժողի բողոքի բացակայության հիմքով Հ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցրել է, իսկ թիվ ԵԿԳ/0013/01/15 քրեական գործի վարույթը՝ կարճել (տե՛ս սույն որոշման 7-7.1-րդ կետերը):

16.1. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների հիման վրա Վճարելի դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, Հ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով մեղավոր ճանաչելով և արձանագրելով, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով քրեական հետապնդումը բացառող հանգամանք (դիմողի բողոքի բացակայություն), վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումն իրավաչափորեն դադարեցրել է: Սակայն Հ.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն զուգահեռ Վերաքննիչ դատարանը կարճել է նաև քրեական գործի վարույթը՝ հաշվի չառնելով, որ հանցագործության դեպքը՝ տուժող Վ.Մեխակյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու փաստը, սույն գործի նյութերով չի հերքվում:

17. Սույն որոշման 16-16.1-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստերը գնահատելով սույն որոշման 11-15.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն զուգահեռ թիվ ԵԿԳ/0013/01/15 քրեական գործի վարույթը կարճելով, զրկել է քրեական հետապնդում իրականացնող մարմնին՝ այդ վարույթի շրջանակներում հանցանք կատարած անձին (անձանց) հայտնաբերելու և օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվության են-

թարկելու՝ նրա պարտականության կատարմանը, ինչը չի բխում թե՛ քրեական դատավարության օրենսդրության խնդիրներից, թե՛ հանցագործությունից տուժած անձի շահերի պաշտպանությունն ապահովելու պարտականությունից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ թիվ ԵԿԳ/0013/01/15 քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն պայմաններում, երբ տուժողի առողջությանը ծանր մարմնական վնասվածք պատճառած անձը կամ անձինք չեն բացահայտվել:

17.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցնելուն զուգահեռ թիվ ԵԿԳ/0013/01/15 քրեական գործի վարույթը կարճելով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է:

18. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 9-րդ կետում բարձրացրած փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը դրանք անհիմն է համարում: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հանգել են ճիշտ հետևության այն մասին, որ ամբաստանյալ Հ.Հովհաննիսյանը չի կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Հովհաննես Մարքսի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ եզրափակիչ մասի երկրորդ պարբերությունից հանել «և թիվ ԵԿԳ/0013/01/15 քրեական գործի վարույթը կարճել» բառերը: Մնացած մասով ՀՀ վերաքննիչ քրեական դա-

տարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

37.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԳ-3/0034/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝	Վ.ՌՈՒՍԱՍՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Վարդան Մանվելի Սկրոչյանի, Արբակ Առնակի Առաքելյանի և Գրիշա Իվանի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 20140614 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

2015 թվականի հունվարի 19-ին քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունվարի 26-ի որոշումներով անչափահաս Արբակ Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 2 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, անչափահաս Գրիշա Մուրադյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել 2 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, անչափահաս Վարդան Սկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 3 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունիսի 15-ի որոշումներով Ա.Առաքելյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել 5 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 3 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, Գ.Մուրադյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել 3 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 4 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, Վ.Սկրտչյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 5 դրվագով՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 3 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

2015 թվականի հունիսի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 11-ի դատավճռով Վարդան Սկրտչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 5 դրվագով՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 3 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Արբակ Առաքելյանը մեղավոր է ճանաչվել 5 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 3 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի 3 ամիս ժամկետով:

Գրիշա Մուրադյանը մեղավոր է ճանաչվել 3 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 4 դրվագով՝ 177-րդ

հողվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի 3 ամիս ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Տիգրան Օհանյանը:

3. Ամբաստանյալ Վ.Սկրտչյանի օրինական ներկայացուցիչ Մանվել Սկրտչյանի, ամբաստանյալ Ա.Առաքելյանի օրինական ներկայացուցիչ Առնակ Առաքելյանի, ամբաստանյալ Գ.Մուրադյանի օրինական ներկայացուցիչ Գյուլնարա Մուրադյանի և ամբաստանյալ Վ.Սկրտչյանի պաշտպան Վահագն Դանիելյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի մարտի 17-ին որոշում է կայացրել բողոքները բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 11-ի դատավճիռը՝ ամբաստանյալներ Վ.Սկրտչյանին, Ա.Առաքելյանին և Գ.Մուրադյանին մեղսագրված արարքների քրեաիրավական որակման և նշանակված պատիժների մասով բեկանելու և փոփոխելու մասին:

Վ.Սկրտչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (ներառված 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 5 դրվագով՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 3 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետով նախատեսված հանցագործությունները) և նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Վ.Սկրտչյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 տարի ժամկետով:

Ա.Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (ներառված 5 դրվագով՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 3 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետով նախատեսված հանցագործությունները) և նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Ա.Առաքելյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով:

Գ.Մուրադյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (ներառված 3 դրվագով՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 4 դրվագով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետով նախատեսված հանցագործությունները) և նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Գ.Մուրադյանի նկատմամբ նշա-

նակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վ.Սկրտչյանին, Ա.Առաքելյանին և Գ.Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, նախնական համաձայնության գալով, 2014 թվականի օգոստոս ամսին անցել են Գառնի գյուղում գտնվող Ա.Վարդանյանի՝ Ջ.Անդրանիկի փողոցի թիվ 26 տան բակ, ֆիզիկական ուժ գործադրելով՝ պոկել, բացել են պատուհանի ճաղավանդակը, այնուհետև ապօրինի մուտք են գործել բնակարան և այնտեղից գողացել զգալի չափի՝ 8.500 ՀՀ դրամ ընդհանուր արժողության թվով 12 տուփ ծխախոտ՝ յուրաքանչյուրը 500 դրամ արժողության, մեկ հատ 1.500 ՀՀ դրամ արժողության գինի և 2.000 ՀՀ դրամ արժողության մեկ կոնյակ:

Բացի այդ, Վ.Սկրտչյանը և Ա.Առաքելյանը, նախնական համաձայնության գալով, 2014 թվականի սեպտեմբեր ամսին գնացել են Գառնի գյուղում գտնվող Ջ.Անդրանիկի 2-րդ փակուղու Վ.Սարգսյանի՝ թիվ 2 առանձնատան տարածք, բացել մուտքի դռան վերևի հատվածում գտնվող պատուհանը, ապօրինի մուտք գործել բնակարան և այնտեղից գողացել զգալի չափի՝ 15.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության մեկ հատ «Շարպ» ապրանքատեսակի ձայնարկիչ, 2 շիշ օղի և 1 շիշ գինի:

Բացի այդ, Վ.Սկրտչյանը, Գ.Մուրադյանը և Ա.Առաքելյանը, նախնական համաձայնության գալով, 2014 թվականի սեպտեմբեր ամսին գնացել են Գառնի գյուղի «Փշանոց» կոչվող տարածքում գտնվող Մ.Սարգսյանին պատկանող ամառանոց, բացել մուտքի դռան փականը, ապօրինի մուտք գործել բնակարան և այնտեղից գողացել զգալի չափի՝ 2000 ՀՀ դրամ կանխիկ գումար, 31.100 ՀՀ դրամի տնտեսական ապրանքներ՝ 15 տարա 22.500 ՀՀ դրամ արժողության ներկեր, թրթի արագակարներ (ստեպլեր), 6.000 ՀՀ դրամ արժողության թվով երեք խոտհնձիչներ, 2.000 ՀՀ դրամ արժողության լապտերներ և 600 ՀՀ դրամ արժողության կրակայրիչ:

Բացի այդ, Վ.Սկրտչյանը 2014 թվականի դեկտեմբեր ամսին գնացել է Գառնի գյուղի Իսահակյան փողոցի Բ.Աբելյանի թիվ 43 տան բակ, որից հետո բացել է ավտոտնակի դուռը, ապօրինի մուտք գործել ներս և գողացել զգալի չափի՝ 20.000 ՀՀ դրամի ընդհանուր արժողության գողման սարքի էլեկտրական լարը և մոտ 15 մետր այլ պղնձյա և ալյումինե հաղորդալարեր:

Բացի այդ, Վ.Սկրտչյանը և Գ.Մուրադյանը, նախնական համաձայնության գալով, 2014 թվականի դեկտեմբեր ամսին գնացել են Գառնի գյուղի Գեղարդի խճուղու վրա գտնվող՝ Ս.Բաղդասարյանին պատկանող կրպակի տարածք, որտեղ Գ.Մուրադյանը բարձրացել է կրպակի տանիքը, իսկ Վ.Սկրտչյանը մտել է ներս և այնտեղից գողացել զգալի չափի՝ 2.600 ՀՀ դրամ կանխիկ գումար և 3.600 ՀՀ դրամ արժողության 3լ մեքենայի շարժիչի յուղ:

Բացի այդ, Վ.Սկրտչյանը, Ա.Առաքելյանը, Գ.Մուրադյանը և Տ.Օհանյանը, նախնական համաձայնության գալով, 2014 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 18:00-ից մինչև դեկտեմբերի 24-ը՝ ժամը 10:00-ն ընկած ժամանակահատվածում, դռան փականը կտրելու եղանակով բացել են Գառնի գյուղի Գեղարդի խճուղու 5/1 հասցեում գտնվող՝ Թ.Գաբրիելյանի կրպակի դուռը, ապօրինի մուտք գործել ներս և այնտեղից գողացել զգալի չափի՝ 30.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության թվով 15 տարաներում պահածոյացված մուրաբաներ, 3 տարա մեղր և թվով 4 հատ գաթա:

Բացի այդ, Վ.Սկրտչյանը 2014 թվականի դեկտեմբեր ամսին գնացել է Գառնի գյուղի Շահումյան փողոցի Բ.Ազիզյանի թիվ 29 հասցեում գտնվող կրպակի տարածք, կտրելու եղանակով ցանկացել է բացել դռան երկաթյա ճաղավանդակը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով, չի կարողացել ավարտին հասցնել գողությունը և ոչինչ չգողանալով՝ հեռացել է:

Բացի այդ, Վ.Սկրտչյանը 2014 թվականի դեկտեմբեր ամսին տան բաց պատուհանից ապօրինի մուտք է գործել Վ.Ստեփանյանի՝ Գառնի գյուղի վերջնամասում գտնվող ամառանոց և այնտեղից գողացել զգալի չափի՝ 80.000 ՀՀ դրամ արժողության «Մակիցա» ապրանքանիշի էլեկտրական պտուտակահան գործիք:

Բացի այդ, Վ.Սկրտչյանը 2014 թվականի դեկտեմբեր ամսին պատուհանը բացելու եղանակով ապօրինի մուտք է գործել Գառնի գյուղի վերջնամասում գտնվող՝ Կ.Ենոքյանի առանձնատուն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով, չկարողանալով ավարտին հասցնել գողությունը, ոչինչ չգողանալով՝ հեռացել է:

Բացի այդ, Վ.Սկրտչյանը, Ա.Առաքելյանը և Գ.Մուրադյանը, 2015 թվականի հունվարի 1-ին գտնվելով Կոտայքի մարզի Գառնի գյուղի Զ.Անդրանիկի 1-ին փակուղի 10 հասցեում գտնվող Տ.Կարապետյանին պատկանող հանգստյան գոտու տարածքում, նախնական համաձայնության գալով, ապօրինի մուտք են գործել հանգստյան գոտու տարածք և պահեստարան և այնտեղից գողացել են զգալի չափերի՝ ընդհանուր 60.000 ՀՀ դրամ արժողության 1 հատ 10.000 ՀՀ դրամ արժողության ձայնարկիչ, 10.000 ՀՀ դրամ արժողության թվով 5 հատ իշխան տեսակի և մեկ հատ 10.000 ՀՀ դրամ արժողության ստերլետ տեսակի ձկներ, 30.000 ՀՀ դրամ արժողության՝ 30 լիտր գինի և 0.5 կգ զանգվածով պղնձալարեր:

Բացի այդ, Վ.Սկրտչյանը, Ա.Առաքելյանը և Գ.Մուրադյանը, նախնական համաձայնության գալով, 2014 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր

ամիսների ընթացքում՝ քննությամբ չպարզված օրը, գնացել են «Փշանոց» կոչվող տարածքում գտնվող՝ Մ.Սարգսյանին պատկանող ամառանոց, արդեն իսկ բաց վիճակում գտնվող դռնից ապօրինի մտել բնակարան և այնտեղից գողացել են զգալի չափի՝ 23.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության 3 կգ զանգվածով 9.000 ՀՀ դրամ արժողության մեղր և 2 կգ զանգվածով 14.000 ՀՀ դրամ արժողության ընկույզ:

Բացի այդ, Ա.Առաքելյանը 2014 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում՝ քննությամբ չպարզված օրը, դռան փականը բացելու միջոցով ապօրինի մուտք է գործել Գառնի գյուղի «Փշանոց» կոչվող տարածքում գտնվող՝ Մ.Սարգսյանին պատկանող ամառանոց և բնակարանի պահարանի միջից գողացել զգալի չափի՝ 45.000 ՀՀ դրամ կանխիկ գումար:

Բացի այդ, Ա.Առաքելյանը, Գ.Մուրադյանը և Տ.Օհանյանը, նախնական համաձայնության գալով, 2014 թվականի դեկտեմբեր ամսին՝ ժամը 19:00-ի սահմաններում, գնացել են Գառնի գյուղի Շահումյան փողոցի Բ.Ազիզյանի թիվ 29 հասցեում գտնվող կրպակի տարածք, կտրելու եղանակով բացել են մուտքի դռան երկաթյա ճաղավանդակը, ապօրինի մուտք գործել շինություն և այնտեղից գողացել են զգալի չափերի՝ 15.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության 4 տուփ ծխախոտ, բջջային հեռախոսի պատյաններ, հաղորդալար, պղնձյա մալուխ, պտուտակահան գործիքի կոմպլեկտ, տարբեր տեսակի թվով 15 կաշուն ժապավեններ և անսարք համակարգչի էլեկտրական մարտկոց (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 205-226):

6. Ամբաստանյալ Վ.Սկրտչյանի ցուցմունքների համաձայն՝ *«(...) 2014 թվականի օգոստոս ամսին ինքը, Գ.Մուրադյանը և Ա.Առաքելյանը, լինելով միասին, ցանկացել են ծխախոտ ծխել, սակայն չեն ունեցել գումար այդ գնելու համար և որոշել են ինչ-որ արժեքավոր իր գողանալու նպատակով մուտք գործել Ալվարդ Վարդանյանին պատկանող առանձնատուն (...):*

2014 թվականի օգոստոս ամսին ինքը և Ա.Առաքելյանը գողություն կատարելու համար գնացել են Գառնի գյուղի վերջնամասում գտնվող ինչ-որ ճտանոցի հարևանությամբ գտնվող առանձնատուն, որտեղ մուտքի դռան վերևի հատվածում գտնվող փայտանման հատվածը հանել են և մուտք գործել բնակարան (...):

2014 թվականի սեպտեմբեր ամսին Ա.Առաքելյանն իրեն հայտնել է, որ ինքը մտել է գյուղի «Փշանոց» կոչվող տարածքում գտնվող մի տուն և այնտեղից գողացել է 45.000 ՀՀ դրամ գումար: Իմանալով այդ մասին՝ ինքը, Ա.Առաքելյանը և Գ.Մուրադյանը որոշել են մուտք գործել այդ բնակարան (...):

2014 թվականի դեկտեմբեր ամսին, նախապես իմանալով, որ տանը մարդ չկա, գողություն կատարելու համար միայնակ մուտք է գործել իր տան հարևանությամբ բնակվող Բորիսի տան բակ (...):

Այնուհետև, կրկին դեկտեմբեր ամսին ինքը և Գ.Մուրադյանը երեկոյան ժամերին, անցնելով Գառնի գյուղի Գեղարդի խճուղով, նկատել են համագյուղացի Սանասարի կրպակը, ով զբաղվում է գունավոր մետաղների ընդունմամբ, որոշել են մուտք գործել կրպակ և այնտեղից կատարել գողություն (...):

Կրկին դեկտեմբեր ամսին ժամը 20-21-ի սահմաններում, ինքը, Ա.Առաքելյանը, Գ.Մուրադյանը և Տ.Օհանյանը միասին գողություն կատարելու նպատակով գնացել են Գառնի գյուղի Գեղարդի խճուղու վրա գտնվող Թամարի կրպակ, ով զբաղվում է պահածոների առուվաճառքով (...):

2014 թվականի դեկտեմբեր ամսին ինքը, Ա.Առաքելյանը, Գ.Մուրադյանը և Տ.Օհանյանը գողություն կատարելու նպատակով գնացել են Գառնի գյուղի «Մանասեր» կոչվող կամրջի հարևանությամբ գտնվող չգործող կրպակի տարածք, ցանկացել են կտրել և բացել դռան ճաղավանդակը, սակայն չեն կարողացել և թողել են ու հեռացել այդտեղից (...):

Օրեր անց ինքը Գ.Մուրադյանից իմացել է, որ նա, Ա.Առաքելյանը և Տ.Օհանյանը կրկին գնացել են այդ կրպակ և կատարել են գողություն (...):

2014 թվականի դեկտեմբեր ամսին, կարծելով, որ գյուղի վերջնամասում գտնվող ջրավազանի հարևանությամբ առկա նորակառույց տանը հնարավոր է լինեն պղնձյա հաղորդալարեր, գնացել է այնտեղ, տան բաց պատուհանից մուտք գործել բնակարան (...):

2014 թվականի դեկտեմբերի 28-ից 30-ն ընկած ժամանակահատվածում գնացել է համագյուղացի Կարեն Ենոքյանի առանձնատուն, տան եվրոպական արտադրության պատուհանը բացելուց հետո մուտք է գործել ներս, սակայն ոչինչ չգողանալով՝ թողել է և հեռացել այնտեղից (...):

2015 թվականի հունվարի 1-ին ինքը, Ա.Առաքելյանը և Գ.Մուրադյանն, ամանորը նշելու համար գնացել են Տիգրանին պատկանող ամառանոցի տարածք, որտեղ ձայն են տվել նրան, համոզվել են, որ մարդ չկա, իմանալով, որ տարածքում կան ձկներ և դրանցից մի քանիսը հանելու պարագայում սեփականատերը չի նկատի դրանց բացակայությունը, բաց դռնից անցել են ներս (...):

2014 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների ընթացքում ինքը, Ա.Առաքելյանը և Գ.Մուրադյանը ևս մեկ անգամ մուտք են գործել «Փշանոց» կոչվող տարածքում գտնվող ամառանոց և այնտեղից գողացել են ընկույզ և մեղր (...):

Ամբաստանյալ Ա.Առաքելյանի ցուցմունքների համաձայն՝ «(...) 2014 թվականի դեկտեմբեր ամսին ինքը, Վ.Սկրտչյանը, Գ.Մուրադյանը և Տ.Օհանյանը, նախապես պայմանավորվելով, գողություն կատարելու համար գնացել են «Մանասերի» կամրջի մոտ գտնվող կրպակի տարածք՝ իրենց հետ տանելով սողոց՝ կտրելու դռան վրա առկա երկաթյա ճաղավանդակները, սակայն չեն կարողացել կտրել այն և թողել են դեպքի վայրը և հեռացել են (...):

Մեկ օր անց՝ ժամը 19-ի սահմաններում, ինքը, Ա.Առաքելյանը և Գ.Մուրադյանը գնացել են նույն կրպակի տարածք, կտրել են դռան վրա ամրացված երկաթյա ճաղավանդակներից մեկը վերևի հատվածից, ֆիզիկական ուժի ազդեցությամբ թեքել այն, որից հետո բացված հատվածով մուտք գործել տարածք (...):

2014 թվականի դեկտեմբեր ամսին ինքը, Վ.Սկրտչյանը, Գ.Մուրադյանը և Տ.Օհանյանը գնացել են Գառնի գյուղի Գեղարդի խճուղու վրա գտնվող Թամարին պատկանող կրպակի տարածք, կտրել են դռան վրա ամրացված կախովի փականը, բացել դուռը, մուտք գործել ներս (...):

2014 թվականի օգոստոս ամսին, ինքը, Վ.Սկրտչյանը և Գ.Մուրադյանը պատուհանի ճաղավանդակը պոկելու միջոցով մուտք են գործել Ալվարդ Վարդանյանի առանձնատուն և գողացել են մեկ շիշ գինի և ծխախոտ, որոնք բաժանել են միմյանց միջև (...):

2014 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում ինքը, Վ.Սկրտչյանը և Գ.Մուրադյանը մուտք են գործել Գառնի գյուղի «Փշանոց» կոչվող տարածքում գտնվող առանձնատուն և այնտեղից գողացել են ընկույզ և մեղր (...):

2014 թվականի օգոստոս ամսին ինքը և Վ.Սկրտչյանը գողություն կատարելու համար միասին գնացել են գյուղում գտնվող ճտանոցի մոտ առկա իրեն անձանոթ առանձնատան բակ, որտեղ դռան վերևի հատվածում գտնվող փայտանման հատվածքը հանելուց հետո երկուսով մուտք են գործել ներս (...):

2014 թվականի սեպտեմբեր ամսին ինքը, Վ.Սկրտչյանը և Գ.Մուրադյանը գնացել են Գառնի գյուղում գտնվող «Փշանոց» կոչվող տարածքում գտնվող առանձնատուն և այնտեղից գողացել են ներկեր, 2.000 ՀՀ դրամ գումար, պահածոյացված ձկներ, թղթի արագակարներ, որոնք բաժանել են միմյանց միջև (...):

Այդ տուն ինքը մուտք է գործել նաև 2013 թվականին, և այդ անգամ գողացել է 45.000 ՀՀ դրամ գումար, իսկ այդ մասին հետագայում հայտնել է ընկերներին (...):

2015 թվականի հունվարի 1-ին ինքը, Վ.Սկրտչյանը և Գ.Մուրադյանը մուտք են գործել Գառնիից Գողթ տանող ճանապարհին գտնվող Տիգրանին պատկանող հանգստյան գոտու տարածք և այնտեղից գողացել են 5 հատ իշխան տեսակի, մեկ հատ ստերլետ տեսակի ձկներ, 2 մեծ տարաններում լցված գինի, որոնք միասին օգտագործել են (...):

Ամբաստանյալ Գ.Մուրադյանի ցուցմունքների համաձայն՝ «(...) 2014 թվականի օգոստոս ամսին՝ առավոտյան ժամերին, ինքը, Ա.Առաքելյանը և Վ.Սկրտչյանը գնացել են Գառնի գյուղում գտնվող Ալվարդ Վարդանյանի առանձնատուն, բակի կողմից պատուհանի ճաղավանդակը բացելուց հետո պատուհանով մուտք են գործել ներս (...):

2014 թվականի սեպտեմբեր ամսին ինքը, Վ.Սկրտչյանը և Ա.Առաքելյանը որոշել են գողություն կատարելու համար գնալ Գառնի գյուղում գտնվող «Փշանոց» կոչվող տարածք: Այնտեղ Ա.Առաքելյանն ինչ-որ եղա-

նակով բացել է դռան վրա կախված փականը, և երեքով մուտք են գործել այդ ամառանոց (...):

2014 թվականի դեկտեմբերի կեսերին ինքը և Վ.Սկրտչյանը գտնվել են Գառնի գյուղում գտնվող՝ համագյուղացի Սանոյի կրպակի հարևանությամբ, որտեղ վերջինս զբաղվում է գունավոր մետաղների ընդունմամբ և մեքենայի շարժիչի յուղի վաճառքով: Գողություն կատարելու նպատակով ինքը բարձրացրել է կրպակի տանիքը, իսկ Վ.Սկրտչյանը մուտք է գործել ներս և այնտեղից գողացել է 2.000 ՀՀ դրամ գումար բաղկացած մետաղադրամներից, շարժիչի յուղ և օգտագործված վիճակում տուփով ծխախոտ (...):

Նշված գողությունից մոտ 5-6 օր անց ինքը, Ա.Առաքելյանը, Վ.Սկրտչյանը և Տ.Օհանյանը գնացել են Գառնի գյուղում գտնվող Թամարին պատկանող կրպակի տարածք, մետաղական ճողի օգնությամբ կոտրել են դռան կախովի փականը, որից հետո մյուսները մուտք են գործել կրպակ, իսկ ինքը մնացել է դրսում՝ մարդկանց զայրու պարագայում նրանց իմաց տալու համար (...):

2014 թվականի դեկտեմբերի սկզբներին ինքը, Ա.Առաքելյանը և Տ.Օհանյանը գրուցելիս են եղել, երբ առաջարկ է եղել գողություն կատարելու «Մանասեր»-ի կամրջի հարևանությամբ գտնվող կրպակից: Սկզբում ինքը համաձայն չի եղել այդ մտքի հետ, սակայն, երբ Ա.Առաքելյանը զանգահարել է իրեն, որպեսզի ինքը ևս գնա այդ կամրջի մոտ, դուրս է եկել տանից և միացել է նրանց (...):

2015 թվականի հունվարի մեկին ինքը, Վ.Սկրտչյանը և Ա.Առաքելյանը գնացել են համագյուղացի Տիգրան Կարապետյանին պատկանող հանգստյան գոտու տարածք: Այնտեղ համոզվելով, որ տարածքում որևէ մեկը չկա, մուտք են գործել օբյեկտի տարածք և այնտեղից գողացել են 5-6 հատ իշխան տեսակի և մեկ հատ ստերլետ տեսակի ձկներ, երկու՝ մոտ 20 լիտր տարողությամբ պլաստմասե տարաներում լցված գինի (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 63-96):

6.1. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) [Ա]մբաստանյալ Վարդան Մանվելի Սկրտչյանը կատարել է հանցավոր արարքներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1.1 կետին /5դրվագ/, 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերին /3դրվագ/, 177 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին, 34-177 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերին և 34-177 հոդվածի 3-րդ մասի 1.1 կետին, ամբաստանյալ Արթակ Առնակի Առաքելյանը կատարել է հանցավոր արարքներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1.1 կետին /5 դրվագ/, 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետին /3 դրվագ/, ամբաստանյալ Գրիշա Իվանի Մուրադյանը կատարել է հանցավոր արարքներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1.1 կետին /3 դրվագ/, 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետին /4 դրվագ/, ամբաստանյալ Տիգրան Միմնի Օհանյանը կատարել է հանցավոր արարքներ, որոնք համա-

պատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերին /2 դրվագ/, և նրանք պետք է քրեական պատասխանատվության ենթարկվեն վերը նշված հոդվածներով:

(...) [Հ]աշվի առնելով ամբաստանյալներ Վարդան Սկրտչյանի, Գրիշա Մուրադյանի, Արբակ Առաքելյանի կողմից կատարված արարքների բնույթը և հանրորեն վտանգավորության աստիճանը, հանցագործություններին նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը, նրանց անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներն, իրենց համակցությամբ` (...) [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ նրանց նկատմամբ կիրառելի չէ ՀՀ քրեական օրենսգրքի 64 և 70 հոդվածների կանոնները (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 63-96):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է. «(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ [Ա]ռաջին ատյանի դատարանի դատավճիռն ամբաստանյալներին մեղսագրված արարքների մասով հիմնավորված չէ և չի բխում քրեական գործի փաստական հանգամանքներից, քանի որ քրեական գործի նյութերի, մասնավորապես` ամբաստանյալների ցուցմունքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առկա չեն այնպիսի տվյալներ, որոնք կարող են վկայել, որ ամբաստանյալների կողմից կատարված հափշտակությունները միասնական դիտավորությամբ չեն իրականացվել, այլ դիտավորությունները ծագել են յուրաքանչյուր արարքի կատարումից հետո:

(...) Այսինքն` նշվածը վկայում է այն մասին, որ ամբաստանյալների մոտ մեկից ավելի, որոշակի քանակությամբ հափշտակություններ կատարելու ցանկությունն առաջացել է միաժամանակ և այդ իսկ նպատակով նախապես պլանավորել են գողություն կատարելու վայրերը, գողոնը փոխադրելու և այն միմյանց միջև բաժանելու եղանակը և այլն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի համար միասնական դիտավորությունը ընդգծելու տեսանկյունից հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ամբաստանյալների կողմից կատարված գողությունները հիմնականում իրականացվել են նույն ոճով, եղանակով և ուղղված են եղել միևնույն առարկաների դեմ, ինչպես նաև հափշտակությունները կատարվել են 2014 թվականի օգոստոս ամսից մինչև 2015 թվականի հունվար ամիսն ընկած ժամանակահատվածում, ավելին` եղել են դեպքեր, որ նույն օրերի ընթացքում կատարվել են մեկից ավելի գողություններ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ անչափահաս ամբաստանյալներ Վարդան Մանվելի Միրտչյանին, Արբակ Առնակի Առաքելյանին և Գրիշա Իվանի Մուրադյանին առաջադրված մեղադրանքները պետք է ինքնուրույն և համակցությամբ չորակել, այլ դրանք պետք է դիտարկել որպես միասնական դիտավորությամբ կատարված` շարունակվող հանցագործություն: Հակառակ մոտեցումը խիստ կասկածելի է, և նման հետևությունը հիմնված կլինի բացառապես ենթադրության վրա:

(...)

Վերը նշված եզրահանգումը կատարելիս Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում քրեական գործով ձեռք բերված ապացույցների ողջ համակցությունը:

Մասնավորապես, քրեական գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորված է, որ բոլոր երեք ամբաստանյալների խնամքով և դատարակությամբ զբաղվում են նրանց ծնողները, բոլորի կյանքի և դատարակության պայմանները բարվոք են, հոգեկան զարգացման աստիճանը և, ընդհանրապես, զարգացման վիճակը բավարար են, երեք ամբաստանյալներն էլ բնակության վայրից բնութագրվում են բացառապես դրական կողմերով, երեքն էլ նախկինում դատապարտված չեն եղել, տվել են ճշմարտացի, խոստովանական ցուցմունքներ, իրենց գործողություններով ակտիվորեն աջակցել են խմբի կատարած հանցանքը բացահայտելուն:

Վերը նշվածի հետ միաժամանակ Վերաքննիչ դատարանը փաստում է նաև այն հանգամանքը, որ բոլոր երեք ամբաստանյալների ընտանիքներն էլ նյութապես բավարար ապահովված չեն:

(...)

Այսինքն՝ ոչ բավարար նյութական պայմանները, դրանով պայմանավորված բազմաբնույթ դժվարությունները, մասնավորապես, ծխելու ցանկությունը, այն գներու համար գումար չունենալը նպաստել են անչափահաս ամբաստանյալների հանցավոր մտադրությունների ձևավորմանը, խթանել /ստիժուլացրել/ դրանք, նախապես ձևավորել հանցավոր դիտավորությունը, այդ դիտավորությունը դարձրել միասնական՝ գողությունների ընթացքում հնարավոր բարդությունները հաղթահարելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի տարբեր մասերով ամբաստանյալներին մեղսագրված հանցանքների սուբյեկտիվ կողմը՝ մեղքը, դիտավորության ձևով, ամբաստանյալների մոտ անորոշ չի եղել, այն հանկարծահաս չի առաջացել, առաջացել է նախօրոք, կոնկրետացվել, միասնականացվել՝ կատարել գողություններ և դրանով հոգալ իրենց կենսական պահանջները:

(...)

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործով անչափահաս ամբաստանյալներ [Վ.Սկրտչյանին], [Ա.]Առաքելյանին և [Գ.]Մուրադյանին առաջադրված մեղադրանքները պետք է դիտարկել որպես միասնական դիտավորությամբ կատարված շարունակվող հանցագործություն, քանի որ սույն քրեական գործով ձեռք բերված ապացույցներով, այդ թվում՝ ամբաստանյալների խոստովանական ցուցմունքներով հաստատվում է, որ վերջիններիս կողմից կատարված գողությունները հիմնականում իրականացվել են նույն ոճով, եղանակով, նույնատիպ կամ նույնանման աղբյուրներից և ուղղված են եղել միևնույն առարկաների դեմ:

(...)

Վերաքննիչ դատարանը սույն քրեական գործով ամբաստանյալներ Վ.Սկրտչյանին, Ա.Առաքելյանին և Գ.Մուրադյանին առաջադրված մեղադրանքները վերը նշված կարգով փոփոխելը հնարավոր է համարում, քանի որ մեղադրանքների նման փոփոխությունով ամբաստանյալներին վիճակը չի վատթարանում:

Ավելին՝ դրանով ամբաստանյալների վիճակը բարելավվում է, քանի որ սվյալ դեպքում այլևս չի գործի պատիժների համակցության կանոնը, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (միասնական դիտավորության մեջ ընդգրկված հանցագործություններով) կնշանակվի մեկ պատիժ (...» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 5-59):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձի համոզմամբ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ, 127-րդ, ինչպես նաև՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 64-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես, բողոքաբերը, վերլուծելով Վճռաբեկ դատարանի՝ ապացույցների գնահատման վերաբերյալ թիվ ԵԶԲԳ/0632/01/08 և շարունակվող հանցագործությունների վերաբերյալ թիվ ԵՇԳ/0055/01/11 որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները, գտել է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով ապացույցները յուրովի է գնահատել և արդյունքում ամբաստանյալների կողմից կատարված արարքներին տրված քրեաիրավական որակման վերաբերյալ եկել է սխալ եզրահանգման: Այսպես՝ ամբաստանյալներին մեղաազրվող գողությունները կատարվել են յուրաքանչյուր դեպքում առանձին ծագած դիտավորությամբ, տարբեր աղբյուրներից, տարբեր եղանակներով և տարբեր ժամանակահատվածներում, որպիսի պայմաններում դրանց՝ մեկ միասնական դիտավորությամբ իրականացված լինելու մասին Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են և չեն բխում գործի նյութերից:

9. Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալներ Վ.Սկրտչյանի, Ա.Առաքելյանի, Գ.Մուրադյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, ինչպես նաև օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար որպես բացառիկ հաստատված է համարել այնպիսի հանգամանքներ, որոնց իրավական վերլուծությունները հակասում են Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-145/07, թիվ ՎԲ-13/08, թիվ ԳԳ/0014/01/14 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին, հետևաբար չեն կարող ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման հիմք լինել:

Բողոք բերած անձը, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵՇԳ/0029/01/08 և թիվ ՏԳ/0018/01/13 որոշումներով արտահայտած իրա-

վական դիրքորոշումները, փաստել է նաև, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ վերլուծության չի ենթարկել ամբաստանյալներին մեղսագրվող արարքների հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի վրա ազդող մի շարք հանգամանքներ, ինչի արդյունքում նրանց նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ հանգել է սխալ հետևության:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ շարունակվող հանցագործության և հանցագործությունների իրական համակցության կանոնների կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք ամբաստանյալներ Վ.Սկրտչյանի, Ա.Առաքելյանի և Գ.Մուրադյանի արարքները որպես շարունակվող հանցագործություններ դիտելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցագործությունների համակցություն է համարվում սույն օրենսգրքով (տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել (...):»*

Մեջբերված քրեաիրավական նորմը Վճռաբեկ դատարանը վերլուծել է *Գարսևան Ոսկանյանի* գործով որոշմամբ և իրավական դիրքորոշում արտահայտնել առ այն, որ հանցագործությունների իրական համակցության դեպքում մեկից ավելի արարքներով կատարվում են երկու կամ ավելի հանցագործություններ, որոնցից յուրաքանչյուրին տրվում է ինքնուրույն քրեաիրավական գնահատական: Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրական համակցությունն առկա է, երբ

ա) կատարվել են միմյանց հետ միասնական դիտավորությամբ չկապված մեկից ավելի հանցավոր արարքներ,

բ) հանցավոր արարքները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր կամ միևնույն հոդվածներով,

գ) կատարված հանցագործությունների նկատմամբ պահպանված են քրեաիրավական նշանակություն ունեցող հետևանքները (տե՛ս mutatis

mutandis *Գարսևան Ոսկանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԳ/0119/01/13 որոշման 15-րդ և 16-րդ կետերը):

Շարունակվող հանցագործությունների վերաբերյալ Վճռաբեկ դատարանը *Ս.Ղամբարյանի և այլոց* գործով որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Շարունակվող հանցագործությունները բաղկացած են մեկից ավելի նույնական արարքներից, որոնցից յուրաքանչյուրը թեկուզև ինքնուրույն հանցակազմ է պարունակում, բայց ընդգրկված են միասնական դիտավորության մեջ, հետապնդում են մեկ ընդհանուր նպատակ, հետևաբար դիտվում են իբրև մեկ հանցագործություն, որն ավարտված է համարվում հանցավորի դիտավորությամբ ընդգրկված վերջին արարքի կատարման պահից: (...)» (տե՛ս *Ս.Ղամբարյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԳ/0055/01/11 որոշման 21-րդ կետը):

13. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում մեջբերված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թե՛ իրական համակցությունը, թե՛ շարունակվող հանցագործությունը դրսևորվում են մեկից ավելի արարքների կատարմամբ, հետևաբար կատարվող արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հարցում կարևոր է դրանց տարանջատման հստակ չափանիշների սահմանումը: Այսպես՝ հանցագործությունների իրական համակցությունը հանցագործությունների բազմակիության տեսակներից մեկն է (հանցագործությունների ռեցիդիվի հետ միասին) և բնութագրվում է վերջինիս բնորոշ այնպիսի ընդհանուր հատկանիշով, ինչպիսին է միևնույն անձի կողմից մեկից ավելի արարքներով երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող հանցանքներ կատարելով: Ընդ որում, իրական համակցություն են կազմում տարբեր, միասնական դիտավորությամբ չկապված այնպիսի արարքներ, որոնք պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր կամ միևնույն հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ:

Ինչ վերաբերում է շարունակվող հանցագործությանը, ապա այն բարդ (եզակի) հանցագործության տեսակ է, որը թեպետ դրսևորվում է որոշակի ժամանակային ընդմիջումներով կատարվող մեկից ավելի հակաիրավական արարքներով, այնուամենայնիվ դիտվում է որպես մեկ հանցագործություն և որակվում է քրեական օրենսգրքի հատուկ մասի մեկ հոդվածով կամ հոդվածի մասով: Վերոնշյալը պայմանավորված է կատարվող արարքների միջև գոյություն ունեցող սերտ կապով, ինչը թույլ է տալիս դրանք գնահատել որպես մեկ ամբողջություն: Մասնավորապես, շարունակվող հանցագործությունը բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ այնպիսի հատկանիշներով, որոնցով տարանջատվում է հանցագործությունների իրական համակցությունից:

Այսպես՝ շարունակվող հանցագործության *օբյեկտիվ հատկանիշը* ենթադրում է, որ՝

- կատարվող արարքներից յուրաքանչյուրը ոտնձգում է միևնույն օբյեկտի, ընդ որում, որպես կանոն, միևնույն անմիջական օբյեկտի դեմ, այսինքն՝ այն հասարակական հարաբերության, որը վնասվում է կոնկրետ հանցագործության կատարման արդյունքում (օրինակ՝ հափշտակությունների դեպքում անմիջական օբյեկտը կոնկրետ անձի սեփականության պաշտպանությանն ուղղված հարաբերություններն են): Միևնույն ժամանակ, կատարված մեկից ավելի արարքները շարունակվող հանցագործություն դիտելու հարցում, կոնկրետ հանցակազմի առանձնահատկություններով պայմանավորված, հաշվի են առնվում նաև օբյեկտիվ բնույթի այլ հատկանիշներ, ինչպիսիք են, օրինակ, հանցագործության եղանակը (միևնույն կամ նմանատիպ եղանակով), միևնույն աղբյուրից կատարված լինելու հանգամանքը (օրինակ՝ հափշտակությունների դեպքում), հանցավոր հետևանքի (արդյունքի) միասնականությունը և այլն,

- կատարվող արարքները նույնական են, այսինքն՝ նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով: Ընդ որում, խոսքն իրավաբանական առումով նույնականության մասին է, իսկ փաստական կողմով արարքները կարող են միմյանցից տարբերվել (օրինակ՝ իրազեմի ապօրինի ձեռքբերումն ու իրացումը փաստական հատկանիշներով թեպետ տարբերվում են, սակայն իրավաբանորեն դրանք նույնական արարքներ են, քանի որ միևնույն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի եղանակ են):

13.1. Ինչ վերաբերում է շարունակվող հանցագործության *սուբյեկտիվ հատկանիշին*, ապա այն ենթադրում է հանցավորի մոտ միասնական դիտավորության և նպատակի առկայություն: Այլ կերպ ասած՝ անձը պետք է նախնական մտադրություն ունենա կատարելու կոնկրետ հանցանքը մեկից ավելի, որոշակի ժամանակային ընդմիջումներով առանձնացված նույնական արարքներով: Ընդ որում, շարունակվող հանցագործությունների դեպքում միասնական դիտավորությունը կարող է արտահայտվել հետևյալ կերպ՝

- շարունակվող հանցագործության մաս կազմող բոլոր արարքների և ընդհանուր հանցավոր արդյունքի նկատմամբ անձի դիտավորությունը կոնկրետացված է և առաջանում է նախքան առաջին արարքը կատարելը (դասական միասնական դիտավորություն),

- կատարվելիք հետագա արարքների նկատմամբ միասնական դիտավորությունն առաջանում է նախորդող արարքը կատարելու ընթացքում (վերաճող միասնական դիտավորություն),

- ընդհանուր հանցավոր արդյունքի նկատմամբ հանցավորի դիտավորությունը թեպետ կոնկրետացված չէ, սակայն վերջինս ունի միասնական դիտավորություն՝ հանցագործության միևնույն անմիջական օբյեկտի դեմ ոտնձգությունն իրականացնելու մեկից ավելի նույնական արարքներով:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սուբյեկտիվ հատկանիշի բացահայտումը կարևոր նշանակություն ունի հանցագործության ճիշտ քրեաիրավական որակման հարցում, քանի որ արարքների նույնականությունը, ոտնձգության օբյեկտի, աղբյուրի և եղանակի միասնականությունը դեռևս հիմք չեն կատարվածը շարունակվող հանցագործություն դիտելու համար: Այսպես՝ իրական համակցության պարագայում նույնպես կատարվող արարքները կարող են օժտված լինել շարունակվող հանցագործությանը բնորոշ, սույն որոշման 13-րդ կետում թվարկված օբյեկտիվ հատկանիշներով: Հետևաբար նման դեպքերում շարունակվող հանցագործությունն իրական համակցությունից տարանջատելու հիմնական չափանիշը հանցավորի մոտ համապատասխան արարքները կատարելու միասնական դիտավորության առկայության հավաստումն է և միաժամանակ դիտավորության՝ ամեն արարքից հետո կրկին ծագած լինելու հավանականության բացառումը, ինչը յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի հանգամանքների բազմակողմանի հետազոտման արդյունքում:

14. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարված մեկից ավելի արարքները կարող են դիտվել որպես շարունակվող հանցագործություն և որակվել ՀՀ քրեական օրենսգրքի մեկ հոդվածով (հոդվածի մասով կամ կետով) միայն սույն որոշման 13-13.1-րդ կետերում շարադրված օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների միաժամանակյա առկայության պայմաններում:

Այսպիսով, շարունակվող հանցագործությունը մեկ միասնական բարդ հանցագործության տեսակ է, որը ձևավորվում է նույնական այնպիսի արարքներից, որոնց միջև, որպես կանոն, առկա է հարաբերականորեն ոչ մեծ ժամանակային խզում, և որոնք ոտնձգում են միևնույն անմիջական օբյեկտի դեմ, ընդգրկված են մեկ միասնական դիտավորությամբ և հանդես են գալիս որպես մեկ ամբողջական հանցագործության առանձին օղակ:

Միևնույն ժամանակ, եթե կատարված արարքերը եղել են ոչ նույնական, այլ տարաբնույթ կամ միաբնույթ, ուղղված են եղել տարբեր անմիջական օբյեկտների դեմ, կատարվել են տարբեր աղբյուրներից, կապված չեն եղել միասնական դիտավորությամբ, ինչպես նաև այն դեպքերում, երբ կատարված արարքները թեպետ եղել են նույնական և ուղղված են եղել միևնույն անմիջական օբյեկտի դեմ, սակայն ընդգրկված չեն եղել միասնական դիտավորությամբ, այլ յուրաքանչյուր դեպքում դիտավորությունն առանձին է ծագել, կատարվածը չի կարող դիտվել որպես շարունակվող հանցագործություն և ենթակա է որակման հանցագործությունների համակցության կանոններով:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հանցագործությունների իրական համակցության կամ շարունակվող հանցագործության կանոնները կիրառելու և հանցավորի արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար քրեական վարույթն իրականացնող մարմին-

նր հատուկ ուշադրություն պետք է դարձնի կոնկրետ հանցագործության օբյեկտին, կատարվող արարքների բնույթին, կատարման եղանակին, աղբյուրին, դիտավորության ու նպատակի առանձնահատկություններին:

15. Սույն գործի նյութերից երևում է, որ Վ.Սկրտչյանին մեղադրանք է առաջադրվել 2014 թվականի օգոստոսից մինչև 2015 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում շինություն ապօրինի մուտք գործելով գողություն, երեք դրվագով՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ շինություն ապօրինի մուտք գործելով գողություն և դրա փորձ, հինգ դրվագով՝ բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն և դրա փորձ կատարելու համար: Ա.Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել 2014 թվականի օգոստոսից մինչև 2015 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում հինգ դրվագով՝ բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն, երեք դրվագով՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ շինություն ապօրինի մուտք գործելով գողություն կատարելու համար: Գ.Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել 2014 թվականի օգոստոսից մինչև 2015 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում երեք դրվագով՝ բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն, չորս դրվագով՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ շինություն ապօրինի մուտք գործելով գողություն կատարելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը Վ.Սկրտչյանին, Ա.Առաքելյանին և Գ.Մուրադյանին մեղավոր է ճանաչել վերը նկարագրված արարքների կատարման մեջ և պատիժ է նշանակել հանցագործությունների համակցության կանոնների կիրառմամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6.1-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն ամբաստանյալներին մեղսագրված արարքների որակման մասով անհիմն է և չի բխում քրեական գործի փաստերից: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով ամբաստանյալների ցուցմունքները, փաստել է, որ առկա չեն տվյալներ առ այն, որ ամբաստանյալների կողմից կատարված հափշտակությունները միասնական դիտավորությամբ չեն իրականացվել, այլ դիտավորությունները ծագել են յուրաքանչյուր արարքի կատարումից հետո: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ մեկից ավելի՝ որոշակի քանակությամբ հափշտակություններ կատարելու ցանկությունն ամբաստանյալների մոտ առաջացել է միաժամանակ, և այդ իսկ նպատակով վերջիններս նախապես պլանավորել են գողություն կատարելու վայրերը, գողոնը փոխադրելու և այն միմյանց միջև բաժանելու եղանակը և այլն: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը միասնական դիտավորությունն ընդգծելու տեսանկյունից հատկանշական է համարել այն, որ ամբաստանյալների կողմից կատարված գողությունները հիմնականում իրականացվել են նույն ոճով, եղանակով, նույնանման աղբյուրներից և ուղղված են եղել միևնույն առարկաների դեմ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները համադրելով սույն որոշման 12-14-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալներ Վ.Սկրտչյանի, Ա.Առաքելյանի և Գ.Մուրադյանի գործողություններում բացակայում են շարունակվող հանցագործության հատկանիշները: Մասնավորապես՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալներին մեղսագրված արարքների միջև առկա չէ օբյեկտիվ և սուբյեկտիվ այնպիսի կապ, որը թույլ կտա դրանք գնահատել որպես մեկ ամբողջություն:

Այսպես՝ գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեպետ վերջիններս կատարել են մեկից ավելի նույնական արարքներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի միևնույն՝ 177-րդ հոդվածի տարբեր մասերով, այնուամենայնիվ այդ ոսնձգություններն ուղղված էին տարբեր անմիջական օբյեկտների դեմ և կատարվել էին տարբեր աղբյուրներից:

Ինչ վերաբերում է ամբաստանյալների մոտ համապատասխան գողությունները միասնական դիտավորությամբ կատարելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիրքորոշմանը, ապա գործի փաստական հանգամանքների և ամբաստանյալների ցուցմունքների ամբողջական վերլուծությունից հետևում է, որ վերջիններս գործել են ոչ թե միասնական և նախնական դիտավորությամբ, այլ յուրաքանչյուր դեպքում դիտավորությունը կրկին է ծագել: Մասնավորապես, այդ մասին են վկայում ամբաստանյալների տված ցուցմունքներն այն մասին, որ «(...) չեն ունեցել գումար [ծխախոտ] գնելու համար և *որոշել են* ինչ-որ արժեքավոր իր գողանալ (...)», «(...) Ա.Առաքելյանն իրեն [Վ.Սկրտչյանին] հայտնել է, որ *ինքը մտել է* գյուղի «Փշանոց» կոչվող տարածքում գտնվող մի տուն և այնտեղից գողացել է 45.000 ՀՀ դրամ գումար: Իմանալով այդ մասին՝ ինքը, Ա.Առաքելյանը և Գ.Մուրադյանը *որոշել են* մուտք գործել այդ բնակարան (...)», «(...) ինքը [Վ.Սկրտչյանը] և Գ.Մուրադյանը երեկոյան ժամերին, *անցնելով* Գառնի գյուղի Գեղարդի խճուղով նկատել են համազյուղացի՝ Սանասարի կրպակը, ով զբաղվում է գունավոր մետաղների ընդունմամբ, *որոշել են* մուտք գործել կրպակ և այնտեղից կատարել գողություն (...)», «(...) 2014 թ.-ի դեկտեմբերի սկզբներին, ինքը [Գ.Մուրադյանը], Ա.Առաքելյանը և Տ.Օհանյանը գրուցելիս են եղել, երբ *առաջարկ է եղել գողություն կատարել* «Մանասեր»-ի կամրջի հարևանությամբ գտնվող կրպակից (...)» և այլն (մանրամասն տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վճարելի դատարանն ընդգծում է նաև, որ ոչ բոլոր դեպքերում են երեք ամբաստանյալները հանցանքը համատեղ կատարել, իսկ գործում բացակայում է որևէ տվյալ, որ նրանք նախապես պլանավորել են կատարել որոշակի քանակությամբ հափշտակություններ և ունեցել են միասնական հանցավոր մտադրության իրականացման ընդհանուր նպատակ: Հատկանշական է, որ սույն գործի շրջանակներում քննվող 13 դրվագ գողություններից և դրանց փորձերից 6-ը կատարվել են Վ.Սկրտչյանի, Ա.Առաքելյանի և Գ.Մուրադյանի կողմից, 1-ը՝ Վ.Սկրտչյանի և Ա.Առաքելյանի

կողմից, 1-ը՝ Վ.Սկրտչյանի և Գ.Մուրադյանի կողմից, 1-ը՝ Ա.Առաքելյանի և Գ.Մուրադյանի կողմից, 3-ը՝ միայն Վ.Սկրտչյանի կողմից և 1-ը՝ միայն Ա.Առաքելյանի կողմից (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Այլ կերպ ասած, կատարված արարքները շարունակվող հանցագործություն գնահատելու համար անհրաժեշտ, սույն որոշման 13-13.1-րդ կետերում մեջբերված օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները բացակայում են, ուստի քննարկվող արարքների նկատմամբ կիրառման են ենթակա հանցագործությունների իրական համակցության կանոնները:

16.1. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պնդումներին, որ որոշակի քանակությամբ հափշտակություններ կատարելու ցանկությունն ամբաստանյալների մոտ առաջացել է միաժամանակ, և վերջիններս նախապես պլանավորել են գողություն կատարելու վայրերը, գողոնը փոխադրելու և այն միմյանց միջև բաժանելու եղանակը, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ո՛չ Վ.Սկրտչյանի, ո՛չ Ա.Առաքելյանի և ո՛չ էլ Գ.Մուրադյանի ցուցմունքներում առկա չէ գողությունների կատարման վայրը, գողոնը փոխադրելու և այն միմյանց միջև բաժանելու եղանակը նախապես պլանավորելու վերաբերյալ որևէ հիշատակում: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալների մոտ միասնական դիտավորության առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն անհիմն են և չեն բխում գործի նյութերից:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողություններին, որ *«ոչ բավարար նյութական պայմանները, դրանով պայմանավորված բազմաբնույթ դժվարությունները, մասնավորապես՝ ծխելու ցանկությունը, այն գնելու համար գումար չունենալը նպաստել են անչափահաս ամբաստանյալների հանցավոր մտադրությունների ձևավորմանը, խթանել (ստիմուլացրել) դրանք, նախապես ձևավորել հանցավոր դիտավորությունը, այդ դիտավորությունը դարձրել միասնական՝ գողությունների ընթացքում հնարավոր բարդությունները հաղթահարելու համար»*, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ թվարկված հանգամանքների և 13 դրվագ հափշտակություններով ու դրանց փորձերով ամբաստանյալների դիտավորության ձևավորման, առավել ևս՝ այն միասնական դարձնելու միջև որևէ ողջամիտ կապ չի կարող լինել: Ինչ վերաբերում է *«ոչ բավարար նյութական պայմաններին»*, ապա Վ.Սկրտչյանի, Ա.Առաքելյանի ու Գ.Մուրադյանի ընտանիքների սոցիալապես անապահով վիճակում գտնվելն Առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի է առնվել որպես այդ անձանց բնութագրող հանգամանք:

17. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, որպես միասնական դիտավորությամբ կատարված շարունակվող հանցագործություն դիտարկելով ամբաստանյալներին մեղսագրված արարքները, սխալ եզրահանգման է եկել շարունակվող հանցագործության և հանցագործությունների իրական համակցության կանոնների կիրառման կապակցությամբ:

Հետևաբար ամբաստանյալներ Վ.Սկրտչյանի, Ա.Առաքելյանի և Գ.Մուրադյանի արարքները որպես շարունակվող հանցագործություններ դիտելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն իրավաչափ չէ:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, ինչը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանելու Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկելու նույն դատարան՝ նոր քննության:

19. Ինչ վերաբերում է ամբաստանյալներ Վ.Սկրտչյանի, Ա.Առաքելյանի և Գ.Մուրադյանի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժներ նշանակելու և դրանք պայմանականորեն չկիրառելու (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ և 70-րդ հոդվածներ) աննպատակահարմարության մասին բողոքաբերի բարձրացրած փաստարկներին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա Վճարելի դատարանն արձանագրում է, որ դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումը վերացնելուց հետո:

Անդրադառնալով ամբաստանյալների նկատմամբ կիրառված խափանման միջոցներին՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Վ.Սկրտչյանի և Ա.Առաքելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ծնողի հսկողությանը հանձնելը, պետք է թողնել անփոփոխ, իսկ Գ.Մուրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ծնողի հսկողությանը հանձնելը, պետք է փոփոխել և վերջինիս նկատմամբ խափանման միջոց ընտրել՝ ստորագրություն չիեռանալու մասին՝ այդ անձի չափահաս դառնալու կապակցությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Վարդան Մանվելի Սկրտչյանի, Արբակ Առնակի Առաքելյանի և Գրիշա Իվանի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2016 թվականի մարտի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալներ Վարդան Մանվելի Սկրտչյանի և Արբակ Առնակի Առաքելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ծնողի հսկողությանը հանձնելը, թողնել անփոփոխ, իսկ ամբաստանյալ Գրիշա Իվանի Մուրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ծնողի հսկողությանը հանձնելը, փոփոխել և նրա նկատմամբ խափանման միջոց ընտրել՝ ստորագրություն չհեռանալու մասին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

38.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳ/0002/12/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
պաշտպան՝
դատապարտյալ՝

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Մ.ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆԻ
Հ.ԳԱԼՍՏՅԱՆԻ
Ա.ՂԱԶԱՐՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի որոշման դեմ դատապարտյալ Արմեն Գազիկի Ղազարյանի պաշտպան Հ.Գալստյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2014 թվականի հունվարի 21-ի դատավճռով Արմեն Գազիկի Ղազարյանին մեղավոր է ճանաչել 2 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (առաջին դրվագ) Ա.Ղազարյանը դատապարտվել է ազատազրկման՝ 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկրորդ դրվագ)՝ ազա-

տագրկման՝ 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Ղազարյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատագրելով՝ 4 տարի 3 ամիս ժամկետով առանց գույքի բռնագրավման: Պատժի սկիզբը հաշվվել է 2013 թվականի հոկտեմբերի 25-ից:

Առաջին ատյանի դատարանի հիշյալ դատավճիռը դատավարության մասնակիցների կողմից չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

2. Նշանակված պատժի կեսից ավելին դատապարտյալի կողմից կրելուց հետո ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, նախապես ստանալով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունը, 2016 թվականի փետրվարի 5-ին միջնորդագիր է ներկայացրել Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ պատիժը կրելուց Ա.Ղազարյանին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ ներկայացված միջնորդագիրը բավարարվել է, և Ա.Ղազարյանը պայմանական վաղաժամկետ ազատվել է դատավճռով նշանակված պատժից մնացած մասը՝ 1 տարի 11 ամիս 6 օր ժամկետով ազատագրելու մասին: Ա.Ղազարյանին պարտավորեցվել է չփոխել մշտական բնակության վայրը. նրա վարքի նկատմամբ վերահսկողությունը դրվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի վրա:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի ապրիլի 5-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 19-ի որոշումը՝ բեկանելու, Ա.Ղազարյանին՝ 1 տարի 11 ամիս 6 օր ժամկետով ազատագրելու մասին կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը՝ մերժելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Ա.Ղազարյանի պաշտպան Հ.Գալստյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Դատապարտյալ Ա.Ղազարյանը 2 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ նա ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու նպատակով 2013 թվականի հոկտեմբերի 12-ին և 18-ին ապօրինի մուտք է գործել Արագածոտնի մարզի Ազարակ գյուղում գտնվող Թամարա Մաթևոսյանին պատկանող բնակարան և այնտեղից գողացել զգալի չափի՝ համապատասխանաբար 30.000 և 300.000 ՀՀ դրամ գումար (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 27):

6. 2016 թվականի փետրվարի 5-ին ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով դատապարտյալ Ա.Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատել (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 1-2):

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 19-ի որոշման համաձայն՝ *«[Դատապարտյալ] Ա.Ղազարյանը պատիժը կրելու ընթացքում կարգապահական տույժի չի ենթարկվել, տրված առաջադրանքները կատարում է ժամանակին և բարեխղճորեն, ընթացիկ գնահատման արդյունքները միջին են, ռիսկայնությունը ցածր աստիճանի է, բնակարանով ապահովված է, նյութակենցաղային պայմանները բավարար են, ընդունում և զոջում է կատարած հանցանքի համար, քաղաքացիական հայց չունի, անձնական գործում առկա գնահատման թերթիկի և բնութագրի համաձայն՝ մշտապես բնութագրվել է դրական, ազատվելուց հետո ցանկանում է աշխատել, նաև այն, որ նշանակված պատժից կրել է 2 /երկու/ տարի 3 /երեք/ ամիս 24 /քսանչորս/ օր, գտնում է, որ Ա.Ղազարյանը ապացուցել է իր ուղղված լինելը, նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի և միջնորդությունը ենթակա է բավարարման: Ինչ վերաբերում է դատախազի առարկությանը, ապա դատարանը արձանագրում է, որ Ա.Ղազարյանի կատարած արարքի բնույթն և հանրային վտանգավորության աստիճանը դատարանի կողմից հաշվի է առնվել նրա նկատմամբ դատավճիռ կայացնելիս, և պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացը կանոնակարգող որևէ իրավադրույթով նախատեսված չէ որպես դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը չկիրառելու հիմք: (...)* (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 9-10):

8. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի որոշման համաձայն՝ *«[Յուրաքանչյուր] դեպքում դատարանը պետք է մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկի պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ օրենքի պահանջների ճշգրիտ և անշեղ կատարմամբ ապահովի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի*

նպատակների իրականացումը: Վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ կոնկրետ դեպքում, Առաջին ատյանի դատարանի հետևությունն այն մասին, որ դատապարտյալ Ա.Ղազարյանն ապացուցել է իր ուղղված լինելը և նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի, հիմնված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրագործման հնարավորությունն ապահովելու համատեքստում պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրության ու վերլուծության վրա: Իր եզրակացությունը հիմնավորելիս Առաջին ատյանի դատարանը բավարարվել է բացառապես քրեակատարողական հիմնարկի վարչական հանձնաժողովի միջնորդագրում տեղ գտած՝ պատժի կրման ընթացքում դատապարտյալ Ա.Ղազարյանի վարքագիծը բնութագրող ձևակերպումների պարզ շարադրանքով, իսկ վիճարկվող դատական ակտում տեղ գտած պատճառաբանությունները բավարար չեն հիմնավոր հետևության հանգեղու այն մասին, որ դատապարտյալ Արմեն Ղազարյանն ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը դատապարտյալ Ա.Ղազարյանի ուղղման մասին իր հետևությունը, ի թիվս այլոց, պետք է հիմներ նաև դատապարտյալի անձի և հանցագործության բազմակողմանի վերլուծության ու գնահատման վրա, ինչը կոնկրետ դեպքում չի արվել՝ հանգեցնելով դատական սխալի՝ նյութական իրավունքի այնպիսի խախտման, որը բավարար հիմք է Առաջին ատյանի դատարանի վիճարկվող դատական ակտը բեկանելու և ներկայացված միջնորդությունը մերժելու համար» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 30-40):

9. Վճարելի դատարան ներկայացված նյութերի համաձայն՝

- Ա.Ղազարյանը տուժող Թ.Մաթևոսյանից հափշտակություններ կատարելու դրվագներով նախաքննության ընթացքում ցուցմունքներ է տվել այն մասին, որ 2013 թվականի հոկտեմբերի 12-ին և նույն թվականի հոկտեմբերի 18-ին նշված գողությունները կատարել է վատառողջ հոր համար սնունդ և դեղորայք գնելու նպատակով, և տուժողի բնակարանից գողացել է այնքան գումար, որն անհրաժեշտ է եղել դրանք ձեռք բերելու համար,

- տուժող Թ.Մաթևոսյանը նախաքննության ընթացքում ցուցմունքներ է տվել այն մասին, որ իր տան հյուրասենյակում պահվող դրամապանակում եղել է 1.360.000 ՀՀ դրամ և 484 ԱՄՆ դոլար, իսկ գողություններից հետո իր դրամապանակից բացակայել է ընդամենը 330.000 ՀՀ դրամ: Տուժողը ցուցմունք է տվել նաև այն մասին, որ քաղաքացիական հայց չի ներկայացրել, իսկ Ա.Ղազարյանի հարազատների կողմից իրեն պատճառված վնասն ամբողջությամբ հատուցվել է,

- Ա.Ղազարյանի հայրը՝ Գագիկ Ռուբենի Ղազարյանը, մահացել է 2013 թվականի դեկտեմբերի 27-ին:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն անօրինական և անհիմն է, քանի որ կայացվել է նյութական և դատավարական նորմերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ սույն գործով ստորադաս դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ և 115-րդ հոդվածների պահանջները, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը, վերլուծելով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԳ/0057/12/08 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, փաստել է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները չեն բխում գործում առկա նյութերից և կիրառելի օրենսդրության պահանջներից: Մասնավորապես, բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործով չիրականացնելով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, արդյունքում չի գնահատել և մեկնաբանել Ա.Գազարյանի ուղղված լինելու հանգամանքը, ուղղման գործընթացին վերաբերող ու գործում առկա փաստական տվյալները և առանց հիմնավոր պատճառաբանությունների՝ բեկանել է միջնորդությունը բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտը:

10.1. Վերոգրյալի հետ մեկտեղ բողոքաբերը նշել է, որ դատական քննության արագացված կարգի կիրառման հետևանքով Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունվարի 21-ի դատավճռում գործի փաստական հանգամանքներն ամբողջությամբ չեն արտացոլվել, սակայն թիվ ԱԲԱԳ/0035/01/13 քրեական գործով ձեռք բերված տվյալներով հաստատվել է, որ մեղազգրվող գողություններն Ա.Գազարյանը կատարել է վատառողջ հոր համար սնունդ և դեղորայք ձեռք բերելու նպատակով, հափշտակությունները կատարելիս տուժողի բնակարանից գողացել է այնքան գումար, որքան անհրաժեշտ է եղել դեղորայքի և սննդի համար: Նշվածը հիմնավորվում է ինչպես քրեական գործով տուժող Թ.Մաթևոսյանի, այնպես էլ Ա.Գազարյանի՝ որպես կասկածյալ և մեղադրյալ տված ցուցմունքներով:

11. Վերոնշյալի հիման վրա պաշտպան Հ.Գալստյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 19-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի

իրացումն է: Այդ առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կառուցակարգի գործադրման համար անհրաժեշտ պայմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Առաջին ատյանի դատարանը սխալ եզրահանգման է եկել ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը դատապարտյալ Ա.Ղազարյանի կողմից կրելու կարիք չունենալու հարցում:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ազատագրված կամ կարգապահական զումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Ընդ որում, անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պատժից պայմանական վաղաժամկետ ազատում և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինում դատարանը կիրառում է պատժի կատարումն իրականացնող մարմնի միջնորդագրով (...):»:*

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով կարող է փոխարինվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով դրա համար սահմանված նվազագույն ժամկետը: Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում չի կիրառվում, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալն ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը»:*

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ*

պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը: Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատասպարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությանը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում դատարան միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատասպարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունն ստանալու դեպքում»:

15. Համակարգային վերլուծության ենթարկելով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կառուցակարգը նախատեսող, դրա գործադրման կարգն ու պայմանները սահմանող քրեաիրավական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրության նորմերը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտն այն արդյունավետ միջոցներից մեկն է, որը հնարավորություն է տալիս դատասպարտյալին կանգնելու ուղղման ճանապարհին՝ նպաստելով նրա մոտ օրինապահ քաղաքացուն բնորոշ վարքագծի ձևավորմանը: Այլ խոսքով՝ պայմանական վաղաժամկետ ազատումը նպաստում է պետության քրեական քաղաքականության ընդհանուր նպատակների և խնդիրների իրականացմանը, այն է՝ պատժի կրման ընթացքում հասնել դատասպարտյալի ուղղմանը: Պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորությունը պատժի կրման ընթացքում դատասպարտյալի կողմից օրինակելի վարքագծի դրսևորման կարևորագույն խթան է, և ուղղման ճանապարհին կանգնած անձին հնարավորություն է տալիս հայտնվելու իր համար բնորոշ ընտանեկան, աշխատանքային, կենցաղային միջավայրում: Հարկ է ընդգծել նաև, որ քննարկվող կառուցակարգի գործադրումը հնարավորություն է տալիս խնայել քրեաիրավական ներգործության միջոցները և ըստ այդմ նաև՝ պետության նյութական ռեսուրսները: Այս ինստիտուտի գործադրման առանձնահատկությունն այն է, որ պատիժը կրելուց վաղաժամկետ ազատումն իրականացվում է պայմանական, և ազատվող դատասպարտյալը գտնվում է վերահսկողության ներքո, նրա վրա դրվում են որոշակի պարտականություններ, որոնք չկատարելու դեպքում դատարանը կարող է վաղաժամկետ ազա-

տումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին որոշում կայացնել:

16. Գործող իրավական կարգավորումներից բխող ազատագրկման ձևով նշանակված պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի գործադրման կարգին անդրադառնալով՝ Վճարելի դատարանն արձանագրում է հետևյալը. դատապարտյալին վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ է, որ՝

ա) դատապարտյալը փաստացի կրած լինի իր նկատմամբ նշանակված պատժի՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով սահմանված նվազագույն ժամկետը,

բ) հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը վնաս պատճառած լինելու կամ մարդու մահ առաջացած լինելու դեպքում դատապարտյալն ամբողջությամբ հարթած լինի տուժողին պատճառված վնասը,

գ) միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատագրկման դատապարտված անձի վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու դեպքում առկա լինի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունը,

դ) պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը համապատասխան միջնորդագիր ներկայացնի դատարան,

ե) դատարանը համոզվի, որ դատապարտյալն ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի:

Վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է միայն դատարանն իրավասու որոշում կայացնելու ազատագրկման ձևով պատիժ կրող անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին: Թվարկված պայմաններից որևիցե մեկի բացակայությունն ինքնին բացառում է քննարկվող ինստիտուտի գործադրման հնարավորությունը:

17. Սույն որոշման նախորդ կետում շարադրված՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող օրենքի պահանջների վերլուծությունից ակնհայտ է, որ քննարկվող ինստիտուտի գործադրման համար դատարանը պետք է հանգի այն հետևության, որ «դատապարտյալը ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի»: Այդ հարցը լուծելիս դատարանն օժտված է որոշակի հայեցողություն դրսևորելու հնարավորությամբ, քանի որ օրենսդիրը չի սահմանել այն հիմնական չափանիշները, որոնց հիման վրա դատարանը կարող է հստակ որոշել դատապարտյալի ուղղման նախադրյալները և պատժի հետագա կրման աննպատակահարմարությունը: Սակայն որպեսզի որոշումը համարվի հայեցողության թույլատրելի շրջանակներում և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ օրենքի պահանջների ճշգրիտ և անշեղ կատարմամբ կայացված,

դատարանը պարտավոր է մանրամասն ուսումնասիրության և վերլուծության ենթարկել քննարկվող ինստիտուտի գործադրման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները:

Այդ առումով հարկ է նախևառաջ արձանագրել, որ թեև օրենսդիրը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար առանձնացնում է պատժի նպատակներից միայն մեկը՝ հանցանք կատարած անձի ուղղումը, այդուհանդերձ, պատժի նպատակները փոխկապակցված և փոխհամաձայնեցված են. մեկ նպատակը ենթադրում է մյուսները և յուրաքանչյուրի ինքնուրույն իրականացումն օժանդակում է մյուսներին: ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածում ամրագրված՝ հանցավորի ուղղման նպատակի իրականացումն ուղղակիորեն կապված է պատժի մյուս երկու՝ սոցիալական արդարության վերականգնման և հանցագործությունների կանխման նպատակների հետ, ուստի դրանցից յուրաքանչյուրի առանձին իրագործումը հնարավոր չէ (տե՛ս, *mutatis mutandis*, Ա.Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-142/07 որոշումը): Հետևաբար պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի գործադրման հիմքում պետք է դրվի պատժի նպատակների համակցված իրագործման հնարավորությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող ինստիտուտի գործադրմամբ անձը պատժից ազատվում է պայմանական (ազատվող դատապարտյալի վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում դատարանը կարող է վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար անելու մասին որոշում կայացնել), ինչը ենթադրում է, որ պատժի նպատակները, ներառյալ՝ անձի ուղղումը, դեռ լիովին, ամբողջապես իրականացած չեն: Այս պայմաններում եթե պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հիմքը դիտվի դատապարտյալի ուղղված լինելը, ապա ստացվում է, որ պատժի նպատակներն ապահովվել են, իսկ այդ հանգամանքը իմաստագրկում է քննարկվող ինստիտուտի դերն ու նշանակությունը: Հետևապես պայմանական վաղաժամկետ ազատման ենթակա է ոչ թե այն դատապարտյալը, ով արդեն ուղղվել է, այլ նա, ում անձի, դրսևորած վարքագծի վերաբերյալ տվյալների և այլ հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նա կանգնած է ուղղման ճանապարհին: Այլ խոսքով՝ դատարանը պետք է պարզապես համոզվի, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում անձի կողմից օրինապահ վարքագիծ դրսևորելու հավանականության աստիճանը բավարար է թե՛ հասարակական անվտանգության և թե՛ հասարակությունում նրա վերաինտեգրման տեսանկյունից, իսկ պատժի նպատակները հնարավոր է վերջնականապես իրագործել համապատասխան վերահսկողության ներքո դատապարտյալի ազատության մեջ գտնվելու պայմաններում:

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալի ուղղման աստիճանը որոշելու և որպես հետևանք՝ վերջինիս պատժի կրու-

մից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության վերաբերյալ հիմնավոր և պատճառաբանված որոշում կայացնելու համար դատարանը պետք է հաշվի առնի մի շարք չափանիշներ (գործոններ), որոնց անդրադարձ է կատարվել նախկինում՝ *Վարդան Մուխսիխասչյանի, Արամյա Միրիբջյանի և Լևոն Ղազարյանի* վերաբերյալ գործերով կայացված որոշումների շրջանակներում:

Այսպես, *Վ.Մուխսիխասչյանի և Ա.Միրիբջյանի* վերաբերյալ որոշումներում Վճռաբեկ դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության հարցը լուծելիս դատապարտյալի ուղղված լինելու մասին դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի գտնված լինելու ամբողջ ժամանակահատվածում վերջինիս վարքի մասին տվյալների բազմակողմանի ուսումնասիրության վրա: (...) Դատապարտյալի ուղղման մասին եզրակացությունը պետք է հիմնվի ոչ միայն պատժի կրման ընթացքում նրա վարքագծի, այլ նաև անձի և հանցագործության բազմակողմանի գնահատման վրա» (տե՛ս *Վարդան Մուխսիխասչյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-212/07 և *Արամյա Միրիբջյանի* գործով 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-213/07 որոշումները):

Լ.Ղազարյանի վերաբերյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի հրամանով հաստատված (...) կարգի (...) 45-49-րդ կետերի համաձայն՝ պատժի կրման ընթացքում պարբերաբար կատարվում է դատապարտյալի գնահատում: Գնահատումները ներառում են տեղեկություններ դատապարտյալի հետ կատարված աշխատանքների ընթացքի, դատապարտյալի վարքի փոփոխության մասին: Մասնավորապես, գնահատվում են՝

- 1) դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ,
- 2) դատապարտյալի ռիսկայնության աստիճանը,
- 3) ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները,
- 4) դատապարտյալի կարգապահությունը,
- 5) դատապարտյալի մասնակցությունը կրթական, մշակութային և այլ ծրագրերին և ներգրավվածությունը աշխատանքին:

Թվարկված յուրաքանչյուր կետի վերաբերյալ, կապված պատիժը կրելու ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծի, այդ ընթացքում նրա հետ իրականացված աշխատանքների և արդյունքների հետ, տրվում է բարձր, միջին կամ ցածր գնահատական:

Դատապարտյալի գնահատման արդյունքների հիման վրա որոշվում է ուղղման աստիճանը.

ա. դրական, երբ պատժի կրման ընթացքում դատապարտյալի կարգապահությունը և ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվել են բարձր կամ միջին, իսկ ռիսկայնության աստիճանը՝ ցածր,

բ. բացասական, երբ դատապարտյալի կարգապահության կամ ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվել են ցածր, իսկ ռիսկայնության աստիճանը՝ բարձր կամ միջին:

Դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար միջնորդություն ներկայացնելու դեպքում քրեակատարողական հիմնարկում քննարկվում են պատժի կրման ընթացքում դատապարտյալի վարքագիծը, նրա հետ իրականացված աշխատանքների արդյունքները: Քննարկման արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կարծիքները և դատապարտյալի գնահատման արդյունքները, կազմվում է բնութագիր:

Դատապարտյալը բնութագրվում է դրական, երբ ընթացիկ գնահատումների արդյունքները բարձր են, ռիսկայնությունը՝ ցածր կամ միջին, բացասական՝ երբ ընթացիկ գնահատումների արդյունքները ցածր են կամ միջին, ռիսկայնությունը՝ բարձր:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս ունեն օրենքի շրջանակներում որոշակի հայեցողություն դրսևորելու հնարավորություն: Սակայն որոշումը կհամարվի այդ հայեցողության թույլատրելի շրջանակներում կայացված, եթե հիմնված լինի (...) շարադրված չափանիշների հետագոտման, վերլուծության և գնահատման վրա» (տե՛ս *Լևոն Ղազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԳ/0057/12/08 որոշման 22-23-րդ կետերը):

19. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նախևառաջ անդրադառնալ *Լևոն Ղազարյանի* գործով իր կողմից արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումներին՝ փաստելով, որ դրանք վերանայման և զարգացման կարիք ունեն: Այսպես՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ նշյալ իրավական դիրքորոշումների վերանայման և զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ դրանք հիմնված են եղել, ի թիվս այլ հանգամանքների, ՀՀ արդարադատության նախարարի՝ 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի վրա, ինչը, սակայն, ՀՀ արդարադատության նախարարի՝ 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանով ուժը կորցրած է ճանաչվել: Ընդ որում, 2016 թվականի հուլիսի 13-ի հրամանի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանում այլևս չեն նախատեսվել պատժի կրման ընթացքում դատապարտյալին ըստ որոշակի աստիճանի գնահատելու հետ կապված իրավահարաբերությունները:

20. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության հարցը լուծելիս դատարանը, հիմնվելով պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի ներկայացրած նյութերի, այդ թվում՝ դատապարտյալի բնութագրում լրացվող տեղեկությունների վրա, պետք է կատարի դրանց մանրամասն վերլու-

ծություն, հետազոտում և գնահատում: Մասնավորապես, դատարանը պետք է օբյեկտիվ գնահատման ենթարկի առկա, ի թիվս այլնի, հետևյալ տեղեկությունները՝

ա) դատապարտյալի տարիքը, սեռը, կրթությունը, մասնագիտությունը, մասնագիտական հմտությունները, աշխատանքը՝ մինչև դատապարտվելը, առողջական վիճակը, ընտանեկան դրությունը, խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը,

բ) նախկին դատվածության առկայությունը, նախկինում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման, ներման, համաներման կամ այլ հիմքով պատիժը ոչ ամբողջությամբ կրելուց ազատման հանգամանքը: Այդ առումով Վճարելի դատարանն արձանագրում է, որ թեև ՀՀ գործող քրեական օրենսգիրքը, ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսդրության, պատժից ազատելու քննարկվող տեսակի համար նշյալ հանգամանքների կապակցությամբ չի պարունակում ուղղակի սահմանափակումներ, այնուամենայնիվ, դրանք կարևոր նշանակություն ունեն ինչպես դատապարտյալի անձի վերաբերյալ ճիշտ պատկերացում կազմելու, այնպես էլ նրա ուղղման ընդունելի աստիճանի հասած լինելու առնչությամբ հիմնավոր կանխատեսում անելու համար,

գ) հանցագործության արդյունքում դատապարտյալի կողմից տուժողին պատճառած վնասի առկայությունը, առկայության դեպքում այն հարթելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները: Վերջին հանգամանքն ունի էական նշանակություն պատժի նպատակներից մեկի՝ սոցիալական արդարության վերականգնման տեսանկյունից,

դ) պատժի կրման ողջ ժամանակահատվածի ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ խրախուսանքների, տույժերի առկայությունը կամ բացակայությունը, առկայության դեպքում դրանց հիմքում ընկած հանգամանքները, մասնակցությունը ինքնագործ միավորումների աշխատանքին, կրթական, աշխատանքային, մշակութային և այլ բնույթի ծրագրերին, հանրօգուտ միջոցառումներին, դատապարտյալի վարքը, բնավորությունը, խառնվածքը, հոգեբանական առանձնահատկությունները և դրանց դիմամիկան, ընտանիքի անդամների, արտաքին աշխարհի հետ կապը, դատապարտյալի վերաբերմունքը կատարած հանցագործությանն ու դատավճռին, դատապարտյալի մոտ բացասական հակումների առկայությունը կամ բացակայությունը, առկայության դեպքում դրանց նվազեցման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները,

ե) պատժի կրումից ազատվելուց հետո դատապարտյալի բնակարանային, աշխատանքային, նյութակենցաղային ապահովվածությունը և հետագա ծրագրերը: Սույն հանգամանքները կարող են կանխորոշիչ նշանակություն ունենալ ազատության մեջ հայտնվելու դեպքում դատապարտյալի հետագա վարքագծի, հասարակությունում վերահիմնադրման առնչությամբ կանխատեսումներ անելու համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը լուծելիս գնահատման ենթակա վերոնշյալ չափանիշները սպառիչ չեն, և դատարանը օրենքով իրեն վերապահված թույլատրելի հայեցողության շրջանակներում կարող է հաշվի առնել ցանկացած այլ հանգամանք՝ պայմանով, որ այն լինի իրական և հնարավորություն ընձեռի հիմնավորված հետևության հանգեյլու պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում պատժի նպատակների իրացվելիության հարցում:

21. Վերահաստատելով և զարգացնելով *Վարդան Մուխսիխաչոյանի* և *Արամայիս Միրիքյանի* գործերով արտահայտված այն դիրքորոշումը, որ դատապարտյալի ուղղման մասին եզրակացությունը պետք է հիմնվի նաև հանցագործության բազմակողմանի գնահատման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը (մեղքի ձև և տեսակ, հանցագործության նպատակ ու շարժառիթ, հանցագործությամբ պատճառված վնասի չափ, հանցագործության կատարման եղանակ, հանցավոր մտադրության իրականացման աստիճան, հանցակցության դեպքում՝ հանցագործությունը հանցավորի մասնակցության աստիճան և այլն) թեև ունի նշանակություն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը լուծելու համար, սակայն այն ինքնին չի կարող պատժից վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու կամ բավարարելու հիմք դիտարկվել. նշյալ հանգամանքները պետք է գնահատվեն համակցության մեջ՝ դատապարտյալի անձի և պատժի կրման ընթացքում նրա դրսևորած վարքագծի համակողմանի ուսումնասիրության հետ մեկտեղ: Պատժից ազատելու քննարկվող տեսակի հարցը լուծելիս կատարված հանցագործության բնույթին և վտանգավորության աստիճանին որոշիչ նշանակություն չտալու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ դրանք, ընկած լինելով ոչ միայն հանցագործությունների դասակարգման (ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդված), այլև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների հիմքում և ապահովելով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման հիմնարար դրույթների իրացումը, դատարանի կողմից պարտադիր հաշվի են առնվում պատիժ նշանակելիս՝ պատժի տեսակը և չափը որոշելիս (ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդված): Հետևաբար քննարկվող ինստիտուտի գործադրման հարցը բացառապես հանցագործության որակական և քանակական հատկանիշների հիման վրա լուծելը կամ դրանց հիմնական, առաջնային նշանակություն վերագրելը չի կարող իրավաչափ համարվել:

22. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման արդյունքում դատարանի կայացրած որոշումը պետք է հիմնված լինի սույն որոշման 16-րդ, 20-21-րդ կետերում նշված պայմանների և չափանիշների բազմակողմանի վերլուծության և դրանից բխող պատճառա-

բանված եզրահանգումների վրա: Ընդ որում, պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և փաստական տվյալներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա՝ իր մեջ չընդգրկելով վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ, քանի որ հակառակ պարագայում այդպիսի դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին (տե՛ս, *mutatis mutandis*, *Արսեն Մակարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշման 14-րդ կետը): Այլ կերպ՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը լուծելիս դատարանները պետք է հստակ նշեն այն փաստական հանգամանքները, որոնք ընկած են համապատասխան միջնորդագրի բավարարման կամ մերժման հիմքում՝ զերծ մնալով ինչպես միջնորդագրերի կամայական մերժումներից, այնպես էլ դրանց անհիմն բավարարման դեպքերից:

23. Սույն գործի նյութերից երևում է, որ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռով Ա.Ղազարյանը մեղավոր է ճանաչվել 2 դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և հանցանքների համակցությամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 տարի 3 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Նշանակված պատժի կեսից ավելին դատապարտյալի կողմից կրելուց հետո ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, նախապես ստանալով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունը, 2016 թվականի փետրվարի 5-ին միջնորդագիր է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ պատիժը կրելուց Ա.Ղազարյանին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ բավարարել է այն՝ իր որոշման հիմքում դնելով այն, որ դատապարտյալ Ա.Ղազարյանը պատիժը կրելու ընթացքում կարգապահական տույժի չի ենթարկվել, տրված առաջադրանքները կատարում է ժամանակին և բարեխղճորեն, ընթացիկ գնահատման արդյունքները միջին են, ռիսկայնությունը ցածր աստիճանի է, բնակարանով ապահովված է, նյութակենցաղային պայմանները բավարար են, ընդունում և զղջում է կատարած հանցանքի համար, քաղաքացիական հայց չունի, անձնական գործում առկա գնահատման թերթիկի և բնութագրի համաձայն՝ մշտապես բնութագրվել է դրական, ազատվելուց հետո ցանկանում է աշխատել, նշանակված պատժից կրել է 2 տարի 3 ամիս 24 օր (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը փաստել է, որ իր եզրակացությունը հիմնավորելիս Առաջին ատյանի դատարանը բավարարվել է բացառապես

քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագրում տեղ գտած՝ պատժի կրման ընթացքում դատապարտյալ Ա.Ղազարյանի վարքագիծը բնութագրող ձևակերպումների պարզ շարադրանքով, իսկ դատապարտյալ Ա.Ղազարյանի ուղղման մասին իր հետևությունը, ի թիվս այլոց, պետք է հիմներ նաև դատապարտյալի անձի և հանցագործության բազմակողմանի վերլուծության ու գնահատման վրա, ինչը կոնկրետ դեպքում չի արվել՝ հանգեցնելով դատական սխալի՝ նյութական իրավունքի այնպիսի խախտման, որը բավարար հիմք է Առաջին ատյանի դատարանի վիճարկվող դատական ակտը բեկանելու և ներկայացված միջնորդությունը մերժելու համար (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

24. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-22-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և մերժելով քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը, իր եզրահանգման հիմքում չի դրել դատարանում հետազոտված և ստուգված որևէ փաստական տվյալ, որը բացառում է պատիժը կրելուց Ա.Ղազարյանին պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորությունը, չի նշել, թե տվյալ դեպքում հատկապես որ չափանիշը չի հաղթահարել դատապարտյալ Ա.Ղազարյանը պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար:

Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ ստորադաս դատարանն Ա.Ղազարյանի ուղղման մասին իր հետևությունը չի հիմնել դատապարտյալի անձի և հանցագործության բազմակողմանի վերլուծության ու գնահատման վրա, իր դատական ակտում չի հատակեցրել, թե հատկապես որ հանգամանքն է անտեսել Առաջին ատյանի դատարանը, և դատապարտյալի անձին և նրա կատարած հանցագործությանը վերաբերող ինչպիսի փաստական տվյալներ են առկա գործում, որոնք բացառում են Ա.Ղազարյանին պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորությունը: Ավելին՝ Վճռաբեկ դատարանն ներկայացված նյութերից երևում է, որ Ա.Ղազարյանը տուժող Թ.Մաթևոսյանից հափշտակություններ կատարելու դրվագներով նախաքննության ընթացքում ցուցմունքներ է տվել այն մասին, որ գողությունները կատարել է վատառողջ հոր համար սնունդ և դեղորայք գնելու նպատակով, և տուժողի բնակարանից գողացել է այնքան գումար, որն անհրաժեշտ է եղել դրանք ձեռք բերելու համար, իսկ տուժող Թ.Մաթևոսյանը նախաքննության ընթացքում ցուցմունքներ է տվել այն մասին, որ իր տան հյուրասենյակում պահվող դրամապանակում եղել է 1.360.000 ՀՀ դրամ և 484 ԱՄՆ դոլար, իսկ գողություններից հետո իր դրամապանակից բացակայել է ընդամենը 330.000 ՀՀ դրամ: Ա.Ղազարյանի հայրը՝ Գ.Ղազարյանը, մահացել է 2013 թվականի դեկտեմբերի 27-ին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, իր պատճառաբանությունների հիմքում դնելով ընդհանուր

բնույթի, վերացական դատողություններ, չի նշել որևէ կոնկրետ հանգամանք, որը խոչընդոտում է Ա.Ղազարյանին պայմանական վաղաժամկետ ազատելուն:

25. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Առաջին ատյանի դատարանը սխալ եզրահանգման է եկել ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը դատապարտյալ Ա.Ղազարյանի կողմից կրելու կարիք չունենալու հարցում:

26. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և մերժելով քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի խախտում, ինչի արդյունքում ոչ ճիշտ է կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածը: Նշված խախտումներն ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ հետազոտման ենթարկելով դատապարտյալ Ա.Ղազարյանի վերաբերյալ նյութերը, եկել է հիմնավոր եզրահանգման նրա՝ պատժի հետագա կրման աննպատակահարմարության կապակցությամբ: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը, բավարարելով պատիժը կրելուց դատապարտյալ Ա.Ղազարյանին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության «Կոչ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 19-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ դատապարտյալ Արմեն Գազիկի Ղազարյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի ընդհա-

նուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 19-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

39.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0003/12/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 13-ի որոշման դեմ դատապարտյալ Սահակ Լևոնի Սահակյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատաքննության արագացված կարգ, 2015 թվականի հուլիսի 31-ի դատավճռով Սահակ Լևոնի Սահակյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով Ս.Սահակյանը դատապարտվել է ազատազրկման՝ 6 (վեց) ամիս ժամկետով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ս.Սահակյանի նկատմամբ վերջնական պա-

տիժ է նշանակվել ազատագրվում՝ 2 (երկու) տարի 3 (երեք) ամիս ժամկետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի հիշյալ դատավճիռը դատավարության մասնակիցների կողմից չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

2. ՀՀ արդարադատության նախարարության՝ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը (այսուհետ՝ նաև ՔԿՀ-ի վարչակազմ) 2016 թվականի մարտի 23-ին միջնորդագիր է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ դատապարտյալ Ս.Սահակյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ ներկայացված միջնորդագիրը բավարարվել է, և դատապարտյալ Ս.Սահակյանը պայմանական վաղաժամկետ ազատվել է դատավճռով նշանակված պատժի մնացած՝ 11 (տասնմեկ) ամիս 22 (քսաներկու) օր ժամկետով ազատագրվումը կրելուց:

Դատապարտյալ Ս.Սահակյանին պարտավորեցվել է չփոխել մշտական բնակության վայրը՝ նրա վարքի նկատմամբ վերահսկողությունը դնելով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի վրա:

3. Դատախազ Հ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի մայիսի 13-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 1-ի որոշումը՝ մերժելով դատապարտյալ Ս.Սահակյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ՔԿՀ-ի վարչակազմի միջնորդագիրը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Ս.Սահակյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատախազ Հ.Խաչատրյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել դատապարտյալ Ս.Սահակյանի վճռաբեկ բողոքը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ս.Սահակյանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով դատապարտվել է այն բանի համար, որ «[Նա] գործով չպարզված հանգամանքներում և ժամանակա-

հաստատում առանց իրացնելու նպատակի՝ իր գործածման համար, ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափի ընդհանուր 0,3208 գրամ «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող թվով 40 հատ «սուբուտեքս» տեսակի դեղահաբեր և զգալի չափի՝ 2.82 գրամ հաստատուն քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որոնցից 0,0382 գրամ քաշով «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող «սուբուտեքս» տեսակի թվով 1 դեղահաբը, դեղահաբի բեկորները և փոշեբյուրեղային զանգվածը ապօրինի պահել է իր բաճկոնի աջ գրպանում, իսկ մնացած՝ 0.2826 գրամ «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող թվով 34 հատ և 4 կտոր «սուբուտեքս» տեսակի դեղահաբերն ու «մարիխուանա» տեսակի թմրամիջոցը հետագա գործածման համար ապօրինի պահել է իր բնակության վայրում» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 23):

6. ՔԿՀ-ի վարչակազմը 2016 թվականի մարտի 23-ին միջնորդագիր է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով դատապարտյալ Ս.Սահակյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատել (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 3):

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 1-ի որոշման համաձայն՝ «ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի պետի կողմից 2016թ. փետրվարի 26-ին և մարտի 23-ին հաստատված բնութագրերի և դատապարտյալի անձնական գործում առկա փաստաթղթերի [համաձայն]՝ դատապարտյալ Ս.Սահակյանը պատժի կրման հետ միաժամանակ բուժում է ստանում ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում: Նա պատիժը կրելու ընթացքում տույժի չի ենթարկվել, քաղաքացիական հայցով պարտավորություն չունի, արտաքին աշխարհի հետ կապը պահպանում է, բնավորությամբ հանգիստ է, շփվող, հաղորդակցվող, կոնֆլիկտներ չի ստեղծում, բնակարանային և նյութակենցաղային խնդիրներ չունի, ընթացիկ գնահատումների արդյունքները բարձր են, ռիսկայնության աստիճանը ցածր է, կատարած հանցագործության համար գղջում է:

Ըստ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի պետի բացատրության՝ դատապարտյալ Ս.Սահակյանը դրական վարքագիծ ունեցող դատապարտյալ է, տույժ չունի:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները և նկատի ունենալով, որ ոչ մեծ ծանրության և ծանր հանցագործությունների կատարման համար 2 (երկու) տարի 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկման դատապարտված Ս.Սահակյանը փաստացի կրել է իր նկատմամբ նշանակված պատժի ավելի քան կեսը, մնացել է կրելու 11 (տասնմեկ) ամիս 22 (երկու) օր ժամկետով ազատազրկումը, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովը 2016թ. մարտի 21-ին որոշում է կայացրել դատապարտյալ Ս.Սահակյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ վարչակազմի որոշ-

մանր հավանություն տալու մասին՝ դատարանը գտնում է, որ միջնորդագիրը հիմնավոր է, բխում է ՀՀ քրեական օրենսգրքի (...) 76-րդ [հոդվածի], ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ, 115-րդ հոդվածների, ՀՀ վճռաբեկ դատարանի (...) նախադեպային որոշման [ՎԲ-212/07] պահանջներից և ենթակա է քավարարման (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 24-25):

8. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 13-ի որոշման համաձայն՝ «Դատարանը պետք է մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկի պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ օրենքի պահանջների ճշգրիտ և անշեղ կատարմամբ ապահովի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրականացումը, այն է՝ պատժի ենթարկած անձին ուղղելը, սոցիալական արդարության վերականգնումը, ինչպես նաև հանցագործությունների կանխումը:

Քննարկվող պարագայում, ըստ էության պատշաճ ուսումնասիրության և գնահատման չի ենթարկվել դատապարտյալ Սահակ Լևոնի Սահակյանի[ն] պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրագործման հնարավորությունն ապահովելու համատեքստում:

(...) [Վ]երը շարադրված հանգամանքների առկայության պայմաններում վիճարկվող դատական ակտում տեղ գտած պատճառաբանությունները, քննարկվող պարագայում, քավարար չեն հիմնավոր հետևության հանգեցրել այն մասին, որ դատապարտյալ Սահակ Լևոնի Սահակյան[ը] ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի:

Հինք ընդունելով վերոգրյալը, վերաքննիչ դատարանը գտնում է, որ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը ներկայացված միջնորդությունը քավարարելու հարցում հանգել է ոչ ճիշտ եզրակացության, ինչ[ը] հանգեցրել [է] նյութական իրավունքի այնպիսի խախտման, որը հիմք է վիճարկվող դատական ակտը բեկանելու և ներկայացված միջնորդությունը մերժելու համար» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 92-93):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

9. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն անօրինական և անհիմն է, քանի որ կայացվել է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական նորմերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ սույն գործով Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ, ՀՀ քրեակատարողական օ-

րենսգրքի 17-րդ, 114-րդ, 115-րդ հոդվածներում ամրագրված պայմանները և չի հետևել ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումներին:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշմամբ չի հիմնավորվել, թե ինչի հիման վրա է վերջինս գտել, որ Առաջին ատյանի դատարանը չի անդրադարձել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար օրենքով նշված էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքներին:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ չնայած դատարանները պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս ունեն օրենքի շրջանակներում որոշակի հայեցողություն դրսևորելու հնարավորություն, սակայն, ինչպես հետևում է Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի պահանջներից, այդ հնարավորությունը բացարձակ ու անսահման չէ, դրանից օգտվելը պետք է լինի թույլատրելիի շրջանակներում, ինչը չի պահպանվել Վերաքննիչ դատարանի կողմից:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 13-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 1-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը սխալ եզրահանգման է եկել ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը դատապարտյալ Ս.Սահակյանի կողմից կրելու կարիք չունենալու հարցում:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ազատագրվման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Ընդ որում, անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը»:*

ՀՀ քրեական դատապարտության օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պատժից պայմանական վաղաժամկետ ազատում և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինում դատարանը կի-*

րառում է պատժի կատարումն իրականացնող մարմնի միջնորդագրով (...):»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով կարող է փոխարինվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով դրա համար սահմանված նվազագույն ժամկետը: Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում չի կիրառվում, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալն ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը: Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությանը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում դատարան միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունն ստանալու դեպքում»:

13. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կառուցակարգը նախատեսող, դրա գործադրման կարգն ու պայմանները սահմանող քրեաիրավական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրության՝ վերը մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել Ա. Ղազարյանի գործով որոշման մեջ՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Պ]ատժի

կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտն այն արդյունավետ միջոցներից մեկն է, որը հնարավորություն է տալիս դատապարտյալին կանգնելու ուղղման ճանապարհին՝ նպաստելով նրա մոտ օրինապահ քաղաքացուն բնորոշ վարքագծի ձևավորմանը: Այլ խոսքով՝ պայմանական վաղաժամկետ ազատումը նպաստում է պետության քրեական քաղաքականության ընդհանուր նպատակների և խնդիրների իրականացմանը, այն է՝ պատժի կրման ընթացքում հասնել դատապարտյալի ուղղմանը: Պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորությունը պատժի կրման ընթացքում դատապարտյալի կողմից օրինակելի վարքագծի դրսևորման կարևորագույն խթան է, և ուղղման ճանապարհին կանգնած անձին հնարավորություն է տալիս հայտնվելու իր համար բնորոշ ընտանեկան, աշխատանքային, կենցաղային միջավայրում: Հարկ է ընդգծել նաև, որ քննարկվող կառուցակարգի գործադրումը հնարավորություն է տալիս խնայել քրեաիրավական ներգործության միջոցները և ըստ այդմ նաև՝ պետության նյութական ռեսուրսները: Այս ինստիտուտի գործադրման առանձնահատկությունն այն է, որ պատիժը կրելուց վաղաժամկետ ազատումն իրականացվում է պայմանական, և ազատվող դատապարտյալը գտնվում է վերահսկողության ներքո, նրա վրա դրվում են որոշակի պարտականություններ, որոնք չկատարելու դեպքում դատարանը կարող է վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին որոշում կայացնել:

(...) Գործող իրավական կարգավորումներից բխող ազատագրկյման ձևով նշանակված պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի գործադրման կարգին անդրադառնալով՝ Վճարելի դատարանն արձանագրում է հետևյալը. դատապարտյալին վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ է, որ՝

ա) դատապարտյալը փաստացի կրած լինի իր նկատմամբ նշանակված պատժի՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով սահմանված նվազագույն ժամկետը,

բ) հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը վնաս պատճառած լինելու կամ մարդու մահ առաջացած լինելու դեպքում դատապարտյալն ամբողջությամբ հարթած լինի տուժողին պատճառված վնասը,

գ) միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատագրկյման դատապարտված անձի վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու դեպքում առկա լինի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունը,

դ) պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը համապատասխան միջնորդագիր ներկայացնի դատարան,

ե) դատարանը համոզվի, որ դատապարտյալն ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի:

Վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է միայն դատարանն իրավասու որոշում կայացնելու ազատագրկաման ձևով պատիժ կրող անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին: Թվարկված պայմաններից որևիցե մեկի բացակայությունն ինքնին բացառում է քննարկվող ինստիտուտի գործադրման հնարավորությունը:

(...) [Պ]ատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող օրենքի պահանջների վերլուծությունից ակնհայտ է, որ քննարկվող ինստիտուտի գործադրման համար դատարանը պետք է հանգի այն հետևության, որ «դատապարտյալը ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի»: Այդ հարցը լուծելիս դատարանն օժտված է որոշակի հայեցողություն դրսևորելու հնարավորությամբ, քանի որ օրենսդիրը չի սահմանել այն հիմնական չափանիշները, որոնց հիման վրա դատարանը կարող է հստակ որոշել դատապարտյալի ուղղման նախադրյալները և պատժի հետագա կրման աննպատակահարմարությունը: Սակայն որպեսզի որոշումը համարվի հայեցողության թույլատրելի շրջանակներում և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ օրենքի պահանջների ճշգրիտ և անշեղ կատարմամբ կայացված, դատարանը պարտավոր է մանրամասն ուսումնասիրության և վերլուծության ենթարկել քննարկվող ինստիտուտի գործադրման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները:

(...)

(...) [Գ]ատապարտյալի ուղղման աստիճանը որոշելու և որպես հետևանք՝ վերջինիս պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության վերաբերյալ հիմնավոր և պատճառաբանված որոշում կայացնելու համար դատարանը պետք է հաշվի առնի մի շարք չափանիշներ (գործոններ) (...):

(...)

(...)[Պ]ատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության հարցը լուծելիս դատարանը, հիմնվելով պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի ներկայացրած նյութերի, այդ թվում՝ դատապարտյալի բնութագրում լրացվող տեղեկությունների վրա, պետք է կատարի դրանց մանրամասն վերլուծություն, հետազոտում և գնահատում: Մասնավորապես, դատարանը պետք է օբյեկտիվ գնահատման ենթարկի առկա, ի թիվս այլնի, հետևյալ տեղեկությունները՝

ա) դատապարտյալի տարիքը, սեռը, կրթությունը, մասնագիտությունը, մասնագիտական հմտությունները, աշխատանքը՝ մինչև դատապարտվելը, առողջական վիճակը, ընտանեկան դրությունը, խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը,

բ) նախկին դատվածության առկայությունը, նախկինում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման, ներման, համաներման

կամ այլ հիմքով պատիժը ոչ ամբողջությամբ կրելուց ազատման հանգամանքը (...):

զ) հանցագործության արդյունքում դատապարտյալի կողմից տուժողին պատճառած վնասի առկայությունը, առկայության դեպքում այն հարթելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները (...):

դ) պատժի կրման ողջ ժամանակահատվածի ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ խրախուսանքների, տույժերի առկայությունը կամ բացակայությունը, առկայության դեպքում դրանց հիմքում ընկած հանգամանքները, մասնակցությունը ինքնագործ միավորումների աշխատանքին, կրթական, աշխատանքային, մշակութային և այլ բնույթի ծրագրերին, հանրօգուտ միջոցառումներին, դատապարտյալի վարքը, բնավորությունը, խառնվածքը, հոգեբանական առանձնահատկությունները և դրանց դինամիկան, ընտանիքի անդամների, արտաքին աշխարհի հետ կապը, դատապարտյալի վերաբերմունքը կատարած հանցագործությանն ու դատավճռին, դատապարտյալի մոտ բացասական հակումների առկայությունը կամ բացակայությունը, առկայության դեպքում՝ դրանց նվազեցման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները,

ե) պատժի կրումից ազատվելուց հետո դատապարտյալի բնակարանային, աշխատանքային, նյութակենցաղային ապահովվածությունը և հետագա ծրագրերը: (...)

(...) [Պ]ատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը լուծելիս գնահատման ենթակա վերոնշյալ չափանիշները սպառնիչ չեն, և դատարանը օրենքով իրեն վերապահված թույլատրելի հայեցողության շրջանակներում կարող է հաշվի առնել ցանկացած այլ հանգամանք՝ պայմանով, որ այն լինի իրական և հնարավորություն ընձեռի հիմնավորված հետևության հանգելու պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում պատժի նպատակների իրացվելիության հարցում:

(...) Վճարելի դատարանն արձանագրում է, որ կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը (մեղքի ձև և տեսակ, հանցագործության նպատակ ու շարժառիթ, հանցագործությամբ պատճառված վնասի չափ, հանցագործության կատարման եղանակ, հանցավոր մտադրության իրականացման աստիճան, հանցակցության դեպքում՝ հանցագործությանը հանցավորի մասնակցության աստիճան և այլն) թեև ունի նշանակություն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը լուծելու համար, սակայն այն ինքնին չի կարող պատժից վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու կամ բավարարելու հիմք դիտարկվել. նշյալ հանգամանքները պետք է գնահատվեն համակցության մեջ՝ դատապարտյալի անձի և պատժի կրման ընթացքում նրա դրսևորած վարքագծի համակողմանի ուսումնասիրության հետ մեկտեղ: Պատժից ազատելու քննարկվող տեսակի հարցը լուծելիս կատարված հանցագործության բնույթին և վտանգավորության աստիճանին որոշիչ նշանակություն չտալու վերաբերյալ Վճարելի դա-

տարանի սույն դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ դրանք, ընկած լինելով ոչ միայն հանցագործությունների դասակարգման (ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդված), այլև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների հիմքում և ապահովելով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման հիմնարար դրույթների իրացումը, դատարանի կողմից պարտադիր հաշվի են առնվում պատիժ նշանակելիս՝ պատժի տեսակը և չափը որոշելիս (ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդված): Հետևաբար քննարկվող ինստիտուտի գործադրման հարցը բացառապես հանցագործության որակական և քանակական հատկանիշների հիման վրա լուծելը կամ դրանց հիմնական, առաջնային նշանակություն վերագրելը չի կարող իրավաչափ համարվել:

(...) Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման արդյունքում դատարանի կայացրած որոշումը **պետք է հիմնված լինի (...)** նշված պայմանների և չափանիշների բազմակողմանի վերլուծության և դրանից բխող պատճառաբանված եզրահանգումների վրա: Ընդ որում, **պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և փաստական տվյալներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա՝ իր մեջ չընդգկելով վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ, քանի որ հակառակ պարագայում այդպիսի դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին (...):** Այլ կերպ՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը լուծելիս **դատարանները պետք է հստակ նշեն այն փաստական հանգամանքները, որոնք ընկած են համապատասխան միջնորդագրի բավարարման կամ մերժման հիմքում՝** գերծ մնալով ինչպես միջնորդագրերի կամայական մերժումներից, այնպես էլ դրանց անհիմն բավարարման դեպքերից (տե՛ս Արմեն Դազարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԱԳ/0002/12/16 որոշման 15-22-րդ կետերը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Ս.Սահակյանը Առաջին ատյանի դատարանի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ - հոդվածի 3-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա դատապարտվել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի 3 (երեք) ամիս ժամկետով (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը):

Նշանակված պատժի կեսը կրելուց հետո ԶԿՀ-ի վարչակազմը, նախապես ստանալով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունը, 2016 թվականի մարտի 23-ին միջնորդագիր է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ դատապարտյալ Ս.Սահակյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Առաջին ատյանի

դատարանը 2016 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ բավարարել է միջնորդագիրը՝ իր որոշման հիմքում դնելով այն, որ դատապարտյալ Ս.Սահակյանը պատժի կրման հետ միաժամանակ բուժում է ստանում ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ԶԿՀ-ում, նա պատիժը կրելու ընթացքում տույժի չի ենթարկվել, քաղաքացիական հայցով պարտավորություն չունի, արտաքին աշխարհի հետ կապը պահպանում է, բնավորությամբ հանգիստ է, շփվող, հաղորդակցվող, կոնֆլիկտներ չի ստեղծում, բնակարանային և նյութակենցաղային խնդիրներ չունի, ընթացիկ գնահատումների արդյունքները բարձր են, ռիսկայնության աստիճանը ցածր է, կատարած հանցագործության համար գղջում է, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ԶԿՀ-ի պետի բացատրության համաձայն՝ դրական վարքագիծ ունեցող դատապարտյալ է, փաստացի կրել է իր նկատմամբ նշանակված պատժի ավելի քան կեսը, մնացել է կրելու 11 (տասնմեկ) ամիս 22 (երկու) օր ժամկետով ազատագրվումը (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից պատշաճ ուսումնասիրության և գնահատման առարկա չի դարձվել դատապարտյալ Ս.Սահակյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները պատժի նպատակների իրագործման հնարավորությունն ապահովելու համատեքստում: Արդյունքում բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և մերժելով քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացրած միջնորդագիրը՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ վիճարկվող դատական ակտում տեղ գտած պատճառաբանությունները բավարար չեն հիմնավոր հետևության հանգելու այն մասին, որ դատապարտյալ Ս.Սահակյանը ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով *Ա.Ղազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած և սույն որոշման 13-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով դատապարտյալ Ս.Սահակյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և մերժելով քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը, իր եզրահանգման հիմքում չի դրել դատարանում հետազոտված և ստուգված որևէ փաստական տվյալ, որը բացառում է պատիժը կրելուց Ս.Սահակյանին պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորությունը, չի նշել, թե տվյալ դեպքում հատկապես որ չափանիշը չի հաղթահարել դատապարտյալ Ս.Սահակյանը պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար:

Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ ստորադաս դատարանը պատշաճ ուսումնասիրության և գնահատման չի ենթարկել դատապարտ-

յալ Ս.Սահակյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները՝ պատժի նպատակների իրագործման հնարավորությունն ապահովելու համատեքստում, իր դատական ակտում չի հստակեցրել, թե հատկապես որ հանգամանքն է անտեսել Առաջին ատյանի դատարանը, և դատապարտյալի անձին և նրա կատարած հանցագործությանը վերաբերող ինչպիսի փաստական տվյալներ են առկա գործում, որոնք բացառում են Ս.Սահակյանին պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորությունը:

Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, իր պատճառաբանությունների հիմքում դնելով ընդհանուր բնույթի, վերացական դատողություններ, չի նշել որևէ կոնկրետ հանգամանք, որը խոչընդոտում է Ս.Սահակյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելուն:

16. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը սխալ եզրահանգման է եկել ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը դատապարտյալ Ս.Սահակյանի կողմից կրելու կարիք չունենալու հարցում:

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և մերժելով քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի խախտում, ինչի արդյունքում ոչ ճիշտ է կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածը: Նշված խախտումներն ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են:

Միևնույն ժամանակ Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ հետազոտման ենթարկելով դատապարտյալ Ս.Սահակյանի վերաբերյալ նյութերը, եկել է հիմնավոր եզրահանգման նրա՝ պատժի հետագա կրման աննպատակահարմարության կապակցությամբ: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը, բավարարելով պատիժը կրելուց դատապարտյալ Ս.Սահակյանին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության՝ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 1-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դա-

տավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 13-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ դատապարտյալ Սահակ Լևոնի Սահակյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 1-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

40.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԳ/0230/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԳԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Հակոբ Սարգսի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 8-ի որոշման դեմ տուժող Երվանդ Թովմատովի ներկայացուցիչ Արմեն Սողոմոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) վարությամբ է գտնվում թիվ ԵԿԳ/0230/01/14 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Հակոբ Սարգսի Սկրտչյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2. Ամբաստանյալ Հ.Սկրտչյանի պաշտպան Հունան Բաբայանը 2015 թվականի հոկտեմբերի 6-ին միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել Հ.Սկրտչյանի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կամ

առանց խափանման միջոցը վերացնելու թույլատրել Հ.Սկրտչյանին բուժման նպատակով ժամանակավորապես մեկնելու ՀՀ-ից:

3. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի հունվարի 21-ին որոշում է կայացրել ամբաստանյալ Հ.Սկրտչյանի պաշտպան Հ.Բաբայանի միջնորդությունը մերժելու, իսկ թիվ ԵԿԳ/0230/01/14 քրեական գործի վարույթը՝ կասեցնելու մասին:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2016 թվականի ապրիլի 8-ին որոշում է կայացրել ամբաստանյալ Հ.Սկրտչյանի պաշտպան Հ.Բաբայանի վերաքննիչ բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 21-ի որոշումը մասնակիորեն բեկանելու, ամբաստանյալ Հ.Սկրտչյանին բուժման նպատակով ՀՀ-ից դուրս մեկնել թույլատրելու և բողոքարկված որոշումը մնացած մասով անփոփոխ թողնելու մասին: 5. Տուժող Երվանդ Թովմասովի ներկայացուցիչ Արմեն Սողոմոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները.

6. Ամբաստանյալ Հ.Սկրտչյանի պաշտպան Հ.Բաբայանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և նշանակվել քննության 2016 թվականի մարտի 14-ին՝ ժամը 11:00-ին: Վերաքննիչ դատարանի նույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետը սահմանում է. «Գործի քննության տեղի և ժամանակի մասին իրազեկել պաշտպանին և դատախազին» (տե՛ս Նյութեր, հատոր 2, թերթեր 9-10):

6.1. Վերաքննիչ դատարանի կողմից 2016 թվականի մարտի 14-ին, ինչպես նաև հետագայում ապրիլի 4-ին և ապրիլին 8-ին նշանակված դատական նիստերի տեղի և ժամանակի մասին տուժող Ե.Թովմասովին և նրա ներկայացուցիչ Ա.Սողոմոնյանին ծանուցելու վերաբերյալ որևէ ապացույց գործի նյութերում առկա չէ (տե՛ս Նյութեր, հատոր 2, թերթեր 9-16, 31, 35):

6.2. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 14-ի, ապրիլի 4-ի և ապրիլի 8-ի դատական նիստերին տուժող Ե.Թովմասովը և նրա ներկայացուցիչ Ա.Սողոմոնյանը չեն մասնակցել (տե՛ս Նյութեր, հատոր 2, թերթեր 35-37):

6.3. Վերաքննիչ դատարանն իր՝ 2016 թվականի ապրիլի 8-ի որոշումը ուղարկել է միայն պաշտպան Հ.Բաբայանին (տե՛ս Նյութեր, հատոր 2, թերթեր 46-47), իսկ մեղադրողը և տուժող Ե.Թովմասովը հիշյալ դատական ակտի պատճենը ստացել են 2016 թվականի մայիսի 19-ին Առաջին ատյանի դատարանում քրեական գործի քննության ժամանակ (տե՛ս Նյութեր, հատոր 2, թերթ 67):

6.4. Ըստ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 21-ի որոշման.

«10.04.2014 թվականին Հակոբ Սարգսի Սկրտչյանը ձերբակալվել է:

13.04.2014 թվականի որոշմամբ Հակոբ Սարգսի Սկրտչյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 04-ի որոշմամբ (...) քրեական գործն ըստ մեղադրանքի Հակոբ Սարգսի Սկրտչյանի՝ (...) նշանակվել է դատաքննության (...):

Հակոբ Սարգսի Սկրտչյանի պաշտպան Հունան Բարսյանի կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան ամբաստանյալին կալանքից ազատելու և փորձաքննություն նշանակելու մասին:

08.10.2014 թվականին դատարանը որոշում է կայացրել Հակոբ Սկրտչյանի նկատմամբ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին:

10.12.2014 թվականին (...) դատարան է ստացվել ամբաստանյալ Հակոբ Սարգսի Սկրտչյանի նկատմամբ կատարված միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի փորձաքննության եզրակացությունը, համաձայն հետևություններ մասի՝

1. Ներկայում Հակոբ Սկրտչյանը տառապում է հետևյալ հիվանդություններով՝

լյարդի ցիրրոզ՝ դեկոմպենսացիայի փուլում, պորտալ հիպերտենզիա, լյարդ-բջջային անբավարարություն 3-րդ աստիճանի, ասցիտ, սպլենոմեգալիա, էնցեֆալոպաթիա, ստորին վերջույթների հետտրոմբոտիկ հիվանդություն:

2. Ներկայիս առողջական վիճակով Հակոբ Սկրտչյանը չի կարող գտնվել անազատության մեջ, նրա բուժումը հնարավոր չէ իրականացնել անազատության պայմաններում և Հ.Սկրտչյանը կարիք ունի ստացունար հետազոտությունների և բուժման՝ նեղ մասնագիտացված բաժանմունքում, ապահովելով համապատասխան մասնագետների /լյարդաբանի, անոթաբանի, սրտաբանի/ դինամիկ հսկողություն, և հնարավոր ծանրագույն բարդությունների առաջացման դեպքում՝ համապատասխան ինտենսիվ բուժական միջոցառումների կատարում: Հ.Սկրտչյանի հիվանդությունները համաձայն ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի 825-Ն որոշման 35 կետի՝ դասվում են պատիժը կրելուն խոչընդոտ հանդիսացող ծանր հիվանդությունների շարքին:

3. Հ.Սկրտչյանը ներկայիս առողջական վիճակով չի կարող մասնակցել դատական քննությանը:

2014 թվականի դեկտեմբերի 20-ին դատարանը (...) որոշում է կայացրել ամբաստանյալ Հակոբ Սկրտչյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխելու և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին, քանի որ ամբաստանյալ Հակոբ Սկրտչյանը իր առողջական վիճակով ըստ փորձաքննության եզրակացության չի կարող գտնվել անազատության մեջ: (...)

2015 թվականի փետրվարի 16-ին դատարան է ստացվել (...) պաշտպան Հունան Բաբայանի միջնորդությունը՝ ամբաստանյալ Հակոբ Մկրտչյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված ստորագրություն չհեռանալու մասին վերացնելու վերաբերյալ: Դատարանի կողմից (...) միջնորդությունը մերժվել է:

2015 թվականի հուլիսի 17-ին մեղադրող Գ.Սարգսյանի կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան՝ ամբաստանյալ Հ.Մկրտչյանի նկատմամբ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ, որը նույն օրը դատարանի կողմից բավարարվել է:

2015 թվականի սեպտեմբերի 24-ին (...) դատարան է ստացվել ամբաստանյալ Հակոբ Սարգսի Մկրտչյանի նկատմամբ կատարված միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի փորձաքննության եզրակացությունը, համաձայն հետևություններ մասի՝

Հ.Մկրտչյանի ներկայիս առողջական վիճակը ծանր է՝ պայմանավորված հիվանդության ծանր կլինիկական ընթացքով բարդություններով, որոնք պահանջում են անկողնային ռեժիմ, և հանդիսանում են խոչընդոտ նրա ինքնուրույն տեղաշարժվելու համար:

2015 թվականի հոկտեմբերի 06-ին դատարան է ստացվել (...) պաշտպան Հունան Բաբայանի միջնորդությունը՝ ամբաստանյալ Հակոբ Մկրտչյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված ստորագրություն չհեռանալու մասին վերացնելու կամ առանց խափանման միջոցը վերացնելու թույլատրել Հ.Մկրտչյանին բուժման նպատակով ժամանակավորապես մեկնելու ՀՀ-ից, ինչպես նաև Դատարանից խնդրել է 1-ին կետում նշված պահանջը մերժելու դեպքում ժամանակավորապես Հ.Մկրտչյանին տրամադրել նրա անձնագիրը՝ հաշմանդամության թոշակը ձևակերպելու համար:

Դատարանը ուսումնասիրելով միջնորդությունը և կից ներկայացված փաստաթղթերը գտնում է, որ այն ենթակա [է] մերժման, քանի որ համաձայն (...) Մկրտչյանի նկատմամբ կատարված միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի փորձաքննության եզրակացության, հետևություններ մասի՝

Հ.Մկրտչյանի ներկայիս առողջական վիճակը ծանր է՝ պայմանավորված հիվանդության ծանր կլինիկական ընթացքով բարդություններով, որոնք պահանջում են անկողնային ռեժիմ, և հանդիսանում են խոչընդոտ նրա ինքնուրույն տեղաշարժվելու համար:

Այսինքն դատարանի 2015 թվականի հուլիսի 17-ի որոշման հիման վրա ստացված եզրակացությունում առկա չէ որևէ նշում Հակոբ Մկրտչյանի առողջական վիճակի, այսինքն ՀՀ-ից դուրս բուժումը շարունակելու մասին: (...)» (տես Նյութեր, հատոր 1, թերթեր 206-211):

6.5. Ըստ Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 8-ի որոշման. «Սույն գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի վարույթում քննվող թիվ ԵԿԳ/0230/01/14 քրեական գործով (...)

17.07.2015թ. որոշում է կայացվել ամբաստանյալի նկատմամբ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին:

Պարզաբանման համար փորձագետին առաջադրվել է հետևյալ հարցը. Հ. Սկրտչյանը ներկայումս կարող է մասնակցել դատական քննությանը, թե ոչ:

Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովը Հակոբ Սկրտչյանի վերաբերյալ 22.09.2015թ. տվել է եզրակացություն հետևյալի մասին.

/.../ <<Հետևություններ. Հ.Սկրտչյանի ներկայիս առողջական վիճակը ծանր է՝ պայմանավորված հիվանդության ծանր կլինիկական ընթացքով, բարդություններով, որոնք պահանջում են անկողնային ռեժիմ և հանդիսանում են խոչընդոտ նրա ինքնուրույն տեղաշարժվելու համար>>:

Նշված եզրակացության <<Բժշկական փաստաթղթերի տվյալները>> բաժնում նշվել է. /.../ Ինչպես երևում է <<Շենգավիթ>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ի առ 12.01.15թ. տեղեկանքի - /.../ <<Բժշկական խորհրդատվություն: Հիվանդին ցուցված է վիրահատական բուժում պորտոկավալ շունտավորում կամ պորտոկավալ պրոտեզավորում: ՀՀ-ում իրականացնել տեխնիկապես անհնարին է>>:

(...)

(...) Վերաքննիչ դատարանը վերլուծելով սույն գործի նյութերը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել գործում առկա մի շարք փաստական տվյալ, որոնք էական նշանակություն ունեն սույն գործի լուծման համար:

Այսպես՝ համաձայն ՀՀ ԱՆ աշխատակազմի ղեկավար Ա.Կարապետյանի 2015թ. փետրվարի 13-ի թիվ 1440-15 գրության.

<<ՀՀ առողջապահության նախարարին ուղղված Ձեր 23.01.2015թ. թիվ 03/015 գրության կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունը կազմակերպել է քաղ. Հակոբ Սարգսի Սկրտչյանի խորհրդատվությունը ՀՀ ԱՆ առաջատար մասնագետների մոտ: Հիվանդի մոտ ախտորոշվել է Բադրա-Կիարիի հիվանդություն, գենետիկ թրոմբոֆիլիա, լյարդի ցիրրոզ «Բ» ստադիա, պորտալ հիպերթենզիա, սպլենոմեգալիա, կերակրափողի և կարդիայի երակների վարիկոզ լայնացում I - II աստիճան, արտահայտված ասցիտ (ջրգողություն):

Քաղաքացի Հակոբ Սկրտչյանի բուժման համար անհրաժեշտ է իրականացնել տրանսյուգուլյար պորտակավալ շունտավորում «TIPS» և հետագայում լյարդի փոխպատվաստում: Վերոնշյալ վիրահատությունները Հայաստանի Հանրապետության՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ներկայում չի իրականացվում>>:

(...)

(...) Առաջին ատյանի դատարանն (...) դատական ակտում պատճառաբանել է, որ դատարանի 2015 թվականի հուլիսի 17-ի որոշման հիման վրա ստացված եզրակացությունում առկա չէ որևէ նշում Հակոբ Սկրտչյանի առողջական վիճակի, այսինքն ՀՀ-ից դուրս բուժումը շարու-

նա[կե]լու մասին, սակայն անտեսել է այն հանգամանքը, որ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ Միջ-գերատեսչական բժշկական հանձնաժողովի առջև հարց չի բարձրացվել ՀՀ-ում Հ.Սկրտչյանի բուժման անհնարինությունը պարզելու մասին:

(...)» (տե՛ս Նյութեր, հատոր 2, թերթեր 38-45):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներ-քնիչյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն ամբաս-տանյալ Հ.Սկրտչյանի պաշտպան Հ.Բաբայանի բողոքի քննությանը տու-ժող Ե.Թովմասովին մասնակից չդարձնելով՝ խախտել է օրենքով երաշ-խավորված՝ արդար դատաքննության իրավունքը, օրենքի առջև բոլորի հավասարության և մրցակցության սկզբունքները:

Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ Վե-րաքննիչ դատարանն անտեսել է քրեադատավարական օրենքի պահանջ-ներն այն մասին, որ.

ա) դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակա-լությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրա-ժեշտ պայմաններ,

բ) կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություննե-րով,

գ) դատարանն ապահովում է առաջին և վերաքննիչ ատյաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը:

7.1. Բողոքաբերը նշել է նաև, որ դատական ստուգման իրականաց-ման մասին տուժող Ե.Թովմասովին և նրա ներկայացուցչին որևէ կերպ չժանուցելով՝ Վերաքննիչ դատարանը գրկել է դատավարության մասնա-կիցներին՝ իրենց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, բո-ղոքի քննության ընթացքում իրենց կարծիքներն ու դիրքորոշումներն ար-տահայտելու հնարավորությունից:

7.2. Բողոքաբերը շեշտել է, որ վերոնշյալ էական խախտումներով կայացված անօրինական որոշումը բոլոր դեպքերում ենթակա է բեկան-ման, ուստի ինքն այդ պատճառով չի անդրադառնում բողոքարկված ո-րոշման հիմքում դրված պատճառաբանություններին:

8. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքն-նիչ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 8-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգու-
մը.**

9. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավա-
կան հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն ապահովել է արդյոք
անձի արդար դատաքննության իրավունքն այն պայմաններում, երբ տու-
ժողին և նրա ներկայացուցչին չի ծանուցել նշանակված դատական նիս-
տի տեղի և ժամանակի մասին:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 16-րդ
և 21-րդ կետերի համաձայն՝

*«16) կողմ՝ մարմինները և անձինք, որոնք քրեական դատավարու-
թյունում մրցակցային հիմունքներով իրականացնում են քրեական հե-
տապնդում կամ պաշտպանություն.*

*21) մեղադրանքի կողմ՝ քրեական հետապնդման մարմինները, ինչ-
պես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրանց օրինական ներ-
կայացուցիչներն ու ներկայացուցիչները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մա-
սի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջնե-
րի պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջա-
միտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրա-
վունք»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համա-
ձայն՝

*«1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության
սկզբունքի հիման վրա:*

*2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը
տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և
անձինք:*

(...)

*4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվութ-
յունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմե-
րի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ
հետազոտման անհրաժեշտ պայմաններ (...):*

*5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական
դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը
պաշտպանելու հավասար հնարավորություններով (...):*

(...)

*7. Դատարանն ապահովում է առաջին ատյանի և վերաքննիչ դա-
տարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը
(...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մա-
սի 10-րդ կետի համաձայն՝ *«Տուժողը, սույն օրենսգրքով սահմանված
կարգով, իրավունք ունի մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դա-
տարանների նիստերին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ *«(...) Լիազորողի շահերի պաշտպանության համար տուժողի (...) ներկայացուցիչը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին (...):»*

Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Գործի քննության տեղի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են»*:

Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ մրցակցության սկզբունքն արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր է. այդ սկզբունքի իմաստով դատաքննության ժամանակ և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերի համար պետք է հավասարապես երաշխավորվի ողջամիտ հնարավորություն՝ իր գործը ներկայացնելու այնպիսի պայմաններում, որը նվազ բարենպաստ չի լինի, քան այն հնարավորությունը, որը տրամադրվում է մրցակից կողմին: Այսինքն՝ մրցակցության սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել կողմերի հավասարության հիմնարար պահանջի հետ միասնության մեջ, ինչը, ի թիվս այլոց, ենթադրում է, որ կողմը պետք է հնարավորություն ունենա պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը, ծանոթանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին և ապացույցներին: Նշվածն արդար դատական քննության իրավունքի ապահովման կարևորագույն նախապայման է, քանի որ քննության իրականացումն առանց կողմերի հավասար տեղեկացվածության նշանակում է մրցակցության և կողմերի հավասարության հիմնարար դրույթների անհամաչափ ձևականացում և առարկայագրկում: Այլ խոսքով՝ ինչպես առաջին ատյանի դատարանը, այնպես էլ նշյալ դատարանի կայացրած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պարտավոր են միջոցներ ձեռնարկել կողմերի հավասարության և մրցակցային դատավարության ապահովման ուղղությամբ: Այսպիսով, դատական քննությանը մասնակցելը կողմերի՝ քրեադատավարական օրենքով երաշխավորված իրավունքն է, իսկ նշված իրավունքի ապահովման պարտականությունը կրում է դատարանը: Գործի քննությանը մասնակցելու կողմերի իրավունքը դատարանն ապահովում է գործի քննության տեղի և ժամանակի մասին նրանց պատշաճ կերպով ծանուցելու միջոցով: Այլ կերպ՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պարտավոր է բողոքը քննելու օրվա և ժամի մասին նախապես իրազեկել ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմերին (տե՛ս, mutatis mutandis, *Ամալյա Ղարիբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԿԳ/0008/06/11, *Նոյ Մուսայելյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԿԳ-1/0007/06/12 որոշումները):

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Հ.Սկրտչյանի պաշտպան Հ.Բաբայանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և նշանակվել քննության 2016 թվականի մարտի 14-ին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Վերաքննիչ դատարանի կողմից 2016 թվականի մարտի 14-ին, ինչպես նաև հետագայում ապրիլի 4-ին և ապրիլի 8-ին նշանակված դատական նիստերի տեղի և ժամանակի մասին տուժող Ե.Թովմասովը և նրա ներկայացուցիչ Ա.Սողոմոնյանը չեն ծանուցվել (տե՛ս սույն որոշման 6.1.-րդ կետը):

Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 8-ի դատական նիստին, որի արդյունքում ամբաստանյալ Հ.Սկրտչյանի պաշտպան Հ.Բաբայանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, տուժող Ե.Թովմասովը և նրա ներկայացուցիչ Ա.Սողոմոնյանը չեն մասնակցել (տե՛ս սույն որոշման 6.2.-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր՝ 2016 թվականի ապրիլի 8-ի որոշումը ուղարկել է միայն պաշտպան Հ.Բաբայանին, իսկ տուժող Ե.Թովմասովը հիշյալ դատական ակտի պատճենը ստացել է 2016 թվականի մայիսի 19-ին Առաջին ատյանի դատարանում քրեական գործի քննության ժամանակ (տե՛ս սույն որոշման 6.3.-րդ կետը):

12. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 10-րդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը տուժող Ե.Թովմասովին և նրա ներկայացուցիչ Ա.Սողոմոնյանին չի ծանուցել գործի քննության տեղի և ժամանակի մասին, ինչի արդյունքում վերջիններս զրկվել են գործի դատական քննությանը մասնակցելու հնարավորությունից, հետևաբար նաև հնարավորություն չեն ունեցել պաշտպանելու իրենց իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկանալու և մեկնաբանելու մյուս կողմի ներկայացրած փաստարկները, այսինքն՝ հայտնվել են խիստ անբարենպաստ վիճակում մյուս կողմի համեմատությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, տուժողին և նրա ներկայացուցչին չծանուցելով նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին, թույլ է տվել մրցակցության սկզբունքի խախտում, ինչն էլ իր հերթին հանգեցրել է ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտմանը: Այլ կերպ՝ տուժողին և նրա ներկայացուցչին չծանուցելով նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին՝ Վերաքննիչ դատարանը չի ապահովել անձի արդար դատաքննության իրավունքը:

13. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օ-

րենսգրքի 17-րդ, 23-րդ, 390-րդ հոդվածների խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների իմաստով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Հակոբ Սարգսի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 8-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

41.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԳ/0226/11/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ
դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
դատախազ

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս.ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ
քրեական դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 17-ի որոշման դեմ ՀՀ
զլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի սեպտեմբերի 18-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի հետաքննիչ Հ.Բելիչկովի որոշմամբ Ս.Փիրումյանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 15-ին ներկայացրած հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Վերոնշյալ որոշման դեմ Ս.Փիրումյանի ներկայացուցիչ Գ.Գալիկյանը բողոք է ներկայացրել վերադաս դատախազին՝ խնդրելով վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը և հարուցել քրեական գործ:

2015 թվականի հոկտեմբերի 19-ին Երևան քաղաքի դատախազ Ա.Գավթյանի որոշմամբ դիմողի ներկայացուցիչ Գ.Գալիկյանի բողոքը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ, և հաստատվել է նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման օրինականությունը:

2. 2015 թվականի նոյեմբերի 11-ին դիմող Ս.Փիրումյանի ներկայացուցիչ Գ.Գալիկյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով պարտավորեցնել Երևան քաղաքի դատախազին վերացնել դիմող Ս.Փիրումյանի իրավունքի խախտումը, կայացնել որոշում ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի հետաքննիչ Հ.Բելիչկովի՝ 2015 թվականի սեպտեմբերի 18-ի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու մասին, հարուցել քրեական գործ և իրականացնել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ ներկայացուցիչ Գ.Գալիկյանի բողոքը բավարարել է՝ վերացնելով նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2015 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը:

3. Դատախազ Ս.Անդրեասյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2016 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որը վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2015 թվականի սեպտեմբերի 18-ի որոշման համաձայն՝ «(...) Նյութերի նախապատրաստման ընթացքում Ս.Փիրումյանը բացատրություն է տվել (...) Գ.Արշակյանը իր բացատրությամբ հերքել է Ս.Փիրումյանի տոկոսով գումար տրամադրելու հանգամանքը (...) Ուսումնասիրվել են նաև Ս.Փիրումյանի և Գ.Արշակյանի կողմից ներկայացված փաստաթղթերը (...)

Այսպիսով նախապատրաստված նյութերով որևէ փաստական տվյալներ ձեռք չեն բերվել և չի հիմնավորվել Գ.Արշակյանի կողմից Ս.Փիրումյանին տոկոսով գումար տրամադրելու վերաբերյալ, ուստի Գ.Արշակ-

յանի արարքում բացակայում է ՀՀ քր. օր-ի 213 հոդվ. 1-ին մասով նախատեսված հանցագործության դեպքը:» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 9):

6. Առաջին ատյանի դատարանը, բավարարելով դիմողի ներկայացուցչի բողոքը, նշել է՝ «(...) [Գ]ատարանը արձանագրում է, որ (...) նյութերի նախապատրաստման ընթացքում վարույթն իրականացնող մարմինը բացատրություն չի վերցրել Սուսան Փիրումյանի որդի՝ Արարատ Բայանդուրյանից, ով մասնակից է եղել ամբողջ գործընթացին՝ Սուսան Փիրումյանի կողմից 41.560.000 ՀՀ դրամ գումար վերադարձնելու մասին ստացականում ստորագրել է նաև Ս.Փիրումյանի որդի՝ Բայանդուրյանը: Բացի այդ բացատրություններ չեն վերցվել Հարություն Բայանդուրյանից և Վահան Ծատուրյանից, որի արդյունքում հնարավոր է առաջանար հակասություններ, որի դեպքում պարտադիր կդառնար կատարելու առերես հարցաքննություններ: Վարույթն իրականացնող մարմինը նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություններ է վերցրել միայն Սուսան Փիրումյանից և Գևորգ Արշակյանից ու հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Գևորգ Արշակյանը հերքել է սոկոսով գումար տալու փաստը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում չիրականացնելով որոշում է կայացվել՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ 2012 թվականի մարտի 22-ին Սուսան Փիրումյանի և Գևորգ Արշակյանի միջև կնքված հիփոթեքի պայմանագրով՝ «ի սպառնովումն Երևան քաղաքում կողմերի միջև 22.03.2012 թ. կնքված փոխառության պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման, որի գումարն է 19.440.000 ՀՀ դրամ գումար, յուրաքանչյուր ամիս 540.000 ՀՀ դրամ, ետ վերադարձնելու պայմանով, մարման ժամկետը մինչև 22.03.2015թ.», սակայն նյութերում առկա Ս.Փիրումյանի կողմից տրված ստացականի համաձայն նա նույն օրը պարտավորվել է մինչև 22.03.2015 թվականը վերադարձնել 41.560.000 ՀՀ դրամ գումար՝ յուրաքանչյուր ամիս վճարելով 1.155.000 ՀՀ դրամ գումար, այսինքն հետաքննիչը չի պարզել, թե ինչու է նույն օրը կնքվել և հիփոթեքի պայմանագիր և տրվել ստացական, բացի այդ չի պարզվել, թե տրված ստացականի մեջ նշված 41.560.000 ՀՀ դրամ գումարի մեջ մտնում է հիփոթեքի պայմանագրով նշված 19.440.000 ՀՀ դրամ գումարն, թե ոչ ու նոտարի մոտ կազմված և նոտարի կողմից վավերացված հիփոթեքի պայմանագրում ինչու է նշվել 19.440.000 ՀՀ դրամ գումար, այլ ոչ թե 41.560.000 ՀՀ դրամ գումար:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ վերը նշված հանգամանքների առկայության պայմաններում բացակայում է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը, որպիսի պայմաններում խախտվել է բողոքաբերի իրավունքներն ու օրինական շահերը, ուստի ՀՀ ռատիկանության Կենտրոնականի բաժնի հետաքննիչ Ա.Բելիչկովի 18.09.2015 թվականի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը ենթակա է վերացման: (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 46-47):

7. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, արձանագրել է՝ «(...) Առաջին ատյանի դատարանը գտել է, որ (...) բացակայում է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը, որպիսի պայմաններում խախտվել են բողոքաբերի իրավունքներն ու օրինական շահերը, որպիսի մոտեցումը Վերաքննիչ դատարանի համար նույնպես ընդունելի է:

(...)

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով ներկայացված վերաքննիչ բողոքը և ներկայացված նյութերը, գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանի վերաքննիչ բողոքը պետք է մերժել և օրինական ուժի մեջ թողնել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը: (...)» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 52-53):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, վկայակոչելով և վերլուծելով գործի փաստական հանգամանքները՝ վերջինս գտել է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն օրինական և հիմնավորված է, հետևաբար այն վերացնելու վերաբերյալ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերն անհիմն են: Բողոքի հեղինակի կարծիքով ստորադաս դատարաններն անտեսել են, որ նշված հարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ և ենթակա են պարզման քաղաքացիական դատավարության կարգով:

9. Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ վիճարկվող դատական ակտերը հակասում են Գ.Ղևոնդյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0044/11/13 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին: Այսպես՝ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրենց լիազորությունների շրջանակից և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը գնահատելու փոխարեն դատական ակտերով անդրադարձել են հարցերի այնպիսի շրջանակի, որոնք գտնվում են բացառապես նախնական քննության մարմնի իրավասության ներքո: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը դատական ակտում փաստել է, որ վարույթն իրականացնող մարմինը բացատրություն չի վերցրել Ս.Փիրումյանի որդուց՝ Արարատ Բայանդուրյանից, ով մասնակից է եղել ամբողջ գործընթացին, բացատրություններ չեն վերցվել նաև

Հարություն Բայանդուրյանից և Վահան Ծատուրյանից, ինչի արդյունքում հնարավոր է, որ առաջանային հակասություններ և պարտադիր դառնար առերես հարցաքննություններ կատարելը, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինը չի պարզել գործի համար էական նշանակություն ունեցող որոշ այլ հանգամանքներ:

Առաջին ատյանի դատարանի այն պնդման կապակցությամբ, որ հետաքննիչը չի կատարել պատշաճ քննություն՝ պարզելու, թե ինչու է միևնույն օրը գրվել և՛ ստացական, և՛ կնքվել պայմանագիր, բողոքաբերն ընդգծել է, որ խոսքը վերաբերում է տարբեր գումարների տրամադրմանը, և այդ փաստը որևէ նշանակություն չունի վաշխառության հանցակազմի հաստատման կամ հերքման համար:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 23-ի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 17-ի որոշումները, կայացնել նոր դատական ակտ՝ մերժելով դիմողի ներկայացուցիչ Գ.Գալիկյանի ներկայացրած բողոքը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը հակասում են արդյոք *Գ.Ղևոնդյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմանը:

12. ՀՀ Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի խմբագրությամբ) 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Վճռաբեկ դատարանի՝ նախկին-

նում կայացված որոշումը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքերի առավել մեծ ընդհանրություն (*Վճռաբեկ դատարանը նույնաբովանդակ դիրքորոշում է արտահայտել Անահիտ Միմոնյանի գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԳ/0055/11/13 որոշման 14-15-րդ կետերում*):

13. Վճռաբեկ դատարանը Գ. Առնոյանի գործով որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [*Բրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում դատարանը վերահսկողություն չի իրականացնում նախնական քննության ընթացքի նկատմամբ: Դատարանը չի միջամտում քրեական դատավարության ընթացքին, չի անդրադառնում բողոքարկվող որոշման կայացման համար հիմք հանդիսացած քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությանը կամ նպատակահարմարությանը: Այս հարցերը գտնվում են նյութերի նախապատրաստությունն իրականացնող մարմինների բացառիկ լիազորությունների սահմաններում, իսկ քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ տվյալների լրիվությունն ապահովելու նպատակով հետաքննության մարմնին կամ քննիչին ղեկավար ցուցումներ և հանձնարարություններ կարող է տալ միայն դատախազը: (...)*

Դատարանի խնդիրն այս դեպքում կայանում է նրանում, որպեսզի պարզվի, թե վիճարկվող որոշումը կայացվել է արդյոք նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան և բխում է արդյոք նյութերի նախապատրաստության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներից: (...)

(...) [*Միջնադատական վարույթի նկատմամբ հետագա վերահսկողության շրջանակներում դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմ-*

նափորվածությունը, դատարանը պետք է պարզի, թե հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար են արդյոք հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են: Բացի այդ, դատարանի խնդիրն է պարզել, թե քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից նյութական և դատավարական օրենսդրության պահանջները չպահպանելու հետևանքով խախտվել են արդյոք անձի իրավունքները և ազատությունները:

Ի թիվս այլոց, պարզաբանման ենթակա են հետևյալ հարցերը՝

1) պահպանվե՞լ է արդյոք հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված կարգը,

2) առկա՞ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված օրինական հիմքերը,

3) պահպանվե՞լ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված պահանջները: (...» (տե՛ս Գագիկ Ղևոնդյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0044/11/13 որոշման 16-րդ և 18-րդ կետերը):

14. Սույն գործի փաստերից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննիչ Հ.Բելիչկովի՝ 2015 թվականի սեպտեմբերի 18-ի և բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի դատախազ Ա.Գավթյանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 19-ի որոշումների դեմ դիմող Ս.Փիրումյանի ներկայացուցիչ Գ.Գալիկյանի բողոքը բավարարել և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացրել է այն պատճառաբանությամբ, որ վարույթն իրականացնող մարմինը չի կատարել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ինչի արդյունքում խախտվել են բողոքաբերի իրավունքներն ու օրինական շահերը: Մասնավորապես՝ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ բացատրություն չի վերցվել Ս.Փիրումյանի որդի Ա.Բայանդուրյանից, Հ.Բայանդուրյանից, Վ.Ծատուրյանից՝ ենթադրաբար դատողություն անելով, որ դրանց արդյունքում հնարավոր է, որ առաջանային հակասություններ, ինչի պարագայում առերես հարցաքննությունների կատարումը պարտադիր կդառնար (տե՛ս սույն որոշման 5-6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Նախորդ կետում վերլուծված փաստական հանգամանքները զնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը հակասում են *Գ. Ղևոնդյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ *Գ. Ղևոնդյանի* գործով կայացված դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող և սույն որոշման 13-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով առավել ընդհանրական են, և դրանց կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն և *Գ. Ղևոնդյանի* գործերի փաստական հանգամանքների ընդհանրությունն այն է, որ երկու դեպքում էլ դատարանները դատական ստուգման են ենթարկել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը և անդրադարձել վարույթն իրականացնող մարմնի կողմից դատավարական գործողություններ կատարելու նպատակահարմարությանը: Նշված փաստական հանգամանքների համընկնումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս պնդելու, որ *Գ. Ղևոնդյանի* գործով որոշման հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) սույն գործով որոշում կայացնելիս ստորադաս դատարանների համար պարտադիր են եղել:

Մինչդեռ ստորադաս դատարանները, անտեսելով *Գ. Ղևոնդյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում անդրադարձել են դատավարական գործողություններ կատարելու նպատակահարմարությանը (*«վարույթն իրականացնող մարմինը բացատրություն չի վերցրել Սուսան Փիրումյանի որդի Արարատ Բայանդուրյանից (...) Հարություն Բայանդուրյանից և Վահան Ծատուրյանից, որի արդյունքում հնարավոր է առաջանար հակասություններ, որի դեպքում պարտադիր կդառնար կատարելու առերես հարցաքննություններ:»*):

16. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանի որ անտեսել են Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի՝ *Գ. Ղևոնդյանի* գործով որոշման հիմնավորումները, որոնք նրանց համար պարտադիր են եղել: Միևնույն ժամանակ ստորադաս դատարանները որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չեն հիմնավորել, որ այն կիրառելի չէ սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ:

Արդյունքում ստորադաս դատարանները դուրս են եկել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության կապակցությամբ իրականացվող դատական վերահսկողության սահմաններից՝ թույլ տալով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով և ՀՀ ք-

րեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքի խախտում:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործով դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, մասնավորապես խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: Խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Սուսան Փիրումյանի ներկայացուցիչ Գ.Գ.ալիկյանի բողոքը բավարարելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 23-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 17-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

42.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԳ/0303/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ **Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ՝ **Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ **Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
ամբաստանյալ՝ **Ա.ՄԱԴՈՅԱՆԻ**

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արթուր Արկադիի Մադոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 18-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Մադոյանի պաշտպան Ա.Արզումանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում 2015 թվականի օգոստոսի 11-ին Ն.Ստեփանյանի հաղորդման հիման վրա հարուցվել է թիվ 12137515 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ թիվ 12137515 քրեական գործի վարույթը կարճվել է Արթուր Մադոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ, 147-րդ հոդվածներով, իսկ Նունե Ստեփանյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ

հողվածով, և նրանց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ վերջիններիս արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

Երևան քաղաքի դատախազի՝ 2015 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ թիվ 12137515 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2015 թվականի հոկտեմբերի 11-ի որոշումը վերացվել է:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ Ա.Մադոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով: Ա.Մադոյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2015 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ Ա.Մադոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

2015 թվականի դեկտեմբերի 17-ին Ա.Մադոյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 10-ի դատավճռով Ա.Մադոյանը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում արդարացվել է՝ ճանաչվել և հռչակվել է նրա անմեղությունն այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ մեղսագրված արարքին վերջինիս մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով:

Ա.Մադոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, վերացվել է:

3. Մեղադրող Տ.Ուզոյանի և տուժող Ն.Ստեփանյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի մայիսի 18-ի որոշմամբ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 10-ի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել անբաստանյալ Ա.Մադոյանի պաշտպան Ա.Արզումանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ անբաստանյալ Ա.Մադոյանի պաշտպան Ա.Արզումանյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Մադոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա, 2015 թվականի օգոստոսի 2-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Նար-Դոսի 34 շենքի 10 բնակարանում իր դուստր Յանա Մադոյանին տեսակցելու հետ կապված հարցերի շուրջ վիճարանել է իր նախկին կին Նունե Ստեփանյանի հետ, որի ընթացքում ձեռքերով 3-4 անգամ հարվածել է վերջինիս՝ աջ բազկի ս/3 ներսային մակերեսի արյունազեղման ձևով նրան պատճառելով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 129):

6. Դատաբժշկական փորձաքննության թիվ 2219 եզրակացությամբ արձանագրվել է. «(...) [Ն.Ստեփանյանի] աջ բազկի ս/3-ի ներսային մակերեսին առկա է 2*1,7սմ չափսերի դժգույն կարմրավուն գույնի թույլ կապտավուն երանգով արյունազեղում:

(...) Ն.Ստեփանյանի ստացած մարմնական վնասվածքը աջ բազկի ս/3-ի ներսային մակերեսի արյունազեղման ձևով պատճառվել է բուք առարկայի ներգործության հետևանքով, հնարավոր է նշված ժամանակին և հանգամանքներում, որը առողջության թեթև վնասի հատկանիշներ չի պարունակում» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 9-10):

6.1. Տուժող Ն.Ստեփանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ա.Մադոյանը բնակարանում վիճաբանության ընթացքում ձեռքերով 3-4 անգամ հարվածել է իր ձեռքերին, որի հետևանքով առաջացել է մեկ վնասվածք՝ կապտուկ (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 67):

6.2. Ամբաստանյալ Ա.Մադոյանը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ «(...) [Վ]իճաբանության ժամանակ Ն.Ստեփանյանին չի հարվածել, ավելին նրան չի հրել, քանի որ նա գտնվել է իրենից մոտ 2 մետր հեռավորության վրա, իսկ իրենց միջև՝ իրեն ավելի մոտ գտնվել է Ս.Մադոյանը: (...) Ամբողջ վիճաբանությունը տևել է 3-4 րոպե:

Կապված երեխաների նախաքննական ցուցմունքների հետ՝ կարծում է, որ այդ մեղադրող ցուցմունքները նրանք տվել են նախկին կնոջ հորդորներով, քանի որ ավագ դատերը խոստացել էր գնել iPhone 6 հեռախոս, իսկ կրտսերին՝ ճանապարհորդություն ԱՄՆ՝ Դիսնեյլենդ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 66-67):

6.3. Վկա Սիլվա Մադոյանը 2015 թվականի օգոստոսի 25-ի իր ցուցմունքում հայտնել է. «(...) [2]գում էի ոնցա հայրս հարվածում մորս ձեռքերով ձեռքերին, (...) պապան մամային մոտավորապես խփել է 3 անգամ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 31-32):

2015 թվականի դեկտեմբերի 7-ին առերես հարցաքննվելով հոր՝ Ա.Մադոյանի հետ, Ս.Մադոյանը հայտնել է. «(...) [Ե]ս պարզապես նախորդ ցուցմունքներում հարվածել ասելով ի նկատի եմ ունեցել հրելը, որի

համար գղջում եմ, խնդրում եմ հիմք ընդունել իմ ներկայիս ցուցմունքը» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 106-107):

Լրացուցիչ հարցաքննության ընթացքում վկան հայտնել է. «(...) [Պ]արզապես նախկինում մի փոքր սխալ ցուցմունք եմ տվել և այդ սխալը առերեսման ժամանակ շտկել եմ: Նախկինում ես ցուցմունքը տվել եմ ենթադրությունների հիման վրա, իսկ այժմ, ավելի ճիշտ առերեսման ժամանակ ես տվել եմ ճշմարիտ ցուցմունք և խնդրում եմ այն ընդունել որպես հիմք» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 108):

Դատաքննական ցուցմունքում վկա Ս.Մադոյանը նշել է, որ ծնողների միջև տեղի ունեցած վիճաբանության ժամանակ հայրը չի հարվածել մորը: Պարզաբանելով հիշյալ ցուցմունքների հակասական լինելը՝ վկան պնդել է, որ նախաքննական ցուցմունքները տվել է փոքր-ինչ շփոթված, հոր վրա բարկացած վիճակում, այդ իսկ պատճառով ներկայացրել է, թե իբր եղել են հարվածներ վերջինիս կողմից (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 69):

6.4. Անչափահաս վկա Յանա Մադոյանը 2015 թվականի նոյեմբերի 12-ին տվել է հետևյալ ցուցմունքը. *«(...) Ես տեսա, որ հայրս մորս հրելով և ձեռքերին հարվածելով, նրան հրեց տան ներս և ինքն էլ մտավ ներս: Նա տան ներսում էլ էր շարունակում մորս հետ վիճելը, մինչև Միլվան հորս հրելով դուրս հանեց տնից և փակեց դուռը»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 86-87):

Նախաքննության մարմնի կողմից կազմված մեղադրական եզրակացությունում նշվել է, որ Յանա Մադոյանը 2015 թվականի նոյեմբերի 12-ին տված ցուցմունքով հայտնել է, որ հայրը **3-4 անգամ** ձեռքերով հարվածել է մոր ձեռքերին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 128):

Յ.Մադոյանը դատարանում ժխտել է այն հանգամանքը, որ հայրը հարվածներ է հասցրել մորը (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 70):

7. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է. *«(...) Դատարանն արձանագրում է, որ նախաքննության ժամանակ, բացի տուժողի՝ իրեն հարվածներ հասցնելու մասին ցուցմունքից՝ նմանատիպ տվյալներ են ձեռք բերվել նաև վկա Միլվա Մադոյանի սկզբնական ցուցմունքով: Հոր կողմից մորը հարվածներ հասցնելու մասին /տառանց դրանց քանակը կոնկրետացնելու/ գործի նախաքննությամբ ցուցմունք է տվել նաև անչափահաս վկա Յանա Մադոյանը:*

Այդուամենայնիվ, դատարանը գտնում է, որ նախաքննությամբ ձեռք բերված տվյալների ամբողջությունը բավարար չէ ամբաստանյալ Մադոյանի մեղքը հիմնավորված համարելու տեսանկյունից, քանի որ Միլվա Մադոյանի և Յանա Մադոյանի կողմից նախաքննության սկզբում տրված ցուցմունքները ոչ միայն չհաստատվեցին դատաքննության ժամանակ, այլ նաև հերքվեցին հենց վերջիններիս կողմից: Ավելին, իր՝ նախաքննության սկզբնական ընթացքում հոր դեմ տրված ցուցմունքը փոխել և նրա կողմից մորը չհարվածելու մասին ցուցմունք է տվել նաև Միլվա Մադոյանը դեռևս նախաքննության ընթացքում:

(...)

Դատարանը, համադրելով [վկա Սիլվա Մադոյանի] դատաքննական և նախաքննական ցուցմունքները, դրանցից առավել փաստարկված է դիտում դատաքննականը, քանի որ արժանահավատ է համարում այն, որ վկան, նախաքննական ցուցմունքները շարադրելիս, նոր տեղի ունեցած դեպքի ազդեցության ներքո, ինչպես նաև պայմանավորված՝ ԱՄՆ մեկնելը հոր կողմից խոչընդոտելու հանգամանքներով, ելնելով նաև տարիքային առանձնահատկություններից ու այդ պահին գտնվելով հոգեբանական լարված վիճակում ու լինելով շփոթված ու զայրացած, նախաքննական մարմնին է ներկայացրել մեղադրող բնույթի ցուցմունքներ, որոնք, իրականում, չեն համապատասխանել Ա.Մադոյանի դրսևորած վարքագծին և նրա կողմից իրականացրած գործողություններին:

(...)

(...) համադրելով անչափահաս Յանա Մադոյանի դատաքննական և նախաքննական ցուցմունքները, դատարանն ընդգծում է, որ նա վիճաբանության ժամանակ հիմնականում գտնվել է հարևան սենյակում՝ ժամանակ առ ժամանակ իր կողմից բացվող ու փակվող դռան արանքից հետևելով ծնողների գործողություններին:

Այլ խոսքով, դատարանը փաստում է, որ վկան, լինելով հարևան սենյակում, անմիջականորեն չի գտնվել դեպքի՝ վիճաբանության վայրում, և դրա մանրամասներին ակնատես է եղել միայն դուռը բացելու և փակելու ժամանակ: Այդ պայմաններում, սակայն ևս վկան դատարանում հստակ նշեց, որ իր նայելու ժամանակ հոր կողմից մորը հարված հասցնելու փաստի ակնատես չի եղել:

Այս առումով, դատարանը ցանկանում է ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ նախաքննական մարմինը ցանկացած ձևով փորձելով հիմնավորել ամբաստանյալի մեղքը, անչափահաս Յանա Մադոյանի նախաքննական ցուցմունքն արտացոլելով մեղադրական եզրակացության մեջ, անհիմն նշել է, թե «...Տանը վիճաբանությունը շարունակվել է, որի ընթացքում հայրը 3-4 անգամ ձեռքերով հարվածում մորը...» (...):

(...) անչափահաս վկա Յանա Մադոյանն իր կողմից տրված միակ նախաքննական ցուցմունքում հարվածների քանակի մասին որևէ տվյալ չի նշել, այլ միայն հայտնել է, որ՝ «...հայրս մորս հրելով և ձեռքերին հարվածելով նրանց հրեց ներս ու ինքն էլ մտավ ներս...»:

Հիշյալ ցուցմունքում, սակայն քննիչը չի դետալացրել, թե քանի հարված է հասցրել Մադոյանը կնոջը, բնակարանի որ հատվածում և ինչպես է դա տեսել անչափահաս վկան ու որ պահին հատկապես:

(...)

Վերոգրյալ ապացույցների համակարգային վերլուծության արդյունքում, դատարանն արձանագրում է, որ Ն.Ստեփանյանի՝ իր նկարագրած ձևով ու պայմաններում մարմնական վնասվածք ստանալու կամ ֆի-

զիկանան ցավ պատճառելու հանգամանքը հաստատվում է միայն իր՝ տուժողի ցուցմունքով:

(...) [Հ]ետագոտված ապացույցների ընդհանուր ամբողջությունը վերլուծելով և գնահատելով ՀՀ վճարելի դատարանի կողմից կայացված հիշյալ որոշումների լույսի ներքո, դրանք համադրելով մեղադրանքի ձևակերպման, գործով հավաքված ապացույցների և դատարանի մոտ դրանց հիման վրա ձևավորված ներքին համոզմունքի հետ, հնարավոր չէ հանգել հիմնավոր հետևության առ այն, որ Ա.Մադոյանը 3-4 անգամ հարվածել է Ն.Ստեփանյանի ձեռքերին, որի արդյունքում վերջինիս մարմնի վրա առաջացել է առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 71-102):

8. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության, փաստել է. «(...) [Առաջին ատյանի դատարանն անդրադառնալով] վկա Սիլվա Մադոյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներին, անարժանահավատ է համարել վերջինիս նախաքննական ցուցմունքը] (...):

Վերոգրյալի կապակցությամբ Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը. Վկա Սիլվա Մադոյանը դեպքի շուրջ բացատրություն է տվել դեպքից 6 օր անց՝ 08.08.2015 թվականին՝ հայտնելով, որ «.../ հայրս ձեռքերս առաջ էր մեկնում դեպի մայրս, որի ժամանակ 2-3 անգամ փորձում էր հարվածել և հարվածները դիպան մայրիկիս ձեռքերին, դրանից հետո ես բացել եմ դուռը և հայրիկիս դուրս հրավիրել և նա հեռացել է: /.../»:

Այնուհետև Սիլվա Մադոյանը նույն հանգամանքների շուրջ որպես վկա հարցաքննվել է 25.08.2015 թվականին, որի ժամանակ նույնպես պնդել է, որ հայրը մոտավորապես 3 անգամ հարվածել է մորը:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն անհիմն է համարում Դատարանի պատճառաբանություններն այն մասին, որ վկա Սիլվա Մադոյանի նման ցուցմունքներ տալը պայմանավորված է եղել նրա տարիքային առանձնահատկություններով, ինչպես նաև հոգեբանական լարված վիճակով պայմանավորված:

Դատարանն անդրադառնալով անչափահաս վկա Յանա Մադոյանի նախաքննական ու դատաքննական ցուցմունքներին, արձանագրել է, որ վերջինս իր կողմից տրված նախաքննական ցուցմունքում հարվածների քանակի մասին որևէ տվյալ չի նշել, իսկ քննիչը չի դետալացրել, թե քանի հարված է Ա.Մադոյանը հասցրել կնոջը, բնակարանի որ հատվածում և ինչպես է դա տեսել անչափահաս վկան ու որ պահին հատկապես:

(...)

Վերը նշվածի կապակցությամբ Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը.

Թեև անչափահաս վկա Յանա Մադոյանի նախաքննական ցուցմունքով չի հաստատվում ամբաստանյալ Ա.Մադոյանի կողմից տուժող Ն.Ստեփանյանի ձեռքերին հասցված հարվածների քանակի մասին տվյալ, սակայն վկան իր նախաքննական ցուցմունքով հատակ հայտնել է, թե ինչպես են հայրը և մայրը վիճել դռան դիմաց, իսկ ինքը վիճարանությանը հետևել է դռան արանքից և տեսել, թե ինչպես է հայրը հրել մորը և հարվածել նրա ձեռքերին:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն անհիմն է համարում Դատարանի դատողություններն այն մասին, որ քննիչը չի դետալացրել, թե բնակարանի որ հատվածում է ամբաստանյալը հարվածներ հասցրել տուժողին և ինչպես է դա տեսել անչափահաս վկան ու որ պահին հատկապես:

(...)

Վերաքննիչ դատարանը՝ Դատարանի կողմից հետազոտված ապացույցները վերլուծելով և գնահատելով Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ 01.11.2012 թվականի թիվ ԱԲԳ/0176/01/11 նախադեպային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, գտնում է, որ սույն գործով ձեռք բերված ապացույցների համակցությամբ **հաստատվում է**, որ ամբաստանյալ Ա.Մադոյանը ձեռքերով 3-4 անգամ (մեկից ավելի) հարվածներ է հասցրել տուժող Ն.Ստեփանյանի ձեռքերին, որի արդյունքում նրան պատճառվել է ֆիզիկական ցավ և առողջության թեթև հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ, այն է՝ աջ բազկի ս/3-ի ներսային մակերեսի արյունազեղման ձևով:

(...)

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանի հետևություններն այն մասին, որ գործի քննությամբ ձեռք չի բերվել ապացույցների բավարար ամբողջություն առ այն, որ ամբաստանյալ Ա.Մադոյանը հարվածներ է հասցրել տուժողի մարմնին, այդ թվում՝ ձեռքերին, հիմնագուրկ են, չեն բխում սույն գործի փաստական տվյալներից, Դատարանը պատշաճ գնահատության չի ենթարկել սույն գործի փաստական հանգամանքներն, ինչի արդյունքում չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման, այսինքն՝ տեղի է ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: (...) Վերաքննիչ դատարանի սույն որոշմամբ արված եզրահանգումները չեն կարող մեկնաբանվել որպես հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի մեղքի առկայության կամ բացակայության վերաբերյալ **դատողություններ**:

(...)

Գործի նոր քննության ընթացքում ընդհանուր իրավասության դատարանը պետք է պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտի գործով ձեռք բերված և սույն դատավճռի հիմքում դրված բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության և գոր-

ծի լուծման համար բավարարության տեսանկյունից, այդ ապացույցներն ենթարկի բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման, դրանց վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով և հանգի համապատասխան եզրակացության՝ ամբաստանյալ Ա.Մադոյանի **մեղավորության կամ անմեղության վերաբերյալ**» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 63-70):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 127-րդ, 358-րդ և 371-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ամրագրված արդար դատաքննության իրավունքը և անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե ինչ չափորոշիչներով է առաջնորդվել այս կամ այն ապացույցների որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տալիս կամ դրանց մի մասը արժանահավատ, իսկ մյուսներն անարժանահավատ համարելիս: Գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ ոչ միայն չեն հիմնավորում Ա.Մադոյանի մեղավորությունը, այլև բացառում են մեղավորության ողջամիտ հավանականությունը: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունք չէ, գործում առկա ապացույցները վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցության մեջ չեն վերլուծվել: Ավելին, բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ գործով ձեռք բերված ապացույցների համակցությամբ հաստատվում է ամբաստանյալ Ա.Մադոյանի կողմից ձեռքբերով 3-4 անգամ տուժող Ն.Ստեփանյանի ձեռքերին հարվածներ հասցնելը, արդեն իսկ հաստատված է համարել Ա.Մադոյանին մեղսագրված արարքի կատարումը:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 18-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 10-ի դատավճռին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու՝ վերաքննիչ դատարանի լիազորության իրացման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ

կիրառության ապահովման խնդիր: Ուստի սույն գործով անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

1. Վերաքննիչ դատարանի լիազորությունները, դատական ակտին ներկայացվող պահանջները.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Ա.Մադոյանի նկատմամբ կայացված արդարացման դատավճիռը բեկանելիս և գործը նոր քննության ուղարկելիս Վերաքննիչ դատարանը պահպանել է արդյոք դատական ակտին ներկայացվող պահանջները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «*Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը (...)*»:

Մեջբերված նորմը վերլուծության ենթարկելիս Հ.Մակարյանի գործով որոշման շրջանակներում Վճարելի դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «*(...) [Վ]երաքննիչ դատարանն իրավասու է բեկանել բողոքարկված դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը՝ նպատակ ունենալով՝*

ա) լրացնել վերաքննության փուլում գործն ամբողջ ծավալով քննելու իրավազորության բացակայությունը,

բ) կանխել վերաքննիչ դատարանի կողմից որպես առաջին ատյանի դատարան հանդես գալու հնարավորությունը,

գ) ապահովել դատական ատյանների միջև գործառության լի կապերի տրամաբանական բնույթը,

դ) երաշխավորել ամբաստանյալի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ նոր քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի հետ անհամաձայնության դեպքում վերաքննության կարգով բողոք ներկայացնելու տեսանկյունից (...)» (տե՛ս Հրաչ Մակարյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՄԳ-3/0019/01/11 որոշման 19-րդ կետը):

Գ.Խնուսյանի գործով որոշման շրջանակներում Վճարելի դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «*(...) [Ը]նդհանուր կանոնի համաձայն ստորադաս դատարանն իրավասու չէ դուրս գալ վճարելի դատարանի որոշմամբ սահմանված գործի նոր քննության ծավալներից և, միևնույն ժամանակ, պարտավոր է կատարել գործի նոր քննության ծավալով սահմանված անհրաժեշտ դատավարական գործո-*

դուքյունները: Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և դրանով սահմանված նոր քննության ծավալը պարտադիր են ստորադաս դատարանի համար, ուղղորդում են գործի նոր քննությունը, սակայն չեն կանխորոշում դրա արդյունքը:

(...) Վճարելի դատարանի որոշմամբ սահմանված նոր քննության ծավալը ստորադաս դատարանի կողմից չպահպանելու համար որպես բացառիկ հանգամանք կարող է հանդիսանալ գործի նոր քննության ընթացքում առաջացած այնպիսի հանգամանքը, որը չի կարող հանգեցնել Վճարելի դատարանի դիրքորոշման փոփոխությանը, սակայն պայմանավորում է տվյալ գործի ելքը (օրինակ՝ համաներման ակտի ընդունումը, արարքի ապաքրեականացումը, քրեական գործի վարույթը բացառող այլ հանգամանքի ի հայտ գալը և այլն)» (տե՛ս *Գևորգ Խնուսյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 18-րդ կետը):

14. Վերահաստատելով և զարգացնելով Հ.Մակարյանի ու Գ.Խնուսյանի գործերով ձևավորված նախադեպային իրավունքը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ *Գ.Խնուսյանի* գործով արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները, *mutatis mutandis*, վերաբերելի են նաև վերաքննիչ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու և նոր քննության ծավալ սահմանելու վերաբերյալ կայացվող դատական ակտին: Այլ խոսքով՝ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը բեկանում է բողոքարկված դատական ակտը և գործն ուղարկում նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ, ստորադաս դատարանում գործի նոր քննության սահմանները, որպես կանոն, կանխորոշվում են վերաքննիչ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով և դրանով սահմանված նոր քննության ծավալով, ինչը բխում է արդարադատության արդյունավետության ապահովման խնդրից, մասնավորապես՝ դատական ակտերի բողոքարկման և կրկին բեկանման շրջապտույտից խուսափելու անհրաժեշտությունից: Վերջին հանգամանքը, սակայն, ենթադրում է, որ վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով և դրանով սահմանված նոր քննության ծավալով **կարող է ուղղորդել գործի նոր քննությունը, այլ ոչ թե կանխորոշել դրա արդյունքը**: Հակառակ պարագայում կարող է առաջանալ ոչ միայն իրավական անորոշության վիճակ (օրինակ՝ այն դեպքում, երբ անձի մեղավորությունը հաստատված համարելու հետ մեկտեղ գործն ուղարկվում է ստորադաս դատարան, ապա նոր քննության արդյունքներով կարող է առաջանալ հետևյալ իրավիճակը՝ մի կողմից ապացույցների գնահատման արդյունքում առաջին ատյանի դատարանի մոտ ձևավորված եզրահանգում, մյուս կողմից՝ վերադաս դատարանի կողմից նույն հարցի վերաբերյալ արված կատեգորիկ եզրահանգում, և միշտ չէ, որ այդ եզրահանգումները կարող են համընկնել), այլև կխախտվի առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների միջև գործառութային կապերի տրամաբանական բնույթը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց է տրվում՝

(...)

2) գործի հանգամանքների, մեղադրանքի ապացուցված լինելու և ամբաստանյալի մեղավորության մասին դատարանի հետևությունները.

3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները.

4) օրենքի այն նորմերը, որոնցով դատարանը ղեկավարվել է որոշում ընդունելիս:

(...))»:

Նույն օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Դատավճռի եզրափակիչ մասում նշվում են դատարանի որոշումները»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ընդունվող իրավական ակտերն են՝ (...) 5) (...) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանի կամ վճարելի դատարանի (...) որոշումները, վճիռները կամ դատավճիռները (...)»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Իրավական ակտերում պետք է բացառվեն (...) ներքին հաստատությունները»:

Սեփերված նորմերի առնչությամբ Վճարելի դատարանը *Գ.Ղազարյանի* գործով ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Ա]ռաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտի՝ դատավճռի կառուցվածքին և բովանդակությանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ներկայացվող պահանջները վերաբերելի են նաև վերադաս դատական ատյանի՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտին: (...) [Դ]ատական ակտի տարբեր կառուցվածքային մասերում (ներածական, նկարագրական-պատճառաբանական, եզրափակիչ) արտացոլված տեղեկությունը պետք է ներքին միասնություն և տրամաբանական կապ ունենա, (...) հակառակ պարագայում, դատարանի դատական ակտն անօրինական է» (տե՛ս *Գեղամ Ղազարյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԳ/0121/01/11 որոշման 19-20-րդ կետերը):

Վերահաստատելով *Գ.Ղազարյանի* գործով ձևավորված իրավական դիրքորոշումները՝ *Ա.Հարությունյանի* գործով որոշման շրջանակներում Վճարելի դատարանն արձանագրել է. «(...) [Դ]ատական ակտի եզրափակիչ մասում առկա եզրահանգումները պետք է բխեն նույն դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված հետևություններից և համապատասխանեն դրանց: Հետևաբար, վերաքննիչ դատարանի կողմից կայացվող՝ վերաքննիչ բողոքը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշման եզրափակիչ մասում առկա եզրահանգումը նույնպես պետք է համապատասխանի նկարագրական-պատճառաբանական-պատճառաբանական մասում նշված հանգամանքներին»:

ճատարանական մասում շարադրված վերլուծությանը» (տե՛ս *Աննա Հարությունյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵՇԳ/0110/01/11 որոշման 14-րդ կետը):

16. Վերահաստատելով *Գ.Ղազարյանի* ու *Ա.Հարությունյանի* գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս դատարանների պատճառաբանությունները ոչ միայն պետք է կառուցվեն գործի փաստական հանգամանքներից բխող հստակ և որոշակի հետևությունների հիման վրա, այլև դատական ակտի կառուցվածքային տարբեր մասերում արված դատողությունները պետք է համապատասխանեն միմյանց, ունենան ներքին միասնություն և տրամաբանական կապ: Դատական ակտում պետք է բացառվեն ներքին հակասությունները, իրարամերժ դատողությունները, քանի որ հակառակ դեպքում այդպիսի դատական ակտի տրամաբանությունը կխարխլվի, իսկ քրեական դատավարության խնդիրները չեն իրագործվի:

17. Սույն գործի նյութերից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի կողմից Ա.Մադոյանի նկատմամբ կայացված արդարացման դատավճիռը և գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության, փաստել է, որ սույն գործով ձեռք բերված ապացույցների համակցությամբ **հաստատվում է**, որ ամբաստանյալ Ա.Մադոյանը ձեռքերով 3-4 անգամ (մեկից ավելի) հարվածներ է հասցրել տուժող Ն.Ստեփանյանի ձեռքերին, որի արդյունքում նրան պատճառվել է ֆիզիկական ցավ և առողջության թեթև հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ: Ավելին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի հետևություններն այն մասին, որ գործի քննությամբ ձեռք չի բերվել ապացույցների բավարար ամբողջություն առ այն, որ ամբաստանյալ Ա.Մադոյանը հարվածներ է հասցրել տուժողի մարմնին, այդ թվում՝ ձեռքերին, հիմնագուրկ են, չեն բխում սույն գործի փաստական տվյալներից, Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատության չի ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, ինչի արդյունքում չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման:

Հարկ է նկատել, որ վերոնշյալ դատողություններին զուգահեռ Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ իր կողմից արված եզրահանգումները չեն կարող մեկնաբանվել որպես հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի **մեղքի առկայության կամ բացակայության վերաբերյալ դատողություններ**: Իսկ արդյունքում փաստել է, որ գործի նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտի գործով ձեռք բերված և դատավճռի հիմքում դրված բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության և գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, և հանգի համապատասխան եզրակացության՝ ամբաստանյալ

Ա.Մադոյանի մեղավորության կամ անմեղության վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը մի կողմից նշել է, որ գործով ձեռք բերված ապացույցների համակցությամբ **հաստատվում է** ամբաստանյալ Ա.Մադոյանին մեղսագրված արարքի կատարումը, իսկ մյուս կողմից՝ արձանագրել, որ իր եզրահանգումները չեն կարող մեկնաբանվել որպես հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի **մեղքի առկայության կամ բացակայության վերաբերյալ դատողություններ**: Իսկ արդյունքում դիրքորոշում է արտահայտել առ այն, որ գործի նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը պետք է հանգի համապատասխան եզրակացության՝ **ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության** վերաբերյալ:

Վերոգրյալ պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի հիշյալ դատողությունները ոչ միայն իրարամերժ ու հակասող են, գուրկ են ներքին միասնությունից և տրամաբանական կապից, այլև մեղադրանքը հաստատված համարելուն զուգահեռ գործը նոր քննության ուղարկելով՝ Վերաքննիչ դատարանը, ըստ էության, կանխորոշել է գործի քննության արդյունքը՝ ստեղծելով իրավական անորոշության վիճակ և խախտելով առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների միջև գործառությանի կապերի տրամաբանական բնույթը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Ա.Մադոյանի նկատմամբ կայացված արդարացման դատավճիռը բեկանելիս և գործը նոր քննության ուղարկելիս Վերաքննիչ դատարանը չի պահպանել դատական ակտին ներկայացվող պահանջները: Այլ կերպ՝ ստորադաս դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ, 394-րդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածների խախտումներ:

II. Ապացույցների բավարարությունը.

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ամբաստանյալ Ա.Մադոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում արդարացնելու մասին դատական ակտը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

20. ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում հետևյալ հանցավոր արարքի համար. *«Ծեծելը կամ այլ բռնի գործողություններ կատարելը, որը չի առաջացրել սույն օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ (...):»*:

Մեջբերված հանցակազմը Վճռաբեկ դատարանը վերլուծել է *Արևիկ և Ծովինար Սահակյանների* գործով որոշման շրջանակներում՝ ձևավորե-

լով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Ծեծելը բնութագրվում է տուժողի մարմնին հարվածներ հասցնելով, ընդ որում, հարվածները կարող են հասցվել ինչպես ծեռքերով կամ ոտքերով, այնպես էլ բուք և կոշտ գործիքի գործադրմամբ՝ բազմաթիվ (մեկից ավելի) անգամ:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ մեկնաբանության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի դիսպոզիցիայում օգտագործված «ծեծել» եզրույթը ներկայացված է հոգնակի թվով, այսինքն՝ ոչ թե որպես մեկ, այլ բազմակի (մեկից ավելի) ակտ: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով արգելված ծեծի բովանդակությունից հետևում է, որ ծեծը տուժողին բազմաթիվ (մեկից ավելի) հարվածներ հասցնելն է, որի արդյունքում նրան պատճառվել է ֆիզիկական ցավ: (...)

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեկ հարվածը չի կարող որակվել որպես ծեծ, ծեծը ենթադրում է տուժողի մարմնին մեկից ավելի հարվածներ հասցնելը, որոնց արդյունքում տուժողին ֆիզիկական ցավ է պատճառվել (...):» (տե՛ս Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման 19.1-րդ և 27-րդ կետերը):

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, դեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ բնության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ:»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները:»:

21.1. «Ապացույցների բավարարություն» բնորոշմանը, այն որոշելու չափանիշներին, չափանիշներից յուրաքանչյուրի էությանն ու նշանակությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր կողմից նախկինում

ընդունված որոշումներում: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը: Ինչ վերաբերում է ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշներին, ապա Վճռաբեկ դատարանը նշել է, որ դրանք են՝ 1) անմեղության կանխավարկածը, 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը, 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը (տե՛ս *Միրակ Սաքանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԳ/0058/01/10 որոշման 15-րդ կետը):

Անդրադառնալով ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշներից անմեղության կանխավարկածին՝ Վճռաբեկ դատարանը փաստել է. *«[Բ]րեական դատավարությունում կանխավարկածը օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը: Մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է (...): Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարագոր է ապացուցված անմեղության:*

(...) [Ա]նմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:

(...)

(...) «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության

վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած (տե՛ս *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշման 30-րդ և 33-րդ կետերը):

Իսկ անդրադառնալով ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշներից մյուսին՝ դատավարական որոշումների հիմնավորվածությանը և պատճառաբանվածությանը՝ Վճարելի դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը ելել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Ընդ որում, հաշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճարելի դատարանը փաստել է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է (տե՛ս *Ֆ. Գալստյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԳ/0058/11/09 որոշման 18-19-րդ կետերը, *Գ. Խնուսյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

22. Սույն գործի նյութերից երևում է, որ նախաքննության մարմինն Ա.Մադոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա իր դուստր Յ.Մադոյանին տեսակցելու հետ կապված հարցերի շուրջ վիճաբանել է իր նախկին կին Ն.Ստեփանյանի հետ, որի ընթացքում ձեռքերով 3-4 անգամ հարվածել է վերջինիս՝ աջ բազկի $u/3$ ներսային մակերեսի արյունազեղման ձևով նրան պատճառելով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հաստատված չհամարելով Ա.Մադոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքը, արդյունքում նրա նկատմամբ կայացրել է արդարացման դատավճիռ՝ իր դատական ակտը հիմնավորելով նրանով, որ նախաքննությամբ ձեռք բերված տվյալների ամբողջությունը բավարար չէ ամբաստանյալ Ա.Մադոյանի մեղքը հիմնավորված համարելու համար: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով վկա Ս.Մադոյանի դատաքննական և նախաքննական ցուցմունքներին և համադրելով դրանք, արդյունքում փաստել է, որ դրանցից առավել փաստարկված է դատաքննական ցուցմունքը, քանի որ արժանահավատ է համարում այն, որ վկան նախաքննական ցուցմունքները շարադրելիս նոր տեղի ունեցած դեպքի ազդեցության ներքո, ինչպես նաև պայմանավորված ԱՄՆ մեկնելը հոր կողմից խոչընդոտելու հանգամանքներով, ելնելով նաև տարիքային առանձնահատկություններից, այդ պահին գտնվելով հոգեբանական լար-

ված վիճակում ու լինելով շփոթված ու զայրացած՝ նախաքննական մարմնին է ներկայացրել մեղադրող բնույթի ցուցմունքներ, որոնք իրականում չեն համապատասխանել Ա.Մադոյանի դրսևորած վարքագծին և նրա կողմից իրականացրած գործողություններին: Իսկ անդրադառնալով անչափահաս վկա Յ.Մադոյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներին և համադրելով դրանք՝ Առաջին ատյանի դատարանը, ի թիվս այլնի, փաստել է, որ Յ.Մադոյանն իր նախաքննական ցուցմունքում հայտնել է, որ հայրը հարվածել է մոր ձեռքերին, սակայն հարվածների քանակի մասին որևէ տվյալ չի նշել, իսկ քննիչն էլ չի մանրամասնել, թե քանի հարված է ամբաստանյալը հասցրել տուժողին, բնակարանի որ հատվածում և ինչպես է դա տեսել անչափահաս վկան ու որ պահին հատկապես: Մինչդեռ Առաջին ատյանի դատարանի համոզմամբ՝ նախաքննական մարմինը ցանկացած ձևով փորձել է հիմնավորել ամբաստանյալի մեղքը՝ Յ.Մադոյանի նախաքննական ցուցմունքը մեղադրական եզրակացության մեջ արտացոլելով այնպես, ըստ որի՝ վերջինս հայտնել է, որ հայրը **3-4 անգամ է ձեռքերով հարվածել մորը:** Առաջին ատյանի դատարանը փաստել է նաև, որ ապացույցների համակարգային վերլուծության արդյունքում Ն.Ստեփանյանի՝ իր նկարագրած ձևով ու պայմաններում մարմնական վնասվածք ստանալու կամ ֆիզիկական ցավ պատճառելու հանգամանքը հաստատվում է միայն իր՝ տուժողի ցուցմունքով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Մասնավորապես անդրադառնալով վկա Ա.Մադոյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներին, դրանց առնչությամբ Առաջին ատյանի դատարանի պատճառաբանություններին՝ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ վկա Ա.Մադոյանը դեպքից շուրջ 6 օր անց՝ 08.08.2015 թվականին, հայտնել է, որ հայրը 2-3 անգամ փորձում էր հարվածել, և հարվածները դիպան մոր ձեռքերին: Այնուհետև Ա.Մադոյանը նույն հանգամանքների շուրջ հարցաքննվել է 25.08.2015 թվականին, որի ժամանակ նույնպես պնդել է, որ հայրը մոտավորապես 3 անգամ հարվածել է մորը: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի համոզմամբ անհիմն են Առաջին ատյանի դատարանի պատճառաբանություններն այն մասին, որ վկա Ա.Մադոյանի կողմից նման ցուցմունքներ տալը պայմանավորված է եղել նրա տարիքային առանձնահատկություններով, ինչպես նաև հոգեբանական լարված վիճակով: Ինչ վերաբերում է անչափահաս վկա Յ.Մադոյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքների առնչությամբ Առաջին ատյանի դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումներին, Վերաքննիչ դատարանը, ի թիվս այլնի, փաստել է, որ թեև Յ.Մադոյանի նախաքննական ցուցմունքով չի հաստատվում ամբաստանյալ Ա.Մադոյանի կողմից տուժող Ն.Ստեփանյանի ձեռքերին հասցված հարվածների քանակի մասին տվյալ, սակայն վկան իր նախաքննական ցուցմունքով հստակ հայտնել է, թե ինչպես են հայրը և մայրը վիճել դռան դիմաց, իսկ

ինքը վիճաբանությանը հետևել է դռան արանքից և տեսել, թե ինչպես է հայրը հրել մորը և հարվածել նրա ձեռքերին: Արդյունքում Վերաքննիչ դատարանը փաստել է, որ վկաներ Ս.Մադոյանի և Յ.Մադոյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներից արժանահավատ են վերջիններիս նախաքննական ցուցմունքները, իսկ դատաքննության ընթացքում նրանց կողմից նման ցուցմունքներ տալը պայմանավորված է եղել նրանով, որ վկաները, հոր նկատմամբ ունեցած կարեկցանքից ելնելով, փորձել են օգնել վերջինիս՝ խուսափելու քրեական պատասխանատվությունից ու պատժից (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

23. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-21.1.-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանը նախևառաջ արձանագրում է, որ վկա Ս.Մադոյանի նախաքննական ցուցմունքներն (սկզբնական) անարժանահավատ համարելու՝ Առաջին ատյանի դատարանի փաստարկները անհիմն դիտարկելիս Վերաքննիչ դատարանը չի ներկայացրել հիմնավոր և պատշաճ կերպով պատճառաբանված դատողություններ: Այսպես՝ դեպքից միառժամանակ անց տվյալներ հաղորդելը որևէ կերպ չի ենթադրում, որ այդպիսի տվյալների հաղորդումն այլևս չէր կարող պայմանավորված լինել անձի տարիքային առանձնահատկություններով կամ հոգեբանական լարված վիճակով: Այլ կերպ՝ այն հանգամանքը, որ վկա Ս.Մադոյանը հոր կողմից մորը մոտավորապես 3 անգամ հարվածելու մասին տվյալ է հաղորդել դեպքից միառժամանակ անց, որևէ կերպ չի բացառում այն, որ Ս.Մադոյանի կողմից այդպիսի տվյալներ հաղորդելը չէր կարող պայմանավորված լինել նրա տարիքային առանձնահատկություններով կամ հոգեբանական լարված վիճակով:

Հետևաբար, Վճարելի դատարանը գտնում է, որ վկա Ս.Մադոյանի նախաքննական ցուցմունքներն (սկզբնական) անարժանահավատ համարելու՝ Առաջին ատյանի դատարանի փաստարկները Վերաքննիչ դատարանի կողմից նման պատճառաբանություններով անհիմն դիտարկելը չի կարող համարվել իրավաչափ:

Ինչ վերաբերում է վկա Յ.Մադոյանի նախաքննական ցուցմունքներին, ապա Վճարելի դատարանը նախ հարկ է համարում նշել, որ թեև Յ.Մադոյանը հոր կողմից մոր ձեռքերին հասցված հարվածների քանակի մասին որևէ տվյալ իր կողմից տրված ցուցմունքում չի նշել, այնուամենայնիվ, նախաքննության մարմինը Յ.Մադոյանի հիշյալ ցուցմունքները մեղադրական եզրակացության մեջ արտացոլել է այնպես, ըստ որի՝ վերջինս հայտնել է, որ հայրը **3-4 անգամ** է ձեռքերով հարվածել մորը (տե՛ս սույն որոշման 6.4.-րդ կետը): Վճարելի դատարանն անընդունելի է համարում մեղադրական եզրակացությունում ապացույցների աղավաղված ձևով ներկայացումը՝ ընդգծելով, որ նախաքննական մարմնի այդպիսի գործողությունն անմիջականորեն հանգեցրել է ՀՀ Սահմանադրության 6-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածներով նախատեսված օրինականության սկզբունքի խախտմանը:

Վերոգրյալի հետ մեկտեղ *Արևիկ և Ճովինար Սահակյանների* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով այն փաստը, որ վկա Յ.Մադոյանի նախաքննական ցուցմունքով չի հաստատվում ամբաստանյալ Ա.Մադոյանի կողմից տուժողի ձեռքերին հասցված հարվածների քանակի մասին որևէ տվյալ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ ցուցմունքի հիման վրա հնարավոր չէ ողջամիտ կասկածից վեր հաստատված համարել Ա.Մադոյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված ծեծի հանցակազմի առկայությունը:

24. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև սույն գործում առկա ապացույցների ամբողջությունը վերլուծելով և գնահատելով սույն որոշման 20-20.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հնարավոր չէ ապացուցված համարել, որ ամբաստանյալ Ա.Մադոյանը կատարել է սույն քրեական գործով իրեն մեղաազարկած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված արարքը՝ մասնավորապես այն, որ Ա.Մադոյանը 3-4 անգամ հարվածել է Ն.Ստեփանյանի ձեռքերին, որի արդյունքում վերջինիս մարմնի վրա առաջացել է առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք:

25. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Մադոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում արդարացնելու մասին դատական ակտը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 127-րդ, 358-րդ հոդվածների խախտումներ:

26. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված քրեադատավարական օրենքի խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք է վերջինիս կողմից կայացված դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտելով գործում առկա ապացույցները, այդ թվում՝ դատաբժշկական փորձագետի եզրակացությունը, ամբաստանյալ Ա.Մադոյանի, տուժող Ն.Ստեփանյանի, վկաներ Յանա և Սիլվա Մադոյանների ցուցմունքները, չփարատված կասկածները մեկնաբանելով հոգուտ ամբաստանյալի, եկել է հիմնավոր եզրահանգման ամբաստանյալի անմեղության հարցում: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն

ունեցող դատական սխալ: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 10-ի արդարացման դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արթուր Արկադիի Մադոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 18-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 10-ի արդարացման դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

43.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴ/0033/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դատախազ

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՀԱԿՈԲՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Վլադիմիրի Աղաբաբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 27112513 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումներով Արմեն Վլադիմիրի Աղաբաբյանը և Գրիգոր Մարտինի Հովակիմյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, նրանց նկատմամբ հայտարար-

վել է հետախուզում, և որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2013 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումներով Ա.Աղաբաբյանի և Գ.Հովակիմյանի մեղադրանքները փոփոխվել են, և նրանք ներգրավվել են որպես մեղադրյալներ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով:

2013 թվականի հոկտեմբերի 22-ին քրեական գործով վարույթը կասեցվել է՝ մեղադրյալների գտնվելու վայրը պարզված չլինելու հիմքով:

2013 թվականի նոյեմբերի 27-ին Գ.Հովակիմյանը ներկայացել է քննությանը, և նույն օրը որոշում է կայացվել քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին:

1.1. 2013 թվականի դեկտեմբերի 6-ին թիվ 27112513 քրեական գործից անջատվել է Ա.Աղաբաբյանի և ինքնությունը չպարզված անձանց վերաբերյալ մասը, և նախաքննությունը շարունակվել է թիվ 27112513/1 համարով:

2013 թվականի դեկտեմբերի 10-ին Ա.Աղաբաբյանն ինքնակամ ներկայացել է:

2013 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ Ա.Աղաբաբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով:

2014 թվականի մայիսի 23-ի որոշմամբ Ա.Աղաբաբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2014 թվականի մայիսի 23-ի որոշմամբ թիվ 27112513/1 քրեական գործից առանձնացվել է ինքնությունները չպարզված անձանց վերաբերյալ մասը, և դրա նախաքննությունը շարունակվել է թիվ 27112513/2 համարով:

2014 թվականի հունիսի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան), որտեղ գործին շնորհվել է թիվ ԱՎԳ/0033/01/14 համարը:

1.2. 2014 թվականի հունիսի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 27112014 քրեական գործը:

2014 թվականի հուլիսի 4-ին Ա.Աղաբաբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2014 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ Ա.Աղաբաբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2014 թվականի դեկտեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան, գործին

շնորհվել է թիվ ԱՎԳ/0087/01/14 համարը, և միացվել է թիվ ԱՎԳ/0033/01/14 քրեական գործին:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 29-ի դատավճռով Ա.Աղաբաբյանը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել է՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղավոր է ճանաչվել, և նրա նկատմամբ որպես պատիժ է նշանակվել տուգանք՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի հիման վրա նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել տուգանք՝ 800.000 ՀՀ դրամի չափով:

3. Մեղադրող Ա.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 29-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանը 2016 թվականի մայիսի 31-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5. Ամբաստանյալ Ա.Աղաբաբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն]ա 2013 թվականի օգոստոսի 22-ին ժամը 02:00-ի սահմաններում Արտաշատ քաղաքի Մարքսի 6-րդ շենքի բակում մի խումբ անձանց հետ աղմկելու ու գոռոռալու պատճառով, շենքի բնակիչների հանգիստն ու քունը չխանգարելու վերաբերյալ դիտողություն է ստացել նույն շենքի բնակիչ Տիգրան Խանդիլյանի կողմից, սակայն չհանդուրժելով իրենց հասցեին արված որևէ դիտողություն, նույն օրը՝ ժամը 12:00-ի սահմաններում իր ընկեր Գրիգոր Հովակիմյանի և ինքնությունը չպարզված մի խումբ անձանց հետ նախորդ օրվա նախաձեռնած անհիմն վիճաբանությունը որպես չնչին առիթ օգտագործելով, խուլիգանական մղումներով, Արտաշատ քաղաքի Մարքսի 5-րդ շենքի մոտ ընկած փողոցի բանուկ հատվածում՝ հասարակական վայրում, խմբի կազմում, ուղղակի դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, սեփական անձի առավելություններն ընդգծելու նպատակով, անթաքույց արհամարհելով հանրության մեջ ընդունված բարոյական և իրավական նորմերը, բարձրաձայն սեռական բնույթի հայհո-

յանքների ուղեկցությամբ մյուսների հետ միասին հարձակվել է այդ պահին Գրիգոր Հովակիմյանի հարվածից գետնին ընկած Տիգրան Խանդիլյանի վրա ու բռնություն գործադրելով՝ շուրջ 5 րոպե շարունակ հավաքված քաղաքացիների ներկայությամբ ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, այդ թվում՝ դեմքին, ձեռքերին և ոտքերին, որի հետևանքով վերջինիս պատճառել է առողջությունը կարճատև քայքայող թեթև վնաս՝ ճակատի կենտրոնական շրջանի սալջարդ վերքի ձևով, առողջության թեթև վնասի հատկանիշ չպարունակող զույգ վերին, ստորին կոպերի արյունազեղումներ, քթի մեջքի փափուկ հյուսվածքների տրավմատիկ այտուց, քերծվածք, արյունազեղում, աջ արմնկահողի հետին մակերեսի մեկ հատ, ձախ դաստակի թիկնային մակերեսի երեք հատ, աջ սրունքի վերին երրորդականի առաջային մակերեսի երկու հատ քերծվածքներ:

Ա.Աղաբաբյանը հասարակությանը հակադրվելու հանդուզն ցանկությամբ, իր անձի հեղինակությունը հասարակության մեջ ցուցաբերելու մոլուցքից դրդված, բոլորի աչքի առջև, ցուցադրաբար, շարունակելով բարձրաձայն սեռական բնույթի հայհոյանքներ տալ, հարձակվել է այդ պահին հորն օգնության շտապած, Գրիգոր Հովակիմյանի հարվածից գետնին տապալված Տ.Խանդիլյանի որդու՝ Վահե Խանդիլյանի վրա և մոտ 3 րոպե շարունակ, անտեսելով հավաքված մարդկանց՝ ծեծը դադարեցնելու վերաբերյալ հորդորները, մյուսների հետ միասին դիտավորությամբ ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր հատվածներին, այդ թվում՝ դեմքին, ձեռքերին և ոտքերին, որի հետևանքով վերջինս ստացել է աջ արմնկահողի հետին մակերեսի թվով 2 սալջարդ վերքերի ձևով առողջության թեթև, իսկ աջ արմնկահողի դրսային կողմնային մակերեսի, աջ դաստակի փային մակերեսի, ձախ ձեռքի 4-րդ, 5-րդ մատների հիմային և միջին ֆալանգների թիկնային մակերեսի քերծվածքների ձևով՝ թեթև վնաս պատճառելու հատկանիշներ չպարունակող վնասվածքներ, որից հետո մյուսների հետ միասին դիմել է փախուստի:

Այսպիսով՝ Ա.Աղաբաբյանի կողմից խմբի կազմում, բռնության գուգորդմամբ խուլիգանություն կատարելու արդյունքում, շուրջ 10 րոպե շարունակ խափանվել է դեպքի վայրին հարակից հասարակական օբյեկտների աշխատողների, հաճախորդների, անցորդների, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների հանգիստն ու անդորրը, նրանց մեջ առաջացել է լուրջ անհանգստություն և վախի զգացում, ինչպես նաև խափանվել է Արտաշատ քաղաքի Մարքսի փողոցի 5-րդ շենքին հարակից հատվածի երթևեկությունը» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 136-137):

5.1. Ամբաստանյալ Ա.Աղաբաբյանը դատաբնության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ «(...) Տիգրան և Վահե Խանդիլյաններին ճանաչում է մանկուց, մշտապես գտնվել են նորմալ փոխհարաբերությունների մեջ, հարևաններ են ու միմյանց հետ երբևէ խնդիրներ չեն ունեցել: Դեպքի օրը, ժամը 12-ի սահմաններում, իջել է բակ ու քայլելով դեպի «Իքս

Իքս Էքսպրես» խորտկարանի կողմ, նկատել է հավաքված մարդկանց ու մտտենալով նրանց, ճանաչել է իր մտերիմ Գրիգոր Հովակիմյանին և հարևան Տիգրան Խանդիլյանին: Վերջինս ընկած է եղել գետնին, իսկ Գրիգորը դրսևորել է ագրեսիվ վարքագիծ, ինչից էլ հասկացել է, որ Գրիգորն է Տիգրանին հարվածել: Կռիվը դադարեցնելու նպատակով՝ ինքը, ուժի գործադրմամբ՝ Գրիգորին քաշելով մոտեցրել ու նստեցրել է փողոցի մեջտեղում կայանված ավտոմեքենայի վարորդի նստատեղում՝ համոզված լինելով, որ նա է այդ ավտոմեքենայով եկել այդտեղ: Դրանից հետո, ինքը նստել է նշված ավտոմեքենայի վարորդի կողքի նստատեղում և հարցրել, թե ինչ է տեղի ունեցել, ինչպես նաև ասել է, որ Տիգրան Խանդիլյանն իր հարևանն է ու բախում մման պահվածք դրսևորելու համար ամոթանք է տվել Գրիգորին: Վերջինս պատասխանել է, որ դա իր գործը չէ ու պահանջել է չխառնվել: Այնուհետև, լուսացույցի մոտ ինքն ավտոմեքենայից իջել ու գնացել է անձնական գործերով, իսկ այնուհետև՝ մեկնել է արտագնա աշխատանքի, որի ընթացքում էլ մոր հետ ունեցած հեռախոսագրույցից տեղեկանալով, որ հետախուզվում է, զարմացել ու քննությանը ներկայանալու համար վերադարձել է Հայաստանի Հանրապետություն:

Պնդել է, որ Տիգրան և Վահե Խանդիլյաններին ինքը չի հարվածել ու որևէ մեկի չի հայիոյել, դրա համար որևէ պատճառ չի ունեցել, մասնկուց ճանաչել ու մշտապես լավ փոխհարաբերությունների մեջ է գտնվել նրանց հետ: Վահե Խանդիլյանին դեպքի վայրում ընդհանրապես չի տեսել, կռվին միջամտել է միայն դադարեցնելու նպատակով, իսկ դրա նախորդ օրը որևէ միջադեպի ներկա չի եղել ու չի մասնակցել, այդ ժամանակ ինքը գտնվել է տանը» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 50-51):

5.2. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի համաձայն՝ ըստ վկա Ռուզաննա Հակոբյանի նախաքննական ցուցմունքների՝ «(...) [Ի]ր տան պատշգամբից [Ռ.Հակոբյանը] տեսել է փողոցում մի երիտասարդի հետ զրուցող իրենց դիմացի շենքի տարեց բնակիչներից մեկին, ով անսպասելիորեն սկսել է սեռական բնույթի անհասցե **հայիոյանքներ տալ** (...): Այդ ժամանակ նրանց մոտ կանգնել է սև գույնի մի ավտոմեքենա, որից իջել են 4-5 անձանոթ երիտասարդներ ու **հարձակվելով նշված երիտասարդի ու տարեց մարդու վրա, սկսել են հարվածել**: Վերջինս ընկել է գետնին, իսկ անձանոթ երիտասարդները **սեռական բնույթի հայիոյանքներ տալով շարունակել են ոտքերով ու ձեռքերով հարվածներ հասցնել նրան**: Միջադեպը տևել է շուրջ 5 րոպե, որից հետո նշված երիտասարդները նույն ավտոմեքենայով հեռացել են, իսկ ինքն իջել է շենքի բակ ու տեսել, որ գետնին ընկած տարեց մարդու ճակատից արյուն է հոսում: Հավաքված մարդիկ օգնություն են ցուցաբերել նրան, իսկ քիչ անց տեղափոխել են հիվանդանոց» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 58-59):

5.3. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի համաձայն՝ ըստ վկա Անդրանիկ Մարուխանյանի նախաքննական ցուցմունքների՝ «(...) 2013 թվականի օգոստոսի 22-ին ժամը 12-ի սահմաններում, [Ա.Մարուխանյանը] տեսել է, թե ինչպես «Իքս Իքս Էքսպրես» խորտկարանի դի-

մաց գտնվող շենքի մոտ մի մուգ գույնի ավտոմեքենա է կանգնել, դրանից իջել են 3-4 անձանոթ երիտասարդներ, **հարձակվել այնտեղ կանգնած երկու անձանց վրա և ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցրել նրանց:** Վերջիններիցս տարիքով ավագն ընկել է գետնին, իսկ նշված երիտասարդները սեռական բնույթի **հայհոյանքներ** տալով **շարունակել են ոտքերով ու ձեռքերով հարվածներ հասցնել նրան, ապա նստել են նույն ավտոմեքենան և հեռացել:** Միջադեպը տևել է շուրջ 4-5 րոպե, որի ժամանակ փողոցում մարդիկ են հավաքվել: Անձանոթ երիտասարդների հեռանալուց հետո, հավաքված մարդկանց հետ միասին ինքը ևս օգնություն է ցույց տվել գետնին ընկած քաղաքացուն, որից հետո նա տեղափոխվել է հիվանդանոց» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 58):

5.4. Վկա Սուսաննա Հայրապետյանի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքի համաձայն՝ «(...) Այդ ժամանակ դիմացի մայթից լսեցի սեռական բնույթի հայհոյանքներ, տեսա, որ բարձրահասակ սպորտային կազմվածքով **մի երիտասարդ վիճում է մեր կողքի շենքի բնակիչ Տիգրան Խանդիլյանի ու նրա որդու հետ, քաշքշում նրանց:** Նույն պահին նրանց կողքին կանգնեց մի սև գույնի ավտոմեքենա, որի մակնիշն ու պետհամարանիշը չգիտեմ, դրանից իջան 4-5 հոգի ու **հարձակվեցին Տիգրանի ու նրա որդու վրա սկսեցին ձեռքերով ու ոտքերով խառը հարվածել նրանց, Տիգրանն ընկավ գետնին, իսկ որդին փորձեց փախչել, նրան 2-3 հոգի հետապնդեցին և 2-3 մետր դեպի փողոցի կողմը բռնեցին նրան սկսեցին ձեռքերով ու ոտքերով հարվածել նրա մարմնի տարբեր մասերին, նա ընկավ գետնին և այդպես մոտ 4-5 րոպե շարունակ Տիգրանին ու նրա որդի Վահեին այդ երիտասարդները ծեծում էին ու հայհոյում (...), որոշեցի ինքս պաշտպանել նրանց, վազեցի Վահեի մոտ ձեռքերով փակեցի նրա դեմքը, սկսեցի գոռգոռալ, թե այդ ինչ են անում (...), որից հետո նրանք դադարեցին Վահեին ու Տիգրանին ծեծել, շտապ նստեցին մեքենան ու հեռացան (...): Կային էլի հավաքվածներ (...) որոնք **չեն միջամտել ծեծկոտուքին (...)**» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 37-38, 166-167):**

5.5. Վկա Սուսաննա Ներսիսյանի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքի համաձայն՝ «(...) 2013 թվականի օգոստոսի 22-ին ժամը 12:00-ի սահմաններում ես գտնվում էի իմ կրպակում (...) և այդ պահին փողոցի կողմից լավեցին սեռական բնույթի հայհոյանքներ (...): Այդ ժամանակ ես նայեցի ու տեսա, որ փողոցի մյուս կողմում Ռուզանի դեղատան դիմաց **4-5 երիտասարդներ ձեռքերով ու ոտքերով խառը հարվածում էին գետնին ընկած Տիգրանին (...):** Այդպես մոտ 4-5 րոպե Տիգրանին ծեծի ենթարկեցին ու **տալիս էին սեռական բնույթի հայհոյանքներ,** որոնք պարզ լավում էին իմ կրպակում: Այդ ժամանակ կրպակ մտավ մի անձանոթ հաճախորդուհի (...): Այդ պահին մի պահ ուշադրությունս շեղեցի ու տեսա, որ սև գույնի ուռուցիկ բռնախցիկով մի մեքենա կանգնեց կրպակի կողքին գտնվող ցայտաղբյուրի դիմաց, վարորդը շատ արագ դուռը բացեց ոտքով հարվածեց այնտեղ գտնվող Տիգրանի որդուն, որի անունը չգիտեմ, վերջինս ընկավ գետնին մեքենայից իջան կարծես 4 հոգի, որոնք քիչ առաջ

ծեծում էին Տիգրանին **հետո սկսեցին ձեռքով ու ոտքերով խառը հարվածել Տիգրանի որդու մարմնի տարբեր մասերին և տալիս էին բարձրաձայն սեռական բնույթի հայհոյանքներ**, որոնք նույնպես լսվում էին իմ կրպակում: Այդ միջադեպը ևս տևեց մոտ 4-5 րոպե, որից հետո նստեցին նույն մեքենան (...) ու արագ հեռացան դեպի լուսացույցի ուղղությամբ: (...): Ես Տիգրանին, նրա որդուն ձեծի ենթարկած 4-5 երիտասարդներին չեմ ճանաչում, նրանցից մեկը բարձրահասակ էր, թիկնեղ, սև հագուստերով ու սև մազերով: Նա էր Տիգրանի որդու **կրծքավանդակին առաջին հարվածողը**: Նրան տեսնելիս հնարավոր չէ ճանաչեմ, մյուսները նրանից փոքր-ինչ ցածրահասակ էին, սև հագուստներով: (...): Սակայն **ոչ ոք ձեռկոտուրի ժամանակ չի միջամտել** ես վախից կրպակից դուրս չեմ եկել: Տիգրանին և նրա որդուն ձեծելն ու հայհոյելն ընդհանուր առմամբ տևել է մոտ 10-15 րոպե, որի ընթացքում ես անընդհատ լսել եմ սեռական բնույթի հայհոյանքներ, անհանգստացել ու վախեցել եմ: Այդ տղաների ձեռքին ոչ մի զենք կամ այլ առարկաներ չեմ տեսել, միայն ձեռքերով ու ոտքերով էին հարվածում: (...): Ես գրեթե համոզված եմ, որ նրանք նույն Տիգրանին ձեծի ենթարկողներն էին, սակայն երբ էին նստել մեքենան կամ ինչու չեմ կարող ասել, այդ ժամանակ Տիգրանը փողոցի մյուս կողմում գետնին ընկած էր և հավանաբար որդին շտապում էր նրա մոտ: Տիգրանին ձեծելուց 1-2 րոպե անց ձեծի ենթարկեցին նրա որդուն» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 26-28):

5.6. Վկա Գրիգոր Սահակյանի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքի համաձայն՝ «(...) 2013 թվականի օգոստոսի 22-ին ժամը 12-ի սահմաններում ես միայնակ կանգնած էի ջրմուղի բակում ու փողոցի կողմից լսեցի գոռգոռոցի ձայներ (...), շտապ դուրս եկա ու տեսա, որ ջրմուղի դիմաց գտնվող դեղատան առջև 5 երիտասարդներ վիճում էին մոտ 50-60 տարեկան մի տղամարդու հետ, երիտասարդներից մեկը, որը բարձրահասակ էր սպորտային կազմվածքով չսափրված դեմքով, սև գույնի գանգուռ մազերով, հագին կար սև տաբատ, սև կարճաթև մայկա, սպիտակ գծերով, հողաթափեր, աջ ձեռքի բռունցքով հարվածեց այդ տարեց մարդու դեմքին, որը ընկավ գետնին, որից հետո **այդ 5 երիտասարդները սկսեցին ոտքերով խառը, ինչպես նաև ձեռքերով հարվածել այդ մարդու մարմնի տարբեր մասերին՝ հիմնականում գլխին**, իսկ այդ մարդը ձեռքերով բռնել էր գլուխ ու կծկվել (...): Այդ միջադեպը տևեց մոտ 4-5 րոպե, որի ընթացքում այդ 5 երիտասարդները, որոնցից ոչ մեկին չեմ ճանաչում, միայն իմ նշած բարձրահասակ սպորտային կազմվածքով երիտասարդին հնարավոր է ճանաչեմ (...): Մոտ **4-5 րոպե անխնա ձեծի ենթարկելուց** հետո այդ 5 երիտասարդները նստեցին հենց դեղատան առջև կայանված սև գույնի (...) ավտոմեքենան (...), բարձրահասակ սպորտային կազմվածքով երիտասարդը նստեց վարորդի նստատեղին ու տեղից արագ պոկվելով հեռացան: (...): Միջադեպի ժամանակ այդ 5 երիտասարդները ձեռքերով ու ոտքերով հարվածում էին այդ տարեց տղամարդու մարմնի տարբեր մասերին, նրանց մոտ որևէ առարկա, զենք չեմ տեսել, ինքս հայհոյանքներ չեմ

լսել, միայն վիրավորական արտահայտություններ են լսել տարեց մարդու հասցեին: (...):

(...) [Ծ]եծկոտուքի ժամանակ նրանցից **ոչ ոք չի մոտեցել, որ բաժանի, միայն 5 երիտասարդների հեռանալուց հետո խոհարարը մոտեցավ գետնին ընկած տարեց տղամարդուն»** (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 23-25, 147, 204):

Դատաքննության ընթացքում Գ.Սահակյանի նախաքննական ցուցմունքները հրապարակվելուց և հետազոտվելուց հետո վերջինս պնդել է իր նախաքննական ցուցմունքները (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 57):

5.7. Տուժող Տիգրան Խանդիլյանի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքի համաձայն՝ **«(...) հաջորդ օրը (...) ժամը 12-ի սահմաններում իջա տնից և ուզում էի ավտոմեքենա նստեի, այդ պահին երեկվա երիտասարդներից մեկը մոտեցավ ինձ և ասաց, թե հույսար ինչ էիր ասում և ինչ է եղել, ասեցի, որ առանձնապես բան չի եղել խոսում էի այդ տղայի հետ, որը մոտ 25-30 տարեկան միջահասակ տղա էր (...), այդ պահին իմ թիկունքի կողմից մուգ գույնի արտասահմանյան ավտոմեքենա կանգնեց միջից իջան ինչքան հիշում եմ 4-5 տղաներ, ոչինչ չասելով հարձակվեցին ինձ վրա և սկսեցին բողբոլ հարվածել ինձ, ես հարվածների հետևանքով ընկա գետնին ու նրանք շարունակում էին ինձ հարվածել, այնուհետև այդ տղաները հեռացան անմիջապես»** (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 16-19, 110-113, 144, 207):

5.8. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի համաձայն՝ ըստ տուժող Վահե Խանդիլյանի նախաքննական ցուցմունքների՝ **«(...) Տուժող Վահե Տիգրանի Խանդիլյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ 2013 թվականի օգոստոսի 22-ի ժամը 02-ի սահմաններում, իրենց շենքի մուտքի կողմից լսվել է բարձրաձայն խոսակցություն, որի կապակցությամբ էլ հայրը՝ Տիգրան Խանդիլյանը, նկատողություն անելու նպատակով իջել է բակ: Քիչ անց, բակ է իջել նաև ինքը և տեսել, որ հայրը գրուցում է իրեն անձանոթ երեք երիտասարդների հետ: Վերջիններիցս մեկն ասել է, որ դա այնպիսի թեմա չէ, որ վիճարանեն, որից հետո խոսակցությունն ավարտվել և ինքն ու հայրը վերադարձել են տուն: Առավոտյան ժամը 12-ի սահմաններում, Երևան քաղաք գնալու նպատակով, հոր հետ միասին դուրս են եկել տնից, բակում ինքը հանդիպել է ծանոթ տղաների և սկսել է գրուցել նրանց հետ, իսկ հայրը՝ մոտեցել է փողոցի մայթի մոտ կայանված իրենց ավտոմեքենային: Այդ պահին նկատել է, որ մի երիտասարդ, ով հավանաբար հանդիսացել է իրեն ծանոթ Արմենը՝ Վոլոդյայի որդին, մոտեցել է իր հորն ու նրանք սկսել են գրուցել: Ինքը քայլել է նրանց ուղղությամբ, սակայն մինչ վերջիններիս մոտ հասնելը, կանգնել է սև գույնի հեշքեք թափքով մի ավտոմեքենա, որից իջել են թվով 4-5 անձանոթ երիտասարդներ ու նրանցից մեկը, առանց որևէ բառ ասելու, հրել է իրեն և զցել գետնին, իսկ մյուսը՝ ոտքը դնելով իր մեջքին, անցել է իր վրայով: Անձանոթ երիտասարդները մոտենալով հորը՝**

սեռական բնույթի հայտյանքներ տալով, ոտքերով ու ձեռքերով հարվածներ են հասցրել նրան: Ինքը մոտեցել ու քաշքշել է այդ տղաներին՝ փորձելով գետնին ընկած հորն ազատել նրանց ձեռքից: Վերջիններիցս մեկը հարվածել է իր ոտքերին ու գցել գետնին, որից հետո, **հայտյանքների ուղեկցությամբ, ոտքերով ու ձեռքերով հարվածներ են հասցրել իր մարմնի տարբեր մասերին:** Սուսաննա անունով մի կին է մոտեցել և ձեռքերով ծածկելով իր մարմինը՝ թույլ չի տվել, որ իրեն այլևս հարվածեն, որից հետո՝ նշված երիտասարդները նստել են ավտոմեքենան ու հեռացել: Սուսաննայի օգնությամբ ինքը գնացել է տուն, իսկ հայրը՝ հավաքված մարդկանց օգնությամբ տեղափոխվել է Արտաշատի հիվանդանոց՝ բժշկական օգնություն ստանալու: Թեև հարվածների հետևանքով քերծվածքներ է ստացել աջ թևի, ափի և ձախ ձեռքի մատների շրջանում, սակայն բողոք կամ նյութական պահանջ չունի» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 53-54):

6. Անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին 2013 թվականի օգոստոսի 26-ի արձանագրության համաձայն՝ տուժող Ս.Խանդիլյանը ճանաչել է ամբաստանյալ Ա.Աղաբաբյանին՝ նշելով. «(...) [Ն]ա 22.08.2013 Մարքսի փողոցում ինձ առաջինը մոտեցած երիտասարդն է (...), որից հետո իմ կողքին կանգնած մեքենայից իջան ևս 4-5 երիտասարդներ ու սկսեցին ինձ ծեծի ենթարկել, (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 109):

6.1. Անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին 2013 թվականի օգոստոսի 27-ի արձանագրության համաձայն՝ տուժող Վ.Խանդիլյանը ճանաչել է ամբաստանյալ Ա.Աղաբաբյանին՝ նշելով. «(...) [Ի]ր հոր հետ 22.08.2013 սկզբում գրուցած անձը (...), բացի այդ ես այդ նույն մարդուն տեսել եմ նաև մեքենան նստել հեռանալուց, որը նույնպես կողքից եմ տեսել ու էլի իր արտաքին հատկանիշներով նման էր Արմենին, բայց միանշանակ ասել չեմ կարող» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 136):

7. Դատահետքաբանական և մանրաթելային թիվ 07801402 փորձաքննության եզրակացության համաձայն՝

(...)

(...) Փորձաքննությանը ներկայացված՝

- Վահե Խանդիլյանի կարճաթև մայկայի արտաքին մակերեսի վրա հայտնաբերված բնական բամբակյա սև գույնի, կապույտ գույնի, մուգ կապույտ գույնի և քիմիական հարթ սև գույնի /32 մկմ/, կապույտ գույնի /32մկմ/ մանրաթելերն ունեն ընդհանուր սեռային պատկանելիություն Արմեն Աղաբաբյանի հագուստներից կարճաթև մայկայի գործվածքի կազմի մեջ մտնող բնական բամբակյա սև գույնի, քիմիական հարթ սև գույնի /32մկմ/ մանրաթելերի և ջինսի անդրավարտիքի գործվածքի կազմի մեջ մտնող բնական բամբակյա կապույտ գույնի, մուգ կապույտ գույնի, քիմիական հարթ կապույտ գույնի /32մկմ/ մանրաթելերի հետ:

- Վահե Խանդիլյանի սպորտային անդրավարտիքի արտաքին մակերեսի վրա հայտնաբերված բնական բամբակյա սև գույնի, բաց կապույտ գույնի, մուգ կապույտ գույնի և քիմիական հարթ սև գույնի /32մկմ/ մանրաթելերն ունեն ընդհանուր սեռային պատկանելիություն Արմեն Աղաբաբյանի հագուստներից կարճաթև մայկայի գործվածքի կազմի մեջ մտնող բնական բամբակյա սև գույնի, քիմիական հարթ սև գույնի /32մկմ/ մանրաթելերի և ջինսե անդրավարտիքի գործվածքի կազմի մեջ մտնող բնական բամբակյա կապույտ գույնի և մուգ կապույտ գույնի մանրաթելերի հետ:

- Տիգրան Խանդիլյանի կարճաթև մայկայի արտաքին մակերեսի վրա հայտնաբերված բնական բամբակյա կապույտ գույնի, բաց կապույն գույնի, մուգ կապույտ գույնի մանրաթելերն ունեն ընդհանուր սեռային պատկանելիություն Արմեն Աղաբաբյանի հագուստներից ջինսե անդրավարտիքի գործվածքի կազմի մեջ մտնող բնական բամբակյա կապույտ գույնի, բաց կապույտ գույնի և մուգ կապույն գույնի մանրաթելերի հետ:

- Տիգրան Խանդիլյանի անդրավարտիքի արտաքին մակերեսի վրա հայտնաբերված բնական բամբակյա սև գույնի, կապույտ գույնի, մուգ կապույտ գույնի մանրաթելերն ունեն ընդհանուր սեռային պատկանելիություն Արմեն Աղաբաբյանի հագուստներից կարճաթև մայկայի գործվածի կազմի մեջ մտնող բնական բամբակյա սև գույնի մանրաթելերի և ջինսե անդրավարտիքի գործվածի կազմի մեջ մտնող բնական բամբակյա կապույտ գույնի և մուգ կապույտ գույնի մանրաթելերի հետ:

(...) Փորձաքննությանը ներկայացված՝

- Արմեն Աղաբաբյանի կարճաթև մայկայի արտաքին մակերեսի վրա հայտնաբերված բնական բամբակյա սև գույնի, կապույտ գույնի, մուգ կապույտ գույնի մանրաթելերն ունեն ընդհանուր սեռային պատկանելիություն Վահե Խանդիլյանի հագուստներից կարճաթև մայկայի գործվածքի կազմի մեջ մտնող բնական բամբակյա անգույն, մոխրագույն և քիմիական հարթ անգույն /24մկմ/ մանրաթելերն ունեն ընդհանուր սեռային պատկանելիություն մանրաթելերի և Տիգրան Խանդիլյանի հագուստներից կարճաթև մայկայի գործվածքի կազմի մեջ մտնող բնական բամբակյա անգույն, բաց շագանակագույն և քիմիական հարթ անգույն /24մկմ/ մանրաթելերի հետ:

- Արմեն Աղաբաբյանի ջինսե անդրավարտիքի արտաքին մակերեսի վրա հայտնաբերված բնական բամբակյա անգույն, մոխրագույն, բաց շագանակագույն և քիմիական հարթ անգույն /24մկմ/, սև /24մկմ/ մանրաթելերն ունեն ընդհանուր սեռային պատկանելիություն Վահե Խանդիլյանի հագուստներից կարճաթև մայկայի գործվածքի կազմի մեջ մտնող բնական բամբակյա անգույն, մոխրագույն, քիմիական հարթ անգույն /24մկմ/ մանրաթելերի, սպորտային անդրավարտիքի գործվածքի կազմի մեջ մտնող բնական բամբակյա անգույն, մոխրագույն, բաց շագանակագույն և քիմիական հարթ անգույն /24մկմ/, սև /24մկմ/ մանրաթելերի և Տիգրան Խանդիլյանի հագուստներից կարճաթև մայկայի գործվածքի կազմի

մեջ մտնող բնական բամբակյա անգույն, մոխրագույն և քիմիական հարթ անգույն /24սկմ/ մանրաթելերի, անդրավարտիքի գործվածքի կազմի մեջ մտնող բնական բամբակյա անգույն, բաց շագանակագույն և քիմիական հարթ անգույն /24սկմ/ մանրաթելերի հետ: (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 83-87):

8. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Դատարանը հանգում է այն հետևություն, որ ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով ընդամենը հիմնավորված է այն, որ ամբաստանյալը գտնվել է դեպքի վայրում, առնչություն և շփում է ունեցել գործով տուժողների ու նրանց նկատմամբ բռնություն գործադրած անձանց հետ և, որ վերջիններիս հետ նույն ակտում էքենայով է հեռացել դեպքի վայրից: Դրա հետ մեկտեղ, Դատարանն արձանագրում է, որ այդ հանգամանքների համակցությունը բավարար չէ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալի մեղքն ապացուցված ճանաչելու համար, քանի որ նրան մեղսագրված արարքի կատարման շարժառիթի, դիտավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող նրա կոնկրետ գործողությունների վերաբերյալ գործով բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել, ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխանող փաստական տվյալներով չեն հիմնավորվել նաև մեղադրանքի փաստական կողմի նկարագրության մեջ տեղ գտած փաստարկներն (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 76-77):

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման, որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը չի բովանդակում հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալներ:

Մասնավորապես՝ Ա. Աղաբաբյանին առաջադրված մեղադրանքը չի բովանդակում որևէ փաստական տվյալ այն մասին, թե նա խուլիզանական մղումներով բարձրաձայն սեռական բնույթի հայհոյանքների ուղեկցությամբ հարձակվել է այդ պահին Գրիգոր Հովակիմյանի հարվածից գետնին ընկած Տիգրան Խանդիլյանի վրա ու ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել նրա դեմքին (...): Հարձակվել է այդ պահին հորն օգնության շտապած, Գրիգոր Հովակիմյանի հարվածից գետնին տապալված Վահե Խանդիլյանի վրա և մոտ 3 րոպե շարունակ ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել նրա դեմքին, ձեռքերին և ոտքերին (...):

(...)

Վերաքննիչ դատարանը փաստում է հետևյալը.

1. ամբաստանյալը գտնվել է դեպքի վայրում,
2. առնչություն և շփում է ունեցել գործով տուժողների ու նրանց նկատմամբ բռնություն գործադրած անձանց հետ,

3. վերջիններիս հետ նույն ավտոմեքենայով է հեռացել դեպքի վայրից:

Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ այդ հանգամանքների համակցությունը բավարար չէ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալի մեղքն ապացուցված ճանաչելու համար, քանի որ նրան մեղսագրված արարքի կատարման շարժառիթի, դիտավորության սուբյեկտիվ կողմը և ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող նրա կոնկրետ գործողությունների վերաբերյալ գործով բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 131-132):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոք բերած անձը փաստել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական նորմերի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն վերոգրյալի՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին աստիճանի դատարանը վկաների և տուժողների նախաքննական և դատաքննական ցուցմունքները պատշաճ իրավական վերլուծության ու գնահատման չի ենթարկել: Մինչդեռ դատաքննությանն ընթացքում հետազոտված ապացույցներից բխում է, որ դեպքի նախորդ օրվա գիշերը տեղի ունեցած խոսակցությանն այլ անձանց հետ մասնակցել է նաև Ա.Աղաբաբյանը, իսկ դեպքի օրը հենց նա է առաջինը մոտեցել և գրույցի բռնվել Տ.Խանդիլյանի հետ, ինչին անմիջապես հաջորդել են չորս անձանց մոտենալու և տուժողներին ծեծի ենթարկելու գործողությունները: Այդ մասին է վկայում նաև լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու արձանագրությունները, ինչպես նաև վկա Մ.Հայրապետյանի ցուցմունքները:

Բողոքի հեղինակն ընդգծել է, որ թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ընթացքում չի եղել որևէ մեկը, ով կվկայեր ծեծողներին բաժանող որևէ անձի մասին: Ավելին, դեպքին բոլոր ներկաները նշել են, որ այդպիսի անձ չի եղել:

Բացի այդ, վկաների և տուժողների ցուցմունքների համաձայն՝ տուժողներին ծեծի ենթարկած բոլոր անձինք նստել են նույն ավտոմեքենան ու դիմել փախուստի: Ինչ վերաբերում է ամբաստանյալի այն ցուցմունքներին, որ տուժողներին չի ծեծել և նրանց ընդհանրապես չի դիպչել, ապա դրանք հերքվում են դատահետքաբանական և միկրոմասնիկների փորձաքննության թիվ 07801402 եզրակացությամբ: Նման պայմաններում Առաջին աստիճանի դատարանի դատողություններն Ա.Աղաբաբյանի անմեղության մասին միակողմանի են և չեն բխում գործով ձեռք բերված ու հետազոտված ապացույցներից:

11. Ինչ վերաբերում է Ա.Աղաբաբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատժին, ապա այն ակնհայտ մեղմ է և չի նպաստում պատժի նպատակների իրականացմանը:

Ըստ բողոք բերած անձի՝ Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել Ա.Աղաբաբյանին մեղսագրվող արարքի վտանգավորության աստիճանը և անձը բնութագրող տվյալները: Արարքի բարձր վտանգավորության մասին է վկայում հանցանքն ուղղակի դիտավորությամբ կատարելը, որի հետևանքով տուժողը զրկվել է իր եկամտի միակ աղբյուրը համարվող ցլիկներից: Թեև ստորադաս դատարանը որպես մեղմացնող հանգամանք է դիտել Ա.Աղաբաբյանի կողմից հափշտակված ցլիկների գումարի մի մասը վերադարձնելը, սակայն անտեսել է, որ այդ գումարը տուժողին վերադարձվել է միայն քրեական գործի հարուցումից ամիսներ անց: Բացի այդ, ստորադաս դատարանը հաշվի չի առել նաև այն, որ մինչ օրս Ա.Աղաբաբյանն ամբողջությամբ չի հատուցել տուժողին հասցված վնասը:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և պատժի մասով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 26-ի և Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 29-ի դատական ակտերը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ա.Աղաբաբյանի մասնակցությունն ապացուցված չլինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

«Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:

Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝

«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից»:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը՝ որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, թեև ապացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում է առկա ապացույցները բարեխիղճ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով (տե՛ս, *mutatis mutandis*, Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԲԴ/0632/01/08 և Հմայակ Դավթյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԲ/0126/01/12 որոշումները):

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված»:

(...)

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.

դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Դատական ակտերի պատճառաբանվածության օրենսդրական պահանջը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ֆ. Գալստյանի* գործով որոշման մեջ՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է դեկլարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օրենսդրությունն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման (...)» (տե՛ս *Ֆ. Գալստյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

Վերահաստատելով *Ֆ. Գալստյանի* գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Գ. Խնուսյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է. «(...) [Հ]աշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: (...)» (տե՛ս *Գ. Խնուսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա. Աղաբաբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել Գ. Հովակիմյանի և ինքնությունը չպարզված մի խումբ անձանց հետ, դեռևս նախորդ օրը գիշերային ժամին աղմկելու կապակցությամբ տուժողի կողմից արված օրինական դիտողության հիման վրա սկսված վիճաբանությունն օգտագործելով, հասարակական վայրում՝ փողոցի բանուկ հատվածում, հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու և հասարակության նկատմամբ բացահայտ

անհարգալից վերաբերմունք դրսևորելու, այն է՝ բարձրաձայն սեռական բնույթի հայհոյանքների ուղեկցությամբ տուժողներ Տ.Խանդիլյանի և նրա որդու՝ Վ.Խանդիլյանի նկատմամբ բռնություն գործադրելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ ապացույցների բավարար համակցությամբ ընդամենը հիմնավորվել է, որ ամբաստանյալը գտնվել է դեպքի վայրում, առնչություն և շփում է ունեցել գործով տուժողների ու նրանց նկատմամբ բռնություն գործադրած անձանց հետ և վերջիններիս հետ նույն ավտոմեքենայով հեռացել է դեպքի վայրից: Մինչդեռ գործով ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ մեղսագրված արարքի կատարման շարժառիթի, դիտավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող կոնկրետ գործողությունների վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը համաձայնել է Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշման հետ, որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը չի բովանդակում հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալներ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստերից երևում է, որ ստորադաս դատարանները հաստատված են համարել այն, որ ամբաստանյալ Ա.Աղաբաբյանը գտնվել է դեպքի վայրում, առնչություն է ունեցել տուժողների և նրանց նկատմամբ բռնություն գործադրած մյուս անձանց հետ, այնուհետև վերջիններիս հետ հեռացել է դեպքի վայրից:

Գործում առկա փաստական տվյալներից հետևում է նաև, որ՝

- տուժող Տ.Խանդիլյանի հետ առաջինը զրուցած անձը եղել է ամբաստանյալ Ա.Աղաբաբյանը (տե՛ս սույն որոշման 5.8-րդ, 6-6.1-րդ կետերը): Այնուհետև սև գույնի ավտոմեքենայից իջել են մոտավորապես 4-5 երիտասարդ, ովքեր հարձակվել են տուժողների վրա, հայհոյանքների ուղեկցությամբ սկսել են հարվածներ հասցնել վերջիններիս մարմնի տարբեր մասերին (տե՛ս սույն որոշման 5.1-5.8-րդ կետերը),

- առկա չեն տվյալներ այն մասին, որ նշված երիտասարդներից ինչոր մեկը փորձել է միջամտել և դադարեցնել ծեծկռտուքը: Ընդհակառակը, ըստ որոշ վկաների ցուցմունքների՝ որևէ մեկը չի մոտեցել, չի փորձել բաժանել ու դադարեցնել վիճաբանությունը (տե՛ս սույն որոշման 5.4-5.6-րդ կետերը),

- տուժողներին ծեծի ենթարկելուց հետո բոլոր երիտասարդները մեքենայով հեռացել են դեպքի վայրից (տե՛ս սույն որոշման 5.1-5.8-րդ կետերը),

- դատահետքաբանական և մանրաթելային փորձաքննության եզրակացության համաձայն՝ Վ.Խանդիլյանի կարճաթև մայկայի, սպորտային անդրավարտիքի վրա հայտնաբերած մանրաթելերն ունեն ընդհանուր սեռային պատկանելիություն Ա.Աղաբաբյանի հագուստներից կարճաթև մայկայի գործվածքի կազմի մեջ մտնող մանրաթելերի հետ, Տ.Խանդիլյան-

նի կարճաթև մայկայի, անդրավարտիքի վրա հայտնաբերած մանրաթելերն ունեն ընդհանուր սեռային պատկանելիություն Ա.Աղաբաբյանի հագուստներից կարճաթև մայկայի և ջինսե անդրավարտիքի գործվածքի կազմի մեջ մտնող մանրաթելերի հետ:

Ա.Աղաբաբյանի կարճաթև մայկայի արտաքին մակերեսի վրա հայտնաբերված մանրաթելերն ունեն ընդհանուր սեռային պատկանելիություն Վ.Խանդիլյանի հագուստներից կարճաթև մայկայի գործվածքի կազմի մեջ մտնող մանրաթելերի և Տ.Խանդիլյանի հագուստներից կարճաթև մայկայի գործվածի կազմի մեջ մտնող մանրաթելերի հետ: Ա.Աղաբաբյանի ջինսե անդրավարտիքի արտաքին մակերեսի վրա հայտնաբերված մանրաթելերն ունեն ընդհանուր սեռային պատկանելիություն Վ.Խանդիլյանի հագուստներից կարճաթև մայկայի և սպորտային անդրավարտիքի գործվածքի կազմի մեջ մանրաթելերի, Տ.Խանդիլյանի հագուստներից կարճաթև մայկայի և անդրավարտիքի գործվածի կազմի մեջ մանրաթելերի հետ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

18. Սույն որոշման 16-17-րդ կետերում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, հաստատված համարելով, որ ամբաստանյալ Ա.Աղաբաբյանը գտնվել է դեպքի վայրում, առնչություն և շփում է ունեցել գործով տուժողների ու նրանց նկատմամբ բռնություն գործադրած անձանց հետ և վերջիններիս հետ նույն ավտոմեքենայով հեռացել է դեպքի վայրից, պատշաճ վերլուծության և գնահատման չեն ենթարկել գործում առկա ապացույցները:

Մասնավորապես, ստորադաս դատարանները որևէ գնահատականի չեն արժանացրել վկաների և տուժողների ցուցմունքներն առ այն, որ 4-5 երիտասարդ, որոնց թվում եղել է նաև Ա.Աղաբաբյանը, հարձակվել են տուժողների վրա, բոլորը հայիոյանքների ուղեկցությամբ հարվածներ են հասցրել նրանց մարմնի տարբեր մասերին, նշված անձանցից որևէ մեկը չի փորձել բաժանել ու դադարեցնել վիճաբանությունը, տուժողներին ծեծի ենթարկելուց հետո բոլորը մեքենայով հեռացել են դեպքի վայրից: Վերոնշյալ փաստական տվյալներով, ինչպես նաև դատահետքաբանական և մանրաթելային փորձաքննության եզրակացությամբ հերքվում են նաև ամբաստանյալ Ա.Աղաբաբյանի այն ցուցմունքները, որ վերջինս Տ.Խանդիլյանին նկատել է, երբ նա ընկած է եղել գետնին, իսկ ինքը կռվին միջամտել է միայն դադարեցնելու նպատակով (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը):

19. Վերոգրյալի պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները, անտեսել են Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքը, ինչի արդյունքում կայացրել են անհիմն և չպատճառաբանված դատական ակտեր:

Ոստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ա.Աղաբաբյանի մասնակցությունն ապացուցված չլինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

20. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները խախտել են ապացույցները գնահատելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջները, կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտեր, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն քրեադատավարական օրենքի էական խախտում է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արդարացման դատավճիռը (...) չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման շարժառիթով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի հարուցում»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա փաստական հանգամանքների պայմաններում ստորադաս դատարանների կողմից թույլ տրված քրեադատավարական իրավունքի էական խախտումները կասկածի տակ են առնում ամբաստանյալ Ա.Աղաբաբյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք կատարելու համար առաջադրված մեղադրանքում, ուստի հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկելու Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, պետք է հանգի համապատասխան հետևության:

21. Անդրադառնալով Ա.Աղաբաբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատիժն անարդարացի՝ ակնհայտ մեղմ լինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է հետևյալը.

Գ.Մաղաթյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորվել այն մասին, որ «(...) [Ա]յլընտրանքային սանկցիաների միջև ընտրություն կատարելիս պատժի արդարացիության սկզբունքի ապահովման հիմնական երաշխիքը դատարանների կողմից յուրաքանչյուր գործի քննության ժամանակ այնպիսի հանգամանքների բացահայտումն է, որոնք ազդել են անձի կողմից կա-

տարված արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա:

(...) Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը (...)» (տե՛ս Գարուշ Նորիկի Մադաթյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08 որոշման 13-14-րդ կետերը):

Ա.Սարգսյանի և Գ.Պետրոսյանի գործերով որոշումներում իրավական դիրքորոշում է ձևավորվել այն մասին, որ. «(...) [Հ]անցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազեցման համար էական նշանակություն ունի պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հանգամանքը» (տե՛ս Ալեքսան Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅԲԲԳ/0109/01/08 որոշման 31-րդ կետը, Գրիգոր Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԳ/0126/01/10 որոշման 22-րդ կետը):

Հիմք ընդունելով սույն որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Առաջին ատյանի դատարանը գործի նոր քննության ընթացքում պետք է քննարկման առարկա դարձնի սույն որոշման 11-րդ կետում մեջբերված վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արմեն Վլադիմիրի Ադաբաբյանի վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մայիսի 29-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ

քրեական դատարանի 2015 թվականի նոյեմբերի 26-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արմեն Վլադիմիրի Աղաբաբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

44.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԳ/0017/12/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ
դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԳԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
դատապարտյալ
պաշտպան

Մ.Պետրոսյանի
Թ.Սաղաթեյանի
Ռ.Սաֆարյանի

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ
քրեական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ դատա-
պարտյալ Թելման Դավիթի Սաղաթեյանի և պաշտպան Ռ.Սաֆարյանի
վճռաբեկ բողոքը.

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդ-
հանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի
հոկտեմբերի 3-ի դատավճռով Թելման Դավիթի Սաղաթեյանը մեղավոր է
ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-
րդ կետերով, 184-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 38-308-րդ հոդվա-
ծի 1-ին մասով, ու ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասով

սահմանված կարգով նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով և տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի կիրառմամբ Թ.Սաղաթեյանն ազատվել է պատժի կրումից:

2. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ բողոքը բավարարել է և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 3-ի դատավճիռը՝ Թ.Սաղաթեյանի նկատմամբ նշանակված պատժի մասով, բեկանել և փոփոխել է: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով Թ.Սաղաթեյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով և տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով: Իսկ արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատժի մեջ հաշվակցվել է ամբաստանյալի՝ 6 (վեց) ամիս արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածը, և վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով և տուգանք՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ պատժի կրման սկիզբը հաշվելով նրան փաստացի արգելանքի վերցնելու օրվանից:

3. ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի պետի՝ 2015 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ դատապարտյալ Թ.Սաղաթեյանի նկատմամբ կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 8-րդ կետի 3-րդ ենթակետը, և վերջինիս նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված պատժաչափի չկրած մասը կրճատվել է մեկ երրորդով ու վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 2 (երկու) տարի 8 (ութ) ամիս ժամկետով:

4. ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը (այսուհետ՝ նաև ԲԿՀ-ի վարչակազմ) 2016 թվականի մարտի 29-ին միջնորդագիր է ներկայացրել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ դատապարտյալ Թ.Սաղաթեյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ:

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ ՔԿՀ-ի վարչակազմի միջնորդագիրը բավարարվել է, և որոշվել է դատապարտյալ Թ.Սաղաթեյանին պայմանական վաղաժամկետ ազատել պատժի մնացած մասը՝ 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 4 (չորս) օրը կրելուց:

6. Գատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի մայիսի 31-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 14-ի որոշումը բեկանելու և դատապարտյալ Թ.Սաղաթեյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը վերացնելու մասին:

7. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճարելի բողոք են բերել դատապարտյալ Թ.Սաղաթեյանն ու պաշտպան Ռ.Սաֆարյանը:

Վճարելի դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Գատախազության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Թ.Սաղաթեյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 184-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 38-308-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել, և վերջինս դատապարտվել է այն բանի համար, որ «*Նյա իրեն պատկանող, ավտոտրանսպորտային պատահարների պարտադիր ապահովագրական ընկերություններում չհաշվառված «Միցուբիշի ԻՌ» մակնիշի 31 ՕՏ 529 հ/հ ավտոմեքենան 2013 թվականի մարտի 29-ին Անժելա Ջանգիրյանին վստահելուց հետո, վերջինիս կողմից Երևան քաղաքի Խուդյակով փողոցում ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու, Ա.Կարապետյանի ու Հ.Գրիգորյանի ավտոմեքենաներին բախվելու և նրանց նյութական վնաս պատճառելու հետևանքով նյութական վնաս չկրելու համար, Անժելա Ջանգիրյանի հետ նախնական համաձայնության գալով, Ա.Ասատուրյանի և Հ.Գրիգորյանի օժանդակությամբ, ապահովագրական «Ռոսգոսստրախ Արմենիա» ՓԲ ընկերությունից խաբեության եղանակով խոշոր չափերի հասնող գումար հափշտակելու և նույն ընկերությանը խաբեությամբ խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու ուղղակի դիտավորությամբ, ՀՀ ոստիկանության ԶԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնի քննիչ Աշոտ Ասատուրյանին դրդել է չարաշահել իր պաշտոնական լիազորությունները, ինչից հետո Ա.Ասատուրյանը, դեպքի առթիվ նախապատրաստված նյութերում խեղաթյուրելով դեպքի իրական հանգամանքները, հերքել է Ա.Ջանգիրյանի մեղավորությունը և հիմնավորել վթարում ակնհայտ անմեղ Համլետ Գրիգորյանի*

մեղավորությունը: Ա.Ասատուրյանի կողմից կայացված որոշումը ներկայացնելով Հանլետ Գրիգորյանի ավտոմեքենայի ապահովագրական «Ռոսգոսստրախս Արմենիա» ՓԲ ընկերություն՝ Թ.Սաղաթեյանը և Ա.Ջանգիրյանը խմբով՝ Ա.Ասատուրյանի և Հ.Գրիգորյանի օժանդակությամբ խաբեությամբ հափշտակել են Թ.Սաղաթեյանին պատկանող ավտոմեքենային պատճառոված գույքային վնասի փոխհատուցման ձևակերպմամբ տրված խոշոր չափերի հասնող գումարը և նույն ընկերությանը խաբեությամբ պատճառել նաև խոշոր չափերի վնաս՝ Ա.Կարապետյանի ավտոմեքենային պատճառոված գույքային վնասի փոխհատուցման ձևով» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 8, 16, 21-22):

9. 2016 թվականի մարտի 29-ին ՔԿՀ-ի վարչակազմը, նախապես ստանալով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունը, միջնորդագիր է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով դատապարտյալ Թ.Սաղաթեյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատել (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 1-2, 6):

9.1. Համաձայն ՔԿՀ-ի վարչակազմի կողմից ներկայացված՝ դատապարտյալ Թ.Սաղաթեյանի բնութագրում, ի թիվս այլնի, լրացված հետևյալ տեղեկությունների՝ դատապարտյալը ամուսնացած է, խնամքի տակ են գտնվում երեք երեխաներ, կրթությունը միջնակարգ է, մասնագիտություն, մասնագիտական հմտություններ չունի, մինչև դատապարտվելը չի աշխատել, ֆիզիկապես առողջ է, նախկինում դատված չէ, տույժի և խրախուսանքի չի ենթարկվել, մասնակցել է հիմնարկում իրականացվող միջոցառումներին և աշխատանքներին, քաղաքացիական հայց չունի, արտաքին աշխարհի և ընտանիքի հետ կապը պահպանում է, բնավորությամբ հանգիստ է, շփվող, կատարած հանցանքի համար գղջում է, բնակարանային և նյութակենցաղային խնդիրներ չունի (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 3):

10. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Ըստ նյութերում առկա քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից տրված բնութագրի՝ դատապարտյալ Թ.Սաղաթեյանը բնութագրվում է դրական, նրա ուղղման գործընթացի և ընթացիկ գնահատման արդյունքները միջին են, իսկ ռիսկայնության աստիճանը՝ ցածր:

(...) [Հ]աշվի առնելով դատապարտյալ Թ.Սաղաթեյանի՝ պատիժը կրելու ընթացքում դրսևորած վարքագիծը, ուղղման գործընթացի և ընթացիկ գնահատման արդյունքներն ու ռիսկայնության աստիճանը, ինչպես նաև նախկինում դատապարտված չլինելու հանգամանքը, դատարանը գտնում է, որ դատապարտյալի կրած պատիժը բավարար է նրա ուղղվելու համար, և որ դատապարտյալ Թ.Սաղաթեյանն ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի, միջնորդագիրը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի, 76-րդ հոդվա-

ծի 1-ին մասի, 3-րդ մասի 1-ին կետի բովանդակությունից, ենթակա է բավարարման և Թ.Սաղաթեյյանին պետք է պայմանական վաղաժամկետ ազատել պատժի մնացած մասը՝ 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 4 (չորս) օր, կրելուց (...))» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 43-46):

11. Վերաքննիչ դատարանը 2016 թվականի մայիսի 31-ի որոշմամբ փաստել է. « (...) Առաջին ատյանի դատարանի որոշման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Առաջին ատյանի դատարանը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդագրի քննարկման ժամանակ հիմնվել է միայն պատժի կրման ընթացքում դատապարտյալ Թ.Սաղաթեյյանի վարքագծի վրա և որոշում կայացնելիս (...) քննարկման առարկա չի դարձրել և հաշվի չի առել Թ.Սաղաթեյյանի կատարած արարքների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը:

Վերաքննիչ դատարանը հաշվի առնելով Թ.Սաղաթեյյանի կատարած արարքների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, մասնավորապես՝ վերջինի գործողությունների վտանգավորությունը, գտնում է, որ Թ.Սաղաթեյյանը դեռևս չի ուղղվել, այսինքն՝ պատժի նպատակներն իրականացված չեն և նա կարիք ունի շարունակելու պատիժը կրել:

Իսկ ինչ վերաբերում է դատապարտյալ Թ.Սաղաթեյյանի դրականորեն բնութագրվելուն և ռիսկայնությունը ցածր լինելուն, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում դրանք բավարար չեն՝ գալու հետևության, որ դատապարտյալ Թ.Սաղաթեյյանն ուղղվել է և կարիք չունի շարունակելու պատիժը կրել (...))» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 36):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

12. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակները փաստել են, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված ու պատճառաբանված չէ: Մասնավորապես՝ ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանը խախտել է գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ու հետազոտման վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պարտականությունը, ինչը հանգեցրել է դատապարտյալի դատավարական իրավունքների, արդարացի քննության սկզբունքի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկների՝ բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ դատարանը պատիժ նշանակելիս դեռևս 2014 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ արդեն իսկ հաշվի է առել և՛ կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, և՛ բնույթը, ինչպես նաև դատապարտյալի անձը բնութագրող տվյալները,

այդ թվում՝ նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները: Բացի այդ, բողոքաբերների կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի կողմից կոնկրետ որևէ փաստ, հիմք չի բերվել, որն արգելող հանգամանք կլիներ Թ.Սաղաթելյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համար կամ բացասական է անդրադարձել նրա ուղղվելու վրա:

Վերոգրյալի հետ մեկտեղ բողոքաբերները նշել են, որ Առաջին աստիճանի դատարանը պատժի կրումից դատապարտյալ Թ.Սաղաթելյանին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննելիս որևէ օրենսդրական պահանջ և արգելք չի խախտել, ղեկավարվել է Վճարելի դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 30-ի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներով:

13. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ բողոքի հեղինակները խնդրել են դատապարտյալ Թ.Սաղաթելյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 31-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 14-ի որոշմանը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ պատժի կրումից դատապարտյալ Թ.Սաղաթելյանին պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Առաջին աստիճանի դատարանի որոշումը իրավաչափ չէ:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ազատագրված կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Ընդ որում, անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պատժից պայմանական վաղաժամկետ ազատում և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինում դատարանը կիրառում է պատժի կատարումն իրականացնող մարմնի միջնորդագրով (...):»:*

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով կարող է փոխարինվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է*

պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով դրա համար սահմանված նվազագույն ժամկետը: Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում չի կիրառվում, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալն ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը: Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությանը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում դատարան միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունն ստանալու դեպքում»:

16. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կառուցակարգը նախատեսող, դրա գործադրման կարգն ու պայմանները սահմանող քրեաիրավական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրության՝ վերը մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել Ա. Ղազարյանի գործով որոշման մեջ՝ ձևավորելով, ի թիվս այլնի, հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) [Պ]ատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության հարցը լուծելիս դատարանը, հիմնվելով պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի ներկայացրած նյութերի, այդ թվում՝ դատապարտյալի բնութագրում լրացվող տեղեկությունների վրա, պետք է կատարի դրանց մանրամասն վերլուծություն, հետազոտում և գնահատում: Մասնա-

վորապես, դատարանը պետք է օրյեկտիվ գնահատման ենթարկի առկա, ի թիվս այլնի, հետևյալ տեղեկությունները՝

ա) դատապարտյալի տարիքը, սեռը, կրթությունը, մասնագիտությունը, մասնագիտական հմտությունները, աշխատանքը՝ մինչև դատապարտվելը, առողջական վիճակը, ընտանեկան դրությունը, խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը,

բ) նախկին դատվածության առկայությունը, նախկինում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման, ներման, համաներման կամ այլ հիմքով պատիժը ոչ ամբողջությամբ կրելուց ազատման հանգամանքը (...):

գ) հանցագործության արդյունքում դատապարտյալի կողմից տուժողին պատճառած վնասի առկայությունը, առկայության դեպքում այն հարթելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները (...):

դ) պատժի կրման ողջ ժամանակահատվածի ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ խրախուսանքների, տույժերի առկայությունը կամ բացակայությունը, առկայության դեպքում դրանց հիմքում ընկած հանգամանքները, մասնակցությունը ինքնագործ միավորումների աշխատանքին, կրթական, աշխատանքային, մշակութային և այլ բնույթի ծրագրերին, հանրօգուտ միջոցառումներին, դատապարտյալի վարքը, բնավորությունը, խառնվածքը, հոգեբանական առանձնահատկությունները և դրանց դիմամիկան, ընտանիքի անդամների, արտաքին աշխարհի հետ կապը, դատապարտյալի վերաբերմունքը կատարած հանցագործությանն ու դատավճռին, դատապարտյալի մոտ բացասական հակումների առկայությունը կամ բացակայությունը, առկայության դեպքում դրանց նվազեցման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները,

ե) պատժի կրումից ազատվելուց հետո դատապարտյալի բնակարանային, աշխատանքային, նյութակենցաղային ապահովվածությունը և հետագա ծրագրերը: (...)

(...) [Պ]ատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը լուծելիս գնահատման ենթակա վերոնշյալ չափանիշները սպառիչ չեն, և դատարանը օրենքով իրեն վերապահված թույլատրելի հայեցողության շրջանակներում կարող է հաշվի առնել ցանկացած այլ հանգամանք՝ պայմանով, որ այն լինի իրական և հնարավորություն ընձեռի հիմնավորված հետևության հանգելու պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում պատժի նպատակների իրագրվելիքի հարցում:

(...) [Կ]ատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը (մեղքի ձև և տեսակ, հանցագործության նպատակ ու շարժառիթ, հանցագործությամբ պատճառված վնասի չափ, հանցագործության կատարման եղանակ, հանցավոր մտադրության իրականացման աստիճան, հանցակցության դեպքում՝ հանցագործությանը հանցավորի մասնակցության աստիճան և այլն) թեև ունի նշանակություն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը լուծելու համար,

սակայն այն **ինքնին չի կարող պատժից վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու կամ բավարարելու հիմք դիտարկվել**. նշյալ հանգամանքները **պետք է գնահատվեն համակցության մեջ**՝ դատապարտյալի անձի և պատժի կրման ընթացքում նրա դրսևորած վարքագծի համակողմանի ուսումնասիրության հետ մեկտեղ: Պատժից ազատելու քննարկվող տեսակի հարցը լուծելիս կատարված հանցագործության բնույթին և վտանգավորության աստիճանին որոշիչ նշանակություն չտալու վերաբերյալ **Վճարելի դատարանի սույն դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ դրանք, ընկած լինելով ոչ միայն հանցագործությունների դասակարգման (ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդված), այլև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների հիմքում և ապահովելով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման հիմնարար դրույթների իրացումը, դատարանի կողմից պարտադիր հաշվի են առնվում պատիժ նշանակելիս՝ պատժի տեսակը և չափը որոշելիս (ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդված): Հետևաբար քննարկվող ինստիտուտի գործադրման հարցը քացառապես հանցագործության որակական և քանակական հատկանիշների հիման վրա լուծելը կամ դրանց հիմնական, առաջնային նշանակություն վերագրելը չի կարող իրավաչափ համարվել (...)**» (տե՛ս Արմեն Ղազարյանի գործով Վճարելի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի ԱԲԱԳ/0002/12/16 որոշման 21-րդ կետը):

17. Սույն գործի նյութերից երևում է, որ 2016 թվականի մարտի 29-ին ԲԿՀ-ի վարչակազմը, նախապես ստանալով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունը, միջնորդագիր է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ դատապարտյալ Թ.Սաղաթելյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 4-րդ և 9-րդ կետերը): Միջնորդագրին կից ներկայացված՝ դատապարտյալ Թ.Սաղաթելյանի բնութագրի համաձայն՝ դատապարտյալը ամուսնացած է, խնամքի տակ են գտնվում երեք երեխաներ, կրթությունը միջնակարգ է, մասնագիտություն, մասնագիտական հմտություններ չունի, մինչև դատապարտվելը չի աշխատել, ֆիզիկապես առողջ է, նախկինում դատված չէ, տույժի և խրախուսանքի չի ենթարկվել, մասնակցել է հիմնարկում իրականացվող միջոցառումներին և աշխատանքներին, քաղաքացիական հայց չունի, արտաքին աշխարհի և ընտանիքի հետ կապը պահպանում է, բնավորությամբ հանգիստ է, շփվող, կատարած հանցանքի համար զոջում է, բնակարանային և նյութակենցաղային խնդիրներ չունի (տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ միջնորդագիրը բավարարել է՝ իր որոշման հիմքում դնելով այն, որ ըստ նյութերի՝ դատապարտյալ Թ.Սաղաթելյանը բնութագրվում է դրական, նրա ուղղման գործընթացի և ընթացիկ գնահատման արդյունքները

միջին են, իսկ ռիսկայնության աստիճանը՝ ցածր (տե՛ս սույն որոշման 5-րդ և 10-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և դատապարտյալ Թ.Սաղաթեյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը վերացնելու մասին որոշում կայացնելով, փաստել է, որ ստորադաս դատարանը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդագրի քննարկման ժամանակ հիմնվել է միայն պատժի կրման ընթացքում դատապարտյալ Թ.Սաղաթեյանի վարքագծի վրա և որոշում կայացնելիս քննարկման առարկա չի դարձրել ու հաշվի չի առել Թ.Սաղաթեյանի կատարած արարքների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով դատապարտյալ Թ.-Սաղաթեյանի կատարած արարքների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, մասնավորապես՝ վերջինի գործողությունների վտանգավորությունը՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ Թ.Սաղաթեյանը դեռևս չի ուղղվել, և նա կարիք ունի շարունակելու պատիժը կրել, իսկ վերջինիս դրականորեն բնութագրվելն ու ռիսկայնության ցածր լինելը բավարար չեն գալու հետևության, որ նա ուղղվել է և կարիք չունի շարունակելու պատիժը կրել (տե՛ս սույն որոշման 6-րդ և 11-րդ կետերը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով Ա.Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած և սույն որոշման 16-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, *դատապարտյալ Թ.Սաղաթեյանի կատարած արարքների բնույթի ու հանրության համար վտանգավորության աստիճանի հիման վրա փաստելով, որ Թ.Սաղաթեյանը կարիք ունի շարունակելու պատիժը կրել, ինչպես նաև արձանագրելով, որ Թ.Սաղաթեյանի դրականորեն բնութագրվելն ու ռիսկայնության ցածր լինելը բավարար չեն գալու հետևության, որ նա ուղղվել է* (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), կայացրել է ոչ իրավաչափ որոշում: Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ Վերաքննիչ դատարանը Թ.Սաղաթեյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու անհնարինությունը պայմանավորել է **բացառապես** Թ.Սաղաթեյանի կատարած արարքների բնույթով ու հանրային վտանգավորության աստիճանով՝ անտեսելով այն, որ դրանք **թեև ունեն նշանակություն** պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը լուծելու համար, սակայն **ինքնին** չեն կարող պատժից վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդագիրը մերժելու հիմք դիտարկվել:

Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ պատիժը պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը **բացառապես** հանցագործության որակական և քանակական հատկանիշների հիման վրա լուծելը կամ դրանց **հիմնական, առաջնային նշանակություն վերագրելը չի կարող իրավաչափ համարվել** (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը): Հետևա-

բար հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի նաև այն դատողությունը, որ *Առաջին ատյանի դատարանը համապատասխան միջնորդագրի քննարկման ժամանակ հիմնվել է միայն պատժի կրման ընթացքում դատապարտյալ Թ.Սաղաթելյանի վարքագծի վրա և որոշում կայացնելիս քննարկման առարկա չի դարձրել և հաշվի չի առել Թ.Սաղաթելյանի կատարած արարքների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը* (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ պատժի կրումից դատապարտյալ Թ.Սաղաթելյանին պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն իրավաչափ չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

20. Վերոշարադրյալի հիման վրա Վճարելի դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և դատապարտյալ Թ.Սաղաթելյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը վերացնելու մասին որոշում կայացնելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում: Սույն խախտումը ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է:

Միևնույն ժամանակ Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը դատապարտյալ Թ.Սաղաթելյանի վերաբերյալ ներկայացված նյութերի հետազոտման հիման վրա եկել է հիմնավոր եզրահանգման նրա՝ պատժի հետագա կրման աննպատակահարմարության կապակցությամբ: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը, բավարարելով պատիժը կրելուց դատապարտյալ Թ.Սաղաթելյանին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 14-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 31-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ դատապարտյալ Թելման Դավիթի Սաղաթելյանին պատիժը կրելուց

պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 14-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

45.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԳ-3/0201/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ
դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
մեղադրող

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՈՍԿԱՆՅԱՆԻ

2016 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Դավիթ Անդրա-
նիկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի
3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝
2016 թվականի փետրվարի 24-ի որոշման դեմ ամբաստանյալ Դ.Սարգս-
յանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի հուլիսի 17-ին ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ
հոդվածի 2-րդ մասով և 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի
հատկանիշներով հարուցվել է թիվ 90861115 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ
Դավիթ Անդրանիկի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան
մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-
րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով:

2015 թվականի օգոստոսի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով արագացված դատաքննություն, 2015 թվականի հոկտեմբերի 27-ի դատավճռով Գ.Սարգսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 3 (երեք) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Գ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Նարեկ Հենրիկի Դավթյանը:

3. Մեղադրող Ա.Ոսկանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2016 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 27-ի դատավճիռը պատժի մասով բեկանել և փոփոխել է, Գ.Սարգսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 3 (երեք) ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 24-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Գ.Սարգսյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Գ.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Նա], *հանդիսանալով ՊԲ թիվ 33651 գորամասի 3-րդ հրաձգային գումարտակի 9-րդ վաշտի 1-ին դասակի 2-րդ ջոկի հրաձիգ, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2015թ. հունիսի 26-ից մինչև հուլիսի 10-ը նշանակված լինելով գորամասի պահպանության տակ գտնվող թիվ 104 մարտական դիրքում որպես դիրքորդ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ իր նկատմամբ պետ, թիվ 101-105 մարտական դիրքերի հենակետի ավագ, նույն դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Նարեկ Հենրիկի Դավթյանի կողմից չսպիրվելու համար իրեն նկատողություն անելու պատճա-*

ռով, 2015թ. հուլիսի 4-ին ժամը 10:30-ի սահմաններում թիվ 104 մարտական դիրքի խրամուղում, չայահպանելով ՀՀ ՁՈւ ներքին ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 65-րդ, 157-րդ, 158-րդ, 160-րդ և ՀՀ ՁՈւ կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածների պահանջները, վիճաբանել է ավագ լեյտենանտ Ն.Դավթյանի հետ, որի ընթացքում այլ բռնություն է գործադրել վերջինիս նկատմամբ՝ իր գլխին դրված զինվորական սաղավարտը որպես զենք օգտագործվող այլ առարկա գործադրելով հարվածել է ավագ լեյտենանտ Ն.Դավթյանի դեմքին՝ պատճառելով գույգ աչքերի վերին և ստորին, քթի մեջքի շրջանների արյունազեղումների և արյունահավաքի, քթի մեջքի փափուկ հյուսվածքների տրավմատիկ այտուցվածության և քթուկների քիչ տեղաշարժով փակ կտորվածքի ձևով առողջության թեթև վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ (...)) (տես քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 94-95):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Ուսումնասիրելով ամբաստանյալ Դավիթ Անդրանիկի Սարգսյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, ամբաստանյալ Դավիթ Անդրանիկի Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես այն, որ Դավիթ Անդրանիկի Սարգսյանը կատարել է ծանր հանցանք, որի համար նախատեսված ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետն ութ տարի է, նախկինում դատված չէ, ծառայողական բնութագրի համաձայն Գ.Սարգսյանը իրեն դրսևորել է վատ կողմերով (...):

(...) [Բ]նութագրի համաձայն Գ.Սարգսյանի բարոյահոգեբանական վիճակը կայուն է, ծառայության նկատմամբ վերաբերմունքը լավ: Ծառայողական պարտականությունները կատարում է բարեխղճորեն և անձնվիրաբար, հավատարիմ է զինվորական երդմանը, օժտված է հայրենիքի պաշտպանին անհրաժեշտ բարոյական և հոգեբանական բարձր հատկանիշներով:

Գ.Սարգսյանը չնախատեսված վայրում ծխելու, անվտանգության կանոնները խախտելու, վերակարգից հրաժարվելու համար ենթարկվել է տույժերի՝ նկատողության, խիստ նկատողության, երկու շաբաթով զրկվել է ազատ արձակումից:

Ամբաստանյալ Դավիթ Անդրանիկի Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով դիտվում է հանցագործությունը Ն.Դավթյանի վարքագծի հակաօրինականությամբ պայմանավորված լինելը:

Նույն հոդվածի 2-րդ մասով դատարանն որպես աղայիսին դիտում է նրա անկեղծորեն գղջալը:

Ամբաստանյալ Դավիթ Անդրանիկի Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով՝ չկան:

Ամբաստանյալ Դավիթ Անդրանիկի Սարգսյանի պատժաչափը որոշելիս, հաշի առնելով վերջինիս պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև վերջինիս կողմից կատարած արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, դատարանը գտնում է, որ պատժի նպատակները կիրականանան Դ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի սանկցիայով նախատեսված 4 /չորս/ տարի 3 /երեք/ ամիս ժամկետով ազատազրկման ձևով պատժը նշանակելու պայմաններում:

Զննարկելով այն հարցը, թե արդյոք ամբաստանյալ Դավիթ Անդրանիկի Սարգսյանը պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը, դատարանը հաշվի է առնում վերջինիս կողմից կատարած հանցանքի բնույթը և վտանգավորության աստիճանը, օրենքով պաշտպանվող շահը, սակայն միևնույն ժամանակ դատարանը հաշվի է առնում նաև Դավիթ Անդրանիկի Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, երիտասարդ տարիքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ վերջինս հանդիսանում է Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահություն իրականացնող զինծառայող, որոնցից էլ ելնելով դատարանը գտնում է, որ Դավիթ Անդրանիկի Սարգսյանի անձի և նրա կողմից կատարած հանցագործության հանրորեն վտանգավորության աստիճանը նվազել է և հանգում է հետևության, որ նրա ուղղվելը հնարավոր է առանց նրա նկատմամբ նշանակվող ազատազրկման ձևով պատիժը կրելու, և հնարավոր է համարում ՀՀ քր. օր-ի 70-րդ հոդվածի կանոններով պատիժը պայմանականորեն չկիրառել» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 51-52):

6.1. Առաջին ատյանի դատարանի դատավճռով դատապարտվել է նաև Նարեկ Հենրիկի Դավթյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել զինվորական ծառայության մեջ սահմանափակում՝ 4 (չորս) ամիս ժամկետով՝ դրամական բավարարման գումարից 5 (հինգ) տոկոս պահումով հետևյալ արարքի համար՝ «(...) [Հ]անդիսանալով ՊԲ թիվ 33651 զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի 9-րդ վաշտի 1-ին դասակի հրամանատար, կոչումով ավագ լեյտենանտ, 2015թ. հունիսի 26-ից մինչև հուլիսի 10-ը նշանակված լինելով զորամասի պահպանության տակ գտնվող թիվ 101-105 մարտական դիրքերի հենակետի ավագ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ իր նկատմամբ ստորադաս, թիվ 104 մարտական դիրքում որպես դիտորդ նշանակված, նույն դասակի 2-րդ ջոկի հրաձիգ, ժամկետային զինծառայող, շարքային Դավիթ Անդրանիկի Սարգսյանի կողմից սսփրված չլինելու և իրեն հսկաճառելու

պատճառով, ՀՀ ՁՈւ կարգապահական կանոնագրքի 5-րդ և 29-րդ հոդվածներով իրեն վերապահված կարգապահական իրավունք կիրառելու փոխարեն, 2015թ. հուլիսի 4-ին ժամը 10:30-ի սահմաններում թիվ 104 մարտական դիրքի առաջնագծի խրամուղում, չպահպանելով ՀՀ ՁՈւ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 65-րդ, 149-րդ, 150-րդ և ՀՀ ՁՈւ կարգապահական կանոնագրքի 3-րդ և 4-րդ հոդվածների պահանջները, վիճարանել է շարքային Դ.Սարգսյանի հետ, որի ընթացքում վիրավորանք է հասցրել վերջինիս՝ մեկ անգամ ապտակել նրան, դրանով իսկ անպարկեշտ ձևով ստորացրել շարքային Դ.Սարգսյանի պատիվն ու արժանապատվությունը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 50-53):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում նշել է. «(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ կոնկրետ դեպքում, ամբաստանյալ Դ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս, Առաջին ատյանի դատարանը սխալ է կիրառել քրեական օրենքը՝ կիրառելով օրենքի այն նորմը, որը կոնկրետ իրավահարաբերությունների նկատմամբ ենթակա չէր կիրառման, հաշվի չի առել կոնկրետ դեպքում խախտված քրեաիրավական նորմերով պաշտպանվող հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում վնաս պատճառելու համար օգտագործված գործիքը, իրադրությունը, պատճառված վնասի բնույթը, վնասվածքի տեղակայումը, ամբաստանյալի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ՝ մեղքի դիտավորյալ ձևը, հանցավոր մտադրության իրագործման աստիճանը, որոնք իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, մեծացնում հանցագործությունը հաջողությամբ ավարտին հասցնելու կամ ավելի մեծ վնաս պատճառելու հավանականությունը:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, վիճարկվող դատական ակտում թեև արձանագրել, սակայն պատշաճ գնահատման չի ենթարկել նաև ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքները: (...)

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Դ.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ու այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս, Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն, որպես ամբաստանյալ Դ.Սարգսյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք պետք է դիտարկեր նրա կողմից զինվորական երդումը խախտելը, ինչը կոնկրետ դեպքում անտեսվել է:

(...)

Ելնելով վերոգրյալից, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերը նշված հանգամանքների անտեսումը զրկել է Առաջին ատյանի դատարանին հանցավորի անձնավորության և նրան վերագրվող արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին օբյեկտիվ

պատկերացում կազմելու, իսկ արդյունքում նաև ազատագրկման ձևով պատիժը ամբաստանյալ Դ.Սարգսյանի կողմից կրելու նպատակահարմարության հարցում արդարացիության չափանիշին համապատասխանող վերջնական ճիշտ ու իրավաչափ հետևության հանգելու հնարավորությունից (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 90-91):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տրվել նյութական իրավունքի նորմերի խախտումներ:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել քրեական գործով ձեռք բերված ապացույցները, հաշվի չի առել Դ.Սարգսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև քրեորեն հետապնդելի արարքի դրսևորման պատճառները, իրադրությունը, պարագան և այլ հանգամանքներ:

Մասնավորապես, բողոքաբերն ընդգծել է, որ Դ.Սարգսյանն իրեն մեղսագրված արարքը կատարել է տուժող Ն.Դավթյանի հակաօրինական գործողությունների հետևանքով, նախկինում արատավորված կամ դատապարտված չի եղել, զբաղվել է հանրօգուտ գործունեությամբ, անկեղծորեն զոջում է կատարածի համար, հաշտվել է գործով մյուս ամբաստանյալ Ն.Դավթյանի հետ, արարքը կատարել է Մատաղիսի սահմանային գոտում առկա պատերազմական լարված իրադրության՝ տևական ժամանակահատվածում անքուն գիշերներ անցկացնելու պայմաններում:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է վճարելի բողոքն ընդունել վարույթ, Դ.Սարգսյանի մասով ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 24-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 27-ի դատական ակտին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք ամբաստանյալ Դ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա*

կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Սույն քրեաիրավական նորմը Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում բազմիցս վերլուծության է ենթարկվել, և մշտապես վերահաստատվել դիրքորոշումն առ այն, որ առանց պատիժը փաստացի կրելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն հանցավորի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների, հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի համակողմանի ու ամբողջական գնահատման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (ԵԱԴԴ/0034/01/12, ԼԴ/0093/01/12, ՏԴ/0018/01/13, ԵԿԴ/0096/01/13, ԵԿԴ/0252/01/13, ԵՄԴ/0027/01/14, ԳԴ/0014/01/14, ՍԴ/0204/01/13 և այլն):

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներում թվարկված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում դրանք հաշվի առնելու պահանջը օրինականության սկզբունքի կարևորագույն բաղադրիչներից է: Ընդ որում, մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները պետք է հաշվի առնվեն ինչպես պատժի տեսակ և չափ ընտրելիս, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված կարգով պատիժը պայմանականորեն չկիրառելիս, ինչն ուղղակիորեն բխում է նույն հոդվածի 2-րդ մասով ամրագրված դրույթից (*օրինականության սկզբունքի վերաբերյալ մանրամասն տես՝ Նարեկ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 15-րդ կետը*):

12. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ «Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք[ը] [է]՝

(...)

տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը (...):»:

Վերոնշյալ մեղմացնող հանգամանքի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ հանցավորի գործողությունները հաճախ պայմանավորված են լինում ոչ այնքան նրա անձնական առանձնահատկություններով, հակումներով կամ ձգտումներով, որքան տուժողի վարքագծով: Մասնավորապես, տու-

ժողն իր սաղրիչ՝ հակաօրինական կամ հակաբարոյական վարքագծով ուրոշ դեպքերում նպաստում է հանցավոր իրադրության ստեղծմանը՝ «դրդելով» այլ անձի կամ անձանց հանցանք կատարելուն: Տուժողի վարքագծի համակողմանի և օբյեկտիվ գնահատումը թույլ է տալիս բացահայտել հանցագործության շարժառիթները, հանցավորի դիտավորության ուղղվածությունը և պատիժ նշանակելիս որոշել հանցավորի անձի և նրա արարքի հանրային վտանգավորության իրական աստիճանը:

Յուրաքանչյուր դեպքում քննարկվող մեղմացնող հանգամանքի առկայությունը որոշելու համար անհրաժեշտ է պարզել հետևյալ երկու հանգամանքները՝

1) արդյոք տուժողի վարքագիծը կրել է հակաօրինական կամ հակաբարոյական բնույթ, և

2) արդյոք տուժողի վարքագծի հակաօրինական կամ հակաբարոյական բնույթով է պայմանավորված եղել հանցավոր արարքի կատարումը (*մանրամասն տես՝ Սհեր Ախնոյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 6-ի թիվ ՍԴ-3/0174/01/14 որոշումը*):

12.1. Տուժողի վարքագծի հակաօրինականության կամ հակաբարոյականության կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրել է. «(...) [Տ]ուժողի վարքագծի հակաօրինականությունը չի սահմանափակվում միայն հանցագործության կատարումով: Այն իր մեջ ներառում է նաև այլ գործողություններ, որոնք արգելվում են իրավունքի այլ ճյուղերով, օրինակ՝ վարչական, աշխատանքային, քաղաքացիաիրավական օրենսդրությամբ: Հակաօրինական վարքագիծը կարող է արտահայտվել ծեծի, խոշտանգման, ծանր վիրավորանքի, մարդկային արժանապատվության նվաստացման ձևով: Այն կարող է դրսևորվել նաև պաշտոնեական դիրքը չարաշահելու, շանտաժի և այլ գործողությունների ձևով, որոնք չեն հանդիսանում բռնություն, ծաղրանք, ծանր վիրավորանք, սակայն կրում են հակաօրինական բնույթ:

Ինչ վերաբերում է տուժողի վարքագծի հակաբարոյականությանը, ապա այն գնահատելու համար անհրաժեշտ է ելնել հասարակության մեջ համընդհանուր ճանաչում գտած բարոյական և էթիկական կանոնների դիրքերից, այնպիսի կատեգորիաների մասին պատկերացումներից, ինչպիսիք են արդարությունը, պատիվը, բարին ու չարը և այլն: Հակաբարոյական վարքագծի դրսևորումներից է խաբեությունը, դավաճանությունը, խարդախանքը, պահպանության վստահված փողերը վատնելը, բամբասանքներ տարածելը, ամուսնական դավաճանությունը և այլն (...)» (տես՝ Խաչիկ Ղազարյանի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԷԴ/0138/01/09 որոշման 16-րդ կետը):

13. Ձինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման առանձնահատկություններին Վճարելի դատարանն անդրադարձել է մի շարք գործերով որոշումներում: Մասնավորապես մեջբերելով «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնադիրքը հաստատելու մա-

սին» ՀՀ օրենքի 1-ին, 13-րդ, 32-րդ, 76-րդ, 329-րդ, 337-րդ, 350-րդ հոդվածների, ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ Վճարելի դատարանն ընդգծել է, որ յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը հարգելու, օրենքների և զինվորական կանոնագրքերի պահանջները պահպանելու, զինծառայողների միջև կանոնադրային փոխհարաբերություններն ամրապնդելու պարտականություն հավասարապես կրում են թե՛ զինծառայողները, թե՛ հրամանատարները (պետերը): Ենթակայի նկատմամբ բռնության կիրառումն օժտված է հասարակական բարձր վտանգավորությամբ, բացասական է ազդում զինվորական կարգապահության, ՀՀ զինված ուժերի մշտական մարտական պատրաստականության վրա, ինչի ապահովումը բոլոր զինծառայողների՝ հատկապես պետերի (հրամանատարների) պարտականությունն է: Հետևաբար բոլոր դեպքերում, երբ զինծառայողի կողմից հանցավոր արարքի կատարումը պայմանավորված է լինում մեկ այլ զինծառայողի, այդ թվում՝ պետի (հրամանատարի)՝ իր դեմ ուղղված հանրորեն վտանգավոր արարքով, այդ հանգամանքը պետք է պատշաճ քրեաիրավական գնահատականի արժանանա հանցավորի նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս, ինչպես նաև պատիժը պայմանականորեն չկիրառելիս (*մանրամասն տե՛ս Նիկոլայ Չաքմազյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՆԴ/0060/01/13, Սիեր Ախնոյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 6-ի թիվ ՍԳ3/0174/01/14 որոշումները*):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ժամկետային զինծառայող, կոչումով շարքային Դ.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ ավագ լեյտենանտ Ն.Դավթյանի կողմից չսափրվելու համար արված նկատողության պատճառով վիճաբանել է վերջինիս հետ և գլխին դրված զինվորական սաղավարտը որպես զենք օգտագործվող այլ առարկա գործադրելով՝ հարվածել է նրա դեմքին՝ առողջությանը պատճառելով թեթև վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս, ի թիվս այլոց, որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք հաշվի է առել այն, որ ամբաստանյալի արարքը պայմանավորված է եղել Ն.Դավթյանի հակաօրինական վարքագծով, արձանագրել է ծանրացնող հանգամանքների բացակայությունը և հանգել հետևության, որ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չպետք է կիրառել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի դատավճռով դատապարտվել է նաև Ն.Դավթյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով, այն բանի համար, որ չսափրվելու և իրեն հակաճառելու պատճառով մեկ ան-

գամ ապտակել է շարքային Գ.Սարգսյանին՝ դրանով իսկ անպարկեշտ ձևով ստորացնելով վերջինիս պատիվն ու արժանապատվությունը (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը վերացրել է Գ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ նշելով, որ Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, պատշաճ գնահատման չի ենթարկել ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև ամբաստանյալ Գ.Սարգսյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք չի դիտել հանցանքը նրա կողմից զինվորական երդումը խախտելով կատարելը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների համատեքստում պատշաճ վերլուծության չի ենթարկել տուժողի վարքագիծը:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը որևէ գնահատականի չի արժանացրել այն, որ Գ.Սարգսյանի կողմից հանցանքի կատարումը պայմանավորված է եղել տուժողի դրսևորած հակաօրինական վարքագծով: Մասնավորապես, տուժող Ն.Գավթյանը, ով շարքային Գ.Սարգսյանի պետն է, վերջինիս կարգապահական տույժի ենթարկելու փոխարեն՝ սափրված չլինելու և իրեն հակաճառելու պատճառով բռնություն է գործադրել նրա նկատմամբ և իր սաղորիչ՝ հակաօրինական վարքագծով «դրդել» նրան հանցանք կատարելուն: Վերոնշյալ վարքագծով Ն.Գավթյանը ոչ միայն կոպիտ կերպով խախտել է «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքների՝ սույն որոշման 13-րդ կետում թվարկված դրույթները, այլև կատարել հանցավոր արարք, ինչի կապակցությամբ նրան մեղադրանք է առաջադրվել, և նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը):

Այսպիսով, Վճարելի դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, վերացնելով Գ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը, հաշվի չի առել, որ տուժող Ն.Գավթյանի վարքագիծը կրել է հակաօրինական բնույթ, և դրանով է պայմանավորված եղել Գ.Սարգսյանի կողմից հանցանքի կատարումը, ինչը, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է, վկայում է ինչպես հանցավորի, այնպես էլ նրա կատարած արարքի համեմատաբար նվազ հանրային վտանգավորության մասին:

15.1. Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում նաև Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված՝ հանցանքը զինվորական երդումը խախտելով կատարելը որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք դիտելու կապակցությամբ: Վճռաբեկ դատարանը, գնահատելով հանցանքի բնույթը, վերլուծելով դրա կատարման շարժառիթներն ու հանցավոր վարքագծի դրսևորման պատճառները, մասնավորապես այն, որ ամբաստանյալ Դ.Սարգսյանի արարքը պայմանավորված է եղել տուժող Ն.Դավթյանի հակաօրինական վարքագծով՝ վերջինիս կատարած հանցավոր արարքով, արձանագրում է, որ քննարկվող հանգամանքը ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով տվյալ պարագայում չի կարող դիտվել որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ ստորադաս դատարանը գնահատման չի ենթարկել ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքները, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը պատշաճ վերլուծության է ենթարկել ամբաստանյալի անձն ինչպես դրական, այնպես էլ բացասական բնութագրող տվյալները, հաշվի է առել նրա արարքում առկա մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության:

16. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Դ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը իրավաչափ չէ:

Վերաքննիչ դատարանը, պատժի մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխելով և ամբաստանյալ Դ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելով, պատշաճ գնահատման չի ենթարկել Դ.Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող բոլոր հանգամանքները՝ թույլ տալով ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով, քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը Գ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում հանգել է ճիշտ հետևության, հետևաբար Առաջին ատյանի դատարանի դատական ակտը պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Դավիթ Անդրանիկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 24-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 27-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

46.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0255/11/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի մարտի 1-ի որոշման դեմ դիմող Լևոն Արժանիկի Ջաբոյանի ներկայացուցիչ Թ.Ալեքսանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2015 թվականի սեպտեմբերի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12148415 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Արմեն Արարատի Սարգսյանը և Վազգեն Մուրենի Գաբրիելյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի որոշմամբ դիմող Լևոն Չաքոյանը ճանաչվել է տուժող:

2. Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Գրիգորյանի (այսուհետ՝ նաև Քննիչ) 2015 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի 44-րդ տարածքը, Երևանի Հին Երևանցու փողոցի 2-րդ շենքի 82-րդ և Երևանի Հյուսիսային պողոտայի 11-րդ շենքի 18-րդ բնակարանները ճանաչվել են իրեղեն ապացույցներ:

2015 թվականի հոկտեմբերի 24-ին Քննիչի կողմից իրականացվել է քննչական գործողություն՝ զննություն, որից հետո իրեղեն ապացույց ճանաչված Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի 44-րդ հասցեում գտնվող տարածքի պահպանությունն ապահովելու նպատակով այն կապարակնրվել է:

Ի պատասխան դիմող Լևոն Չաքոյանի ներկայացուցիչ Թ.Ալեքսանյանի դիմումի՝ Քննիչը 2015 թվականի նոյեմբերի 3-ի գրությամբ հայտնել է, որ Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի 44-րդ հասցեում գտնվող տարածքը ճանաչվել է իրեղեն ապացույց, որից հետո կատարվել է զննություն, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ, 117-րդ հոդվածների հիման վրա միջոցներ են ձեռնարկվել իրեղեն ապացույցի պահպանությունն ապահովելու ուղղությամբ:

Դիմող Լ.Չաքոյանը Քննիչի գործողությունների դեմ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի դատախազին, որն ըստ ենթակայության ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազություն, որտեղից այն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Հ.Հարությունյանը 2015 թվականի նոյեմբերի 30-ին կայացրել է որոշում՝ դատավարության մասնակցի միջնորդությունը հետաձգելու մասին:

3. 2016 թվականի դեկտեմբերի 17-ին դիմող Լ.Չաքոյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել քննիչ Լ.Գրիգորյանի՝ Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի 44-րդ հասցեում գտնվող տարածքի կապարակնրումը և հնարավորություն տալ մինչև քրեական գործի ավարտը տիրապետելու իր սեփականությունը հանդիսացող գույքը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 22-ի որոշմամբ դիմող Լ.Չաքոյանի բողոքը մերժվել է:

4. Դիմող Լ.Չաքոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2016 թվականի մարտի 1-ի որոշմամբ վերաքննիչ

բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 22-ի որոշումը:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Լ.Ջաքոյանի ներկայացուցիչ Թ.Ալեքսանյանը:

Վճռաբեկ դատարանը 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ դիմող Լ.Ջաքոյանի ներկայացուցիչ Թ.Ալեքսանյանի վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ տրամադրելով 15-օրյա ժամկետ՝ թերությունները վերացնելու, բողոքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու և կրկին ներկայացնելու համար:

Դիմող Լ.Ջաքոյանի ներկայացուցիչ Թ.Ալեքսանյանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Գործում առկա՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ 2015 թվականի սեպտեմբերի 9-ին գնորդ Լևոն Ջաքոյանի և վաճառող Արա Թադևոսյանի միջև կնքվել է պայմանագիր, որով վաճառողը պարտավորվել է պայմանագրի առարկան՝ Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 ոչ բնակելի տարածքը, հանձնել գնորդի սեփականությանը (տե՛ս նյութեր, թերթ 28):

6.1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15092015-01-0089 վկայականի համաձայն՝ Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 ոչ բնակելի տարածքի նկատմամբ գրանցված է Լևոն Ջաքոյանի սեփականության իրավունքը (տե՛ս նյութեր, թերթ 30):

7. Զննիչի՝ իրեղեն ապացույց ճանաչելու մասին 2015 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ - շենքի թիվ 44-րդ հասցեում գտնվող տարածքը, ի թիվս այլնի, ճանաչվել է իրեղեն ապացույց հետևյալ հիմնավորմամբ. *«(…) նախաքննությամբ ձեռք բերված տվյալներով պարզվել է, որ Արմեն Արարատի Սարգսյանը, ուրիշի առանձնապես խոշոր չափերի գույքին տիրանալու վերաբերյալ հանցավոր համաձայնության գալով Վազգեն Սուրենի Գաբրիելյանի հետ, վերջինիս օժանդակությամբ՝ Արա Սմբատի Թադևոսյան անձի տվյալներով պատրաստված կեղծված անձնագիրն օգտագործելով, 2015 թվականի օգոստոսի 31-ին Երևան քաղաքի Կենտրոն նոտարական գրասենյակում Նշան Հակոբի Համբարձումյանի հետ կնքելով վերջինիս՝ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44-րդ հասցեում գտնվող տարածքն ամսական 717.000 ՀՀ դրամ գումարով վարձակալելու*

վերաբերյալ պայմանագիր և ձեռք բերելով օգտագործման իրավունք, վարձակալության պայմանագիրը փոխանցելով Վազգեն Գաբրիելյանին, կրկին ստացել է նրա օժանդակությամբ պատրաստված կեղծ նվիրատվության պայմանագիր, որից հետո 2015 թվականի սեպտեմբերի 9-ին ՀՀ - ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Կենտրոն» սպասարկման գրասենյակում նշված կեղծ փաստաթղթերն օգտագործելու եղանակով հիշյալ տարածքն առքուվաճառքի պայմանագրով ձևակերպել է Լևոն Արժանիկի Չաքոյանի անվամբ և դրա դիմաց վերջինից Երևան քաղաքի Պարոնյան փողոցի 21/1 հասցեում խաբեությանը ստացել 97.110.000 ՀՀ դրամին համարժեք 200.000 ԱՄՆ դոլար գումար և հանցակիցների հետ հափշտակել այն:

(...) Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44-րդ - հասցեում գտնվող տարածքը (...) հանդիսանում [է] հանցավոր ոսնձգության առարկա և սույն գործով ուն[ի] կարևոր ապացուցողական նշանակություն» (տե՛ս նյութեր, թերթ 22):

8. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Հ.Հարությունյանի՝ դատավարության մասնակցի միջնորդությունը հետաձգելու մասին 2015 թվականի նոյեմբերի 30-ի որոշման համաձայն՝ «Հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ նշված տարածքի վերաբերյալ իրավունքը՝ խմբի հանցակիցների կողմից ձեռք է բերվել ոչ իրավաչափ և հանցավոր ճանապարհով, իսկ այնուհետև վաճառվել Լևոն Արժանիկի Չաքոյանին, և քանի որ դեռևս պարզված չեն գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, ուստի նախաքննության տվյալ փուլում նպատակահարմար չէ լուծել իրեղեն ապացույց ճանաչված տարածքն ի պահ հանձնելու հարցը» (տե՛ս նյութեր, թերթ 25):

9. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 22-ի որոշման համաձայն՝ «(...) վարույթն իրականացնող մարմնին օրենքով սահմանված կարգով առարկան՝ գույքը, ճանաչելով իրեղեն ապացույց, դատավարական կարգի պահպանմամբ կապարակներել է այն՝ ելնելով նախաքննության իրականացման լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից:

Սույն գործով դատարանը հաստատված է համարում նաև այն հանգամանքը, որ քրեական գործը գտնվում է մինչդատական փուլում, կատարվում է նախաքննություն:

Բացի այդ, դատարանը փաստում է, որ հարուցված քրեական գործի շրջանակներում վարույթն իրականացնող մարմնի քննչական գործողությունների կատարման արդյունքում հայտնի է դարձել, որ Երևան քաղաքի Թումանյանի փողոցի 11-րդ շենքի թիվ 44-րդ հասցեում գտնվող տարածքը (...) հանդիսացել [է] հանցավոր ոսնձգության [օբյեկտ]:

Դատարանն արձանագրում է, որ գործով մինչդատական վարույթը դեռևս ավարտված չէ, կատարվում են քննչական և դատավարական գոր-

ծողություններ, որոնք ուղղված են ենթադրյալ հանցագործության բացահայտմանը: Այլ կերպ քրեական գործով ներկա պահին բացահայտված չեն մի շարք հանգամանքներ, որոնք կարող են ունենալ ապացուցողական նշանակություն գործի արդարացի ելքի համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հանգամանքները՝ դատարանը փաստարկված չի գտնում բողոքաբերի դիրքորոշումը՝ դատավարության տվյալ փուլում (մինչդատական վարույթ) լուծել իրեղեն ապացույցների տնօրինման հարցը և դրանք ի պահ հանձնել վերջինիս:

[Դ]ատարանը գտնում է, որ իրեղեն ապացույց ճանաչված՝ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44-րդ հասցեում գտնվող տարածքը, ի պահ հանձնելով Լևոն Չաքոյանին, այդ կերպ խախտվում են նրա առաջնային սեփականատիրոջ՝ Նշան Հակոբի Համբարձումյանի իրավունքները, քանի որ գույքը նախապես պատկանել է նրան, և ենթադրաբար կատարված հանրորեն վտանգավոր արարքի հետևանքով է, որ այն դուրս է եկել վերջինիս իրավագործությունից և Կադաստրում գրանցվել Լևոն Չաքոյանի անվամբ: Այլ խոսքով վիճարկվող գործողություններն ուղղված են մինչև հանցագործությունը դրա սեփականատիրոջ իրավունքների խախտում թույլ չտալուն:

Դատարանը փաստում է նաև, որ թեև տարածքը ներկա պահին կապարակնրված է, և փաստացի Լևոն Չաքոյանը չի կարողանում մուտք գործել այնտեղ, այնուամենայնիվ, վարույթն իրականացնող մարմինը կատարել է օրենքի պահանջից բխող գործողությունները՝ ձեռնարկել միջոցներ՝ տարածքը **վնասվելուց, փչանալուց**, այլ առարկաների հետ շփվելուց կամ խառնվելուց **գերծ պահելու ուղղությամբ**: Բացի այդ, վերջինս իրացրել է նաև գույքի՝ մինչև հանցանքը կատարվելը սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը, ինչը կարող է վիճարկվել միայն քննվող քրեական գործից զատ՝ քաղաքացիադատավարական կարգով» (տե՛ս նյութեր, թերթեր 53-54):

10. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 1-ի որոշման համաձայն՝ «Քրեական հետապնդման մարմնի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսդրության պահանջների պահպանմամբ ձեռնարկված քննչական գործողություններն ուղղված են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, որոնց շրջանակում իրեղեն ապացույց ճանաչված Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44-րդ հասցեում գտնվող տարածքի պահպանությունն ապահովելու նպատակով այն կապարակնրելով՝ թեև տուժող Լևոն Չաքոյանի իրավունքները որոշակիորեն սահմանափակվում են, սակայն դա բխում է գործի օբյեկտիվ քննության պահանջից, և դրանով նրա իրավունքները և ազատությունները չեն խախտվում:

(...)

[Զ]ննիչ Լ. Գրիգորյանի կողմից 24.10.2015թ.-ին կայացված որոշումը հիմնավոր է, քրեական հետապնդման մարմնի կողմից Լևոն Չաքոյանի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվել, և այդ առթիվ [Առա-

ջին ատյանի] դատարանը կայացրել է ճիշտ որոշում» (տե՛ս նյութեր, թերթ 105-106):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ և 116-րդ - հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Զննիչը պարտավոր էր իրեղեն ապացույց ճանաչված անշարժ գույքն ի պահ հանձնել իրեն, մինդեռ կապարակնքելով այն՝ արգելել է տիրապետել իր սեփական գույքը: Իսկ ստորադաս դատարանների որոշումներից անհասականալի է սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքը կապարակնքելու անհրաժեշտությունը, ինչպես նաև այն, թե հիշյալ գույքն իրեն հանձնելը ինչպես կխոչընդոտեր գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությանը: Բացի այդ բողոքաբերը գտել է, որ իրավաչափ չէ ստորադաս դատարանների պատճառաբանությունն առ այն, որ գույքի կապարակնքումը նպատակ է հետապնդել նաև ապահովելու գույքի առաջնային սեփականատիրոջ իրավունքները:

12. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2016 թվականի մարտի 1-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Վճարելի դատարանը գտնում է, որ իրեղեն ապացույցի պահպանումն ապահովելիս անձի սեփականության իրավունքի երաշխիքների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

14. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք իրեղեն ապացույց ճանաչված Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքը Լ.Չաքոյանի պատասխանատու պահպանմանը չթողնելու հետևանքով վերջինիս սեփականության իրավունքի սահմանափակումը:

15. ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը»:*

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր որ ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

(...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Վճարելի դատարանը կրկնում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումներն առ այն, որ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավագործությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ (տե՛ս Արթուր Արարատի Հայրապետյանի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԳ/0001/11/10 որոշման 19-րդ կետը): Սեփականության իրավունքը ենթադրում է ոչ միայն յուրաքանչյուր անձի իրավունքը պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև պետության պարտականությունը՝ սեփականության իրավունքը պաշտպանելու ցանկացած անօրինական ոտնձգություններից (տե՛ս Արամ Ատեփանի Սկրտչյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԳ/0326/01/09 որոշման 20-րդ կետը):

16. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) կից 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս զանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Եվրոպական դատարանը, իր նախադեպային իրավունքում անդրադառնալով Կոնվենցիային կից 1-ին արձանագրության 1-ին հոդվածի մեկնաբանմանը, նշել է, որ այն պարունակում է երեք առանձին կանոն.

- առաջին կանոնը, որը սահմանված է առաջին պարբերության առաջին նախադասությունում, ընդհանուր բնույթի է և հռչակում է գույքից անարգել օգտվելու սկզբունքը,

- երկրորդ կանոնը՝ սահմանված առաջին պարբերության երկրորդ նախադասությամբ, նախատեսում է սեփականությունից զրկելու հնարավորություն և ենթարկում այն որոշակի պայմանների,

- երրորդ կանոնը՝ նախատեսված երկրորդ պարբերությամբ, ճանաչում է հանրային շահին համապատասխան սեփականության օգտագործումը, ի թիվս այլնի, վերահսկելու պայմանավորվող կողմերի լիազորությունը:

Նշված երկրորդ և երրորդ կանոնները կապված են սեփականությունից անարգել օգտվելու իրավունքի միջամտության առանձին իրավիճակների հետ և այդպիսով պետք է մեկնաբանվեն առաջին կանոնում հռչակված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո (*տե՛ս, ի թիվս այլնի, James and Others v. the United Kingdom գործով 1986 թվականի փետրվարի 21-ի վճիռ, գանգատ թիվ 8793/79, կետ 37, Sporrong and Lonroth v. Sweden գործով 1982 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռ, գանգատ թիվ 7151/75 7152/75, կետ 61*):

Եվրոպական դատարանը կայուն նախադեպային պրակտիկա է ձևավորել առ այն, որ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված անձի իրավունքին միջամտությունը պետք է լինի օրինական, բխի ընդհանուր շահից և լինի համաչափ (*տե՛ս, ի թիվս այլնի, Beyeler v. Italy գործով Մեծ պալատի 2000 թվականի հունվարի 5-ի վճիռ, գանգատ թիվ 33202/96, կետ 107, J.A. Pye (Oxford) Ltd and J.A. Pye (Oxford) Land Ltd v. the United Kingdom գործով Մեծ պալատի 2007 թվականի օգոստոսի 30-ի վճիռ, գանգատ 44302/02, կետ 75*): Վերջին պայմանի առնչությամբ Եվրոպական դատարանը Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռում մասնավորապես նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև (*տե՛ս Borzhonov v. Russia գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետ 59*):

17. Սեփականության իրավունքի միջամտության իրավաչափության հիշյալ առաջին երկու պայմաններին (օրինականության և ընդհանուր շահից բխելու) համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսվել են մի շարք նորմեր, որոնք առնչվում են քննարկվող իրավունքի սահմանափակման հետ: Դրանց թվին են դասվում նաև իրեղեն ապացույցների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող նորմերը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝

«1. Իրեղեն ապացույցներ են այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեք-

ները և մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել:

2. Առարկան իրեղեն ապացույց է ճանաչվում քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

3. Դատարանն առարկային իրեղեն ապացույցի նշանակություն է տալիս միայն այն դեպքում, եթե դրա մանրամասն նկարագրությամբ, կնքելով և այն ձեռք բերելուց անմիջապես հետո կատարված այլ մանրամասն գործողություններով բացառվել է առարկան փոխելու, առանձնահատկությունները, հատկանիշները, պարունակող հետքերն էապես փոփոխելու հնարավորությունը, կամ եթե դատարանում հետազոտվելուց անմիջապես առաջ այն ճանաչել են կասկածյալը, մեղադրյալը, տուժողը կամ վկա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝

«1. Իրեղեն ապացույցները պահվում են քրեական գործի հետ, իսկ մեծածավալության դեպքում՝ կարող են հանձնվել հիմնարկների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և առանձին անձանց պատասխանատու պահպանմանը:

(...)

3. Իրեղեն ապացույցները և առգրավված այլ առարկաները, բացառությամբ շուտ փչացող առարկաների, քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից պահվում են այնքան, քանի դեռ նրանց տնօրինման հարցը չի լուծվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իրեղեն ապացույցների տնօրինման մասին որոշումը կարող է ընդունվել նախքան քրեական գործով վարույթի ավարտը:

4. Եթե գործին որպես իրեղեն ապացույց կցված առարկայի նկատմամբ իրավունքի մասին վեճը ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով, տվյալ առարկան պահվում է մինչև քաղաքացիական գործով վճիռն ուժի մեջ մտնելը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առարկաները պահելիս և փոխադրելիս պետք է միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի դրանք զերծ մնան կորստից, վնասվելուց, փչանալուց, այլ առարկաների հետ շփվելուց կամ խառնվելուց»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նախքան քրեական գործով վարույթի ավարտը քրեական վարույթն իրականացնող մարմինը սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին հետ է վերադարձնում՝

1) շուտ փչացող առարկաները.

2) առօրյա կենցաղում օգտագործելու համար անհրաժեշտ այն առարկաները, որոնց վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել.

3) թռչունները և տնային կենդանիները, ավտոմեքենան կամ տրանսպորտային այլ միջոցը, եթե դրանց վրա քաղաքացիական հայրը, դատական ծախսերը կամ հնարավոր գույքային բռնագանձումն ապահովելու համար կալանք դրված չէ:

1.1. *Գրավի առարկա իրեղեն ապացույցները և գրավի առարկա առգրավված այլ առարկաները վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ հետ են վերադարձվում դրա օրինական տիրապետողին բոլոր քննչական գործողությունները կատարելուց հետո, եթե դա չի վնասում պատշաճ ապացուցմանը»:*

Մեջբերված քրեադատավարական նորմերի վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը նախատեսել է առարկան իրեղեն ապացույց ճանաչելու միջոցով անձի սեփականության իրավունքի սահմանափակման օրինական հիմք, որը բխում է հասարակության ընդհանուր շահից, այն է՝ հանցագործությունների բացահայտումը: Միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է սեփականության իրավունքի մի շարք երաշխիքներ, որոնցից են այն առարկաների բնութագիրը, որոնք կարող են ճանաչվել իրեղեն ապացույցներ, առարկան իրեղեն ապացույց ճանաչելու դատավարական կարգի մանրամասն կարգավորումը, իրեղեն ապացույցների պահպանման կարգի սահմանումը:

18. Այսպես՝ իրեղեն ապացույցները, որպես կանոն, պահվում են քրեական գործի հետ միասին՝ մինչև դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ չի լուծվում դրանց տնօրինման հարցը: Միաժամանակ քրեադատավարական օրենքը.

- հնարավորություն է տալիս իրեղեն ապացույց ճանաչված առարկայի մեծածավալության դեպքում այն հանձնելու հիմնարկների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և առանձին անձանց պատասխանատու պահպանմանը,

- նախատեսում է այն առարկաների շրջանակը, որոնք նախքան քրեական գործով վարույթի ավարտը վերադարձվում են սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդված):

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ իրեղեն ապացույց ճանաչված առարկայի մեծածավալության դեպքում այն համապատասխան անձանց պատասխանատու պահպանմանը հանձնելու հայեցողական լիազորությունն իրականացնելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է ելնի պատշաճ ապացուցման ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությունից: Յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակ-

մամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովվեն համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ (տե՛ս Borzhonov v. Russia գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60): Համաչափության սկզբունքը պետք է ապահովվի ոչ միայն անձի իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելիս, այլ նաև դրա աստիճանը որոշելիս: Վերջինս արտահայտվում է իր գույքն անարգել տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավագործություններից որևէ մեկը կամ բոլորը սահմանափակելու հարցի որոշմամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ իրեղեն ապացույց ճանաչված մեծածավալ գույքի դեպքում, եթե ողջամտորեն բացառվում է դրա առանձնահատկությունները, հատկանիշները, պարունակող հետքերն էապես փոփոխելու հնարավորությունը, վարույթն իրականացնող մարմինը պետք է քննարկման առարկա դարձնի այդ գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը: Վերջին պահանջից բխում է նաև սեփականատիրոջ պատասխանատու պահպանմանը վերոհիշյալ գույքը չթողնելու պարագայում պատշաճ հիմնավորում ներկայացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը, որպիսի դեպքում միայն կապահովվի սեփականության իրավունքի սահմանափակման համաչափությունն անձի կողմից վիճարկելու, ինչպես նաև իրավասու մարմնի կողմից այն գնահատելու հնարավորությունը:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2015 թվականի սեպտեմբերի 9-ին քրեական գործով տուժող Լ.Չաքոյանի և Արա Թադևոսյանի միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, և Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 տարածքի նկատմամբ գրանցվել է Լևոն Չաքոյանի սեփականության իրավունքը (տե՛ս սույն որոշման 6-րդ և 6.1-րդ կետերը):

Վարույթն իրականացնող մարմնի 2015 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 տարածքը ճանաչվել է իրեղեն ապացույց այն հիմնավորմամբ, որ հանցավոր ոսնձգության առարկա է և գործով ունի կարևոր ապացուցողական նշանակություն: Այնուհետև իրականացվել է գնություն և տարածքի պահպանությունն ապահովելու նպատակով այն կապարակնքվել է (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Հ.Հարությունյանը 2015 թվականի նոյեմբերի 30-ի՝ դատավարության մասնակցի միջոցառությունը հետաձգելու մասին որոշմամբ գտել է, որ նախաքննության տվյալ փուլում նպատակահարմար չէ լուծել իրեղեն ապացույց ճանաչված տարածքն ի պահ հանձնելու հարցը՝ հաշվի առնելով գործի առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ նշված տա-

րածքի վերաբերյալ իրավունքը խմբի հանցակիցների կողմից ձեռք է բերվել ոչ իրավաչափ և հանցավոր ճանապարհով, իսկ այնուհետև վաճառվել Լ.Չաքոյանին, և քանի որ դեռևս պարզված չեն գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը, մերժելով դիմող Լ.Չաքոյանի բողոքը, արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմինը կատարել է օրենքի պահանջից բխող գործողությունները՝ ձեռնարկել միջոցներ՝ տարածքը վնասվելուց, փչանալուց, այլ առարկաների հետ շփվելուց կամ խառնվելուց զերծ պահելու ուղղությամբ: Դատարանն արձանագրել է նաև, որ գործով մինչդատական վարույթը դեռևս ավարտված չէ, կատարվում են քննչական և դատավարական գործողություններ, որոնք ուղղված են ենթադրյալ հանցագործության բացահայտմանը, արդյունքում գտել է, որ բողոքաբերի դիրքորոշումը՝ դատավարության տվյալ փուլում (մինչդատական վարույթ) իրեղեն ապացույցների տնօրինման հարցը լուծելու և դրանք վերջինիս ի պահ հանձնելու վերաբերյալ, փաստարկված չէ: Միևնույն ժամանակ դատարանը գտել է, որ վարույթն իրականացնող մարմինը *«իրացրել է նաև գույքի՝ մինչ հանցանքը կատարվելը սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը, ինչը կարող է վիճարկվել միայն քննվող քրեական գործից զատ՝ քաղաքացիադատավարական կարգով»* (տե՛ս սույն որոշման 3-րդ և 9-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը մերժել է դիմողի բողոքը՝ պատճառաբանելով, որ իրեղեն ապացույց ճանաչված Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքի պահպանությունն ապահովելու նպատակով այն կապարակնքելով՝ թեև տուժող Լևոն Չաքոյանի իրավունքները որոշակիորեն սահմանափակվում են, սակայն դա բխում է գործի օբյեկտիվ քննության պահանջից, և դրանով նրա իրավունքները և ազատությունները չեն խախտվում (տե՛ս սույն որոշման 4-րդ և 10-րդ կետերը):

20. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 18-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը, իրեղեն ապացույց ճանաչված Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքը Լ.Չաքոյանի պատասխանատու պահպանմանը չթողնելով, չի ներկայացրել պատշաճ հիմնավորում այն մասին, որ առկա է նշված **անշարժ գույքը**, դրա առանձնահատկությունները, հատկանիշները փոփոխելու ողջամիտ հավանականություն:

Ինչ վերաբերում է քննիչ Հ.Հարությունյանի՝ դատավարության մասնակցի միջնորդությունը հետաձգելու մասին 2015 թվականի նոյեմբերի 30-ի որոշման պատճառաբանությունների այն մասին, որ նախաքննության տվյալ փուլում նպատակահարմար չէ լուծել իրեղեն ապացույց ճանաչված տարածքն ի պահ հանձնելու հարցը՝ *«հաշվի առնելով գործի առանձ-*

նահատկությունները, մասնավորապես այն, որ նշված տարածքի վերաբերյալ իրավունքը խմբի հանցակիցների կողմից ձեռք է բերվել ոչ իրավաչափ և հանցավոր ճանապարհով, իսկ այնուհետև վաճառվել Լ.Չաքոյանին, և քանի որ դեռևս պարզված չեն գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ», ինչպես նաև ստորադաս դատարանների նմանաբովանդակ պատճառաբանություններին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի՝ մինչդատական վարույթում գտնվելու հանգամանքն ինքնին չի բացառում իրեղեն ապացույց ճանաչված անշարժ գույքը Լ.Չաքոյանի պատասխանատու պահպանմանը թողնելու հնարավորությունը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհիմն է Առաջին ատյանի դատարանի նաև այն հետևությունը, որ «[Վարույթն իրականացնող մարմինը] իրացրել է նաև գույքի՝ մինչ հանցանքը կատարվելը սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը, ինչը կարող է վիճարկվել միայն քննվող քրեական գործից զատ՝ քաղաքացիադատավարական կարգով», քանի որ առարկան իրեղեն ապացույց ճանաչելը և դրա պահպանումն ապահովելը չեն հետապնդում տուժողին (սույն դեպքում՝ նախկին սեփականատիրոջը) պատճառված վնասի հատուցումն ապահովելու նպատակ: Իսկ գույքի նկատմամբ որևէ անձի պատասխանատու պահպանություն սահմանելը որևէ ձևով չի վտանգում հետագայում այդ գույքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի քննությանը քաղաքացիադատավարական կարգով:

21. Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Քննիչն իր հայեցողական լիազորությունն իրականացնելիս, ինչպես նաև ստորադաս դատարանները դրա օրինականությունը ստուգելիս, պատշաճ չեն հիմնավորել ապացուցման ընդհանուր շահի և Լ.Չաքոյանի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռության առկայությունը:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրեղեն ապացույց ճանաչված Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքը Լ.Չաքոյանի պատասխանատու պահպանմանը չթողնելու հետևանքով վերջինիս սեփականության իրավունքի սահմանափակումն իրավաչափ չէ:

Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 60-րդ, Եվրոպական կոնվենցիային կից 1-ին արձանագրության 1-ին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածների խախտում: Վերջինս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք է սույն գործով իրեղեն ապացույց ճանաչված գույքը դիմող Լ.Չաքոյանի պահպանությանը թողնելու մասին վերջինիս բողոքը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 22-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2016

թվականի մարտի 1-ի որոշումները բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Լևոն Չաքոյանի բողոքը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 22-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 1-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

47.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԳ/0004/06/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 27-ի որոշման դեմ մեղադրյալ Գավիթ Հովհաննեսի Հակոբյանի պաշտպան Գ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի փետրվարի 12-ին ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասին 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 36100816 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ Գ.Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Գ.Հակոբյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ Դ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

1.1. 2016 թվականի մարտի 9-ին Դ.Հակոբյանը կամովին ներկայացել է ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժին, և նույն օրը վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով:

Նախաքննության մարմինը 2016 թվականի մարտի 10-ին միջնորդություն է ներկայացրել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալ Դ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերահաստատելու մասին: 2016 թվականի մարտի 10-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 5-ի որոշմամբ Դ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով:

2016 թվականի հունիսի 26-ին նախաքննությունը շարունակելու համար թիվ 36100816 քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ Դ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է ևս 2 (երկու) ամիս ժամկետով, իսկ գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը մերժվել է:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 1-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել մեղադրյալ Դ.Հակոբյանի պաշտպան Գ.Հարությունյանը:

ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ պաշտպան Գ.Հարությունյանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 27-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Դ.Հակոբյանի պաշտպան Գ.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Գ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը մերժելու մասին որոշումը հրապարակել է 2016 թվականի հուլիսի 1-ին: Նույն օրը պաշտպան Գ.Հարությունյանն ստացել է Առաջին ատյանի դատարանի որոշման պատճենը (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 93-105, 108):

Առաջին ատյանի դատարանն իր որոշման եզրափակիչ մասում արձանագրել է. *«Որոշումը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հնգօրյա ժամկետում»* (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 105):

4.1.«Հայփոստ» ՓԲԸ «Վանաձոր 21» բաժանմունքի կողմից տրված փոստային անդորրագրի համաձայն՝ պաշտպան Գ.Հարությունյանը 2016 թվականի հուլիսի 6-ին վերաքննիչ բողոք է ներկայացրել որոշումը կայացրած Առաջին ատյանի դատարան (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 40):

Առաջին ատյանի դատարանը պաշտպան Գ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի հիման վրա մեղադրյալ Գ.Հակոբյանի կալանքի վերաբերյալ նյութերը 2016 թվականի հուլիսի 18-ի թիվ ԳԳ-20-Ե-15427/16 գրությամբ ուղարկել է Վերաքննիչ դատարան (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 1):

5. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. *«(...) Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի պահանջներով՝ ընդհանուր իրավասության դատարանը 01.07.2016թ. որոշմամբ սահմանել է բողոքարկման հնգօրյա ժամկետ:*

Ընդհանուր իրավասության դատարանի կողմից սույն գործի շրջանակներում որոշումը կայացվել է 01.07.2016թ., որը ստորագրությամբ քննիչին, մեղադրյալին և պաշտպանին է հանձնվել նույն օրը՝ 01.07.2016թ.-ին: Նշված որոշման դեմ վերաքննիչ բողոքը փոստին է հանձնվել 21.07.2016թ.-ին:

(...)

Վերը նշվածից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.07.2016թ. որոշման դեմ՝ ժամկետանց է, ուստի այն պետք է բողոքել առանց քննության(...)» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 23):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, այն է՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես, բողոք բերած անձը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ և 378-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասը, նշել է, որ կալանքի ժամկետի երկարացման դեմ բողոքը, բացի ՀՀ վերաքննիչ քրեական դատարան անմիջականորեն ներկայացվելուց, կարող է բերվել նաև որոշում կայացրած դատարանի միջոցով, ինչն էլ տվյալ դեպքում արվել է. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 1-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերվել օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում՝ 2016 թվականի հուլիսի 6-ին՝ որոշումը կայացրած դատարանի միջոցով: Բողոքաբերն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանի աշխատակազմի խնդրանքով 2016 թվականի հուլիսի 21-ին փոստային կապի միջոցով Վերաքննիչ դատարան է ուղարկել արդեն իսկ օրենքով սահմանված կարգով և ժամկետում ուղարկված բողոքի երկրորդ օրինակը, ինչն էլ հիմք ընդունելով՝ Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման, որ բողոքը ժամկետանց է:

7. Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ Առաջին ատյանի դատարանը կալանքի հետ քննարկել է նաև գրավի կիրառման հարցը և նույն որոշմամբ մերժել է այն, իսկ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 1-ի որոշումը կարող էր բողոքարկվել 5-օրյա ժամկետում: Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ բողոքաբերը գտել է, որ այդպիսի դեպքերում պետք է կիրառվի անձի համար ավելի բարենպաստ համարվող՝ բողոքարկման 10-օրյա ժամկետը:

8. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճարելի դատարանը գտնում է, որ կալանավորման (կալանքի ժամկետը երկարաձգելու) և գրավի վերաբերյալ մեկ միասնական դատական ակտի բողոքարկման ժամկետների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

9. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյոք կալանավորման և գրավը մերժելու մասին որոշումը հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա լինելու, ինչպես նաև մեղադրյալ Դ.Հակոբյանի պաշտպանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

10. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի կողմից բերվում են վերաքննիչ դատարան՝ անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով»:*

Վճարելի դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է անձի իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանության առանձնահատուկ տեղը, որի բաղադրիչն է նաև դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման իրավունքը: Դատական որոշումների վերանայման և ստուգման անհրաժեշտությունը պայմանավորված է քրեական դատավարության խնդիրներով և դատական սխալների ու անօրինական դատական ակտերի բացառման և կանխման օբյեկտիվ, անընդհատ գոյություն ունեցող պահանջով (*mutatis mutandis տե՛ս Տիգրան Հովհաննիսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԳ/0066/11/12 որոշման 17-րդ կետը*):

Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանավորման ժամկետը երկարացնելու միջնորդությունների քննության, դրանց արդյունքում կայացված համապատասխան որոշումների բողոքարկման, ինչպես նաև վերադաս դատական ատյանի կողմից որպես խափանման մի-

ջոց կալանք ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման հարցերը կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ գլխում (285-րդ, 287-288-րդ հոդվածներ), որտեղ կալանքի վերաբերյալ որոշումների բողոքարկման հարցում նախատեսվել են հատուկ կանոններ: Մասնավորապես, եթե վերաքննիչ բողոք ներկայացնելու ընդհանուր կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ հոդվածը պարտավորեցնում է վերաքննիչ բողոքն անմիջականորեն ներկայացնել վերաքննիչ դատարան, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորման վերաբերյալ որոշումների վերաքննիչ վերանայման կառուցակարգը համապատասխան սուբյեկտների կողմից (դատախազ, մեղադրյալ, պաշտպան կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ) կարող է գործադրվել ոչ միայն անմիջականորեն, այլև որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով վերաքննիչ բողոք ներկայացնելով, որոնցից յուրաքանչյուրը հիմք է բողոքարկվող դատական ակտի օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում իրականացնելու համար:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հինգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածը, բողոքարկվող դատական ակտի տեսակով պայմանավորված, նախատեսում է վերաքննիչ բողոք բերելու տարբեր ժամկետներ: Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետները սահմանող մեջբերված նորմում տարբերակված մոտեցում է դրսևորվել կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորելու մասին որոշումների և գործն ըստ էության չլուծող այլ դատական ակտերի առումով՝ համապատասխանաբար նախատեսելով վերաքննիչ բողոք բերելու հնգօրյա և տասնօրյա ժամկետներ:

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը քննարկվող դրույթի շրջանակներում անդրադարձել է կալանավորումը գրավով փոխարինելու, ինչպես նաև գրավը մերժելու և կալանավորումը որպես խափանման միջոց թողնելու մասին որոշումների վերաքննիչ բողոքարկման ժամկետների խնդրին՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Մ]ինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս առաջին ատյանի դատարանի կողմից կայացված՝ կալանավորումը գրավով փոխարինելու, ինչպես նաև գրավը մերժելու և կալանավորումը որպես խափանման միջոց թողնելու մասին որոշումները, նախատեսված չլինելով հրապարակ-*

ման պահից հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված որոշումների շրջանակում, ենթակա են բողոքարկման հրապարակման պահից տասնօրյա ժամկետում» (տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի N 150 որոշման 4-րդ կետը):

12. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ առաջին ատյանի դատարանի կողմից կալանավորման և գրավի միջնորդությունների քննարկման արդյունքում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու (կալանքի ժամկետը երկարացնելու) և միաժամանակ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը թույլատրելու կամ մերժելու մասին *մեկ դատական ակտի* բողոքարկման ժամկետների հիմնախնդրին: Սույն իրավիճակում նույն դատական ակտի շրջանակներում ըստ էության միավորվում են այլ դեպքերում տարբեր իրավական ռեժիմներով բողոքարկման ենթակա երկու ինքնուրույն որոշումներ. մասնավորապես՝ կալանավորման (կալանքի ժամկետի երկարաձգման) դեպքում նախատեսվում է բողոքարկման հնգօրյա, իսկ գրավի կիրառումը թույլատրելու կամ մերժելու դեպքում՝ տասնօրյա ժամկետ:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քրեական դատավարության օրենսգրքում կալանավորման (կալանքի ժամկետը երկարաձգելու) և միաժամանակ գրավը թույլատրելու կամ մերժելու մասին մեկ միասնական որոշման բողոքարկման առանձին ժամկետ նախատեսված չէ, այլ կերպ ասած՝ այն ընդգրկված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա որոշումների շարքում: Հետևաբար կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման միջնորդությունը բավարարելու հետ մեկտեղ գրավի միջնորդությունը քննարկելու և արդյունքում գրավի կիրառումը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը Վերաքննիչ դատարան կարող է բողոքարկվել տասնօրյա ժամկետում՝ որպես գործն ըստ էության չլուծող այլ դատական ակտ:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալը վերաբերում է այն դեպքերին, երբ կալանավորման (կալանքի ժամկետի երկարաձգման) և գրավի վերաբերյալ հարցերը լուծվում են մեկ դատական ակտի շրջանակներում: Հակառակ պարագայում, եթե առաջին ատյանի դատարանի կողմից կայացվում են կալանավորման կամ կալանքի ժամկետը երկարաձգելու և գրավի կիրառումը թույլատրելու կամ մերժելու մասին *առանձին* դատական ակտեր, ապա դրանցից յուրաքանչյուրը ենթակա է բողոքարկման ինքնուրույն կարգով՝ կալանավորումը (կալանքի ժամկետի երկարաձգումը)՝ հնգօրյա, իսկ գրավի վերաբերյալ որոշումը՝ տասնօրյա ժամկետում:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Գ.Հակոբյանի նկատմամբ որպես

խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացնելու և կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը կայացրել է 2016 թվականի հուլիսի 1-ին, որի եզրափակիչ մասում արձանագրել է, որոշումը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել հնգօրյա ժամկետում (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

Վճարելի բողոքին կից ներկայացված նյութերից երևում է, որ պաշտպան Գ.Հարությունյանը 2016 թվականի հուլիսի 6-ին, այսինքն՝ Առաջին ատյանի դատարանի որոշման հրապարակման պահից հնգօրյա ժամկետում, վերաքննիչ բողոք է ներկայացրել որոշումը կայացրած դատարան: Վերոնշյալ բողոքի հիման վրա Առաջին ատյանի դատարանը կալանքի վերաբերյալ նյութերն ուղարկել է Վերաքննիչ դատարան (տե՛ս սույն որոշման 4.1-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, սակայն, հիմք ընդունելով պաշտպան Գ.Հարությունյանի կողմից 2016 թվականի հուլիսի 21-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ուղարկած բողոքի օրինակը, 2016 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-րդ կետում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հարցում Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման: Մասնավորապես, մեղադրյալ Գ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և գրավի կիրառումը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 1-ի որոշման դեմ պաշտպան Գ.Հարությունյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարանի կողմից սահմանված հնգօրյա ժամկետի պահպանմամբ՝ 2016 թվականի հուլիսի 6-ին: Ընդ որում, պաշտպանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վերաքննիչ բողոք է բերել համապատասխան որոշումը կայացրած դատարանի միջոցով: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով պաշտպան Գ.Հարությունյանի կողմից 2016 թվականի հուլիսի 21-ին Վերաքննիչ դատարան ուղարկած բողոքի օրինակը, անհիմն կերպով արձանագրել է, որ ներկայացված բողոքը ժամկետանց է՝ անտեսելով, որ Առաջին ատյանի դատարանը պաշտպան Գ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի հիման վրա կալանքի վերաբերյալ նյութերը դեռևս 2016 թվականի հուլիսի 18-ին ուղարկել էր Վերաքննիչ դատարան: Ուստի, վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է:

15. Վճարելի դատարանը, անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 7-րդ կետում մեջբերված փաստարկներին, իր անհամաձայնությունն է արտահայտում նաև Գ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և գրավ կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը մերժելու մասին որոշումը հնգօրյա ժամկետում բողոքարկման

ենթակա լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների դիրքորոշման կապակցությամբ: Այսպես՝ Առաջին ատյանի դատարանը, քննարկելով կալանավորման և գրավի միջնորդությունները, կայացրել է կալանավորման ժամկետը երկարացնելու և գրավի կիրառումը մերժելու մասին մեկ դատական ակտ՝ եզրափակիչ մասում կողմերին պարզաբանելով, որ այն կարող է բողոքարկվել հնգօրյա ժամկետում: Վերաքննիչ դատարանն իր հերթին, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, նույնպես արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 1-ի որոշումը կարող էր բողոքարկվել հնգօրյա ժամկետում (տե՛ս սույն որոշման 4-5-րդ կետերը):

Վերոնշյալը գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված՝ մեղադրյալ Գ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և գրավ կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը մերժելու մասին որոշումն ընդգրկված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ հրապարակման պահից հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա որոշումների շարքում, ուստի այն պետք է բողոքարկվեր տասնօրյա ժամկետում:

16. Այսպիսով, հաշվի առնելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանավորման և գրավը մերժելու մասին որոշումը հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա լինելու, ինչպես նաև մեղադրյալ Գ.Հակոբյանի պաշտպանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Մեղադրյալ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 1-ի որոշման դեմ պաշտպան Գ.Հարությունյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ ըստ էության քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

48.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԳ/0041/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԳՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ՝
դատախազ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Յոլակ Եղիշի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի հունիսի 13-ին Լյովա Գրեթելի Ղազարյանը ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Մուշի բաժնում հաղորդում է ներկայացրել, որի հիման վրա 2014 թվականի հունիսի 23-ին ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 18111814 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ Յուլակ Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով:

2015 թվականի մայիսի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 16-ի դատավճռով Յ.Հովհաննիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում արդարացվել է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Վերոնշյալ դատական ակտի դեմ մեղադրողի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ մերժել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացրել արդարացված Յուլակ Հովհաննիսյանի պաշտպան Մամիկոն Մուրադյանը՝ փաստարկելով, որ դատական նիստի ժամանակ Յուլակ Հովհաննիսյանի կողմից վիրավորական արտահայտությունն արվել է այն բանից հետո, երբ Լյովա Ղազարյանը ցուցմունք տալիս ասել է, որ «Յ.Հովհաննիսյանը ֆանտաստիկ կերպով քիթ մռթի» ընկել է ներքև: Պաշտպանը նշել է, որ ոչ միայն իր պաշտպանյալ Յ.Հովհաննիսյանի պնդմամբ, այլ նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ ոչ թե վայր ընկնելու, այլ Լ.Ղազարյանի հարվածների պատճառով է Յ.Հովհաննիսյանը մարմնական վնասվածք ստացել: Պաշտպանն ընդգծել է, որ ըստ Հայոց լեզվի բարբառային բառարանի՝ «մռութ» բառը նշանակում է կենդանու բերան: Այսինքն՝ Լ.Ղազարյանը վիրավորանք է հասցրել Յ.Հովհաննիսյանին՝ նրան համեմատելով կենդանու հետ, որից հետո դատարանի դահլիճից հնչել է պատասխան վիրավորական արտահայտություն: Վճարելի բողոքի պատասխան ներկայացրած անձը խնդրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճարելի բողոքը մերժել, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնել անփոփոխ:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. 2014 թվականի հունիսի 13-ին Լ.Ղազարյանը ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Մուշի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նիստերի դահլիճում՝ դատաքննության ժամանակ, գործով

տուժող Յ.Հովհաննիսյանը բարձրաձայն վիրավորել է իրեն ստորացուցիչ արտահայտությամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 3):

5.1. 2014 թվականի հուլիսի 8-ին քննիչի կողմից կազմված՝ «Լազերային ձայնասկավառակի պարունակությունը զննելու մասին» արձանագրության համաձայն՝ «(...) *Չայնագրությունը գրառված է լազերային սկավառակի վրա, բաղկացած էր թվով 40 ֆայլերից: 7-րդ՝ «05 2014-01-16 17-00-05» համարի ֆայլի տևողությունը 15 րոպե էր: Այնտեղ լսվում են դատավարության մասնակիցների՝ դատավոր Մ.Մարոյանի, ամբաստանյալ Լյովա Ղազարյանի, վերջինիս պաշտպան Ռ.Մովսիսյանի, պետական մեղադրող Ա.Հովհաննիսյանի, տուժող Յոլակ Հովհաննիսյանի ձայները: Ֆայլի ձայնագրության լսման ընթացքում, 14:47 րոպեին ամբաստանյալ Լյովա Ղազարյանի ցուցմունք տալու ժամանակ Յոլակ Հովհաննիսյանը դատավարության մասնակիցների ներկայությամբ, բարձրաձայն ստորացուցիչ արտահայտությամբ վիրավորում է Լյովա Ղազարյանին (...)*» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 38):

Ըստ ձայնագրառման փորձաքննության թիվ 14-2041 եզրակացության 1-ին Հավելվածի, որում վերծանվել է մասնավորապես «05 2014-01-16 17-00-05» ֆայլը՝ լսվել է տղամարդու ձայն «5»՝ «*օձիքի մասից դշերից հավաքեցի, սենց քաշելով՝ տո դե, ըսի, ռադտ քաշե գնա էլի, շառդ առ գնա, ես շառ լավ գիդեմ դու ով ես: Ու էդ մոմենտին ինչխոր էս մարդուն վերցնես, ոտքերը հանես օդ ու բաց թողնես: Շառ ընքես, ինչ ըսած, ֆանտաստիկ կերբով քիթ մոթի ընգավ ներքև: Էդ ընգնելուց նույնիսկ ես վախեցա, մղաճելով, օր հարուր տոգոս ինչ-որ տռավմա ստացավ»:* Գրանից հետո լսվել է տղամարդու ձայն «3»՝ «*Ու գնացիր միլիցա զանգ տվիր, դախսի տղա»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 138-139):

6. Յ.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*[Ն]ա (...) 2014 թվականի հունվարի 16-ին, ժամը 12:00-ին, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դահլիճում, թիվ 22101213 քրեական գործով տեղի ունեցած դատաքննության ժամանակ (...) որպես տուժող մասնակցելով դատաքննությանը, ամբաստանյալ Լյովա Գրեթելի Ղազարյանի կողմից ցուցմունք տալու ընթացքում վերջինիս վիրավորելու միջոցով անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 53-54):

7. Յոլակ Հովհաննիսյանը 2014 թվականի օգոստոսի 15-ին որպես մեղադրյալ տված իր ցուցմունքում նշել է, որ չի հիշում, որ 2014 թվականի հունվարի 16-ին կայացած դատական նիստի ժամանակ Լյովա Ղազարյանին վիրավորած լինի «դախսի տղա» արտահայտությամբ, սակայն եթե ասել էլ է, ապա միայն Լյովա Ղազարյանի հասցեին, քանի որ նա է իրեն զայրացնելով հասցրել այդ վիճակին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 59-60):

8. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. «*[Գ]ատավարության մասնակցին վիրավորելը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով միայն այն դեպքում, երբ*

գործով ձեռք բերված ապացույցներով կհիմնավորվի այդ վիրավորելու հետ միաժամանակ՝ դիտավորությանը, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորումը:

(...)

Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը կարող է կատարվել միայն դիտավորությանը: Դա նշանակում է, որ մեղավոր անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է դատական նիստի կարգն ու անհարգալից վերաբերմունք դրսևորում դատարանի հանդեպ, այլև ցանկանում է կատարել այդ գործողությունները:

Դատարանն արձանագրում է, որ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը կատարվում է հենց դատարանի նկատմամբ հանցավորի անհարգալից վերաբերմունքը ցուցադրելու նպատակով:

(...)

Վերոգրյալի հիման վրա դատարանն արձանագրում է, որ դատավարության մասնակցին վիրավորելն ինքնին չի կարող գնահատվել որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում, եթե ուղղված է կոնկրետ անձին և չի հետապնդում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակ (...):

(...)

[Ս]ույն գործով դատարանին չներկայացվեց այնպիսի ապացույցներ, որոնք ուղղակիորեն կհիմնավորեին, որ Յուլյակ Հովհաննիսյանը Լևոն Ղազարյանի հասցեին վիրավորական արտահայտություն կատարելով՝ ցանկացել է անհարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի նկատմամբ, հետևաբար ամբաստանյալի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանցակազմը:

(...)

Եթե դատական նիստի ժամանակ դատավարության մասնակիցը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք է դրսևորում, ապա միակ մարմինը, ով կարող է դրանում առերևույթ հանցագործության տարրեր պարունակող գործողություն կամ անգործություն դիտել, դա վարույթն իրականացնող մարմինն՝ տվյալ գործը քննող դատարանն է, որն էլ քրեական գործ հարուցելու միջնորդությանը դիմում է դատախազին: Միևնույն ժամանակ դատարանի պարտավորությունը՝ քրեական գործ հարուցելու միջնորդությանը դատախազին դիմելու վերաբերյալ, միակ հիմքն է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետի կարգով՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու հատկանիշներով քրեական գործ հարուցելու համար: Այլ անձինք կամ մարմինները ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու հաղորդում ներկայացնելու սուբյեկտ չեն հանդիսանում:

(...)

[Ս]ույն քրեական գործով, ի թիվս այլոց, բացակայում է նաև Յուլյակ Հովհաննիսյանի արարքում առերևույթ հանցագործության հատկանիշներ

դիտարկելու լիազորությամբ օժտված մարմնի՝ տվյալ գործը քննած դատարանի համապատասխան միջնորդությունը, քանի որ գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ տվյալ քրեական գործի հարուցման հիմք է հանդիսացել ոչ թե դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու փաստով դատարանի միջնորդությունը, այլ պատիվը և արժանապատվությունը վիրավորված ֆիզիկական անձի հաղորդումը: Վերոնշյալ հանգամանքների առկայության պարագայում արարքը, որը թեև առաջին հայացքից կարող է դիտվել որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, սակայն իր մեջ չի պարունակում վերոնշյալ հանցակազմի հատկանիշները, պետք է լուծվի քաղաքացիադատավարական ընթացակարգի շրջանակներում (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 183-190):

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատարանի եզրահանգումները ՀՀ քրեական օրենսգրքի 343 հոդվածի 2-րդ մասով մեղաագրվող արարքում ամբաստանյալ Յուլյա Հովհաննիսյանի անմեղության վերաբերյալ, պատճառաբանված ու հիմնված են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա և արդյունք են իրենց համակցության մեջ՝ ձեռք բերված ապացույցների մանրազննին ու խորը վերլուծության ու ճիշտ գնահատման:

(...)

Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով արդարացման դատական ակտ կայացնելիս Դատարանի կողմից նյութական և դատավարական նորմերի այնպիսի խախտումներ թույլ չեն տրվել, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, կոնկրետ դեպքում Դատարանն ըստ էության հանգել է վերջնական ճիշտ հետևության, հետևաբար վիճարկվող դատական ակտը պետք է թողնել օրինական ուժի մեջ, իսկ մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժել (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 79-90):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

10. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերի կարծիքով Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 16-ի արդարացման դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը օրինական, հիմնավորված և պատճառաբանված չեն, առերևույթ հակասում են Վճռաբեկ դատարանի ձևավորած մախադեպային իրավունքին: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Յ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում արդարացնելով, իսկ Վերաքննիչ դատարանը, արդարացման դատավճիռն անփոփոխ թողնելով, թույլ են տվել դատական սխալ, այն է՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, քանի որ գործով հետազոտված ապացույցները չեն արտացոլում դատարաննե-

րի կողմից ամբաստանյալի արարքին տրված քրեաիրավական գնահատականը:

10.1. Բողոքի հեղինակը նշել է, որ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել Յ.Հովհաննիսյանի արարքի ճիշտ որակման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները, հաշվի չի առել վերջինիս դիտավորության ուղղվածությունը: Այսպես՝ ամբաստանյալ Յ.Հովհաննիսյանի կողմից դատավարությանը մասնակցող անձին վիրավորելու եղանակով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելը հիմնավորվել է տուժող Լ.Ղազարյանի, վկաներ՝ Մանուկ Հարությունյանի, Անահիտ Ղազարյանի, Հասմիկ Մանուկյանի ցուցմունքներով, դատական նիստի ձայնագրության սկավառակով, ձայնագրառման փորձաքննության թիվ 14-2041 եզրակացությամբ: Յ.Հովհաննիսյանը դատական նիստի ժամանակ Լ.Ղազարյանին վիրավորելուց հետո ոտքի է կանգնել, դատարանի օրինական կարգադրություններին չի ենթարկվել, այնուհետև դատական նիստի դահլիճը լքելու փորձ է կատարել, նիստի ժամանակ դահլիճում քայլել է, և նրա գործողությունները կանխվել են դատական կարգադրիչի միջամտությամբ:

10.2. Բողոք բերած անձն իր անհամաձայնությունն է արտահայտել մաս Առաջին ատյանի դատարանի դատավճռում տեղ գտած այն փաստարկի կապակցությամբ, որ դատական նիստի ժամանակ դատավարության մասնակցի կողմից դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում միակ մարմինը, ով կարող է դրանում առերևույթ հանցագործության տարրեր պարունակող արարք դիտել, տվյալ գործը քննող դատարանն է, որն էլ կարող է քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին: Այլ անձինք կամ մարմինները ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու հաղորդում ներկայացնելու սուբյեկտ չեն հանդիսանում:

Վերոնշյալի կապակցությամբ բողոքաբերն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվող գործերը դասելով մասնավոր հետապնդման քրեական գործերի շարքին և ձևավորելով նշված հոդվածով քրեական գործ հարուցելու համար օրենքով չնախատեսված իմպերատիվ պահանջ, վերապահել է իրեն օրենսդիր մարմնի լիազորություններ և փոփոխություն կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածում:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 15-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը, ամբաստանյալ Յ.Հովհաննիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ նշանակել համաչափ պատիժ:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգու-
մը.**

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի հանցակազմի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր, ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Յ.Հովհաննիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշների բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է դատավարությանը մասնակցող անձանց վիրավորելով՝*

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով»:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածն ընդգրկված է ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 31-րդ գլխում: ՀՀ քրեական օրենսգրքում հիշյալ գլխի առանձնացումը պայմանավորված է իրավական պետությունում դատարանի և դատական իշխանության հիմնաքարային նշանակությամբ:

Այսպես, դատարանը՝ որպես արդարադատության երաշխավոր, ում դերը հիմնարար է օրենքի գերակայության վրա հիմնված պետությունում, պետք է վայելի հասարակության վստահությունը (*տե՛ս De Haes and Gijssels v. Belgium գործով Եվրոպական դատարանի 1997 թվականի փետրվարի 24-ի վճիռ, գանգատ թիվ 19983/92, կետ 37*): «Դատական իշխանության հեղինակություն» հասկացությունն ընգրկում է, մասնավորապես, այն գաղափարը, որ դատարանները իրավական վեճերի լուծման և անձի մեղավորության ու անմեղության որոշման պատշաճ մարմիններ են և որպես այդպիսին պետք է ընկալվեն հասարակության լայն շրջանակների կողմից, բացի այդ հասարակությունը պետք է հարգանք և վստահություն ունենա նշված գործառույթն իրականացնելու՝ դատարանի կարողության վրա (*տե՛ս Worm v. Austria գործով Եվրոպական դատարանի 1997 թվականի օգոստոսի 29-ի վճիռ, գանգատ թիվ 22714/93, կետ 40*):

Ավելին՝ դատական իշխանության հեղինակությունը սերտորեն կապված է դատարանի անաչառության հետ: Մասնավորապես, դատարանի անաչառության ապահովման էական հանգամանք է այն վստահությունը, որը ժողովրդավարական հասարակությունում պետք է ձևավորվի մեղադրյալների մոտ՝ քրեական դատավարության շրջանակներում, ինչպես նաև հասարակության մոտ ընդհանրապես (*տե՛ս Worm v. Austria գործով վկայակոչված վճիռը, կետ 40, mutatis mutandis, Fey v. Austria գործով Եվրոպական դատարանի 1993 թվականի փետրվարի 24-ի վճիռը, գանգատ թիվ 14396/88 կետ 30*):

16. Քննարկվող հանցակազմի *հիմնական անմիջական օբյեկտ*ն արդարադատություն իրականացնող մարմնի (այսինքն՝ դատարանի) նորմալ, բնականոն գործունեությունը, արդարադատության հեղինակությունն ապահովող հասարակական հարաբերություններն են: Որպես հանցագործության *լրացուցիչ օբյեկտ* հանդես են գալիս դատավարությանը մասնակցող անձանց պատվի և արժանապատվության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները: *Օբյեկտիվ կողմն* արտահայտվում է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքով, որը դրսևորվել է դատավարությանը մասնակցող անձանց վիրավորելով:

16.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չէ «վիրավորանք» հասկացության սահմանումը: Մինևույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենսգրքի *իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է*»:

Հիշյալ նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելիս ՀՀ սահմանադրական դատարանը իրավական դիրքորոշումներ է արտահայտել այն մասին, որ. «Միջազգային իրավական պրակտիկայում (...) վիրավորանքը ենթադրում է **անձի՝ դատավորությանը, կանխամտածված նվաստացում**: (...)

Քննադատությունը, որն ուղղված է անձի գործունեությանը քաղաքականության, քիզնեսի, գիտության, արվեստի կամ այլ հանրային բնագավառներում, ինչպես նաև հանրային պաշտոնի, հասարակական դիրքի առնչությամբ և ակնհայտորեն չի գերազանցում իրավաչափության սահմանները, չի կարող համարվել վիրավորանք վեճի առարկա հողվածի իմաստով:

*[Ա]րտահայտությունը չի կարող որպես վիրավորանք որակվել, եթե այն ունի որոշակի փաստական հիմք: Այսինքն, ոչ թե պետք է վիրավորանք համարել գնահատողական դատողությունը, այլ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն **արատավորելու նպատակով** կատարված հրապարակային արտահայտությունը: Այստեղ կարևոր է նաև «արատավորելու նպատակով» արտահայտության իրավական իմաստի ճիշտ ընկալումը: Տվյալ համատեքստում այն ենթադրում*

է դիտավորություն, կանխամտածված գործողություն, ոստնձգություն անձի արժանապատվության նկատմամբ: (...)» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածին, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին և 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով թիվ ՍԴ-Ռ-997 որոշման 7-րդ կետը):

Քննարկվող նորմի մեկնաբանման շրջանակներում անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ վիրավորանք գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ.

«(...) 1. արված արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը (...),

2. արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: (...)

3. արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային ձևով (...): Հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը: (...)» (տե՛ս Վճռաբեկ դատարանի 2012 թվականի ապրիլի 27-ի՝ ըստ հայցի Վանո Եղիազարյանի ընդդեմ Բորիս Աշրաֆյանի, երրորդ անձ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի, թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով որոշումը):

Վերը մեջբերված իրավական նորմի և իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի իմաստով վիրավորանքը ենթադրում է դատավարության մասնակցի պատվի, արժանապատվության, գործարար համբավի կանխամտածված նվաստացում, ստորացում, որը կարող է դրսևորվել ամենատարբեր միջոցներով (խոսքով, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, պատկերների (նկարներ, տարածական պատկերներ), ձայնի (ինչպես բանավոր խոսքը, այնպես էլ տարբեր հնչերանգների կիրառումը), նշանների միջոցով (ժեստիկուլյացիաներ, սիմվոլներ) և այլն):

17. *Սուբյեկտիվ կողմից* արարքը կատարվում է ուղղակի դիտավորությամբ, մասնավորապես հանցավորը գիտակցում է, որ դատավարությանը մասնակցող անձանց վիրավորելով՝ անհարգալից վերաբերմունք է դրսևորում դատարանի նկատմամբ և ցանկանում է դա (*մեղքի դիտավոր-*

յալ ձևի վերաբերյալ մանրամասն տե՛ս Գևորգ Թոսունյանի և մյուսների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ՄԳ/0319/01/10 որոշման 14-րդ կետը): Քննարկվող հանցագործության սուբյեկտն ընդհանուր է, այսինքն՝ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող նորմը հանդիսանում է անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջոց, հետևաբար դրա հատկանիշները մեկնաբանելիս անհրաժեշտ է ուղղորդվել հիշյալ սահմանափակման իրավաչափության պայմաններով:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: (...)

(...)

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Արտահայտվելու ազատության և դրա սահմանափակման իրավաչափության մեկնաբանման վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն.

ա) արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից և դրա զարգացման ու յուրաքանչյուր անհատի ինքնահաստատման հիմնական պայմաններից է: 10-րդ հոդվածի 2-րդ

մասի համաձայն՝ այն կիրառելի է ոչ միայն այն «տեղեկատվության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են չվիրավորող կամ չեզոք, այլ նաև նրանց, որոնք վիրավորում են, ցնցում կամ անհանգստություն պատճառում: Արտահայտվելու ազատությունը ենթակա է որոշակի սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է նեղ մեկնաբանություն ստանան, և ցանկացած սահմանափակման անհրաժեշտություն պետք է համոզիչ կերպով հիմնավորվի,

բ) «անհրաժեշտ» ածականը 10-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով վերաբերում է «անհետաձգելի հասարակական պահանջմունքի» առկայությանը,

գ) իր հսկողական լիազորություններն իրականացնելիս Եվրոպական դատարանը վիճարկվող միջամտությունը պետք է գնահատի ամբողջ գործի, ներառյալ դիմումատուին վերագրվող **արտահայտությունների բովանդակության և դրանց համատեքստի հաշվառմամբ**: Մասնավորապես, դատարանը պետք է որոշի արդյոք քննարկվող միջամտությունը «համաչափ է հետապնդվող նպատակին» և արդյոք ներպետական մարմինների կողմից ներկայացված և այն արդարացնելուն ուղղված պատճառաբանությունները «վերաբերելի և բավարար» են (*տե՛ս Janowski v. Poland գործով Մեծ պալատի 1991 թվականի հունվարի 21-ի վճիռ, զանգատ թիվ 25716/94, կետ 30*):

Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավաչափ նպատակներին համապատասխան քրեական պատասխանատվության սահմանումն ինքնին չի կարող հանգեցնել քննարկվող իրավունքի խախտման, մասնավորապես որոշակի ծանր գործերով, որոնք կարող են գնահատվել որպես համաչափ նպատակ: Միևնույն ժամանակ սահմանափակման համաչափության գնահատումը շատ դեպքերում կախված է այն հանգամանքից, թե արդյոք ներպետական մարմինները կարող էին քրեականից բացի սահմանափակման այլ, օրինակ քաղաքացիական կամ կարգապահական միջոցներ կիրառել (*տե՛ս Lehideux and Isorni v. France գործով 1998 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռ, զանգատ թիվ 24662/94, կետ 51 և 57, mutatis mutandis, Cumpănă and Mazăre v. Romania գործով Մեծ պալատի 2004 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռ, զանգատ թիվ 33348/96, կետ 115*): Այսպիսով, միջամտության համաչափությունը գնահատելիս կիրառված պատիժների բնույթը և խստությունը նույնպես պետք է հաշվի առնվեն (*տե՛ս Ceylan v. Turkey գործով Մեծ պալատի 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռ, զանգատ թիվ 23556/94, կետ 49*):

19. Վերջինիս համատեքստում Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է դատական սանկցիաներ կիրառելու հնարավորություն: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-ին հոդվածի համաձայն՝

«1. Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները.

- 1) նախազգուշացում.
- 2) նիստերի դահլիճից հեռացնելը.
- 3) դատական տուգանք.

4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:

2. Սանկցիան պետք է համաչափ լինի արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու դատարանի գործունեության բնականոն ընթացքը:

(...)

9. Եթե դատարանը գտնում է, որ քրեական դատավարությանը մասնակցող կամ դատական նիստին ներկա գտնվող այլ անձը դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, որն առաջացնում է քրեական պատասխանատվություն, ապա դատավորը կարող է սույն հոդվածով սահմանված կարգով կարգազանց անձի նկատմամբ կիրառել դատական սանկցիա և պարտավոր է քրեական գործ հարուցելու միջոցառությամբ դիմել դատախազին»:

ՀՀ քրեական օրենսդրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նորմի և մեջբերված դատավարական նորմի վերլուծությունից երևում է, որ դրանցով նախատեսված, համապատասխանաբար, քրեական և քրեադատավարական պատասխանատվության նպատակը դատարանի բնականոն գործունեության ապահովումն է, իսկ հիմքը՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորումը: Քրեադատավարական պատասխանատվության իմաստով վերջինս կարող է դրսևորվել, ի թիվս այլնի, նիստի կարգը խախտող և համապատասխան հոդվածում չթվարկված գործողություններ կատարելու միջոցով, որպիսին կարող է գնահատվել նաև դատավարության մասնակցին վիրավորելը:

20. Վերոշարադրյալից բխում է, որ դատավարության մասնակցին վիրավորելը, հանդիսանալով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում, կարող է առաջացնել ինչպես քրեադատավարական, այնպես էլ քրեական պատասխանատվություն: Սակայն որպեսզի քննարկվող արարքը հանգեցնի քրեական պատասխանատվության, այն պետք է օժտված լինի հանցագործությանը բնորոշ հանրային վտանգավոր-

րության աստիճանով: Հակառակ դեպքում, թեև այն ձևականորեն կարող է պարունակել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնի, հետևաբար չի կարող համարվել հանցագործություն (ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս):

Եվրոպական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատավարության մասնակցին վիրավորելը որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում կարող է համապատասխանել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներին այն դեպքում, երբ արարքը կատարվի ուղղակի դիտավորությամբ և հասցված վիրավորանքը համապատասխանի անպարկեշտության հարաբերականորեն բարձր աստիճանի: Վերջինս գնահատելիս՝ վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի դատավարության մասնակցին ուղղված վիրավորանքի բովանդակությունը, դրա արտահայտման եղանակը, վիրավորելու դրդապատճառները, անձը բնութագրող տվյալները և հոգեֆիզիոլոգիական վիճակը, դատավարության մասնակցի վարքագիծը, վիրավորանքի հետ մեկտեղ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին վկայող այլ գործողությունների իրականացումը, ինչպես նաև վիրավորանքը հասցնելու իրադրությունը բնութագրող և հարցի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արարքի կատարման իրադրությունը բնութագրող հանգամանքների համակցության պատշաճ գնահատման արդյունքում է հնարավոր որոշել՝ արդյոք կատարված արարքը համապատասխանում է հանցավոր արարքին բնութագրական հանրային վտանգավորության աստիճանին, արդյունքում՝ «վերաբերելի և բավարար» հիմնավորումներ ներկայացնել անձի արտահայտվելու ազատության սահմանափակման ամենախիստ միջոցը կիրառելու համար:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Լ.Ղազարյանը ոստիկանությունում 2014 թվականի հունիսի 13-ին հաղորդում է ներկայացրել այն մասին, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նիստերի դահլիճում՝ դատաքննության ժամանակ, գործով տուժող Յ.Հովհաննիսյանը բարձրաձայն վիրավորել է իրեն ստորացուցիչ արտահայտությամբ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Յուլյակ Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2014 թվականի հունվարի 16-ին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դահլիճում տեղի ունեցած դատական նիստի ժամանակ, որպես տուժող մասնակցելով դատաքննությանը, ամբաստանյալ Լ.Ղազարյանի կողմից ցուցմունք տալու ընթացքում վերջինիս վիրա-

վորելու միջոցով անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Որպես մեղադրյալ տված ցուցմունքում Յ.Հովհաննիսյանը նշել է, որ չի հիշում, որ 2014 թվականի հունվարի 16-ին կայացած դատական նիստի ժամանակ Լյովա Ղազարյանին վիրավորած լինի «ղախալի տղա» արտահայտությամբ, սակայն եթե ասել էլ է, ապա միայն Լյովա Ղազարյանի հասցեին, քանի որ նա է իրեն զայրացնելով հասցրել այդ վիճակին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Չայնագրառման փորձաքննության թիվ 14-2041 եզրակացության 1-ին Հավելվածի բովանդակությունից հետևում է, որ Յ.Հովհաննիսյանի կողմից Լ.Ղազարյանի հասցեին վիրավորական արտահայտություն կատարելը նախորդել է վերջինիս կողմից տրված ցուցմունքին առ այն, թե Յ.Հովհաննիսյանը *«Շաղ ընթես, ինչ ըսած, ֆանտաստիկ կերբով քիթ մռթի ընգավ ներքև: Էդ ընգնելուց նույնիսկ ես վախեցա, մղածելով, օր հարուր տոգոս ինչ-որ տռավմա ստացավ»* և եղել է դրան ի պատասխան (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է, որ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը կարող է կատարվել միայն դիտավորությամբ, այսինքն՝ անձը պետք է գիտակցի, որ իր գործողություններով խախտում է դատական նիստի կարգն ու անհարգալից վերաբերմունք դրսևորում դատարանի հանդեպ, և ցանկանա կատարել այդ գործողությունները, ընդ որում, դրանք իրականացնի հենց դատարանի նկատմամբ հանցավորի անհարգալից վերաբերմունքը ցուցադրելու նպատակով: Դատարանն ընդգծել է նաև, որ դատավարության մասնակցին վիրավորելն ինքնին չի կարող գնահատվել որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, եթե ուղղված է կոնկրետ անձին և չի հետապնդում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակ: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ սույն գործով դատարանին չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք ուղղակիորեն կհիմնավորեին, որ Յ.Հովհաննիսյանը, Լ.Ղազարյանի հասցեին վիրավորական արտահայտություն կատարելով, ցանկացել է անհարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի նկատմամբ, և Յ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում արդարացրել է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ Յ.Հովհաննիսյանի անմեղության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները պատճառաբանված ու հիմնավորված են, արդյունքում ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ բողոքարկված դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

22. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները վերլուծելով 14-20-րդ կետերում արտահայտված իրավական

դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Յ.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքը չի պարունակում ամբաստանյալին մեղսագրված այնպիսի փաստեր, որոնք վերաբերում են նրա կողմից կատարված արտահայտության բովանդակությանը, դրա արտահայտման համատեքստին և բնութագրում Յ.Հովհաննիսյանի կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը, վկայում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու՝ անձի մոտ ուղղակի դիտավորության առկայության մասին: Ավելին՝ գործում առկա և արարքի իրադրությունը բնութագրող փաստական տվյալներով հերքվում են Յ.Հովհաննիսյանի կողմից դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու ուղղակի դիտավորության առկայությունը, ինչպես նաև նրան վերագրված արարքի՝ հանցագործությանը բնորոշ հանրային վտանգավորության աստիճան ունենալու հանգամանքը:

Վերոհիշյալի հաշվառմամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Յ.Հովհաննիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշների բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը հիմնավոր է:

23. Բողոքի՝ սույն որոշման 10.1-րդ կետում շարադրված այն պնդումների կապակցությամբ, որ Յ.Հովհաննիսյանը ոտքի է կանգնել, դատարանի օրինական կարգադրություններին չի ենթարկվել, այնուհետև դատական նիստի դահլիճը լքելու փորձ է կատարել, նիստի ժամանակ դահլիճում քայլել է՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ գործողությունների կատարում Յ.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքի ծավալում ընդգրկված չի եղել, այսինքն՝ վերջինիս չի մեղսագրվել: Նման պայմաններում Վճարելի դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավադրույթը, ինչպես նաև դրա վերաբերյալ Վճարելի դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները (*տե՛ս, մասնավորապես, Արկաղի Պապյանի վերաբերյալ Վճարելի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԳ/0115/01/09 որոշումը*), արձանագրում է, որ ինչպես ստորադաս դատարանները, այնպես էլ Վճարելի դատարանն իրավասու չեն դրանք գնահատման ենթարկել:

Մինևույն ժամանակ Վճարելի դատարանը համաձայնում է բողոքաբերի այն փաստարկին, որ Առաջին ատյանի դատարանը դատավճռում սխալ հետևության է հանգել առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով միայն դատարանը կարող է քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործ հարուցելու առիթի նման մեկնաբանությունը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի պահանջներին, այն պայմաններում, երբ նույն

օրենսգրքով, քննարկվող հանցակազմի մասով որևէ հատուկ կարգավորում նախատեսված չէ: Մասնավորապես, նշված հոդվածը սպառնիչ կերպով թվարկում է քրեական գործ հարուցելու առիթները, իսկ նույն օրենսգրքի 175-րդ հոդվածը քրեական գործ հարուցելու հիմքերի և առիթների առկայության դեպքում պարտավորեցնում է դատախազին, քննիչին, հետաքննության մարմնին իրենց իրավասության շրջանակներում հարուցել քրեական գործ:

24. Ամփոփելով վերոշարադրյալը Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ստորադաս դատարանները թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտում, մասնավորապես սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը, սակայն այն չի ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Այսպիսով՝ ստորադաս դատարանները կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր, ուստի ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Արդարացված Յուլյա Եղիշի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

49.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0005/15/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ՝ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ՝ պաշտպան

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Կ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 24-ի որոշման դեմ դատապարտյալ Վահան Արայի Թորոսյանի պաշտպան Կ.Պողոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով Վահան Արայի Թորոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ նշանակվել է կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ, կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռը թողնվել է անփոփոխ:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մարտի 17-ի որոշմամբ վերը նշված դատական ակտի դեմ բերված վճարելի բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

2. 2016 թվականի հուլիսի 4-ին դատապարտյալ Վ.Թորոսյանի պաշտպան Կ.Պողոսյանը դիմում է ներկայացրել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով Վ.Թորոսյանի վարքի նկատմամբ վերահսկողության բաց թողնված ժամկետը համարել հարգելի, իսկ դատարանի դատավճռով նշանակված փորձաշրջանը համարել կրած:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ Վ.Թորոսյանի պաշտպան Կ.Պողոսյանի դիմումը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

4. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի օգոստոսի 24-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մերժելու և Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճարելի բողոք է բերել դատապարտյալ Վ.Թորոսյանի պաշտպան Կ.Պողոսյանը, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով ամբաստանյալ Վ.Թորոսյանի նկատմամբ կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ Վ.Թորոսյանի վարքի նկատմամբ վերահսկողությունը դնելով գորամասի հրամանատարության, իսկ գորացրվելուց հետո՝ ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ նաև ԱՆ) քրեակատարողական վարչության (այսուհետ՝ նաև ԶԿՎ) այլընտրանքային պատիժների կատարման բաժնի բնակության վայրի ստորաբաժանման վրա՝ փորձաշրջանի սկիզբը հաշվելով գորամասի հրամանատարության կողմից հաշվառման վերցնելու պահից (տե՛ս նյութեր, թերթեր 17-29):

7. 2015 թվականի ապրիլի 10-ին Վ.Թորոսյանը հաշվառման է վերցվել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև ՊՆ) 60913 գործնասի հրամանատարության կողմից, որի վերաբերյալ հիշյալ գործնասի հրամանատարը գրավոր տեղեկացրել է դատավճիռը կայացրած դատարանին (տե՛ս նյութեր, թերթեր 8, 10): 2015 թվականի հունիսի 27-ին Վ.Թորոսյանն արձակվել է պահեստագոր (տե՛ս նյութեր, թերթ 6):

8. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի պետի՝ 2016 թվականի մայիսի 31-ի գրության համաձայն՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում Վ.Թորոսյանի պատժի կրման և պատժից ազատման վերաբերյալ տեղեկություն առկա չէ (տե՛ս նյութեր, թերթ 13):

8.1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պետի՝ 2016 թվականի հունիսի 28-ի գրության համաձայն՝ Վ.Թորոսյանը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի որևէ բաժանմունքում չի հաշվառվել (տե՛ս նյութեր, թերթ 12):

9. 2016 թվականի հուլիսի 4-ին պաշտպան Կ.Պողոսյանը դիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով Վ.Թորոսյանի վարքի նկատմամբ վերահսկողության բաց թողնված ժամկետը համարել հարգելի և դատարանի դատավճռով նշանակված փորձաշրջանը համարել կրած (տե՛ս նյութեր, թերթեր 2-3):

9.1. Առաջին ատյանի դատարանը, անհիմն լինելու պատճառարանությամբ մերժելով Վ.Թորոսյանի պաշտպան Կ.Պողոսյանի դիմումը, իր՝ 2016 թվականի հուլիսի 19-ի որոշման շրջանակներում արձանագրել է. *«(...) ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ հիշյալ իրավանդորդը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողության բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ըստ դրա՝ դատարանի կողմից սահմանված փորձաշրջանը կրած համարելու կառուցակարգ չի բովանդակում: Ավելին՝ նման իրավակարգավորում նախատեսված չէ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ բաժնի 49-րդ գլխում, որտեղ օրենսդիրը հստակ սահմանել է դատավճռի կամ որոշման ի կատար ածման փուլում դատարանի կողմից քննարկվող հարցերի շրջանակը և ընթացակարգը:*

(...) [Հ]աշվի առնելով, որ դատապարտյալի վարքի նկատմամբ վերահսկողության բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ըստ դրա՝ դատարանի դատավճռով նշանակված փորձաշրջանը կրած համարելու իրավասությամբ դատարանը ՀՀ Սահմանադրությամբ և այլ օրենքներով լիազորված չէ՝ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Վ.Թորոսյանի պաշտպան Կ.Պողոսյանի դիմումն անհիմն է և ենթակա է մերժման (...)» (տե՛ս նյութեր, թերթեր 39-42):

10. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, իր՝ 2016 թվականի օգոստոսի

24-ի որոշման շրջանակներում փաստել է. «(...) *Վերաքննիչ դատարանն ըստ էության ընդունում է Առաջին ատյանի դատարանի փաստարկն առ այն, որ դատապարտյալի վարքի նկատմամբ վերահսկողության բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և այդ կերպ դատավճռով նշանակված փորձաշրջանը կրած համարելու նյութաիրավական հիմք և դատավարական ընթացակարգ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ, և համապատասխան լիազորություն դատարանը չունի:*

Հետևապես (...) Առաջին ատյանի դատարանի հետևությունն իրավաչափ է և հիմնավոր (...)» (տե՛ս նյութեր, թերթեր 76-79):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վ.Թորոսյանը ՀՀ ՊՆ 60913 գործասում հաշվառման է վերցվել 2015 թվականի ապրիլի 10-ին: Դատավճռով սահմանված հսկողությունը գործասում կատարվել է գործասի հրամանատարության կողմից՝ մինչև 2015 թվականի հունիսի 27-ը՝ Վ.Թորոսյանի գորացրումը:

Բողոք բերած անձը նշել է, որ Վ.Թորոսյանի ծառայության ավարտից հետո գործասի հրամանատարությունը, դրսևորելով անգործություն, դատապարտյալի անձնական գործը ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժին չի ուղարկել, և դատապարտյալի վարքի նկատմամբ վերահսկողություն գորացրվելուց հետո չի իրականացվել, որի հետևանքով Վ.Թորոսյանը գրկվել է դատվածության մարման մասին տեղեկանք ստանալու հնարավորությունից, ինչն էլ իր հերթին հանգեցրել է ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով երաշխավորված՝ Վ.Թորոսյանի աշխատանքի ընտրության ազատության և աշխատանքային իրավունքների խախտման: Մասնավորապես՝ ըստ բողոքաբերի՝ Վ.Թորոսյանը, 2016 թվականի մայիս ամսին ցանկանալով ծառայության անցնել ՀՀ զինված ուժերում, դիմում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարություն, սակայն աշխատանքի ընդունման մասին դիմումը մերժվել է, քանի որ Վ.Թորոսյանն ունի դատվածություն:

Բողոքաբերը փաստել է նաև, որ ինչպես Առաջին ատյանի դատարանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանի որոշումներն անհիմն են և ենթակա են բեկանման, քանի որ անկախ այն փաստից՝ շարունակվել է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը, թե ոչ, Վ.Թորոսյանի դատվածությունը պետք է համարվի մարված՝ փորձաշրջանի ժամկետը լրանալու փաստով:

12. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 24-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգու-
մը.**

13. Վճարելի դատարանը գտնում է, որ դատական որոշումն ի կատար ածելու փուլում դատապարտյալի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք Վ.Թորոսյանի պաշտպան Կ.Պողոսյանի դիմումը անհիմն լինելու պատճառաբանությամբ մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը:

15. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: (...) Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով սմրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:*

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»:*

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.*

ա) ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավա-

կան պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կատարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը դրանք տրամադրելու դեպքում»:

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի վերաբերյալ հիմնահարցերին, ձևավորել է, ի թիվս այլնի, հետևյալ իրավական դիրքորոշումները՝

- իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որն իրավական պետությունում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ,

- անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս, ինչը ենթադրում է մի դեպքում՝ օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից՝ իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից. նշված պահանջն առաջին հերթին վերաբերում է դատական իշխանությանը, որն օժտված է իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով, անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը՝ վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ, ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ,

- դատական բողոքարկումը՝ որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները,

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյուն-

քում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բուլլոյր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի պահպանման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՄԳՈ-719 և 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՄԳՈ-936 որոշումների 6-րդ կետերը, 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՄԳՈ-1257 որոշման 7-րդ կետը):

16. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

(...)

3. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝ մեկից հինգ տարի ժամկետով (...):»:

Մինչև 2016 թվականի հունիսի 18-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝ *«Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի նկատմամբ իրականացվում է վերահսկողություն՝ սույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»:*

Նույն օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը, իսկ զինծառայողի նկատմամբ՝ նրա զորամասի հրամանատարությունը փորձաշրջանի ընթացքում իրականացնում է անձի անհատական հաշվառում, համապատասխան ծառայությունների կամ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ վերահսկողություն է իրականացնում այդ անձի կողմից հասարակական կարգը պահպանելու և դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելու նկատմամբ (...):»:

Նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Փորձաշրջանը հաշվարկվում է դատապարտյալին ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումում, իսկ զինծառայողին նրա զորամասի հրամանատարության կողմից հաշվառման վերցնելու պահից:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվում է փորձաշրջանի ավարտից հետո, և նա հանվում է հաշվառումից»:

«Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում զինծառայողների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1221-Ն որոշման հավելվածի համաձայն՝ «(...) 7. Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին դատարանի դատավճիռը կամ որոշումը և դրա օրինական ուժի մեջ մտնելը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային ստորաբաժանումների կողմից գորակոչիկի վերաբերյալ զինկոմիսարիատ ուղարկված՝ վերահսկողություն իրականացնելու համար սահմանված փաստաթղթերն ստանալուց հետո 3-օրյա ժամկետում հրամանատարը զինծառայողի վերաբերյալ կազմում է անձնական գործ (...):

(...)

8. Հրամանատարը զինծառայողի անուևով լրացնում է հաշվառման քարտ (...):

9. Հրամանատարը պարտադիր զինվորական ծառայության գրակոչված զինծառայողին հաշվառման վերցնելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների իրականացման բաժնի՝ զինծառայողի բնակության վայրի բաժանմունքին հայտնել դրա մասին, իսկ զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում՝ զինծառայությունից նրա արձակվելու և փորձաշրջանի ընթացքում նրա վարքագծի մասին: (...)

(...)

16. Չինծառայողը հաշվառումից հանվում է հետևյալ հիմքերով՝

(...)

5) ծառայության վայրը փոխվելու կամ զինվորական ծառայությունից արձակվելիս:

(...)

Չինվորական ծառայությունից արձակվելիս պատժի ժամկետը չլրանալու դեպքում զինծառայողների անձնական գործերը և հաշվառման քարտերն ուղարկվում են նրանց բնակության վայրերի այլընտրանքային պատիժների իրականացման բաժանմունքներ: Չինծառայողի բնակության վայրի բաժանմունքի ծառայողն անձնական գործն ու հաշվառման քարտն ստանալու մասին 7-օրյա ժամկետում տեղեկացնում է հրամանատարին (...):»:

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կար-

զը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշման հավելվածի համաձայն՝ «51. Պարտադիր զինվորական ծառայության կամ այլընտրանքային ծառայության գորակոչվելիս ծառայության ժամկետի ընթացքում դատապարտյալի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համապատասխան գորամասի հրամանատարությունը:

(...)

Չորամասի հրամանատարությունը դատապարտյալին հաշվառման վերցնելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է բաժանմունքին հայտնել այդ մասին, իսկ զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում՝ զինծառայությունից նրա արձակվելու և փորձաշրջանի ընթացքում նրա վարքագծի մասին:

Եթե ծառայության ժամկետի ավարտից հետո դատարանի նշանակած փորձաշրջանի ժամկետը չի ավարտվել, ապա բաժանմունքը դատապարտյալի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ընդհանուր հիմունքներով:

(...)

58. (...) Պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալների նկատմամբ վերահսկողության իրականացման ավարտից հետո բաժանմունքի ծառայողը դատապարտյալին տալիս է պատժից ազատվելու մասին տեղեկանք (...) և այդ մասին հայտնում ռատիկանություն (...):»:

16.1. Մեջբերված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ընթացքում զինծառայողի վարքի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համապատասխան գորամասի հրամանատարությունը, որը **պարտավոր է** զինվորական ծառայությունից զինծառայողի արձակվելու դեպքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների իրականացման բաժնի զինծառայողի բնակության վայրի բաժանմունքին (ներկայումս՝ պրոբացիայի ծառայության տարածքային մարմին) հայտնել զինծառայությունից նրա արձակվելու և փորձաշրջանի ընթացքում նրա վարքագծի մասին: Ավելին՝ զինվորական ծառայությունից արձակվելիս պատժի ժամկետը չլրանալու դեպքում նույն մարմինն գորամասի հրամանատարությունը **պետք է ուղարկի** զինծառայողի անձնական գործը և հաշվառման քարտը: Ընդ որում, այդ դեպքում, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների իրականացման բաժնի համապատասխան բաժանմունքը դատապարտյալի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ընդհանուր հիմունքներով, **իսկ վերահսկողության իրականացման ավարտից հետո դատապարտյալին տալիս է պատժից ազատվելու մասին տեղեկանք՝ այդ մասին հայտնելով ՀՀ ռատիկանությանը:**

17. ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը:

(...)

4. Դատվածությունը մարվում է՝

1) պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում՝ փորձաշրջանն անցնելուց հետո.

(...)

8. Դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: Մույն նորմն արգելք չէ օրենքով սահմանափակումներ նախատեսելու՝ դատավորի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի, ոստիկանության ծառայողի, քրեակատարողական ծառայողի, ազգային անվտանգության մարմիններում ծառայողի պաշտոններ զբաղեցնելու համար»:

Վճռաբեկ դատարանը *Ա.Շաքարյանի* գործով որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «դատվածությունն անձի յուրահատուկ իրավական դրությունն է, որն առաջանում է մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից և տևում է մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը: (...) [Զ]րեական օրենքը նախատեսում է դատվածությունը հանելու և մարելու կարգ, որի դեպքում վերացվում են դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները» (տե՛ս *Արտաշ Շաքարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0163/01/13 որոշման 14-րդ կետը):

17.1.Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Շաքարյանի* գործով որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատվածությունն անձի այնպիսի իրավական դրությունն է, որը ծագում է կատարված հանցագործության համար նրա դատապարտման փաստով և պայմանավորում է այդ անձի համար որոշակի բացասական իրավական հետևանքների առաջացումը: Դատվածությունը պետության և դատապարտված անձի միջև ծագող յուրահատուկ քրեաիրավական հարաբերություն է, որի էությունը տվյալ անձի համար որոշակի սահմանափակումներ կամ պարտականություններ սահմանելն է, որպիսիք բխում են անձի դատվածության փաստից՝ օրենքով սահմանված ժամանակահատվածի ընթացքում նրա վարքագծի նկատմամբ սոցիալական հսկողության և ուղղման պոզիտիվ արդյունքների ամրագրման նկատառումներով: Նման իրավահարաբերության բովանդակությունը կազմող քրեաիրավական բնույթի բացասական հետևանքները ծագում են անձի կողմից նոր հանցանք կատարելու դեպքում. դատվածությունը հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս: Այն կարող է նաև արգելք հանդիսանալ անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու համար:

Գատվածության ընդհանուր իրավական հետևանքները վերաբերում են, ի թիվս այլնի, նաև աշխատանքային իրավունքին: Իրավական մի շարք ակտերով դատվածության առկայության հանգամանքն արգելք է անձի կողմից որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու համար: Մինչդեռ դատվածությունը հանելը կամ մարելը, ինքնաբերաբար վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: Ընդ որում, դատվածության մարումը, ի տարբերություն դատվածության հանման, մեխանիկական գործընթաց է և ենթադրում է պատիժը կրելուց հետո օրենքով սահմանված ժամկետները լրանալուց, իսկ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում՝ փորձաշրջանն անցնելուց հետո դատվածության իրավական հետևանքների վերացում և չեզոքացում:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով ամբաստանյալ Վ.Թորոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ նշանակվել է կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Դատական ակտով Վ.Թորոսյանի վարքի նկատմամբ վերահսկողությունը դրվել է զորամասի հրամանատարության, իսկ զորացրվելուց հետո՝ ՀՀ արդարադատության մախարարության ՔԿՎ ալլընտրանքային պատիժների կատարման բաժնի բնակության վայրի ստորաբաժանման վրա՝ փորձաշրջանի սկիզբը հաշվելով զորամասի հրամանատարության կողմից հաշվառման վերցնելու պահից (տե՛ս սույն որոշման 1-ին և 6-րդ կետերը):

2015 թվականի ապրիլի 10-ից Վ.Թորոսյանը ՀՀ ՊՆ 60913 զորամասի հրամանատարության կողմից վերցվել է հաշվառման, իսկ 2015 թվականի հունիսի 27-ին՝ արձակվել է պահեստագոր (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի պետի՝ 2016 թվականի մայիսի 31-ի գրության համաձայն՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում Վ.Թորոսյանի պատժի կրման և պատժից ազատման վերաբերյալ տեղեկություն առկա չէ, իսկ ըստ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության ալլընտրանքային պատիժների կատարման բաժնի պետի՝ 2016 թվականի հունիսի 28-ի գրության՝ Վ.Թորոսյանը ՀՀ ԱՆ ՔԿՎ ալլընտրանքային պատիժների կատարման բաժնի որևէ բաժանմունքում չի հաշվառվել (տե՛ս սույն որոշման 8-8.1.-րդ կետերը):

Կ.Պողոսյանը դիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով Վ.Թորոսյանի վարքի նկատմամբ վերահսկողության բաց թողնված ժամկետը համարել հարգելի և դատարանի դատավճռով նշանակ-

ված փորձաշրջանը համարել կրած (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Առաջին ատյանի դատարանը, իսկ վերջինիս կողմից կայացված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս նաև Վերաքննիչ դատարանը Կ.Պողոսյանի դիմումը մերժել են՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Որպես հիմնավորում նշվել է, որ դատապարտյալի վարքի նկատմամբ վերահսկողության բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և այդ կերպ դատավճռով նշանակված փորձաշրջանը կրած համարելու նյութաիրավական հիմք և դատավարական ընթացակարգ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ, և համապատասխան լիազորություն դատարանը չունի (տե՛ս սույն որոշման 9.1.-րդ և 10-րդ կետերը):

19. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-16.1-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի նյութերից երևում է, որ զինձառայող Վ.Թորոսյանին 2015 թվականի ապրիլի 10-ին հաշվառման վերցրած ՀՀ ՊՆ 60913 գորամասի հրամանատարությունը, չպահպանելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1221-Ն որոշմամբ սահմանված պահանջները, Վ.Թորոսյանին զինվորական ծառայությունից արձակելիս, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով սահմանված փորձաշրջանի ժամկետը լրացած չլինելու պայմաններում, նրա անձնական գործը և հաշվառման քարտը վերջինիս բնակության վայրի այլընտրանքային պատիժների իրականացման բաժանմունք չի ուղարկել: Արդյունքում Վ.Թորոսյանի վարքագծի նկատմամբ հետագա վերահսկողություն չի իրականացվել, այլ կերպ՝ վերջինս ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի կողմից հաշվառման չի վերցվել, հետևաբար նաև դատավճռով սահմանված փորձաշրջանի ժամկետը փաստացի ավարտվելուց հետո նրան չի տրվել ՀՀ կառավարության նշյալ որոշմամբ նախատեսված պատժից ազատվելու մասին տեղեկանք: Վերոնշյալի հետևանքով Վ.Թորոսյանը շարունակվել է համարվել դատվածություն ունեցող (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), ինչը վերջինիս համար առաջացրել է իրավական բնույթի բացասական հետևանքներ (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

19.1. Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 429-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ *դատական որոշումն ի կատար ածելու փուլում ապահովվում է դատապարտյալի իրավունքների դատական պաշտպանությունը՝ կապված դատական որոշումներն ի կատար ածելու հանձնման և կատարման հետ*, ինչպես նաև նկատի ունենալով սույն որոշման 15-րդ, 17-17.1-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված փորձաշրջանի ընթացքում Վ.Թորոսյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը չի շա-

րունակվել վերջինիս կամքից անկախ հանգամանքներով, ուստի սահմանված փորձաշրջանի ժամկետը փաստացի ավարտված լինելը սույն գործով հիմք է փորձաշրջանն իրավունքի ուժով (ex jure) անցած համարելու համար: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն դիրքորոշման հիմքում ընկած է ինչպես անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության՝ պետության պոզիտիվ պարտավորության իրացվելիության, այնպես էլ հիշյալ հիմնարար իրավունքը վերացական ու պատրանքային հիմնադրույթի չվերածելու անհրաժեշտությունը:

20. Հիմք ընդունելով վերոնշյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Թորոսյանի պաշտպան Կ.Պողոսյանի դիմումը անհիմն լինելու պատճառաբանությամբ մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերն իրավաչափ չեն:

21. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 429-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ քրեադատավարական օրենքի էական խախտում է: Միևնույն ժամանակ ելնելով արդարադատության արդյունավետության շահերից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը պետք է բեկանել և դատապարտյալ Վահան Արայի Թորոսյանի նկատմամբ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով սահմանված 1 (մեկ) տարի ժամկետով փորձաշրջանը համարել անցած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Վահան Արայի Թորոսյանի վերաբերյալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 24-ի որոշումները բեկանել և պաշտպան Կ.Պողոսյանի դիմումը բավարարել՝ դատապարտյալ Վահան Արայի Թորոսյանի նկատմամբ Սյունիքի մարզի

ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով սահմանված 1 (մեկ) տարի ժամկետով փորձաշրջանը համարել անցած:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

50.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԳ-3/0014/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԳԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ՝
դատախազ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ա.ԵԴԻԳԱՐՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արտակ Ավետիքի Գասպարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Հ.Մարտիրոսյանը 2015 թվականի ապրիլի 8-ին որոշում է կայացրել Արթուր Գալստյանին վրաերթի ենթարկելու և դրա հետևանքով վերջինիս մահ պատճառելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործ հարուցելու մասին:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ Արտակ Ավետիքի Գասպարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ

ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Գասպարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2. 2015 թվականի նոյեմբերի 2-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Արագացված կարգով դատական քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի նոյեմբերի 25-ի դատավճռով Ա.Գասպարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 2 /երկու/ տարի ժամկետով: Գատարանը որոշել է Ա.Գասպարյանի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 2 /երկու/ տարի ժամկետով: Ա.Գասպարյանի նկատմամբ ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրություն խափանման միջոցը թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Վերոհիշյալ դատական ակտի դեմ մեղադրող Ա.Եղիգարյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Ա.Գասպարյանը ներկայացրել է վճարելի բողոքի պատասխան՝ խնդրելով դատախազի բողոքը մերժել, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնել անփոփոխ:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ Ա.Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ «(...) նա 2015թ. ապրիլի 7-ին, ժամը 22:30-ի սահմաններում իր վարած «Մերսեդես Բենց Ջ 500» մակնիշի 99 MV 999 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով Գյումրի քաղաքի Երևանյան խճուղով դեպի Գ.Նժդեհ հրապարակ ընթանալիս, նշված խճուղու 107 շենքի դիմացի ճանապարհահատվածում խախտելով ճեՎ-ի 65-րդ և 67-րդ կետերի ու «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվա-

ծի 3-րդ կետի պահանջները, այն է՝ պարտավոր լինելով պահպանել ՀՀ կառավարության հաստատած ճանապարհային երթևեկության կանոնները և իր գործողություններով չստեղծել վթարային իրադրություն, ուշադիր չլինելով ճանապարհատրանսպորտային իրադրությանը, ավտոմեքենան վարել է տվյալ պայմանների համար սահմանված թույլատրելի 60 կմ/ժ առավելագույն արագությունը գերազանցող 109,3 կմ/ժ ավելի արագությամբ և հետիոտն Արթուր Սերյոժայի Գալստյանի կողմից իր ընթացքի ուղղությամբ ճանապարհը աջից ձախ հանգիստ քայլերով հատելու պայմաններում ունենալով նրան շուրջ 106,9 մետր հեռավորությունից հայտնաբերելու և թույլատրելի արագությամբ ավտոմեքենայի վարելու դեպքում ընդամենը 45 մետր տարածությունից մեքենան կանգնեցնելու տեխնիկական հնարավորություն, արգելակման է դիմել ուշացումով, որպիսի գործողություններով պայմանավորել վրատերթի առաջացումը և ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից վրատերթի է ենթարկել հետիոտն Արթուր Գալստյանին և անզուշուրջությամբ առաջացրել նրա մահը» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 181):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. «(...) Սույն գործի տվյալներով հիմնավորված է, որ Արտակ Գասպարյանը գիտակցելով, որ միայն արգելակման միջոցով հնարավոր չէ խուսափել դեպքից, փորձել է նաև ավտոմեքենան մանևրելով շրջանցել հետիոտնին, հանցագործության կատարումից անմիջապես հետո չի թողել դեպքի վայրը և չի դիմել փախուստի, այլ փորձել է անհրաժեշտ օգնություն ցուցաբերել տուժողին, ինչպես նաև քրեական գործի քննության ընթացքում դեպքի վերաբերյալ տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, ինքնակամ հատուցել է հանցագործության արդյունքում տուժողի հոսպիտալիզացիայի ծախսերը, իր դրսևորած վարքագծով հաշտվել է տուժողի իրավահաջորդների հետ /տուժողի իրավահաջորդ Մարտուն Գալստյանի 16.11.2015 թվականի հայտարարության համաձայն՝ ինքը Արտակ Գասպարյանից որպես վնասի հատուցում ստացել է 2.000 ԱՄՆ դոլար և վերջինիս նկատմամբ որևէ բողոք կամ նյութական պահանջ չունի, իսկ տուժողի իրավահաջորդ Հ. Գալստյանը դատական նիստում հայտարարել է, որ բողոք չունի/: Բացի վերը նշվածից Ա. Գասպարյանը բնակության և աշխատանքի վայրերից բնութագրվում է դրական, սույն արարքը կատարելուց առաջ կատարված որևէ արարքի համար դատապարտված չի եղել, նրա խնամքին են գտնվում մեկ անչափահաս երեխան, հղի կինը և տարիքային կենսաթոշակառու, երկրորդ կարգի հաշմանդամ հայրը, զղջացել է կատարածի համար, իսկ պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ սույն գործով բացակայում են:

Հետևաբար, նշված հանգամանքների գնահատմամբ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արտակ Ավետիքի Գասպարյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան սահմանելով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝

սոցիալական արդարության վերականգմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 32-36):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «(...) [Վ]երաքննիչ դատարանում, դատական նիստում, պաշտպանության կողմի ներկայացված ծննդյան վկայականի պատճենի համաձայն՝ արդեն իսկ վիճարկվող դատական ակտի կայացումից հետո, ծնվել է ամբաստանյալի երկրորդ երեխան (...):

Որպիսի պայմաններում, վերաքննիչ դատարանը հաշվի է առնում նաև որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք ամբաստանյալ Արտակ Գասպարյանի խնամքին արդեն իսկ երկու անչափահաս երեխաների (...) գտնվելը:

(...)

(...) վերաքննիչ դատարանը գտնում [է], որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, քննարկվող պարագայում, ամբաստանյալ Արտակ Ավետիքի Գասպարյանի նկատմամբ նշանակված պատժատեսակի և չափի, ինչպես նաև այն պայմանականորեն չկիրառելու հնարավորության հարցում հանգել է ճիշտ եզրակացության, հետևաբար՝ վիճարկվող դատական ակտը բեկանելու և փոփոխելու հիմքեր չկան:

(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 106-118):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 1-ի որոշումն օրինական և հիմնավորված չեն, Ա.Գասպարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատժի կրումից պայմանականորեն ազատելը չի կարող նպաստել պատժի նպատակների իրականացմանը:

8.1. Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը, հիմնվելով Վճարելի դատարանի՝ թիվ ԵԱԲԳ/0078/01/19, թիվ ԵՇԳ/0029/01/08, ՏԳ/0018/01/13, ՎԲ-84/07, ՎԲ-192/07, ԳԳ-1/0003/01/10, ԵԷԳ/0201/01/11 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների վրա, նշել է, որ ստորադաս դատարանները քննարկման առարկա չեն դարձրել Ա.Գասպարյանի արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը: Բողոքաբերի համոզմամբ՝ թույլ տրված խախտման բնույթը, ծանրության աստիճանը, դրա նկատմամբ հանցավորի հոգեբանական վերաբերմունքը, հանցագործության արդյունքում վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքները ինքնուրույն գնահատման

առարկա դարձնելու իրավական պահանջը դատարանները չեն կատարել:

8.2. Բողոքաբերը եզրահանգել է, որ ամբաստանյալ Ա.Գասպարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումն անհամատեղելի է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների պահանջների հետ, քանի որ հակասում է արդարության և պատասխանատվության անհատականացման, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին, չի նպաստում սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը, հանցագործությունների կանխմանը, չի համապատասխանում հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանին և հանցավորի անձը բնութագրող տվյալներին:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է պատժի մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 1-ի որոշումը, Արտակ Գասպարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը ճանաչել անթույլատրելի և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Ա.Գասպարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատասպարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Սույն քրեաիրավական նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված մատչառեպայիմ որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրա-

նելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տես՝ Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մաղաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Մահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշումները)՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (տես՝ թիվ ԵԿԳ/0039/01/15, ԱԲԳ/0031/01/15, ԵԱԳԳ/0038/01/15, ԵԿԳ/0130/01/15, ՍԳ/0094/01/15, ՍԳ/3/0201/01/15 գործերով որոշումները):

12. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածը սահմանում է. *«1. Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անգզուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս (...)*

2. Նույն արարքը, որն անգզուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

(...)»:

Հաշվի առնելով մեջբերված հանցակազմի բնույթն ու առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում իրավական դիրքորոշումներ է ձևավորել նշված հանցանքը կատարած անձանց նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս հաշվի առնվող հանգամանքների վերաբերյալ:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի վերաբերյալ գործերով վերոնշյալ հարցերը լուծելիս դատարանները, ի թիվս այլնի, պետք է հատկապես հաշվի առնեն՝

ա. հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները (*մանրամասն տես՝ Արամ Սահակյանի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ Գ-Գ-1/0003/01/10 որոշման 20-րդ կետը*),

բ. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը (*մանրամասն տես՝ թիվ Գ-Գ-1/0003/01/10 որոշման 20-րդ կետը*),

գ. կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը (*մանրամասն տես՝ Էդմոն Ասատրյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷ-Գ-0201/01/11 որոշման 15-18-րդ կետերը*),

դ. հանցագործության կատարումից անմիջապես հետո, ինչպես նաև հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում հանցավորի դրսևորած վարքագիծը (*մանրամասն տես՝ թիվ Գ-Գ-1/0003/01/10 որոշման 22-րդ կետը*),

ե. հանցագործությամբ պատճառված վնասը (*մանրամասն տես՝ Արամյախ Հովհաննեսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ Գ-Գ-0014/01/14 որոշման 15-րդ կետը*):

13. Վերահաստատելով իր կողմից նախկինում արտահայտված և վերը մատնանշված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի վերաբերյալ գործերով հանցանք կատարած անձանց նկատմամբ պատժի տեսակի ու չափի, ինչպես նաև նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները սույն որոշման նախորդ կետում նշված հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ վերլուծության հիման վրա կառուցելն ունի առանձնապես կարևոր նշանակություն: Ուստի այդ հանգամանքները հաշվի չառնելը, դրանք անտեսելը կարող է հանգեցնել ոչ իրավաչափ դատական ակտի կայացմանը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Գ.ասպարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2015 թվականի ապրիլի 7-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, իր վարած «Մերսեդես Բենց Ջ 500» մակնիշի 99 MV 999 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով ընթանալիս թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշման 1-ին կետով հաստատված ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների (այսուհետ նաև՝ ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններ) 65-րդ և 67-րդ կետերի պահանջների խախտում, ինչի արդյունքում վրաերթի է ենթարկել հետիոտն Ա.Գ.ալատյանին՝ անզոչությամբ նրան պատճառելով մահ: Ընդ որում, Ա.Գ.ասպարյանին առաջադրված մեղադրանքից երևում է, որ վերջինս ավտոմեքենան վարել է համապատասխան պայմանների համար սահմանված **թույլատրելի 60 կմ/ժ** առավելագույն

արագությունը գերազանցող **109,3 կմ/ժ** ավելի արագությամբ և, հետիոտն Ա.Գալստյանին համապատասխան պայմաններում **շուրջ 106,9** մետր հեռավորությունից հայտնաբերելու և թույլատրելի արագությամբ ավտոմոբիլը վարելու դեպքում ընդամենը 45 մետր տարածությունից մեքենան կանգնեցնելու տեխնիկական հնարավորություն ունենալով, արգելակման է դիմել ուշացումով, որպիսի գործողություններով էլ պայմանավորել է վրաերթի առաջացումը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով, ի թիվս այլնի, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, հիմնվելով պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայության, ծանրացնող հանգամանքների բացակայության վրա, եզրահանգել է, որ ամբաստանյալ Ա.Գասպարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան սահմանելով՝ հնարավոր է հասնել պատժի նպատակներին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, իր հերթին փաստելով, որ ամբաստանյալ Ա.Գասպարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորության հարցում Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ եզրակացության, արդյունքում վերջինիս կողմից կայացված դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ա.Գասպարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել նրան մեղսագրվող հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը:

Մասնավորապես, ստորադաս դատարանները՝

ա) վերլուծության չեն ենթարկել և որևէ գնահատական չեն տվել ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին (Ա.Գասպարյանը թույլ է տվել ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 65-րդ (սահմանված արագության գերազանցման արգելք) և 67-րդ կետերի պահանջների խախտում),

բ) պատշաճ գնահատման չեն ենթարկել կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը (մասնավորապես՝ ամբաստանյալը ավտոմեքենան վարել է սահմանված թույլատրելի արագությունը մոտ երկու անգամ գերազանցող արագությամբ և հետիոտն Ա.Գալստյանին համապատասխան պայմաններում **շուրջ 106,9** մետր հեռավորությունից հայտնաբերելու հնարավորություն է ունեցել (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը),

գ) պատշաճ չեն գնահատել ճանապարհային երթևեկության կանոնների խախտման արդյունքում վրա հասած վնասի բնույթն ու չափը:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Գասպարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ - հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նաև նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, ինչը հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արտակ Ավետիքի Գասպարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Արտակ Գասպարյանի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

51.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԳ/0123/06/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԳԵՎՈՍՅԱՆԻ

Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 14-ի որոշման դեմ մեղադրյալ Սեյրան Հմայակի Մարտիրոսյանի պաշտպան Ա.Հայրապետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի հունիսի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 18106416 քրեական գործը:

2016 թվականի հունիսի 25-ին Սեյրան Հմայակի Մարտիրոսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 27-ի որոշմամբ Ս.Մարտիրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

2. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի հունիսի 27-ի որոշմամբ Ս.Մարտիրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով: Միաժամանակ մեղադրյալ Ս.Մարտիրոսյանի նկատմամբ որպես կալանավորման ալյընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը դիտվել է աննպատակահարմար:

3. Մեղադրյալ Ս.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Հայրապետյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 27-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Ս.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Հայրապետյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ս.Մարտիրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա, Շիրակի մարզի Առափի գյուղի բնակիչներ՝ Արթուր Գևորգի Խաչատրյանի, Կարեն Համլետի Մարտիրոսյանի, անչափահաս՝ 20.07.1998թ. ծնված Հովհաննես Սեդրակի Մխիթարյանի, Գյումրի քաղաքի բնակչուհի Վարդուշ Սաշայի Շահբազյանի և չպարզված 6 անձանց հետ, մեկ միասնական դիտավորությամբ, իրենց գործողություններով միմյանց լրացնելով իշխանության ներկայացուցիչների նկատմամբ գործադրել են առողջության համար վտանգավոր բռնություն՝ կապված նրանց կողմից ծառայողական պարտականությունները կատարելու հետ»* (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 5-6):

6. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի հունիսի 27-ի որոշմամբ փաստել է. *«(...) Սեյրան Հմայակի Մարտիրոսյանի (...) նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորում 2 /երկու/ ամիս ժամանակով: (...) Գրավի կիրառումը դիտել աննպատակահարմար:»* (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 56):

7. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի պատճառաբանական հատվածում պաշտպան Ա.Հայրապետյանը նշել է. *«(...) [Առաջին ատյանի] թույլ տրված խախտումները իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա առաջին ատյանի կայացրած դատական ակտը **բե-***

կանելու հիմք է (...)», իսկ պահանջի մասում՝ խնդրել. **«Վերացնել խափանման միջոց կալանավորում կիրառելու միջնորդությունը բավարարելու մասին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 27.06.2016թ. որոշումը և Ս.Մարտիրոսյանին անհապաղ ազատ արձակել կալանքից: Եթե այնուամենայնիվ դատարանը գտնի, որ առաջին ատյանի դատարանի որոշումը՝ խափանման միջոց կալանավորում կիրառելու միջնորդությունը բավարարելու մասով, ենթակա չէ քեկանման, գրավն անթույլատրելի ճանաչելու մասով քեկանել, որպես այլընտրանքային խափանման միջոց գրավը ճանաչել թույլատրելի (...)**» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 68):

8. Վերաքննիչ դատարանն արձանագրել է. **«(...) Ինչպես երևում է ներկայացված վերաքննիչ բողոքի տեքստից, դրա հեղինակը նշել է. «[Վերացնել խափանման միջոց կալանավորում կիրառելու միջնորդությունը բավարարելու մասին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.06.2016թ. որոշումը և Ս.Մարտիրոսյանին անհապաղ ազատ արձակել կալանքից/.../»:**

[ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի, 394-րդ հոդվածի 2-րդ մասի] բովանդակությունից ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանը առաջին ատյանի դատական ակտը վերացնելու լիազորությամբ օժտված չէ:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ հաշվի առնելով, որ վերաքննիչ բողոքով ներկայացվել է այնպիսի պահանջ, որը լուծելու լիազորությամբ դատարանն օժտված չէ, ուստի գտնում է, որ նման պայմաններում բողոքում բերված հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև պահանջը՝ ստորադաս դատարանի դատական ակտը վերացնելու վերաբերյալ, **քննության առարկա չեն կարող դառնալ (...)**» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 32-33):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 41-րդ, 55-րդ, 283-րդ, 285-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածների պահանջների խախտում:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը ձևական նկատառումներով հրաժարվել է քննության առնել Ս.Մարտիրոսյանի նկատմամբ կիրառված կալանավորման հիմնավորվածության և օրինականության հարցը: Մասնավորապես՝ ըստ բողոքի հեղինակի՝ նշյալ հարցը քննարկման առարկա չի դարձվել միայն վերաքննիչ բողոքի պահանջում նշված ձևակերպման պատճառով:

Բողոքի հեղինակի կարծիքով՝ այս կերպ Վերաքննիչ դատարանը հրաժարվել է արդարադատություն իրականացնելուց, քանի որ վերաքննիչ բողոքի բովանդակությունից դատարանի համար ակնհայտ է եղել, որ ներկայացվել է պահանջ՝ Ս.Մարտիրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը վերացնելու, իսկ դատական ակտի բեկանման պահանջը բազմիցս շեշտվել է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակում:

Բողոքաբերը նշել է նաև, որ «վերացում» եզրույթը միանշանակ նույնական է իրավակիրառ պրակտիկայում գործածվող «բեկանում» տերմինին, քանի որ բեկանման դեպքում ևս այդ դատական ակտը դադարում է գոյություն ունենալ որպես իրավաբանական ուժ ունեցող փաստաթուղթ:

10. Բողոքի հեղինակը փաստել է նաև, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանն ամեն դեպքում պետք է մերժեր կալանավորման միջնորդությունը, քանի որ դատարանում միջնորդությունը պաշտպանել է ոչ իրավասու քննիչը:

Այսպես՝ ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանին գործով մեղադրյալ Ս.Մարտիրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել քննչական խմբի ղեկավար Խ.Նազարյանը, հետևաբար ներկայացված միջնորդությունը դատարանը պետք է քննության առնել վերջինիս մասնակցությամբ, մինչդեռ միջնորդության քննարկմանը մասնակցել է քննչական խմբի անդամ Շ.Իկիլիկյանը, որը թեև նշված քրեական գործով նախաքննություն իրականացնելու համար կազմված քննչական խմբի անդամ է, սակայն Առաջին ատյանի դատարանին չի ներկայացրել քննչական խմբի ղեկավար Խ.Նազարյանի կողմից ներկայացված միջնորդության քննարկմանը մասնակցելու համար վերջինիս կողմից լիազորված լինելու հանգամանքը հավաստող որևէ ապացույց: Հետևաբար բողոքի հեղինակի կարծիքով՝ քննիչ Շ.Իկիլիկյանի՝ քննչական խմբի անդամ հանդիսանալու հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ, 285-րդ հոդվածներում առկա իրավակարգավորումների պայմաններում բավարար չէր կարող համարվել նրան՝ որպես միջնորդություն ներկայացրած անձ կամ միջնորդություն ներկայացրած պաշտոնատար անձի ներկայացուցիչ համարելու, հետևաբար նաև՝ որպես միջնորդության քննարկման պատշաճ մասնակից դիտարկելու համար:

11. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների որոշումները, և մեղադրյալ Ս.Մարտիրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը վերացնել՝ նրան անհապաղ ազատ արձակելով կալանքից:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցն հետևյալն է. օրինական և հիմնավորված է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի պահանջում առկա թերի ձևակերպման հետևանքով մեղադրյալ Ս.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Հայրապետյանի վերաքննիչ բողոքում բերված հիմքերը և հիմնավորումները քննարկման առարկա չդարձնելը:

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իր առջև բարձրացված իրավական հարցի էությանն անդրադարձել է նույնական փաստական հանգամանքներով մեկ այլ՝ *Լ.Հարությունյանի* գործով որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [*«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածների 1-ին մասերի*] վերլուծությունից բխում է, որ դատարանի մատչելիության իրավունքի ապահովումն արդար դատաքննության հիմնարար իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից մեկն է: Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն սահմանված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Եվրոպական դատարանն այդ իրավունքը ճանաչել է որպես 6-րդ հոդվածի անբաժանելի տարր՝ գտնելով, որ եթե անձը գրկված է դատարանի մատչելիության իրավունքից, իմաստագուրկ է նաև արդար դատաքննության իրավունքը:

(...)

(...)[*Դ*]ատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները (...):

(...)[*Բ*]րեական վարույթի համար Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներից դատարանի մատչելիության իրավունքը հավասարապես կիրառելի է անձի՝ իրեն ազատությունից գրկելու իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու իրավունքի նկատմամբ: Վերջինս պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում

է, որ անձը ողջամիտ սահմանափակումների պայմաններում պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի ազատության և դատարանի մատչելիության իրավունքները (տե՛ս *Լևոն Հարությունյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԳ/0337/06/15 որոշման 11-13-րդ կետերը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ մեղադրյալ Ս.Մարտիրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել 2 ամիս ժամկետով կալանավորումը (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի պահանջի մասում մեղադրյալ Ս.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Հայրապետյանը, ի թիվս այլնի, խնդրել է *վերացնել* խափանման միջոց կալանավորում կիրառելու միջնորդությունը բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը և Ս.Մարտիրոսյանին անհապաղ ազատ արձակել կալանքից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ վերաքննիչ բողոքում ներկայացվել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը *վերացնելու* պահանջ, որը լուծելու լիազորությամբ վերջինս օժտված չէ: Արդյունքում ստորադաս դատարանը քննարկման առարկա չի դարձրել պաշտպան Ա.Հայրապետյանի՝ մեղադրյալ Ս.Մարտիրոսյանի նկատմամբ կիրառված կալանքի օրինականությանը, հիմնավորվածությանը վերաբերող վերաքննիչ բողոքում բերված հիմքերն ու հիմնավորումները (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-րդ կետում մեջբերված և *Լ.Հարությունյանի* վերաբերյալ նախադեպային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից պաշտպան Ա.Հայրապետյանի վերաքննիչ բողոքի՝ Ս.Մարտիրոսյանի նկատմամբ կալանավորման կիրառման հիմքերը և հիմնավորումները քննության առարկա չդարձնելու պատճառաբանությունը՝ կապված այդ բողոքի պահանջի ձևակերպման հետ, չի կարող համարվել իրավաչափ, քանի որ վերջինիս դատական պաշտպանության իրավունքի իրացումը բողոքի պահանջում առկա թերի ձևակերպումների (բողոքաբերը խնդրել էր «*վերացնել*» Առաջին ատյանի դատարանի որոշումը) հիմնավորմամբ սահմանափակելը կրում է ձևական բնույթ: Վերջինի մասին է վկայում նաև այն, որ մեղադրյալ Ս.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Հայրապետյանն իր վերաքննիչ բողոքում փաստել է

նաև Առաջին ատյանի դատարանի դատական ակտը «բեկանելու» պահանջի մասին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերոգրյալ պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դրսևորած մոտեցումը հանգեցրել է Ս.Մարտիրոսյանի՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու այնպիսի սահմանափակման, որի արդյունքում նրա քննարկվող իրավունքը դարձել է վերացական և պատրանքային՝ խախտելով գործադրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև հավասարակշռության ողջամիտ հարաբերակցությունը: Արդյունքում թույլ են տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» էվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի, 6-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Սահմանադրության 27-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրինական և հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի պահանջում առկա թերի ձևակերպման հետևանքով մեղադրյալ Ս.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Հայրապետյանի վերաքննիչ բողոքում բերված հիմքերը և հիմնավորումները քննարկման առարկա չդարձնելը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

17. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 10-րդ կետում բարձրացրած փաստարկներին, ապա հաշվի առնելով այն, որ դրանց Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել, ինչպես նաև նկատի ունենալով սույն որոշմամբ արձանագրված խախտումների բնույթը՝ Վճռաբեկ դատարանը հնարավոր է համարում այդ փաստարկներին անդրադառնալ միայն նշյալ խախտումները վերացնելուց հետո:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է պատշաճ քննարկման առարկա դարձնի վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, այդ թվում՝ բողոքաբերի՝ սույն որոշման 10-րդ կետում բարձրացրած փաստարկները, և արդյունքում կայացնի համապատասխան որոշում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Սեյրան Հմայակի Մարտիրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 27-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

52.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴ4/0028/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԳԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Է.ԲԵԳԼԱՐՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արսեն Արմենի Բաղդասարովի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունվարի 20-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի ապրիլի 18-ին ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 8-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասի, 360-րդ հոդվածի 1-ին մասի և 182-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 91154912 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2012 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ Արսեն Բաղդասարովը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Նույն օրը Ա.Բաղդասարովի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2012 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ Ա.Բաղդասարովի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2012 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ թիվ 91154912 քրեական գործից մաս է անջատվել, և անջատված մասին շնորհվել է թիվ 91157912 համարը: 2012 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ թիվ 91157912 քրեական գործով վարույթը կասեցվել է:

1.1. 2015 թվականի հուլիսի 5-ին Ա.Բաղդասարովը ձերբակալվել է, և թիվ 91157912 քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է: Նույն օրը Ա.Բաղդասարովին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ Ա.Բաղդասարովի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված երկու ամիս ժամկետով կալանավորումը վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ Ա.Բաղդասարովի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2015 թվականի օգոստոսի 1-ին Ա.Բաղդասարովին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2015 թվականի օգոստոսի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան:

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2015 թվականի նոյեմբերի 16-ի դատավճռով Ա.Բաղդասարովին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտել ազատազրկման՝ 1 տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Բաղդասարովի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հունվարի 20-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 16-ի դատավճիռը բեկանելու մասին: Ա.Բաղդասարովը ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրադրության փոփոխման հիմքով, ազատվել է քրեական պատասխանատվությունից, իսկ քրեական գործի վարույթը կարճվել է:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունվարի 20-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ Ա.Հարությունյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 6-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի բնույթյան համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Արսեն Բաղդասարովին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, «(...) հանդիսանալով ՀՀ ՊՆ 70179 գորամասի 4-րդ գումարտակի 12-րդ վաշտի 1-ին դասակի 1-ին ջոկի գնդացրորդ, կոչումով շարքային, 2011 թ. դեկտեմբեր ամսվա կեսերին՝ ժամը 13:30-ի սահմաններում, ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները, այն է՝ ՀՀ ՁՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ և 16-րդ հոդվածների համաձայն՝ զինվորական ընկերասիրությունը բարձր պահելու, համաձայնակիցների նկատմամբ հարգանք տածելու, հանդուրժողականություն ցուցաբերելու փոխարեն, համաձայնակից, նույն գումարտակի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Վոլոդյա Գևորգի Կարագույանի հետ գումարտակի ճաշարանում ծեծել է գումարտակի ճաշարանի խոհարար, պարտադիր ժամկետային զինծառայող Նարեկ Գրիշայի Երզենյանին, ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել վերջինիս մարմնի տարբեր մասերին, որի ընթացքում սեռական բնույթի հայհոյանքներ է տվել նրա հասցեին այն բանի համար, որ Նարեկ Երզենյանը դրանից մի քանի օր առաջ ճաշարանի՝ կարտոֆիլի մաքրման սենյակում ծխախոտի մնացորդ թողնողի հասցեին տվել է սեռական բնույթի հայհոյանք (...)» (տե՛ս քրեական գործ, 2-րդ հատոր, թերթեր 140-142):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Արսեն Բաղդասարովին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված (...) արարքը որակված է ճիշտ, վերջինս քրեական պատասխանատվության և պատժի է ենթակա այդ հոդվածով (համապատասխան մասով և կետով):

(...) [Ո]րպես ամբաստանյալ Արսեն Բաղդասարովի անձը բնութագրող հանգամանքներ [Առաջին ատյանի դատարանը] դիտում է այն, որ վերջինս նախկինում դատված չէ (...), ՀՀ ՊՆ 70179 գորամասի հրամանատարության և Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենի կողմից բնութագրվում է դրականորեն, մայրը՝ Սուսաննա Բաղդասարովան, վատառողջ է՝ վերջինիս մոտ ախտորոշվել է Գիֆուգ հանգուցավոր խալիպ, էութիրեոզ (...):

(...) [Առաջին ատյանի դատարանը] որպես ամբաստանյալ Արսեն Բաղդասարովի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ վերջինս ընդունել է մեղքը, անկեղծորեն զղջացել կատարածի համար, նրա մոտ ախտորոշվել է երկու ստորին վերջույթների ենթամաշկային երակների վարիկոզ հիվանդություն:

(...) [Առաջին ստյանի դատարանն] ապացուցված է համարում, որ բացակայում են (...) ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները:

[Առաջին ստյանի դատարանն] արձանագրում է, որ տուժող Ն.Երզնյանը 28.09.2015թ. [Առաջին ստյանի դատարան] ուղղված դիմումով և դատական նիստի ժամանակ հայտարարեց, որ Ա. Բաղդասարովից պարտք և պահանջ, բողոք չունի (...)» (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, թերթեր 106-111):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման շրջանակներում փաստել է. «(...) Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Արսեն Բաղդասարովը 28.12.2009թ. գորակոչվել է ծառայության ՀՀ ՊՆ թիվ 70179 գործառնա, 30.12.2011թ. գորացրվել է պահեստագոր, որից հետո մոր հետ՝ 25.01.2012թ., ով ունի առողջական լուրջ խնդիրներ /դիֆուզ հանգուցավոր խալիպ, էութիրեոզ/, բուժման նպատակով մեկնել է ՌԴ Կալինինգրադ քաղաք:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ հանցանք կատարած անձը համարվում է հանրային վտանգավորությունը կորցրած, եթե հանցագործությունից հետո անցել է երկար ժամանակ, և այդ ընթացքում անձը դրսևորել է անբասիր վարքագիծ:

Հարկ է արձանագրել նաև, որ Ա.Բաղդասարովը ՀՀ ՊՆ թիվ 70179 գործառնաի հրամանատարի և Ա.Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենի կողմից բնութագրվում է դրականորեն, Վանաձորի քաղաքապետ Ս.Գարբինյանի կողմից պարզևատրվել է ՀՀ Պատանիների Առաջնության 1-ին տեղ և ՀՀ Երիտասարդների Առաջնության 3-րդ տեղ գրավելու համար, թրասուսեր զենքաձևից ունի 1-ին կարգի մարզիկի կոչում, առաջին անգամ կատարել է միջին ծանրության հանցագործություն, ընդունել է մեղքը, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, նախկինում դատապարտված կամ այլ կերպ արատավորված չի եղել, նրա մոտ ախտորոշվել է երկու ստորին վերջույթների ենթամաշկային երակների վարիկոզ հիվանդություն, մայրը՝ Սուսաննա Բաղդասարովան ունի, առողջական լուրջ խնդիրներ /դիֆուզ հանգուցավոր խալիպ, էութիրեոզ/, ամբաստանյալը հանդիսանում է նրա միակ խնամակալը:

Վերաքննիչ դատարանը արձանագրում է նաև, որ դեպքից անցել է 4 տարուց ավելի, ամբաստանյալը, մեկնելով ՌԴ, այնտեղ երեք տարի աշխատել է, իրեն դրսևորել է որպես պարկեշտ քաղաքացի, չի կատարել որևէ հակահասարական արարք, հաշտվել է տուժողի հետ, ով հայտնել է, որ Ա.Բաղդասարովի նկատմամբ բողոք և պահանջ չունի, 6 ամիս 8 օր սույն քրեական գործի շրջանակներում գտնվել է կալանքի տակ, գտնվելով Հայաստանում նույնպես իրեն դրսևորել է հավուր պատշաճի:

Հաշվի առնելով վերը նշված՝ ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքները, նրա դրսևորած անբասիր վարքագիծը, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Արսեն Բաղդասարովը դատարել է հանրութ-

յան համար վտանգավոր լինելուց, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածը նրա նկատմամբ կիրառելի է:

Քրեական գործի քննության ընթացքում [Առաջին ատյանի դատարանը] թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են սույն գործով որոշում կայացնելու վրա: [Առաջին ատյանի դատարանը] խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածների պահանջները:

(...)

[Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով (...)] [Վերաքննիչ] դատարանը որոշեց (...)) (տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, թերթեր 32-39):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, Ա.Բաղդասարովի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելով և վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելով, թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը վկայակոչել է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի կիրառության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԼԳ/0009/01/11 գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և եզրահանգել, որ Ա.Բաղդասարովի՝ պահեստագործ գորացրվելու, առաջին անգամ միջին ծանրության հանցանք կատարելու, մեղքն ընդունելու, տուժողի հետ հաշտվելու ու անկեղծորեն զղջալու, նախկինում դատապարտված չլինելու, հանցանքի կատարման պահից չորս տարի անցնելու հանգամանքները ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ - հոդվածի իմաստով չեն կարող դիտվել որպես իրադրության փոփոխում:

8.1. Բողոք բերած անձը փաստել է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածներում ամրագրված նորմերն ունեն հայեցողական բնույթ, հետևաբար իրադրության փոփոխման հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելը վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունն է: Նման պայմաններում Առաջին ատյանի դատարանն օգտվել է իր հայեցողական լիազորությունից և չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածը, մինչդեռ Վերաքննիչ դատարանն այդպիսի լիազորությունից չօգտվելը դիտել է որպես դատական սխալ և, ղեկավարվելով իմպերատիվ կանոնով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, կարճել է գործի վարույթը, ինչը, ըստ բողոքաբերի, դատավարական իրավունքի խախտում է:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգու-
մը.**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված՝ իրադրության փոփոխման հիմքով Ա.Բաղդասարովին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե պարզվի, որ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց»:*

Մեջբերված քրեաիրավական նորմը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Արամայիս և Յուրի Ղալաչյանների* գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով. *«(...) [Ի]րադրությունը քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների այն վիճակն է, որոնց անձը ներգրավված է եղել հանցանքի կատարման պահին: Ուստի իրադրության փոփոխությունը՝ որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք, հասարակական հարաբերությունների այդ վիճակի որակական, կայուն փոփոխությունն է, որը տեղի է ունեցել որևէ իրադարձության հետևանքով:*

ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածն ամրագրում է իրադրության փոփոխման դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու երկու ինքնուրույն տեսակ՝

1. իրադրության փոփոխման հետևանքով հանրության համար վտանգավոր լինելուց դադարել է անձը,

2. իրադրության փոփոխման հետևանքով հանրության համար վտանգավոր լինելուց դադարել է արարքը:

Ընդ որում, իրադրության փոփոխման հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերոնշյալ տեսակներից յուրաքանչյուրի կիրառումը թույլատրելի է, եթե անձին մեղսագրվող հանցանքը ոչ մեծ կամ միջին ծանրության է և կատարվել է առաջին անգամ:

Իրադրության փոփոխման հետևանքով անձի՝ հանրության համար վտանգավորության կորուստը ենթադրում է այնպիսի փոփոխությունների առկայություն, որոնց արդյունքում հանցանք կատարած անձը դադարում է հանրության համար վտանգավոր լինելուց: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ հանցագործությունից հետո անձի կյանքի և գործունեության պայմաններում կատարված փոփոխությունները զրկում են նրան հասարակական հարաբերություններին այնպիսի վնաս պատճառելու հնարավորությունից, ինչպիսին նա պատճառել է նախքան այդ փոփոխությունները: Այլ կերպ՝ կատարված փոփոխությունները պետք է էականորեն

նվազեցնեն նոր հանցանք կատարելու՝ անձի օբյեկտիվ հնարավորությունը:

Իրադրության փոփոխման հետևանքով հանցավոր արարքի հանրային վտանգավորության կորուստը ենթադրում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում այնպիսի էական փոփոխությունների առկայություն, որոնց արդյունքում հանցավորի արարքը դադարում է հանրության համար վտանգ ներկայացնելուց՝ անկախ այն բանից, որ տվյալ պահին գործող քրեական օրենսգրքով այդ արարքը դեռևս համարվում է հանցավոր:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ իրադրության փոփոխման հետևանքով անձի կամ արարքի հասարակական վտանգավորության դադարման հիմքը չի կարող կիրառվել այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձը գործուն գոյում է կամ որևէ ձևով հարթում է պատճառած վնասը, քանի որ դրանք քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն հիմքեր են:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրադրության փոփոխման հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պարագայում դատարանը, դատախազը և քննիչը պետք է հաջորդաբար քննության առնեն և համապատասխան որոշմամբ հստակորեն պարզաբանեն հետևյալ հարցերը՝

1. հանցանքի կատարման պահին առկա իրադրությունը,
2. նոր (փոփոխված) իրադրությունը,
3. իրադարձությունը, որի հետևանքով տեղի է ունեցել իրադրության փոփոխությունը,
4. հանցանք կատարած անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության կորստի կոնկրետ դրսևորումը,
5. պատճառական կապը նոր (փոփոխված) իրադրության և հանցանք կատարած անձի կամ արարքի հանրային վտանգավորության կորստի միջև (...)» (տե՛ս Արամայիս և Յուրի Ղալաշյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ LԳ/0009/11/11 որոշման 17-20-րդ կետերը):

11.1. Վերահաստատելով Արամայիս և Յուրի Ղալաշյանների գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված կարգով անձին քրեական պատասխանատվությունից ազատելիս վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է նախևառաջ պարզաբանել տեղի ունեցած այն իրադարձությունը, որի արդյունքում հանցանքը կատարելու պահին եղած իրադրությունը ենթարկվել է փոփոխման և հանգեցրել հանցավոր արարքի կամ հանցավորի անձի հանրային վտանգավորության կորստի:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ առանց կոնկրետ իրադրության փոփոխության հիմնավորման հանցավորի արարքում առկա մեղմացնող, վերջինիս անձը դրական բնու-

քազրող հանգամանքներն ինքնին չեն կարող բավարար լինել արձանագրելու, որ հանցավորը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց, ուստի և հանգեցնելու իրադրության փոփոխման հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելուն: Վերոնշյալ հանգամանքները ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված կարգով նրա նկատմամբ պատիժ նշանակելու, ինչպես նաև պատիժը կրելու նպատակահարմարության հարցը որոշելու անհրաժեշտ պայմաններ են: Միաժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող որոշ հանգամանքները, մասնավորապես՝ մեղայականով ներկայանալը, հանցագործությունը բացահայտելուն աջակցելը, պատճառաձև վնասը որևէ ձևով հարթելը համապատասխան պայմանների առկայության դեպքում կարող են անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մեկ այլ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված գործուն զոջալու կիրառման հիմք լինել:

12. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված՝ իրադրության փոփոխման հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու դատավարական կարգին՝ Վճարելի դատարանն արձանագրում է հետևյալը. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ *«Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝ (...) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից»:*

Նույն օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում»:*

Մեջբերված քրեադատավարական նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված՝ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն նախատեսող նյութաիրավական նորմի կիրառման դատավարական հիմքը բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածն է (նաև՝ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ և 73-րդ հոդվածների պարագայում): Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով սահմանված՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքին, ապա այն առավել ընդհանրական բնույթ ունի և գործում է միայն այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով անձին քրեական

պատասխանատվությունից ազատելու որևէ հիմքի կիրառման կարգը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ուղղակիորեն նախատեսված չէ:

12.1. Բացի այդ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ և 37-րդ հոդվածներով նախատեսված՝ քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման հիմքերը, դրանց կիրառման կարգի առանձնահատկություններով պայմանավորված, տարբերվում են միմյանցից: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածը սահմանում է, որ իրադրության փոփոխման հետևանքով անձը **կարող է** ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դրան համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ վարույթն իրականացնող մարմինները **կարող են** հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել: Այնուհանդերձ, որ նշված նորմերը դիսպոզիտիվ բնույթ ունեն և վարույթն իրականացնող մարմիններին քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման հարցում օժտել են հայեցողական լիազորությամբ (դատարան, դատախազ կամ դատախազի համաձայնությամբ՝ նաև քննիչ):

Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերն իմպերատիվ են, և դրանցից յուրաքանչյուրի առկայությունը վարույթն իրականացնող մարմնի համար առաջացնում է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու պարտականություն (*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ և 37-րդ հոդվածների հարաբերակցության և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ mutatis mutandis տե՛ս Տիգրան Առաքելյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱԶԳ/0217/01/14 որոշումը*):

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված կարգով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը, օգտվելով իր տնօրինչական լիազորությունից և հաշվի առնելով իրադրության փոփոխման վերաբերյալ սույն որոշմամբ սահմանված համապատասխան չափանիշները, դրանք կիրառելով կոնկրետ գործի փաստական հանգամանքների նկատմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված կարգով կարող է որոշում կայացնել անձին քրեական պատասխանատվությունից ազատելու կամ չազատելու վերաբերյալ:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Բաղդասարովին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, խախտել է զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները և շարքային Վ.Կարազուլյանի հետ գումարտակի

ճաշարանում ծեծի է ենթարկել գումարտակի ճաշարանի խոհարար, պարտադիր ժամկետային զինծառայող Ն.Երզնյանին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, որպես Ա.Բաղդասարովի անձը բնութագրող հանգամանքներ է դիտել վերջինիս՝ նախկինում դատված չլինելը, դրական բնութագրվելը, մոր վատառողջ լինելը, իսկ որպես մեղմացնող՝ մեղքն ընդունելը, անկեղծորեն զղջալը, երկու ստորին վերջույթների ենթամաշկային երակների վարիկոզ հիվանդություն ունենալը: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ տուժողն ամբաստանյալից պարտք ու պահանջ չունի: Արդյունքում Առաջին ատյանի դատարանն Ա.Բաղդասարովին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և գտել, որ նա ենթակա է պատասխանատվության ու պատժի (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հանցագործությունից հետո անցել է ավելի քան չորս տարի, Ա.Բաղդասարովը մոր հետ մեկնել է արտերկիր, որտեղ երեք տարի աշխատել է և իրեն դրսևորել որպես պարկեշտ քաղաքացի, չի կատարել որևէ հակահասարական արարք, հաշտվել է տուժողի հետ, սույն քրեական գործի շրջանակներում 6 ամիս 8 օր գտնվել է կալանքի տակ: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի է առել Ա.Բաղդասարովի անձը բնութագրող մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ ՀՀ ՊՆ թիվ 70179 զորամասի հրամանատարի և Ա.Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենի կողմից դրական բնութագրվելը, Վանաձորի քաղաքապետ Ս.Դարբինյանի կողմից ՀՀ Պատանիների Առաջնության 1-ին տեղ և ՀՀ Երիտասարդների Առաջնության 3-րդ տեղ գրավելու համար պարգևատրվելը, թրասուսեր զենքաձևից 1-ին կարգի մարզիկի կոչում ունենալը, առաջին անգամ միջին ծանրության հանցանք կատարելը, մեղքն ընդունելն ու կատարածի համար անկեղծորեն զղջալը, նախկինում դատապարտված կամ այլ կերպ արատավորված չլինելը, վատառողջ լինելը, մոր՝ Սուսաննա Բաղդասարովայի մոտ առողջական լուրջ խնդիրների առկայությունը (դիֆուզ հանգուցավոր խալիպ, էութիրեոզ) և նրա միակ խնամակալը հանդիսանալը:

Վերոշարադրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ հանցանք կատարած անձը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց, ուստի նրա նկատմամբ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածը, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝ Ա.Բաղդասարովին ազատել է քրեական պատասխանատվությունից՝ իրադրության փոփոխման հիմքով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 11-11.1-րդ կետերում արտահայտված իրավա-

կան դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ վերլուծության չի ենթարկել հանցանքը կատարելու պահին եղած իրադրությունը և չի պարզաբանել, թե տվյալ իրադրությունն ինչ իրադարձության արդյունքում է ենթարկվել փոփոխման, չի գնահատել նոր (փոփոխված) իրադրությունը, հանցանք կատարած անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության կորստի կոնկրետ դրսևորումը, ինչպես նաև նոր (փոփոխված) իրադրության և հանցանք կատարած անձի կամ արարքի հանրային վտանգավորության կորստի միջև առկա պատճառական կապը: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել Ա.Բաղդասարովի կյանքի և գործունեության պայմաններում կատարված այնպիսի փոփոխությունների առկայություն, որը կզրկեր նրան հասարակական հարաբերություններին նման վնաս պատճառելու հնարավորությունից և կվկայեր, որ վերջինս դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց:

Ինչ վերաբերում է հանցագործությունից հետո երկար ժամանակ անցնելը և այդ ընթացքում Ա.Բաղդասարովի կողմից անբասիր վարքագիծ դրսևորելը, ինչպես նաև վերջինիս անձը դրական բնութագրող հանգամանքները Վերաքննիչ դատարանի կողմից որպես իրադրության փոփոխման հիմնավորում դիտարկելուն, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դրանք ինքնին, առանց կոնկրետ իրադրության փոփոխման և դրա արդյունքում հանցավորի հանրային վտանգավորության կորստի փաստարկման, չեն կարող ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի կիրառման և անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք լինել:

Հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված՝ իրադրության փոփոխման հիմքով Ա.Բաղդասարովին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված չէ:

15. Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարում նաև այն, որ Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելիս ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով: Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն որոշման 12-12.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները, փաստում է, որ իրադրության փոփոխման հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու դատավարական հիմքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածն է:

16. Սույն որոշման 11-14-րդ կետերում կատարված վերլուծության համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, ինչը հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արսեն Արմենի Բաղդասարովի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունվարի 20-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Արսեն Արմենի Բաղդասարովի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին, թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

53.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԴ-1/0023/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
---	---

քարտուղարությամբ մասնակցությամբ մեղադրող պաշտպան	Մ.ԱՎԱԳՅԱՆ Ա.ՆԱԳԴԱԼՅԱՆ Ա.ՊԱՊԻԿՅԱՆ
---	--

2016 թվականի դեկտեմբերի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ռոստամ Ահմադի Բրոյանի, Ահմադ Վաքիլի Հտյանի և Ռոմիկ Վաքիլի Սիրգոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշման դեմ ամբաստանյալներ Ռ.Բրոյանի, Ա.Հտյանի և Ռ.Սիրգոյանի պաշտպան Լ.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2015 թվականի հունվարի 26-ին ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Բ.Սարգսյանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 25100215 քրեական գործը:

2015 թվականի հունվարի 26-ին ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ Մ.Գուրյանի որոշմամբ թիվ 25100215 քրեական գործով ստեղծվել է քննչական խումբ, և քրեական գործն ընդունվել է ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Բ.Սարգսյանի վարույթ:

2015 թվականի հունվարի 29-ին Ռոբերտ Բրոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով:

2015 թվականի հունվարի 30-ին Ռոստամ Բրոյանը, Ահմադ Հոյանը և Ռոմիկ Միրզոյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով:

2015 թվականի հունիսի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ անչափահաս մեղադրյալ Ռոբերտ Բրոյանի վերաբերյալ քրեական գործի մասն անջատվել է, և գործի դատաքննությունն իրականացվել է առանձին վարույթով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճռով, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Ռոստամ Բրոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ նշանակված պատժին հաշվակցվել է 2015 թվականի հունվարի 27-ից մինչև փետրվարի 16-ը նախնական կալանքի տակ գտնվելու 21 օրը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 11 (տասնմեկ) ամիս 9 (ինը) օր ժամկետով: Ռոստամ Բրոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ գրավը, թողնվել է անփոփոխ:

Ահմադ Հոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ նշանակված ազատազրկման ձևով պատժին հաշվակցվել է 2015 թվականի հունվարի 27-ից մինչև հունվարի 31-ը նախնական կալանքի տակ գտնվելու 4 օրը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 11 (տասնմեկ) ամիս 26 (քսանվեց) օր ժամկետով: Ահմադ Հոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ գրավը, թողնվել է անփոփոխ:

Ռոմիկ Միրզոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, և նրա նկատմամբ պա-

տիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ նշանակված պատժին հաշվակցվել է 2015 թվականի հունվարի 27-ից մինչև հունվարի 31-ը նախնական կալանքի տակ գտնվելու 4 օրը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 11 (տասնմեկ) ամիս 26 (քսանվեց) օր ժամկետով: Ռոմիկ Միրզոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ գրավը, թողնվել է անփոփոխ:

Նույն դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով դատապարտվել է նաև Ազիզ Բրոյանը:

3. Ամբաստանյալներ Ռ.Բրոյանի, Ա.Հսոյանի, Ռ.Միրզոյանի պաշտպան Ա.Պապիկյանի և մեղադրող Ա.Նադդայանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի մարտի 29-ի որոշմամբ ներկայացված բողոքները մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալներ Ռ.Բրոյանի, Ա.Հսոյանի և Ռ.Միրզոյանի պաշտպան Լ.Հովհաննիսյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Ռ.Բրոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով այն բանի համար, որ «նա իր եղբորորդի, անչափահաս Ռ-ոքերտ Բրոյանից տեղեկանալով, որ նա որոշել է առևանգելու միջոցով ամուսնանալ Ռ-յա-Թազա գյուղի բնակչուհի Գոհար Ռուսլանի Մոռյանի հետ, քանի որ Գոհար Մոռյանի ընտանիքն այլ հավատք է դավանում և օրինական կարգով նրան իր հետ չեն ամուսնացնի, համաձայնվել է առևանգման հարցում օգնել Ռ-ոքերտ Բրոյանին՝ հատկապես իմանալով, որ Գոհար Մոռյանն անչափահաս է: Գոհար Մոռյանին առևանգելու հարցով նախնական համաձայնության է եկել իր եղբորորդի Ռ-ոքերտ Իշխանի Բրոյանի, հորեղբորորդի Ազիզ Ալիկի Բրոյանի, ազգականներ Ռոմիկ Վաքիլի Միրզոյանի և Ահմադ Վաքիլի Հսոյանի հետ: Նախնական պլանի համաձայն՝ 2015թ. հունվարի 25-ին իրեն պատկանող «Toyota Land Cruiser Prado» մակնիշի 16 PA 606 հաշվառման համարանիշի ավտոմեքենան կանգնեցրել է ճանապարհին, Ռ-ոքերտ Բրոյանը մնացել է ավտոմեքենայի մեջ նստած, իսկ Ռոստամ Բրոյանը մյուս հանցակիցների հետ միասին ժամը 20-ի սահմաններում գնացել են Ռուսլան Մոռյանի տուն: Ռոստամ Բրոյանը, օգտ-

վելով այն հանգամանքից, որ Գոհար Մոռյանը գտնվել է առանձին սենյակում, իսկ տան անդամները՝ խոհանոցում, դրսի կողմից ծածկել է խոհանոցի դուռը և ձեռքով պահել բռնակը, որից հետո Ռոմիկ Միրզոյանը և Ահմադ Հսոյանը բռնություն գործադրելով Գոհար Մոռյանի նկատմամբ, նրան դուրս են բերել բնակարանից, իսկ Ազիզ Բրոյանը բռնել է Գոհար Մոռյանի անչափահաս եղբայր Սաշա Մոռյանին: Այնուհետև Ռոմիկ Միրզոյանը և Ահմադ Հսոյանը Գոհար Մոռյանին տեղափոխել են տնից մինչև ճանապարհ և նրա կամքին հակառակ բռնի ուժով նստեցրել են Ռոստամ Բրոյանի «Toyota Land Cruiser Prado» մակնիշի 16 PA 606 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, իրենք մնացել են դրսում, Ռոբերտ Բրոյանը բռնել է Գոհար Մոռյանի ձեռքերը, իսկ Ռոստամ Բրոյանը վարել է ավտոմեքենան, և այդ կերպ բացահայտ առևանգել են Գոհար Մոռյանին, տեղափոխել են գյուղից և պահել Հրազդան քաղաքի բնակիչ Սեդր Ջանգիրի Ուսոյանի տանը՝ նրանից և տան անդամներից թաքցնելով Գոհար Մոռյանին կամքին հակառակ առևանգելու հանգամանքը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 208):

5.1. Ամբաստանյալներ Ա.Հսոյանին և Ռ.Միրզոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով այն բանի համար, որ «[նրանք իրենց] ազգական, անչափահաս Ռոբերտ Բրոյանից և Ռոստամ Բրոյանից տեղեկանալով, որ Ռոբերտ Բրոյանը որոշել է առևանգելու միջոցով ամուսնանալ Ռյա-Թազա գյուղի բնակչուհի Գոհար Ռուսլանի Մոռյանի հետ, համաձայնվել [են] առևանգման հարցում օգնել նրանց՝ հատկապես իմանալով, որ Գոհար Մոռյանն անչափահաս է և այդ հարցում նախնական համաձայնության [են] եկել Ռոբերտ Իշխանի Բրոյանի, Ռոստամ Ահմադի Բրոյանի, Ազիզ Այիկի Բրոյանի հետ: Նախնական պայմանավորվածության համաձայն՝ 2015թ. հունվարի 25-ին Ռոստամ Բրոյանին պատկանող «Toyota Land Cruiser Prado» մակնիշի 16 PA 606 հաշվառման համարանիշի ավտոմեքենան կանգնեցրել են ճանապարհին, Ռոբերտ Բրոյանը մնացել է ավտոմեքենայի մեջ նստած, իսկ [նրանք] մյուս հանցակիցների հետ միասին ժամը 20-ի սահմաններում գնացել են Ռուսլան Մոռյանի տուն: Նախապես տեղյակ լինելով, որ Ռուսլան Մոռյանը տանը չէ, նրան հարցնելու պատրվակով Ռոստամ Բրոյանի հետ միասին մտել են տուն, իսկ Ազիզ Բրոյանը սպասել է դրսում: Ռոստամ Բրոյանը, օգտվելով այն հանգամանքից, որ Գոհար Մոռյանը գտնվել է առանձին սենյակում, իսկ տան անդամները՝ խոհանոցում, դրսի կողմից ծածկել է խոհանոցի դուռը և ձեռքով պահել բռնակը, որից հետո [Ահմադ Հսոյանը] և Ռոմիկ Միրզոյանը, բռնություն գործադրելով Գոհար Մոռյանի նկատմամբ, նրան դուրս են բերել բնակարանից, իսկ Ազիզ Բրոյանը բռնել է Գոհար Մոռյանի անչափահաս եղբայր Սաշա Մոռյանին, ով բռնել է Ռոմիկ Միրզոյանի ոտքից և փորձել է թույլ չտալ, որ Գոհար Մոռյանին առևանգեն: Դրանից հետո Ռոստամ Բրոյանը դուրս է եկել տնից և բռնակից քաշելու միջոցով փակել դրսի դուռը, իսկ Ա-

զիզ Բրոյանը բռնել է Մաշա Սողյանին: Այդ ընթացքում Ահմադ Հտյանը Ռոմիկ Միրզոյանի հետ միասին Գոհար Սողյանին տեղափոխել են տնից մինչև ճանապարհ, Գոհար Սողյանի կամքին հակառակ բռնի ուժով նրան նստեցրել են Ռոստամ Բրոյանի «Toyota Land Cruiser Prado» մակնիշի 16 PA 606 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, իրենք մնացել են դրսում, իսկ ավտոմեքենայի մեջ գտնվող Ռոբերտ Բրոյանը բռնել է Գոհար Սողյանի ձեռքերը: Դրանից հետո Ռոստամ Բրոյանը միացել է նրանց, նստել և վարել է ավտոմեքենան, Ռոբերտ Բրոյանի հետ տեղափոխել են գյուղից և պահել Հրազդան քաղաքի բնակիչ Միեր Ջանգիրի Ոստյանի տանը՝ նրանից և տան անդամներից թաքցնելով Գոհար Սողյանին կամքին հակառակ առևանգելու հանգամանքը, այդ կերպ բացահայտ առևանգել են Գոհար Սողյանին» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 193, 201):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «Ամբաստանյալներ Ռոստամ Ահմադի Բրոյանի, Ահմադ Վաքիլի Հտյանի և Ռոմիկ Վաքիլի Միրզոյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում նրանց կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորների անձը բնութագրող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:

(...)

Զանի որ 5 տարուց բարձր՝ մինչև 10 տարի ժամկետով ազատազրկում նախատեսող հանցագործություններն են դասվում ծանր հանցագործությունների շարքին, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան սկսվում է 4 տարուց, որը մոտ է ծանր հանցագործությունների դասակարգման հիմք վերցվող պատժի նվազագույն շեմին, ուստի դատարանի գնահատմամբ օրենսդրի կողմից քննարկվող հանցակազմը բնութագրվում է որպես առավել բարձր հանրային վտանգավորություն ներկայացնող:

(...)

Դատարանի [գնահատմամբ] ամբաստանյալներին մեղսագրվում է միանգամից երկու ծանրացնող հանցամանքների պայմաններում մարդուն առևանգելու արարքի կատարումը, այն է՝ նախնական համաձայնությամբ խմբի կողմից անչափահասին առևանգելը:

(...)

Ամբաստանյալների և նրանց կատարած արարքի առավել բարձր հանրային վտանգավորության մասին է վկայում նաև այն շարժառիթը և նպատակը, որով առաջնորդվել են վերջինները: (...) Դատարանը (...) արձանագրում է, որ հենց 16 տարեկան անչափահասի կամքին հակառակ, ամուսնանալուն հարկադրելու նպատակով և շարժառիթով կատարված առևանգումը վկայում են ինչպես ամբաստանյալների, այնպես էլ նրանց կատարած արարքի առավել բարձր հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի մասին:

(...)

Դատարանի գնահատմամբ՝ ամբաստանյալները 16 տարեկան անչափահաս տուժողին նրա կամքին հակառակ ամուսնանալուն հարկադրելու նպատակով և բռնություն կիրառելով առևանգելով, ոտնձգել են ոչ միայն անչափահաս տուժողի ազատության, առողջության և այլ արժեքների նկատմամբ, այլև երեխայի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի, ինչպես նաև ամուսնանալու ազատության, տղամարդկանց հետ իրավահավասարության և դրա հետ կապված այլ արժեքների նկատմամբ: Դատարանի կարծիքով՝ հենց սրանում էլ արտահայտվում է սույն հանցագործության առավել բարձր հանրային վտանգավորությունը:

(...)

Դատարանի համար առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ սույն քրեական գործով տուժող Գ.Սոդյանը եղել է ոչ միայն անչափահաս (16 տարեկան), այլև հանցանքի կատարման պահին լրացած չի եղել նաև նրա օրենքով նախատեսված ամուսնության նվազագույն տարիքը (...): Դատարանի գնահատմամբ՝ այս հանգամանքն ավելի է բարձրացնում կոնկրետ դեպքում կատարված հանցագործության հանրային վտանգավորությունը:

(...)

Դատարանը (...) ընդգծում է, որ ամբաստանյալները գործել են հանդուգն և արարքը կատարել են բնակարան մուտք գործելով: (...) [Այդ] հանգամանքը (...) էական նշանակություն ունի կոնկրետ դեպքում կատարված հանցագործության հանրային առավել բարձր վտանգավորության փաստը արձանագրելու համար:

(...) Դատարանի համար սկզբունքային նշանակություն ունի նաև այն, որ տուժողին առևանգելը պայմանավորված է եղել նրա կրոնական համոզմունքներով, քանի որ ամբաստանյալները գիտակցելով, որ զուտ կրոնական համոզմունքներից ելնելով տուժողը չի ամուսնանա Ռ-դերտ Բրոյանի հետ, որոշել են ամուսնության հարցը լուծել հանցավոր ճանապարհով:

Դատարանի գնահատմամբ այս հանգամանքը, ըստ էության, ոտնձգություն է նաև տուժողի կրոնական համոզմունքների նկատմամբ (...):

Դատարանը սույն քրեական գործով ամբաստանյալների արարքի հանրային վտանգավորության բնույթը և աստիճանը գնահատելիս հաշվի է առնում նաև այն, որ նրանք գործել են անչափահասի (Ռ-դերտ Բրոյանի, որը 16 տարեկան է) առաջարկով և նրան ներգրավելով անչափահաս տուժողին առևանգելու հանցավոր գործունեության մեջ:

(...)

[Դատարանի գնահատմամբ (...) կոնկրետ դեպքում կատարված հանցագործության առավել բարձր հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի մասին [վկայում է] այն, որ ամբաստանյալներից Ռ-ոս-

տամ Բրոյանի (կազմակերպել է առևանգումը) և Ահմադ Հսոյանի խնամ-
քին են գտնվում գրեթե տուժողի և Ռոբերտ Բրոյանի տարիքի երեխաներ:

(...)

Դատարանը, ամբաստանյալների նկատմամբ պատիժ նշանակե-
լիս, մասնավորապես պատժի չափը և դրա կրման նպատակահարմա-
րության հարցը որոշելիս հիմք է ընդունում այն, որ սույն քրեական գործը
քննվել է արագացված կարգով, (...) ինչպես նաև այն, որ ամբաստանյալ-
ներից՝ Ռոստամ Բրոյանի խնամքին են գտնվում կինը և անչափահաս
չորս երեխաները, Ռոմիկ Միրզոյանի խնամքին են գտնվում կինը և երեք
անչափահաս երեխաները, Ահմադ Հսոյանի խնամքին են գտնվում կինը և
չորս անչափահաս երեխաները (...): Դատարանը բացի այդ հաշվի է առ-
նում այն, որ նրանք բնութագրվում են դրականորեն, նախկինում դատված
չեն եղել:

(...)

Դատարանն անդրադառնալով՝ «տուժողին ծնողներին կամավոր
վերադարձնելու հանգամանքին», գտնում է, որ (...) [դա] տեղի է ունեցել ոչ
թե ժամեր անց, այլ հաջորդ օրը, ընդ որում՝ (...) երբ արդեն իսկ հարուց-
ված է եղել քրեական գործ և ձեռնարկվել համապատասխան միջոցներ
նրանց հայտնաբերելու ուղղությամբ: Այլ կերպ, (...) ամբաստանյալները
հարկադրված են եղել տուժողին վերադարձնել ծնողներին:

(...)

Ինչ վերաբերում է ցուցմունքներ տալուն և նախաքննությանն օգնե-
լուն, ապա սա ևս խիստ հարաբերական է, քանի որ առևանգումը եղել է
բացահայտ, տուժողի հարազատների ներկայությամբ և նրանց իրավունք-
ների և օրինական շահերի նկատմամբ ոտնձգելով, ուստի ամբաստանյալ-
ների ցուցմունքները էական դեր չեն էլ խաղացել հանցագործությունը բա-
ցահայտելու գործում, քանի որ նախաքննական մարմնի համար հանցա-
գործության ամբողջական պատկերը պարզ է եղել:

(...)

Դատարանը գտնում է, որ ամբաստանյալների ոստիկանության
բաժին ներկայանալը ևս եղել է հարկադրական, քանի որ նրանք այլ ելք
չեն ունեցել՝ տուժողը չի համաձայնվել ամուսնանալ Ռոբերտ Բրոյանի
հետ, իսկ դեպքի առթիվ իրականացվել է քննություն: (...) Այս առումով դա-
տարանը [գտնում է, որ] տվյալ դեպքում բացակայում [են] մեղայականով
ներկայանալու (...) չափանիշները:

(...)

Դատարանը հաշվի է առնում նաև այն, թե ամբաստանյալներից յու-
րաբանչյուրն ինչ մասնակցություն է ունեցել հանցանքի կատարմանը:
Ամբաստանյալներ՝ Ռոստամ Բրոյանը, Ռոմիկ Միրզոյանը և Ահմադ Հսո-
յանը գործել են առավել ակտիվ և հանդուգն, (...) [նրանք] (...) մուտք են
գործել բնակարան, այնտեղից բռնություն կիրառելով դուրս են բերել և մե-
քենան են տեղավորել տուժողին, այնուհետև Ռոստամ Բրոյանը նստելով
մեքենայի դեկին, որում գտնվել են տուժողը և անչափահաս Ռոբերտ Բրո-

յանը, հեռացել են դեպքի վայրից: Նրա հետևից այլ մեքենայով շարժվել են նաև Ռոմիկ Միրզոյանը և Ահմադ Հսոյանը: (...) Այլ կերպ ասած՝ ամբաստանյալների (...) հանցավոր վարքագիծը, բնութագրերը և այլ մեղմացնող հանգամանքները գրեթե նույնական են (...):

(...)

Դատարանը գտնում է, որ (...) սույն քրեական գործի հանգամանքների, կատարված հանցագործության բնույթի և վտանգավորության աստիճանի, ՀՀ իրավական համակարգում հանցագործությամբ խախտված հասարակական հարաբերությունների սոցիալական և իրավական նշանակության պայմաններում նշանակվելիք չորս տարի ժամկետով պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելը, ամբաստանյալներ Ռոստամ Բրոյանի, Ռոմիկ Միրզոյանի և Ահմադ Հսոյանի նկատմամբ կլինի անհամաչափ մեղմ և այդ կերպ հնարավոր չի լինի նրանց մասով ապահովել պատժի նպատակների իրականացումը (տես քրեական գործ, հատոր 3, թերթեր 207-212):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. «(...) Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալներ Ռոստամ Բրոյանի, Ահմադ Հսոյանի և Ռոմիկ Միրզոյանի նկատմամբ պատիժ նշանակելիս՝ պատժի տեսակը և չափը որոշելիս, հաշվի է առել ոչ միայն կատարված հանցագործության բնույթն ու հանրային վտանգավորությանն աստիճանը, մասնավորապես՝ թե սույն քրեական գործով ամբաստանյալների կատարած հանցագործությունն ինչ սոցիալական արժեքների է ոտնձգել, դրանք ինչ նշանակություն ունեն իրավական, ժողովրդավարական և սոցիալական պետության արժեքային համակարգում և քրեահրավական պաշտպանության տակ վերցված արժեքների հիերարխիայում, այլև նրանց անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, մասնավորապես՝ այն, որ սույն քրեական գործը քննվել է արագացված կարգով, որի դեպքում պատժի չափը չի կարող գերազանցել 5 տարի 4 ամիս ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև այն, որ ամբաստանյալներից Ռոստամ Բրոյանի խնամքին են գտնվում կինը և անչափահաս չորս երեխաները, Ռոմիկ Միրզոյանի խնամքին են գտնվում կինը և երեք անչափահաս երեխաները, Ահմադ Հսոյանի խնամքին են գտնվում կինը և չորս անչափահաս երեխաները: Առաջին ատյանի դատարանը, բացի այդ, հաշվի է առել այն, որ նրանք բնութագրվում են դրականորեն և նախկինում դատապարտված չեն եղել, որպիսի պայմաններում եկել է ճիշտ եզրահանգման, որ ամբաստանյալներ Ռոստամ Բրոյանի, Ահմադ Հսոյանի և Ռոմիկ Միրզոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված արարք կատարելու համար պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով, որը նրանք պետք է կրեն:

Վերաքննիչ դատարանը (...) գտնում է, որ ամբաստանյալներ Ռոստամ Բրոյանի, Ահմադ Հսոյանի և Ռոմիկ Միրզոյանի ուղղվելը հնարավոր չէ առանց պատիժը կրելու, այսինքն՝ նրանց նկատմամբ կիրառելի չէ ՀՀ

քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը (...) (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 96-97):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներ-
քոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը փաստել է, որ սույն գործով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի դրույթները, չեն պահպանել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ, 70-րդ հոդվածների պահանջները, հաշվի չեն առել պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող մի շարք հանգամանքներ, ինչի արդյունքում ամբաստանյալների նկատմամբ նշանակել են անարդարացի, ակնհայտ խիստ պատիժ, որը չի համապատասխանում նրանց կատարած հանցագործության ծանրությանը և նրանց անձնավորությանը:

9. Ի հիմնավորումն վերոնշյալ փաստարկների, մասնավորապես՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման հարցի շուրջ բարձրացված խնդրի կապակցությամբ՝ բողոքաբերը, վկայակոչելով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների տարբեր դատական ակտեր (ԵԷԳ/0089/01/15, ՏԳ2/0009/01/12, ԵԱԲԳ/0147/01/12, ԱՐԱԳ/0009/01/13) նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված արարքների համար պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում չկա միատեսակ դատական պրակտիկա, քանի որ գրեթե նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով դատարանները կիրառել են ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

10. Անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից թույլ տրված դատական սխալի փաստարկին՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները և դուրս է եկել արագացված կարգով գործը քննելու շրջանակից, քանի որ արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չիրականացնելու պայմաններում անդրադարձել է գործում առկա ապացույցներով հաստատված փաստական հանգամանքներին: Իսկ Վերաքննիչ դատարանի կողմից այս հանգամանքը քննության առարկա չի դարձվել:

10.1. Բողոքաբերը փաստել է նաև, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի խախտում՝ հանցակազմը ծանրացնող միևնույն հանգամանքները կրկին գնահատելով որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ:

10.2. Ավելին, ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանը, որպես հանցագործության և ամբաստանյալների հանրային վտանգավոր-

րությունը բարձրացնող հանգամանքներ, ոչ իրավաչափորեն գնահատել է, որ ամբաստանյալները գործել են անչափահասի առաջարկով և հանցագործության կատարմանը ներգրավել են անչափահասի, նրանց խնամքին գտնվում են տուժողի և Ռոբերտ Բրոյանի գրեթե նույն տարիքի երեխաներ:

11. Բողոքաբերը նշել է նաև, որ չնայած ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածը պատժի սպառնալիքով արգելում է ամուսնանալու նպատակով աղջկան առևանգելը, այնուամենայնիվ, իրական կյանքում այն հետևողականորեն շարունակվում է, իսկ եզրի ազգաբնակչության շրջանում ամուսնանալու նպատակով աղջկան առևանգելն ազգային սովորույթ է: Ըստ բողոքաբերի՝ դատարանը պետք է նկատի ունենա կատարված հանցագործության նպատակը, ինչպես նաև հետևանքը. իր պաշտպանյալների նպատակն է եղել, չնայած օրենքի պահանջների խախտմամբ, սակայն նպաստել մեկ նոր ընտանիքի ձևավորմանը:

12. Բացի այդ, բողոքի հեղինակի կարծիքով դատարանը կատարված արարքի հանրային առավել բարձր վտանգավորության աստիճանն ընդգծելու նպատակով արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի նվազագույն չափը հանցակազմի առավել բարձր հանրային վտանգավորության մասին վկայող հանգամանք է, ինչպես նաև մատնանշել է հանգամանքներ, որոնք քրեական գործում առկա չեն, մասնավորապես այն, որ ռոնձգություն է կատարվել տուժողի կրոնական համոզմունքների նկատմամբ: Բողոքաբերը նշել է նաև, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս և պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս պաշտան չեն գնահատել մի շարք հանգամանքներ: Մասնավորապես այն, որ ամբաստանյալներն առևանգումից ժամեր անց տուժողին կամավոր հանձնել են իր ծնողներին, չեն հերքել իրենց մեղքը, զղջացել են կատարածի համար, իրենց ցուցմունքներով օգնել են նախաքննությանը՝ բացահայտելու գործով օբյեկտիվ ճշմարտությունը և այլն:

13. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ կայացնել նոր դատական ակտ կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված արարք կատարած, մասնավորապես՝ ամուսնության նպատակով մարդուն առևանգելու համար անձի նկատմամբ պատիժ նշանակելու, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող

նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալներ Ռ.Բրոյանի, Ա.Հտյանի, Ռ.Միրզոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները*»:

2. *Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով*:

3. *Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին*»:

2. *Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...)*»:

Մեջբերված քրեաիրավական նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրե-

լու, պետք է հիմնվի գոյություն ունեցող այնպիսի օբյեկտիվ տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշումները)՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքն ու հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը և այլն (ԵԱԳԳ/0034/01/12, ԼԳ/0093/01/12, ՏԳ/0018/01/13, ԵԷԳ/0132/01/13, ԵԱՆԳ/0060/01/13, ԵԿԳ/0096/01/13, ԵԿԳ/0252/01/13, ԵՄԳ/0027/01/14, ԳԳ/0014/01/14, ՍԳ/0204/01/13, ՏԳ/0031/01/14, ՍԳ/0174/01/14, ԵԱԳԳ/0011/01/14, ԵԱՔԳ/0091/01/14, ԵԿԳ/0039/01/15, ԱՐԳ/0031/01/15 և այլն):

17. ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ՝ «Մարդուն առևանգելը» վերտառությամբ հողվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են. «1. *Խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝*

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. *Նույն գործողությունը, որը կատարվել է՝*

1) *մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,*

(...)

4) *անչափահասի նկատմամբ,*

(...)

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով):

Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող հանցագործության համար պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակա-

հարմարության հարցը լուծելիս ստորադաս դատարանները պետք է իրենց ամբողջության մեջ վերլուծեն և համապարփակ գնահատման ենթարկեն սույն հանցակազմի բնույթը, ինչպես նաև վերջինիս հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող գործոնները:

Այսպես՝ քննարկվող հանցակազմի անմիջական օբյեկտը մարդու անձնական և ֆիզիկական ազատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են, որպիսիք սոցիալական և իրավական բարձր արժեքներ են ու ենթակա են քրեաիրավական հատուկ պաշտպանության: Առանձին դեպքերում, կախված կոնկրետ հանցագործության հանգամանքներից, քննարկվող հանցանքը կարող է ոսնձգել նաև սոցիալական մեծ նշանակություն ունեցող այլ արժեքների դեմ, որի պայմաններում որպես լրացուցիչ օբյեկտ կարող է հանդես գալ, օրինակ, մարդու կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունը և այլն: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները, ի թիվս այլոց, պետք է հատուկ ուշադրություն դարձնեն հանցավոր վարքագծի դրսևորման եղանակին, հանցագործությանը նախորդող, ուղեկցող և հաջորդող հանգամանքներին, հանցավոր մտադրության իրականացման աստիճանին, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքին ու հանցագործությանը նրա մասնակցության աստիճանին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցավորի առավել հանդուգն լինելու և համակեցության ընդհանուր կանոնների նկատմամբ արհամարհական վերաբերմունք ունենալու, հետևաբար նաև ինչպես հանցագործության, այնպես էլ հենց հանցավորի անձի հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին կարող են վկայել քննարկվող հանցանքն իրենց համակցության մեջ, ի թիվս այլոց, բռնությամբ, բնակարան մուտք գործելու, այլ անձանց ներկայությամբ և նրանց դիմադրությունը ճնշելու միջոցով կատարելը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հանցագործության և հանցավորի անձի հանրային վտանգավորության աստիճանի բարձր լինելու մասին են վկայում անձի արարքում հանցակազմը որակյալ դարձնող մեկից ավելի հանգամանքների առկայությունը, հետևաբար դա նույնպես պետք է համաչափ գնահատականի արժանանա դատարանի կողմից և հաշվի առնվի պատիժ նշանակելիս ու այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս (տե՛ս, *mutatis mutandis*, *Գարսևան Ոսկանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԳ/0119/01/13, *Սարգիս Խաչատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԳ/0031/01/14 որոշումները):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարանների կողմից պետք է պատշաճ գնահատական ստանա նաև հանցակազմի

սուբյեկտիվ կողմը, այդ թվում՝ հանցանք կատարած անձի նպատակներն ու հանցագործության շարժառիթները: Այդ առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել ամուսնության նպատակով մարդուն առևանգելու հանցակազմի հանրային վտանգավորության հարցը:

17.1. Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը ամրագրում է. «*խտրականությունը, կախված սեռից, (...) ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, (...) արգելվում է*»:

ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի համաձայն՝ «*Կանայք և տղամարդիկ իրավահավասար են*»:

ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: (...)*

2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդն ունեն հավասար իրավունքներ:

(...)»:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ «*(...) 3. Կանայք և տղամարդիկ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից:*

4. Ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացվում է տղամարդու և կնոջ ամուսնական դաշինքի կամավորության (...) սկզբունքներին համապատասխան:

5. Արգելվում է ամուսնանալիս և ընտանեկան հարաբերություններում սոցիալական, ռասայական, ազգային, լեզվական կամ կրոնական պատկանելության հատկանիշներով քաղաքացիների իրավունքների որևէ սահմանափակում:

(...)»:

ՄԱԿ-ի 1948 թվականի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացող երկու կողմերի ազատ ու լիակատար համաձայնության դեպքում*»:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի 1979 թվականի կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է. «*Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցառումները.*

(ա) փոխելու տղամարդկանց ու կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելները՝ նախապաշարմունքների ու սովորույթների և բռնությանը պայմանավորված վերացմանը հասնելու նպատակով, որոնք հիմնված են այս կամ այն սեռի ստորադասության կամ առավելության, կամ տղամարդկանց ու կանանց ստերեոտիպային դերի գաղափարի վրա (...)»:

Նույն կոնվենցիայի 16-րդ հոդվածի համաձայն՝ «1. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունն ամուսնությանն ու ընտանեկան հարաբերություններին վերաբերող բոլոր հարցերում և, մասնավորապես, տղամարդկանց ու կանանց հավասարության հիման վրա ապահովում են.

(ա) ամուսնության միևնույն իրավունքը,

(բ) ամուսնու ազատ ընտրության և միայն իր ազատ ու լիակատար համաձայնությամբ ամուսնանալու միևնույն իրավունքը,

(գ) ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս միևնույն իրավունքներն ու պարտականությունները (...):»:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Բռնի ամուսնությունների և երեխաների ամուսնությունների մասին» 2005 թվականի թիվ 1468 բանաձևի 3-6-րդ կետերում նշված է. «Վրդովմունք է առաջացնում այն փաստը, որ առկա են իշխանություններ, որոնք գաղթական համայնքների մշակույթի և ավանդույթների նկատմամբ հարգանքի քողի լույսի ներքո հանդուրժողականություն են ցուցաբերում բռնի ամուսնությունների և երեխաների ամուսնությունների նկատմամբ՝ չնայած նրան, որ վերջիններս խախտում են յուրաքանչյուր գոհի հիմնարար իրավունքները: Վեհաժողովը բռնի ամուսնությունը սահմանում է որպես երկու անձանց միություն, որոնցից առնվազն մեկը չի տվել ամուսնանալու՝ իր լիարժեք և ազատ համաձայնությունը: Հաշվի առնելով այն, որ բռնի ամուսնությունը խախտում է անհատի հիմնարար իրավունքները՝ այն որևէ կերպ չի կարող արդարացված համարվել: Վեհաժողովը ընդգծում է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի՝ 1954 թվականի դեկտեմբերի 17-ի 843 (IX) բանաձևի կարևորությունը, որով հայտարարվել է, որ որոշ սովորույթները, ամուսնությանն ու ընտանիքին վերաբերող հնացած օրենքները և պրակտիկան անհամատեղելի են ՄԱԿ-ի կանոնադրությունում և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված սկզբունքներին:

17.2. Ներպետական օրենսդրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերում և այլ միջազգային փաստաթղթերում իրենց ամրագրումն ստացած վերոգրյալ դրույթների համադրված վերլուծության հիման վրա Վճարելի դատարանը փաստում է, որ ամուսնությունն ընտանիք կազմելու նպատակով տղամարդու ու կնոջ կամավոր միություն է: Կինն իր կամքի ազատ արտահայտությամբ պետք է ընտրի ամուսին և կազմի ընտանիք, ընդ որում, սույն հարցում արգելվում է սոցիալական, ռասայական, ազգային, լեզվական կամ կրոնական պատկանելության հատկանիշներով իրավունքների որևէ սահմանափակում: Ամուսնական դաշինք կազմողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Այլ խոսքով՝ ամուսնանալիս ամուսնացողներից յուրաքանչյուրը պետք է դրսևորի գիտակցված ու մտածված ցանկություն, համաձայնությունը պետք է տրված

լինի ազատ և անկախ՝ առանց սպառնալիքի, բռնության կամ հարկադրանքի ազդեցության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մարդուն առևանգելու հանցավոր արարքը, որը կատարվում է ամուսնանալուն հարկադրելու նպատակով, ի թիվս այլոց, ոտնձգում է ժողովրդավարական հասարակությունում բարձր արժեք ներկայացնող այնպիսի հասարակական հարաբերությունների դեմ, ինչպիսիք են՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, անձի՝ իր կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու, ամուսին ընտրելու իրավունքը, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը և այլն: Ուստի հաշվի առնելով սույն իրավահարաբերությունների բնույթն ու կարևորությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անձի՝ իր կամքի ազատ արտահայտությամբ ամուսին ընտրելու, ամուսնանալու իրավունքը սահմանափակելու նպատակով կատարված առևանգումը վկայում է կատարված հանցագործության հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին:

Միևնույն ժամանակ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն հանգամանքը չի կարող ինքնին պայման դիտարկվել նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելն անպատակահարմար ճանաչելու համար. նշյալ հարցերը լուծելիս դատարանների եզրահանգումը յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնված լինի, ի թիվս այլ հանգամանքների, քննարկվող հանցավոր արարքի և հանցավորի անձի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող բոլոր գործոնների ամբողջական գնահատման վրա: Ընդ որում, նշանակություն կարող են ունենալ այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ մինչ կատարված հանցանքը տուժողի և հանցավորի բարիդրացիական փոխհարաբերությունները, հանցավորի նկատմամբ տուժողի դրական վերաբերմունքը, կատարված հանցագործությունից հետո տուժողի և ամբաստանյալի միջև ձևավորված հարաբերությունների բնույթը և այլն:

18. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս հանցավոր արարքի և հանցավորի անձի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող, ի թիվս այլոց, սույն որոշմամբ մատնանշված գործոնների համադրված վերլուծության և իրենց ամբողջության մեջ գնահատման հիման վրա է միայն հնարավոր ճիշտ պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին, հետևաբար նաև նշանակել համաչափ պատիժ և լուծել պատիժը կրելու նպատակահարմարության հարցը:

19. Սույն գործի նյութերից երևում է, որ Ռ-ոստամ Բրոյանին, Ա.Հսոյանին, Ռ.Միրզոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ

նրանք, տեղեկանալով, որ Ռոբերտ Բրոյանը որոշել է առևանգելու միջոցով ամուսնանալ Ռյա-Թագա գյուղի բնակչուհի Գ.Մոյսյանի հետ, համաձայնել են առևանգման հարցում օգնել վերջինիս՝ հաստատապես իմանալով, որ Գ.Մոյսյանն անչափահաս է: Նախնական համաձայնության գալով և միմյանց հետ պայմանավորվելով՝ 2015 թվականի հունվարի 25-ին՝ ժամը 20-ի սահմաններում, գնացել են Ռ.Մոյսյանի բնակարան: Ռոստամ Բրոյանը, օգտվելով այն հանգամանքից, որ Գ.Մոյսյանը գտնվել է առանձին սենյակում, իսկ տան անդամները՝ խոհանոցում, դրսի կողմից ծածկել է խոհանոցի դուռը և ձեռքով պահել բռնակը, որից հետո Ռ.Միրզոյանը և Ա.Հսոյանը Գ.Մոյսյանի նկատմամբ բռնություն գործադրելով՝ նրան դուրս են բերել այդտեղից: Ազիզ Բրոյանը բռնել է Գ.Մոյսյանի անչափահաս եղբայր Սաշա Մոյսյանին, ով բռնել է Ռ.Միրզոյանի ոտքից և փորձել է թույլ չտալ, որ Գ.Մոյսյանին առևանգեն: Գրանից հետո Ռոստամ Բրոյանը դուրս է եկել տնից և բռնակից քաշելու միջոցով փակել դրսի դուռը, իսկ Ազիզ Բրոյանը բռնել է Սաշա Մոյսյանին: Այդ ընթացքում Ա.Հսոյանը Ռ.Միրզոյանի հետ միասին Գ.Մոյսյանին տեղափոխել են տնից մինչև ճանապարհ, նրա կամքին հակառակ վերջինիս նստեցրել Ռոստամ Բրոյանի վարած ավտոմեքենան և այդ կերպ՝ բացահայտ առևանգել (տե՛ս սույն որոշման 5-5.1.-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալներ Ռոստամ Բրոյանին, Ա.Հսոյանին և Ռ.Միրզոյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված հանցավոր արարքների կատարման մեջ և նշանակելով ազատագրկման ձևով պատիժ՝ 4 տարի ժամկետով, փաստել է, որ գործի հանգամանքների, կատարված հանցագործության բնույթի և վտանգավորության աստիճանի, ՀՀ իրավական համակարգում հանցագործությամբ խախտված հասարակական հարաբերությունների սոցիալական և իրավական նշանակության պայմաններում նշանակվելիք չորս տարի ժամկետով պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելն ամբաստանյալների նկատմամբ կլինի անհամաչափ մեղմ, և այդ կերպ հնարավոր չի լինի ապահովել պատժի նպատակների իրականացումը (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, ստուգելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, այն թողել է անփոփոխ՝ փաստելով, որ վերջինս եկել է ճիշտ եզրահանգման առ այն, որ ամբաստանյալների ուղղվելը հնարավոր չէ առանց պատիժը կրելու (տե՛ս սույն որոշման 4-րդ և 7-րդ կետերը):

20. Սույն որոշման նախորդ, ինչպես նաև 5-7-րդ կետերում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով 16-18-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները, գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ գնահատման ենթարկելով ամբաստանյալներին մեղսագրված արարքների հանրային վտանգավորության աստիճանի վրա

ազդող գործոնները, հիմնավորված եզրահանգման են եկել առ այն, որ կատարված հանցավոր արարքի հանրային վտանգավորության աստիճանը բարձրացնում են, ի թիվս այլոց, այն հանգամանքները, որ՝

- հանցանքը կատարվել է բռնություն գործադրելու եղանակով,
- հանցանքը կատարվել է բնակարան մուտք գործելու միջոցով,
- ամբաստանյալների արարքում առկա են հանցագործությունը ուրակյալ դարձնող մեկից ավելի հանգամանքներ, այն է՝ հանցանքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ և անչափահասի նկատմամբ կատարելը,

- հանցանքը կատարվել է ամուսնանալուն հարկադրելու նպատակով,

- հանցանքը կատարելիս ամբաստանյալները գործել են առավել ակտիվ և հանդուգն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից հավասարապես հաշվի են առնվել նաև ամբաստանյալների պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և նրանց անձը բնութագրող հանգամանքները, մասնավորապես, ի թիվս այլոց, այն, որ Ռ.Բրոյանի խնամքին են գտնվում կինը և չորս անչափահաս երեխաները, Ռ.Միրզոյանի խնամքին են գտնվում կինը և երեք անչափահաս երեխաները, Ա.Հսոյանի խնամքին են գտնվում կինը և չորս անչափահաս երեխաները, ամբաստանյալները բնութագրվում են դրականորեն:

20.1. Ուստի հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալների նկատմամբ պատիժ նշանակելիս, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցը որոշելիս ստորադաս դատարանները, համադրված վերլուծության և իրենց ամբողջության մեջ պատշաճ գնահատման ենթարկելով սույն գործի փաստական տվյալները, ամբաստանյալներին մեղսագրված արարքների բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, նրանցից յուրաքանչյուրի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող, ինչպես նաև անձը բնութագրող հանգամանքները, եկել են հիմնավորված հետևության, որ ամբաստանյալների ուղղվելը հնարավոր չէ առանց պատիժը կրելու, այսինքն՝ նրանց նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով հնարավոր չէ հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին: Այլ կերպ՝ ամբաստանյալներ Ռ.Բրոյանի, Ա.Հսոյանի, Ռ.Միրզոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր են:

21. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 10-րդ կետում բարձրացրած փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են, քանի որ սույն գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս կատարել է իր հետազոտության առարկայի շրջանակի մեջ

ներառվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքների ուսումնասիրություն՝ առաջնորդվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով և պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Զննարկման առարկա դարձնելով բողոքաբերի՝ սույն որոշման 10.1.-րդ կետում բարձրացրած փաստարկը՝ Վճռաբեկ դատարանն այն անհիմն է համարում՝ արձանագրելով, որ համապատասխան հանգամանքներն Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել ոչ թե որպես ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված՝ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ, այլ դրանց հիման վրա գնահատման է ենթարկել ամբաստանյալներին մեղսագրված արարքների հանրային վտանգավորության աստիճանը՝ հիմնավոր կերպով գալով այն եզրահանգման, որ հանցագործությունը որակյալ դարձնող երկու հանգամանքների առկայությունը վկայում է կատարված հանցավոր արարքի և ամբաստանյալների անձի հանրային վտանգավորության աստիճանի բարձր լինելու մասին:

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 10.2.-րդ կետում բարձրացրած փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև դրանց կապակցությամբ բողոքաբերի դատողությունները հիմնավոր են, սակայն դա չի ազդել գործի ելքի վրա, ուստի չի կարող բավարար հիմք համարվել ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը բեկանելու համար:

Ինչ վերաբերում է բողոքի հեղինակի՝ սույն որոշման 11-րդ կետում բարձրացրած փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն որոշման 17.1.-17.2.-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները, արձանագրում է, որ սույն գործով հանցագործությունը կատարելու նպատակը որպես ազգային սովորույթ ներկայացնելը չի կարող վկայել կատարված հանցավոր արարքի նվազ վտանգավորության մասին, հետևաբար բողոքաբերի փաստարկներն այդ մասով հիմնավոր չեն:

Անդրադառնալով բողոքաբերի մյուս փաստարկներին (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դրանց կապակցությամբ ստորադաս դատարանները թույլ չեն տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող որևէ դատական սխալ:

22. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալներ Ռոստամ Բրոյանի, Ա.Հտյանի, Ռ.Միրզոյանի նկատմամբ չկիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Ուստի պաշտպանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշումը թողնել օրինա-

կան ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալներ Ռոստամ Ահմադի Բրոյանի, Ահմադ Վաքիլի Հսոյանի և Ռոմիկ Վաքիլի Միրզոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

54.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԳ-1/0046/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ
դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպաններ՝

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ս.ԱԶԻԶՅԱՆԻ
Ա.ՍԱՀԱԿՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշումը նոր երևան եկած հանգամանքով վերանայելու՝ դատապարտյալ Հովհաննես Ժորայի Չոլախյանի պաշտպան Ս.Ազիզյանի և դատապարտյալ Արթուր Գևորգի Պետրոսյանի պաշտպան Ա.Սահակյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հունվարի 30-ին ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկում առանձնապես խոշոր չափի թմրամիջոց քրեակատարողական հիմնարկ ներմետելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, 34-268-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 86150313 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի մայիսի 2-ի որոշմամբ Արթուր Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի մայիսի 3-ի որոշմամբ Հովհաննես Չոլախյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

2013 թվականի մայիսի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ի դատավճռով Հ.Չոլախյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում 11 տարի 3 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կարգով՝ նշանակված պատժին մասնակիորեն գումարվել և հաշվակցվել է Երևանի Աջափնյակ և Գավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 26-ի դատավճռով նշանակված 3 տարի 4 ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի չկրած մասը, և վերջնական պատիժ է սահմանվել՝ ազատազրկում 12 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Ա.Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով, և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում 4 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կարգով՝ նշանակված պատժին մասնակիորեն գումարվել և հաշվակցվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 10-ի դատավճռով նշանակված՝ 15 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատժի չկրած մասը, և վերջնական պատիժ է սահմանվել՝ ազատազրկում 17 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Գատապարտյալների պաշտպանների վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հունվարի 13-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերոգրյալ որոշման դեմ դատապարտյալների պաշտպանների վճարելի բողոքները վարույթ ընդունելը մերժվել է Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշմամբ:

5. Հովհաննես Չոլախյանի հաղորդման հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի, 314-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2015 թվականի հունիսի 10-ին հարուցվել է թիվ 62215015 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ Սամվել Նորիկի Ալոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (դատական գործ թիվ ԿԳ/0007/01/16), կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2016 թվականի հունիսի 9-ի դատավճռով Ս.Ալոյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել տուգանքի՝ 200.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ՝ Ս.Ալոյանն ազատվել է պատժից:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 9-ի դատավճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

6. Դատապարտյալ Հ.Չոլախյանի պաշտպան Ս.Ազիզյանը և դատապարտյալ Ա.Պետրոսյանի պաշտպան Ա.Սահակյանը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոքներ են ներկայացրել՝ որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչելով թիվ ԿԳ/0007/01/16 գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 9-ի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստերը:

Վճարելի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 8-ի և դեկտեմբերի 9-ի որոշումներով նոր երևան եկած հանգամանքի հիմքով հարուցվել է Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշման վերանայման վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Արթուր Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) 2011 թվականին Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատապարտվելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 34-266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատագրվման 3 տարի ժամկետով և նշված պատիժը ՀՀ ԱՆ «Սևան» ԲԿՀ-ում կրելու ընթացքում, առանց իրացնելու նպատակի, իր կողմ

միջ օգտագործելու համար 2013 թվականի հունվարին, լույս 4-ի գիշերը՝ ժամը 00:10-ի սահմաններում, պայմանավորվածությամբ համաձայն ձեռք է բերել և պահել Երևան քաղաքի բնակիչ Հովհաննես Չոլախյանի կողմից ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ի տարածք ներմտում կատարելու միջոցով իրացված առանձնապես խոշոր չափի՝ 0.686 գրամ քաշով «Հերոին» տեսակի թմրամիջոց և խոշոր չափի՝ 0.57 գրամ քաշով «ամֆետամին» տեսակի թմրամիջոց: Թմրամիջոցները ձեռք բերելուց և իր մոտ պահելուց հետո, նույն պահին նկատելով մոտեցող ՔԿՀ-ի աշխատակիցներին, իր մոտ գտնվող առանձնապես խոշոր չափի «հերոին» տեսակի թմրամիջոցը և խոշոր չափի՝ 0.57 գրամ քաշով «ամֆետամին» տեսակի թմրամիջոցը տվել է տարածքում հանդիպած, նույն հիմնարկության դատապարտյալ Սերգեյ Անդրեասյանին՝ հայտնելով, թե իբր պարտքի գումար է, այն պահելու և իրեն վերադարձնելու համար, այնուհետև հեռացել է նրա մոտից: Նույն պահին ներմտումը նկատած ՔԿՀ աշխատակիցները ՔԿՀ-ի տարածքից բերման են ենթարկել դատապարտյալ Սերգեյ Անդրեասյանին, և վերջինիս մոտից Ա. Պետրոսյանի կողմից տված թմրամիջոցները հայտնաբերվել և առգրավվել են (...):» (տե՛ս, քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 302-306):

7.1. Հովհաննես Չոլախյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) իրացնելու նպատակով, գործով չչարզված հանգամանքներում և ժամանակ, ապօրինի ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափի՝ 0.686 գրամ քաշով «հերոին» տեսակի թմրամիջոց և խոշոր չափի՝ 0.57 գրամ քաշով «ամֆետամին» տեսակի թմրամիջոց, որոնք 2013 թվականի հունվարի լույս 4-ի գիշերը իրացնելու նպատակով փոխադրել է ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ի մոտ և նույն ՔԿՀ-ի դատապարտյալ Արթուր Պետրոսյանին իրացնելու համար, վերջինիս հետ ունենալով նախնական պայմանավորվածություն, 2013 թվականի հունվարի 4-ին՝ ժամը 00:10-ի սահմաններում, «Սևան» ՔԿՀ-ի թիվ 4 պահակակետի մոտից՝ պարսպի արտաքին կողմից, կարտոֆիլի մեջ դրված, պոլիէթիլենային տոպրակով և կաշուն ժապավենով փաթեթավորված, առանձնապես խոշոր չափի՝ 0.686 գրամ քաշով «հերոին» տեսակի թմրամիջոցը և խոշոր չափի՝ 0.57 գրամ «ամֆետամին» տեսակի թմրամիջոցը իրացրել, ներմտել է ՔԿՀ-ի տարածք, որին սպասելուց է եղել դատապարտյալ Արթուր Պետրոսյանը: Փաթեթին ամրացված լուսավորող կրակայրիչով կողմնորոշվելով՝ Ա. Պետրոսյանը թմրամիջոցը վերցրել է և ապօրինի պահել իր մոտ՝ անձնական օգտագործման համար (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 302-306):

8. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռով հաստատված է համարել հետևյալը. «(...)

1) Հովհաննես Չոլախյանն ապօրինի ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափի՝ 0.686 գրամ քաշով «հերոին» տեսակի թմրամիջոց և խոշոր չափի՝ 0.57 գրամ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց,

2) Հովհաննես Չոլախյանը վերը նշված թմրամիջոցներն Արթուր Պետրոսյանին իրացնելու նպատակով 2013թ. հունվարի լույս 4-ի գիշերը մեկնել է ՀՀ ԱՆ «Սևան» ԶԿՀ և պայմանավորվածություն ունենալով Ա. Պետրոսյանի հետ, ժամը 00:10-ի սահմաններում ՀՀ ՀՀ ԱՆ «Սևան» ԶԿՀ թիվ 4 պահակակետի մոտից, կարտոֆիլի մեջ դրված առանձնապես խոշոր չափի՝ 0.686 գրամ քաշով «հերոին» տեսակի թմրամիջոցը և խոշոր չափի՝ 0.57 գրամ «ամֆետամին» տեսակի թմրամիջոցը ներկենտել է ԶԿՀ-ի տարածք՝ այն իրացրել է Արթուր Պետրոսյանին,

3) Արթուր Պետրոսյանը, նախնական համաձայնության գալով Հովհաննես Չոլախյանի հետ, իր կողմից օգտագործելու նպատակով, 2013թ. հունվարի լույս 4-ի գիշերը, ժամը 00:10-ի սահմաններում, ձեռք է բերել և իր մոտ պահել Հովհաննես Չոլախյանի կողմից ՀՀ ԱՆ «Սևան» ԶԿՀ-ի տարածք ներկենտած առանձնապես խոշոր չափի՝ 0.686 գրամ քաշով «հերոին» տեսակի թմրամիջոց և խոշոր չափի՝ 0.57 գրամ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց,

4) Արթուր Պետրոսյանը թմրամիջոցը ձեռք բերելուց հետո, նկատելով իրեն մոտեցող ԶԿՀ-ի աշխատակիցներին, ձեռք բերված թմրամիջոցը տվել է նույն հիմնարկի դատապարտյալ Սերգեյ Անդրեասյանին՝ ասելով, թե իբր պարտքի գումար է, և հեռացել:

5) ՀՀ ԱՆ «Սևան» ԶԿՀ-ի աշխատակիցների կողմից Սերգեյ Անդրեասյանին բերման ենթարկելուց հետո նրա մոտից հայտնաբերվել է Արթուր Պետրոսյանի կողմից տրված՝ առանձնապես խոշոր չափի՝ 0.686 գրամ քաշով «հերոին» տեսակի թմրամիջոց և խոշոր չափի՝ 0.57 գրամ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց:

Անդրադառնալով ամբաստանյալ Հովհաննես Չոլախյանի շահերի պաշտպան Ս. Ազիզյանի միջնորդությանը՝ փաստաթղթաբանական փորձաքննության եզրակացությունը, Հ. Չոլախյանին անձնական խուզարկության ենթարկելու և հայտնաբերված փաթեթը զննելու մասին արձանագրությունները, որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու և դրանց՝ որպես ապացույցների անթույլատրելիությունը հաստատելու պահաջի մասին, [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ միջնորդությունը հիմնավորված չէ և ենթակա է մերժման, քանի որ փաստաթղթաբանական փորձաքննության եզրակացությունը, Հ. Չոլախյանին անձնական խուզարկության ենթարկելու և հայտնաբերված փաթեթը զննելու մասին արձանագրությունները կազմվել են հիշյալ գործողությունների վերաբերյալ քրեադատավարական օրենսգրքով նախատեսված կարգով, պահպանվել է նաև փորձաքննություն նշանակելու որոշման և եզրակացության կազմման օրենքով սահմանված կարգը: Ավելին՝ դատարանը հարցաքննել է վերը նշված զննություններին մասնակցած անձանց՝ ընթերականերին, ովքեր, դատարանում հետազոտելով իրենց մասնակցությամբ կատարված զննության, նմուշներ ստանալու, անձնական խուզարկության վերաբերյալ արձանագրություններում առկա ստորագրությունները, հայտարարել

են, որ այդ ստորագրություններն իրենցն են» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 60-73):

8.1. Հ.Չոլախյանի և Ա.Պետրոսյանի դատապարտման համար Առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել, ի թիվս այլնի, ներկենտված փաթեթը հայտնաբերելու և զննություն կատարելու, Հովհաննես Չոլախյանին բերման ենթարկելու և անձնական խուզարկության ենթարկելու 2013 թվականի հունվարի 4-ի արձանագրությունները, իրեղեն ապացույցներ ճանաչված՝ 0.57 գրամ քանակական պարունակությամբ ամֆետամին տեսակի թմրամիջոցը, 0.686 գրամ քաշով հերոին տեսակի թմրամիջոցը, «Դավիդով» տեսակի ծխախոտի տուփը և փայլաթուղթը, դատաքիմիական փորձաքննության թիվ 13-0054 եզրակացությունը, դատափաստաթղթաբանական փորձաքննության թիվ 10321301 եզրակացությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 60-73):

9. Թիվ ԿԳ/0007/01/16 գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 9-ի դատավճռով Սամվել Ալոյանը մեղավոր է ճանաչվել իրեն առաջադրված մեղադրանքում առ այն, որ «(...) 2008 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2014 թվականի հոկտեմբերի 17-ն ընկած ժամանակահատվածում, աշխատելով ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկում որպես գլխավոր մասնագետ՝ հետաքննիչ, ունենալով արդարադատության մայրի կոչում, մշտապես իրականացնելով իշխանության ներկայացուցչի լիազորություններ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 9-րդ կետերի, 180-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանալով հանցանքի կատարման մեջ կասկածվող անձանց բերման, զննության և խուզարկության ենթարկելու, հետազոտման համար նմուշներ վերցնելու լիազորություններով օժտված պաշտոնատար անձ, 2013 թվականի հունվարի 4-ին մեկ միասնական դիտավորությամբ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, կատարել է պաշտոնական կեղծիք՝ կազմել և հանձնել է պաշտոնական չորս փաստաթուղթ՝ դրանցում մտցնելով ակհայտ կեղծ տեղեկություններ:

(...) Սամվել Ալոյանը 2013 թվականի հունվարի 4-ին ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի պետի հանձնարարությամբ հիմնարկում թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ դեպքի առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում նույն օրը՝ ժամը 02.00-ի սահմաններում, ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի վարչական շենքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի պահանջների խախտմամբ՝ առանց ընթերակաների մասնակցության, նույն հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ Մուխաել Վարդանյանի և պատասխանատու հերթապահ Սամվել Պեպանյանի մասնակցությամբ զննության է ենթարկել հիմնարկ ներկենտված փաթեթը, որի վերաբերյալ 04.01.2013 թվականին կազմել է պաշտոնական փաստաթուղթ՝ հանդիսացող՝ քրեակատարողական հիմնարկում հայտնաբերված փաթեթի զննության մասին

արձանագրությունը, որից հետո, կրկին ընթերակաների բացակայության պայմաններում, Մ. Վարդանյանի և նույն հիմնարկի օպերատիվ բաժնի պետ Յուլյա Սերյոժայի Խաչատրյանի մասնակցությամբ անձնական խուզարկության է ենթարկել թմրամիջոց ներմուծելու կասկածանքով բերման ենթարկված Հովհաննես Չոլախյանին, որի վերաբերյալ 04.01.2013 թվականին կազմել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող՝ ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկում Հովհաննես Չոլախյանին անձնական խուզարկության ենթարկելու մասին արձանագրություն, որոնցում բաց է թողել ընթերակաների մասին նշումները՝ արձանագրություններն ստորագրման ներկայացնելով միայն մասնակիցներին:

Այնուհետև, Սամվել Ալոյանը դարձյալ ընթերակաների բացակայության պայմաններում նույն օրը՝ ժամը 02.30-ի սահմաններում, Հովհաննես Չոլախյանից ստացել է մագի և ձեռքի եղունգների նմուշներ, որի վերաբերյալ կազմել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող՝ 04.01.2013 թվականին Հ.Չոլախյանից փորձաքննության նմուշ վերցնելու և ստանալու մասին երկու արձանագրությունները, որոնք ստորագրման է ներկայացրել միայն վերջինիս՝ դրանում բաց թողնելով ընթերակաների վերաբերյալ նշումները:

Մ.Ալոյանը նույն օրը՝ արդեն ժամը 05.00-ի սահմաններում, հիմնարկի վարչական շենքում գտնվող իր աշխատասենյակում, հայտնաբերված փաթեթի զննության, անձնական խուզարկության ենթարկելու, փորձաքննության նմուշ ստանալու և փորձաքննության նմուշ վերցնելու արձանագրություններում իր կողմից թույլ տրված խախտման՝ առանց ընթերակաների մասնակցության գործողությունները կատարած լինելու հանգամանքը թաքցնելու, դրանք օրենքի պահանջներին համապատասխան կատարած լինելու պատրանք ստեղծելու անձնական դրդումներով, մեկ միասնական դիտավորությամբ հիշյալ արձանագրություններում մտցրել է նշված գործողություններն՝ իր ընթերականեր Բաջիկ Գրիգորյանի և Էլզա Նիկոլյանի մասնակցությամբ կատարված լինելու վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող ակնհայտ կեղծ տեղեկություններ, լրացրել է նրանց անձնական տվյալները, կեղծումներ է կատարել՝ ստորագրելով ընթերակաների փոխարեն և հանձնել է. նյութերին կցելով՝ հարուցել է թիվ 86150313 քրեական գործը և ըստ ենթակայության ուղարկել ՀՀ ոստիկանության նախկին քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնի» (տե՛ս քրեական գործ թիվ 62215015, հատոր 2-րդ, թերթեր 195-204):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

10. Բողոքների հեղինակները նշել են, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 9-ի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստերը հիմք են Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշումը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայելու համար:

Ի հիմնավորումն իրենց փաստարկների՝ բողոքներ բերած անձինք վկայակոչել են վերոնշյալ դատավճռով հաստատված փաստերն առ այն, որ Սամվել Ալոյանը, աշխատելով ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկում որպես գլխավոր մասնագետ՝ հետաքննիչ, 2013 թվականի հունվարի 4-ին մեկ միասնական դիտավորությամբ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, կատարել է պաշտոնական կեղծիք՝ կազմել և հանձնել է պաշտոնական չորս փաստաթուղթ՝ դրանցում մտցնելով ակնհայտ կեղծ տեղեկություններ: Արդյունքում բողոքաբերները գտել են, որ Սամվել Ալոյանի կողմից կեղծված փաստաթղթերը՝ քրեակատարողական հիմնարկում հայտնաբերված փաթեթի զննության, Հովհաննես Չոլախյանին անձնական խուզարկության ենթարկելու, նրանից փորձաքննության նմուշներ ստանալու արձանագրությունները, անթույլատրելի ապացույցներ են, իսկ դրանց հիման վրա կատարված դատաքիմիական ու դատափաստաթղթաբանական փորձաքննությունների եզրակացությունները, ինչպես նաև իրեղեն ապացույցներ ճանաչված առարկաները չեն կարող դրվել դատապարտյալների մեղադրանքի հիմքում, քանի որ գտնվում են անթույլատրելի ապացույցների հետ պատճառահետևանքային կապի մեջ:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ դատապարտյալների պաշտպանները խնդրել են հարուցել Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշման վերանայման վարույթ, վերանայել վերոնշյալ որոշումը, ինչպես նաև բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ի դատավճիռն ու Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հունվարի 13-ի որոշումը: Դատապարտյալ Հովհաննես Չոլախյանի պաշտպան Ս.Ազիզյանը խնդրել է Հ.Չոլախյանի նկատմամբ գործի վարույթը կարճել, իսկ դատապարտյալ Արթուր Պետրոսյանի պաշտպան Ա.Սահակյանը խնդրել է ճանաչել և հռչակել Ա.Պետրոսյանի անմեղությունն իրեն առաջադրված մեղադրանքում:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. թիվ ԿԳ-0007/01/16 գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 9-ի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստերն արդյո՞ք նոր երևան եկած հանգամանք են Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշումը վերանայելու համար:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար*

նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»

Ըստրաժն ընդդեմ Ալբանիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ «(...) Կոնվենցիայի նախարանի լույսի ներքո իրավունքի գերակայությունը պայմանավորվող պետությունների ընդհանուր նվաճումն է, որի հիմնարար կողմերից է իրավական որոշակիության սկզբունքը, որը պահանջում է, ի թիվս այլնի, որ եթե դատարանները վերջնականապես որոշել են որևէ հարց, նրանց որոշումը չպետք է կասկածի տակ դրվի (...):»

(...) [Ի]րավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով (...) կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ (...)» (տե՛ս *Xheraj v. Albania* գործով 2008 թվականի հուլիսի 29-ի վճռի 51-52-րդ կետերը):

Մեկ այլ՝ *Ռադչիկովն ընդդեմ Ռուսաստանի* գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով իրավական որոշակիության սկզբունքի կարևորությունը, նշել է, որ «(...) քրեական գործերով վերանայման առանձնահատուկ համատեքստում իրավական որոշակիության սկզբունքի պահանջը բացարձակ չէ, և այս սկզբունքից շեղվող ցանկացած որոշում պետք է գնահատվի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետի լույսի ներքո, որն ուղղակիորեն թույլատրում է պետությանը նոր փաստերի կամ նախորդ վարույթում տեղ գտած՝ գործի ելքի վրա ազդող հիմնարար թերության հիմքով նորոգել գործի վարույթը» (*Radchikov v. Russia* գործով 2007 թվականի մայիսի 24-ի վճռի 42-րդ կետ):

14. Անդրադառնալով իրավական որոշակիության և կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքներին՝ Վճռաբեկ դատարանը *Տ.Սեֆիլյանի* գործով որոշմամբ փաստել է, որ «(...) այնպիսի բացառիկ դեպքերում, երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա, անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակը գերակայում է իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքի և կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (*non bis in idem*) հիմնարար պահանջի (Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին կետ) նկատմամբ:

ՀՀ օրենսդիրը, ելնելով Եվրոպական կոնվենցիայի վերոհիշյալ դրույթներից, դրանցում նշված չափանիշներին և պայմաններին համա-

պատասխան նախատեսել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու դատավարական ընթացակարգ» (նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման առանձնահատկությունների վերաբերյալ տե՛ս *Ժիրայր Միմոնի Սեֆիլյանի* գործով Վճարելի դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշումը):

15. Վերահաստատելով նախորդ կետում վկայակոչված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ մարդու իրավունքների պաշտպանության ապահովման ոլորտում առանձնակի նշանակություն ունի խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների, օրինական շահերի, արժանապատվության պաշտպանությունը, ինչի ապահովման և երաշխավորման արդյունավետ միջոցների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում նոր երևան եկած հանգամանքով բացառիկ վերանայման ինստիտուտը: ՀՀ օրենսդիրը, ելնելով Եվրոպական կոնվենցիայի վերոհիշյալ դրույթներից, դրանցում նշված չափանիշերին և պայմաններին համապատասխան նախատեսել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ի թիվս այլնի, նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու դատավարական ընթացակարգ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր երևան եկած (...) հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած (...) հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճարելի դատարանների դատական ակտերը՝ վճարելի դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են, եթե՝

1) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված է (...) իրեղեն սպացույցների, քննչական ու դատական գործողությունների արձանագրությունների և այլ փաստաթղթերի կեղծված լինելը, որոնք հանգեցրել են չհիմնավորված կամ անօրինական դատավճիռ կայացնելուն.

(...)

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են գործի քննությունը կատարող անձանց այնպիսի հանցավոր գործողություններ, որոնք հանգեցրել են դատարանի չհիմնավորված և անօրինական դատավճիռ (...) կայացնելուն (...):»:

Մեջբերված քրեադատավարական նորմերի վերլուծությունից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերը կարող են վերանայվել, ի թիվս այլնի, այն դեպքերում, երբ դա-

տարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվում է իրեղեն ապացույցների, քննչական ու դատական գործողությունների արձանագրությունների, այլ փաստաթղթերի կեղծված լինելը կամ գործի քննությունը կատարող անձանց կողմից այնպիսի հանցավոր գործողությունների կատարումը, որոնք հանգեցրել են չհիմնավորված կամ անօրինական դատավճիռ կայացնելուն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործի քննությունը կատարող անձանց հանցավոր գործողությունները համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի թե՛ 1-ին, թե՛ 3-րդ կետերով սահմանված հիմքերին (օրինակ՝ քննիչը կեղծել է որևէ քննչական գործողության արձանագրություն), համապատասխան հանգամանքը պետք է դիտարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի լույսի ներքո: Վերջին դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն, որ օրենսդիրը որոշակի սուբյեկտների կողմից հանցավոր գործողությունների կատարումը, որպիսին կարող է լինել նաև ապացույցի կամ այլ փաստաթղթի կեղծումը, նախատեսել է առանձին նորմով, իսկ հանրաճանաչ սկզբունքի համաձայն՝ «հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրի գործողությունը» (*lex specialis derogat legi generali*):

16. Գործի փաստերից երևում է, որ Արթուր Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրելու ընթացքում, առանց իրացնելու նպատակի, իր կողմից օգտագործելու համար Հովհաննես Չոլախյանի կողմից տվյալ քրեակատարողական հիմնարկի տարածք ներմտում կատարելու միջոցով իրացված առանձնապես խոշոր չափի հերոդին տեսակի թմրամիջոց և խոշոր չափի ամֆետամին տեսակի թմրամիջոց ապօրինի ձեռքբերելու և պահելու համար, իսկ Հովհաննես Չոլախյանին՝ իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափի հերոդին տեսակի թմրամիջոց և խոշոր չափի ամֆետամին տեսակի թմրամիջոց ապօրինի ձեռքբերելու, պահելու, ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի մոտ փոխադրելու և նույն հիմնարկի թիվ 4 պահակակետի մոտից՝ պարսպի արտաքին կողմից ներմտելու միջոցով իրացնելու համար (տե՛ս սույն որոշման 7-7.1-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը դատապարտյալներ Ա.Պետրոսյանին և Հ.Չոլախյանին մեղավոր է ճանաչել վերը նկարագրված արարքների կատարման համար (տե՛ս սույն որոշման 2-4-րդ և 8-րդ կետերը): Դատապարտյալներ Հ.Չոլախյանին և Ա.Պետրոսյանին մեղսագրված արարքներն Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, ի թիվս այլնի, ներմտված փաթեթը հայտնաբերելու և զննություն կատարելու, Հովհաննես Չոլախյանին բերման ենթարկելու և անձնական խուզարկության ենթարկելու՝ 2013 թվականի հունվարի 4-ի արձանագրությունների, դատաքիմիական փորձաքննության թիվ 13-0054 եզրակացության, դատափաստաթղթաբանական փորձաքննության թիվ 10321301 եզրակա-

ցության, ինչպես նաև իրեղեն ապացույց ճանաչված թմրամիջոցների, ծխախոտի տուփի և փայլաթղթի հիման վրա (տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը):

Գատապարտյալ Հ.Չոլախյանի հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործով ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի գլխավոր մասնագետ՝ հետաքննիչ Սամվել Ալոյանը մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ նա 2013 թվականի հունվարի 4-ին մեկ միասնական դիտավորությամբ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, կատարել է պաշտոնեական կեղծիք՝ կազմել և հանձնել է պաշտոնական չորս փաստաթուղթ՝ դրանցում մտցնելով ակհայտ կեղծ տեղեկություններ: Մասնավորապես, վերոնշյալ քրեակատարողական հիմնարկի պետի հանձնարարությամբ հիմնարկում թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ դեպքի առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում առանց ընթերականների մասնակցության, նույն հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ Մ.Վարդանյանի և պատասխանատու հերթապահ Ս.Պեպանյանի մասնակցությամբ զննության է ենթարկել հիմնարկ ներնետված փաթեթը, որի վերաբերյալ 04.01.2013 թվականին կազմել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող՝ քրեակատարողական հիմնարկում հայտնաբերված փաթեթի զննության մասին արձանագրությունը, որից հետո, կրկին ընթերականների բացակայության պայմաններում, Մ.Վարդանյանի և նույն հիմնարկի օպերատիվ բաժնի պետ Յ.Խաչատրյանի մասնակցությամբ անձնական խուզարկության է ենթարկել թմրամիջոց ներնետելու կասկածանքով բերման ենթարկված Հովհաննես Չոլախյանին, որի վերաբերյալ 04.01.2013 թվականին կազմել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող՝ ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկում Հովհաննես Չոլախյանին անձնական խուզարկության ենթարկելու մասին արձանագրություն, որոնցում բաց է թողել ընթերականների մասին նշումները՝ արձանագրությունները ստորագրման ներկայացնելով միայն մասնակիցներին: Այնուհետև, դարձյալ ընթերականների բացակայության պայմաններում Հովհաննես Չոլախյանից ստացել է մազի և ձեռքի եղունգների մուշներ, որի վերաբերյալ կազմել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող՝ 04.01.2013 թվականին Հ.Չոլախյանից փորձաքննության նմուշ վերցնելու և ստանալու մասին երկու արձանագրություններ, որոնք ստորագրման է ներկայացրել միայն վերջինիս՝ դրանում բաց թողնելով ընթերականների վերաբերյալ նշումները: Հայտնաբերված փաթեթի զննության, անձնական խուզարկության ենթարկելու, փորձաքննության նմուշ ստանալու և փորձաքննության նմուշ վերցնելու արձանագրություններում իր կողմից թույլ տրված խախտման՝ առանց ընթերականների մասնակցության գործողությունները կատարած լինելու հանգամանքը թաքցնելու, դրանք օրենքի պահանջներին համապատասխան կատարած լինելու պատրանք ստեղծելու անձնական դրդումներով, մեկ միասնական դիտավորությամբ հիշյալ ար-

ձանագրություններում մտցրել է նշված գործողությունները՝ իբր ընթերականեր Զ.Գրիգորյանի և Է.Նիկոլյանի մասնակցությամբ կատարված լիներու վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող ակնհայտ կեղծ տեղեկություններ, լրացրել է նրանց անձնական տվյալները, կեղծումներ է կատարել՝ ստորագրելով ընթերակաների փոխարեն, հարուցել է թիվ 86150313 քրեական գործը և ըստ ենթակայության ուղարկել ՀՀ ոստիկանության նախկին քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վերոնշյալ փաստերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԿԳ/0007/01/16 գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 9-ի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ Հովհաննես Չոլախյանի և Արթուր Պետրոսյանի վերաբերյալ գործի քննությունը կատարող հետաքննիչի կողմից կատարվել են հանցավոր գործողություններ, այն է՝ կեղծվել են քննչական գործողությունների արձանագրությունները:

Այլ խոսքով՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվել է, որ Հ.Չոլախյանի և Ա.Պետրոսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 6-ի դատավճռի հիմքում դրված մի շարք ապացույցներ, այն է՝ քրեակատարողական հիմնարկում հայտնաբերված փաթեթի զննության, Հ.Չոլախյանին անձնական խուզարկության, նրանից փորձաքննության նմուշներ ստանալու մասին արձանագրությունները, կեղծված են, ինչը կարող էր հանգեցնել չհիմնավորված և անօրինական դատավճիռ կայացնելուն:

17. Նախորդ կետում կատարված փաստական վերլուծության նկատմամբ կիրառելով սույն որոշման 13-15-րդ կետերում շարադրված նորմերը և իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԿԳ/0007/01/16 գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 9-ի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստերը նոր երևան եկած հանգամանք են Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշումը վերանայելու համար:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հովհաննես Չոլախյանի և Արթուր Պետրոսյանի վերաբերյալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ի դատավճիռն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հունվարի 13-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-

րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.3-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Հովհաննես Ժորայի Չոլախյանի և Արթուր Գևորգի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշումը վերանայել:

2. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ի դատավճիռն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հունվարի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Հովհաննես Ժորայի Չոլախյանի և Արթուր Գևորգի Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

55.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0061/01/15

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԳԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ՝
պաշտպան դատախազ
Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
Ա.ՇԱՀԲԱԶՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշման դեմ Սամվել Քյարամի Ավդոյանի պաշտպաններ Հունան Բաբայանի և Կարեն Հովհաննիսյանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Ա.Կարապետյանի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 62227514 քրեական գործը:

2015 թվականի ապրիլի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Կարապետյանը (այսուհետ նաև՝ Քննիչ) որոշում է կայացրել Սամվել Ավդոյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականաց-

նելու մասին՝ վերջինիս արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 315-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով:

2015 թվականի ապրիլի 9-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության ավագ դատախազ Ա.Շահբազյանը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու մասին վերոհիշյալ որոշումը վերացնելու մասին:

2. Բննիչի՝ 2015 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ Ս.Ավդոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի ապրիլի 27-ին Բննիչը որոշում է կայացրել թիվ 62227514 քրեական գործից մաս անջատելու, դրան թիվ 62209115 համարը շնորհելու, այն վարույթ ընդունելու և նախաքննության կատարմանը ձեռնամուխ լինելու մասին:

2015 թվականի մայիսի 11-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության ավագ դատախազ Ա.Շահբազյանը որոշում է կայացրել թիվ 62209115 քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան ուղարկելու մասին:

3. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) իր՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի դատավճռով ճանաչել և հռչակել է Ս.Ավդոյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդված 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ հանցակազմի բացակայության և սպացույցների անբավարարության պատճառաբանությամբ:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել գործով մեղադրող Ա.Շահբազյանը՝ խնդրելով այն բեկանել և փոփոխել, Ս.Ավդոյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդված 1-ին մասով և նրա նկատմամբ նշանակել համաչափ պատիժ:

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2016 թվականի մարտի 22-ին որոշում է կայացրել մեղադրողի բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի դատավճիռը բեկանելու և գործը նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության ուղարկելու մասին:

6. Ս.Ավդոյանի պաշտպաններ Հ.Բաբայանը և Կ.Հովհաննիսյանը բերել են վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ Ս.Ավդոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ «(...) նա, զբաղեցնելով ՀՀ ոստիկանության նախկին քննչական գլխավոր վարչության Արմավիրի մարզային քննչական բաժնի Վաղարշապատի քննչական բաժանմունքի ավագ քննիչի պաշտոնը, ունենալով ոստիկանության մայրրի հատուկ կոչում, լինելով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, անձնական այլ դրոշմներով կատարել է պաշտոնական կեղծիք՝ 2014 թվականի սեպտեմբերի 21-ին կազմել և հանձնել, շրջանառության մեջ է դրել պաշտոնական կեղծ փաստաթուղթ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 315-316):

8. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. «(...) Համակցության մեջ գնահատելով նախաքննությամբ ձեռք բերված և դատական քննությամբ հետազոտված ապացույցները, դատարանը, գտնում է, որ Ս.Ավդոյանի՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 314 հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը՝ հիմնավորված չէ, ավելին, նրա արարքում բացակայում է նշված հոդվածի հանցակազմը, մասնավորապես դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող սուբյեկտիվ կողմը:

(...)

Քրեական գործի քննությամբ ձեռք բերված և դատական քննությամբ հետազոտված որևէ ապացույցով չի հիմնավորվել այն, որ Ս.Ավդոյանին վերագրվող որևէ գործողություն նա կատարել է անձնական, շահադիտական դրոշմներով, կամ այլ նպատակով կամ խմբային շահերից ելնելով, ինչը հանդիսանում է պարտադիր և միաժամանակյա պայման՝ տեղի ունեցած հանցագործությունը հիմնավորված համարելու և փաստելու համար:

(...)

(...) [Գ]ատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ս.Ավդոյանի մեղքը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 314 հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում հիմնավորված չէ, վերջինիս արարքում բացակայում է հանցակազմը, գործի ապացույցներն անբավարար են՝ մեղադրական դատական ակտ կայացնելու համար, նա ենթակա է արդարացման (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 150-157):

9. Վերաքննիչ դատարանն իր որոշման շրջանակներում արձանագրել է. «(...) [Վ]երլուծության ու գնահատության ենթարկելով ամբաստանյալ Ս.Ավդոյանի ցուցմունքները, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանք համադրելով նախաքննությամբ ձեռք բերված և դատավճռի հիմքում դրված այլ ապացույցների հետ, [Վերաքննիչ դատարանը] հանգում է այն հետևության, որ սույն գործով ձեռք բերված ապացույցները չեն կա-

րող բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալ Ս.Ավդոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնելու համար (...):

(...)

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Ս.Ավդոյանն իր աշխատանքային պարտականությունները կատարելիս օժտված է եղել որպես պաշտոնատար անձի՝ իրեն վերապահված լիազորություններով, այսինքն, ունեցել է մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձի կարգավիճակ, և անձնական այլ դրդումներից ելնելով, այն է՝ փորձագետի՝ դեպքի վայր ժամանելուն չսպասելու և ժամանակ չվատնելու նկատառումներով, կատարվելիք քննչական գործողությունն ամբողջական տեսք ստանալու, ինչպես նաև առանց փորձագետի մասնակցության դեպքի վայրը զննելու համար նյութերի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի, քննչական բաժնի ղեկավարության բացասական վերաբերմունքին չարժանանալու և կարգապահական պատասխանատվության չենթարկվելու համար, դեպքի վայրի զննության՝ 21.09.2014 թվականի արձանագրությունում մտցրել է ակնհայտ կեղծ տեղեկություններ:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանի հետևություններն այն մասին, որ բացակայում է ամբաստանյալ Ս.Ավդոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրված հանցանքի հանցակազմի սուբյեկտիվ կողմը, ինչպես նաև նախաքննական մարմնի կողմից ձեռք բերված ապացույցները բավարար չեն ամբաստանյալի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու համար, նույնպես հիմնազուրկ են, չեն բխում սույն գործի փաստական տվյալներից, Դատարանը պատշաճ գնահատության չի ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, ինչի արդյունքում չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման, այսինքն՝ տեղի է ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Ավելին՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Դատարանի կողմից նման հանգամանքները հիմնավորող որևէ ողջամիտ պատճառաբանություն չի ներկայացվել:

Վերաքննիչ դատարանի սույն որոշմամբ արված եզրահանգումները չեն կարող մեկնաբանվել որպես հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի կամ որևէ այլ անձի մեղքի առկայության կամ բացակայության վերաբերյալ դատողություններ:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է ընդամենը, որ Դատարանի դատավճռում արված եզրահանգումներն այն մասին, որ «Մամվել Ավդոյանի արարքում բացակայում է նրան առաջադրված մեղադրանքի սուբյեկտիվ կողմը», ինչպես նաև այն, որ «Նախաքննական մարմնի կողմից ձեռք բերված ապացույցները բավարար չեն ամբաստանյալի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու համար», հիմնված չեն գոր-

ծի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, և ազդել են գործով ճիշտ դատավճիռ կայացնելու վրա:

Գործի նոր քննության ընթացքում Դատարանը պետք է ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ պատշաճ իրավական գնահատականի արժանացնի վերը նշված հանգամանքները և գա համապատասխան եզրահանգման (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 19-33):

Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակները գտնում են, որ Առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը հիմնավորված է և օրինական, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշումն անօրինական է, չհիմնավորված և չպատճառաբանված, կայացվել է դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներով:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերները փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններից, ինչպես նաև սխալ եզրահանգման է եկել գործի փաստական հանգամանքների առնչությամբ:

10.1. Մասնավորապես, բողոքի հեղինակները փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ և 400-րդ հոդվածների խախտումներ:

Բացի այդ, ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերանայել է վերաքննիչ բողոքի հիմքերի, հիմնավորումների և պահանջի սահմաններից դուրս: Բողոքաբերներն իրենց այդ պնդումը պատճառաբանել են նրանով, որ մեղադրող Ա.Շահբազյանն իր բողոքում վերաքննիչ դատարանին խնդրել էր Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանել և փոփոխել, Ս.Ավդոյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ նշանակել համաչափ պատիժ, մինչդեռ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել մեղադրողի բողոքը մասնակիորեն բավարարելու, բողոքարկվող դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու մասին, ինչը մեղադրողի բողոքի պահանջից չի բխում:

10.2. Բողոքաբերները, վերլուծելով սույն քրեական գործով ձեռքբերված, հետազոտված ապացույցները, նշել են նաև, որ մեղադրողն իր վերաքննիչ բողոքում մատնանշել է ընդհանուր, տեսական բնույթի դատողություններ, որոնք չեն բխում քրեական գործով հետազոտված ապացույցներից, իսկ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, չի ներկայացրել հիմնավոր պատճառաբանություններ: Մասնավորապես՝ բողոքաբերները, ի թիվս այլնի, նշել են,

որ մեղադրանքի կողմը Ս.Ավդոյանին մեղսագրված արարքի շարժառիթ է դիտարկել հետևյալ հանգամանքը՝ առանց փորձագետի մասնակցության դեպքի վայրը զննելու համար նյութերի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի, քննչական բաժնի ղեկավարության բացասական վերաբերմունքին չարժանանալը և կարգապահական պատասխանատվության չենթարկվելը: Մինչդեռ բողոքի հեղինակների կարծիքով՝ դա ենթադրում է, որ մեղադրանքի կողմը պետք է ներկայացնեն ապացույցներ առ այն, որ քննիչն իրավունք չունի առանց փորձագետի մասնակցության կատարելու դեպքի վայրի զննություն և այդպիսի զննություն կատարելը ինքնին առաջացնում է կարգապահական պատասխանատվություն: Սակայն բողոք բերած անձանց պնդմամբ այդպիսի ապացույցներ մեղադրանքի կողմը չի ներկայացրել և չէր կարող ներկայացնել, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ քննիչն ինքնուրույն է որոշում գործի ընթացքը, և քննիչն է լիազորված որոշելու այս կամ այն քննչական գործողությանը մասնագետ ներգրավելու հարցը:

11. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի դատավճռին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Ս.Ավդոյանի նկատմամբ կայացված արդարացման դատավճիռը բեկանելիս և գործը նոր քննության ուղարկելիս Վերաքննիչ դատարանը պահպանել է արդյոք դատական ակտին ներկայացվող պահանջները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը (...):»*

Մեջբերված նորմը վերլուծության ենթարկելիս Հ.Մակարյանի գործով որոշման շրջանակներում Վճարելի դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [Վ]երաքննիչ դատարանն իրավասու է բեկանել բողոքարկված դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը՝ նպատակ ունենալով՝*

ա) լրացնել վերաքննության փուլում գործն ամբողջ ծավալով քննելու իրավագործության բացակայությունը,

բ) կանխել վերաքննիչ դատարանի կողմից որպես առաջին ատյանի դատարան հանդես գալու հնարավորությունը,

գ) ապահովել դատական ատյանների միջև գործառութային կապերի տրամաբանական բնույթը,

դ) երաշխավորել ամբաստանյալի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ նոր քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի հետ անհամաձայնության դեպքում վերաքննության կարգով բողոք ներկայացնելու տեսանկյունից (...)» (տե՛ս Հրաչ Մակարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԳ-3/0019/01/11 որոշման 19-րդ կետը):

Գ.Խնուսյանի գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.«(...) [Ը]նդհանուր կանոնի համաձայն ստորադաս դատարանն իրավասու չէ դուրս գալ վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված գործի նոր քննության ծավալներից և, միևնույն ժամանակ, պարտավոր է կատարել գործի նոր քննության ծավալով սահմանված անհրաժեշտ դատավարական գործողությունները: Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և դրանով սահմանված նոր քննության ծավալը պարտադիր են ստորադաս դատարանի համար, ուղղորդում են գործի նոր քննությունը, սակայն չեն կանխորոշում դրա արդյունքը:

(...) Վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված նոր քննության ծավալը ստորադաս դատարանի կողմից չպահպանելու համար որպես բացառիկ հանգամանք կարող է հանդիսանալ գործի նոր քննության ընթացքում առաջացած այնպիսի հանգամանքը, որը չի կարող հանգեցնել Վճռաբեկ դատարանի դիրքորոշման փոփոխությանը, սակայն պայմանավորում է տվյալ գործի ելքը (օրինակ՝ համաներման ակտի ընդունումը, արարքի ապաքրեականացումը, քրեական գործի վարույթը բացառող այլ հանգամանքի ի հայտ գալը և այլն)» (տե՛ս Գևորգ Խնուսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԳ/0030/01/12 որոշման 18-րդ կետը):

14. Վերահաստատելով և զարգացնելով Հ.Մակարյանի ու Գ.Խնուսյանի գործերով ձևավորված նախադեպային իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը Ա.Մաղդյանի գործով իրավական դիրքորոշում է ձևավորել, որ Գ.Խնուսյանի գործով արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները, mutatis mutandis, վերաբերելի են նաև վերաքննիչ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու և նոր քննության ծավալ սահմանելու վերաբերյալ կայացվող դատական ակտին: Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է. «[Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը քեկանում է բողոքարկված դատական ակտը և գործն ուղարկում նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ, ստորադաս դատարանում գործի նոր քննության սահմանները, որպես կանոն, կանխորոշվում են վե-

րաքննիչ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով և դրանով սահմանված նոր քննության ծավալով, ինչը բխում է արդարադատության արդյունավետության ապահովման խնդրից, մասնավորապես՝ դատական ակտերի բողոքարկման և կրկին բեկանման շրջապտույտից խուսափելու անհրաժեշտությունից: Վերջին հանգամանքը, սակայն, ենթադրում է, որ վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով և դրանով սահմանված նոր քննության ծավալով **կարող է ուղղորդել գործի նոր քննությունը, այլ ոչ թե կանխորոշել դրա արդյունքը**: Հակառակ պարագայում կարող է առաջանալ ոչ միայն իրավական անորոշության վիճակ (օրինակ՝ այն դեպքում, երբ անձի մեղավորությունը հաստատված համարելու հետ մեկտեղ գործն ուղարկվում է ստորադաս դատարան, ապա նոր քննության արդյունքներով կարող է առաջանալ հետևյալ իրավիճակը՝ մի կողմից ապացույցների գնահատման արդյունքում առաջին ատյանի դատարանի մոտ ձևավորված եզրահանգում, մյուս կողմից՝ վերադաս դատարանի կողմից նույն հարցի վերաբերյալ արված կատեգորիկ եզրահանգում, և միշտ չէ, որ այդ եզրահանգումները կարող են համընկնել), այլև կիսախտվի առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների միջև գործառութային կապերի տրամաբանական բնույթը» (տե՛ս Արթուր Մաղոյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԳ/0303/01/15 որոշման 14-րդ կետը):

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց է տրվում՝

(...)

2) գործի հանգամանքների, մեղադրանքի ապացուցված լինելու և ամբաստանյալի մեղավորության մասին դատարանի հետևությունները.

3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները.

4) օրենքի այն նորմերը, որոնցով դատարանը ղեկավարվել է որոշում ընդունելիս:

(...))»:

Նույն օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճռի եզրափակիչ մասում նշվում են՝

1) դատարանի որոշումները.

(...))»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ընդունվող իրավական ակտերն են՝ (...) 5) (...) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանի կամ վճռաբեկ դատարանի (...) որոշումները, վճիռները կամ դատավճիռները (...)»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Իրավական ակտերում պետք է բացառվեն (...) ներքին հակասությունները»:*

Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը *Գ.Ղազարյանի* գործով ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [Ա]ռաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտի՝ դատավճռի կառուցվածքին և բովանդակությանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ներկայացվող պահանջները վերաբերելի են նաև վերադաս դատական ատյանի՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտին: (...) [Դ]ատական ակտի տարբեր կառուցվածքային մասերում (ներածական, նկարագրական-պատճառաբանական, եզրափակիչ) արտացոլված տեղեկությունը պետք է ներքին միասնություն և տրամաբանական կապ ունենա, (...) հակառակ պարագայում, դատարանի դատական ակտն անօրինական է»* (տե՛ս Գեղամ Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԳ/0121/01/11 որոշման 19-20-րդ կետերը):

Ա.Հարությունյանի գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է. *«(...) [Դ]ատական ակտի եզրափակիչ մասում առկա եզրահանգումները պետք է բխեն նույն դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված հետևություններից և համապատասխանեն դրանց: Հետևաբար, վերաքննիչ դատարանի կողմից կայացվող՝ վերաքննիչ բողոքը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշման եզրափակիչ մասում առկա եզրահանգումը նույնպես պետք է համապատասխանի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված վերլուծությանը»* (տե՛ս Աննա Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵՇԳ/0110/01/11 որոշման 14-րդ կետը):

16. Վերահաստատելով *Գ.Ղազարյանի* ու *Ա.Հարությունյանի* գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Ա.Մադոյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է. *«(...) [Յ]ուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս դատարանների պատճառաբանությունները ոչ միայն պետք է կառուցվեն գործի փաստական հանգամանքներից բխող հստակ և որոշակի հետևությունների հիման վրա, այլև դատական ակտի կառուցվածքային տարբեր մասերում արված դատողությունները պետք է համապատասխանեն միմյանց, ունենան ներքին միասնություն և տրամաբանական կապ: Դատական ակտում պետք է բացառվեն ներքին հակասությունները, իրարամերժ դատողությունները, քանի որ հակառակ դեպքում այդպիսի դատական ակտի տրամաբանությունը կխարխլվի, իսկ քրեական դատավարության խնդիրները չեն իրագործվի»* (տե՛ս Արթուր Մադոյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԳ/0303/01/15 որոշման 16-րդ կետը):

17. Սույն գործի նյութերից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի կողմից Ս.Ավդոյանի նկատմամբ կայացված արդարացման դատավճիռը և գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության, ի թիվս այլնի, արձանագրել է, որ՝

ա) սույն գործով ձեռք բերված ապացույցները **չեն կարող բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալ Ս.Ավդոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնելու համար,**

բ) Ս.Ավդոյանը ունեցել է մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթների իրականացնող պաշտոնատար անձի կարգավիճակ, և անձնական այլ դրոշմներից ելնելով՝ **դեպքի վայրի զննության արձանագրության մեջ մտցրել է ակնհայտ կեղծ տեղեկություններ,**

գ) Առաջին ատյանի դատարանի հետևություններն այն մասին, որ բացակայում է ամբաստանյալ Ս.Ավդոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված հանցանքի հանցակազմի սուբյեկտիվ կողմը, ինչպես նաև նախաքննական մարմնի կողմից ձեռք բերված ապացույցները բավարար չեն ամբաստանյալի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու համար, հիմնազուրկ են, չեն բխում գործի փաստական տվյալներից,

դ) Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատության չի ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, ինչի արդյունքում չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Հարկ է նկատել, որ վերոնշյալ դատողություններին զուգահեռ Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ իր կողմից արված եզրահանգումները չեն կարող մեկնաբանվել որպես հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի կամ որևէ այլ անձի **մեղքի առկայության կամ բացակայության վերաբերյալ դատողություններ:** Ըստ Վերաքննիչ դատարանի՝ վերջինս արձանագրում է ընդամենը, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռում արված եզրահանգումներն այն մասին, որ *«Սամվել Ավդոյանի արարքում բացակայում է նրան առաջադրված մեղադրանքի սուբյեկտիվ կողմը»*, ինչպես նաև այն, որ *«Նախաքննական մարմնի կողմից ձեռք բերված ապացույցները բավարար չեն ամբաստանյալի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու համար»*, հիմնված չեն գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, և ազդել են գործով ճիշտ դատավճիռ կայացնելու վրա (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ գործի նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ պատշաճ իրավական գնահատականի արժանացնի իր կողմից նշված հանգամանք-

ները և գա համապատասխան եզրահանգման (տե՛ս սույն որոշման 9-րդ - կետը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը մի կողմից նշել է, որ Ս.Ավդոյանը ունեցել է մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձի կարգավիճակ, և անձնական այլ դրդումներից ելնելով՝ **դեպքի վայրի զննության արձանագրության մեջ մտցրել է ակնհայտ կեղծ տեղեկություններ**, իսկ մյուս կողմից՝ արձանագրել, որ իր եզրահանգումները չեն կարող մեկնաբանվել որպես հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի կամ որևէ այլ անձի **մեղքի առկայության կամ բացակայության վերաբերյալ դատողություններ**: Արդյունքում դիրքորոշում է արտահայտել առ այն, որ գործի նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ պատշաճ իրավական գնահատականի արժանացնի իր կողմից նշված հանգամանքները և գա համապատասխան եզրահանգման:

Վերոգրյալ պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի հիշյալ դատողությունները ոչ միայն իրարամերժ ու հակասող են, գուրկ են ներքին միասնությունից և տրամաբանական կապից, այլև մեղադրանքը փաստացի հաստատված համարելուն զուգահեռ գործը նոր քննության ուղարկելով՝ Վերաքննիչ դատարանը, ըստ էության, կանխորոշել է գործի քննության արդյունքը՝ ստեղծելով իրավական անորոշության վիճակ և խախտելով առաջին ատյանի ու վերաքննիչ դատարանների միջև գործառութային կապերի տրամաբանական բնույթը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Ս.Ավդոյանի նկատմամբ կայացված արդարացման դատավճիռը բեկանելիս և գործը նոր քննության ուղարկելիս Վերաքննիչ դատարանը չի պահպանել դատական ակտին ներկայացվող պահանջները: Այլ կերպ՝ ստորադաս դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ, 394-րդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածների խախտումներ:

19. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված քրեադատավարական օրենքի խախտումներն իրենց բնույթով էական են, ինչը համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների՝ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք է:

20. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերանայելիս դուրս է եկել վերաքննիչ բողոքի պահանջի սահմաններից (տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն այն անհիմն է համարում՝

փաստելով, որ դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքի ապահովման պայմաններում Վերաքննիչ դատարանը կաշկանդված չէր մեղադրողի վերաքննիչ բողոքի պահանջով:

20.1. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 10.2-րդ կետում բարձրացրած փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Սամվել Քյարամի Ավդոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

56.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0129/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2016 թվականի դեկտեմբերի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հովհաննես Վաչագանի Դավթյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ քննչական կոմիտեի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում 2014 թվականի նոյեմբերի 28-ին հարուցվել է թիվ 12823114 քրեական գործը:

2014 թվականի դեկտեմբերի 9-ին Հովհաննես Դավթյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2015 թվականի դեկտեմբերի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչա-

կան շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 31-ի դատավճռով Հովհաննես Դավթյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Հ.Դավթյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 31-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Հ.Դավթյանի պաշտպան Մ.Ալավերդյանը, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ պաշտպան Մ.Ալավերդյանի վերաքննիչ բողոքն ընդունվել է Վերաքննիչ դատարանի վարույթ, և գործը նշանակվել է քննության:

Մեղադրող Ռ.Երիցյանի կողմից նույնպես բերվել է վերաքննիչ բողոք, որով վերջինս, ի թիվս այլի, խնդրել է հարգելի համարել և վերականգնել վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը:

Վերաքննիչ դատարանը, քննարկելով վերաքննիչ բողոք բերելու օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին մեղադրողի միջնորդությունը, 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ մերժել է այն, իսկ բերված վերաքննիչ բողոքը՝ թողել առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Դավթյանը:

Վճարելի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. ՀՀ գլխավոր դատախազությունում Առաջին ատյանի դատարանի դատավճռի պատճենն ստացվել է 2016 թվականի հուլիսի 8-ին, վերաքննիչ բողոքը փոստին հանձնելու միջոցով բերվել է 2016 թվականի օգոստոսի 8-ին (տես նյութեր, թերթ 21, 23):

6. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով մեղադրողի վերաքննիչ բողոքը, իր դատական ակտում արձանագրել է. «Առաջին ատյանի դատարանի դատավճիռը հրապարակվել է 2016 թվականի մայիսի 31-ին, իսկ վերաքննիչ բողոքին կից առկա է սպացույց այն մասին, որ դատավճռի պատճենը դատախազությունում ստացվել է 2016 թվականի հու-

լիսի 8-ին: Նշված փաստական հանգամանքների պայմաններում բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկել առնվազն դատավճիռը մեղադրողի կողմից ստանալու պահից 25 օրվա ընթացքում և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատավճռի օրինակը մեղադրողի կողմից ստացվել է 2016 թվականի հուլիսի 8-ին, ապա Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի մայիսի 31-ի դատավճռի բողոքարկման ժամկետը վերջանում է 2016 թվականի օգոստոսի 2-ին՝ ժամը 24:00-ին՝ մինչդեռ վերաքննիչ բողոքը փոստին է հանձնվել դատական ակտն ստանալու պահից 31-րդ օրը՝ 2016 թվականի օգոստոսի 8-ին:

(...):

Հաշվի առնելով, որ չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ վերաքննիչ բողոքը ժամկետանց է, գտնում է, որ մեղադրող Ռ.Երիցյանի միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին՝ պետք է մերժել, իսկ բերված վերաքննիչ բողոքը՝ թողնել առանց քննության (...):» (տե՛ս նյութեր, բերք 26):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԳՌ-1052, 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՍԳՌ-1062 և 2016 թվականի ապրիլի 26-ի թիվ ՍԳՌ-1268 որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները, նշել է, որ ստորադաս դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշումն օրինական և հիմնավորված չէ:

Բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 31-ի դատավճիռը դատախազությունում ստացվել է 2016 թվականի հուլիսի 8-ին, այսինքն՝ օրենքով սահմանված 5-օրյա ժամկետի խախտմամբ, ինչպիսի պայմաններում ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 26-ի թիվ ՍԳՌ-1268 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշումների ուժով, բողոքարկման մեկամսյա ժամկետը չէր կարող նվազեցվել և հաշվվել 25 օր:

Բողոքաբերը նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, քանի որ հաստատված համարելով, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը հասանելի է եղել օրենքով սահմանված հնգօրյա ժամկետի խախտմամբ, միևնույն ժամանակ վերաքննիչ բողոքը համարել է ժամկետանց:

8. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշումը բեկանել և փոփո-

խել, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 31-ի դատավճռի բողոքարկման բաց թողնված ժամկետը համարել հարգելի և վերականգնել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետը անձի կամքից անկախ հանգամանքներով բաց թողնելու դեպքում այն իրավունքի ուժով (*ex jure*) հարգելի ճանաչելու կառուցակարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. բողոքաբերի կողմից Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ստանալու և դրանից հետո մեկամսյա ժամկետում վերաքննիչ բողոք ներկայացնելու պայմաններում իրավասու է արդյոք Վերաքննիչ դատարանը մերժել բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին մեղադրողի միջնորդությունը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի համաձայն՝ *«Դատավճիռը հրապարակվելուց ոչ ուշ, քան 5 օրում դրա պատճենը պետք է հանձնվի դատապարտվածին կամ արդարացվածին, նրա պաշտպանին և մեղադրողին: (...):»*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի համաձայն՝

«Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը. (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«Վերաքննիչ բողոք բերվում են.

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում. (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: (...):»*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*վերադաս դատարանն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը՝ իր վարույթում գտնվող գործով (...)*»:

12. ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտը բողոքարկելու օրենքով սահմանված ժամկետի հաշվարկման, այն՝ անձի կամքից անկախ հանգամանքներով բաց թողնելու իրավահարաբերությունները կարգավորող նորմերի սահմանադրականության հարցերին՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները.

- «*[Բ]ողոքարկման ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար ժամանակ ապահովող երաշխիքներ: [Ս]ահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը և այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի /հասանելի դարձվի/ անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության՝ անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար (...)*» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՍԴ-Ո-1062 որոշման 6-րդ կետը):

- «*(...) «առնվազն 27 օր ժամանակը» չի կարող դիտարկվել բողոք ներկայացնելու համար հաշվարկման ենթակա ինքնուրույն և առավելագույն ժամկետ: Միայն այն դեպքում, երբ դատական ակտի հրապարակման պահից օրենքով նախատեսված եռօրյա ժամկետում բողոքարկերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) պետք է ունենա առնվազն 27 օր ժամանակ, որպես նվազագույն ժամկետ, հիմնավոր բողոք ներկայացնելու համար,*

(...)

[Ա]յն դեպքում, երբ բողոքարկերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) օրենքով նախատեսված եռօրյա ժամկետից հետո, ապա պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները (...)» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 26-ի թիվ ՍԴ-Ո-1268 որոշման 7-րդ կետը):

- «*[Ս]ահմանադրական դատարանը հիմնավորված չի համարում բողոքարկվող դատական ակտի փաստացի ուշ ստանալու հիմքով բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարաններին լայն հայեցողական լիազորության տրամադրումը: Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող*

դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, տվյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել տվյալ ժամկետը, (...), այսպես **նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից**, առավել ևս, որ օրենսդիրը մի շարք դեպքերում ոչ միայն չի բացառում, այլև որպես դատական ակտի բողոքարկման ժամկետի մեկնարկի սկիզբ ուղղակիորեն նախատեսում է տվյալ դատական ակտը հասցեստիիրոջ կողմից ստանալու պահը:

(...) ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով նշված դեպքերում բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (*ex jure*) պետք է համարվի հարգելի, ինչը կերաշխավորի անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԳ-Ո-1052 որոշման 9-րդ կետը)»:

13. ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն իր հերթին, մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված դրույթները, արձանագրել է. «*[Ա]ռաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում շահագրգիռ անձից անկախ պատճառներով նրան չհանձնվելու կամ հասանելի չդարձվելու հանգամանքը հիմք է այդ ակտը վերաքննության կարգով բողոքարկելու՝ օրենքով սահմանված և ակտի հրապարակման պահից հաշվարկվող մեկամսյա ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /*ex jure*/ վերականգնելու համար: (...)» (տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 150 որոշումը):*

Նույն որոշմամբ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը, անդրադառնալով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՍԳ-Ո-1062 որոշման մեջ տեղ գտած **27-օրյա (հետևաբար նաև՝ 25-օրյա)** ժամկետի կիրառելիությանը, արձանագրել է. «(...) «առնվազն 27 օր ժամանակը», նույն տրամաբանությամբ նաև 25 օր ժամանակը համապատասխան բողոք ներկայացնելու համար հաշվարկման ենթակա ինքնուրույն և առավելագույն ժամկետներ չեն. դրանք վերաբերում են միայն դատական ակտի հրապարակման պահից օրենքով նախատեսված՝ համապատասխանաբար եռօրյա և հնգօրյա ժամկետներում բողոքարկելի կողմից դատական ակտն ստանալու կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ ունենալու դեպքերին:

Միևնույն ժամանակ, (...) դատական ակտն օրենքով սահմանված ժամկետներից ուշ ստանալու դեպքում այն բողոքարկելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետի բացթողումն իրավունքի ուժով վերականգնելու դատարանի պարտականությունը, հետևաբար նաև՝ անձի համապատասխան իրավունքը չեն կարող անսահմանափակ բնույթ կրել:

Հակառակ մոտեցումը կհակասի դատական ակտերի կայունության և իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքներին: Նման պայմաններում, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի վերը մեջբերված իրավական դիրքորոշումների տրամաբանության հաշվառմամբ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը գտնում է, որ երբ դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում բողոքաբերի կամքից անկախ հանգամանքներով նրան հասու չի դարձվում, նրա կողմից օրենքով սահմանված և դատական ակտի հրապարակման պահից հաշվարկվող մեկամսյա ժամկետից հետո բողոք բերելու դեպքում դատարանը պարտավոր է ժամկետի բացթողումն իրավունքի ուժով հարգելի համարել, եթե շահագրգիռ անձի կողմից բողոքը ներկայացվել է դատական ակտը ստանալու պահից մեկամսյա ժամկետում, և միաժամանակ ներկայացվել է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն: Դատական ակտն ստանալու պահից մեկամսյա ժամկետը՝ որպես դատարանի հիշյալ պարտականության ծագման համար հիմք ընդունելը պայմանավորված է ինչպես այն հանգամանքով, որ բողոքարկվող դատական ակտը բողոքաբերի կամքից անկախ պատճառներով է վերջինիս ուշ հասու դառնում, այնպես էլ նրանով, որ օրենքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ համապատասխան դատական ակտը կարող է բողոքարկվել դրա հրապարակման պահից մեկամսյա ժամկետում» (տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 150 որոշումը):

14. Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը նույնպես արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում շահագրգիռ անձից անկախ պատճառներով նրան հասանելի չդարձվելու հանգամանքը հիմք է այդ ակտը վերաքննության կարգով բողոքարկելու՝ օրենքով սահմանված և ակտի հրապարակման պահից հաշվարկվող մեկամսյա ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /*ex jure*/ վերականգնելու համար: Վերջինս գործուն երաշխիք է դատական ակտերը բողոքարկելու անձի իրավունքի ապահովման համար: Դրա հետ մեկտեղ, դատարանի նման պարտականությունը, հետևաբար նաև բողոքաբերի համապատասխանող իրավունքը պետք է ունենա որոշակի ժամանակային սահմանափակումներ:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է *Տ.Հովհաննիսյանի գործով որոշմամբ* արտահայտած իր դիրքորոշումն այն մասին, որ դատական ակտերը վերադատության կարգով բողոքարկելու համար օրենսդիրը սահմանել է որոշակի ժամկետներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովելու քրեական դատավարության պատշաճ իրականացումը: Նշված ժամկետները, սակայն, չեն կարող լինել կամայական, դրանք պետք է լինեն ողջամիտ, ինչը ենթադրում է գործի մասնակից բոլոր անձանց շահերի հավասարակշռված հաշվառում, որպեսզի բացառվեն մի կողմից դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու անհիմն ու-

շացումները, մյուս կողմից՝ այդ ակտի դեմ բողոք բերելու անհամաչափ բարդությունները (տե՛ս Տիգրան Հովհաննիսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԳ/0066/11/12 որոշման 18-րդ կետը):

ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 26-ի թիվ ՍԳ-Ռ-1268 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճարելի դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքարկման ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /ex jure/ վերականգնելու դատարանի պարտականության ժամանակային առավելագույն սահման չպետք է դիտարկվի **25 օրը**: Սինույն ժամանակ քրեական դատավարության պատշաճ իրականացումը, ինչպես նաև գործին մասնակից բոլոր անձանց շահերի հավասարակշռված հաշվառումն ապահվելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Վճարելի դատարանը որպես այդպիսի սահման ողջամիտ է համարում **մեկամսյա ժամկետը**, որը պետք է հաշվարկվի դատական ակտը բողոքաբերին հասու դառնալու պահից: Հիշյալ դիրքորոշման համար Վճարելի դատարանը հիմք է ընդունում օրենքով սահմանված ընդհանուր կանոնը, որի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը կարող է բողոքարկվել դրա հրապարակման պահից **մեկամսյա** ժամկետում, և ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումն առ այն, որ *բողոքարկման համար բավարար համարվող ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից* (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԳ-Ռ-1052 որոշման 9-րդ կետը):

15. Սույն գործի փաստերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը հրապարակվել է 2016 թվականի մայիսի 31-ին (տե՛ս - սույն որոշման 2-րդ կետը), իսկ ՀՀ գլխավոր դատախազությունում Առաջին ատյանի դատարանի դատավճռի պատճենն ստացվել է 2016 թվականի հուլիսի 8-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վերոնշյալ որոշման դեմ փոստին հանձնելու միջոցով վերաքննիչ բողոք է ներկայացվել 2016 թվականի օգոստոսի 8-ին, որով բողոքաբերը նաև միջնորդել է բաց թողնված ժամկետը հարգելի համարել և այն վերականգնել (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը պետք է մերժել, իսկ բերված վերաքննիչ բողոքը՝ թողնել առանց քննության՝ պատճառաբանելով, որ բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկել առնվազն դատավճիռը մեղադրողի կողմից ստանալու պահից 25 օրվա ընթացքում, մինչդեռ վերաքննիչ բողոքը փոստին է հանձնվել դատական ակտն ստանալու պահից 31-րդ օրը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-րդ կետում շարադրված իրավական դիրք-

քորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ստանալու պայմաններում Վերաքննիչ դատարանն իրավասու չէր մերժել բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին մեղադրողի միջնորդությունը՝ վերջինիս կողմից վերաքննիչ բողոքը 25-օրյա ժամկետում չներկայացնելու պատճառաբանությամբ:

Ամփոփելով վերոնշյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ մեղադրողի կողմից վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված կարգով և սահմանված ժամկետների պահպանմամբ (տե՛ս սույն որոշման 3-րդ, 5-6-րդ կետերը) և գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, բողոք բերելու ժամկետը հաշվարկելով դատական ակտն ստանալու պահից 25-օրյա ժամկետով և այդ հիմնավորմամբ վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ թողնելով առանց քննության, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ, 380-րդ հոդվածների խախտում: Վերջիններս, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք են Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: *Կ.Կիրակոսյանի* վերաբերյալ որոշման իրավական դիրքորոշումների (տե՛ս *Կ.Կիրակոսյանի վերաբերյալ 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ՀՅԲԲԴ-2/0149/01/08 որոշման 14-րդ կետը*) հաշվառմամբ՝ Վճարելի դատարանը գտնում է, որ գործը պետք է ուղարկվի Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Հովհաննես Վաչագանի Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 31-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին մեղադրող Ռ.Երիցյանի միջնորդությունը մերժելու, վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում

**ԷԴԻԹ
ՊՐԻՆՏ**
հրատարակչություն



Թումանյան 12, 3,
(37410) 52 08 48
56 08 41
info@editprint.am